ՑՏԱՐԿՎԱԾ է 1961 թ.

# ԴՐԱՐԿՊԱՏՈՒՄ

ՏԵԱՌՆ Հ. Գ. ՈՒԿԱՍՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ ՄԽԻԹԱՐԵԱՆ։

ՈՐ Է

## ԸՇԽԱՐՀԱՄԱՐ

ԿԱՄ

## ԲՆԴՀԱՆՈՒՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔԱղաքական, Եկեղեցական, Ուսումնական,
և Աբուբեսական.

Դարու՝ Ի Դարս Քաժանեալ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԱՐ ՈՒԹՈՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ
1789—1795

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
1828

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ



# ՇՎԱՅՑԻՆ

## ՄԵԾ ԺՈՂՈՎԸ

1788-1789։

Շվեյտին Թագաւորը կուսդաւլոս 1788 դեկտ. 19 ըսդօքօլմ եկաւ, որ ամէնն քաղքցիք ուրախութիւն ընդունեցան՝ յաղթանակօղի պէս. առջի կարգը աշնուականաց բազմութիւն ցրցուցին իրենց դժարիլը թէ ինչու ծեծ բացաւ Թագաւորը, բայց չկրնացին հասկնալ ան հազարապետներուն որ Թագաւորին իշխանութիւնէ դէմ բան ըրին իբրև գլուխ պատերազմի. մեկալ իշխանները կարգը թեպետ գոհ չէին ծեծ բացվելուն

վրայ , բայց որովհետև սկսված էր՝ պէտք էր կըսեին ամէնն բան ընելու որպէս զի պատուով ելլանք : Կուսադաւոս շուտ մը ժո-ղովրդական ըլլալ հրամեց որ 1789 յունվարի 26 ժողվըվեցաւ ըսդօքօլմ. իր միտքը աս էր որ՝ Թագաւորին ձեռքը ձգել տայ ձեծ բա-նալու և հաշտութեի ընելու իշխանութիւնը՝ ինչպէս որ կուտար 1772ին եղած սահմա-նադրութիւնը . բայց քաղաքացիք մանաւանդ աղնուականքը ամէնն բանի դէմ կելլային . որովհետև չէր ըլլար մէկ վէհու մը օրինքի տեղ անցնիլ՝ ինչվան որ միաբան հաւանութիւն վճռված չըլլար : Աղնուականքը պաշտ-պան կեցան չէ թէ միայն ամբաստանված հաղարապետներուն՝ այլ նաև ըսբրինքօր-դինին որ վերը յիշերինք , ըսելով թէ ա-սոնք բանի մը մէջ պակսութեի չեն ըրած : Կուսադաւոս ժողովականքը իր կամքին բե-րելու համար՝ ժողովուրդին ուզածներէն քանի մը բան կատարեց , անանկով ժողո-վականաց իրեք դասը քիչ քիչ վաստըկվե-ցան . մարդ խրկեցին Թագաւորին աղաչե-լով ինչ որ պէտք է Թողընէ՝ որպէս զի ժո-ղովին ըրածները առաջ երթան . բայց առ-ջի դասը որ էր աղնուականաց՝ ամենևին չէր միաբաներ անոնց հետ . մէջերնին ա-նանկ լուրբեր դնդվեցան՝ որ ժողովին մա-ռնելին ( որ աղնուականաց դասին պլուխն է ) շատ անարգանք տըվին . Թագաւորը հրամեց որ ասոնք հատուցում ընեն ան անարգանաց . բայց աղնուականաց դասը հաւանութեի չիտալուն համար՝ միայն քանի

մը հոգի բռնելով բանտը դնել տրվավ Թա-
գաւորը որոնք խիստ դէմ կըդնեին մկալ
իրեք կարգ իշխանութիւն. առնց միաբա-
նութիւը ոչնչացընելու համար հրաման տը-
վավ թէ ինչ բան որ բազմութիւն ժողովա-
կանաց կընդունին՝ հերիք ըլլայ անիկայ վա-
ւերական սեպելու: Յետանկով կուսդավոս
իր մարի դրածին հասաւ, և թէպետ ըսդօ-
քօլմի մէջ ուրիշ գործք չիկար բայց միայն
քաղքացի պահապան գործք, բայց առանց
խռովուե աս բաներս ըրավ լաճցուց. ամ-
բողջ ազգը երաշխաւոր (քէֆիլ) ընել տը-
վավ փոխ ըստակ առնելու ձեծին համար
ինկիւիզէն ֆիլէմինկէն ու Ճինիվիզէն, որ
ինչվան հիմա միայն իր անունովը կուգվեր,
անոր համար մկը չէր իտար իրեն:
Վեսթվ. 21 ընդհանուր գումարում եղավ
ուր ժողվվեցան չորս դաս ժողովականնե-
րու. կուսդավոս առաջարկեց մկ սահմա-
նադիր օրէնք մը ինը թէուրէեց վրայ, որ
անուանեց Կործ ֆէքանունէ և ապահովե,
վճռելով որ Թագաւորը ունենայ իշխանութի
պատերազմ ու խաղաղութի դաշնադրութի
ընելու, պատժօննները տրամադրելու, հա-
սարակաց բաները կառավարելու ինչպէս
որ իրեն աղէկ երևնայ, իշխանութիւն ձեռ-
քը միշտ ձնայ տուրքը պահանջելը. մկալ
թէուրէինները զանազան կարգադրութինքը
էին կալուածոց վրայ, աղնուական չէզոք-
ներուն տուրքերը թէթևցընելու և վերի
տեեանին մէջը մտնալու վրայ: Յս օրէնքը
ըրավ աղնուականաց գոռոզութիը քիչ մը

զսպելու համար, աւելի տարաձայնութիւնը խափանելու համար, որուն վրայ խնդիրը հանեցին թէ աս Կորճ ըսված օրէնքը արդեօք մէկ բացարձակ փոփոխութիւն մը պիտոր սեպվէր սահմանադրուե՞ թէ մէկ բացատրութիւն մը սահմանադրուե. իրենք դաս ժողովականաց բացատրութիւն սեպելով ընդունեցան ու ստորագրեցին. բայց բազմութիւն ազնուականաց խիստ դէմ կեցան. անոր համար ժողովին տեղը զինուորներով պաշարվեցաւ. աս վախ ձգելը անոնց սրտին մէջը անանկ մէկ զօրաւոր ձարտասանութիւն մը եղավ՝ որով մէկ մասը ազնուականաց ընդունելով ստորագրեցին, մէկ մասնաւ որոնց վրայ կըտարակուսվէր՝ բռնեցին բանտը դրին. իսկ մնացեալը իբրև գլուխ ժողովոյն ստորագրեց: Ամագաւորը ասչափ հերիք սեպելով բանը լինցած համարեցաւ. ան Կորճը ամմին եկեղեցնայ մէջ հրատարակել տրվավ իբրև մէկ հիմնական օրէնք մը թագաւորութե, որուն վրայ իր ամմին յաջորդները պէտք էր որ երդվընային: Վանի առէն որ քշեց ժողովը՝ ազնուականքը իրենց պատցածը կընէին, պատերազմին ըստակ տալուն համար անհնարին դէմ կելլային. ինչվան հարկ եղավ թագաւորին անձամբ ժողովը մտնալ իբրև մէկ հասարակ ազնուական մը վազայի ցեղէն. աս բանս ամմին քաղքցոց սիրտը շարժեց. ազնուականք խիստ ատելի եղան ժողովրդեան, պինտ եղբը ազնուականք հաւանութե տըվին, ինչ որ ըրավ թագաւորը պատերազ-

մին համար ընդունեցան. իշխանները 20 միլիոն ռիալի տալու վճռեցին ծեծին խարճին համար, և որպէս զի հազարապետանեըն վերջնեն ամէնն տարակոյսը՝ շատցուցին թագաւորական արտունուքիւնը իրաւունքը ծեծ կամ հաշտութիւն ընելու համար։ Ապրիլի 8 (1) թագաւորը վերջացնել տըվաւ ժողովը, բանտարկեալ աղնուականքը ազատեց. ան հազարապետաները որ ծեծին մէջ ապստամբուէ մասնակից եղան՝ դատաւորներու յանձնեց անոնց վրայ քննուքիւն ընելու, իսկ որոնք որ առաջուցմէ իրեն գթուքիւնը դիմելով ներում ուզերէն՝ անոնք ազատեց։ Ինկից ետքը ատեանին անունը միշտ խափանված մնաց շվէտիոն մէջ, անոր իշխանուքիւնը անցաւ մէկ նոր դատաստանի մը ձեռք՝ որուն մէջ կըմըտնային ամէնն կարգ մարդկան ամէնննալ արքունեաց բարեկամ։ Թագաւորը վեց հոգի ընտրեց հասարակ ու աղնուական մարդոցմէ, աս ժողովին յանձնեց իր կտակը, ինքը յունիսի 3 արտոնքօք ֆինլանտիա երթալով օպօ հասաւ իր զօրքովը ուր 20 հազար հոգի եվեցերեկին, իրեն հանդիպելվը պատերազմին ամէնն բանը շտկըվեցաւ։ Հիմա նայէ որ մէկ ազգի մը մէջ տարաձայնուքիւն մտնալու ըլլայ՝ ինչ վնաս կուտայ, շվէտ ազգը պատերազմի դիացին՝ մոսկովին շատ վեր էր. որովհետև մոսկովը շվէ-

---

(1) Ոմանք կըդնեն ապրիլի 28։

տէն սորվերէը [1] պատերազմելու արուեստը, բայց մոսկովը մէջերնին միաբան ըլլալով երբեմն մեծին հնազանդ՝ քանի գնայ մեծ տերութէի եղավ. չվէտն որ մոսկովին վեր էր, քանի գնայ պլտիկցաւ, հիմաալ թէ որ աս կուսակալսին խելքը չըլլար՝ երբեմն մեծերուն ձեռքը մնար, բոլորովին մոսկովին տակը ընկած պիտոր ըլլար։ Օ արմանալին միայն ան եղավ որ՝ ան ատենն որ ֆրանսզնները գաղտնի և յայտնի կաշխատէին թագաւորական իշխանութէը վերցնելու, չվէտները առաջ այնչափ նախանձախնդիր եղողները երբեմն սահմանադրութէը վրայ, յանձն առին թագաւորին ձեռքը տալ գերագոյն իշխանութէը. բայց մեծութէը թագաւորին դին էր մոսկովին վրայ ատելութէն ունենալնուն համար, անոր համար կուզէր որ պատերազմ ըլլըվի։

## Ի՛րէն ծեծկըվելնին։

1789։

Մոսկովնները մեծ էին սալօլաքա չվէտին երկիրը. յունիսի կէսին 6 հազար հոգի՝ որ միքայել տեղը վազեցին որ չվէտներուն համբարնները առնեն, բայց ըսգէտինկ գընդապետը, ամսոյն 21, շատ ծեծկըվեցաւ ասոնց հետ. 17 ժամ կռուեցին եաև մոսկով-

---

(1) Տես մեծին պետրոսին վարքը Ազգասէր դրքին մէջը թղթ. 135։

ները կոտրտվելով իրենց երկիրը քաշվե-
ցան, նորէն յարձրկեցան բայց նորէն հա-
լածվեցան։ Կուտուզովոս ամէնն դիացէն
զօրք բերել կուտար, միտքը ան էր որ Ֆրի-
տերիքսհամը առնէ, որպէս զի Մոսկովէն
տեղ մը առած ըլլայ. եկավ ինչվան ելմա
իր ամէնն զօրքով. ասոր դէմ 3 հազար մու-
կով համարձակեցան ելլալ չիթողուր որ ի-
րենց երկիրը մտնայ. տեսնալով որ չեն կըր-
նար արգելել՝ քիմնէկ դէտին անցնիլը թող
չիտըվին. ան ատենը շվետները Մոսկովին
ֆինլանտիան մտան, քանի մը հեղ ծեծկը-
վելեն ետև, յուլիսի 20՝ մեծ կռիւ ըրին.
շվետները Մոսկովին քիչ ըլլալով 4 հազար
հոգի կորսնցուցին. Կուտուզովոս որ մէկ հա-
սարակ զինուորի պէս ոտքի վրայ կըծեծկը-
վէր քաջութե՝ ամէնն զօրքովը վառելեին
քով քաշվեցաւ։ Յաւօքսլին մկրնալ կռիւ-
նէր եղան, ըսդէտինկ գնդապետը բարբու-
մաքի տեղը զարկաւ Մոսկովները, 5 թօփ
առավ, 2 դրօշակ, 15 առապայ պաշար,
բայց յուլիսի 31 Մոսկովներնալ ասանկ զար-
կին շվետները, շվետին ֆինլանտիան յար-
ձրկեցան։ Շ վետին հազարապետներուն
մէջ շատ անհատարմուն կար. քավլպարս
զօրապետը ուզելով քայբիաս տեղը առնել՝
անանկ մը շարժեցաւ որ շվետին ամէնն
զօրքը վտանգի մէջ թողուց. ասիկայ կուտ-
դավոս իր իշխանութէն ձգեց, վրան քննու-
ընելու ապսպրեց. շվետին վերջապահ զօրք-
նալ բան մը չէր կրնար ընել, որովհետև
Մոսկովին խաղաղներնալ ժանտ խաղմուխ-

ներնաւ իրեն ասպատակող (չարխա) ղօրքը ըլլալով՝ իժիր կըհալածէին շվետներըը. երբոր շվետները քիմինկ գետը կանցնէին՝ մամիչա տեղը 1500 հոգիէն աւելի կորսընցուցին, այնչափմընաւ գերի ընկան։ Պետք ծովու վրայի ճեմկրվենին. անցած տարվան ճեմէն ետև մոսկովին նաւերը չկրցան քաղաքդօնա քաշվիլ ուր մեծ Թերսանէն էր, հապա հելսինկֆօուս քաշվեցան ուր պզտիկ նաւերուն միայն Թերսանէն էր. անոր համար իրենց մեծ նաւերը կամաց կամաց հոն նորոգվեցան. իսկ մոսկովինը ամէն բան պատրաստ ունենալով՝ շուտ մը իրենց նաւերը նորոգեցին դուրս ելան, հելսինկֆօուսին բացը ելլալով կըպատրաստէին որ Թող չիտան շվետի նաւերուն դուրս ելլալու. շվետին մէյ մէկ նաւը միայն կրնային հելսինկֆօուսէն դուրս ելլալ, պատճառն որ՝ ֆինլանտիային ամբողջ ծովածոցը ծանծաղ (սըղ) ըլլալով կըգժարցրնէն մեծ նաւերուն ելլալ մտնալը. մէկ շվետի նաւ մը դուրս ելլալով որ Թշնամիին նաւերը տեսնայ հասկընայ՝ յայտնաքը նստաւ, անալ մոսկովներըը երեցին. քանի մը նաւ ելան քաղաքդօնայէն՝ բայց չկրցան պզտիկ նաւերուն հետ միանալ ու բովհետև անոնք գոցված էին հելսինկֆօուսին մէջ. վերջապէս 1789 մայիսի մէջ կըրցան շվետին նաւերը դուրս պալդիկ ծովը ելլալ ուր սառոյցները (պուզերը) չէին հալած. յուլիսի 26 մոսկովի նաւատորմիղին հանդիպեցան կոդլանտին ջուրերը, որ 20

նաև ուներ երկու խափխափը. 10 Ֆռխա-
թա, ասոնց խափուտանան եր ջիջքաքօվ,
մեռած ըլլալով ձմռվան մեջ կուէյկ լինկի-
լեղ խափուտանան հիվընտութէ. իսկ շվե-
տինը 22 նաև ուներ երկու խափխափը, 13
Ֆռխաթա:

Չետևեալ օրը օհարսըկին առաջ կարօլոս
սուտերմանիայի դուքսը՝ որ շվետի Թա-
գաւորին եղբարն եր՝ ամմին նաւուն հրամ-
մօղ՝ հովը իրեն դին ունենալով սաստկութ
մոսկովի նաւերուն վրայ վազեց. լման ճե-
ծին աղեկ առաջ երթալու ատեն՝ լիւնհօռն
բադռօնան որ շվետին վերջապահն եր՝ իր
նաւերը չիմօտիկցուց, թեպետև շատ հեղ
նշան տալով կանչեց անիկայ կարօլոս դուք-
սը, անոր համար կակըզցուց իր սաստկու-
թիը. ասանկալ ըլլալով ճեծը չիդադրե-
ցաւ. երկինքը ամպոտ մնուշ ըլլալով՝ իրար
չիճանչնալով կըզարնեին լինչվան մօտիկ ի-
րիկուն՝ երկու դիացնալ շատ նաւեր կո-
տըրտըվելով. վերջը կարօլոս դուքսը Թո-
ղուց ճեծը քառըչքուօնա քաշվեցաւ, չուտ
մը լիւնհօռնը երկաթը զարնելով բանտը
դրաւ քննելու համար. նաւատորմիին մէ-
ջը հիվընտութէ խնալուն համար ամբողջ
տարին հոն կեցաւ: Սկիզբ ետքը օգոստ.
24 պզտիկ նաւերուն ճեծը եղաւ որ աւե-
լի յարմար է ան ցամ ծովերուն մէջը. շվե-
տինը 40 պզտիկ նաւեր էին, մոսկովինը 70.
որոնց կըհրամէր նասսօ սեկէն իշխանը ու
լիդդան մալեթայէն եկած. ասոնք սկիզբ-
սուճտին ջուրերը շվետին նաւերուն վրայ

վաղեցին, բայց շվետները քարերուն մէջ տեղերը շատ նաւեր ընկղմած էին որպէս զի մոսկովին նաւերը չկրնան անցնիլ հա- մարձակ զարնել շվետը՝ ինչպէս որ շվետնե- րը յաջողութիւն կրզարնէին մոսկովը. պինտ եաքը լրդան մէկ տեղայմէ անցուց պզտիկ նաւերը որ չէին կարծեր, ծեծը քշեց ամ- բողջ օրը ինչման իրիկուն, մոսկովները կոր- սընցուցին 3 չէքտիրի, 1 մեծ չէքտիրի, 2 շամպէք, շվետները կորսընցուցին 3 չէք- տիրի, 2 պզտիկ ֆռխաթա. որոնցմէ մէկը մոսկովին ձեռքը իյնալու մօտիկ ինքիր զին- քը քաշկռտելով երկինքը ելավ, ինացա- ծը ըսմանութիւմ քաշվեցան շինելու հա- մար: Մոսկովները շուտ մը 6 հազար մարդ ցամաքը հանեցին՝ որ շվետին բանակին կրռ- նակը կկոնար. ծովեալ ազատ իրենց ձեռ- քը ձգելով մէկ նաւ մը Թող չէին իտար շվետի բանակին պաշար տանելու, հարկ կըլլար շվետներուն պզտիկ նաւերով եր- կան բարակ պատեելով քիչ քիչ պաշար տա- նիլ բանակին ֆինլանտիայի մէջ, որ մէկ չոր ցամաք երկիր մընէ:

Կոստավոս Թագաւորը երկու կրակի մէջ իյնալով՝ աղէկ տեղը կորընցուց որ էր հօք- պֆօռս, հարկ եղավ իրեն աւելի անգա- մուն պես արտորնօք փախչիլ, ձգելով 37 Թօփ ու իր բանկերը, շատ մարդալ կոտըր- տվելով, քիչ ձիաց որ ինքնաւ գերի պիտոր իյնար Թէ որ պզտիկ նաւակով մը գետին անդի դին անցնելով շվետին ֆինլանտիան չհասնէր. հասնելէն ետև մոսկովին Թուղթ

խրկեց գերի ընկած շվեթ հազարապետին, որ խալցընելու համար, բայց մսկովիները դեռ թուղթը չիբացած՝ ետ խրկեցին իրեն։ Ապա. 7 ճեմ մընալ եղավ ծովու ցամաքի վրայ քիմկնե գետին մօտիկ, ուրիշ ճեմերը ալ ինչվան ձմեռ. ան ատենը մսկովիները երկու ամիս շվեթին երկրին մէջը կենալէն ետև իրենց երկիրը քաշվեցան։ Այս որովհետև շվեթի դիւանին շատ սուտ խօսքերով անանկ կրձանձընելին որ յաղթութիւնը բոլորովին շվեթներուն է՝ կատարինէ թագուհին նասսօ իշխանին ապսպրեց գանգատ գրել կուսդավոսին վերջացնել տալու աստուածները որ չիվայլեր իր թագաւորական անուանը։

Սոլտան Հաճիէն մահը։

1789։

Այս տարի ստանպօլ մէկ ալեկոծեալ տարի մը եղավ երկնքէն մէկ հեղեղ (սէլ) մը եկավ՝ որ չիկար ծեր մը անանկ սաստիկ անձրև չիշօղ. երկու օր անձրևային եղավ, բայց մէջը մէկ անձրև մը եկավ ժամ ու կէս քշօղ անանկ շատ որ լման պզտիկ ջրհեղեղ մը երևցավ մեզի. ստանպօլին ձամփաները անանկ բարձրցան ջրով որ տեղ տեղ մարդիկ չիկրցան անցնիլ, տեղ տեղ ալ անանկ խորունկ փորեց որ՝ գետնի տակէն հնուց մնացած գերեզմանի քարեր երևան հանեց. գասըմ փաշան տուներ՝

տեւրմէնի քարեր քակեց ծովը տարաւ. պօղազ իչին ան գեղերը որ Ձորի (տերեւի) մէջ են՝ տուներուն քանները բարձեր՝ փչենէր՝ սեղաններ ըրաւ՝ ծովը քշեց տարաւ. խանտիւլլին ջուրի Ձամիւուն մէջը քշելով խօթելով կով մը՝ անանկ հրեւլով ծովը տարաւ, տեղ տեղալ ան Ձամիւուն ամուր պատերը պատռեց որ սուլդան մուրատին են շինված. պէպէքին Ձորին մէջը ծառեր քշելով իրարու վրայ դիզելով մէկ պատուար (պէնտ) մը շինեց, ան ծառերուն վրայ ջուրը արգելվելով բարձրցաւ, բարձրութենէն վար վազելով ջուրին սաստկութիւնը ինչ հոռմի գերեզմանի քարեր որ կային՝ ծովեզերքը քշեց տարաւ, տուներ փլուց, լեռան հողը վար բերելով չարշին հողով լեցուց. խանութենները վարը խորունկը մնային, սօխախնները խուլաձի չափ խանութներէն բարձր մնային: Կէօքսուլին ամէն պարտէզներէն որ Հ ժամ ներսէ ներս կըքշէ՝ իրենց ամէն բերքը ծովը քշեց տարաւ. էնկլէզ գեղին ծովածոցը լեցված կերևնար քշված կանանչեղէնով, տըներէն հանած բարձերով: Ամէն մէկ տեղին պատահարները ինչ որ տեսանք աս սոսկալի անձրևին սաստկութենէն եղած՝ թէ որ պատմելու ըլլանք՝ մէկ գիրք մը կըլլայ [1]. ամէնէնուս վրայ անանկ ահ մը պատել տըվավ աս անձրևին սաստկութիւնը՝ որ իբր թէ գետի-

---

(1) Տե՛ս որչափ որ գրերենք Ա. Մարանոյ բիւզանդեան դրքին մէջ Թղթ. 207:

նը անյնիլ կըցըցընկր ամբողջ քաղաքը։ Այս տարերաց պղտորութիւնը վրայ աւելցու հիմա քաղաքական պղտորութիւնը որ եղավ ստանալօլ. յունվարի մէջ հրաման ելավ՝ ով որ ինչ արծաթ ունի՝ զարպխանէն տա նելու. ասոր վրայ ամէն մարդ տաճիկ րայէ՝ մենծ ու պզտիկ իրենց ունեցած արծաթը քիչ շատ՝ զարպխանէն տարին, հա լելէն ետև տիրհիմը 10 փարայով միրիէն ծախեցին. րիձաչները երկու իրեք արծաթ ձիու թախըմ իրենց համար պահելով մնացածները տարին։ Այդ մեծ հանդէս (ալայ) մը կըլլար տանօղներուն բաղմութիւնը որ տուներէն խանութներէն կըբերէին իրարու ետև, որոնց արծաթները առնելու՝ ըստակնին վճարելու՝ չէին կրնար հասնիլ զարպխանէին ծառայները, և որով հետև արուեստաւորաց (կանաֆինալ) արգելք եղավ ամենևին արծաթ չիբանելու՝ իրենց քովն եղած ամէն արծաթնալ միրիէն տալու՝ անկից չարսուն գոցվեցաւ, ամէն ղարյումճիք անգործ մնացին ամիսներով. չէքիճի ձայնին տեղ թավլու խաղալու ձայն կըլսվեր ամէն խանութ, առանց վաստկի մնալով սուգ ու տրտմութիւ տիրերէր ամէնուն սրտին վրայ. երկու հրէայ բռնվեցան, որ գաղտուկ արծրթէ հիլալ շինած էին, երկուքնալ քիւրեկը խըրկվեցան։ Այդ եղած ազգերու վրայ տուրք ձգվեցաւ արծաթ ժողվելու միրիին տալու. հոգին վրայ 6 հազար օխայ ձգվեցաւ որ ամէնէն ուշ վճարեց,

Հայուն վրայ 4 հազար օխայ որ ամէնէն շուտ վճարեց միրիին տրվավ, հրէականերուն 3 հազար օխայ։ Ու ժողվվածի արծաթներով նոր ըստակալ կոխվեցաւ որ առաջ չի կար. մէյմը էքսիքը ղուռուշ, մէյմընալ արծըթէ հարիւրնոց, բայց ստակներուն այսրը վար ինչեցընելով։

Ու բանէրս սուլդան Համիտին օրը սկսան՝ սուլդան սելիմին օրը լմնցան. վասն զի սուլթան Համիտը որ խաղաղութեի սիրօղ էր և ոչ պատերազմ, տեսնալով որ էյյալեղիր խաղաղութիը (որովհետև ինկիլիզն պրուշն դեսպաններըը միշտ կըգըրգռեին ըսալկով մենծերը պատերազմ շարունակելու), սիրտը անհանգիստ ըլլալով մեռաւ իր յանկարծակի 11 ըէձէպի (մարտի 27). երեքշաբթի օր. 1203 հիճրեթի (1789)[1], 66 տարվան. 50 տարվան էր երբոր թագաւորեց, 15 տարի 8 ամիս նստաւ. իր շինած Թիւրպէի մէջ Թաղվեցաւ որ պաղչէ խափուսին է վալիտէ Համիին իմարէթին դիմացը, որ ան իմարէթնալ նորէն շինեց։ Իրեն Համի շինէրը պէյլէրպէյին մէկ մենարէով[2] ու բաղնիք. նաև ամբողջ պէյլէրպէյին իր օրը շինվեցաւ. առաջ հոն սեքայ կար պզտիկ՝ ուրնիմ կէօչ միայն կըսըղմէր. քովը մէկ պառաւի մը տուն ըլլալով

---

(1) 1789 քի թուականին մէջ տաճկին երկու թուականը կըմտնայ, 1203 տարին կըլլիննայ, 1204 տարին կըսկըսի։

(2) Եաքը 1821 մէկ մենարէմընալ եվեզցուց իր որդին հիմակվան արքայն սուլդան մահմուտ։

քանի անգամ որ Ք. սուլդան Մուսդաֆան ուզեց անիկայ ծախու առնել որ մեծցընէ՝ ան տաճկին կնիկը չուզեց ծախել. անոր համար սուլդան Համիտը սերայը քակեց տաճկի մենծերուն ծախեց, չարսու խա-նուքներ շինելով հին իր ձամիին կապեց, անանկով եղավ մկ փառաչին գեղ մը աղ-վոր եալընկերով զարդարված. պկլերպկլին ասանկ շինվիլը առջի պատճառը եղավ ստանպօլցոց գեղադնացուքիւն յաձախե-լը, տեսնալով որ րիձալնները պկլերպկլին սկսան երթալ ամառնները՝ շատ ուրիշ տաճ կըներալ յաձախեցին. անկից մեր աղգին մէջնալ մտաւ ան սովորուքիը՝ քանի գնաց շատցաւ. առաջ Ք. սուլդան Մուսդաֆայ-ին օրը խիստ քիչ կըլլար մանաւանդ մեր աղգէն ամառնները գեղ երթալ: Սուլդան Համիտին օրը խափանվեցաւ նաև խարա աղաձին եղած սերայը շատ օձ գտնըվելուն համար մանաւանդ անձրևներու ատեն, որ հիմա կամաց կամաց քակված է, ուր Ք. սուլդան Մուսդաֆան գրեթէ ամէն գա-րունք առաջ հոն կերթար նիմ կէօչով, իսկ ամառները միշտ այնալը խավախին սե-րայը կերթար, ոչ երբէք կէօչ ըրած ու-նէր պէշիք դաչին սերայը:

Սուլդան Համիտը իր րիձալներուն մէջ ի-րին սիրական ունեցաւ քեբեի հասան էֆէն-տին, որ զանազան պաշտօններու (մանաւա-ներու) մէջ մտաւ, խօսքը կտրուկ մարդ, անով կըդառնար գրեթէ ամէն բան: Ան-մէնալ նաղիֆին, որ նոյնպէս զանազան

պաշտօննէրու վրայ ելլալով յաջողութիւն ունենալով իր քովը կըվճռար ամէնէն քան. անչափ սիրելի եղած էր սուլդան Համիտին՝ որ իր աղջիկը իրեն տըվաւ, չէնկել գեղ մեծ փառաւոր եալը շինեց, վերնալ չիֆտլիկ ու քէօշք Թագաւորին համար ուր պիտի կըներ։ Վերնալ մկ գլխաւոր խորհրդական մը ունեցաւ ապտուլլահ աղան, որ Թէպէտ ՀիւՀէ էր՝ բայց մանտրտիկ անդամներով համեմատ կաղմուած ունէր, աչքերուն մէջը իր հետը կըտանէր, շատ խելացի մարդ՝ որուն խորհրդովը կըկառավարվէր Թագաւորը. երբոր սուլդան սելիմ մը նստաւ՝ Թէպէտ ասիկայ սերայէն դուրս չիհանեց՝ բայց ամենևին երես չիտըվաւ, անոր վրայ խիստ դժարը գալէն ապտուլլահ աղան մեռաւ. մեռնելէն ետև իր քովէն ելան 100 կապայ կնքըված պօղչանքրով որ Թէրզի պաշին կարէր խրկերէր սուլդան Համիտին համար. շատ ալ Հեվահիրլի ասեղներ՝ որ ինքը շինել կուտար ներսի խաՀաւոններու անունով. աս տեսնալով սուլդան սելիմը ալ աւելի ավըրվեցաւ վրան։

Բայց սուլդան Համիտը իր Թագաւորութեան առջի տարիները մանսուպներու վրայ եղողներու մէջ ամմինէն երևելի մարդ ունեցաւ իրեն Համայել պէյը, որ բեիս էֆէնտի եղավ, եաքը դուբսերը փաշայութեան մէջ քալեց, ասիկայ կառավարութէ խելքովը ամմինը գերազանցեց, ըլլալով կենդաղպէտ ու բարի սրտով մարդ։ Ալը որ

կըսէ առաքը Ա.ղեկ սիրտ Ա.ղեկ խելք մէկ տեղ կըմիանան, հոն ամէն բան աղեկ կերթայ. բայց ուր որ ասոնք իրարմէ կըզատվին՝ աղեկ բան մը չի կրնար ըլլալ: Ա՛ս խմայիլ պէյին քով երկուքնալ միացած էին: Շատ աղեկ բան ըրավ սուլդան Համիտը Թէրսանէի վրայ խափուտան փաշայ ընտրելով Ճեզայիրլի Հասան փաշան, որ յաժարամիտ (հավէսլի) մարդ ըլլալով չէ թէ միայն չէնքեր նորոգուԹիւններ ըրավ հոն՝ որ տեղ տեղ պատմերէնք, այլ նաև բարեկարգուԹիւններ, վերցուց նաև հոն եղած խարդախուԹիւնները որ առաջ ոմանք կընէին. օրինակի համար աս դիպուածս պատմենք: Ա՛ենը իշխիմիա խայբէս կինջեցրնէ վաճառականուԹիւն ընելու շահելու համար. հոն կըտեսնան Թագաւորական մարդիկ ասոր անկարիա կըդնեն, նաւուն մէջը ղիֆԹի խաԹրան կըլեցընեն, կըպարտաւորէն ըստանպօլ Թէրսանէն տանելու. աս նաւապետը երբոր տրտմած սրտով Թէրսանէն կըհասնի՝ հոն եղող քեաԹիխաներէն զրպարտուԹիւն կըլսէ իբր Թէ պակաս է բերէը, շատ բան գողցերէ մէջէն. ասիկայ ա՛լ աւելի ալեկոծուԹեան մէջ կ՚ինկնալով՝ իրեն մէկ ձանչվոր նաւապետը կըգտնայ ամէն բան անոր կըպատմէ. ան նաւապետը ասանկ բանի մէջ եփած ըլլալով կիմանայ պատճառը, կըհասկըցընէ որ դուն չիգիտնալով անոնց միտքը Թէ որ ինչպէս կըսեմ չիշարժիս՝ նաւդ ձեռքէդ կառնեն. ասոր խալըսելու ձամիան սորվեցընելով իրեն փոխ

ոսկի կուտայ, մեկ թէսթիմէլի մը մէջ տե-
ղը շատկեկ ոսկի կըկապէ, չորս ծայրնալ
ուրիշ ոսկիներ կըկապէ քիչ քիչ. ասիկայ
վաղը տար կըսէ մեծ քեաթիխլին փեշը պագ-
նելով մինտերին ներքևը դիր։ Ասիկայալ
անանկ ընելով երբոր մեծ քեաթիխլը կը-
տեսնայ թէսթիմէլը կիմանայ բանը, մէջ
տեղի շատկեկ ոսկին ինքը կառնէ մեկալ-
նոնց կուտայ որ չորսնալ իրենց կարգին
կեօրէ կառնեն, ետև կըսէն իրեն. իրաւ
իշխիմիտին բերած բաներդ պակաս եր Թըղ-
թին կեօրէ՝ բայց մենք աս անգամուն նե-
րեցինք քեզի. աս ըսելով Թուղթ կուտան
ձեռքը իբր լման առած. նաւապետը կել-
լայ անկից կէս մը ուրախ ըստ որում խա-
լըսեցաւ զրպարտութենէ, կէսմընալ տըր-
տում որովհետև նաւլուն չառաւ, նաւլու-
նին տեղը անչափ ոսկիին ելավ որ փոխ եր
առեր. բայց երբոր իր նաւը կըմտնայ նա-
ւուն երկու ծայրնալ լեցուն դրած կըգըտ-
նայ զիֆթ ու խաթրան, որոնք իր Չանչլոր
նաւապետը շուտ մը ծախել կուտայ հրեայ-
ներուն որ ասանկ բաներ առնելու հոն պատ-
րաստ կեցեր կըսպասեն։ Վերջապէս մի
կըսեր ասոր, թէ որ դուն ան ոսկիները չի-
տայիր՝ պակաս ես բերեր ըսելով նաւդ ձեռ-
քեդ պիտոր առնէին, բայց աս ոսկիները
տալով ան քեաթիխլներուն՝ նաւլունդալ
հանեցիր, վրանալ վաստակ ըրիր։ Ասկից
զատ ուրիշ վաստակներալ կընէ ան նաւա-
պետը որուն վրայ ինքնալ կըզարմանայ.
նոյն թէրսանէին մէջը մարդ մը իր վրայ

սրդողելով զարնելով՝ ինչու նաւդ հոն կա-
պերես ըսելով՝ աս դիս բերել կուտայ նա-
ւը, հոն գաղտուկ իր ականձը խօսելով եր-
կան չուան մը կըծախէ իրեն քանի մը ղու-
ռուշով որ տանտապատիկ աւելի կարժէր.
ան դիէն մէկ ուրիշ մը սրդողելով իր քովը
բերել կուտայ նաւը՝ մեծ հալատ մը կը-
ծախէ քիչ ըստրկով, որուն ծայրը բարակ
չուան մը կապելով կըսորվեցընէ ծովին տա-
կէն քաշել, իր նաւուն մէջը առնել։
Ուրիշ աղեկութիներալ ըրած ունի սուլ-
դան Համիտը որոնց մէկ քանին հոս չիշենք։
Նշատօլուի մէջէն լսփուսուզնները վեր-
ցուց որ լեվենտ էին. ասոնք րիձաներու
ծառայներ չուխատարներ էին, որովհետև
է. սուլդան մուսդաֆայիին ծեծին առեն
ամէն րիձալ ամէն դիւացէն շատ փարթա-
մութէ (սալթանաթով) ծեծի գացին, ա-
սանկալ ամէն մէկը շատ մարդ իրենց ծա-
ռայութէ մէջ առնելով գացած էին, ետ-
քը երբոր ծեծը դադրեցաւ՝ ասոնց ամէ-
նուն ալ Համբայ տըվին իրենց քովէն արձը
կեցին. ասոնք դուռ (խափու) մը չունե-
նալով ծառայելու՝ լսֆռասուղ լսվէցան,
աս դիս ան դին ցրուեցան անատօլու ուս-
կից որ եկերէին. հոն ապրուստ մը չունե-
նալով դատարկ պարապ մարդիկ՝ բազմաւ
մէկտեղված աւազակութէ ընելու հետ է-
ղան, Համիտորդները թալլելով սպանելով,
քերվանները զարնելով, տարինկերով շատ
նեղն ընկած էին վաճառականները, աւելի
աշխարօվային մէջէն մարդ չէր կրնար անց-

նիլ. ինչվանոր աս լեվկնտներուն վրայ յա-
տուկ փաշայ խրկելով շատ զօրքով հազիւ
ամմէն տեղէն վերցուց սուլդան Համիտը
Ճամիայնէրը ըսարկեց. նէֆրէմ ֆէրման
մընալ Հանեց որ՝ միացած փախածնէրնալ
ամմէն տեղ ուր որ կըգտնային ժողովուր-
դը՝ կըսպաննէին։

Պանկալ եռւէ ընկաւ որչափ կարելի է
վերցընելու զրկողութիւը կամ խարդախու-
թիւը որ ունէնք դատաւորներէն ան ատե-
նը կընէին. օրինակի համար պատմենք հե-
տևեալ դիպուածը։ Պանպալ գաւխի մը
ուզելով ըստակ վաստրկիլ կըկանչէ Թուր-
չիները կըգրգռէ որ իրեն արզուհալ տան
գանկտելով թէ ինչու պախալներնալ Թուր-
չի կըծախեն, արգելէ որ ասկէց ետքը պա-
խալները Թուրչի չծախեն. աս բանիս հա-
մար 5 հազար ղուռուշ կաւնէ Թուրչիներն
էրէն, արգելք կըհանէ պախալներու։
Ո՞րչ մը կանցնի պախալները կըկանչէ,
ինչու Թուրչի չէք ծախեր կըհարցընէ. ա-
նոր Ճամիան կայ ըսելով տուն կուտայ մըտ-
վընին կըձգէ քանի մը տաճկի կնիկ ոտք
հանել իրեն արզուհալ տալ Թէ պախալնէ-
րը շատ ըլլալով ամմէն տեղ երբոր Թուր-
չի ուզօղ ծոցվոր մը կըլլար՝ շուտ մը կը-
գտնայինք. հիմա պախալնէրը չկրնալով
ծախել, ԹուրչուՃինէրնալ քիչ ու հեռու
ըլլալով՝ գտնալը կուշայվի. իսկ գիշեր ա-
տեն ամենևին անհնարին ըլլալով բերել
տալը՝ աս պատՃառով ծոցվորներուն շատ
վատնոգ կըհանի, ինչվան հիմա չորս զա-

ւակ անցուցին ըսելով Թող իրեք կնիկալ վկայուԹի տան, ես անկից ետքը բանը կըհոգամ կըսէ։ Պահաքներնալ ըսածին պէս ըրին. ըստակ տալով քանի մը տաձկի կնիկ ոտք հանեցին արդուհալ գրել տըվին. ինքնալ անոր վրայ ասանկ իլամ կըհանէ։ Ի. բաւ էսնաֆ էսնաֆի բան պէտքը չէ ծախել, բայց ուր որ հոգի կորսնցընելու վտանգ կըմտնայ՝ հոն բանը կըփոխվի, ասանկ վտանգէն ժողովուրդը խալցընելու համար՝ պահաքներնալ Թող կարեւան ծախել ասկէց ետքը, միայն Թէ դուրսը գրած չայտնի Թող չիծախեն, այլ ներսը գրած ծախեն։ Ա.այց աս վՀիռը ընելու համար՝ պահաքներէնալ 7500 ղուռուշ կառնէ։

Սուլդան Համիտը շատ սէր ունենալով քահրեղէն (Հեվահիրեղէն) ու մարգըրտեղէն չինքերու վրայ՝ իր աս սէրը պատՀառ եղավ որ խոյուսմՀիուե արՀեստը ստանալի մէջ օրէօր առաջ գնայ. և աշնիւ տիւղեան միքայէլին Ձարտարապետութիւնը երևան եկավ։ Ա.սիկայ Ք. սուլդան մուսդաֆային օրէն Թագաւորական խոյուսմՀի ըլլալով. ինքնալ ընտրողամիտ մարդ՝ գեղեցիկ Ձաշակ արուեստից սիրտը ունենալով՝ փրէնկիստանէն ընտիր քաշվածներ (բէսիմներ) բերել կուտար, անոնց աղվոր ձևերը արևելեան ախորժակին յարմարցընելով՝ նոր նոր բաներ կըՀանէր, աղվոր ձևի մը մէջ կըխօԹէր ինչ որ քարեղէն չինելու բաներ կան, ծաղիկները բարչէր ամաններ սուլդան Համիտին Համար՝ մէկ նոր ձև մը մէկ աղ-

վարուժէ մը վրանին առնելով ով որ կը-
տեսնար մկկէն կիմանար աս նոր վարպե-
տին հնարած ըլլալը . դուրսկնայ Ձարտա-
րագործ մարդիկները իր քովը առնելով ,
անոնց սորվեցընելով բանեցընելը՝ անկից
աչվընին բացվեցաւ ուրիշ ամէն հայաղգի
վարպետներուն որ չարսուխ մէջ եկան , ո-
րով մեծ արդիւնք ունեցաւ աս արհեստին
մէջ , ինչը պատճառ եղավ որ օրէօր կա-
տարելագործեցաւ ստանպօլի մէջ , հասաւ
հնկիլիզի ու ֆրանսայի վարպետներուն ,
անանկ որ ստանպօլի վարպետներուն բա-
րակ բանվածներուն պէս ֆրէնկիստանի
մէջ ուրիշ տեղվանք չէն գտնըվիր աս եր-
կու տեղէն զատ :

Պուլդան համիտը արիւն չէր սիրեր , բայց
իր օրը դիպուած մը հանդիպեցաւ զարմա-
նալի . երբոր օր մը ծպտեալ ( թէպտիլ ) կը-
քալեր ստանպօլի մէջ՝ իրեն առջին տղայ
մը եկավ 18 , 20 տարվան . քանի մը պտոյտ
ընելէն նորէն առջին եկավ աս տանկի տը-
ղան , ուրիշ տեղվանք ժուռ գալով հինալ
երրորդ անգամ իր դէմը եկավ . ան ատե-
նը իր վրայ խիստ բարկութիւն մը գալով
հրամմեց գլուխը կտրել . երբոր դարձաւ
սերայը եկաւ՝ իրեն մկ մեղքընալ մը գա-
լով ինքիր վրայ զարմացած մնաց թէ ես
արիւն Թափել չեմ սիրեր , ինչ եղավ ինծի
ասոր գլուխը զարնել տալ , հրամմեց որ եր-
բոր սովորութիւնը կեօրէ իրեք օր մեռելը
կրգնեն՝ մինչ դնեն ինչ արդեօք կըզըր-
ցեն եկօղները մեռնողին վրայ , երկրորդ

օրը տեսան որ մայրը եկավ ասոր վրայ լա-
լու, որ ցաւելով կըտիշէր իր յաչախ տը-
ված անէծքը աս անզգամ քուռ զաւկին
վրայ աղաղակելով, Թէպէտ ես շատ կըսեի
Թագաւորին Թուրին տակը էյնաս, բայց ես
ասանկ շուտով չէի ուզեր որ հանդիսիս։
Ին ատենը հասկըցաւ Թագաւորը մայրա-
կան անէծքին զօրութիւնը՝ որ գինքը բռնա-
դատեց անոր գլուխը կտրելու։

Սուլդան Համիտին օրը երկու հոգի բայէ-
նէրէն գլխատվեցան որ հոս յիշենք։ 1786
գլխատվեցաւ Հայհոռոմ փէդռաքին, որ
շատ երևելի մարդ եղավ. ասիկայ էկինի
ապուչէխ գեղէն եկած ըլլալով՝ ծառայ էր
եղած Ծերուհին ու ռաստ օղլուին, որոնք
զօռպային ատենէն Հարստացած ըլլալով
զարպխանէ սարրաֆի եղած էին. քանի մը
տարի ծառայելէն ետև ինքիրէրնին քաշ-
վելով աս փէդռաքին սկսաւ անոնց տեղը
սարրաֆութիւը ընել էյրէթի. ան ատեն-
վան հաֆըս անուն զարպխանէ էմինին ա-
ռաջարկելով Թագաւորին՝ սարրաֆութե
պէրաթը փէդռաքին առաւ, անկից ետքը
ինքը սկսաւ դարձընել անանկ խելքով ա-
նանկ վարպետութիւ մը՝ որ ամէնէն սէրայի
մէջ եղողներուն սիրելի եղավ նաև դուր-
սի բէյէվներուն. ասանք ամէնեննալ Հարստ-
ցուց ինքնալ Հարստցաւ. որուն անհատ-
նում Հարստութիւը եղավ կըսեն նէրսի ըս-
տակը պարապ չիԹողլով, այլ վարպետութի
մը դարձընելով շահեցընելով. իր բարե-
կամ տաճկներուն ասոր անոր համար սէ-

հիմ կառնէր, քանի մը տարիէն անոր գի-
նը նաև շահը հանելով իրեն կուտար ա-
ռանց իրեն գիտնալու։ Նոյնակ աղէկութի-
նէր ընելով շատ սիրելի ունէր իրեն. ինքը
դուրսէն թէպէտ մենծութի՛ն մը փարթա-
մութի՛ն մը չէր ցոյցներ հագուստի վրայօք՝
բայց ամէն մենծին սիրելի ըլլալով խօսքը
անցուկ եղավ. ինքնալ կուզեր որ իր խօս-
քը քալէ, մտքի դրածը առաջ տանի. ա-
նանկով շատ բանի մէջ խառնըվեցաւ. բայց
աս գոռոզութիը ահա եղավ իրեն կործա-
նում. ինչպէս որ սովորութի՛ն է ամէն յա-
ջողութի՛ն ունեցողներուն՝ առաջ յանձնա-
պաստան ըլլալ, եւաքը նոյն յանձնապաս-
տանութը վտանգաւոր բաներու ձեռք զար-
նել անկից կործանիլ։ Ն՛եզայիըլի հասան
գափուտան փաշան ու գօձա եուսուֆ փա-
շան վէզիրը ուզեցին մավռօ եանին պէյ
ընելու. ասիկայ որովհետև պախալութի՛ն
առաջ եկած աննշան մարդ մըներ, ամէն
հոռմըները՝ ինչպէս փեդռաքիինալ համա-
րում մը չունէին վրան, էլին ուզեր որ ա-
սիկայ պէյ ըլլայ. եուսուֆ փաշան ըսած
ունէր փեդռաքիին՝ դէմ չկռնել աս բա-
նիս գլուխդ կըտրըվի. փեդռաքին իր կըռ-
նահներուն մենծերուն ու թագաւորին ա-
պաւինած ըլլալով որին աչքն եր մնած՝
պատասխան տըված ըլլայ կըսեն, աս մարդս
աղնուատոհմ (զատ) չըլլալով չիկրնար
պէյ ըլլալ, թող չեմ իտար թէև իմ գլուխս
կտրըվի։ Նըրան մտածիկցաւ օրը որ կըմնա-
ծէին ասիկայ կորսնցնելու՝ ամենևին չի-

մացընելու համար մավռօ եանին (որ վե-
րոյիշեալ Ղեղայիրլի խափուտան փաշային
ծառայութե մէջն էր սիրելի իրեն,) փիդ-
ռաքին իր տունը կանչեց հարկինք ըլլալ.
կեր ու խումբ ընելու ատենը փիդռաքին
գլուխը տաքցած ըլլալով շատ պարծենա-
լով խօրաթեց թե ինչպես կարողուի ունիմ
չուզածս թող չիտալու. ահ ձգելով սպառ-
նացաւ իրեն պէյութե եաւէ չկրնալ, մավ-
ռօ եանին կեղծաւորութէ իր առջին փախ-
չելով՝ ահով դողով կենալով՝ իր ուզածին
դուրս բան չընել կրնոստանար. բայց եր-
բոր վաղուան օրը դարապետին վար կնջ-
նալով իր նաւակով կրմօտիկնար եալը քէօշ-
քին զարպխանին եկլալու, դատաւորին
նաւակը վրայ հասնելով զինքը վերցուց տա-
րաւ վէզիրին. վերցընելէն առաջ փիդռաա-
քին դատաւորին ականջը խօսեցաւ՝ զինքը
թող տալու միայն դիմացը ղալադիա անց-
նելու՝ ան ատենը ինչ մեծութիւն որ ուզէ
խոստացաւ զինքը հասցընելու (ինչպես որ
իրաւ կարօղ էր), ղալադիա անցնելու միտ-
քը ան էր որ դէսպանին սերայը փախչի.
բայց դատաւորը թող չիտալով երբոր վէ-
զիրին առջին հանեց՝ անիկայալ պօսթան
պաշին խրկեց իբր եմանեթ, այլ գաղտուկ
հրամմեց տանջանք տալու, որպէս զի կա-
րելի ըլլայ տանջանքին մէջը մեռնի: Ճ ատ
տեղէն միջնորդութէ գնաց թագաւորին՝
այլ աւելի նեբսի խաթունները շահզատէն
խրկեցին սուլդան համիտին աղաչանք դնե-
լով բերանը որպէս զի փիդռաքին աղա-

տէ. սուլդան Համիտնաւ չէր ուզեր ամե-
նևին որ փեդրաքին մեռնի: Այլ երբոր
ուրբաթ օրը սելամլըխ պիտոր ելլար սուլ-
դան Համիտը՝ վերոյիշեալ երկու փաշայ-
ներնաւ ոտքը ընկան թագաւորին ըսելով՝
զօրքը աս մարդը չեն ուզեր, թէ որ ողջ
պահես քու թախտդ վտանգի մէջ պիտոր
իմնայ, լաւ է մէկ հայ մը մեռնի՝ քան թէ
քեզաւ մեզաւ վտանգի մէջ ձգել, աս խօս-
քիս վրայ հաղիւ հրաման առնելով՝ նոյն
օրն որ մաւուռ եանին քուքա հագած պէս
եղած մէկ-մէկ թերհանելով պապի հիւմայունէն
դուրս կելլար՝ իր աչքին առջին հոն փեդ-
ռաքիին գլուխը կտրեցին, որ արդէն տան-
ջանքէն կէս մեռելի պէս եր եղած. մաւ-
ուռ եանիին ուզածը ըրին. վանն ալ միշտ կը-
սէ եղեր խափուտան փաշային, ինչուան որ
փեդռաքիին գլուխը կտրած չտեսնամ
պէյուղլուն յանձ չեմ առներ. գիտեմ որ
անիկայ իմ եաւէս իմ մահս պիտոր փո-
րէ: Այսանկով իրեն մէկ կամապաշտուքիը
խօսքը առաջ տանելու համար պատճառ
եղավ թէ իրեն մահուան՝ և թէ ուրիշ շատ
մարդոց միաս տալու՝ որ անոր ձեռքով կը-
վատրկէին, իրեն ունեցածնաւ ամէնը ար-
քունիքը առնին:

Ա՛նկաւ գլխատվողը եղավ սախրզիի ըսքա-
նավ տիմիդրի. ասիկայ Համա սուլդանին [1]

---

(1) Աս Համա սուլդանը եղավ անուանի հնիկներէն
մէկը որ աշխարհ եկերէն, իր կառավարիչ խելքին
համար. հերիք գովասանք է ըսելը թէ ֆ. սուլդան

սարրաֆն էր, որ գործաւոր սուլդան ըլլալով ըսքանաւելին խօսքնալ գործաւոր էր՝ խօսքը անցուկ, որուն վրայ որ առնելիք ունենար՝ սուլդանին խօսքովը կըփրցընէր կըլինցընէր. բայց ասոնք բանիս համար շատ թշնամի ունեցաւ մեծերէն. ուրիշ դիւցէնալ թշնամութիւն ունեցաւ իր եղբօրը պատճառովը որ կրսվեր Ճեանի, կընստեր սախրզ. որուն քնութիւնը ըլլալով ժանտ աննման իր եղբօրը՝ շատ բռնութի ըրավ սախրզցոց աւելի հոն եղած ուղղափառաց վրայ. անանկ նեղութիւններ հասուց կապեր դրավ վրանին՝ որ իբր թէ հատուց. ինչ որ կուզէր կընէր հոն իր եղբօրը ուժովը անունովը. ասոր պատճառովնալ շատ մարդ ատելի եղավ ինքը տիմիդրին։ Իրրոր 1788 էսմա սուլդանը մեռաւ՝ ըսքանաւելնալ բռնեցին, քանի մը օր բանտը դնելէն ետև գլխատեցին. վրայի գրին մէջը գլխաւոր յանցանք դրերէին Աթէզէ գոռալ. իրէն ուներացածը առին որ անչափ շատ բան չէլավ ինչչափ որ ելած էին իրմէ առաջ գլխատուած բայլներուն քովէն։ Իտքը իր եղբօրը գլուխնալ կարեցին. օրմընալ ըսքիւխդա գօ հոռումնալ որ լիվատիացի հարուստ վա-

---

մուսդաֆան խելացի թագաւորը շատ հեղ ասոր խորհուրդ կըհարցընէր. ինչպէս նաև սուլդան Համիտը՝ ոյնոյ երկուքնալ հարազատ քուրէրնին էր. խելացի ըլլալէն զատ իր խօսքնալ կարուկ էր կարգաւորեալ. ասկայ կարգըլած էր միշտին օղլու վէզիրին հետ. անոր մեռնելէն ետև շատ լալէն կուրութի մը եկաւ վրան, որ խիստ մշուշ կըտեսնար։

Ձառական ըլլալով պէյօղլուն կընստէր՝ գի-
շերանոց բազմուԹիւն տունը կոխելով վերու-
ցին գլխատեցին։

Վ֊լխատված տաՃկընէրուն մէջէն արտա-
ռոց բան եղաւ երկու արպընէրուն կախ-
վիլը, որոնք երկուքնալ մարդ կերերէին.
երբոր բռնըվեցան քննուԹեան ըրին՝ հասկը-
ցան որ աս երկու արապնէրնալ ափրիկէին
ան աշխըրքէն էին եկած, ուր մարդ կու-
տեն, մարդակեր կըսվին. Հոն սորված ըլ-
լալով՝ գլխաւոր պատՃառը իրենց սովորու-
ԹիՆ էր եղած՝ որ հիմնալ աս երկու հոգին
հում հում խածնելով կերերէին. ուրիշ-
ներուն օրինակ ըլլալու համար ասոնք եր-
կուքնալ հրապարակաւ կախեցին։

Ի֊ս առեներըը գլխատվելէն խալըսօղը ե-
ղաւ Վ֊ամՆտօ հրէայն, որ խիստ հարուստ
էր վաՃառականուԹէ, պարխանայներ քե-
րել կուտար հինտի ու ֆրէնկիստանի ապ-
րանքներու աւելի պահարներու. ձեռա-
գործներ չուխա, ԹիւլպենտՆ ևՁ, ամմինին
աւելի էլմաս, էսնաֆներուն կըբաժնէր.
անկէց ամմինուն վրայ հազարներով քէսե-
ներ առնելիք ունէր, մըսըր չարշըցիներուն
վրայ, ղույումՃիներուն ու ԹիւլպենտՃի-
ներուն վրայ։ Վ֊ույումՃիներէն իր առնե-
լիքը առնելու համար աս խելքը գտնեցուց
որ՝ տէլի պէյը ուլաՀ պէյի ըրավ, խոստա-
նալով իրեն ամմին պատրաստուԹիւը ինքը
հոգալ, քանի Ձեվահիրլի գան որ պէտք էր
պէյին՝ իր առնելիքին տեղը ըստրկի տեղ
քարեղէն ապրանք առավ ղույումՃիներ-

րէն, ասանկալ ուրիշ կամաֆինէրէն. անան-
կով պէյին վրայ անցընելով իր առնելիքը
ողջընցուց։ ( )ր մը շընկոց առնելով իր վրայ
թէ պիտոր բռնեն, ելավ ֆինէրէն ուր
խիստ փառաւոր եալը մը ունէր, մէյիտ իս-
քեվէսին եկավ. միաքը դնելով անկէց պէյ-
օղլու ելլալ մէկ դեսպանի մը սէրայ փախ-
չիլ. որովհետև իրեք դեսպանի ֆէրմանը
էր, ինկիլիզի ֆրանսզի նեմչիկի, բայց հոն
ան օրը 4 Ձինադէ տեմնալով որ կը թաղէ-
լին, վախէն Թօփխանէն քաշել տըվավ նա-
ւակը. ղուրշունլու մաղազային առջին հա-
սածին պէս՝ մէյմընալ տեմնալով որ դիմա-
ցէն պաղչէ խափուսիին սէրայէն նաւակ-
նեը ելան իր վրայ կուգան, ասիկայ բանը
հասկընալով՝ քովը ինկիլիզի նաւ մը կըտես-
նայ հոն կելլայ, ելածին պէսալ ան նաւակ-
ները հասան զինքը բռնելու, բայց նաւուն
մէջ ելած գանըվելով խափուտանը դիմա-
ցաւ չկտըվավ. հոն ինկիլիզին դեսպանը
մարդ խրկեց, հրաւիրեց ինկիլզեւռա եր-
թալու. խոստանալով իրէն տարին 60 հա-
զար եկամուտ կապել. ասանկալ մէկալ
դեսպանները կըհրաւիրէին ամէնինալ է-
կամուտ խոստանալով ասանկ մեծ մարդու՝
որ աշխարհիս հետ առուտուր ընօղ մարդ
էր. բայց ինքը նեմչիկին հողը ընարեց,
Թրեստ եկավ ինչվան ետքը հոն կեցաւ. եա-
քը դեսպանը իր ամէնն առնելիքները փըր-
ցուց ապրանքները առավ իրէն խրկեց։
Վ էրը պատմեցինք արտառոց անձրևի վր,
հոս հիմա պատմինք ծովուն արտառոց ղէ-

*պուճածի մը վրայ ։ 1780 պօղաղ իչխին ծո-
վը անչափ ձկներով լեցվեցաւ որ ինչվան
տեղ տեղ հոտիլ սկսաւ ։ վասն դի սեպտեմ-
բերի մէջ ան տարին խիստ շատցաւ ֆա-
լեանօզը՝ [1] որ ախբնտրին մէջ վերէն'իվար*

---

(1) Ֆալեանօզը ստանալ Ձերմակ ծովին կուգայ, ուր նաւավարները քաւօ տօռօ կըսեն ասոր. եօնօ-
զին պէս իրեք մենծուբ՝ որ եօնօզը կուլ կուտայ. երբոր աշնան առեն ձկներուն խումբը (սիւրիւն) կըսկըսի սև ծովէն գալ Ձերմակ ծովը անցնելու հա-
մար ան առենը ստանալին պօղաղ իչխին կուգայ ու-
տելու համար անոնք. անկից մէկալ ձկները դէպ 'ի
ցամաք փախչըտելով հէշտ կըլլայ մարդուս անոնք
բռնելը ։ Այսոր պատճառը աղեկ հասկըցվեցաւ 1812
էն ետև, որ եղավ նշանաւոր Թուրկան մը ստան-
պօլի ծովին ձուկը քիչնալուն. պատճառը ան եղավ
որ 1811 դեկտեմբերի ինչպէս նաև 1812 յունվարի
ու փետրվարի մէջ սաստիկ ցուրտ ըրավ ստանպօլ.
ծովուն մէջը շատ ձկներու տեսակ սառեցան որ մար-
դիկ ձեռքով կըբռնէին. ան տարիէն ետև իւլիւֆէր,
բուչուդա, բալամուտ, ևն, ստանպօլին ծովին պակ-
սեցան. քանի մը տարիէն ետև սկսան քիչ քիչ երև-
նալ. և Թէպէտ ասանկ տեսքի տարիներուս շատնալ սկսան՝
բայց առջի առենին պէս հէշտ չըլլար հիմա մար-
դուս բռնելը. վն դի ինչպէս խըլըճ՝ ձուկը անանկ-
ալ ֆալեանօզը ան տարիէն ետև աներևոյթ ձեաց
ըսկըզբովին վերջացաւ կամ ան տարվան ցուրտին վախ-
նալով և կամ հետևեալ տարին ան ձկներուն շատ-
վըրտԹիը չկրցանալուն համար չկան։ Ֆալեանօզին
չկրցալուը՝ ամէն տեսակ ձկան ախբնտրն ազատ գըտ-
նալով համարձակ կանցնին կերԹան խմբովին Ձեր-
մակ ծովը ախբնտրին մէջէն խորտնկէն ուր մարդս
չկրնար բռնել. ձկնորսներուն բռնածը կըլլայ քա-
նի մը ձկներ՝ որ իրենց խումբէն զատված կըքալեն
ախբնտրէն դուրս դէպ'ի ցամաքը։

Խըլըճ'ին ու ֆալեանօզին չկրցալը ստանպօլցոց նոր
բան կերևնայ, բայց բնական պատմութիւը կըսորվե-
ցընէ որ՝ ուրիչ ծովէրուն մէջինալ շատ եղերին ա-

բռնկեր կըպտրտեր. իւլիւֆէրն ու քուչու-
դան ախընտրէն հեռու ցամաքին մօտիկ
կանցնէին ֆալեանօղին վախէն, բալամու-
տը աւելի մօտիկ, ստավրիտը ամմինէն մօ-
տիկ. ան տարին ստանպօլցիք ձանձրացե-
րէին ձուկ ուտելէն։ Ա՛ս ձկներըը իրարու
թշնամի ըլլալով՝ իրար հալածելով ուտե-
լու համար՝ ստավրիտին բազմութիը ան-
չափ շատցած եր ցամաքին քովերը՝ որ ամ-
մինէն եալըին լիմանները ձկնե-
րէն փախած իրարու վրայ լեցված ըլլալով՝
նաւակները հազիւ կրնային ցամաքը մո-
տիկնալ. որովհետև ջուր չեր մնացած, ջու-
րի տեղ ձկներուն կըզարնեին թիերը (քիւ-
րեկները). անանկով իրարու շաւորուհէն
ջուր չիգտնալով, հոն գտնըված ստավրիտ
ներսուն ամմինէնալ սատկեցան, մկմկիկու
վրայ դիզված սկսան հոտիլ. շատ տեղ հարկ
եղավ օրերով աշխատիլ աս սատկածները
ծովէն հանել, նաւակները լեցընելով խո-
րունկ ծովը նետել տալ. վասն զի չէին կըր-
նար նստիլ գարշահոտութենէն, ինչվան որ
մկկ փոթորիկ մը եկլալով առաւ ամմինէնալ
մնած ծովը քշեց։

Ծովուն վրայ նորատեսիլ բանմընալ ան

---

սանկ. ովկիանոսին մէջը սովորական ձուկ մը չկան. կարծ պակսերէ տեղէ մը՝ ուրիշ տեղ գացերէ. 90 տարի անցնելէն ետև նորէն գարձեր եկերէ։ Ինչպէս որ իրեն ձկան վրայալ ստանպօլին ծերերը մեզի պատմեցին, թէ 1812էն 60 տարի առաջ ասանկ պակսերէ ստանպօլէն, քանի մը տարի անցնելէն ետև՝ նորէն գարձեր եկերէ։

եղավ որ՝ ստանպօլին չէօփլիւկը շատոնց վընէ դիզված ըլլալով յանկարծ փրթաւ. ծովուն ջուրը աս դիս ան դին սկսաւ պարտ ըլնել ասիկայ որ պզտիկ կղզի մընէր եղած. վրան 12 մարդ կար, շատ շուն. տանկրնէրը խղճալով մավունայով գացին շուները վերուցին, մարդիկներնալ նաւակներով հանեցին. ջուրերը աս կղզին վեր տանելով ինչման խուրուչէշմին առջին օրերով վեր վար պարտցուցին ախընտրն ու անապֆօւը, ինչման օրմընալ սաստիկ ախընտրին մէջը էյնալով առաւ տարաւ ստանպօլն դուրս քշեց։

Պուլղան Համիտին վէզիրները եղան ատոնք։ Պ՚ինհսին օղլի Մհմմհտ փաշայ, որ և սէրտար էր եղած օտտուի։ Պ՚ասր օրը հաշտութիւն ըլլալով մոսկովին հետ երբոր դառնար կուգար Էտրէնէ, Ձամփուն մէջ մեռնելով՝ էյեուպ բերին Թաղեցին 1188 հիճրէթին (1774)։

Երեն վէզիրութեան ատենը խահվէ ծախող խանութպանները օր մը ամմհնը մէկէն ժողվըվելով փաշային դուռը եկան, չաւուշ պաշին ձեռքովը աղաչանք ըրին որ ասկէց ետքը 25 միրհիմ խահվէն 6 փարայ ծախեն, որովհետև ինչման ան ատեն նարդէր դրված 5 փարայով կըծախէին, հիմա ամմհնը մէկ ըերան աղաղակ վերուցին որ մեզի ձեռք չիտար 5 փարայով ծախել։ Պ՚ղիրը ասոնց գլխաւորները վեր իրեն առջին կանչեց կրկին հարցուց. երբոր անոնք լալով նոյն խօսքին վրայ կենալով ձեռք չի-

տաը կըկանչէին, իը խահվէձի պաշին առ-
ջին կանչէց ապսպրէց, որովհետև աս խա-
նութպանները ձեռք չիտաը եղեր ըսավ
5 փարայով ծախել, ասոնց մեղք չըլլայ՝ ես-
ալ ասօրվընէ ետ կըկենամ խահվէ չեմ
խմեր. դուռնալ ասկեց ետքը խահվեի տեղ
չերպեթ եփէ. ասանկալ պիտոը ընեն չա-
վուշ պաշին, քեախեա պէյը, ամմէն ըի-
ձաընէրնալ՝ ի հարկէ մեզի պիտոը հետևին։
Այտքը դառնալով խանութպաններուն ա-
պըսպրեց. ուրթը օր ձեզի ատեն՝ քովի ու-
նեցած խահվենիդ առջինին պէս 5 փարայ-
ով ծախեցէք. բայց ուրթը օր անցնելէն ե-
տև թէպտիւ կելլամ, թէ որ մեկերնիդ
գտնամ որ խանութ բացերէք խահվէ կը-
ծախէք՝ իսկոյն կըկախեմ, ասանկ հրամմե-
լով առջևէն հանեց։ Այսոնք հիմա վար ին-
չան սիրտերնին անհնարին ալեկոծութեան
մէջ ընկալով՝ իրենց ըրածին վրայ հազար
անգամ ցաւելով՝ խորհուրդի մտան չա-
վուշ պաշիին ոտքը ընկան, աղաչանք պա-
ղատանք ըրին. 10 հազար ղուրուշ իրեն
խոստանալով, 25 հազարալ վեզիրին, մի-
այն թէ թող առջինին պէս իրենց հրաման
տայ 5 փարայով ծախելու, հապա հրաման
առին։ Այսանկով աս խելացի վեզիրը իրեն
հրամանը քալցուց, և միանգամայն իրենց
ագահութիը պատժեց։

Ի զգէթ մհեմմետ փաշայ։ Ազնիվ գե-
ղէն. 1189 հիճրէթին (1775) ձգվեցաւ։
Այսոր օրը եզավ որ խաթագեղին նաւավար-
նէրը տղոյմ ըստակ ուզել առնելնուն հա-

մար հին սովորութիւնը դէմ, հայուն և հոռ-
մին պատրիարգները միաբանեցան, նպով-
քով արգելելոյին մէկի մը չյիշեցնալ ամե-
նևին խարագեղին խաչելեն. քանի մը օրէն
ետև տեսնալով ան նաւավարները ինչ վնաս
որ իրենց ձեռքնին ըրին, շատ ընծայնե-
րով երկու աղգի պատրիարգին խրկեցին
իրենց քեահեայները, Թողութի ուզելով
իրենց ըրածնին վրայ, միջնորդներ ձգելով
աղաչանքով վերցընել տալին նպովքը. երդ-
մամբ խոստանալով մէյմընալ ամենևին
տղոցմէ ըստակ չխպահանջելու:

Սահակալ հարսնիքներուն համար տուրք
առնելը քանի գնայ չատնալու հետ էր և-
ղեր, առջի չափին ան դիի ծայրը անցեր-
եր. եկնիչեր աղասին, խալ չուխատարին,
չօրպաճին, նէֆէրները ևն, ամէնն հարս-
նիքներուն ըստակ կըպահանջէին. անանկ
որ մէկ հարսնիքի մը համար ինչվան 500
ղուռուշ կերթար. թէ որ աղջկան դին
հեռու տեղ ըլլար՝ ֆէներ կամ պալատ,
այնչափ մընալ աղջկան դիին կըպահանջե-
ին կառնէին. աս տուրքէն զատ նէֆէրին
մէկը կըպահանջեր որ հարսնիքին խահվե-
ձին ինքը ըլլայ, մէկալը մանաւ եղջեր կը-
պահանջեր որ պատուղը իրմէն առնեն ևն:
Այս քաներուս համար սուլդան Համիտին օ-
րը հայոց աղգին արգելահալ տրվեցաւ, ա-
նանկով հին սովորութիւնը չտկեցին, հարս-
նիքին ամէն խարձին համար 27 ղուռուշ
կապեցին որ ձնայ:

Տերվիշ Մհէմմետ փաշայ: Զգվեցաւ 1190

(1776)։

Տէրէնտէլի Մէհմէտ փաշայ։ Ռաջ վէզիր քէթխուտասի էր. ձգվեցաւ 1192 (1778)։

Ղազ կամ Ղէլէպի Մէհմէտ փաշայ։ Ձգվեցաւ 1193 (1779)։

Սիլէհտար Եսսէյիտ Մէհմէտ փաշայ, որ Գարա վէզիր ըսվեցաւ։ Խելացի խաղաղասէր աշխարհաշէն մարդ ըլլալով շատ սիրելի էր եղած սուլթան Համիտին, անոր համար սիլէհտար ըրավ իրեն. բայց ահաւասիկ մարդ ըլլալով սիրտը չիտակ՝ խօսքը կըտրուկ՝ կառավարուե մէջ խառնըվօղ՝ դուրսը եղողները չէին ուզեր վէզիրը, յաձախ կրակ ձգելով կիմացընէին։ Ռսիկայ հասկընալով խընդրեց Թագաւորէն որ վէզիրը վեզիր ընէ. երբոր եղավ՝ առաջ մէկէն շատ ոսկի բաժնեց էնիչէրիներուն 300 հազար փափ. եօքը չօրպաձիները կանչելով ասպսրեց, ուր որ կրակ ըլլայ՝ ան տեղն ղուրլուխին չօրպաձին կըսպաննեմ. աս պատուհերքին վրայ կրակը բոլորովին կտրեցաւ. անոր օրը մէյմընալ կրակ չեղավ ստանպօլ։ Սաստիկ արգելք հանեց ինչվան ղտրելէզ գառն (ղուզի) չիմորթելու ամենևին, որպէս զի գառները մենծնալով միսը շատնայ. աս արգելքը դիմանալու համար նզովք հանել տըվավ, քիւթիւհիները գրել տըվավ. խիստ եաւէ ընկաւ զանց ընօղները բռնելու սպանննելու. աս արգելքն է որ ինչվան հիմա կըքշէ բայց ստանպօլի մէջ միայն. ստանպօլէն դուրս ամէնն տեղ ուզած ա-

տեննին կըկտրեն կուտեն, որով մեկ դեղ
մը չեղավ. այլ մնին առատուե Ձարը շատ
աղեկը եաքերեն 1808 մեսգաֆա փաշան
ըրավ, դուրսերը բուն իրեն տեղվանքը ա-
նանկ կարգ դնելով՝ որ անկից ետքը ոչ եր-
բեք մեկ կարօտութեի կամ սղութեի կըքաշե
ստանպօլ։ Իրեն կտրուկ ահարկու դատաս-
տան տեսնալը հասկըցընելու համար՝ հե-
տևեալ դիպուածս պատմենք։ Վանի մը
ուտելու բանեը կային՝ որ խանութպանին-
ըը ան ատենվան կեօրե սուղ կըծախեին.
սուղ ծախելու համարալ դուրս չէին հա-
նեը կըպահեին. խարա վեզիրը հոգ տանե-
լով որ առջևի բամազանին համար աղքատ-
նեըը կարենան աժան ուտել հարկաւոր բա-
նեըը, կանչեց օտուն խափուսիեն սոխ, հաւ,
կիթ, ու պաստըրմայ ծախօղնեըը. ապըս-
պրեց որ հաւկիթը 2 ըստակ ծախվի, սոխին
օխան 2 փարայ, պաստըրմայինը 24 փա-
րայ։ Իմնք պատասխան տըվին, մենքալ
կուզենք ձեր հրամանը կատարել բայց չենք
կրնար. պատճառն որ չիկայ, տեղըն չեկավ,
չեն խրկեր. վեզիրը կրկին իրենց ապսպրե-
լով տեղերնին խրկեց. ետքը իր մեկ սիրե-
լի չուխատարը պօղազը խրկեց ֆէնէրբա-
քին, հրամմեելով որ երբոր նաւերը պօղա-
զին դուրս կելլան ֆէնէրին առջին կըհաս-
նին, ամմին նաւապետեն ուզէ մեքիւսին
սնտուկը առ քեր. բայց զգույշ կեցիր ըսավ
չըլլայ որ կաշառք առնես, աս քանս լինծ-
մին գոցես, կամ մեկ ուրիշ նենգութի մը
բանեցընես. ես շատ լըսեես (չաշուտ) դրե-

ըեմ ըսալ, կիմանամ գլուխդ կըկտրեմ, իսկ թէ որ առանց նենգութեն ինչպէս որ ըսի բերելու ըլլաս՝5000 ղուռուշ վարձ խոստացաւ իրեն տալու : Ա՛ս մարդս ասանկ ֆերմանով ելավ գնաց ֆէնէրբաքչին , ան տեղի դատաւորին մարդ առնելով՝ ամմէն դուրս ելլօղ նաւերէն մէքթիւպին մնտուխները առավ բերավ վեզիրին . վեզիրը բացաւ կարդաց որ՝ ամմէն խանութպան վառնա եղօղ իրենց մարդերուն պատմելով վեզիրին կանչելը զիրենք , իրենցալ չիկայ ըսելը , եաքը կըպատուիրեին չըլլայ որ աս բաներս իմկիք, մենքալ սուտ ղրուց ընանք . ասոր խարավէզիը կըսեն , մեր գլուխը կըկտրէ : Ա՛ս թուղթերս ձեռք ձգելով վեզիրը հետևեալ օրը տիվան կընէ , ամմէն ան խանութպաններըը նորէն կըկանչէ . դարձեալ կըսկըսի յորդորել աժան ծախելու ան իրեք բանը . անոնք դարձեալ նոյն պատասխանը տըվին . ինչպէս որ ըսինք՝ չիգար վառնայէն որ մենքալ ունենանք աժցընենք . աս ըսածնիդ իրաւ է մի կըհարցընէ , անոնք նորէն իրաւ է ըսելով կերդվընան , որովհետև ապահով էին , իրենց գրածնին վրայ ապաւինեցին , յատուկ մտքնին դրբերէին որ վառնացիք պիտոր չխրկեն : Ա՛ն ատենը կըհարցընէ ա՛վ է ձեր մէջէն հիւսէյին ըսվածը թո՛ղ առնիս գայ . իր գրած թուղթը իրեն կուտայ կարդալու . անիկայ հոն մարելու պէս կըլլայ . անկէ ետև մկկալնալ ասանկ մկկիկ մկկիկ իրենց գրածը կարդալ տալով երբոր ամմէնուն ստուգնալ

նենգութենիևնալ իրենց խօսքերովը երևան
կըհանէ ան բաղմութեան առջին՝ շուտ մը
իրենց էյիտ պաշին կախել կուտայ . մկալ
նանցալ կապսպրէ . իրէք օրէն ես խանուե-
նիդ առջևէն պիտոր անցնիմ կըսէ , թէ որ
ըսածիս պէս բաները առատ չիգըտնամ ,
դրած գնովս ծախենիդ չետեանամ , ամ-
մինքնիդալ ասանկ կըկախեմ : Ա՛սոր վրայ
ինչ ըսես լեյուցին իրենց խանութենները ,
ինչևան տուներէն սոխ ժողվեցին խանութ-
նին դրին , ըսած գնովը ծախեցին : Ա՛սոր
օրը երևան ելավ Ա֊է֊ր֊կէձի որ չիհաս-
կըցվեցաւ ինչ մարդ ըլլալը . ասիկայ աղ-
քատ կերպարանքով սիւփիւրկէն ձեռքը
առած իբր օձախ ավլող մը գինքը ձևացը-
նելով կըպտըտեր , բայց իր ըրած գործքն
էին տաձկի խօնախներըը մտնալ ելլալ , մին-
ծերէն ըստակ ժողվել աղքատաց ողորմու-
թիւն բաժնել . ինքնալ մէկ կտրուկ խօսօղ
չիտակ սրտով մարդ մը երևնալով էվլիայի
պէս մը սեպել տըվերը գինքը , որուն խօս-
քը չէին կոտրեր , ուզածը կուտայինն , ա-
սանկ շատ տարի աղքատ հիւանդներըը կը-
հոգար , Ձամփան ընկածներուն ձգածնէ-
րուն բարերարութիւն կընէր , բայց ա՛վ է՝
ինչ հաւատքի տեր է՝ երևան չեր ելած :
Այսրա վեղիրը որովհետև ասանկ արտա-
ռաց մարդիկը չեր քաշեր , կանչեց ասիկայ
իր դիմացը անունը հարցուց , ասիկայ Ա՛յ
ծառան եմ ըսավ , անունս Ա՛պտուլլահ է ,
հասկըցընել ջուզեց իր հաւատքը . բայց
երբոր վեղիրը սպառնալով բռնադատեց ,

տաձկի լաթի նշան վրան հագաւ, Ճամբանալ սկսաւ երթալ կըսեն. քանի մը օր ասանկ պտըտելէն ետև գնաց նոյն վեզիրին դիմացը իր քրիստոնեայ ըլլալը յայտնեց, նոյն օրնալ գլուխը կտրըվեցաւ։ Այսքը կըմացանք որ՝ օր մը առաջ ձիգվիլթ ժամը գացեր խոստովաներ սրբութիւն առեր. ըսօղալ եղավ թէ ֆրէնկիստանէն եկած մեծ մարդմընէ եղած, գինքը գոցելու ապաշխարելու համար հոս եկած։ Այսբա վեզիրը մեռաւ միզարգելուէ 1195 (1780). Թաղեցաւ սուլդան Համիտին Թիւրպեէին քովը։

Ղզլէթ մէհմէտ փաշայ։ Երկրորդ անգամուն վեզիր եղավ. ասիկայ 1190 (1781) ձգեցին վեզիրութէ։

Ասկէիթ հաձի եէկէն մէհմէտ փաշայ. Ձգվեցաւ 1197 (1782)։ Այսօր օրը ստանպօլին բոլորտիքը քանի մը աւազակներ (լէվէնտներ) ելած ըլլալով նեղութիւն կուտային. ան օրերուն եղածներէն մէկ արտառոց դիպուածը հոս պատմենք։ Ստանպօլէն դուրս իբր թէ ալ այգիմա կայ որ մէկ մաղարայի մը մէջ է. ներսէ ներս Ճամփայ մը կերթայ գետնի տակէն՝ որ ինչվան ստանպօլի մէջ կըհասնի կըսեն։ Որ մը ուզեր Ճամփորդ ստանպօլ եկող վաճառականներ հոն հասնելու ատենը սաստիկ անձրևի բռնըվելով՝ ան մաղարայինէրսի դին կըփախչին, ուր աս դիս ան դին հինթպուտներ կըտեսնան ձգած. հոն քիչ մը կենալէն ետև կըտեսնան որ ուրիշ 30 հոգի

սլ. վինեալ աւազակներ անձրևէն փախած հոն կը լաղէն մնալու. առնց վախէն ան ուրեք չամիսորդնալ լեզապատառ մէյ մէկ թապուտներու մէջ կը փախչին պառկելով կը դողան։ Աւազակները ներսը անձրևէն խալըսած ըլլալով կընտրին գողցած ապրանքնին բաժնելու. շատ բան բաժնելէն ետև՝ թուր մը կը մնայ որուն վրայ վէճ կելլայ մէկերնին արդեօք ինչ երկրէ ըլլալը. երբոր մէկը բան մը կըսէ մէկալը բան մը մէկնալ կելլայ կըսէ որ՝ սըվրկայ եկէք փորձենք՝ թապուտները կտրելով. աս լսածնին պէս մէկնիներուն սիրտը կը փրթի, ուր որ մտերմէն խալըսելու համար՝ հիմայ հոն ողջ ողջ պիտոր կտրըվին. մէկը մէկերնին ձարպիկ ըլլալով՝ թապուտին մէջէն արտառոց հաստը ձան մը հանելով կըսօրայ, մեռելներ ինչ կեցեր եք, առնց դէմ ելէք. մէկալնալ անոր նման ձան մը հանելով կը պատասխանէ, ելլանք, ամմինքնալ մէկէն ելլանք։ Այս լսածնին պէս աւազակները՝ իրար մեռելներու խօսիլ կարծելով՝ ինչ ապրանք որ դուրս հանած էին հոն կը թողուն, փախչող փախչողի կըլլան։

Համիտ խալիլ փաշայ. 1199 (1784) պօղչա առան քշվելով գլուխը կտրըվեցաւ. Այսոր օրը դիպուած մը եղաւ արժանի լսելու. առանպօլ տաձկի մը խօնախ տունէ ցիք սովորութի ունէին, երբոր դուրս կելլային տունը կը կղպէին. բալըքը դիմացի պախալին կուտային. որ երբոր իրենցմէ մէկը գալու ըլլայ բալըքը անկէց առնէ.

աս սովորութիս շատոնցմէնէ ունէին, տա-
րինէրով կերթային կուգային որ ամմէնու-
նալ յայտնի էր եղած։ Երբոր
ասոնք դուրս կելլեն՝ տաշկի հանըմին ի-
րենցմէ մէկը ձեռնալով՝ կուգայ պախալէն
տանը քալլիքը կուչէ. պախալնալ ամե-
նեւին վրան տարակոյս չերթալով կըհանէ
կուտայ. աս հանըմ ձեռացածը տունը կը-
մտնայ, ֆէրաճէն հանելով մնտուկները
կըբանայ. ինչ որ ալթիւ բանէր կըգտնայ՝
երկու պօղչայի մէջ կըտեղաւորցընէ կըկա-
պէ, բէօքէն առջևը առնելով կընատի մա-
նելու ինչպան որ տունեցիք կուգան։ Այ-
բոր ասոնք կուգան պախալէն քալլիքը կու-
զէն, ձէնէ մէկը եկավ առավ կըսէ, ինծի
ետ չիդարձուց. յայտնի է որ տունն է,
հոն կըգտնաք. խաթունը զարմանալով՝
ով պիտոր ըլլայ ասիկայ ըսելով՝ կըզարնէ
դուռը վեր կելլայ, կըտեսնայ աս օտար
կնիկը որ ամենևին հոգը չըլլալով իբր թէ
տունէն մէկը ըլլար՝ անանկ նստեր բէօքէ
մանելու հետ կըլլայ, չիաչ նայիր իրենց
վրայ. քարկանալով վրան կըյարձկին նա-
խատինքներ կուտայ։ Այս կնիկը նստած տե-
ղէն հանդարտ սրտով մը պատասխան կու-
տայ. խաթունն դուն ինծի աս խօսքերս չես
կրնար զուրցել կըսէ. աղէկ նայէ իմ վրայ.
վասն զի ես այսօր աղայիդ հետ նիքեահ ե-
ղայ. ասկէց ետքը ես եմ անոր նիքեահլեն,
աղային գալուն կրսպասեմ. աս լսածին
պէս խաթունը աւելի կըփրփրի, վռնտել
կուզէ. ասիկայ կըդառնայ կըսէ. ես անոր

նիքեահՀլըն ըլլալուս համար հոս լաթերովս եկերեմ, աս երկու պօղչան հետս բերե-բեմ. խաթունը կանչվռտելով մը ան գնա լաթերդ կըսէ. դուռնալ լաթերդալ կորսը-վեցէք գացէք. ան տաքցած ատէնը աս օ-տար կնիկը կըհագվի, երկու պօղչան կը-չալկէ, աղան գայնէ նայեցէք ինչ պիտոր ըսէք ըսելով կելլայ կերթայ։ Իրիկվան ա-ղան կուգայ, բանի մը տեղեակ չըլլալով խիստ կըզարմանայ ինչու իր խաթունը և-րեսը ծռած՝ ամմէնուն դէմքնալ այլայլած մնանՀ կեցերէն տըրտմերեն կըՀարցընէ պատՀառը. խաթունը տռոտած Հազիւ կը-բանայ բերանը նախատինքով վրան կըյար-ձըկի, իր նիքեահՀ ըլլալը ան օրը օտար կըն-կան Հետ երեսը կըզարնէ. աղան ալ աւե-լի զարմանալով խենթեցաք ինչ եղաք կը-սէ, աս ինչ սուտ բան է. ալ ըսավ, ալ պատմեց ձեզի կըՀարցընէ. ես սուտ բան չեմ խօրաթեր կըսէ խաթունը, հիմա հոս եր ան քու նիքեահՀլըդ. իր լաթերնալ ա-ռեր Հետը բերերեր Ձատըն. հոս տեղաւոր-վեր պիտոր էր ուզեր երթալ. Հազիւ կըը-ցայ տունէս վռնտել դուրս Հանել. անան-կով իր պօղչայնները առնելով կորաւ գնաց, մեզ տակնուվրայ ըրավ, պատՀառը դուն եղար։ Իմ լսածին պէս աղան երկու ձեռ-քը գլուխը զարնելով վայ, աս գողուս բան պիտոր ըլլայ կըսէ, դուք ձեզի եկէք, սըն-տուկները նայէ չըլլայ թէ քու լաթերդ ըլ-լան։ Կըվազէն մտուկները կըննային՝ կը-տեսնան որ ինչ ալտին բան կար Հագուստ

նաև Ձեվահիր ամմհինալ պակսերեն չէ-
կան. ան ատենը կլինն որ բարկութենն պա-
շարված կեցերէր՝ կարթընալ կուլայ կողբ-
բայ. աս դիս ան դին մարդ կըխրկեն կը-
փընտռեն, մեկ շշորդ մընալ չեն կրնար
գտնալ, Ձարեբնին կըկտրի դուռը կըհաս-
կըցընեն։ Կայլիր փաշան լսելով կըսկ. գո-
ղը իր գողուե խելքը բանեցուցերէ, դուք
որ տանուտեր էք ինչպես ձեր խելքը չէքա-
նեցուցիք, անչափ ատեն ամմհինուն առջին
բալլիքը կըյանձնեիք. չէիք մտածեր որ օր
մը ասանկ փորձանք կրնայ ըլլալ. անոր հա-
մար պատիժ ձեր անխելքութենը քաշեցէք
ձեր կորսնցուցած բաներուն կսկիծը ըսե-
լով առջևեն կըվռնտե։

Ե՝ահին ալի փաշայ։ ( )զուռն եկավ, 1200
(1785) ձգվեցաւ վեզիրութենէ։

Գ՝օձա կամ Կիւրձի եուսուֆ փաշայ։ Ն՝ե-
ղայիրլի գափուտան Հասան փաշային չքաղ-
ներեն էր. անոր ձեռքովը առաջ մեռայի
փաշայ եղավ ետքը վեզիր, երբոր 1202
(1787) պատերազմ բացվեցաւ, ասիկայ
սերտար ըլլալով օգտուն դուրս հանեց։

Ա՝ուլտան սելիմ երրորդ։

1789։

Վ՝ասանրութենը տարվան էր երբոր թագա-
ւոր նստաւ ֆ, սուլդան սելիմ որդի ֆ,
սուլդան մուսդաֆայի 1203 (1789) 11 րեբ-
ձեպի. ֆշի օր. հետևեալ ֆշի, 17 րեձեպի

(2. ապրիլի) Եպու Էյեուպի Հնսարիին Հա-
մին երթալով Թուր կապեց, Թէպէտ ամ-
մէն րէՀալ օտտուն էին՝ ստանալ եղած-
Ները միայն գայիմմագամները (տեղակալ-
Ները) էին, բայց անանկալ ըլլալով շատ
փառաւորութիւն տեսանք ասոր Թուր կա-
պելու Հանդէսը. ցամաքով Էտրէնէ դրան
Համիւն երթալով, Համիւն ամմէն տեղը
իր անունով կոխված նոր ըստակը ցրուե-
լով, եռքը ծուխով ետ դառնալով։

Յաջորդ օրը ըրաւ արտառոց. Մէյմը Թուր
չիկապած կրակ մարելու գնաց որ սովորու-
Թենէ դուրս էր. Մէյմընալ իր առջի օրե-
րը Թէրսանէն Հինջաւ տեսնալու, Հոն շուտ
մը Թէրսանէ էմինիին գլուխը կտրել սը-
վավ, որուն տղանալ օտտուէն քերել տա-
լով եռքը գլուխը կտրել տրվավ, որ կրա-
վէր նաղդիի էֆէնտին, ասիկայ շատ սի-
րելի էր եղած սուլդան Համիտին Հնչպէս
որ քիչ մը առաջ պատմերնք. ամմէն կա-
ռավարութէ գրեթէ ասոր ձեռքովը կըլ-
լար՝ բայց իր մեծութէը չէր բանեցուցած
բռնակալութէ գրկողութէն ընելու Համար
ուրիշներուն վրայ Հնչպէս որ շատոնք ըրե-
րեն, Հիմա Հինչ կար որ ասանկ բարկութէ
շարժեցաւ սուլդան սելիմը ասոր վրայ՝ կար-
ծիքներով ուրիշ բաներ զուրցեցին։ Յետո
կալ իր առջի օրերը օրթագեղ Հրէայի մը
գլուխ կտրել տրվավ գեղին թէրլիկ Հագ-
նելուն Համար։

Յաջի բարեկարգութէը սուլդան սելիմին
եղավ Հոգին սուը (խըթլըխը) վերցնել.

որովհետև սև ծովին ցորեն չէր իգար, Ձեր-
մակ ծովնալ ասպատակներին (խուրասան-
ներին) խառնըված ըլլալով գժար կու-
գար, վեց ամի չափ ստանպօլ շատ նեղու-
թի քաշեց հացի, ամին օր փունդրուն առ-
ջին կըտեմնայինք բազմութի լեցված, ո-
րոնց աղաղակը առտըվընե կըսկըսեր վեր-
նալ՝ իբար վերբար կոխել, ինչվան հարկ է-
ղավ դատաւորներին մարդ կենալ փունդ-
րուն առջին, որ գոց պահելով մէյ մէկ ծակ
միայն Թողուցերէին հացը տալու. հացնալ
անանկ սև անանկ օտար բաներով խառնը-
ված՝ որ ուտողներուն վրայ բորոտութիւն
մը ընկաւ շատ ատիս. ամանքալ տեսանք որ
տաք տաք անանկ հացը ուտելնուն՝ վրանալ
ջուրը խմելնուն համար՝ մէկէն մեռան. իսկ
ֆրանձելայի խանութները գոցված էին:
Այս խեղճութիւնները որ սուլդան Համիտին
օրը կըլլար՝ շուտ մը վերցնելու համար՝
սուլդան սելիմը զանազան Ճամփայներով
ցորեն բերել տուաց, 20 հազար քէսէ դնե-
լով իր ըստակէն աս բանիս համար:
Պանք պատերազմի դիացին պատմելու,
շվէտին վրայ ինչ կայս որ ունէին՝ անանկ
չիտեսան, Թեպետև անցած տարի նոյեմբ.
4 դաշնադրութիւննին նորոգերէին ստան-
պօլ. ամին նորոգելու ատեն նորէն ըստակ
վճարելով, բայց սուլդան Համիտին մեռնե-
լովը խափանված մնացերը, ինչվան որ շվե-
տի դեսպանին եւս էկնալովը վերջապես
1789 յունիսի 12 ստանպօլ հաստատվեցաւ
աս դաշնադրութիւնը ասիկայ եղավ առջի

դաշնակցուհի որ տաճիկը քրիստոնեայ տէ-
րութիւն հետ ըրավ՝ և առջինը՝ ուր տաճկին
Թագաւորը ձեռք դրավ։ Ասուդան սելիմ
նորին զօրք ժողվել հրամեց, որով 169
հազար ոտանաւոր (հաեան) զօրք պատ-
րաստ եղան. 212 հազարաձի աւոր զօրք.
ամմին բերդ զօրք շատցուց պէտեր պէ-
լերպատ սիլիսթրէ ամմինէն աւելի. իսմայ-
իլ ապտի փաշային գլուխը կտրեց, ինչու
անոգ եղերքը պուղտան պէյին օգնելու՝
որ իր ապրանքովը գերի ընկաւ նեմցէին
ձեռքը. ասանկալ Հռոմուսի փաշային գլու-
խը կտրեց, ինչու աղէկ չէր պաշտպանած
ան բերդը՝ որ մէկ հատիկ ճամփան է տաճ-
կին զօրք խրկելու լեհին մէջ, որոնք ան-
դադար տաճկին օգնութիւն կըխնդրէին որ-
պէս զի մոսկովին վրան ելլան. ան տերու-
թեց դեսպաններու հետ որոնք դէմ էին
մոսկովի ու նեմցէի՝ յատուկ բարեկամուհի
ըլլուց, ինչպէս էին ինկիլիզի պրուշի ու
ֆիլէմինկի դեսպանները. իւաքիւտարի
կամ շքօարայի փաշային որ ապստամբածն
պէս էր՝ իր յանցանքը ներելով հնազան-
դեցընելով սերասքէր փաշայ ըրավ, ապըա
պրելով որ իր առնաւուտ զօրքով երթայ
սրֆը պաշտպանէ. աս փաշան տաճկին
դիւցէն ծառայութիւն մընէր ըրած՝ անով
աչքը մտաւ Թագաւորին. յովսեփ կայսրը
քանի մը հոգի դեսպան էր խրկած աս փա-
շային շատ ընծայներով, խօսք ընելով որ
ան տեղացի առնաւուտները նեմցէին տա-
կը դարձընէ. ասալ առաջ հաւանութիւն

ցըցընելով՝ երբոր ընծայները մարդիկները
ներս առավ՝ դէմ ընկնելն կտրեց։

Ովուրն դիացն ձեղայիրլի խափուտան
Հասան փաշան Թէպէտ 80 տարվան մարդ՝
բայց զօրաւոր ու ձարպիկ ըլլալով ուժը
շատցուց. անատենը որովհետև չիկար Թերսանէն հիմակվան եղած վարպետներէն՝ ֆիլէմէնկէն ծախու առավ երկու ֆռխաԹա 600 հազար ղուռուշով. երկու աւելի խոշորներ ինկիլիզէն առավ 700 հազարով. պարուԹի համարալ շատ ըստակ խարձեց ֆիլէմէնկի վաձառականներէն առնելով ինչվան 60 ղուռուշ տալով մէկ քվինԹալէն. իրեն նաւերուն համրանքը եղան 20 հատ երկու խափախը 70, 74 Թօփ քաշող. 3 նաւ 80, 100 Թօփ քաշող. 6 նաւ 50, 66 Թօփով. 13 ֆռխաԹա 30, 46 Թօփով. 4 չամպէք. 10 քըռլանկըզ. 47 շալուփա. 16 էքզտիրի. ուրիշ շատ մանր նաւեր. ամմէնը մէկ տեղ 400 մը եղան։

Սուլդան սէլիմը ասանկ ամմէն բանը շըտկելէն ետև յորդորական ԹուղԹիրնալ հանեց դրելով ամմէնուն որ քաջուԹէ ձեռկըլվին Թշնամիներուն հետ, վախը մէկ դի ձգեն, որ պատձառ էր եղած իրենց յաղԹըվելուն։ Սրուն հաձոյանալու համար մավրօ եանի ուլահին պէյը շատ ընտանուԹ ունենալով սուլդան սէլիմին հետ՝ միշտ իւրեն շատխօսուԹիւը խոստանալովը կըցրցըներ որ՝ հեշտ (խօլայ) դուրս պիտոր հանէ մոսկովներէն։

## Մոսկուայի ահեղ երկրաշարժը

1789։

Գիշեր մը Նոյեմբերուն վրայ. մոսկովին բնակիչը առտնին սիրելի գետին քովը նստած էր. բոզեմքին իշխանը պէտերբուրգէն քիչ մը հեռու, անոր մօտիկ քամինքոյի զբօսավայրը. իսկ խազախները պուռաչխ Թաթարին մէջ ասպատակելով կավզրշտրկէին. բոզեմքին անանկ կրցրցընէր որ աքքիրմանին վրայ պիտոր վազէր, դէպ՝ի դուռնա պիտոր քալէր ուր տեղ միանար նէմչէի զօրացը հետ՝ որոնց զօրագլուխ էր յովսեփ սաքսոնեան Լօպուշկի իշխանը, որ վերի ուլահը կըքալէր մոսկովիներուն հետ մէկ ըլլալու մտքով։ Նէմչէները նոր պատրաստուելէ կըտեսնային վիեննայի մէջ իրենց առջի կերպերը փոխելով, որպէս զի շտկեն իրենց առջի ըրած սխալմունքնին որ ըրին, որով անչափ նէմչէի զօրք ջարդուվերցան տաշկէն. բայց մեծ գանկատ բացվեցաւ վիեննայի մէջ մոսկովի զօրաց վրայ. պատճառ ասոր տալով իրենց երկու զօրապետաց նախանձը բոզեմքինին ու ռօմանցօֆին մէջ, որ անգործ կեցած ջանք չըրաւ ամենևին նէմչէին զօրացը հետ միանալու՝ ինչպէս որ երկու դիացնալ խօսք դրած էին։

Այս գանկատը լսելով մառէչալ ռօմանցօֆ կոմսը՝ եաշ քաղքին թուղթ գրեց կալիցին իշխանին որ վիեննա դնապան էր նստած.

ասանկ արդարացընելով վիճքը 1789 փետ.
3։ "Երկու օր առաջ Թուղթդ առնելով
» հասկըցայ իմ վըրայ ըրած դանկատնին Թէ
» ես ինչու համար գամլած կեցած էի լե-
» հի սահմանակցուե տեղը՝ ան ատենն որ
» պէտք կը դուննային քովը երթալ, ինչպէս
» որ խօսք դրերին նէմցէին ու մոսկովին
» տէրութիւը։ Ես անանկ կըկարծեմ որ իմ
» առջի ըրած գործքերս կրնան զիս արդա-
» րացընել անգործ կենալուս վըրայ, բայց
» պատճառներնալ հոս զուրցեմ. երբոր
» 1788 ապրիլի սկիզբը աս զօրացը վրայ զո-
» րագլուխ եղայ, տեսայ որ մարքիս դրա-
» ճէն շատ վար էր ու տկար, ոտանաւորը
» ու ձիաւոր զօրքը քիչվըր, Թօփերը հե-
» ռու տեղ Թուռլային վրայ, հարքարնէ-
» րուն մէջի ձեպխանէն ու հարկաւոր քա-
» ները քիչ, զօրաց կէսնալ զրեթէ նոր՝
» աշխատանքի չհսորված և ոչ պատերազ-
» մի շարժմունքներու։ Ասոնք տեսնալով
» հասկըցայ որ անկարելի էր ինծի տալ
» կէն դէմ երթալ առանց վտանգի մէջ
» ձգելու իմին ու զօրաց փառքը հաստատու-
» մը. անոր համար հասկըցուցի Թագու-
» հին աս բանէրս իմ ամէնն շաբթվան
» Թուղթիս մէջը։ Ինգործ մնալ հարկ է-
» ղավ երբոր լսեցի Թէ վէզիրին բանակը
» որուն դէմ պիտոր դնէի՝ նէմցէին սահ-
» մանակցութիւնը մտերէ, ես չունէի ուժ
» անոր դէմ դնելու։ Ասանկով իմ ան-
» գործ մնալս ականջ բռնադատեալ է-
» ղավ. վիտեն ամէնքը որ՝ աւելի ընտիր

„ զօրքը խաղաղներուն հետ մէկ տեղ խըր-
„ կըվեցան խըրըմը պահելու, օգուն պա-
„ շարելու, իմ զօրքերէս շատ գունդ քա-
„ շեցին տարին ֆինլանտիա շվետին դէմ
„ դնելու. ես քիչ մը պաշար գտածիս պէս՝
„ շուտ մը սօղդիքով զօրապետը խրկեցի
„ որ երթայ միանայ քօպուրկին հետ՝ ո-
„ րուն միանալը շատ օգտակար եղավ։ Այլ-
„ զոր ամէն արգելքներէն խալըսեցայ՝
„ Թուրքա գետը անցայ, պուղտանի մէջ
„ ձերբեցի, որ գոնէ գալ պատերազմի մէջ
„ բան մը կարենամ ընել. նոյեմբ. մէջ
„ եաշ քաղաքը կենալով դեռ կըսպասեմ
„ որ հեռու տեղերէն խոշոր թօփեր գան,
„ ուրիշ հարկաւոր բաներ „։

Այս ջատագովութիւնը թէպէտ լսեց կատա-
րինէ թագուհին, բայց ասկից ետքը իր
զօրքը զատ զատ կեցընել չուզեց. մանա-
ւանդ որ օգուն առնըվազ ըլլալով ալ զօրք
պէտքը չէր ըլլար հոն. ամէն զօրքը բօ-
դէմքին իշխանին տակը ձգեց, որուն ձեռ-
քով կըգառնար ան առիւծը ամէն բան։
Այս տեսնալով ւսմանցօֆ կոմսը որ աւելի
հին մառէշալ էր՝ չուզեց ասկից ետքը բա-
նակին մէջ գտնըվիլ, հրաժարիլ նայեցաւ.
ինչպէս որ մաձառին մէջնալ ըրերէր լաշի
նէմցեւին մառէշալը իր հիվընտութեանը
համար։

## Պօհեմի մէջ եղած ծեծերը։

### 1789։

Լրբոր ընդհանուրը (միւթարէքէն) վերջացաւ որ խիստ ցրտուէ համար ըրերէին, նորէն սկսան պօհեմի մէջ զարնըվիլ փեռվարի. տաճիկը վազեց ըսդրինէցա տէղը առնելու՝ բայց չիկրնալով ետ քաշվեցաւ. նէմչիները որովհետև ետևնին վազեցին՝ տաճկրնները ետ դառնալով շատ նէմչ ջարդեցին. դուրսէնալ շատ առնաց, վուտներ գալով ուրիշ բանակ մը եղան պօհեմ ու վերպաս դետերուն մէջ։ Լյսանկով տաճկրները կուգային Լօվի ու Ցուպիցան նորէն ձեռք ձգելու ինչպէս որ դուռնէն սաստիկ հրաման եր եկած. իրենց նըստած տեղը աղէկ եր, ինչու որ կրնային անկից պանեալուքքան ու դռաճիքը պաշտպանելու, պրէպիր կամ պիրկպուց բերդին օգնուէ հասնելու. որ անցած նոյեմբերին պաշարերեր միդրօվքի զօրապետը հիմա մարտի մէջ սկսաւ Թօփոտել. դեռին աս դի դին պիրկպուց բերդն է՝ որ կըսվի տաճկի կռատիշքա. մեկալ դին նէմչին կռատիշքան է. ինչպէս նէմչները՝ անանկալ տաճկրնները նէմչին կռատիշքան Թօփոտելով երկու ժամ մեկ վանք փլուցին։ Պօհեմային փաշանալ անանկ տեղ նստերեր որ՝ կրնար տաճկրնէրուն օգնութիւն հասնիլ, նէմչինալ Թող չի տալ որ ուննա

գետը անցնել : Աբրահիմ պէյնալ որ օս-
դռօվիցայի վրայ կը հրամայէր՝ ապրիլի մէջ
15 հազարով առաջ եկաւ կլուխնկ գետին
քով քեսթրինայի դին. ասոնք զարնուե-
ցան նէմցիներուն հետ՝ որ քիչվոր ըլլալով
յրուեցին. գետը անցան տաճկները, նէմ-
ցիին գեղջանքը երեցին. հիւանդանոցնէ-
լուն մէջի հղած հիւանդները ջարդեցին,
ծնացածները գերի ըրին. ասոնց վրայ հա-
սաւ ընդհարուն զօրապետը շատ զօրքով ջար-
դեց. Թալլած բաներէն քիչ մը բան ա-
ռաւ. ծնացածները բաժնեց :

Ընդհանուր զօրքը նէմցիին հողը կրվազեր
որ կրսվի մօռլաք, մարդ անասուն գերի
կառնէր կրտաներ. ասոնք բոլորը գաւառը
պիտոր պարպէին Թալլելով՝ Թէ որ նէմ-
ցիին զօրքը վրայ հասնելով ասոնց դէմ չփո-
նէին նէզ ձամփայներու մէջ : Ընտքը եկան
նէմցիին մեծ զօրքը տօպուօյէլը նստան
ամրցուցին. տաճկները ասոնց վրայալ վա-
զեցին իրենք անգամ, բայց տեվինս զօրա-
պետը Թօփերով 10 ժամ դէմ դնելով ա-
մուր կեցան. տաճկներէն շատ մարդ ջար-
դուեցան՝ բայց նէմցիներէնալ շատ զօրք
ու հազարապետներ մեռան. աս ատեն տաճ-
կները պիրկոլույին կամ իրենց կառափշ-
քային մէջէնալ վազեցին նէմցիի կառափշ-
քային, երկու դիացէնալ մարդիկ կոտըր-
տըվեցան :

Ընչափ ծեծկըվելներէն մէկ որոշ բան մը
չելալ՝ ինչվան որ ան երեկլի վարպետը
լավտօն մառեշալը կատարեալ իշխանուն

առնելով վիճակն չեկավ. եկածին պես հասկընալով որ տաճկընկերուն վախը աւելի կռատիչքային վրայ է, միտքը դրավ առնիկայ առնելու, որպես զի անկէց Ճամփայ բացվի իրեն սըրֆը երթալու, ինչպես որ ինքը առաջուցմէ խորհուրդ տըվերէր յովսեփ կայսեր՝ թէ պատերազմին ալէկ Ճամփան մեզի համար ան է որ՝ մէկէն սըրֆը ինքնանիք, ան երկրին բերքովը թշնամին ուտելիքովը աս ձմեռ մեր զօրքը ապրեցընելնիք, ետքը առաջ երթալ նայինք։ ] սակայն պես որ 16 հազար առնավուտ իր վրայ կուգայ՝ արտորնօք զօրքը Ճամփայ հանել տըվավ անանկ ցրցընելով որ ասոնց դէմ պիտոր երթայ. մէյմընալ Ճամփան մէկէն կեցընել տըվավ ետ դարձուց, առնավուտները իրենց դէմ մարդ չիգտնալով՝ լավտօնին հնարքները չիմանալով՝ կատաղաբար յարձակեցան մօռլաքին մէջ երկըրդ անգամ ավրելու թալլելու գերի առնելու. երբոր ասոնք աս բանիս զբաղած էին՝ լավտօն իրեն դէմ մարդ չիգտնալով՝ անսովոր Ճամփով լեռնէրուն վրայէն քալցընելով իր զօրքը՝ ուր տեղվանք պզտիկ բայց անառիկ բերդ էրալ կային՝ եկավ միացաւ ան քիչվոր զօրացը հետ՝ որ տաճկին կռատիչքան հեռըվանց պաշարեր կեցէրէին. լավտօնին թշնամիները աս դիպուածս մեծ ցրնելով նեմցէի մէջ իդալիայի մէջ կըհզրաչակէն որ կոտրըվերէ առնավուտներէն փախեր, բայց ետքը հասկըցան իրեն բանեցուցած վարպետութիւն։

Յունիսի 24 կառատիշքային չորս դին փո-
սեր փորել տրվավ որ մեկ դիացին չկրնան
օգնութեի մը բերել, բայց մեջի եղած սե-
րենտօլու փաչան [1] անանկ կարիճ մարդ
եր որ ինչ արուեստ որ բանեցուց լավտանը՝
ամմինուևնալ քաջութեք դեմ դրավ ինչվան
յուլիսի 10. մեջիններնալ շատ քաջութեք
պատերազմեցան, անոր համար շատ ջար-
դվեցան թօփերնէն խումպարաներնէն որ
գիշեր ցորեկ վրանին կրթափթփէին։
Մեկ մութ ամպոտ ու անձրևոտ գիշեր մը՝
իրեք գունդ ռուսկի զօրքին քիչմիչնալ ա-
նասօլու զօրքին որ բերդին դուրսը կեցած
էին՝ իրենց յարմար ատեն գանալով փա-
խան. բայց անոնցմեալ շատը բռնվրվեցան,
հետևեալ օրը դռնները կոտրտելով լավտա-
նը ներս մտաւ. վեց օր քաղաքը ըստրկե-
լու հետ եղան մեռելներին, խոցվածներ-
նալ հոգալու հետ եղան, իրեն արուարձա-
նին (վարըշին) մեջի եղօղները եկան լավ-
տանին չնորհակալութեի ըրին՝ որ նեմցի զի-
նուորները պաշարման ատենը ամենևին ի-
րենց մեկ ձնաս մը չփորվին. լավտաննալ
ամմին ալեկուտի յովսեփ կայսեր տալով
ըսավ։ Պատճէ պարտէդէ որ յովսէփ կայսրը գէ-
րի պարերազմել արդարութեի դեմ բան մը չընելով,
գերի ֆառաթը սերել պարտէ չըլլալով, գերի յաղ-
թել արհամարհել չըլլալով։ Յետանկ ըսելով հրա-
ման տրվավ իրենց ուր որ ուզեն երթան։

---

(1) Ասիկա մեկ աներկիւղ մարդ մընեը. տուպի-
ցային ծեծին ատենը շատ քաջութեի ցցուցերեր։

Լ ավտոնը աս բերդս առնելով տեր եղավ սալա գետին նաւարկութեը, ուսկից կըրնար իր զօրքը սիրմիա ինջեցընել անկից սըրֆ։ բայց ուզեց պօմպային ուրիշ տեղ վանքներուն նաև տիրելով տուրք առնել ա նոնցմէ ըստակ ու ձի։ Երբոր վինուորները իրենց կեցած տեղը անգործ մնալով սպասելու հետ կըլլան Թշնամիին յարձակմանը՝ վախկոտ կըլլան, ծեծկըվելու ատենը փախչիլ կրնային. բայց երբոր իրենք առջինը կըլլան յարձկելու՝ մէկ ուրիշ զօրութիւն մը կուգայ վրանին. պաշարված տեսնալով վիրենք մահուանէ կամ անարգանքէ՝ իբր բնականէն դուրս կելլան կըփոխվին, վտանգներէն չէն փախչիր արիւնթէ կըզիմանան։ Այս մտածելով լավտոնը առնելին դադրած չէր Թողուր իր վինուորները, ի ժիր շարժում ընել կուտար, այսօր մէկ տեղ մը վաղը մէկալ տեղը փոխադրելով։ Եմէկին զօրապետայ մէջ ամէնէն հինն էր մառեշալ հատտիկը մնաւռ աղգով. ասիկայ իրեն քաջագործութեը վարի պաշտօններէն մէկէն վերի պաշտօններու վրայ էր ելած. հաստատուն էր գործք մը որոշելու, զարմանալի գործքը առաջ տանելու. որ 1757 մէկէն գնայ պէռլինը կոխեց ինչպես որ առաջները պատմերնք։ Այսկայ անցած տարի ամէն մնաւռ զօրաց վրայ մեծ զօրագլուխ դրվեցաւ. բայց ինքը ծերացած տկար ըլլալով, աւելի տկարացաւ վարի մնաւռին օգէն (հավայէն) որ վնասակար է, անանկ որ անկար եղավ զօրաց

վրայ հրամմելու. աս տարի խնդրեց վճռնա դառնալ հոն նստիլ ինչվան իր մահը. յով- սեփ կայսրնալ հրաման տալով իրեն տեղը դրավ լավտն ֆելտ մառեչալը, ասանկ փառաւոր թուղթ մը գրելով յուլիսի 24։ Ի՞սդրեմն չէղ կըսեպե էէր էր դէսպոտնը (փահ- րամանը), եւրոպան էէր ամէնէն մեծ զօրաֆլուխը, պէնոռրհէրը էէր էրէնց հայրը. որոն առջէն ձերկայ յաղնռրհէրը, որոն փայն անռանէն կըդողան ընդհանէրը։ Վ՚նէղ կըկրկէմ իմ եղբօրորդիս ֆրան- չէսոս արշիդուքսը [1], որպէս զի չռռ չռվը սոր- վի ասանկ դպրապանը ձէզ։ Իրեն աւելի պա- տիւ ըլլալու համար կայսեր պահապան զօր- քին ձեռքովը խրկեց աս թուղթս։

## Ո՞ՀՍ ՊՈՂՊԱՆԱՆ ԾԵԾԵՐԸ.

## 1789։

Ո՞նատօլուհին սերասքերը մայիսի մէջ պուղ- տանին սահմանները մօտիկցաւ որպէս զի մսակոմները անկէց դուրս հանէ, բայց տօռ- ֆելտէն զօրապետը հալածեց ինչվան ու- լահին հողը մտաւ քանի մը համբարներ ա- ռավ. ան ատենը նեմցիէն զօրապետնալ քօպուռկ իշխանը առաջ եկավ միացավ քանի մը մսակովի զօրացը հետ. իր բանա- կը բօնտա բերրալ ինչվան ֆօքշան տարա- ծեց իր զօրքը։ Ո՞ւ էզիրնալ առաջ գալ սկսաւ որ ասոնց դէմ դնէ, որուն զօրաց

(1) Ասիկա է հիմակվան նեմցիէն կայսրը։

մէջ շատ ֆրանսզ ինկիլիզ ու պրուշ հա-
զարապետներ կային. առաջ մէկ փաշայով
մը մաղռօ եանի պէյը խրկեց Թէհնամեաց
դէմ, բայց սուվարօֆ մոսկով զօրապետը
ասոնց դէմը ելավ, քօպուրկինաչ լիմաց տը-
վավ. տեսնալով որ աչ Թևին վրայ եղած
տաճկին զօրքը անհոգ կեցած էին առաջ
անոնց վրայ վազեց, շուտ մը կռիւը ըսդ-
հանուր եղավ յուլիսի 21. էնինչէրինները
վախնալով ետ փախան, ասոնց վախը տես-
նալով սիւփահիներնաչ ֆօքշանին աս դիս
փախան, մինակ Թողուցին մէկալ զօրքը ո-
րոնք ցրուեցան. ոմանքաչ վանքը փախան,
երբոր անաչ առնըվեցաւ՝ ռիւինիք ու պուս-
քօ փախան, ոմանքաչ իպրայիլ: Ով որ էէ-
նինչէրինէրուն աս վախնալը չըլլար՝ անանկ
չնաս չէր ըլլար. տաճիկը ասկից ետքը ու-
զեց երկրորդ անգամ մաճառի մէջ վազել
հոն Թուղթ ցրուել ապստամբեցընելու հա-
մար. Թուղթերը պատրաստըված էին զա-
նազան լեզուով տպված, բայց հարկ եղավ
սպասել ուշտիը պաշտպանելու: Յովսեփ
կայսրը քօպուրկ իշխանին զինուորական
կարգին խաչը խրկեց, որ իր մայրը սահմա-
նեբրը տաչ արդիւնաւորներուն. հետևաչ
գովասանքի Թուղթ մը իր ձեռքովը գըր-
վաճ լուքսեմպուրկին խրկեց օգոստ. 13,
որ ամմին զօրաց առջին կարդացվեցաւ.
սուվարօֆ մոսկով զօրապետինաչ Թուր մը
խրկեց քարերով զարդարված, մէկ մասնիւ
մընաչ անոր Թիկնապահին (սիլէհտարին):
Տաճկի բանակին ետևէ ետև զօրք գալով

աւելի զօրացաւ, ան ատենը յարմար դա-
տեց վճիռը եուսուֆ փաշան վիտին Թո-
ղուլ իր բանակը՝ ինքը 100 հազարով Թըշ-
նամին դէմ երթալ. գուշան անցաւ մե-
տիկ ան տեղը ուր էր տրայանոս կայսեր
շինած անուանի կամուրջը. իրեն առաջա-
պահ զօրքը սկսան երևնալ մարդինեսթեի
մօտիկ ուխտիք ջուրին վրայ: Թշնամիները
մոսկով նեմչէ 30 հազարի չափ կային՝ բայց
ընտրըված զօրք էին իրարմէ հեռու կեցած
հեծտ (խօլայ) գտնալու համար կերակու-
րը. առաջ սուվարօֆ մոսկովին զօրապետը
Չամիայ ելավ իր զօրքով որոնց շատը խա-
զախ էին. առանց ասոնց ոչ երբէք Չամիայ
կելլար սուվարօֆ, որ զօրաւոր չէն բայց
ամէն բանի դիմացկուն. եկան սիրեթ գե-
տը հասան որ ան օրը խիստ շատցած էր
անձրևներուն շատութեը համար, բայց ա-
տոնք չարքաշ ըլլալով կես մը նաւակներով
անցան կես մընալ լողալով. բուդնային
վրայէն երթալով նեմչէի զօրքին հասան
միացան, որոնք երկու գունդ ձիաւոր զօ-
բայ եվլեցուցին մոսկովին զօրացը վրայ.
խորհուրդ ըրին որ առաջ իրենք վազեն
տաՀկին վրայ, որովհետև հասկըցած էին
որ եէնիչէրիները աւելի վախցընելով կըր-
նան յաղթել. միլքօվ ջուրը ուզեցին անց-
նելու՝ բայց եղերքը (քէնարները) խիստ
քարոտ գտնալով՝ վարէն անցան:
ՏաՀկը մէկ բարձր տեղ մըն էր նստած.
ջրոս դին մարդաչափ բարձր պատնէշով
(մեթերիզով) պաշտպանված, ուր միայն

մէկ նեղ ձամբայ մը կար ելլալու, անոր համար թշնամիները չկրցան մեկնիլ յարձակելու։ Հնինչերինները քիչ մը դէմ կեցան ետեւ՝ վախերնին Թողուցին փախանակութիւնը դին. իրենց ձախ թեւին եղած զօրքը աւելի կորիւնի փրթան, որոնք նեմցիկին ձիաւոր զօրացը հետ քաջութիւն ցոյց կվերցան մէկ ժամու չափ. բայց ան ատենը թշնամին պատնէշներէն անցաւ. տակի կին զօրքին աւելի սրտոտները անտառները մէջ ցրուած ըլլալով՝ հոնկէց դէմ կդնէին թշնամիին՝ շատ կը յոգնեցընէին. միայն թէ երկու ժամէն ետեւ ամմինոնալ քաշվեցան ուր տեղ որ կեցած էր վէզիրը՝ որ նորէն 10 հազար զօրք այնչափ ձիաւոր խրկեց թշնամիին վրայ. ան ատենը քօպուրկ հասած ըլլալով ռիմնիք ջուրին վրայ՝ հոն երրորդ անգամ աւելի սաստկութեամբ զարնըվեցան իրարու հետ. 3 ժամ քշելէն ետեւ նորէն Թողուցին փախան, բայց չիյոսահատելով 40 հազար ուրիշ զօրք վրանէն վազեցին մեծ մասը ձիաւոր. ասոնքալ ետքը փախչելով՝ թէպէտ վէզիրը շատ կը յորդորեր վախը մէկ դի ձգել, տեսնալով որ մտիկ չեն ըներ՝ ինքնալ ամմէն բան ձգեց խլրտելին դին փախաւ. փախչողներէն շատ զօրքալ ռիմնիք գետին մէջը մեռան, որ խիստ շատցած ըլլալով ձիով անցնողները կառներ կըտանէր։

Ի մեծ կռիւը եղավ սեպտ. 22. անկից ետքը պուղտան թշնամեաց ձեռքը անցաւ. մոսկոփներէն 2300 մարդ մեռան. 26 հա-

զարապետ, նեմչիներէն 3 հազար մարդ մեռած ու խոյլած. յովնէփ կայսրը՝ քո-պուրկը ֆելտ մառէշալ ըրավ. սուվարօֆը կոմս հռոմէական կայսերութէ գրեց. կատարին-նէ թագուհինալ սուվարօֆը Իտալիոյ անուանեց, ուր տեղ որ ծեծը եղավ հին հռոմայեցոց սովորութիւնը պէս:

## Պէլիզարաւին առնվելը.

1789:

Ա՛ս ատենները լավտօնը եկավ իրեն իշխանութիւնը առնելու կայսեր մեծ բանակին վրայ որ զՏիմիշկի մօտիկ էր նստած. երբոր հատուիկն ու լավտօնը իրարու հետ տեսնվեցան՝ երկուքնալ վարպետ ու հինցած զօրագլուխ մէկզմէկ գրկելով խանդաղատեցին լացին. մէկմէկու վրայ չէ թէ նախանձ՝ այլ անկեղծ սեր բարեկամութիւն ունենալով՝ մոռցին իրարու հասկցուցին առջևի պատերազմին վրայ, անանկ սիրով բաժնվեցան մէկմէկէ: Լավտօնին առջի բանը եղավ ամէն զօրագլուխները մեծ հազարապետները իր քովը կանչել, հոն յայտնել պէլիզարաւին պաշարելը որ պիտոր ընէր. կամ պէտք է յաղթել ըսավ և կամ մեռնիլ պէլիզարաւին պատին տակը: Ա՛ս բերդս իր բնական դրիցը համար՝ և իրեն ներսիդուրսի ամրութիւնը համար՝ աշխարհիս առջի բերդերէն մէկն է. բայց լավտօնին ըսկիզբն էր, մէկ բերդ մը առնելու շատ ա-

ղեկ է ամէնն զօրութ պաշարել Թօփոտել քիչ օրվան մէջ առնել, քան թէ տկար պաշարմամբ երկան բարակ նստիլ, որով զօրացը մէջնալ կրնայ հիվանդութիւն խյնալ, դուրսհնալ օգնութէն գալ թշնամիին. առնոր համար չուտ մը 40 գունդ ոտանաւոր զօրք, 30 գունդալ ձիաւոր զօրք անցուց դունա ու սավա դետերուն վրայէն. սեպտ. 14 վալտէք ու քէռֆայդ զօրապետները իրենց վարպետութէքը անցուցին քիչ ընդդիմութիւն գտնալով. 20 հազար առաջապահ զօրք անանկ շարեցին բերդին քովէրը որ՝ մնացած զօրքը համարձակ կրնար շրջակայ երկիրները սփռըվիլ: Այգպիսեան գիծ ըսվածնէրը՝ որ եւգինէոս իշխանը նեմ ցէկին զօրագլուխը շինել տըվէրեր պէլիգրատ առնելու ատենը 1717, ասոնք ըստ մեծի մասին անխախտ գտնալով՝ չուտ մը շինեցին նորէն աւրցուցին 10. 12 հազար գեղացիներ փոխնիփոխը աշխատցընելով գիշեր ցորեկ. չուգելով զինուորները յոգնեցընել. չորս օրվան մէջ պատնէշներ կանգնեցին ցած քաղքին դէմ, որովհետեւ կարելի էր առջի բերանը բարձր ապառաժը շարնել. իրեք օր շարունակ աշխատելէն ետեւ հասան ան ցիցերուն որ առջի պատնէշն էր բերդին, պէլիգրատին մէջնինները շատ ջանացին դէմ դնելու բայց չկրցան. կըսպասէին վէզիրէն օգնութէն հասնելու՝ բայց բան մը չտեսան:

Այս ամէնն աշխատանք որ կըլլար՝ լավտօնին ներկայութէքը կըլլար, որ ամէնն տեղ

կըպատրեր, ամմէնուն քով կըկէնար, պար-
գև կըբաժներ, սիրտ կուտար մարտկոցները
( Թապեաները ) չհնել ցամաքի ու ջուրի
վրայ, զօրքը աղէկ կարգով կեցընել, ու-
րիշ զօրք կեցընել որ բերդին մէջէն դուրս
յարձակելու ըլլան՝ կամ դուրսէն օգնութի
գալու ըլլան՝ անոնք ջարնեն. ինչ աղէկ
տեղվանք կան բոլորտիքը առնել, Թօփերը
խումպարաները կարգաւորել գիշեր ցորեկ
ճեղելու. աս ամմէն բանը լավօնը ան-
ձամբ կարգաւորեց, որու նման քիչ կըպատ-
մըվի պատմութեան մէջ. Ֆրանչիսկոս հի-
մակվան կայսրը քովը ըլլալով կըսեր իրեն.
աս բերդս անանկ շուտով առնելու բերդ
չէ՝ պարապ է աշխատանքդ. լավօնը կը-
պատասխաներ Թող կայսրը չիպակսեցընէ
ինչ որ ինծի հարկաւոր է պէտք է՝ ան ա-
տենը կըտեսնաս: Իրաւ որ սեպտ. 20 տի-
րեցին երկու բլուրներու օգտինա լերան
վրայ, ուր տեղ չէր կրցած տիրել եւգինէոս
իշխանը. 22ին մօտիկցան ուրբաքա մալա
ըսված արուարձանը (վարըշը). մէջի բնա-
կիչքը որ 70 հազար հոգիէն աւելի կըդնեն՝
զարհուրելով չիյտեին ուր փախչին. յոյ-
սերնին դրեր էին աշնանայնին անձրևներուն
վրայ՝ որ հոն շատ ըլլալով նեմչիները կը-
փախցընէ կրկարծէին. և իրաւ որ հոկտեմ-
բեր ամիսը անձրևոտ երթալով երբեմն չի-
վերնին ինչվան կէսը ջուրի մէջ անանկ կաշ-
խատէին զօրքը, անանկ առաջ կըտանէին
սորված զօրք ըլլալով. 26 մարտկոցէն ( Թա-
պեայէն ) աւելի չհնեցին, որոնք մէկ ատե-

նի մէջ գիշեր ցորեկ կրակի մէջ տաքցու-
ցած գնտակներ թափելով քաղքին վրայ
ամէնն տեղ կրակ կը ձգէին կը փլցընէին,
ատեն ատեն տաճկի շտեյքայներ բռնելին
որ օգնուի կը բերէին պէլիղրատին, անանկ
որ դուռնայի ու սավայի վրայ նաւարկուիը
բոլորովին գոցեցին: Եպտ. 29 ցած քաղ-
քին վրայ վազեցին. լավտօնին դունդը առ-
ջինը եղավ կամաւոր (սերտէնկէչտի) զօր-
քով ելլալ պատին վրայ, մեկ չընելով
Թուրն ու կրակը որ ներսէն վրանին կը թա-
փէին. չորս դունդալ նոյն ատենը ան դուռ-
ըէն ներս մտան որ կըսվին ստանպօլի ու
վլտհին դուռներ: Երկու ժամու մէջ քաղա-
քը առնըվեցաւ մեկ շիոմուրթի մը չըլլա-
լով չկրնալնելով լավտօնին կարգաւորուիը՝
որ ամէն տեղ կըպտըտեր ամէնուն վրայ
հոգ կըտաներ ան եօթանասուն տարվան
ծերը՝ ան վարպետը՝ որ վարպետուրթիը և
ծերուրթեան փորձը երսուն տարվան կորը-
չուրթէ հետ միացուց աս ծեծիս մէջ. ուս-
քը ձեռսվաճ ըլլալով քովի կեցած ձիէն՝
սեհեայի մէջ դնել կուտար գինքը անանկ
ամէնն տեղ կըքալցընէր, որպես զի աչքով
տեսնալով կարգաւորէ. ինց բարձր քա-
ղաքը ու բերդը որ խիստ ամուր էին: Ես
ատեն ապտի փաշան 50 հազարով կամաց
կամաց կուգար պէլիղրատին օգնուրթիւն.
բայց հասկընալով թշնամեաց ուժը՝ մնրա-
վա գետին դրին գնաց:

Հոկտ. 8 լավտօն առաջարկեց պէլիղրատի
փաշային անձնատուր ըլլալ. անիկայ ուրթը

օր միջոց ուզեց մտածելու, լավտօն և ոչ երկու ժամ միջոց տըվավ. բարձր քաղքին մէկ դին կործանելով կրակը սկսաւ ամէն տեղ բռնկիլ, մէջինները աղաղակը բարձրըցաւ. ան ատենը անձնատուր եղավ խօսք դնելով որ՝ նեմցէն ամէն մէջինները նոր օրը չօվա տանի. տաճկըներնաւ նեմցէն փախչօղ զինուորները իրեն յանձնեն. ասանկով 24 հազար մարդ դուրս ելան գացին: Լավ տօնը իր սեղանը կանչեց փաշան մեծ չօրպաճինեռով. հացէն ետև փաշան խնդրեց լավտօնէն վկայական մը՝ թէ ինչպես դուրսէն մէկ օգնութէի մը չեկավ պէլկրատին համար, և ինչպես դժար եր իրեն 8. 10 հազար մարդով պաշտպանել քաղաքը որ մեծ եր: Նեմցէն քանի փախած զինուորներ որ ձեռքը ընկան՝ լավտօնը ամէնքնաւ կախեց. մէկալ իրեն հաւատարիմ զինուորներուն շատ բան բաժնեց: Ամէն եւրոպա զարմացած մնայ թէ ինչպես 20. օրվան մէջ առաջ տարավ լավտօն ասանկ մէկ գործողութէի մը, 1500 մարդ միայն կորսնցընելով մեռած ու խոցված. ասիկայ եր պէտուղ իր կատարեալ վարպետութէը (1): Ութը օր անցնելէն ետև սեմլինտրէքէն 300 պահապան զօրք եկան լավտօնին ստորա-

---

(1) Պելիզրատին առջի առնօղները շատ օր շատ զօրք կորսնցուցեր են. ինչպես 1688 պավլիքային դուքսը. իսկ 1717 եւգինէոս իշխանը: Մէկը կորսնցուց 58 օր ու 16 հազար հոգի. մէկալը գրեթէ 2 ամիս և 30 հազար հոգին աւելի. 150 հազար տաճկիալ դեմ դնել հարկ եղավ որ դուրսէն եկան:

բագրեւ տալու իրենց պայմանին Թուղթը՝ որ ըրեր էին օդդօ գնդապետին հետ անձ-նատուր ըլլալով իրեն. անանկով ան քա-ղաքնալ նեմչէին ձեռքը անցաւ, որ սըրֆի հին Թագաւորներուն մայր քաղաքն էր, Կամ Տրօվիա կըսվեր։

Յովսէփ կայսրը որ խիստ տրտմութեամբ էր՝ լսածին պէս աս յաղթութիւնը կոմս Տոռ-տէհան կայսերոյն անուանեց լավտօնը. կոմ-սութեան անունին հետաւ մէկ տեղ երկիր մը պարգեւեց իրեն 160 հազար ֆիօռինի ա-ժողէքէն աւելի. նաեւ մարիամ Թերեզիա-նայի կարգին նշանը խոշոր պրիլլանդի քա-րերով զարդարված որ ինքը յովսէփ մեծ օրերը իր վրայ կըկախէր, ան նշանը իր վրայ-էն Հանելով խրկեց լավտօնին (1), հետևնալ մէկ Թուղթ մը իր ձեռքովը գրած։ Կէն-նայի գինարանին մէջնալ լավտօնին ըրած յաղթութեան յիշատակը գրեցին, միտալներ տպեցին. բէլլէկուռնի զօրապետը՝ ռուվրոյ զօրապետը (որ լավտօն իր կրակին սատա-նան կըկանչեր), ասանկալ ուրիշ զօրաց գլխաւորները պարգեւներ առին, առաջ է-լան. ան տուրքը որ ծեծի ատեն ամէնն ժո-ղովրդին անխտիր կառնէին՝ իրեք ամիս չառին, նոր առնըված երկիրներէն առնե-լու ան տուրքը։ Լավտօն իր ընորհակալու-թիւնը ընելու՝ ֆրանչիսքոս արշիդուքսին յանձնեց որ վիննա կըգառնար և հիմակ-

(1) Ան կարգը կըտրվեր միայն անոնց՝ որ մեծ յաղթութեամբ մը ըրած ըլլային։

վան կայսրն է. Հետևալ Թուղթ մը տըվավ նայեմ. 23 գրած. աղաչելով յովսեփ կայսեր՝ որ նոյն ֆրանչիսքոսինալ տայ մարիամ Թերեզինային կարգը։ "Վ[ի]տեմ ըսելով " որ աւսդրիայի արշիդուքսերը ամմիննալ " ծննդեամբ զօրապետ են, և մեծ խաչա- " կիր նոյն կարգին, անոր համար չեմ տա- " րակուսիր որ չիտաք աս պատիւը Թագա- " ւորազուն իշխանիս. Հնարհեցէք որ իմ " ձեռքովս կախեմ աս նշանը իր վրայ. որ " երկու աշխատալի պատերազմի մէջ մտաւ, " ամմին վտանգներէն ուրախերես անցաւ, " իրեն օրինակովը խօսքովը զինուորներուն " սիրտ տըվավ, ձեր զինուորութիւնը օգտին " դարձակից եղավ "։

## Ի-ԻՒԼ ՅԵՅՆԻՍԵՆ.

## 1789։

Ա՛ն օրը որ պէլիղրատ առնըվեցաւ՝ ուրա- հին քով ուրիշ ծեծմընալ եղավ. գարա մուստաֆա փաշան 10 հազարով զօրիվէնը եկավ մեկին զարնելու հօնլօ իշխանը նեմցի զօրապետը. բայց երբոր աս փաշան կարծիք չունենալով դէպ՝ի վայտէն կերթար, նեմցի զօրապետը ասոր վրայ վազեց. որուն զօրքը վախնալով ամմինքնալ ցրուեցան. փաշանալ չիլ գետին անդի դին անցաւ։ Ա՛ս լսելով սերասքեր փաշան որ մնրալա գետին քով կեցած էր՝ հոն կենալը ապահով չիսեպելով ելավ նիշ գնաց է-

բելով գետին վրայի կամուրջը (քէօփրիւն)։ Այս ատեն սուլդան սելիմը փոխեց զօնա եւ սուֆ փաշան վեզիրութէ ուօտաս քշելով. անոր տեղը Ճեզայիրլի անուանի Հասան գափուտան փաշան ըրաւ վեզիր. ասիկայ դուշայէն աս դիս եկաւ պուլղարը պաշտպանելու՝ ուսկից զօրաց շատը վախնալէն ցըրուեր էին. ստանպօլալ իժիր խորհուրդ կըլլար ինկիլիզի ու պրուշի դեսպանները հետ՝ որ աս ծեծս բանալու պատճառ էղան։

Լավտօնը քիչ մը հանգիստ տալէն ետև՝ սըրֆին մէջը սփռեց իր զօրքը՝ որ շուտ մը երկու փաշայութէ տեղվանքը տիրէ պելլրատիոն սեմէնտրէրին, և հոն ձմերել տայ ան երկրին խարձուվը ինչպես որ միշտ միտքը դրեր էր. երկրըցիք յանձ առին կամաւոր տուրք տալու՝ որ ամէն մէկին քիչ ընկաւ, մեծ երկիր ըլլալով վիտինին սահմանին ինչվան պօանա։ Յորդոր քօպուրկը ուզահի մէջ տեղվանք կառնէր՝ հօհնլօհ իշխանանալ պզտիկ ուզահը մտաւ որ ինչվան ալուէթ գետը կերթայ. քանի գնդապետ նալ որ առաջապահ զօրաց հրամմոդ էր՝ և ան կողմը եղած ամէն պատերազմիրուն իբր թէ ոգին էր՝ քանի օվը առաւ հոկտ. եաքերը. մէկալ պզտիկ տեղվանքը ինքիրէրնին անձնատուր եղան. ինչպես նաև Թէրկօվիցան երևելի քաղաքը. փասրիս եւ բիտասարդ զօրապետնալ նոյեմբ. ։։. կլատօվան առաւ. աս տեղվանքս Հարիւր տարվընէ վեր Թէնամի տեսած չըլլալով՝ խիստ

չէն տեղեր էին : Ո՛ս առէնները լավտօնը ուշահ եկավ աչքով տեսնալու համար ինչ որ կըլլար , և քօպուրկ իշխանին հետ խօսակցելու համար նոր կարգի մը մէջ դնել ձեծին կարգադրութիւնը . որովհետև լավտօնէն ետև ասիկայ էր տեղեակ գինուորական արհեստին , սիրելի ամէն գինուորներուն , սրտանց աշխատօղ նեմցէի թագաւորութիւնը համար : Ո՛,ախանձը որ կրէր մէջ ամէնէն չար կիրքն է՝ չիկար ամենևին լավտօնին սրտին մէջը . անոր համար երբոր պուքրէշ հասաւ՝ գրկելով քօպուրկը շատ գովասանք տըվավ իրեն . աս երկու երևելի զօրապետաց մէկ սիրտ ըլլալը միաբան բարեկամութիւնը ամէն բանակը զարմացուց , աղէկ օրինակ տըվավ ան յաճ սրտով մարդկանց՝ որ ուրիշներուն արդիւնքը տեսածնին պէս կավըրվին կայլայլին՝ դէմ կըդնեն անոնց յառաջանալուն :

Ո՛ս տարի մոսկովին բանակը առջև աշխատանքներէն յոքնած ըլլալով՝ ուշ դուրս ելան իրենց ձմերոցներէն որ պուղտանի մէջ նստերէին . յունիսի կէսին դուրս ելան պուձախ թաթարին վրայ , ուր տեղ քամինաքոյի զօրապետը աղէկ տեղվանքը առած էր . հիմա ագքիրմանին վրայ ուզելով երթալ որ թուռլա գետին բերանն է՝ պզտիկ նաւատորմիղ ( տօնանմա ) մը խրկելու հարկ եղավ , որուն հրամմնդ առաջ պօղոս յունէսն էր . որ ամերիկացի ասպատակ ըլլալով վարի հաղարապետները աղէկ աչքով չէին նայէր վրան՝ կուզէին հեռըցընել . ա-

նոր տեղը գլուխ դրին վշտնօվկը կոմսը որ առաջ ռիալն պէյ էր. ասիկայ 18 նաւուղ ազգիրմանին վրայ եկաւ, հոն եղած վաճառականի նաւերը առաւ, շալուփանէրով զօրք հանեց ցամաքը, որոնք ինչ պատնէշներ որ կային՝ ավրեցին, բարձր տեղվանք առին, գարաքիրման նաւահանգիստը թալէցին։ Այս լսելով դուռը ինքնալ նաւեր հանեց սև ծովը. 10 նաւ երկու խափալը. 4 քառավելէա, այնչափալ ֆրիւաթա։ Այսմէդ զօրապետը ամմէն ան ծովեզերքին վրայ տուրք ձգեց. զանազան տեղեր առավ նաև քօլչաթ քիլթը. Թօփէր շարեց որ արգելէ պաշար տանելու վէնիրի բանակին։ Տրէվից զօրապետնալ իսմայիլը Թօփոտեց, գօճա պէյնալ յարձակմամբ առավ որ է օտէսսա կամ ատէս. մէջը քիչվոր Թաթար կային. տաճկին նաւերն ալ մէկ երեցաւ մէկ նալ ցամաքը նստելով գերի ընկաւ։ Ասոնցմէ քիմքին իշխանին զօրքնալ քէֆսքէն կամ քաֆսքան բերդին վրայ յարձակելով որ համառուն գետին քովն է՝ մէջինները անձնատուր եղան ամմէն պուշախ Թաթարին տեղերը առնելով միայ ազգիրմանը կամ պիէլօկռօտ, որ ամուր բերդ է. երբոր ծովէն ցամաքէն շատ Թօփոտեցին՝ մէջն զօրքը տեսնալով որ տեղէ մը իրենց օգնութիւն չիգար՝ անձնատուր եղան խնդրելով ուր որ ուզեն երթան. բայց մոսկովը չանձ չառավ ամմէննալ գերի ըրավ։

Սկսից ետքը պէնտէրին վրայ ուզեցին երթալ, բայց անոր բոլորտիքը երկու սերաս-

քեր կային, մեկը 25 հազար առնավաճառով
մեկալը 18 հազար թաթարով. հոկտ. 19
ռեբենին իշխանը առաջվանից կանուխ առ-
ջինին վրայ գնաց ձեծկըվելու, բայց տե-
սավ որ անոնք գիշերանց ամէնն բան թո-
ղուցած փախեր էին, որոնց ետևնին վազե-
լով թօսպաքին քով ձեծկըվեցան, շատ կո-
տորած եղավ, սերասքերնաւ իսմայիլ փա-
խաւ. պէնտեր նոյեմբ. 2 ամէնն դիացեր
պաշարվաճ ծնաց. յոյս չունենալով տեղէ
մը օգնութեի գալու՝ մոսկովը առաջարկեց
անձնատուր ըլլալ. մեջի եզոզ փաշան 24
ժամ միջոց խնդրեց մտածելու. վաղուան
օրը վեց հոգի եկան ներսէն խնդրելով ռեբե-
նինէն որ ամիս ու կէս սպասեն, թէ որ մեկ
օգնութեի մը գալու չըլլայ՝ ան ատենը պէն-
տերը յանձնեն. աս առաջարկութեես վրայ
ծիծաղելով՝ շուտ մը անձնատուր ըլլալ ա-
ռաջարկեց. վեց հոգինալ հրամեց քալցը-
նել իր ամէնն բանակին մեջը ցրցրնել՝ ինչ
պէս ամէնն բան պատրաստվաճ կր վրայ
յարձակելու: Սոնք լման որ գարձան ոտ-
վընին բերդին մեջը կոխեց, Ձերմակ դրօ-
շակները աշտարակներու վրայ բայվեցան.
խօսք դրին պահապան զօրքը պատուով
իսմայիլ տանելու. կարծեին որ մեջը 22
հազար զօրք կար, բայց 9 հազար զօրք ե-
լան, մեջի բնակիչքնալ 70 հազար: Ու-
վարօֆնալ նեմցի զօրքին զատվելով ե-
կավ քալացը առավ:

## Այորին նահանգներու մէջ եղած ապստամբութիւնը.

## 1789-1790:

Այս պատմութիւնս չի կարդացած պէտք է յիշել միայն թէ Այորին նահանգներուն դիպուածները որ առաջները պատմեր ենք 1786 ու 1787. ան ատենը յովսէփ կայսրը Այորին նահանգները կամ ֆլանտրան 9 մասը կամ շրջանակ բաժներէր աւստրիայի կամ պոէմիայի պէս, ամէնէնուն վրայ մէկ վերակացու դնելով: Քաղաքական ու դինուորական դատաստանի մէջ նոր ձեւ փայ մը դրեր էր շուտով լծցընելու. եկեղեցական բանի մէջալ աշխարհական եղբայրութիւնները վերցուցեր էր, ամէնն ժողովդապետութեան մէջ մինակ մէկ մէկ եղբայրութի թողուցեր էր Դէյտրութիւն կոչելով անունին, ժողովրդեան ողորմութի տալու հիւանդաց համնելու համար. հարուստ աբբայութիւններ ու վանքեր վերցընելով անոնց եկամուտը քաղքին հասարակաց մնտուկին էր առեր. պօլլանտեանց ընկերութիւնալ վերցուցեր էր, որ Թերհնիա կայսրուհոյն մանաւոր եկամուտովը սէյ վարքը շինելու հետ էին անվերսա քաղքին մէջ. պրուսսել քաղքին անուանի գրքատունը հարուստ հանդիսարանը ծախու էր հանած: Այս նորութիւններս քաղաքական կամ եկեղեցական փիանտրացիք ու պրապանդիք չի կրնար ըլլալ կըսեպէին ստորին

նահանգներուն մէջ առանց հաւանութեան իւրեանց ժողովրդեան՝ զօրութեան ան հակառակ Թուղթին որ կըսվի Հրաման (1) : Այս Թուղթս կըսեպվեր պրապանդոյ և ուրիշ պէտքերայի ժողովրդոյ առջին իբր հիմն իւրեանց արտաւնութեց. մտվընին դրեթէին որ կայսրը չէր կրնար իշխել իւրենց վրայ բայց եթէ չափաւորեալ իշխանութեամբ : Պրապանդոյ մէկ մեծ գէմ բանմընալ ան էր որ ուրիշ ամէն եպիսկոպոսական դպրոցեքեցիները վերցուցեր յովսէփ, մէկ դպրոցերէց (սեմինարիօ) մը միայն սահմաներ լօվանիոյ համալսարանին մէջ, որուն կարգադրութենալ և վարդապետութիւնալ չէին հաւներ, ուղղափառական չէ կըսէին :

Քաղաքական նորութեց վրայ ապրիլի մէջ իշխանները գանկատ վերուցին կառավարներուն առջին կոխ Թողլու համար ինչվան որ նոր հրաման գայ. բայց յունիսի մէջ վայնասուն (արպէտ) մը ելավ անվերսա քաղաքը. 40 տնէն աւելի երվեցան, դատաւորներուն զօրքը փախուցին, շատ մարդ ջարդեցին. առէմպերկ դուքսը՝ քաղքին երևելիներով խօսքով ըստրկով շատ ջանայ զսպելու՝ չէղավ. ուրիշ քաղքներալ ասանկ միաբանելով՝ ապստամբիլ զինք առնել սկսան ինչպէս նաև լօվանիոյ աշխերա-

(1) Այս Թուղթս տվեր էր իւրենց յոհաննէս պրապանդին ի, դուքսը 1288, հասատաւեր ընդարձակեր բարի փիլիպպոսը 1430. և մարիամ Թերեզիանա կայսրուհին 1741 :

նկերը : Այսոր ամէնէն տակէն գրգռօղ էր վանտէհնօթ փաստաբանը (ավօքաթը) ու իրեն համախոհները. պրուձէնս քաղքին մէջը կամաւոր զինուորներ գրվեցան. ասանկալ ըրին օսդէնտա, մենս, նիւբօռդ. իրենց խօսքերնին էր հայրենիքը պաշտպանելու, ռամկապետութեի ընելու : Երբոր պատուիրակներ գացին վէննա յովսէփ կայսեր հասկըցընելու՝ քաշէից իր վեզիրը մէկ թուղթ մը տըվավ իրենց՝ որուն մէջը գըրված էր կայսերական ամէնէն հրամանը. ան առենը երեսփոխանը պէյճիօյօզ կոմսը հանդէվ ուզելով հրաժարեցաւ. իր տեղը դրվեցաւ Թռավդմանտօռֆ կոմսը՝ որ իրեն հետ զօրք տարավ պրուսսել : Ան առենը քանէրը քիչ մը խաղաղկիլ երևցաւ, բայց տակէն միտ վառվելու հետ էր աւելի լավանիոյ դպրոցերէցին մէջ, որոնք չէին ուզեր արքունեաց տուրք տալ. անվայել ընտասակար սեպելով կղերիկոսական արժանաւորութե ու արտունութե. շատ հակառաճառութենէն ետև տուրքը վճարեցին, որ շուտ մը կայսեր խրկեցին նշան խաղաղութեան, բայց էր դրսըվանց միայն :

Երբոր նէմցէն տաճկին հետ կռուիլ սկսաւ, ստորին նահանգներու մէջն եղած զօրքը իր դին կանչեց, հազիւ 15 հազար զօրք մնացին հոն. ասոնք բանս առիթ տըվավ ապըստամբներուն համարձակութե առնել գլուխ վերցընել. աշկերտներնաև չուզեցին լավանիոյ դպրոցերէցը կամ վարդապետարանը երթալու՝ ձայն հանելով որ կասկածաւոր

վարդապետութեի կըսորվեցընէին հոն ։ աս կասկածս վերցընելու համար՝ մալինէս քաղքին քառտինալ եպիսկոպոսին յանձնեցին կայսեր դիացին ։ որ հոն երթայ անաչառ քննութեի ընէ ։ քննութեե մէջ եպիսկոպոսը կասկածաւոր պատասխանները լսեց վարպետներուն բերնէն , չուտ մը վէննա հասկրցուց 1789 յունիսի մէջ ։ կայսրնալ հրամմեց որ առջի ատենին պէս ըլլայ վարդապետութիը ։ անոր համար օգոստ ։ 15 ։ եպիսկոպոսներուն իշխանութե տըվավ նորէն իրենց դպրոցերէցներուն մէջ սորվեցընել ծաբաանութիը ինչպէս որ առաջ կընէին ։ որպէս զի վերնայ աս ձայնս թէ մէկ դպրոցերէց սահմանվելուն պատճառը աս էր որ՝ ամմէնուն միակերպ չարափառ վարդապետութիւն սորվեցընեն ։ Կառավարօղ մարդուն ամմէն բանէն աւելի պէտք է գիտնալ առաջ իր տակի եղօղներուն բնութիը , անոր կեօրէ կարգադրել , որ հարկ չըլլայ ըսածը փոխել ։

Կայց ինչ որ ըրին՝ ապստամբութեե կրակը չիմարեցաւ ։ ան ատենն էր որ ֆրանսայէն մէջը բռնկերեր աղատութեան կրակը , ան կրակը շուտ մը քովի աշխարհներուն մէջ տարածվեցաւ մանաւանդ երիտասարդներուն սիրտը , ու չքաւոր մարդոց մէջը , մըտվընին դնելով որ երբոր ապստամբութիւն մը փոփոխութեի մը ըլլայ՝ իրենք կըշահան . աս է զարմանալին որ՝ ասանկ չար վարդապետուի մը շուտ մը կըծաւալի աշխըհիս մէջ ։ Հոկտեմբերի 6 փարիզի մէջ

եղած խռովութիւնը շատ համարձակուելէ տը-
վավ աս ֆիանտարացոց, ֆրանսըներէնալ ե-
կողներ կային հոն՝ որ գաղտուկ ապստամբե-
լու կըգրգռէին. անոր համար հարիւրաւոր
անձինք ամէն օր նեմցիին տակէն կըփախ-
չէին՝ պրէտա ու պօիլ լէ տիւք կըժողվէին
որ օլանտացոց պրապանդին մէջն է. հոն
հարուստներու ձեռքով ծախու կառնէին
ղէնք, ձէպխանէ, չուխա մէկ գոյն հագուս-
տով զօրք հանելու համար. որոնց ամէն-
նուն գլուխ վանտէռնօթ փաստաբանն էր
պրուսսելցի, ասորալ դրգռիչ մէկ անզգամ
կինիկ մըներ լա բլին ըսված. աս փաստա-
բանս շատախօս լեզու մը ունենալով յոր-
մար մարդ խաբելու, բնութէ լիրբ, ձա-
խորդութէ մէջալ ընկած ըլլալով՝ կարծէր
ասոյ մեծ բանի մը հասնելու, նման մէկ
ուրիշ կուլնելմոս օրանժ ըլլալու, որ օլան-
տացիները ոտք հանեց է. փիլիպպոսի դէմ,
բայց ան առնլան պարագայները շատ տար-
բեր էին. ինքնալ չուներ մէկ մծռիկութէ
մը նասսօ իշխանին տանը հետ, և ոչ խելք
կառավարելու։

Յովովուրդը Վաշտուին Պահմանապրուին ա-
նունը լսածնին պէս՝ որ է գիւտ ժողովուր-
դը խաբելու՝ շուտ մը իրենց հաւանութիւնը
տըվին, բայց բազմութէն խոհեմ մարդիկ-
ներու չհմտաբանեցան. երկու ամբողջ գա-
ւառները լուքսէմպուրգ ու լիմպուրգ գրով
հրատարակեցին թէ ինչ որ կընէ յովսէփ
կայսրը օրինաւոր կըճանչնանք, իրենց
տուրքնալ տըվին։ Վաստամբները սեպ-

տեմբերի կեսին նեմչեի պրապանդին սահմանը եկան, բայց նեմչեին զօրքը ասոնց վրայ գալով ռօսկոտաշ վախան. աս ապրստամբներէն շատ մարդ ժողվեց լա քեին կիսիկը, որ քանի մը օրվան մէջ հազարաւոր եղան անոնցմէ գլուխները դնելով՝ որոնք ամէնն ալ երգվելնցան կեանքերնին ապրանքնին դնել պաշտպան կենալ իրենց առջին նեղութեն իրաւունքին վրայ. ասանկ միաբանելով վազեցին առին լիլը, լեքֆօնա, լիտա քերդերը. պռէտային մէկ արուարձանի (վարըշի) մը մէջ ժողով մը սահմանեցին, նեմչեի պահապան նաւմընալ օլանտային ծովեզերը բերին՝ որ իշխանները շուտ մը նորէն տեղը դարձնել տըվին։ Ասոնց մէկ յոյսնալ ան եր որ՝ ինկիլիզին ու պրուշը նեմչեին դէմ ըլլալով իրենց պիտոր օգնէին. աս յոյսը ինչվան թագաւորազուն կառավարներուն վրայ ունէին, որոնք թէպէտ ինչվան աս տարի անտարբեր կեցած էին՝ բայց ինկիլիզին ու պրուշին դաշնակից ըլլալով՝ սրտերնէն կախոր ժէին կայսեր եկած ձախորդութիները վրայ. աս մենճերուն վախը խիստ շատցաւ երբոր 1789 հոկտ. 20 ըսեցին թէ ապստամբները պատրաստըվերեն պրուսսէլի մէջ եղած մենճերուն երսուն տնէրնին կրակով երկինքը հանել պիտոր տան, հազարապետները ու կառավարները պիտոր ջարդեն. ասոնց գլուխ վեց արհեստաւոր էին. լսածնին պես ասոնք քունեցին։ Այդ ապստամբաց բազմութիը յարձակեցան կայսեր սահմանին վրայ. Հոն եղած

նեմզեին քիչվոր զօրքը շէլտա գետին քովը շարվեցան որ չիթողուն ասոնց անցնելու, բայց վանտէամէ գնդապետը որ երբեմն պրուշին կըճառայեր, հիմա գլուխ կը եղած ապստամբներու՝ յանկարծ բազմութ յարձակելով գետը անցաւ, կանտ քաղքին վրայ վազեց որ ֆիանտրային գլխաւորն է. քաղքին մէջինները ապստամբներու դին ըլլալով՝ հոն եղած նեմզեի զօրքը իրենց ձմեռոցը վռնտեցին։ Ասոնց ուրիշ 5 հազար նեմցեի զօրք օգնութի եկան՝ բայց ապստամբները բազմութի ըլլալով վրայ եկան, քանի մը օրէն բերդնալ առին. 15 օրվան մէջ պրուձէս, իբբես, դուռնայի, մենս, մինին, նիւբօդ, օսդենտա որ յովսեփ կայսեր սիրելի նաւահանգիստ էր՝ ասոնք ամէնն ալ ապստամբներուն դին անցան. թէպետև կայսեր դիւային երկու հեղ իրարու եւս թուղթ ելավ նոյեմբերի կէսին՝ թէ ամէնուն ալ ներում ըլլայ. իշխաններուն խնդիրքներնալ կատարվի. վէնայէն քօպենհակոմը լուրեցին որ ասոնք շուկէ. ասիկայ քօլոնիային դիւերը հասած առնը հասկընալով որ չիկրնայ պիտոր շուկել, չուզեց զեց զինքը վտանգի մէջ ձգելու։

Ասկ ապստամբները ամէնն եղանակ բանեցընելով կըշատնային. վանտէնօթ փաստաբանը լեզուագար մարդ՝ լեզուով միտք դարձընող սիրտ վաստիկող մարդ՝ հնարքներ կըբանեցընէր իր մտքին դրածը առաջ տանելու. սուտ ձայներ զրպարտութիներ կըսփռէր ամէնն ֆիանտրայի մէջ՝ որուն

Հետևեցան նաև մալխնէս ու պրուսսել. Թագաւորազուն կառավարքնալ դուքսը և դքսուհին քաշված ըլլալով քօլնիայի կայա-ըընտրին քովը (որ դքսուհիին աղբարն էր), ամբողջ պրապանդնալ դեկտ. սկիզբները ապստամբնէրու դին անցաւ, ղինքը անկախ հրատարակելով, նեմցիները կամաց կամաց դեպ 'ի լուքսեմպուրկ քաշվեցան։ Դեկտ. 13 վանտեհնօթ մուտ սաորին նահանգնե-րուն մայր քաղաքը, հետը 8 հազար հոգիին աւելի ունենալով, քաղքին շտանալ իրեն յարեցան. իրեն համախոհ պառաւնալ վե-րոյիշեալ լա բլին կնկտոց բազմութե հան վազեց աղաղակով ուրախութե ցրցընելով. սոնք ամէն կառավարութե պաշտօնեայ-ները ձգեցին, նորեր դրին. բայց ապըս-տամբնէրուն յատուկ է իրենց քարոզածին դէմ ընել. իրենք էին որ առջինններուն ը-րած փարթամութիը վար կրզարնէին՝ հի-մա իրենք ընել սկսան. առջի թագաւորա-ղուն կառավարչաց տեղը նստելով՝ ոսկեզօծ առապայներով քալելով՝ իրենց սեղանին համար անբաւ խարճ շատ ըստակ մխսելով. աս բաներս տրտունջ ձգել տրվավ նաև ապստամբաց մէջ, ոմանց աչվընին բացվե-ցաւ։ Որ ապստամբնէրը զիրենք անկախ իբր նոր տէրուն մը հրատարակելով՝ մարդ խրկեցին Ֆրանսայի թագաւորին ու իրենց ժողովքին որ զիրենք անկախ նոր տէրուի Հանչնան ընդունին. բայց Ֆրանսիներուն մէջ դեռ չէր տիրած ան ինքնագլխութիը, ոչ ժողովքը ընդունեցաւ և ոչ թագաւոր

րը. Եւ քը ինկիլիզին ու պրուշին առաջարկեցին ընդունելու՝ անոնք մէկ մուԹ խօսքերով մը պատասխան տըվին. իրենց մէջը ժողով ըրին ապստամբ գաւառներէն մարդիկ ժողվելով վՀինհներ ըրին, բայց երբոր խօսքը եկավ կառավարութեան եղանակին վրայ՝ շատ տարաձայնութիւն ընկաւ մէջերնին. սահմանեցին որ մէկ ժողով մը ըլլայ զանազան աստիՃանէ ժողվըված՝ անոր ձեռքը ըլլայ օրէնսդիր և գործադիր կարողութիւնը, որուն գլուխ ըլլայ վանտէհնօթը։

Այս ապստամբներէն բազմութիւն ժողվըվեցան աս դիւին ան դիւին դեմ. եւ քերը, մեսան անցնելով նամուրը առին. անկէց համարձակելով դէպ ի լուքսէմպուրգ գացին առնելու որ գլխաւոր բերդերէն մէկն էր. հոն ժողվըված էին նեմցիներ դին եղող զինուորները. հոկտ. մէջնալ երկու գունդ ձիաւորներու նեմցէստանէն եկերէին օգնութեի, ասոնց հրամմնդ էր պէհաեր զօրապետը՝ որ լավտօնին քովը սորված ըլլալով աղէկ գիտեր պաշտպանել։ Երբոր ապլըտամբները վրայ վազեցին 1790 յունվ. 3 կոտրըվեցան 1500 մարդ կորսնցընելով. լադուր զօրապետը նեմցի դիացին աղէկ պահեց երկիրը խելացի կարգադրութ. իսկ սլրապանդցոց զօրապետը աղէկ հասկըցաւ ինչվան որ կրնաեալ զինուորներ չունենայ չիկրնայ պիտոր յաղթել նեմցիին կրնաեալ զօրացը՝ անոր համար ուզեց հրաժարիլ, մանաւանդ որ ինչ պէտք էր պատերազմի համար՝ չէին խրկեր իրեն, երբոր պրուս-

սէր մտաւ՝ չատ պատիւ ունեցաւ ժողովուրդն . աս բանս դէմ եկաւ վանտէոնօթին ու իրեն խորհրդականաց , վախնալով չըլայ որ իրենց տեղը անցնի :

Յովսէփ կայսրը ուրիշ Համիայմընալըը նեց ֆիանտրացիք հնազանդեցընելու , հըռոմ նստօղ իր եպիսկոպոսին որ էր քահանայ հէդացնը՝ ապսպրեց որ երթայ սըրբազան պապին խնդրէ միջնորդ ըլլալու աս ապստամբները իրեն հնազանդեցընելու համար . սրբազան պապնալ պիտու չ. ամենևին չկրնալով յովսէփ կայսեր ըրածնիերը իրեն մեկ չհնազանդելը՝ երբ իր սիրելի որդւոյն խնդիրքը կատարելով գրեց նախագահ քահանային մալինեսի և ուրիշ ֆիանտրայի եպիսկոպոսներուն յորդորելով ֆիանտրացիները հնազանդեցընել կայսեր , որովհետև կայսրը կրնոստանար ամէնուն նեղել , ամէն բանալ առջի կայսրութիները հասցընել . իրենց սովորութիները՝ եկեղեցական կալուածները՝ քաղաքական օրինքները հին արտունութիւնները իրենց դարձընել : Բայց աս թուղթիս մեկ ալեկ պատասխան մը չառաւ . վ'ի ապստամբները մալինին դրերեկին որ յովսէփ կայսրը հիւանդ ըլլալով երբոր մեռնելու ըլլար՝ նեմցի կայսերութիը չատ պիտոր իմար . որովհետև եւրոպացիք ասոր մեռնելուն կրսպասեին նեմցիսատանին վրայ վազելու ամէնն գիտցին . դրերեկինալ որ՝ իրենցմէ օրինակ առնելով՝ ամէն հպատակները կայսեր տակէն ղլուխ պիտոր քաշեին . որով-

հետև թէ աս ապստամբներուն և թէ ֆրանսայի մէջ եղող ապստամբներուն մարդիկը աս դիս ան դին կերթային գրգռելու նեմցիի մէջ։ Լէձին որ իշխանութենէ մընկ ֆիանտրայի սահմանակից՝ առջինը եղավ 1789 ապստամբելու իր իշխանին դէմ եւ լալով որ էր եպիսկոպոս. նոր սահմանադրութի մը ըրավ իր ուզածին պէս անգլուխ անտէր ըլլալու. ու քանի (զօռով) հաստատել տրվավ նոյն եպիսկոպոս իշխանին։ Ասոնց դէմ ռադիսպօնայի ժողովը (որ ամէն կայսերութենէ իշխանութենէ դատաւորն է) շատ վէճեր հանեց բայց պարապ, ինչու որ ասոնք իրենց կռնակ պրուշը ունէին, որ ան ատենը կուզէր խառնըվիլ. ասանկալ փօլօնիա ու դռէվէռիի մէջ ուզեցին ընել. ուրիշ ապստամբներալ ելան հիլտեսհէյմ, քասսել [illegible], որոնք շուտով զսպեցին. բայց ամմինէն աւելի մայնցն մէջ սկսերին գլուխ քաշել. պատճառը աս էր որ՝ յովսէփ կայսրը շատ կարգադրութենէ ըրերէը ռամիկները կրթելու՝ երկրագործութենէը ծաղկեցընելու՝ ան ընդարձակ երկրին եկամուտը շատցընելու. անոր համար դպրատուններ համալսարաններ բացերէը հոն, երկրագործութենէ վարպետներ խրկերը սորվեցընելու աւելի թիւթիւն ու խիղճ առաջ բերելու համար։ Ասոնք ազգէ բաներ էին, բայց մէյմը որ խիստ շուտով փսխել դէմ կուգար երկրցոց. մէյմըներալ կասկած կուգար իրենց որ՝ կայսրը աս բաները ընելով տուրքերը պիտոր շատցընէ

ինչպէս որ ըրեր ուրիշ տեղվանք, ինքը կայսրը պիտոր ըլլար անվիջական կառավար մաձառին. անոր համար երբոր 1790 յունվ. ՀՋ յովսէփ կայսեր հիւանդութիւնը եվեր-յաւ՝ մաձառները աս խնդիրքները ուզեցին վենսայէն։ ա. Մաձառի առջի թագաւորին սուրբ ստեփաննոսին թագը պուտիմ մաձառին քաղաքը բերվի։ բ. մաձառին երկիրներուն չափելը դադրի։ գ. դատաստանի ՀՋ մաձառի լեզուով ըլլայ ինչպէս առաջ։ դ. նոր պաշտօնները վերցըվին, ըլլան ինչպէս որ էին մարիամ Թերեզինայի ատենը։ Լախագահ քառատիներորդ պաթիանի անուն էսթերազի իշխանին հետ ՀՋ տեղ առաջարկեցին կայսեր աս խընդիրքները. որոնց ամէնուն հաւանութիւն տըվավ կայսրը փետրվ. 18. խաղաղութիւն եղավ. ապստամբ մարդոց խորհուրդը որ աս դիս ան դին կըխորհէին գրգռելու՝ պարապ ելան։ Ով որ տհաս է՝ աշխարհչէ հասկըցեր՝ կուզե աշխարհ իրեն յարմարցնել, ով որ հասուն է՝ շատ բան տեսեր՝ գինքը աշխարհիս կըյարմարցընէ։

## Բ. Յովսէփ կայսեր մահը.

1790։

Ինկիլիզը պրուշը ֆիլէմինկը լեհնաստխոտ հոգ ունեին տաձկի տերութեն վրայ. պատրաստ կրձտեին նեմցէին մոսկովին առաջ եր-

Թաքնուն վրայ. կըսեն որ սպանիան ուզեց մէջ մտնալ զինադուլ (միւթարէքէ) մը ընելու վեց տարվան. ով որ ինչ երկիր ա-ռած է՝ իրեն ձեռքը պահելով ինչվան վեց տարի։ Ա՛ս ատենները լեհերը 100 հազար զինուոր ոտքի վրայ հանած ունէին, բայց չէին մտածեր որ պատերազմի հարկաւոր բաները կըպակսէին իրենց. թիւֆէնկ, ե-կաթ, կաշի, պարուտ, թօփ, գնատակ, չու-խա զինուորաց հագուստի համար. ասոնց-մէ մէկնալ լեհին մէջը չիկար, օտար երկիր-ներէն հարկ կըլլար բերելու. ուրիշ առու-տուր մընալ չունէր իրեն եկամուտը շակե-լու բայց միայն ցորենի առուտուր, բայց պրուշը լեհերուն օգնական եղավ որոնք կուզէին մոսկովները իրենց երկրէն դուրս հանելու, իրենց համբարները առնելու, նոյնպէս պրուշը յայտնի երեւան հանեց ի-րեն տեր կենալը տաճկին վրայ. աս պատ-ճառով իր զօրաց մեծ մասը շէզիայէն սահ-մանը խրկեց, անանկ տեղվանք տեղատեր-ցուց որ հեշտ (խօլայ) ըլլայ պօհէմիա վա-զելու. աս տեսնալով նեմչէկնալ հարկ ե-ղավ 150 հազար մարդ իր բանակէն աս դիս կանչել, պրուշին դէմ գնելու համար եր-բոր կռիւ բանալու ըլլար։

Ա՛սանկ կացութեան մէջ ըլլալով յովսեփ կայսեր հիվընտութիւնալ ծանրըցաւ. առա-ջուցմէ կըքաշեր ջերմ (սըթմայ), հաղ, ատեն ատեն կաղէկնար, բայց աս տարուցս սկիզբը շատցաւ, բարակ ցաւը վրան տիրե-լով օրեօր կըհալէր. բժիշկները կըզոցէին.

անոնցմէ միայն մէկը համարձակեցաւ իրեն վտանգը հասկըցընելու. պատերազմին ըղձալի աղաղակը՝ պատերազմական սրտադողը՝ պատճառ կըլլար ճանըրընալու. թէ որ քիչ մը առաջ պատերազմին յաջողութենէ հաստատ սիրտը ուրախացաւ՝ բայց առջի ձախորդութենները սրտին մէջը տպաւորված ըլլալով իր եռքի օրերը խիստ խղճալի եղաւ. տեսաւ որ չորս հինկ օտար տերութեան նախանձելով նեմցիէ մեծնալուն վրայ միաբաներ էին իր թախտին դէմ ելլալ, նեմցիէն տերութիւնը քոլորովին կործանել. տեսաւ որ իր հրամայածներուն չատը էր եղած, էֆինալ ուզեր ընելու, իր ըրած բարեկարգութիւնները պատճառ կըլլային տեղ տեղ ապստամբութեան հանելու առելի պէտ Ձիայի ու մաճառի մէջ, ասոնք ամէնը իր աչքին առջին գալով՝ վերջին օծումը առնելէն ետև աս խօսքերս զուրցել սկսաւ խաչելութեան առջին: "Ցեր սրտագիտ ամի, ,, դու գիտես վկայ ես ինչպէս իմ ամէնէն ,, գործքս ժողովրդեան բարւոյն համար ըրի ,, որ ինծի չանձներէիր. ես անոնց միաս մը ,, ընել և ոչ մտքէս անցուցեր էի, բայց թէ ,, որ ըրածով ըլլամ նեղես ինծի նաև անօր ,, ալ որ խորհուրդ տըվավ ինծի ընելու, ,, նեղէ նաև անոնցալ որ խափան եղան ինծ ,, ծի ան ազգութիւնները ընելու ինչ որ ,, կրնայի ընել: Ա՛յս հիմա մեռնելու մօտիկ ,, ցած բան մը չեմ կրնար ընել ժողովըր ,, դեան, կը յանձնեմ քու կենդանութիւնդ ու ,, իմաստութենդ, դու անոնց առաջնորդէ

„ որ խաղաղութիւնէ հանդստութիւնէ ձամիկն
„ դուրս չելլան , ամենակարող ձեռքդ վէ-
„ պահէ թշնամիներէն : Փետրվ. 12 խիստ
ծանրըցաւ , և որովհետև աշխըրքիս կարգն
է նեղութիւնէ նեղութիւնէ վրայ գալու իրարու
հետև , հիմաալ յովսեփ կայսեր նոր նեղու-
թիւնմընալ եվեցաւ առջինիներուն վրայ ,
տակնուվրայ ըրավ գինքնալ ամմէն ար-
քունիքնալ , մէյմը իր քրոջը ֆրանսայի թա-
գուհիին վտանգը , անանկ խեղճ կերպով
վեռսայլաէն փարեզ տանիլը որ եաքը պի-
տոր պատմենք , մէյմընալ մահը վիզդեմ-
պերկեան եղիսաբեթի որ մոսկովի թագու-
հիին է . կատարինեին քոյրն եր՝ և իր եղ-
բօրորգւոյն ֆրանչիսկոսի կինիկը ամմէնուն
սիրական իր ընտրեալ բնութիւնը համար :
Ասիկայ տղաքերքէն եաև երեքախտ ( հե-
վալէ ) վրան գալով մեռաւ 22 տարվան ,
ամմէնուն վրայ խիստ սուգ ձգեց . աս բանս
յովսեփ հազիւ իմացաւ ոօսէմպէրկ ֆրան-
չիսկոս իշխանին զանազան խօսքերէն՝ որ
իրեն խիստ մտերիմն եր արքունեացը մէջ .
հիմա իրեն մահը յուղարկաւորութիւնը մտա-
ծելնին՝ իրմէ առաջ հարկ եղավ ուրիշին
մահը յուղարկաւորութիւնը մտածել , ֆրան-
չիսկոսին սիրտը կընայեր միխիթարել որ և
հիմակվան կայսրը : Եմիգին արքունիքը
ասանկ ցաւագին դիպուածներ՝ քանի մը
մանկահասակ սիրելիներու մեռնիլներ . և-
տևէ հետև սուգ քաշել՝ թաղելու հետ ըլ-
լալ տեսերեր ինչպես որ առաջները պատ-
մերնք , հիմաալ նորին հանդիպեցաւ . վ՚

զի եղեսաբեթին կսկիծին չիդիմանալով յուլեափ երկու օր միայն ապրեցաւ անոր վրայ։

Լատբի օրերը լավտնը իր քովը կանչեց. իրեն յանձնեց Թագաւորութիւնը եղբարընեբը զօրքը, հոն խիստ աղետալի տեսիլ մը եղավ. քովը եղողնեբուն սիրտը ելավ, ձըղձմատելով վրան կընայէին կըմոտածէին ինչպես ասանկ մենծ տէրութիւն միապետ մը որ ամմէն բանը կուզեր իր ձեռքովը շտկել՝ իր ծաղիկ տարիքին մէջ մահուան դուռը հասած՝ կրնողնու տէրութիւնը ալեկոծեալ մնկ դին պատերազմով, մնկ դին ապստամբութիւ՝ մնկալ դին սպառնալեօք։ Յուլեափ մնկ ցաւագին սրտով մը լավտնին երեսը նայելով ըսավ. ասչափ նեղութեց մէջ աս կնծի մնկհատիկ մխիթարութիւս՝ որ իմ տանս համար կրնողնում մնկ ապաստան մը՝ որուն նման մնկ տէրութիւն մը չունի. աս խօսքս լավտնին վրայ մեծ գովասանք եղավ։ Իր եաքի օրը թուղթ մը գրեց իրեն ստորագրութիւ, եաքի կեցիք բարևը ըսելով ամմէն ազգականներուն սիրելիներուն նաև ամմէն զօրացը, ընորհակալ ըլլալով ամմէն զօրացը, ընորհակալ ըլլալով ամմէն զօրապետներուն հազարապետներուն նաև հասարակ վնասուրներուն իրենց հաւատարիմ ծառայութիւը համար, յորդորելով որ նոյն հաւատարմութիւը ցըցընեն նաև իր յաջորդին օրը. մեռնելէն առաջ զանազան հրաման հանեց քանի մը ողջունագրի ձեռք դրաւ. ասանկ խօսելով (ինչպես որ

կըլլայ բարակ ցաւէն մեռնողներուն) մեռաւ 49 տարեկան, փետրվ. 20։

Ե. Յովսէփ կայսեր երթը, որպէսզի...

Այս կայսրը արտառոց մարդիկներէն մէկը եղաւ ընդհանուր պատմութեան մէջ, որուն բնութիւնը չհանչնալը՝ իր աղէկութիւնը պակսութիւնը հասկընալը մեծ խրատ մը կրնայ տալ ամէնուն, աւելի կառավարող մարդիկներուն. անոր համար ասոր վարքը առանց քննութեան անցնելու չէ։ Այրկու բաժնենք իրեն վարմունքը, մէյմը իր առանձին բնութիւնը պատմենք, մէյմընալ հասարակի կամ ուրիշներուն վրայի ըրածները։ Այսիկայ պզտիկուց բարի կրթութիւն մեծցած ըլլալով ամենևին չափաւոր ժուժկալ էր իր ուտելիքին խմելիքին վրայ, ամէնէն գործքի մէջ աշխատասէր ժիր արի, սաստիկ եռանդ մը կրնամեր աշխատելու պարապ չնիստալու. իրեն քունը խիստ քիչցուցեր էր հասարակ մահճի վրայ պառկելով. խիստ ատելի էր իրեն հպարտութիւնը գոռոզնալը, չէր ուզեր գովասանք լսել. ուր որ երթար չէր ուզեր իրեն համար պատիւներ հանդիսներ տեսնալ. խօսքը խօրհրդան բան հասկընալու բան իմանալու վրայ էր. իր հպատակին վրայօք պարզութիւն մը ունէր հասարակ ժողովրդեան պէս, զարդարվիլ վինքը ցցեցնել ամենևին չէր սիրեր, ատելի էր իրեն անանկ վարմունքը։ Այսոր օրինակը մէյմը-

նալ է, ֆետերիքոսի պրուշի Թագաւորին օրինակը աս բանիս մէջ շատ զօրաւոր է. ղան, եւրոպացոց մենծերուն քով մէկ նո. րելուք (մօտա) մը մտուցին մէկ դի ձգելու առենէն զարդարվիլը, մարդու անվայել սեպել սորվեցուցին, այլ հասարակ ժողո. վրդեան պէս հագվիլ Թագաւորէն ինչվան վարինը. յովսեփայ սիրտը անանկ էր որ առենէն ղինքը չէին շարժեր փարեզցոց ըրած փափկութիւնը զուարճութիւնը՝ որոնք կուղէին իրեն համար կերպ կերպ զուար. ճալի բաներ ընել երբոր հոն գնաց։ Ի՞ս աղեկութիւնները իրեն խելացի մըրը կրթու. թիե տալու է՝ որ էր մարիամ Թերեզինան. անիկայ կրջանար որ յովսեփ ամէնէն կա. տարելութիւն ունենայ ինչ որ պէտք է քրիս. տոնէի ու աղեկ կառավարողի։ Ի՞նչ բարե. բաղդութիւն, որոնց որ մայրերնին պզտիկուց ատանկ սրտով կրնային տղաքնին, չփացած խեղեացած չեն մեծցըներ. ինչու որ՝ մար. դը տղակուց ինչ որ կրսորվի՝ ան կրլլայ ի. րեն բնական. իսկ մարդուս պզտիկութիւը որովհետև մօրերնուն ձեռքն է՝ թէ որ մայ. րերնին ատանկ աղեկ կրթութիւ մեծցընեն՝ դժար չիգար տղոց ան կրթութիւը, ինչպէս որ դէշ կրթութեամբ մեծցուցած ըլլան՝ ան կրլլայ իրենց բնութիւն [1]։ Յովսեփ մէկը սիրելու ըլլար՝ խիստ կրյարեր երախտա. գետ կրլլար. հոգ տանող էր ամէնուն ար.

---

(1) Քօսան հրվիլ պէր Թաղէ միհալի, պէհլիսակ տօղրուլուր մի՛ աղնէ միտալի։

դիւնքը (էմիկը) ձանչնալու. երբոր գնաց ուր տեղ որ իրեն մկ քալ զօրապետը Շ վե-ըին անուշով մեռերեր յաղթութիւն ընե-լով՝ հոն անոր յիշատակարանը կանգնել հրամեց. ծեծի մէջ իբր հասարակ զինուոր մը կըվարվեր. ամմին բանին կուզեր ինքը ներկայ գտնըվիլ. գիշեր ցորեկ կըքալեր զինուորներուն սիրտ տալու հոգալու. թէ-պէտ իր արտաքին կենցաղավարութիւնը չա-փէ դուրս փոփոխական եր՝ բայց իր դաշ-նադրութեց մէջ հաստատուն եր. ինչ քա-նի որ կըցանկար՝ աւելի կընայեր կերպեր եղանակներ բանեցընելով ձեռք ձգել քան թէ պատերազմելով։

Գանք ուրիշներուն վրայի ըրածները յիշե-լու, առաջ յիշենք մանաւանդ իրեն սըրտա-ցաւ ըլլալը, որ խիստ հարկաւոր օրինակ է մեր աղգին համար. յովսէփ իբր իրեն քնական ուներ սրտցաւութիւնը. թագաւո-րել սկսելու առենը սկսաւ իր գթութիւնը ցցցընել. իր ծառայներէն մկը չէքմէձէկէն 600 ֆիօւրին գողցած ըլլալով մեռնելու դատապարտըվեցաւ. յովսէփ հասկընա-լով որ իրեն ռոձիկը (հօլֆֆէն) քիչ՝ խոր-ձը շատ՝ ըլլալուն համար գողցերը որպէս զի իր շատվոր ընտանեացը հասնի՝ դատա-պարտելուն տեղը աղատեց, իր ռոձիկը կրկին եվելցուց։ Երբոր փարէզէն դա-ձաւ՝ տղայ մը պատահեցաւ իրեն լինը տար-վան որ կըմուրար. յովսէփ հասկընալով որ՝ իր հիւանդ մորը համար կըմուրայ, որ-պէս զի ան ըստրկով բժիշկ մը գտնայ մե-

ըը տանի, զինքը բժիշկ ձեւացուց տունը գնաց, անվայել վիսպեց անանկ խեղճ տեղը մնալ, հոն իրենց խեղճութիւնը տեսնալով անանկ ցաւեցաւ վրանին՝ որ իր առանձին մտուկին 50 տուքադ եկամուտ կապեց։ ( )ը մը պատահեցաւ մէկ երիտասարդի մը որ նեղը իմնալով իր տանը քանեըը կըծախեր ապրուստ գտնալու համար. ասիկայ չիձանձնալով որ կայսրն է՝ սկսաւ գանկտիլ կայսեր վրայ թէ իր ծերացած հայրը որ զինուոր էր՝ կայսրը անանկ թողուցեր երեսի վրայ, մայրնալ թողուցեր թշուառութե մէջ առանց մէկ բան մը կապելու. յովսեփ տանը քանեըուն գինը վճարելէն ետև խօսք տրվավ երթալ կայսեր հասկըցընել իր ողորմելութիը, բայց աղաչեց որ երկու օրէն ետև պալատը (սեբայը) գայ, հոն իրեն իմացընէ ինչ պատահան կուտայ կայսրը. աս միջոցին մէջ յովսեփ հասկընալով որ երիտասարդին ըսածները իրաւ էին, հրամմեց իր քովը գալ մայրնալ աղջկինալ, մէյ մէկ թուղթ տըվավ անոնց ուռճիկ առնելու, ինչ չափով որ կառներ ան ծերացեալ գինուորը։ Ա՛ֆ գիպուածէս ետև մտածելով որ ասանկ խեղճեր շատ կըգտնըվին ինքը գիյտէ, օր մը սահմանեց շաբթըվան մէջ, հրաման տալով ամէն քաղքցիք հաւաքձակ կարենան ան օրը իրեն հետ խօսիլ, աղերսագիր (արզուհալ) տալ. տես հիմա ինչ ուրախութիւն խեղճերուն, երբոր գլուխ եղողը թող կուտայ գոնէ իրենց խեղճութիը իրեն հասկը-

ցընելու ։ Ինչպէս մը առաւպայով անցնելով քաղաքին շատ հեռուտեղ՝ աղքատ տղայ մը աղաչեց զինքը առապան առնել իր յոգնածութիւնը հասկըցընելով, անարժան չիսեպեց շուտ մը իր առապան առաւ. աս տղան չիճանչնալով որ կայսրն է՝ ինչ որ կըհարցընէր՝ շտկե շիտակ կըպատասխաներ կըհասկըցնէր իրենց խեղճութիւնը . յովսեփ այնչափ խղճայ վրան որ՝ ասոր տաննալ եկամուտ մը կապեց ։

Ասոնց նման շատ գթութիւն գործքեր կըպատմըվին յովսեփայ վրայ . աս գթածութիւն էր որ զինքը շարժեց 1766ին Ճամիոդուիթէն ետև ինչ տուրքեր որ կային ուտելիքներուն վրայ ամէնննալ քննեց չափաւորեց , միայն հրեայներուն համար չիքիչ յուզ որովհետև անոնք մատրապազութիւն ընելով պատճառ կըլլային կարօտութիւն քաշել տալու ժողովրդեան . ասանկալ միլանի մէջ 200 հազար ֆիօրին քիչցուց տաբեկան տուրքէն ։ Լսենօք լսեց որ դրանսիլվանիայի մէջ շատ կարօտութիւն կար՝ սկսաւ պատճառը փնտռել, հասկընալով որ մատրապազներն էին պատճառ , մեկ տեղ խօսք դրեցին մնին դինը եվելցընել, ասոնց պատիժ՝ պարտք դրաւ որ կարօտութիւն քաշող քաղքներուն մատրապազները իրենք իրենցմէ տանին անասունները ։ Ս սրտցաւ ըլլալն էր ժողովրդին վրայ , որ նեմցկին եկամուտին կառավարութիւնը նոր կարգի մը մէջ դրաւ. մէջէն դուրս հանեց ագահութիւնը ու մխթելը . ոչ անանկ ագա-

հուԹը ժողվել և ոչ գանձին (խաղնային) ըստակը պարապ տեղվանք մնալէ. ԹԷպէտ կարելի չէր նեղցնէին գանձին տնտեսուԹիւնը ճիայուն չափի մը մէջ կապել, որովհետև անդադար պատերազմունքը կըհարկադրէին զինքը կարգե դուրս տուրք առնել, բայց մէկ կանոնաւորուԹիւն մը խօԹեց տուրք վճարելնուն վրայ, պաշտօնեից մէջնալ արԹուն զգոյշ կենալ մը մտուց։ Հասկընալով որ Թագաւորական եկամուտը հարըստացնող երկրագործուԹիւնը ու վաճառականուԹիւնը են՝ աս երկու բանին վրայ խիստ սէր ձգեց. ինչ ծեծ ինչ վէճազ որ ըրաւ՝ պատճառ գրեԹէ ասոնք էին, որպէս զի ասոնք ծաղկեցընէ. անոր համար իր երկրին մէջ եղած վաճառականներուն շատ դիւրուԹիւններ (խօլայուԹիւններ) ըրավ. կանոնակներ դնել տրվավ ինչվան իրենց տեփԹերնեերուն վրայ. իսկ դրսէն եկող վաճառականներուն մեծ մեծ արտունուԹիւնները ընորհեց. երկրագործուԹիւնը ծաղկեցընելու համար՝ 1769 ապրիլի մէջ յանձն առավ ինքն յովսեփ ամէնուն առջին հանդիսով բօզօվիցին մէկ արտը փորել հասարակ բանվորի (չիֆտճիի) պէս չինու Թագաւորէն օրինակ առնելով, անով երկրագործուԹիւնը պատուաւոր բան մը ըրավ ամէնուն, սիրտ տրվավ, որուն յիշատակը պահելու համար հոն աղվոր յիշատակարան մը կանգնեց եւթէն լիչդենսդէյն իշխանը։ Ինչափ հոգ ունէր ժողովուրդին հանգստուԹեանը համար որ քանի տաւն կեցաւ բռակա, օր-

մընալ չիգնաց Թատրոնը, որչափալ որ մեն-
ծերը կըհրաւիրեին զինքը՝ կըպատասխա-
ներ. ժողովուրդին պիտանաւորութիւնը ան-
չափ շատ է որ՝ ես առեն չեմ ուզենար իմ
զբօսանքիս իմ զուարճութեես հետ ըլլա-
լու. անգամընալ հոն գացած առենը հաս-
կընալով որ լեհին զօրքը սով (խըթըլըխ)
ձգերեին պօհմիա, իսկոյն Ճար ըրավ հո-
գաց։ ()ր մը մենծերը խնդրեցին իրմէ
հրաման հանել ժուռ գալու տեղը գոցել,
որպէս զի մենծերը միայն ժուռ գան հոն
իրենց հաւասարներուն հետ, և ոչ ռամիկ
ժողովուրդը. պատասխանեց յովսեփ Թէ
որ ես միայն իմ հաւասարներուս հետ ու-
զենայի ըլլալու՝ պէտք էր ինծի երթալ քա-
փուչիններուն գետնին տակի տեղը նստիլ
ուր կընստին իմ նախնիքս. (որովհետև
հոն էր կայսերներուն գերեզմանը) անանկ-
ընէ դուք չէք Ճանչնար բսաւ ինչ զուար-
Ճալի բան է ամէնուն հետ հաւասար ըլ-
լալ, ամէն աշխարհ իրեն հաւասարցընել։
Ասոր համար էր որ՝ զանազան դաս մար-
դիկներու վրայ հաւասար միակերպ պաշ-
պան կըկենար, քաղաքական ու քրէական
օրէնքը գործ դնելու առենը միակերպ գո-
վելի խստութեի կըբանեցընէր. կալուածոց
վրայ եղած չափէ դուրս արտունութիննէ-
րը անաչառ կըվերցընէր։ Խիստ դեմ էր
իրեն դատարկութիւը, ասոր համար մու-
բացականութիւը բոլորովին վերցուց. ամէն
աղքատներուն գործարանները (քերխանա-
ներ) սահմանեց, կուբերուն կաղերուն ձեռք

չունեցողներուն ամէնէնաւել իրենց կեօրէ գործք հնարելով հոն աշխատիլ ապսպրեց ամէն օր, անկից վճարք առնել տալով. անանկ որ նեմչիի քաղքներու մէջ մէկ մուրացկան մը չես գտնար, մէկ ջուլոտ լաթերով մարդ մը քալօղ չես տեսնար, ինչու որ անանկը տեսածնին պէս դատաւորները կըվերցընեն. աս բանս նեմչիի մէջ առաջալ կար՝ բայց յովսեփ կայսրը խիստ ձիշտ բռնել տըվավ։

Իր կենցաղօգուտ գործքերը որ կըներ հասարակաց ու տէրութէ օգտի համար՝ առաջները յիշերենք, մէկ քանինալ հոս յիշենք. աշխըրհիս մէջ քիչ թագաւոր եկեր են որ աս աստիճան միացուցած ըլլան բարեկարգութէ սէրը արդարութէ հետ. իր ամբողջ կեանքը ատոր վրայ անցուց որ հասարակաց բարի լնէ՝ ժողովրդեան օգուտ լնէ. գինարուեստը անանկ չտկեց անանկ կրթուէթ մը մէջ խօթէց՝ որ նեմչիին զօրքը եւրոպային բարեկիրթ զօրայ կարգը անցուց, հոգետուններ հիւանդանոցներ գպրատուններ շինելու հետ եղավ կամ եղածները չտկեց. ուսմունքը գպրութիւնը աղէկ կարգի մը մէջ դնել տըվավ, ծաղկեցընելու սիրտ տալու կանոններ դրավ. նոր օրէնքներ հանեց քաղաքական ու քրեական, նոր կերպ դատաստան տեսնալու, նոր արուեստներ ձեռագործներ սորվեցուց իր երկիրը. նոր նոր ձամփաներ բանալ տըվավ ցամաքի վրայ ջուրի վրայ, հին ձամփաները չտկել ճոցընել տըվավ. խրվաթ

լըխի մէջ մտածեց մէկ մեծ Համիպայ մը բա-
նալ մանաւանդ ստանին վաճառականութիւնը
հեշտ ընելու (խօլայցընելու) համար ծիւկ
տեղէն ինչվան քառլըդատ . աւսդրիայի
սահմանները վենետիկի տերութէ սահման-
ներուն հետ որոշեց կանոնաւորել : Այդ
աս կայսեր ըրածներուն մէջ զարմանալի
եղան ու օգտակար իրեն ըրած Համիոր-
դութիները որ յաձախ կըներ . հասարակ
մարդիկ Համիպայ կընեն կամ ըստակ շա-
հելու և կամ զուարճութեան համար . ու-
սումնականք Համիպայ կընեն բնական բա-
ները փնտռելու՝ աշխարհիս շինքը հասկընալ
լու համար . բայց մէկ քալօղ մը որ միայն
բարոյական աշխարհ հասկընայ, ամէն ազ-
գաց աղէկ կամ գէշ վարմունքնին գիտնայ ,
օրէնքնին կառավարութիւնին ձեւագործ-
նին առուտուրնին իմանայ , որպէս զի աղէկ
բաները իր երկրին մէջը մտցընէ , պակսու-
թիները վերցընէ , ասանկ Համիորդութի
յովսեփ կայսրը մէկ գերազանց կերպով
մը ըրավ , որ իրմէ առջիններէը ամէնն անա
անցուց , մէկը ասոր պէս չէր ըրած : Ինք-
նալ կըվկայէր աս բանիս վրայ , " Իմ ըրած
" Համիորդութիւնս խիստ շահաւոր եղան
" կըսէր , ինչու որ մինակ ես չէի ընէր Համ-
" փորդութիս . իդալիայի Համիորդութէ
" մէջ չորս հոգի էինք . ամէն մէկէրնիս
" զատ զատ բանի վրայ հոգ ունէինք տես-
" նալու հասկընալու . իրիկվան ամէն մէ-
" կէրնիս առանձին քաշվելով մեր հաս-
" կցածները կըգրէինք , որոնք ետքը ես

„ ձեռքս առնելով կըմիացընէի , գրածնին
„ կարգի կըդնէի ։ Այբբոր պօհմիա ու մա-
„ ձառք երթալու եղայ՝ հետս մեծ վար-
„ պետներ ունէի զինարուեստի վրայ . ուր
„ որ տեսնալու հասկընալու բան կար՝ ամ-
„ մէն տեղնալ գայինք դիտեցինք . ասոր
„ վրայ եաքը խիստ գոհ եղայ , վասն զի ա-
„ սով եղավ որ պատերազմէը ըրի առանց
„ արիւն մը թափելու ։ Այրաւ է որ քիչ
թագաւոր եղերէ աս կերպով ասանկ շահ
մտածելով ձամբայ ընօղ . 1766 իր սահմա-
նին մէկ մասը քալեց միւնակ ասոր համար
որ ինքիրմէ տեսնայ իմանայ զօրաց վիճա-
կը , ամուր տեղերուն կացութիւնը , ամմէն
տեղին վաճառականութիւնը երկրագործու-
թիւնը , ուր որ կերթար՝ միշտ դատաստա-
նարաններն կրվազեր մտիկ կրդներ ինչպէս
դատաստան կրկտրեն , փաստաբաններըը (ա-
վօքաթներըը ) ինչ պատճառներ ինչ ձեռ-
նարկութիւններ կրգտնան իմանայ , խահվե-
նեըը կերթար անծանօթ մարդու պէս կը-
նըստեր լսելու ան քաղքին ժողովուրդը
ինչ բանի վրայ գանկատ ունի թագաւորին
վրայ , դատաւորներուն զրկողութենէ վրայ .
ուրիշներուն աչքին ոչինչ երևցածը կամ
մանրամասնըը բան սեպվածը՝ յովսեփայ
հասարակասեր աչքին մեծ բաներ կերևե-
նային , ան ոչինչներէն իրեն մեծ գիտե-
լիքներ կելլային . երբոր 1787 խըրըմ գնայ
մոսկովը թագուհիին հետ մէկ տեղ՝ ծանրը
չերևցաւ իրեն՝ անկից ֆարշ գետին բերա-
նը երթալ դիտել սև ծովին եղերքը չեր-

քեսին ինկուելին կիւրէղինն էր, որ անոնց
որպիսութենէն հասկընայ։ Այդ իսկ իրեն
համիտոդութենէ եղանակը կըվարմացընէր
եւրոպիա. թէ որ չերկընար խօսքերնին
մտիկ դնելու բան էր անոր համիտոդութենէ
կանոնները որ դրերէր իր մարդիկներուն
իր վարմունքին վրայ որ գրքի մէջ անցու-
ցին տպեցին, ինքը իրր մէկ հասարակ ազ-
նուական մը կըձեւանար անծանօթ ծըպ-
տեալ (թէպտիլ), հետը միայն հարկաւոր
բաները առնելով թեթեւ ըլլալով. իր սե-
ղանին թախըմը ամմէն բանով իր հետը
ժուռ կածցըներ մաքուր բայց չափաւոր.
իր արուեստաշէն մահիճնալ (տէօշէկնալ)
հետը կըտանէր, որ էր միայն մէկ երես
(խըլըֆ) մը կիւտերի կաշիէ. պէտք ըլ-
լալու ատենը մէջը օդ (հաւա) փչելով
կըլլար մէկ աղէկ մահիճ մը ուռած. ուր
որ կինջնար՝ ապսպրված էր իր մարդիկնե-
րուն՝ ինչ գին որ ուզին կերակրոյ համար
չիկուտիլ լման վճարել. աս բանս մէկ տեղ
մը հասկընալով ուր որ ինջաւ՝ խիստ չափէ
դուրս ծանր վճարք մը ուզեցին սկսան վի-
ճիլ. յովսեփ լսելով հրամեց լման վճա-
րել, բայց անունը նշանել որ մէյմընալ հոն
չինջնան։

Ղանկով յովսեփ կայսրը ուզեց ըլլալ աշ-
խարհաշէն, քարերարօղ, օրէնսդիր, շատ
կատարելութենէ ունեցօղ, բայց չկրցաւ ինչ
կար իր գործոց մէջը որ շատ աշխատեցաւ
քիչ հաճոյ եղաւ. ինչվան ինքնալ հասկը-
նալով աս բանս առնելու մտիկ ատենը

իր մէկ պաշտօնեի մը ղուրգեց ։ Հնձի մէկ մտածմունք մը կուգայ որ ըսավ իմ սիրտս կավրէ . աս է որ՝ ասչափ նեղութէն ետև որ ես քաշեցի՝ քիչ գործ ըրի հաձոյական , շատ գործ ըրի անհաձոյ ։ Իրաւ զարմանք , ինչպէս ըլլայ ան մարդը որ իրեն խելքը միտքը աշխարհ շինցընելու վրայ էր , աշխարհ իրմէ շատ մեծ աղէկութիներ կըսպասէր տեսնալ՝ քիչ բան տեսաղ եղավ . աս բանիս վրայ կեղվրայ անցնելու չէ , հապա պլուտարքոսի պէս մտածական ընելու է վրան . մեծն պետրոս ասչափ կրթըվածչէր՝ բայց իր ըրածներուն վրայ մէկ յաջողութիւն մը կար , իսկ յովսեփայ ըրածներուն վրայ մէկ դժբաղդութեի ձախորդութի մը կրտեսնանք , շատ աշխատանք քիչ վաստակ ։ Այն որ տաձկներուն բերանը նայելու ըլլանք՝ ծածկ կըբերեն ասոր պատձառը . մեծ էր կըսեն մեր երախտիքը որ յովսեփայ մօրը ըրինք . երբոր իրեն թշնամիները մեզ կրդրդեին ձեռ բանալու , մենք մեկ չըրինք վրան չիվազեցինք . յովսեփ ասոնք ամենևին բանի մը տեղ չիսեպելով բոլորովին մոռցաւ . մեզի աղէկութի ընելուն տեղը ապերախտութի ըրավ առանց պատձառի ձեռ բանալով ։ Այսչափ որ գոնե մօրը կտակը պէտք էր կըսեն պահելու , որ մեռնելու ատենը յովսեփ կայսեր ապսպրեր տաձկին վրայ ձեռ չիբանալ . ինքը որովհետև իր մօրը կտակինալ մեկ չիդրավ , ասանկին բանը հարկաւորապէս չկայըղիր ։ Այս իրաւ է որ տաձկին ըրած

աղէկութիւը որ յովսեփ կայսեր մօրը ըրաւ՝ խիստ մեծ բան էր՝ պէտք էր ձանչցըվիլ. ծնօղքին ապսպրածը վիբռնել (թէ որ խրաւ է) շատ դէշ հետեւութիւնէր կրնբերէ, օրհնէնքը կրվերցընէ, ասկէց աւելի ինչ քարոզ. բայց գանք հիմա մնքալ կենցաղագէտ մարդիկներուն ըսածնէրը դնենք որոնք շատ հատորներով գրբէր հանեցին: Որոնք յովսեփայ ըրածնէրը մտածելով խրեն չէյաջողածութիւնալ տեսնալով՝ աս պատճառնէրը կրգտնան: Որ ատ հեղ գործք մը չէյաջողվելուն պատճառը՝ մարդուն ան դիի ծայրը հավէսլի ըլլալն է կրսեն. ան հավէսը չափին աւելի արտորանք կրբերէ. աղէկ բան մը ընելու միայն սէր հավէս ունենալը հերիք չէ, հապա աղէկ ձամփայ աղէկ կերպ պէտք է գիտնալ բանեցընելու. մէյմը սատիկ արտորալը՝ մէյմընալ ամէն բանի մէկէն ձեռք զարնելը աղէկ կերպ չէն, շատ ընդդիմութիւ կրգտնան, ժողովուրդին սիրտը կրպաղեցընեն. առջի հրամայածնէրը նորէն փոխել պէտքը կրլլայ, ան փոխփըտենալ նորէն ձգտհանքը կեվեցրընէ: Յովսեփ սեփ նորոգութիւ տալու ոգւով լեցված ըլլալով՝ չափէ դուրս բազմապատկեց իր կարգադրութիւնէրը, եւեւէ եւեւալ փոխփըտեց. ասով ուրիշ բան չիկրցաւ ընել բայց եթէ զարմացընել ուրչափ մանրըմնընրը բանէրու խելք կըհասցընէ եղեր. աս անդադար կարգադրութիւնէրը ամէն տեղ անհանգիստ ընելով աւելի ձգտհանք բերել տրվավ քան թէ ընորհակալութիւ կամ ե-

բախտագիտութեի . որուն համար իր մեռ-
նելէն շատ առաջ գուշակութեի եղած կը-
լսեինք , թէ շատ բան պիտոր սկսի քիչ բան
պիտոր լինցընէ , տարաժամ պիտոր մեռնի :
Երկրորդ պատճառ չկայաղաձութեի կըլ-
լայ խիստ ընդհանուր բանէրու ձեռք զար-
նել . մանաւանդ թէ որ ան հրամանը բաղ-
մութեի վրայ ըլլայ , զանազան աղգաց վրայ .
հին օրինքնէրու հին սովորութեց փոխփոխե-
լու վրայ . ինչու որ հնութիը միշտ մեկ պա-
տիւ մը կըբերէ . կարծեն մարդիկ որ ան
հին բաները ձգելու փոխելու ըլլան՝ պա-
տիւնին կրձգեն , չեն կրնար որոշել որ հին
աղեկութիը փոխելու չէ՝ հապա հին պակ-
սութիւնը : Յովսեփ կրտեսնար իր լան ու
ընդարձակ աշխարհին մէջ ( որ գերմանիա
կըսվի ) զանազան ժողովուրդք , զանազան
դաւանանք , զանազան սովորութեի , կրբաղ-
ձար որ որչափ կարելի է անոնք միացընէ .
քիչ մը թող մեկը փոխէ ըսավ քիչմընալ
մեկալը , որպէս զի ինքը մեկ եղանակով մը
կառավարէ ամմինալ . բայց անոնք չփոխ-
վեցան , ինքնալ ոչ մեկին հաձոյ եղավ ոչ
մեկալին . փորձովը ուշ իմացաւ որ՝ միացը-
նել չանալուն տեղը անանկ բաժնըված պա-
հելը աւելի հանգիստ կըպահէ մարդկային
ընկերութիը . առջի մարդկային ընկերութե
ատենը նոյն ինքը արարիչնալ աղեկ սեպեց
աշխարհիս համար բաժնըված պահել մար-
դիկը՝ լեզուներին խառնելով գատ գատ ազգ
հանեց . երբոր իրենալ ժողովուրդ մը ու-
զեց ընտրել կրթել՝ գատեց դուրս հանեց

ուրիշներուն մէջէն ։ Ա՛սոր համար ան տէ-
րութիւն որ շատ ազգ ունի իր տակը՝ աւե-
լի աղեկ կըմտածէ ամէնուն Թող տալ ի-
րենց կերպը սովորութիւնը բռնելու . անով
հնազանդեալ կըմնան իրեն , ինքնալ հան-
գիստ կըմնայ ։

Ա՛յսքերհիս մէջ կան անկարգութիւն որ վեր-
ցընել ուզելը կըբերէ կրկին անկարգուն .
ամէնէն բարեկարգուն խօթել ուզելը կըե-
լայ անկարգութիւն . ասիկայ է մէկ խրթնա-
բանութիւն մէկ հանելուք մը՝ որ միայն հըն-
ցած կենցաղակիրթ մարդիկ կրհասկընան .
վասն զի ան չիվերցընելը չիշտկելը ոչ է ան-
կարգութիւն կամ անմտութիւն , այլ գեր-
զգօնութիւն . ամէնէն բան շահեմ ըսավ յով-
սեփ՝ շատ շահութիւններ ծռվեցան , մէկէն
շահեմ ըսավ՝ փոխանակ կամաց կամաց շըտ-
կել ուզելու ։ Ա՛նճն պետրոս շատ նոր նոր
բարեկարգութիւններ առաջ տարաւ , բայց
ամէնէնկառավարօղ իր հպատակներուն կէօ-
րէ պիտոր կառավարէ . մոսկովին ժողովուր-
դը միակերպ բնութիւն ունեցօղ ամէնէննաև
կուբակերպ հնազանդօղ են , ինչվան մեռ-
նիլը յանձ կառնեն իրենց թագաւորին հա-
մար , բայց նեմցիին հպատակները զանա-
զան ժողովուրդ զանազան բնութիւն ունե-
ցօղ են , ջունին ան հնազանդութիւնը ինչ
որ կայ մոսկովին մէջը ։ Կենցաղավարութիւնը
դիտութիւն մը չէ , այլ գիտութենէն շատ
աւելի խրթին է , որուն գիրք մը չկայ սոր-
վեցընօղ . այլ ինքը կառավարօղը խոհե-
մութիւնը ձեռք առնելով չանչնայ պիտոր

թէ հիմա ասանկ պարագայի մէջ ինչ կերպ վարմունք ընելու է իր ժողովուրդին հետ։ Ինչպես կրնայ ըլլալ կըսեն, յովսեփ ըլլայ խելացի մարդ, ամէն բան հասկըցօղ, ուրիշ թագաւորներուն խրատ տըվօղ, չիկըրնայ իր ուղածները առաջ տանիլ, իսկ մեծն պետրոս առաջ տանի, միշտ վեր ելլայ. բայց մարդկային խելքը քնաւորութիւնը չիւղ չիւղ կըբաժնըվի. մարդ կայ աղէկ խորհուրդ տըվօղ, մարդ կայ աղէկ գործա դրօղ, ոչափ զանազանութէ կայ մտածելու և ընելու մէջ. յովսեփայ սերը չափն աւելի մեծին պետրոսի համնելու՝ է. կատարինէի՝ և է. ֆեոդրիքոսի փառաց հաւասարելու՝ չափէ դուրս ուզել մը բերին կըսեն անոնց ըրածներուն հետևելու։

Դրօրդ պատճառ չկայ ողղելուն եղավ կըսեն չափն աւելի կարգադրութիւնները եկեղեցականաց վրայ. ան ծերունի սրբազանին խորհուրդին հաւանութէ վիտալը, որ խնդրելեր ինքը ընել ինչպես և ոչափ որ պէտք է. ան ատենը չէ ըսավ յովսեփ, բայց աչքարհ ինչ զարմանալի խաղ տեսավ. որ երբը իր մեռնելու ատենը ինքը յովսեփ աղաչանքի թուղթ գրեց սրբազանին, որ պես մի ինքը հոգայ ֆիանարացոց բանը, ինքը հաշտեցընէ որ ապստամբերէին իրմէ. աս ձանձրալը ուշ եղավ, հաշտութէ պտուղը ինքը չիվայելեց, իր յաջորդը վայելեց։ Պատմութէց մէջ շատ օրինակ ունինք ծերոց հայրապետաց մտիկ չիդնելէն գէշ հետևութիներ եկած, բայց աս օրինակը շատ

մեծ խրատ Թողուց եւսեբ եկօղնէրուն։ Ցորըորդ պատճառ չկրայնղվելուն տաճկին պատերազմին առենը՝ եղավ իր մըղումն աղեկութիւը չիձանչնալը. լավտօնը ամմէն օտար տերութիւք մեծ կըսեպէին, ինքը անանկ չիսեպեց. ծեծ սկսելու առենը անոր խորհուրդը մտիկ չըրավ ուրիշ ըօրապահներուն խորհուրդը մտիկ ըրավ որ անկէց շատ վար էին [1]. ուշ առեն ձանչցաւ լավտօնին մեծ մարդ ըլլալը՝ որ ատեն որ ձախորդութիւը եկէր պատերեր. իրեն հիվանդութիւնավ շատցած էր. աղէկ կըսեն որ՝ հին բարեկամները հին վարպետները մի ձգեր։ Ասայ ինչպէս որ ինքնավ ետքի օրը որ խոստովանեցավ՝ աս բանսավ մէկավ կար-

---

(1) Կըսեն որ տաճկին ծեծին առենը յովսեփ լսաշը զօրապետին խօսքը մտիկ ըրավ. որ լավտօնին խորհուրդը ետ ձգել տալով իր ըսածին կեօրէ կարգաւորել տըվավ ծեծը. որուն համար ըսերեր լավտօն, թէ որ առանկ կարգաւորէք ծեծը՝ տաճկին կրնայ ինչվան վեննային տակը գալ. իսկ եկեղեցականաց վըայի կարգադրութեան մէջ քաւելից վեզիրին մտիկ դրաւ կըսեն։ Ասոր համար վեննայի մէջ պարսաւ պատկեր մը հանեցին. որ հայր յովսեփ քաշված բայց չի գիրկը չունէր. քովնավ մէքայէլ հրեշտակապետը քաշված բայց վիշտ իր ոտքին տակը չունէր. մէքայէլ հրեշտակապետը կըհարցընէ որ հայր յովսեփայ ինչէն է որ աս անգամուն չի գիրկդ չունես, որ յովսեփ կըպատասխանէ, յովսեփ կայսրը քաշէց գրկէս առավ չի, ընդունար ըրավ. (կրօնաւորաց վերցընելը կուզէ հասկըցընել.) որ յովսեփ նավ կըհարցընէ, ինչէն է որ դուն նավ աս անգամուն վիշտը քու ոտքիդ տակը չունես, կըպատասխանէ մէքայէլ հրեշտակապետ, յովսեփ կայսրը քաշէց ա նիկայ առավ իրեն վեզիր ըրավ։

գադրուԹիւներնալ ուրիշները իրեն խրատ տըվերէին. որոնք խելքով չիկրնալով աղեկը գէշը որ նորուԹիւնները կըբերեն, միայն աղեկուԹիւը կըմտմտային. շատ ղօրք ունենալը իրեն մեծ կայսր ըլլալը կըսիրեցընէին. մտածածնին աղեկ՝ անանկէնէ պէտք է՝ի գործ դնել ըսելով բացարձակ հրամանն հանել կուտային, ամէն ընդիմուԹիւները ազգական խօսք կըսեպէին. բայց մտածելն ուրիշ է՝ի գործ դնելը ուրիշ տարբեր բան են իրարմէ: Յովսեփ կայսեր գովելու բանները և պակսուԹիւները մէկիկ մէկիկ անաչառ գրեց Ձենկայեան աննիպալ եպիսկոպոսը իր դամբանական Ճառին մէջ որ հրատ զուրցեց և տպեց 1790:

## Լէոբոլտոս կայսրը:

1790:

Երբոր Յովսեփ կայսեր մեռնելուն լուրը (խապարը) ֆիլոհէնցա հասաւ՝ ուր կընաստէր պետրոս լէոբոլտոս Յովսեփ գօսքանային մեծ դուքսը՝ որովհետև 1765 օգոստոսի 18ին ժառանգ կայսերուԹիւ ան էր եղած՝ հիմա Յովսեփայ յաջորդը եղավ. շուտ մը առաւ ան մականուններները որ աւանդրիոյ տունը ունի. ըսեռվ Ավգուստոս Ճաճաոե, Խաչասոր պօհիայէ կամ լէհէ, ԽրվաԹէ գալմաշիայէ, Ղալվնիայէ, և Խալէհեյիայէ. արշիդուքս աւստրիոյ, էշնան դրանհիլվանիայէ, Հոմա դէօլէ,

Քէանաբայէ, նահռաբէ, կանանօնէայէ, դուքա ղլանէ, Մանդվայէ, պոռապանդէ lio։ Արարի 1 դօսքաշ նայէն ելլալով 12ին հասաւ վէննա. բայց մէկ թագաւոր մը որ այսչափ շատ երկրի շատ ազգի վրայ կ'իշխէ, շատալ ալեկոծուէ պիտոր քաշէ. իրաւ ասանկ ալեկոծեալ գտաւ Լեոբոլտոս ամմէն կայսերութէ երկիրը. որովհետեւ ստորին նահանգները գըլուխ քաշած կուզէին անկախ տէրութիմը ընդալ. օլանտան կամ Ֆիլէմմինկը ասոնց յայտնի չէ՝ բայց տակէն օգնուէ կուտար. Թագաւորազուն կառավարքնալ (որ ստորին նահանգները կըկառավարէին) ապըստամբնէրուն ձեպխանէն ու զինքերնին կըպահէին. ասոնց նայելով ան լեհերնալ որ 1772 կայսեր տակը ընկած էին կալիցիան ու լոտոմիւրիան՝ կուզէին իրենքալ գլուխ քաշել. մանաւանդ էր հանգստացած ան նորութեց համար որ յովսեփ կայսրը ըրեր, ասանկալ պօէմիան. Ֆրանսայէն խառվարարնէրնալ աս ամմէն տեղվանք կըպտըտէին փչելու գրգռելու. որովհետեւ եկեր ատենը՝ որ ոգին խառվուեթե տակնուվրայ պիտոր ըներ եւրոպա սուտ Ղաոռ-ընե անուհով. ինչպէս որ ետեւէ ետեւ պիտոր իմանաս աս գիրքս կարդալով. աս ապըստամբնէրուն քով դիր հիմա ինկիլիզին պըրուշին նաև օլանտային թշնամութիւնը նեմցին դէմ, տանկնալ պատերազմը։

Ասանկ շատ շփոթած տեսաւ երկիրը պետրոս Լեոբոլտոս յովսեփ՝ բայց ինքը չփոթեցաւ. իր հանդարտ բնութիւնը քիչ տեւ-

նի մէջ շտկել սկսաւ բանները [1]. իրաւ յովսեփ կայսեր իր եղբօրը պէս շատ սէր (հաւէս) չունէր նոր նոր բարեկարգութիւն ընելու, բայց իր շահը իր բանը աղէկ գիտէր կառավարել. ինչ տեղէր որ տրտունջ ունէին յովսեփայ ըրած կառավարութեանը վրայ՝ մարդիկ խրկեց ուղածնին կատարեց. աշխարհական ատեանը որ դրված էր եկեղեցական բաներ հոգալու՝ վերցուց. միւսայն քառասնաւ արքեպիսկոպոսին յանձնեց հոգալու. ուրիշ բաներնալ իրաւասութիւն մէջ կամ վերցուց կամ չափաւորեց. ան տուրքը որ գետին ունեցողները ծեծի ատեն կուտային՝ կէսը ինքեցուց. իսկ արհեստաւորները ասանկ տուրքէն բոլորովին խալըցուց. մէկալ տուրքերը որ ըստ ինքեան աւելի էին՝ ջնջեց. բանտարկելոց թեթեւութեան համար բանտին պատուհանները շատցուց որ լոյս և օդ (հաւա) առնեն. շաբաթը իրեք հեղ տաք կերակուր հանել ապսպրեց անոնց. կարճ շղթայով (զինձիլով) կապելը որ թող չէր իտար իրենց ոտվընին շարժելու՝ վերցընել տրվավ. վիճնայի մէջ թագաւորական տեղ կար ուր շահով կամ գրաւ (ըռէհին) առնելով ստակ կուտային. ասանկ տեղը իտ՛՛ կըսվի ||՝ծդէ պէ էէէդա՛. լեոբոլտոս ինչվան 10 ֆիօռինի դրած գըրաւնները ետ տալ տրվավ. ինչվան 50 ֆիօ-

---

(1) Ձիւն ձիհան պագը տէիլտեր, օմմազ զէմանէ գարար,
ֆրսաթը ֆէվթ էյլէմէ էլ վերմիշիքէն բուզլուկեար:

ռին առնուղներուն շահը քիչցընել տրվավ։ ընդհանուր դպրոցերէցը վերցընել խօսք տրվավ որ անչափ կռիւներու պատճառ էր եղած։ ամէն մէկ եպիսկոպոսին թեմին մէջ նորէն շինել խոստացաւ ինչպէս որ էր առաջ։ Ի անքերուն հրաման տրվավ նորընծայ առնել, համալսարաններու մէջ լատին լեզուով դաս տալը նորէն մտուց։ վէնն նայի համալսարանին եկամուտը արտունուքիը նորէն դարձուց։ ուղղափառայ դպրոցատուններէն դուրս հանել բռօգէսդանդ վարպետները։

Ի աղէկ եղանակով կառավարուքիը երկու ամսվան մէջ ձիգոհանքները վերցուց շատ խաղաղուց։ հանդիսով պսակել տրվավ գինքը արշիդուքս աւսդրիոյ։ խօսք տրվավ մաճառներուն պօհեմացիներուն առանձին կեօրէ հոն երթալ անոնց թագաւոր պսակվիլ։ մաճառներուն մէջի եղած տարաձայնուքիը լրջնոց յանձնեց քննելու շրջակելու։ լեհի ժողովքին գանկտեցաւ կալլիցիայի ու լոտօմիւրիայի համար, ուր չէր մարած ապստամբուքիե ոգին։ որովհետև լեհի բալադիններըը անդադար գրուածներ կըսփռէին հոն աս բանիս համար։ շրջաբերական թուղթմընալ սփռեց ծանուցանելով որ ինքը պատրաստ է լսելու շակելու ամէն որ գանկատ մը ունենայ։ մանաւոր ժողովները խափանեց որ լեհերը աս դիս ան դին կրնկին։ ասոնց գլխաւորներէն ոմանք բռնել ու բերդերը խրկել տրվավ։ անանկով շակեց անոնց ապստամբուքիը։

Լ Էոբոլտոս չէր յոքներ զբաղմունքէն երկան առեն սորված ըլլալով, ու առողջ բերնաթիւն ունենալով. իրեն խելացի անտեսութիւը շատ ըստակ դիզած ուներ կըսէին. յովսեփ կայսրնալ 70 միլիոն ֆիւռինի չափ նաղտ ըստակ թողուցած էր մեռնելէն ետև՝ որ գրեթէ մէկ տարվան եկամուտն էր. ասանկ ըստակ կըպահէր յովսեփ չանկարծ պէտք ըլլալու առենին համար. Էոբոլտոս քիչ մը աս ըստակներով [1] քիչմընալ խելացի կարգաւորութիւը ամմէն խառնվռնիքը փարատեց։

---

(1) Աս Էոբոլտոսին ըրածը չէր նոյպէս ինչ որ կըսէ ան պառկեան պոռըճվածը։

Տիւնեատէ տօսթ պուլունմազ ինսանէ ագձէսիզ,
աշնալըգ հիչ էյլէմէզ ինսանէ պիր ձան ագձէսիզ։
Թալիպ օլան պիր չէյէ քիմ իչթիեաճըն եօզ ևքէն՝
վիւզերալեր պիւէ վերմէզ սանա ֆէրման ագձէսիզ։
Էօյլէ պուլսուս պու ձիհանի էօլսիւյիւն վագըթ պիւէ՝
բուհուն իչէն օգումազլար սանա գուբան ագձէսիզ։
Էյ լիսան, քիմսէյէ տէմ ան հալիմ պուտուր պէնիմ.
հէր նէ իսթէրսէն, վերիր օլ զանի սուլտան ագձէսիզ։

Բայց սա ըսածներէն առէւի ճշմարիտ պոռըճվածը հետևեալ խօսքն է.

Նէ պահթլու օլ քիչի քիմ տայիմ խուտայէ համ էսէ։
կէչինէ սուզգան կիսպի աիւնեատէ հէր ուէմ ագձէսիզ։

1790։

Պրուսիան ու տաճիկը մեկ դաշնադրութիւն մը ըրին Պարոավոր և Պարոապահ. այսինքն՝ թէ որ մեկերնին պատերազմ բանալու ըլլայ ուրիշ տերութեն մը դէմ՝ երկուքնալ մեկ տեղ բանան. թէ որ ուրիշ տերութեն մը իրենց մեկին վրայ պատերազմ բանալու ըլլայ՝ երկուքնալ մեկզմեկ պաշտպանեն պահեն. պրուսիը խօսքալ տըվավ որ չվհտնալ լեհնալ աս բանիս մասնակից ընե. սկսաւ լեհին հետ բանը եփել. բայց պատշաճ սեպեցին ան ատենը կախ թողուլ՝ չըլլայ որ մոսկովը դժարցընեն ոտք հանեն։ Պրուսիը պատրաստըված էր ինքնալ պատերազմ ելլալու թէ որ նեմցին ու մոսկովը հաշտութեն չընեն ետ դարձընելով տաճկին առած երկիրները դոնե ըստ մեծի մասին. իր զօրքը չորս բանակ բաժնըված նեմցկին դէմ կեցուցեր էր, բայց նեմցկնալ իր զօրքը կեցուցած էր պօհեմիայի մօռավիայի շլեզիայի ու լեհաստանին դիերը. մոսկովնալ զօրք խրկեր էր լիվոնիային հոդոնիային նաև ձերմակ ռուսսիային դին. ռիկան ու տճնապուրկը լեցուցած էր ձեպ.

խանեով։

Ըսանկ ոտքի վրայ ըլլալով իրեք եւրոպայի տէրուն՝ իրարու հետ պիտոր խառնըվելին՝ թէ որ ֆրանսայեն դիայեն ալ աւելի մեծ

քան մը չէլլար, որ ամէնուն առ մտած-
մունքը մէկ դի Թողուլ տըվավ։ Լոթոլ-
տոս արդէն պատրաստ էր Հաշտութեի ընե-
լու ասանկալ սուլդան սէլիմը՝ բայց երբոր
ասոր վրայ կըմտածեր խաղաղասէր Լոթոլ-
տոս՝ իր մեծ զօրագլուխը լավտօն յուլիսի
6 հիվընտաւ միւարգելութը. որուն վրայ
տաքութիւն գալով ամօյն 15 մեռաւ 7/4
տարվան, որ մեծ յաւ տըվավ Լոթոլտոսի,
որովհետև յովսեփ կայսեր պէս ինքնալ քա-
յարձակ գլուխ էր դրած լավտօնը ամէնէն
զօրացը վրայ. անոր էր յանձնած իր տե-
ղութե պաշտպանութիւնը, որուն հետալ
միշտ կըխորհրդակցեր։ Վարմինը փոխադ-
րեցին իրեն գերեզմանին մէջը դրին, որ
երկու տարի առաջ ինքը շինել տըվեր էր
իր երկրին մէջ Հատեռստօռֆ ըսված տե-
ղը. գերեզմանին վրայ ապսպրեր էր միայն
իր անունը գրել Հէռնէոդոս Կէրմէն, պա-
տմ։ ալծոն երկրէն Վրայ. տակնալ աս բա-
րոյական սկիզբը։ Յիշատակ մահուս, փրկեա
ինձ գերեզման։ Ա՛ս քալ զօրագլուխը ե-
ղավ մէկ յուշանիք մը պատերազմի մէջ, որ
իր ամէնն գործքին մէջ քաջագործութիը
ու խելացիութիը միշտ մէկ տեղ ընկերա-
կուց. անանկ խելք մը ուներ որ՝ գիտես
թէ առաջուցմէ կիմանար ինչպէս պիտոր
հետևի պատերազմը անոր կէօրէ իրեն զօր-
քը կըկարգաւորեր. անանկալ արիութիւն
ուներ որ սկսելէն ետև ամենևին վախնալ
չուներ, առաջ կըտաներ իր սկսածը. ա-
նանկ ձարպիկութի մը որ ամէնը կըզար-

մացընկր . եւգինեոս իշխանին ետեւ ասանկ վարպետ զօրագլուխ չէր եկած եւրոպայի մէջ . իր թշնամիներուն ներհակութիւնը տեսնալով սիրտը չէր կոտրեր , վրէժ առնելու եռանդն չէր խնար . իրեն ծեծկըվիլը է . ֆեռերիքոսի պրուշի թագաւորին հետ ( ուսկից չորս տարուով պզտիկ էր ) եղաւ իբր մէկ դպրատուն մը՝ ուսկից շատ արհեստ սորվեցան ամէնն եւրոպային երեւելի զօրապետները : Ծնած էր աղքատութէ 1716 Պօծէն տեղը լիվնիայի մէջ որ մոսկովին տակն է . պզտիկուց զինուորութէ սեր ունենալով սորված էր ան ամէնն ուսմունքը որ զինուորութէ պէտք են . աւելի պատմագիրք շատ կըկարդար . բօլիպիոս , կեսարոս , մընդեքուքօլի , եւգինեոս իշխանին վարքը ձեռքէ չէր ձգեր : Ուղղափառութիւնը ետքէն ընդունած ըլլալով բարի ուղղափառի պէսալ ապրեցաւ . միշտ հաւատարմութէ պարզսրտութէ ծառայեց նեմցէն . զօրաց հրամմելու առեննալ միշտ սեր ու հոգ կըյրցլնէր ամէնն մէկ զինուորաց վրայ . անով զինուորաց սիրտը իրեն կըքաշէր , հեշտ կընէր ( կըխօլայցընէր ) իրեն յաղթութիւնը . էր սիրեր ամենևին նենգութէ , ստութէ , և ոչ արծաթասիրութէ . մեռած առենը քովէն շատ բան մը չելավ , անոր համար կայսրը իր որբեվարի կնկանը 4 հազար ֆիօռէն եկամուտ կապեց . 12 հազար եալտըզալ տրվավ որ կարենայ ծախուս առնել մահրիամ Թերեզինային կարգին նշանը ծանր քարերով զարդարված , որ է . յովսեփ

կայսրը իր կուրծքին հանելով լավագնին պարգևները. ասանկալ կնկանը ձեռքը Թուղուց լեոբոլտոս նաև եկամուտը ան կարգին՝ որուն իր երկիր լավագնի Ա՝ Եծ խաչանչէր էր։ Լավագնին տեղը գրավ լսուչի մահեչալը՝ որ տասն զօրագլխին տակը սորված ըլլալով աղեկ գիտեր պրուշին գեմ կենալը. քօղուսկ իշխանը Թէպէտ մեծ անուն էր վաստրկած, բայց պրուշին հետ պատերազմ չէր մտած։

Ա՝ս առենները պրուշին սիրտնալ գնպ՝ի հաշտութէ վրայ պատկած ըլլալով՝ կայսեր հետ Թղթակցիլ սկսաւ. երկուքնալ խօսք դրին ասոր վրայ խօսակցութէ (միւքեալէմ) ընելու ռէյչէմպախ տեղը որ պրուշին շէզվայրն մէջն է, հոն գալով ինկիլիզին ու ֆիլէմէնկին երեսփոխանները հաշտութէ նախագուռը պատրաստեն, որ եաքը լմնցընեն տաճկին սահմանին մէջ խօսելով պուքռէչ կամ ուրիշ տեղ։ Լեոբոլտոս երբոր իրեն Թախտնստիլը գրեց կատարինեի մօտ կովի Թագուհիին՝ հասկցուց Թէ ուրչափ հարկաւոր է իրեն հաշտութէ ընելը. կատարինէն իրեն կամքին Թողուց հաշտութիւնը, բայց ես ըսավ ծեծը կըշարունակեմ մինչեւ որ մնծի համար շահաւոր հաշտութէ մը տեսնամ։ Ռէյչէմպախ եղած խօսակցութէները երկան քշեց, մինչու որ լեհին վրայալ խօսքը խառնըվելով՝ պրուշը տանձքան ու Թօռն կուզեր, որ լեհին կէն. լեոբոլտոս ան դիւրուն վրայ առնելին փոփոխութէ մը ըլլալ չէր ուզեր. սկիզնտ եաքը պարոն

լուսինը վճռնա խրկըվեցաւ պրուշի դիացին քերնով խօրաթելու կայսեր հետ՝ թէ լեհին տեղ մը չեմ ուզեր, միայն թէ կայսրնալ ինչ երկիր որ առերէ դուռնային սավայէն և ուննա գետէն ան դին՝ ամմէննալ տաձկին դարձընէ. խոստանալով որ ասոր փոխարէն ինքնալ աշխատի աղէկ սահման մը կտրելու համար խրվաթլըխի դիացին. և իր հաւանութենալ տայ ղինքը հռոմայեցոց կայսր ընտրելու համար՝ որ մօտիկներս պիտոր ըլլար։ Լեոբոլտոս ընդունեցաւ առթեւթեալ եվելցընելով որ պրուշը ջանայ ատորին նահանգները առջինին պէս նեմցեկին հնազանդեցընելու, որոնց արդէն խոստացեր լեոբոլտոս իրենց ամմէն ըրած. ներուն ներում տալ, առջի ունեցած արտունութենին իրենց դարձընել, բայց անոնք չէին դարձած, իրենց մտքին վրայ առնուր կեցած էին։

Յսանկով աս երկու տէրութիւը յունիսի 27 նախադուռն դաշնադրութեան ըրին հինգ թէուէ վրայօք. խօսք կապելով որ պրուշը ամենևին աչք չունենայ մեծնալու նոր երկիր մը առնելով. նեմցինալ ետ դարձընէ տաձկին առած ամմէն գետիններըը տաձկին խրվաթլըխէն զատ որ ինչվան ուննա գետը կերթայ. ուրնոր օրշովա բերդէն զատ որ դինվարին պանննադին մէջն է. ասոնց վրայ արդէն ծեծը բացվելէն առաջ խօսք կապված էր սուլդան Համիտին ու յովսեփ կայսեր մէջ։ Ինկիլիզն ու Փիլէմինկը ընդունեցան ասոնք իբր միջնորդ տէրութիւներ.

Երբոր ասոնք Հաստատեցին՝ օրինակը սուլ-
դան սելիմին խրկեցին որ անոնք Հաստատէ .
ստանպօլ մենծերէն ոմանք չէին ուզեր ըն-
դունիլ ասոր Համար որ՝ պրուշը խօսք տըվե-
րեր ամէն կողմնացուցած երկիրները տաճ-
կին դարձընել . իսկ աս թէուեց մէջը խը-
րըմ դարձընելու խօսք չիկար . ոմանքալ
ասոր Համար չէին ուզեր ընդունիլ որ՝ նեմ-
ցիին ազատ նաւարկութիւնը տաճկին ծովե-
րուն ու գետերուն մէջ՝ յովսեփ կայսրը մու-
կովին հետ մէկ տեղ իբր բռնութիւն (զօ-
ւով) առեր զուռնին . բայց սուլդան
սելիմը աս բաներս չինայելով ընդունեցաւ
Հաշտութիւն խօսքերը : Պրուշը ուզեց մու-
կոշիալ Հաշտեցընել, բայց անիկայ պատաս-
խան տըվաւ : Այս առջինը չըլլալով տաճ-
կին վրայ ծեծ բանալու՝ կըՀաշտըվին թէ
որ Հաշտութիւնը պատուաւոր ըլլայ , բայց
առանց մէկի մը միջնորդելու , առանց խօսք
բանալու խըրըմը և օզուն ետ դարձընելու
Համար :

Ո–ըէչ ծեծիըվէնին , լէոբոլտոսը կայսր պատէնին
պօրին նահանգները շինէնին .

1790–1791 :

Երբոր մէկ դին Հաշտըվելու վրայ կը-
խօրաթէին , մէկալ դին նեմցին ու տաճկ-
կը կրկուէին . մայիսի մէջ տաճկին առին
նոր օրշօվան որ զուռնայի մէջ կղզիի մը վրայ
է . յուլիսի 20 յարձակելով առին չեդդի-

նը խրլաթլըխի մէջ. բայց եէրկէօյին տա-
կը կոտրըվեցան նեմչիները. ասիկայ ըլլա-
լով ամուր քաղաք մը ուլահին ծայրը դու-
նային վրայ ուսկից կերթըցվի նիկէպօլի որ
պուղտարին բալլիքն է, Թուրն կոմսը 15
հազար նեմչեով պաշարեց. բայց տաճիկը
բազմութիւ վրայ հասնելով հալածեց անի-
կայ 1500 նեմչ կոտրելով ու 10 Թօփ առ-
նելով, որոնց վրայ հասան քօպուրկ ու սու-
վարօֆ զօրապետները, ուրիշ երկու նեմ-
չեի զօրապետ առին քուսմիր ու քալաֆաթ
տեղվանքը որ վիտինին դիմացն է: Պեշտ.
սկիզբը ծեծկըվիլը դադրեցուցին ինը ամ-
սըվան զինադուլ (միւթարէքէ) ըրին որ-
պէս զի հաշտութիւնը վրայ խօսին շիշԹօվ,
որ դունայի վրայ գեղ մընէ. 20 մղոնի չափ
պուքուէշէն հեռու. նեմչեի դիւացին հոն
եկօղը եղավ պարոն հերպերդ որ ստանսլօլ
դեսպան էր, նաև էսդէրազի կոմսը՝ որ մա-
ճառները կայսերմէ ուզեցին հոն խրկելու
իրենց դիւացին, որովհետև մաճառի սահ-
մանակցուէ վրայալ խօսք պիտոր բացվեր.
ասանկալ հոն եկան միջնորդ եղօղ տէրու-
Թեց մարդիկը պրուշէն ինկիլիզին ու ֆիլե-
մէնկին, ինչպէս որ 1698 եղերը քառլօ-
վից:

Ապրիլ սեպտ. ամսոյն 6 պետրոս լէոբոլտոս
յովսեփ պօհմիայի վրայ Թագաւոր պսակ-
վեցաւ. իսկ 30. կայսր ընտրըվեցաւ ամ-
մէն կայսրընտիրներուն հաւանութեամբ որ
ֆռանքֆօռդ ժողվըված էին. Հոկտ. 9
կայսր պսակվեցաւ. ժողովին առջին եր-

դուս ընելու առեն՝ աս բանս ավելցընե-
լով երդվընցաւ սովորութէ դուրս իբրև
կայսր Հռոմէական . թէ գերմանիայի մէջ
եղած նուիրակութիւնները միան ինչպէս որ
ըրերը ը , յոլեսի կայսր գերմանիայի մետ-
բասլօնիտներուն խրատելովը , ինչվան որ
ռադիսպօնայի ժողովը ասոր վրայ բան մը
որոշէ . և թէ եկեղեցական իշխանութիւնը
ու ժառանգութիւնը եպիսկոպոսներէն տըր-
վին . ասկից ետքնալ եկեղեցական գատ
(տավայի) մէջ բողոքում չըլլայ հռոմ , այլ
իրենց մետրապօլիտներուն Թող բողոքեն :
Այս բանիս դէմ ինչ գանկատներ որ գրեց
քաբռառա նուիրակը՝ թէ ասով հռոմայու
աթոռոյն իրաւունքը գետինը կիյնար , թէ-
պէտ կայսրընտիրները ընդունեցան , բայց
պտուղ մը չեղավ : Ինչ մը անցնելէն ետև
նոյեմբ . 16 մաձառի խրվաթի տալմացիայի
վրայ Թագաւոր պսակվեցաւ բրէզլաւրկ
քաղաքը . առաջուցմէ խոստացերնր լէո-
բոլտոս մաձառներուն թէ ինչպէս եր մա-
րիամ Թերեզինայի իր մորը ատենը անանկ
պահէ ամէնն բան , փոփոխութէ մը չընէ ,
անանկով սրտերնին շահերեր խռովութիւը
խաղաղերը : Պսակման ատենը ներկայ
եին ՟ի . Ֆերտինանտոս նաբօլիին Թագա-
ւորը ու Թագուհին քառօլինա անունով որ
լէոբոլտոսին քոյրն եր . ասոնց գալուն միտ-
քը աս եր որ լինցընել տան երկու հարսնի-
քը . իրենց աղջիկը մարիամ Թերեզինան
տան Ֆրանչիսկոս արշիդքսին ( որ լէոբոլ-
տոսին զաւակն է և հիմակվան կայսր ) , իսկ

լուիզա ամալիա աղջիկնին տան Ֆ. Ֆերտի-
նանտոսի արշիդուքսին, որ լեոբոլտոսի իր
հօրը ետևէն մեծ դուքս էր եղած դօսքա-
նայի վրայ։

Այս ատենները մավրօ եանի ուլահ պէյը
դուրս ընկած ըլլալով ուլահէն որ նեմցէին
ձեռքն էր՝ աս դիս ան դին կըպտըտեր ու-
լահին քովընտիքը իր զօրքով. բայց անհան-
դարտ մարդ ըլլալով ու անխոհեմ՝ ուլահի
հարուստներուն մեծերուն Թուղթ խրկեց
որ իրեն ապրուստ ու ըստակ տան. ասոնք
իրմէ ձանձրացած ըլլալով՝ քօպուռիկ իշխա-
նին ձեռքը տըվին ասոր Թուղթերը՝ որ իր
բանակովը պուքրէշ նստած էր. քօպուռիկ
նեմցէին զօրապետը խիստ սրդողելով ասոր
ըրած յանդգնութեը վրայ՝ վինագուլի ատեն
տուրքը պահանջել մէկ երկրէ մը որ ալ ի-
րեն տակը չէր, աս Թուղթերը իրեն հազա-
րապետի մը ձեռքով վեզիրին խրկեց, խընդ-
րելով որ արժանաւոր պատիժը տայ. վե-
զիրնալ սուլդան սելիմին գրեց. անոր հրամ-
մելովը պատիժը աս եղավ որ՝ վեզիրը իր քո-
վը կանչելով մավրօ եանին՝ գլուխը կտրեց.
անանկով վերցըվեցաւ աս մարդս որ ատե-
լի էր եղած Թէ հռոմէներուն և Թէ տաճ
կընէրուն. իսկ պուղտանին պէյը խիսխլան
դին գերի էր ընկած նեմցէին ձեռքը։

Վանք ստորին նահանգներուն վրայ պատ-
մելու. երբոր տաճկին պատերազմը դադ-
րած էր՝ լեոբոլտոս 30 հազարի չափ իր զօր-
քը եվեցցուցեր ստորին նահանգներուն
մէջ, որոնք ամմէնը 60 հազարի չափ ժող-

վըվեցան լուքսէմպուրկին դէմ. յունիսի 10 ֆալմաքը առին։ Պատամբներուն գլխաւորները որ պրուսսել կընստէին՝ Թուղթ մը հանեցին իրենց ժողովրդեան ցիվախնալ. Թէև ըսին յոյս մը չունենանք ինկիլիզին պրուշէն ու ֆիլէմէնկէն որոնք խօսք տըվերէին մեզ պաշտպանելու, բայց նեմցէի մէջ եղած իշխաններէն՝ ֆրանսայի մէջ եղած ժողովքէն յոյս մեծ ունինք որ մեզ պիտոր պաշտպանեն. բայց ասոր դէմը տեսան որ նեմցին լիմպուրկ գաւառը մնաւ, պրապանդայոյ զօրքը կոտրեց հալածեց. ասոնք սածնին պէս իրենց գլխաւորները վանտէնօթ վանէվըլէն ու լաբին կինը՝ որ խօսք տըվերէին ինչվան եաքի կաթիլը արեան Թափելու ժողովուրդը չիձգելու, գաղտուկ ֆիլէմէնկ կամ օլանտա փախան ամէնն հարստութիւ որ ժողվերէին, ժողովուրդը բացը մնայ, Չարէրնին հատնելով պրուսսել քաղաքը դեկտ. 2 դուռը բացաւ նեմցիին քիչվոր զօրացը որ 20 ձիաւոր էին, անոնց ետևէն ուրիշ զօրքալ մնան. երկրորդ իք առջինին պէս հնազանդութիւ ցըցուցին. կայսեր դիացինալ ամէնն անցած գացած բանէրուն ներում տըվին բաց ի վերըյիչեալ գլխաւորներէն։ Դեկտ. 10 հայտ քաղաքը ժողվըվելով նեմցիին ֆիլէմէնկին պրուշին ինկիլիզին երեսփոխանները Թուղթ ըրին որ իշխանները առջի արտուներնին Թողուն, պաշտպան ըլլալով աս բանիս երեք տէրութիւը։ Յետոյ ամէնն բան եղավ ինչպէս որ էր մարիամ Թերե-

զինային ատենը • 1791 մայիսի 24 լեոբոլ-
տոս կայսրը ընդունվեցաւ դուքս պրասան-
դի լուքսեմպուրկի և լիմպուրկի , կոմս
ֆիանտրայի հաննօնիայի և նամուրի , տէր
մալինեսի ռուռէմոնտի • մաքեզ անվեր-
սայի : Ծերազուն կառավարները քրիսդի-
նա արշիդքսուհին ու ալպերդոս դուքսը նո-
րին տեղերնին դարձան , ընդհանուր կա-
ռավար եղան ստորինհանգներուն վրայ •
քիչ մը ետև հոն եկավ նաև կարոլոս ար-
շիդուքսը երրորդ զաւակը մարիամ Թերե-
զինայի՝ որ անոնց ետևէն ինքը պիտոր ըլ-
լար կառավար • իսկ մդդերինք կոմսը որ
խելացի ու քարի մարդմընէր՝ եղավ երեա
փոխան :

## Մոսկովին հետ ծեծկըվելին •

1789-1790 :

Ծեպէտ նեմցէին հետ դադրած էր ծե-
ծը՝ բայց մոսկովին հետ չէր դադրած • քա-
նի մը հոգի պզտիկ թաթարին մէջ սիրը-
ված կըզրգռէին մոսկովին տակէն ելլալ՝
նորէն տաճկին տակը մտնալ • աս ձայներս
շատ մարդ զրգռեցին թաթարներէն , նո-
րէն կըմտածէին ապստամբիլ • բայց իրենց
մտածմունքը պատճառ եղավ մոսկովը միա-
քը դրավ ամէն մէջկինները ուքռանիա տա-
նելու հոն նստեցընելու ուր տեղ որ ղա-
զախները կըննստէին , որոնց վրայ Ֆաթման
այսինքն կառավար դրեր բօդեմքին իշ-

խանը. ուքռանիային զալախնեըինալ թե-
րել խըրըմ նատեցընել մոռածէց, երկու
ամըվան մէջ բէդրօպուրկէն ասոր վէհուը
ելավ, աս փոխադրութիը եղավ։
Պուպան Թաթարին մէջնալ իւլամէնք պա-
թալ անունով մէյմը շատ զօրացաւ. 16
հազարի չափ զօրքով աս դիս ան դին կը-
զարնեը մոսկովին զալմուխնեըը ու էրքնա-
նեը կըկոտրեը. ասիկայ անաբայէն ելլա-
լով երբոր երկրորդ անգամ կուզեը քու-
պան վաղել, մոսկովին մէկ զօրապետը վըայ
հասաւ գետէն անցնելու ատենը, երկու
ժամ հոն ճեճկըվելով կոտրեց, զինքնալ
գերի տարաւ. մոսկովին ուրիշ զօրքնալ
կովկաս լեռան դիերը կըյարձըկէկին։ Ա և
ծովին մէջնալ կռիւ կըլլար. տաձկին նա-
ւատորմիղը եկավ ինչվան Թամանի. ունեը
13 նաւ խափախըը. 10 ֆռխաթա. յունէ-
սի մէջ մոսկովին նաւատորմիղնալ դուրս
ելավ սեպաստուպօլսէն. յուլիսի 19 տաձ-
կին նաւերը եէնի գալէին առջին երևցան.
մոսկովին նաւերնալ ասոր դէմը ելլալով
20ին սկսան ճեճկըվիլ որ քշեց 17 ժամ.
կռիւը սաստիկ ըլլալով՝ մոսկովին 180 հո-
գի մեռան հաղարապետ և զինուոր. 150
հոգի խոցվեցան. տաձկին նաւերը սինապ
քաշվեցան։
Յամաքին վըայ բօզգէնքին իշխանը կըմտա-
ծեը պէնտեր առնելու, անոր համար ամ-
մէն զալախնեըու ապսպրեըեը ան դիերը
քալելու, բայց ան ատենը դուռը մոսկովին
դեսպանը եէտի խուլկէն հանելով աղատ

Թողուցեր եր · եաշալ քանի մը հոգի խրկե-
ր եր Հաշտութե՛ն նախադուռը պատրաստե-
լու , կամ ղինադուլ (միւթարէք) մը ընե-
լու · Հազիւ սկսաւ խօսակցութե՛ն՝ մէյմը-
նալ շուտ մը ցրուեցան , ինչու որ տաճկին
կառաջարկեր խրրըմ եա դարձընելու ու-
րիշ երկիր մը անոր տեղը մոսկովին տալով
և կամ ըսարկով ծախսու առնելով , իսկ աս
առաջարկութե՛ն խիստ դէմ կուգար մոս-
կովին : Ընդհանուր ասանկ մերժեց մոսկովը՝ տա-
ճկին խիստ գանկատեցաւ եւրոպային ուրիշ
տէրութե՛ց առջին մոսկովին խստութե՛ան
վրայ , տաճկին դաշնակից տէրութե՛ներնալ
կըգանկատէին , տեղ տեղ դրուածներ Հա-
նել կուտային եւրոպան արթնցընելու Հա-
մար · Թէ որ ասանկ Թողուինք կըսէին՝ եւ-
րոպայի Թագաւորաց Հաւասարակշռութե՛ն
պիտոր կորսըվի , մոսկովը պիտոր մեծնայ :
Ընդ ձայներս խափանելու Համար մոսկովը
1790 յունիսի 8 · բէգլօպուրկէն Թուղթ
մը խրկել տըվաւ օսմանեան կոմսին ձեռ-
քովը իր ամբէն դեսպաններուն որ աս խօս-
քերուս վրայ կըպատրաստի : " Ընդ ծեծս ես չի-
" գացի այլ տաճկին , հիմա որ իմ դես-
" պանս ազատված կըտեսնամ եէտի խու-
" լէին քանտէն՝ պատրաստ եմ անանկ Հաշ-
" տութե՛ն ընդունելու որ պատուաւոր ըլ-
" լայ · մէյմը կուզեմ նաւարկութե՛ն տնես-
" Թէր կամ Թուրլա դետին վրայ իմին ու
" նեմգիէն նաւերուն Համար , մէյմընալ որ
" օգուին բերդը իր գաւառով բողդոմային
" իմ ձեռքս պիտոր մնայ · իսկ շվէտին Հա-

» մաը կուզեմ որ անխախտ պահվի 1772
» եղած իրենց սահմանադրութիւնը . Թագա-
» ւորինն չիկրնայ մէկի մը դէմ ծեծ բա-
» նալ ինչպէս որ չորս դասք իշխանութիւն
» միաբան իրենց հաւանութենին չիտան ։
» Ես իմ միտքս յայտնելով ամէնն տերու-
» թեանց հասկըցուցեր որ չհաւատան ան
» սուտ ձայներուն , որ կազմութեանցնուն մէ-
» ջը չարութիւ վճարք տալով գրել կուտան ։
» Այս չեմ փախչիր անանկ հաշտութիւ որ
» իմ պատուոյս և շահուս չարմար ըլլայ ,
» չեմալ ուզեր որ մէկը միջնորդ ըլլայ . իմ
» միտքս ան չէ որ օրէնսդիր ըլլամ թշնա-
» միս , բայց չեմալ ուզեր որ մէկը օրէնս-
» դիր ըլլայ իմ վրայ » ։

Շ ՀՒՒՈՒՆ ՀԵՈ ԾԵԾԻԼՀԵՆԻՆ .

1790 ։

Պուսդաւոս Ֆ . շվետին Թագաւորը իրեն դէն վաստրկած ըլլալով երկու դաս իշխա-նաւորներու՝ մէյմը եկեղեցականքը մէյմը-նալ քաղքցիները , մեծերը չիկրցան առ-ջինին պէս ամէնն բանի մէջ խառնըվիլ , ու-զածնին պէս կարգաւորել , այլ ինքը կուս-դաւոս ուզածին պէս կարգաւորեց . իրեն ամէնն բանէն աւելի ըստակ պէտք էր , հի-մա ուսկից որ ուզեց՝ աս դիւէն ան դիւէն ի-րեն տրվին ։ Այսելով իր պզտիկութիւնը՝ հնարք կըփնտռէր գտնալու՝ իր մեծ թշնա-միին վրայ յաղթելու ինչպէս որ խոստացեր-

էր իր դաշնակցեալ տէրութեցը. մեա-
ծեց որ ինչվան սրտոտի պէս յանդուգն բա-
ներու ձեռք չկարնէ՝ չիկրնայ պիտոր գը-
լուխ ելլալ, մարտին ետքերը ինքը ըսդօքօլ-
մէն ելլալով գնաց ուր էր իր բանակը, միա-
քը դրաւ մոսկովին նաւերը դուրս չելած
ինքը առջինը ըլլայ անոնց վրայ վազել. ա-
նոր համար հազիւ որ սառոյցները (պուզե-
րը) հալիլ սկսան՝ որ պալտիկ ծովին մէջը
գրեթէ հինգ ամիս կըքշէ, Թագաւորին եղ-
բարը սուտեռմանիայէն դուքսը իր ամբէն
նաւերով քառըքռօնայէն դուրս ելավ. ուշ-
վեցել եկավ որ յանկարծ զարնէ հոն գտնը-
ված մոսկովին 11 նաւերը: Ը վեհին նա-
ւերը աս տարի չատնալով 35 նաւ եղերկէն
խոշորներէն, 5 ֆռեխաթա, 8 պզտիկ նաւ.
ասոնք ամբէնը մէկ տեղ կըտանէին 2320
թօփ, իբր 60 հազար մարդ, որը զինուոր
որբ նաւավար, թող տուր ձիաւոր գունդե-
րը որ կըտանէին ֆինլանտիայէն ցամաքը
հանելու. ասկից զատ պզտիկ նաւատոր-
միղմընալ կար Թագաւորին իր անձին հա-
մար:

Երբոր շվեհին նաւերը յանկարծ մոսկովին
վրայ հասնելով սկսան կրակ ընել խու-
պարա ու տաքցուցած գնտակներ վրանին
թափելով՝ մոսկովին նաւերը անանկ կար-
գով մը շարվեր կեցեր էին ցամաքի մարտ-
կոցներուն (Թապեաֆներուն) քով՝ որ ա-
նոնց հետ մէկ տեղ աղեկ դէմ դրին շվե-
հին. պատճառն որ մոսկովիները առաջուցմէ
շուշորդ մը առեր էին շվեհին յանկարծ վրայ

վազելուն, թէպէտ և շվետին թագաւորը խիստ գաղտուկ կըմտածէր ամմին բան։ Շվետները տեսնալով խաղը գնտակնե-ըուն բազմութիւը որ իրեք դիացին իրենց վրայ կըթափէին՝ ծովուընալ սաստիկ ալե-կոծութիւը՝ ետ քաշվեցան. որոնց 3 նաւերը նին 64 թօփ քաշող՝ ալեկոծութէն ցամա-քը նստելով մոսկովին ձեռքը ընկան. մէկ նաւերնինալ 60 թօփ քաշող Ճեպխանէն բռնկելով երկինքը ելավ. աս միայն կրցան ընել շվետները որ լիվոնիայի մէջ ուՃՃերը նէջ տեղը զօրք հանեցին, հոն գտնըված մոսկովին քիչվոր զօրքը նեղը իյնալով ձեռ-քոշին երեցին իրենց համբարները. շվե-տը հոն եղած գեղացիներէն 4 հազար ռիա-լի տուրք առավ. 49 թօփերնին գամեց. ինչալ որ գտաւ Ճեպխանէ հագուստ տախ-տակ՝ ամմինը իրեն հետ տարաւ։

Վ.էելի յաջող եղավ բուն շվետի թագաւո-րին ծեծկըվիլը, որ մայիսի 14 վերոյիշեալ ծեծին հետևեալ օրը իրեն պղտիկ նաւէ-րով ֆրիտերիսքամ բերդին առջին երևե-ցաւ. հոն եղած մոսկովին պղտիկ նաւերը անպատրաստ կեցած կըսպասէին իրենց նա-ւավարներուն որ նաստս իշխանը պիտոր բե-րեր, չէին կարծեր շվետին ասանկ յան-կարծ վրայ հասնելուն. շվետին թագաւո-րը կուսդավոս հոն հասնելով մոսկովին մէկ ֆռախաթան զարկաւ կողմնցուց երկու ու-րիշալ անկեց պղտիկ. 45 շալուբա. 47 պըզ-տիկ նաւերալ իրենց պաշար տանող ամմին-նալ զարկաւ։ Վ.ս յաղթուես ընելէն ետև

կուսդավոս որ ծեծի ատեն ամէնն դին կը-
վազէր , վաղուան օրը ուղեց բերդին վրայ
վազել, բայց իր քիվերուներէն նայելով եա
կեցաւ . քանի մը նաւ խրկեց մոսկովին ձեա-
ցած նաւերուն հետ ծեծկըվելու՝ որ մինակ
դին կեցած էին , բայց աստիճ ատեն պտնա-
լով զիրենք ուժովցնելու զարկին շվէտը .
անոր համար կուսդավոս ծովը թողուց ցա-
մաքի վրայ վազեց ծեծկըվիլ ֆինլանտիա
գաւառը ուր տեղ անդադար կըլլար պա-
տերազմ : Սկիզբ եաքը գրեթէ ամէն օր
իրարու հետ կըզարնըվէին ցամաքի ու ծո-
վու վրայ . շվետին զօրապետը պարոն առ-
մֆելտ երկան ատեն կռուելով ինկելըս-
դուօմ մոսկով զօրապետին հետ կոտրըվե-
ցաւ 800 հոգիէն աւելի կորսնցնելով . կըռ-
ուին ատենը կուսդավոսալ հոն հասաւ որ
հասարակ զինուորի մը պէս ինքնալ կռուե-
լով աչ թևը ձգմըվեցաւ . իր թիկնապահ
նալ վաղվիյոդեռ կոմսը չարաչար խոցվե-
ցաւ , բայց մայիսի 26 լսելով որ՝ իր նաւա-
տորմիղը հօկլանտ անցնելով վիպուրկ ծոցը
մտերէր , ուրախութենէն ցամաքին կռիւը
ձգելով յունիսի 2 մտաւ իր պզտիկ նաւա-
տորմիղը , պիօռք տեղէն ձամփայ ելավ վե-
րոյիշեալ նաւերուն քովը հասնելու . իսկ
մոսկովին նաւերը նոր ելած էին քռօնշդա-
տէն , որ 17 նաւ էին երկու խափխովի 7
ֆռխաթա :

Երկու տերուէց նաւերը ան գիշերը իրար
գտնալով՝ լուսընկային լուսովը չարաչար
կռուիլ սկսան . երկուքնալ պզտիկ մնաս քա-

չելով՝ մոսկովին նաւերը ելած տեղերնին քաշվեցան ինչպէս որ իրենց ապսպրված էր. ան ատենը կուսդավոս ուղեց իր պըղտիկ նաւերով ձամփայ ելլալ օգնել մեծ նաւերուն քայց չկրցաւ, հովը խիստ ըլլալուն՝ իր նաւերը դէպ՝ ի ծովեզերքը կըլյնային. իսկ կուսդավոսին եղբարը մեծ նաւատորմղին իշխանը երկաթ ձգելով պիսքօբ, օռօ, և Թօռսաւ տեղվանքնէրուն մէջ՝ պատրաստըվեցաւ պղտիկ նաւերով մէկ տեղ պաշարել վիպուրկ նաւահանգիստը նաև բէդրօպուրկը որ շատ հեռու չէր անկից: Ալեքսան տարիէն աւելի անցած կար որ բէդրօպուրկ Թշնամիէ մը ասանկ մօտիկանց վախ չէր քաշած. աս վախին մէջը ըլլալով օրմընաւ յանկարծ բռնկեցաւ գոռալով խժըլթուքով երկինքը ելավ խուճապարանքնէրուն գործարանը ուր շատ պարունք լեցուցած կար. կարծելով որ աս փորձանքը Թշնամինէրուն դրդելովը եղավ ինչպէս որ առաջ քօքէնհայկին Թէրսանէն եղած էր, ասոր վրայ շատ մարդ բռնեցին բանտը դրին. բայց ետքը հասկըցան որ բանվորներուն անհոգութիւնը եղած էր, որոնք շատ հեղ գինովցած կըլլային ըրաքի խմելէն: Ալեքսինն աւելի շատցաւ երբոր լսեցին որ չվէտին պղտիկ նաւերը զօրք հաներ են պէրսքինա գեղին քով որ վիպուրկ երեքտասնհինգ մղոն հեռու էր. աս զօրքը երկու մոսկովի գեղ երեցին. քաջն կուսդավոս մէջերնին ըլլալով ինչվան քիօվիսդ մօտիկցաւ որ շատ հեռու չէր բէդրօ-

պուրկէն, ամէնէն տեղ երեւով վախ կրնգեր ամէնուն վրայ առանց մէկ մեծ ծեծ մը ընելու։

Այրաւ է որ տաճիկը շատ խելք ըրաւ աս ծեծին մէջ շվեցը իրեն դաշնակից ընել. ասով չէ թէ միայն մոսկովին հաւերը չիկըրցան ձերմակ ծովը գալ տաճկին կղզիները զարնել՝ հապա թէ որ քիչ մը անցնէր՝ մոսկովը իր զօրքը տաճկի սահմանէն բէդրօպուրկ բերել պիտոր տար ասանկ վախէն խալըսելու համար՝ որ աս քաջուձնակ երիտասարդ Թագաւորը կուսդաւոս ձգեց մոսկովին վրայ։ Մոսկովին ան եղաւ աղէկը՝ որ շվեցը քիչ զօրքով եկած էր հոն, չէր կրնար մէկ մեծ ծեծ մը ընելու. անոր համար մոսկովը միայն դէմ դնել մը կընայէր շվեցին. իրեն պղտիկ չէքտիրլիները վրպուրկէն քիչ մը հեռու կեցած էին. ասոնք պաշտպանելու համար ուռւսնասրի կղզին զօրք հանեց հոն եղող մոսկովին զօրապետը. ինքնաւ ցամաքը ելաւ զօրքով բիւրբի գեղին քով, բայց շվեցները վրայ հասնելով ժամ ու կէս մէկ տեղ ծեծկըվեցան. հեղմընաւ մոսկովին զօրապետը շվեցները վրայ վազեց որ չէին կարծեր, երկու դիացնաւ ջարդ եղաւ։ Եդարսքօյի մոսկով իշխանաւ հեղ մը շվեցներու վրայ վազելով 1200 հոգը կոտրեց հոգը խոցեց. 4 զրօշակ առաւ. 3 թօփ։

Աս կռիւները շատ վախ ձգեցին բէդրօպուրկի մէջ եղողներուն վրայ, ցարսքօզէլ տեղը ուր ամառնները կընստեր կատարինէ

Թագուհին մթիկ ըլլալով՝ շատոնք կըսո-
դորեին փախչիլ ապահով տեղ նստիլ, բայց
Թագուհին քաջասիրտ ըլլալով չփախաւ,
այլ մանաւանդ քաջնշդատ գնաց յորդորե-
լով վարձ տալով զինուորներու զօրապետ
ներու քաջալերել ճեմկրվիլ երթնց հայրե-
նեացը համար։ "Այս չեմ վախնար ըսավ.
" որովհետև իմ զինուորներս ամէնն մկկը
" մէյ մկկ քաջուննակ (գահրաման) են. չվե-
" տին Թագաւորը որ չորս հինկ հազար հո-
" գիով եկած է աս մթիկ տեղերս Թեև
" մնաքվիայեն մչջնալ յաղթական ըլլայ իր
" զօրքովը, ան առենալ ես իրեն կըգիտ-
" ցընեմ ինչ կընայ ընել ինծի պես մկկ
" հնիկ մարդ մը մնակովին միևնակ ձեացորդ
" զօրքովը"։ Ինչպէս սրատես էր կատարե-
նէն որ ինքիրեն կերթար կըքններ տեղվան-
քը, կիմանար դիպուածները, հաւատա-
րիմ պաշտօնեայներ ուղեղնալով իր քովը
ու վարպետ զօրապետները, անոնց հետ մկկ
տեղ խորհուրդ սահմանելով իր առջին խօ-
սիլ կուտար պատերազմը ինչ ձամիայ դնե-
լու համար. ասանկով ինչվան որ վիմացաւ
շվեհին պարապ ելլալը գեղ վիգնաց ինքը։

## Ծովու վրայէ կռիւ.

1790։

Մոսկովները Թեպետ ցամաքի դիացին
չեին վախնար շվեհին քիչվոր ըլլալնուն հա-
մար, բայց ծովու դիացին խիստ վախ ու-

նեկին իրենց քիչվըը ըլլալնուն համար քան շվէհներուն նաւերը, որոնք մեծ ու պըզտիկ վիպուրկին ծոցը մտնալով վիպուրկ քաղքին մօտիկցան իբր թօփ նետելու չափ. կուգային վրան յարձակիլ, բայց ջրոս դին ապառաժ քարէր տընկրված ըլլալով խիստ կըդժարցընէին. որչափ որ ջանացին՝ չկրցան մէկ հավան թօփու մը ձգել կամ դուրսի ամրութիը ավրել. գէշը ան եղավ որ՝ էին կրնար համարձակ դուրս ելլալ ինչպէս որ կրցան մտնալ, պատճառն որ մօտկովին նաւերը ռէվէլէին ու քաօնդատէն վրայ գալով 40 նաւի չափ ամէննալ երկու խափխով՝ ան ծովածոցին բերանը բռնած պաշարած էին. ֆինլանտիայէն չէր կրնար շվէհներուն պաշար մը գալ, ձմրան կտրվածը ըլլալով. ասանկով ամէնմը ետև չիկրնալով շվէհին նաւերը ոչ առաջ ոչ ետև երթալ իրենց պաշարը պակսեցաւ, խմելու ջուրը բոլորովին հատաւ. հարկ եղավ շվէհին թագաւորնալ, թագաւորին եղբարնալ որոշեցին վտանգը վրանին առին, մոսկովին նաւերուն մէջէն անցնիլ ծեծկըվելով քան թէ մեռնիլ անօթութենէ։ Յուլիսի 3 գիշերանց սաստիկ առևելեան հով փչած ատենը սկսան շվէհին նաւերը դուրս ելլալ. աւելի զգուշանալու համար առջևնէն քանի մը կրակ ձգօղ նաւ հանեցին [1]. գէշը աս եղավ որ՝ ասոնք առ-

(1) Ա նաւերը ինկիլիզ ասպետը սիանէյ ըզմիթը գաերէր։

տէնէն առաջ քունկեցան, անով մոսկովցիք-
րը իմացան չվէտներուն փախչիլը, նաև եր-
կու չվէտի նաւ երեցին որ աս կրակ ձգօղ
նաւերը պիտոր տանէին. քանիմընալ չվէ-
տի նաւեր երվեցին փախչելով ցամաքը
զարկին. մոսկովն խափուտանան աս կրակ
ձգօղ նաւերէն զգուշանալու համար՝ ծո-
վածոցին բերանը կէնալ և երկու դիտցին
չվէտին նաւերը զարնել չըրավ, այլ աստից
մէ խալըսեցին ետև դուրս ելլալնէն ետև
վրանին վազեց ամէն ուժով. ան ատէնը
ընդհանուր եղավ ծովային պատերազմը,
չվէտներուն խիստ միաստակար եղավ տե-
ղերնին դէզ ըլլալնուն համար. իրենց մէկ
նաւը 64 թօփ քաշօղ երկինքը ելավ. եր-
կու նաւ անձնատուր եղան մոսկովին, հինգ
նաւ ցամաքը նստան. աստնկով 8 չվէտի
նաւ երկու խափխոով կորսըվեցան, Թո՛ղ
տուր ուրիշ պզտիկ նաւերը իրեքալ նոր
Ֆռխաթանէր. 5 հազար զինուոր և հազար
հազարապետ գերի ընկան, 3 հազարի չափ-
ալ զինուոր ուրը խոցվածք ուրը մեռածք մնա-
ցին. աստնկալ ըլլալով 14 խոշոր նաւ ան
ահարկու պատերազմին անվնաս խալըսե-
լով քաղչքռօնա փախան և ուրիշ ամէնն

Ֆռխաթանէր:

Այս ծեծին ատենը չվէտին Թագաւորը որ
պզտիկ նաւատորմիղին վրայ կիշխէր, ներ-
հական ջուրերուս մէջ ընկած ըլլալով՝ մոս-
կովին նաւերէնալ հալածեալ ըլլալով չի-
կրցաւ օգնուիլ մը ընել մեծ նաւատորմիղին՝
փախաւ եկաւ սրվէնքսունտ, կարգով եր-

կան բարակ շարելով կեցուց ժայռերուն
կամ քարե կղզիներուն ետի դին։ Պոս-
կովին զօրագլուխը նասսօ իշխանը թէ որ
բռներ ան հինգերուն խօսքը (Անվախ որ ֆախ-
չըլը՝ կամ-որչ (Հէօթէր) մը չկնէ ասկէ, մեծ
պարճանքով դարձած կըլլար, բայց իր սիր-
տը բքռած ըլլալով մեծ նաւատորմիղին ը-
րած յաղթութեանը վրայ, ուզեց որ նաև
շվէտին պզտիկ նաւատորմիղին վրայ յաղ-
թուի ընէ, իրեն փառքը աւ աւելի շատցը-
նէ [1], անանկով յարձրկեցաւ ասոնց վրայ,
ստոյգ դնելով մտքին մէջը յաղթութիը, ո-
րովհետև կրտեմնար իրեն մոսկովին նաւէ-
րը որ իրր տեր եղած ըսվէսպուրկին ինչ-
վան ռէվէլ բռներ տարածվերկին ծովուն
վրայ. բայց կուստաւվոս շվէտին թագաւո-
րը ուրիշ սրտով էր, որոշեց ան ատենը
կամ յաղթել կամ մեռնիլ, յուլիսի 8 սը-
վնիքսունտկէն ելլալով նշան տվաւ իր նա-
ւերուն ծեծի ելլալ դէմ դնել մոսկովին նա-
ւերուն որ իրեն վրայ կուգային կրակ թա-
փելով. շվէտները ուժ առնելով անանկ ա-
ղէկ ծեծկրվեցան՝ որ մոսկովին ձախ թևի
եղած նաւերը ետ քաշվիլ սկսան. ետևէ ե-
տև կուստաւվոսին օգնութի կուգային պըզ-
տիկ նաւակներ որ նեղուցին մէջը կեցած

---

(1) Ճիհանտէ պու սաատէթլէ նիւհուսէթ պիր գա-
բար օլմազ,
գամ իլէ շատ կէլիր կէչէր, պիրիսի փախտար
օլմազ,
գանատթան իլգէթ, Թամահէն զիւլլ հիչ
հքսիք օլմազ։

էին . չվէտները անանկ կատաղութէ ծեծ-
կըվեցան որ իրիկվան ժամ մը մնացած քա-
նի մը մոսկովի չէքտիրի իրենց կարգէն
դուրս ելլելով եկան անձնատուր եղան
չվէտին . քանի մընալ մոսկովի նաւերէն որ
ցամաքը նստան , որնալ չվէտէն բռնըվե-
ցան . մոսկովին սկիտ մնծ նաւուն Ձէպ-
խանէն բռնկելով ամմէն իր մարդիկներով
երկինքը ելավ . քիչ մը անցնելէն ետև մոս-
կովի ֆռխաթա մը ծովը ընկղմեցաւ . ու-
րիշները յայտնի փախչիլ սկսան , բայց հո-
վը քիչ ու դէմ ըլլալուն՝ անոնքաչ չվէտին
ձեռքը ընկան . դիշերվան մութը կոխելով
չվետները էին տեսնուր մոսկովի նաւերուն
անձնատուր ըլլալը , միշտ թօփոտելու հետ
էին ինչվան լոյս . լուսուն դէմ ձանչնալով
առին ան նաւերը , որ 4 ֆռխաթա էին .
1 նաւ մը երկու խաչխաով , 3 շամպէք ,
14 չէքտիրի , ուրիշ 12 նաւէր , 10ալ պըզ-
տիկներ . ասոնց ամմէնուն մէջը 387 թօփ
կային , 280 մոսկով հաղարապետներ . 3 հա-
զար զինուորէն աւելի գերի ընկան չվէտին .
1200ի չափ մեռան , խոցվածները աւելի է-
ղան : Մէկ յանձնապաստան ըլլալ մը մոս-
կովի զօրապետին՝ մէկ սխալիլ մը ասչափ
ջնասներու պատճառ եղավ : Ո՛ վէտին կոր-
սընցուցածը եղան 1 ֆռխաթա մը , 6 շա-
լուփա . 10 պզտիկ նաւակներ , 636 մարդ ,
391 նաւավար , 25 հաղարապետ :
Ընծին ատենը լսեց կուսդավոս որ մոսկո-
վին զօրագլուխը նստսօ իշխանը խոցվածք
իր մէկ թևէն վրայ մէկ անապատ կզզի մը

փախերէը. իրեն Թիկնապահէն մէկը հոն խրկեց որ յորդորէ անձնատուր ըլլալու, ապսպրելով որ շուտ մը հոդ տանի բժշկելու. բայց ասիկայ հոն չհասած նասսօ իշխանը տեսնալով որ անկարելի էր իր խափուտանայէն նաւը անվնաս պահելու՝ անկէց ելլալով ուրիշ նաւակով մը Թի քաշելով ողջ հասեր եկերեր վիպուրկ, բայց շատ խոնարհ երեսով քան ինչ երեսով որ ան տեղէն ելած էր. իրեն անհնարէն երևնալով ասանկ չարաչար յաղթըվիլը [1], գանկատ գրեց կատարինէ Թագուհիին՝ իբր Թէ մոսկովները իրեն նախատինք հասցընելու համար Թողուցին որ ասանկ յաղթըվի։ Որուն Թագուհին պատասխան գրեց սիրտը առնելով և միանգամայն յանդիմանելով Թէ պէտքը չէր վտանգի դնել անանկ ծեծի մէջ որ հարկաւոր չէր։

Շ ՀԷՔԻՆ ՀԱՂՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԵՊ։

1790։

Ա՛ս ծեծը շատ փառաւորութիւն բերաւ կուսգաւազան Թէ իրեն և Թէ ամէնն շվէյտազգին, բայց ըստրկի դիւացին խաղնան հատած ըլլալով՝ իր ամէնն բարեկամ Թագաւորներուն հասկրցուց աս յաղթութիւը, նորեն օգնութիւն խնդրելով որպէս զի մոսկո-

---

(1) Ա՛զ իւէ չէշմի ինսանի կիպի միզան օլմազ, քիչի միտարին պիլմէք գաուար իրմիան օլմազ։

վին հետ ծեծկըվելով հիւսիսային Թագաւորաց հաւասարակշռութիւնը պահէ, բայց որոնց որ գրեց՝ մէկ պատասխան մը չառաւ ուշացին պէս ոչ ինկիլիզին ոչ պրուշիէն. երբոր ծեծ մը կերկընայ՝ ձանձրութիւնը տեղը կուգայ. նոյն իսկ յաջողութիւննալ սրտին արիութիւնը կվերցընէ. փոխ ըստակալ չկրցաւ մէկէմը առնել ոչ ֆիլիմին կէն ոչ Ճինիվիզին և ոչ ստանպօլէն. ամմէնալ յոյս կուտային բայց գործքով բան մը չէին ցըցընէր. մտածեց կուսդավոս որ ասկէց ետքը ծեծկըվիլը անօգուտ կամ պաշտութիւն մընէ: Նչափ ծեծկըվելով իր վախճանին հասած էր, որ էր մոսկովին նաւերը արգելել պալտիկ ծովէն դուրս չելլալու, օսմանցիին երկիրը չվարնելու, մէյմընալ որ զինքը բացարձակ Թագաւոր ընդունիլ տալ մոսկովին. ասոնք որովհետև եղած էին՝ հրամմեց իր զօրագլխին կոմս առՓֆելտ ըսված՝ որ վառէլա տեղը երթայ մոսկովի զօրագլխին հետ խօրաթէ հաշտութիւն նախադուռը պատրաստելու, առանց մէջ խօթելու ուրիշ մէկ Թագաւոր մը, որ շատ հեղ անօգուտ կ երբեմնալ ընասակար: Ֆրանսայէն խառվութիւնը որ օրէօր բռնկելու հետ էր՝ ամմէն եւրոպային Թագաւորները կրբռնադատեր իրենց բանը Թողուլ անոր մարելու Ճարը տեսնալ. արդէն սկսեր հաշտութիւն վրայ յորդորելու բէդրօպուրկ եղած սպանիայէն դեսպանը որ էր կալվինց կոմը, որպէս զի կուսդավոս քալ պատերազմողը մոսկովին ծեծը վերջացը-

նելով Փրանսիզներուն դէմ երթայ. Ժէ. լուիզ Թագաւորը իր առջի իշխանութիւնը հանել տայ. մսկովիայ աս բանիս համար հաշտվիլ ուզելով շուտ մը երկու դիտցի պինուորները աս դիւին ան դիւին գետինը բարձրցընելով, մէջ տեղնալ մէկ վրան (չատըր) մը կանգնելով, քիչ մը խօսելին ետև առանց կանոնաւոր խօսակցութիւն (քօնֆէռէնսօ) ընելու, առանց մեծութե ցոյցերը ընելու, օգոստոսի 9 շվետին ու մոսկովին մէջ հաշտութիւնը ստորագրեցին ա ռած տեղերնին իրարու դարձընելով. (ո մանք աս հաշտութիւնը կըդնեն վեռքլաք տեղը օգոստոսի 4.) կուսդավոս հերիք կը սեպէր իրեն որ մսկովը պինքը ճանչնայ անկախ Թագաւոր շվետին վրայ: Այ եց օրէն ետև հանդիսապէս հաստատեցին, նուշդատ ու ապօ եղած հին դաշնադրութիւնները ըստ ամի նորոգելով, նման անոնց պէս օխտը գլուխ Թէութիւն հաստատեցին. նոր բան միայն ան եղաւ որ շվետի Թագաւորին ա զատուի տրվին լիվոնիայի նաւահանգիստ ները մէջ ամէն տարի 50 հազար ռուպլի ցորեն գնել առանց մէկ տուրք մը տա լու ելլալ մնալու ատենը. երկուքին սահմանները ինան ըսին ինչպես որ էին ծեծէն առաջ 1788: Այս ծեծիս մէջ շատ ձեռք ունեցաւ պարոն առվիկել շվետին զօրապետը՝ որ գլուխ էր եղած տալէքառլեան կամաւոր զօրացը՝ հիմնալ ինքը ընդուզ հաշտութիւնը:

Այսանկ շուտով հաշտվելուն վրայ ամ

մէն եւրոպա զարմացաւ աւելի ինկիլիզն ու պրուշը. բայց ամէնէն աւելի օսմանցին դժարացաւ աս հաշտութիւնը վրայ, դուռը կանչելով չվետին դեսպանին դիւանադպիրը խիստ խօսքերով յանդիմանեց ըսելով, կուսդաւլոս յայտնի ավրեց դաշնադրութիւն պայմանները, ան սրդողէն վերցուց օձաձան որ պատուոյ համար կընստեցընէր դեսպանին սերային առջին. դեսպանը իրեք հեղ ուզեց բերիս էֆէնտիին հետ տեսնըվիլ՝ անիկայ երես չտարվավ. ժողովուրդնալ հայհոյելով կըսպառնար կրակ տալ դեսպանին սերային. ամէնէն բանէն աւելի դրանը դէմ եկող ան թէութիւնը եղավ որ չվետին թագաւորը հաշտութիւն ընդհին մէջը թողուցեր որ մոսկովը զինքը կոչէ Ցար կրցնա և պղտիկ նահապետ. Պերճափին պէր չապարեան և վրասպանի նախարարընէց: Բայց չվետին թագաւորը իր ըրածներուն համար թուղթ հանեց, ամէնէն տերութեան խրկեց ասանկ ջատագովելով զինքը:

" Չվետին թագաւորը ուզելով միշտ անչափ պահել ան կապը որ իր մէջը ու
" տաճկին մէջը կայ՝ անոր շահը իր շահը
" սեպելով ոչ երբեք պակսեցաւ իր խօսքը
" տրվածներէն, քաջութիւն պատերազմելով
" իրեք պատերազմի մէջ ծովու և ցամաքի
" վրայ. մոսկովին նաւերը չիթողուց պալչիկ ծովին արշիպելակեան ծովը անցնելու, որպէս զի տաճկին տերութիւնը խաչելի, իրեք դեսպին կրակ չընկնայ վրան. անոր համար տաճկին դուռը զոհ

„ պիտոր ըլլայ տեսնալով ան ատենն որ եր-
„ բոր երկու զօրաւոր տէրութիւնք կը Ջանայ-
„ ին իրեն Թախտը կործանելու , ան ատեն-
„ նալ շվէտը տաճկին յայտնի թշնամութիւն վրայ իր
„ սերը յայտնի ցըցուց : Ինչ խօսակցութեց
„ ին որ հաշտութիւնն առաջ եղան մոսկո-
„ վին հետ՝ ասոր համար էր որ՝ երբոր սպա-
„ նիան ին մօտ շվէտը մոսկովին հետ հաշ-
„ տեցընելու՝ նաև տաճկին համարալ ա-
„ ռաջարկեց որ հաշտութիւն ըլլայ , ին մը-
„ նալ որ խրըմը ետ տրվի , ԹաԹար խա-
„ նին ձեռքը ինայ ինչպես էր առաջ : Ասա-
„ կուը պատասխան տրվավ Թէ ին կալ տէ-
„ րութիւնք մանաւանդ պրուշը իրենց ին
„ մտնալովը աւելի կրդժարցընէին հաշտու-
„ թիւնը , անոր համար մենք բօդէմքին իշ-
„ խանին հրամմեցինք որ ինքը խօսի տաճ-
„ կի դրանը հետ առանց ին միջնորդ մը
„ ին ձգելու : Այդ շվէտին Թագաւորը
„ չուզելով լսել իր հաշտութիւնը տաճկին
„ հաշտութիւն զատված՝ յուլիսի 20 հաս-
„ կըցուց իրեն մոսկովը Թէ ինչ գետին որ
„ տաճկին առերեր Թուրքային ան դին՝ ետ
„ պիտոր տար տաճկին գայնարձրը եղած
„ հաշտուէը կէօրէ . պէնտերը ուրիշ ին
„ ընկած բերդերովը քակվեին պիտոր : Ին
„ տեղէն քաշվելընին՝ 9 նաւ երկու խափա-
„ խով կոլսնցուց . ան զօրքնալ որ բէդրօ-
„ պուրկ մօտիկցած էին՝ տակնուվրայ եղան
„ ալէկօնութէն և ուրիշ ներհական դիպ-
„ ուածներն : Պրուշին Թագաւորը բոլո-

» բովին զբաղեալքը տաճիկը մինակ նեմ-
» ցեին հետ հաշտեցընելու համար որպէս
» զի ինքը պատերազմ մանալէն խալըսի .
» իսկ ուրիշ ծովեզերեայ տէրութիւք մնած
» մնած խօսք կուտային գործքով բան մը
» չեին ըներ , ա՛չ ըստակ ա՛չ զինուոր կու-
» տային շվէտին օգնելու համար , շվէտը ա-
» մենևին անձար մնացած ձեծը շարունա-
» կելու՝ հերիք իրաւունք ունեցաւ աս հաշ
» տութիւնս ընելու . ձեծին խարձը 70 մի-
» լիոն ղուռուշ կուզեր , ինքը ծովու վրայ
» ջուներ որ միայն 14 նաւ երկու խափա-
» խով :

» Պսանկալ ըլլալով շվէտին թագաւորը չեր
» ուզեր ամենևին զատ առանձին իրեն հաշ
» տութեան համար ձեռք դնել , թէպէտ
» և իր ժողովուրդը կուզեր , այլ ինչվան
» ետքը ոսք կոխեց որ տաճիկնալ մոսկովին
» հետ հաշտըվի իրեն միջնորդութ , խրըմ-
» նալ նորին ետ դարձըվի . բայց իրարու
» ետև իրեք քօստայովալ բացասական պա-
» տասխան եկավ մոսկովին . ետքը հասկը-
» ցուց որ շվէտը մոսկովին հետ հաշտուիը
» լմնցընելէն ետև կընդունի իրեն միջնորդ
» ըլլալը տաճկին համար . իսկ խրըմը որով-
» հետև 1784ին դուռը հանդիսասէս տը-
» վերը ըսավ , հիմնալ մոսկովը չեր որ ան
» դաշնադրութիւնը ավերեր , հապա ինքը
» տաճիկը բացերեր աս ձեծս , մենքալ քա-
» ջութ պաշտպանելինք ամէնն յարձակ-
» մանը դէմ , իրաւունք չէ կրսեր անկեց
» զրկըվիլ , այլ մնաւանդ ամէնն վտանգը

„ յանձ կառնեինք խրբմը չիտալու համար ։
„ Ա՛ս խօսքերուս հաւանութեի տալով չվե-
„ տին Թագաւորը ստորագրեց հաշտութը ,
„ հաստատուն բռնելով մանաւորապէս ան
„ պայմանը՝ որ մոսկովը ոչ երբէք ոչինչ
„ պատրուակով ( մահանայով ) չիխառնըվի
„ պիտոր շվետին կառավարութեանը մէջ ։
„ հաստատուն խոստումալ առնելով իրեն-
„ ց՝ տաճկին հետ անանկ հաշտութեի ընել
„ որ՝ այնչափ վնասակար չըլլայ տաճկին ,
„ չիշէ անցած գացած բանները , որպէս զի
„ միշտ ոտքի վրայ մնայ ան դաշնադրութիը
„ որ կայ տաճկին ու շվետին մէջ ։
„ Ա՛ս բանաւոր պատճառները՝ յայտնի ը-
„ նել կուտան ամէնն աշխըրհի առջին , թէ
„ որ դաշնակից Թագաւորները խրկեին շվե-
„ տին իրենց օգնութիը որ առջի տարվընէ
„ խոստացան ըստակ , զինուոր , ուռնաւ տա-
„ լու , շվետը ասանկ ցաւալի փորձանքի մէջ
„ էր իյնար , իր զինքը բանեցընելը վար-
„ էր ձգէր , որ եղաւ իրեն փառք , տաճ-
„ կին օգուտ ։ 1790 ։ նոյեմբ ։ 18 ։ „

Ա՛ս ծեծիս փորձը ուր իրէք հեղ իրարու հետ ամէնն քաջութէ զարնըվեցան , մէկ ամուր քաղաքմընալ իրարմէ չիկրցան առնել , կըսորվեցընէ որչափ դժար է ֆինլանտիայէն ժայռերուն քարերուն ու լիճերուն մէջը ծեծկըվիլ , երկու ազգ այնչափ ըստակ բուռ խարձելէն ետև աս կռուիս համար՝ միայն աս օգուտը վաստըկեցան որ իրար ճանչցան , իրարու վրայ համարում ունե-
ցան ։

## Լ ՀԱՅԻՆ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒԸ ՊՐՈՒՇԻՆ ՈՒ ՊԱՏՃԻՆ ՀԵՊ, ԻՐԵՆ ԸՐԱԾ ՆՈՐ ԱԽՄԱՆԱԴՐՈՒԹԻՒԸ ։

### 1790–1791 ։

ՊՐՈՒՇԸ ԻՐ ՉԱՀԸ ՆԱՅԵԼՈՎ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒ ՄԸ ԸՐԱՒ ԼԵՀԻՆ ՀԵՏ 1790 ՄԱՐՏԻ 29, ՈՐ ԱՍԼԻԱԼԻ 5 ՀԱՍՏԱՏԱՒԵՑԱՒ ԻՐԱՐՈՒ ԵՐԿԻՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԿ ՄԿՈՒ ՈՐՈՇԵԱԼ ՁՕՐՔ ԽՐԿԵԼՈՒ, ԵՒ ԹԷ ՈՐ ՊԵՏՔ ԸԼԼԱՅ ԱՄԻՆ ՁՕՐՔՈՎ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ։ ՊՐՈՒՇԸ ԱՄԻՆ ԿԵՐՊՈՎ ԽՕՍՔ ՏՐՎԱՒ ՈՐ ԱՍԿԻՑ ԵՏՔԸ ԱՐԴԷԼ ԹՈՂ ՉԻՏԱՅ ՕՏԱՐ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԽԱՌՆՐՎԵԼՈՒ ԼԵՀԻՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԵՐ ՄԷՋ. ԱՍՈՎ ԽԻԱՏ ՍԻՐՏ ԱՒԻՆ ԼԵՀԸՐԸ, ԱՊԱՀՈՎ ԵՂԱՆ ՈՐ ԿՐՆԱՆ ՄՈՒՏՈՎԻՆ ԴԷՄ ԿԵՆԱԼ. ՍԿԱՆ ԻՐԵՆՑ ԳԷՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ ՉԻՒԵԼ, ՈՐ ՊԱՏՃԱՌ ԷՐ ԵՂԱԾ ԱՄԻՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐՈՒ. ԻՐԵՆՑ ՄԷՋԻ ԽԵԼԱՑԻՆԵՐԸ ՅԱՅՏՆԻ ԿԸՏԵՍՆԱՅԻՆ ՈՐ ՄԿ ԴԻՒՆ ԺՈՂՈՎԱԿԱՆԱՑ ՉԱՓԷ ԴՈՒՐՍ ԱՂԱՏՈՒԵՐ ՄԻՉԱ ՊԱՏՌՈՒԱԾ ՄԸ ԽԱՌՈՎՈՒԹԻ ՄԸ ԿԸԶԵՐԷՐ ԼԵՀԻ ՏԷՐՈՒԹԵՐ. ՎԱՍՆ ԶԻ ՈՒՐ ՈՐ ՉԱՓԻՆ ԱՒԵԼԻ ԱՂԱՏՈՒԹԻ ԿԱՅ՝ ՀՈՆ ԱՂԱՏՈՒԹԻՐ ԼԻՆ ՔԻՐՄ ԿՐՎԵՐՆԱՅ ԳԵՐՈՒԹԻ ԿՐՄՆԱՅ. ՔԱՆԻԱԼ ՈՐ ԱՂԱՏՈՒԹԻՐ ՇԱՏՆԱՅ՝ ԱՆՉԱՓԱԼ ԻՐ ԿՈՐՍՐՎԻԼԸ ԿՐՄՆԱՓԻԿՆԱՅ. ՄԿԱԼ ԴԻԱՑԵՆԱԼ ԿԸՏԵՍՆԱՅԻՆ ՈՐ՝ ԼԵՀԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԸՂՏԻԿՑՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԻՒԸ ԱՒԵՆԵՒԻՆ ԱՆԿԱՐ ԷՐ ԻՐԵՆՑ ՄԷՋԻ ԵԼԱԾ ԽԱՌՈՎՈՒԹԻՆԵՐԸ ՁԵՍՊԵԼՈՒ. ԹԱԳԱՒՈՐՆԱԼ ԸՆԱՐՈՒԷ ԸՆԵԼԸ ԱՄ-

մէն անգամուն քաղաքական կռիւ էր բե-
րած իւրարու հետ՝ երբեմնալ դրացի տէ-
րութենէ հետ. ան կռիւները պատճառ կըլ-
լային դուրսի տէրութիւնները իրենց բանէ-
րուն մէջը խառնել կուտային։

Լ՚ս ջնանէրուն ձար ընելու համար որոշե-
ցին իրենց առջի սահմանադրութիը փոխել,
նոր մը շինեցին վճռելով 1791 մայիսի 3
որ ասկից ետքը Թագաւորը ընտրելով չըլ-
լայ, հապա ժառանգութ ըլլայ որդւոց որ-
դի, չափաւոր իշխանութի մը տալով իրեն,
որով գրեթէ բանի մը պիտոր չխառնը-
վէր. ատեանները ժողովները գինուորութիը
կարգի դրին. գրեթէ ֆրանսայի նման կա-
ռավարութի մը խօթեցին. օրէնսդիր իշ-
խանութիւնը տըվին երկու ժողովին կամ
խուցին ձեռքը, իսկ գործադիր իշխանու-
թիւնը մէյմը Թագաւորին՝ մէյմընալ իր
խորհրդականներուն և տակի եղած պաշ-
տօնեայներուն ձեռքը տըվին, որոնք պար-
տական ըլլան ըսին համար տալու ազգին.
ուղղափառ հաւատքը վճռեցին տիրօղ հա-
ւատքը ըլլալու. ամ որ ուղղափառ հաւատ-
քը Թողու ըսին՝ մեծ յանցաւոր սեպվի.
բայց ուրիշ օտարահաւատներուննալ չափա-
ւոր Թոյլտուութիւն ըրին. գեղացիներուն
գերութիը վերուցին. ժողովնալ երկնցու-
ցին ինչվան որ բանը լմնայ։ Լ՚ս որոշելէն
ետև սաքսօնիայի կայսրընտրին ֆետերի-
քոս օգոստոս ըսված՝ լմայուցին որ՝ սգա-
նիսլավոսը անորդի ըլլալով՝ երբոր անիկայ
մեռնելու ըլլայ՝ գինքը լեհի Թագաւոր պի-

տոր դնեն. և որովհետև մկհատիկ աղջիկ մը միայն ուներ՝ իրեն աղատուԹիւն տալին որ իրմէ ետև անիկայ կարենայ Թախտը նստեցընել իր փեսային՝ որնոր ինքը ուզենայ փեսայ ընտրել իրեն. բայց սաքսոնիայի կայսրընտիրը իր պզտիկ իշխանուԹիւնը խաղաղուԹեան հետ մկ տեղ ընկերացած աւելի լաւ ընտրելով՝ հրաժարեցաւ ընդունելու անանկ ԹագաւորուԹիւն մը որ լեցուն էր փուշով, չուզեց անանկ Թախտը ոչ իր անձին և ոչ իր եղբայրը կամ աղգականացը համար:

Վանի մը ատեն կար որ լեհին տերուԹիւնը բօղոքի իշխանը դեսպան խրկերեր ստանալ պօլ պրուշին դրդելովը, բայց ընդունելուԹիւն չէր գտած, դուռը տեսնելուաւ շատ դժարուԹիւն եղեր, հիմա դրան պատշաճ երեսնալով լեհին հետ բարեկամուԹիւն ընելու՝ բանը փոխվեցաւ բօղոքին մեծ ընդունելուԹիւն ունեցաւ. մկ տեղ խօսակցելով դաշնադրուԹիւն ըրին 1791. երբոր Թըշնամին վրայ վազի՝ 40 հազար տաձիկը օգնուԹիւն տայ լեհին. լեհնալ պետք ըլլալու ատենը 20 հազար տայ տաձկին. Թէ որ ալ մոսկովը ետ չդարձընէ տաձկին առած գետինները՝ լեհը ճեճ բանայ մոսկովին վրայ: Երբոր աս դաշնադրուԹիւնը լուրը (խապարը) վարշով հասաւ՝ լեհին Թագաւորը ուրիշ շատ մենճէրներն՝ որ դեռ մեծ ժողովքին մէջն էին՝ չիհաւնեցան աս դաշնադրուԹեանը, բայց բազմուԹիւնը որ մահու չափ Թշնամի էին մոսկովին կըհաւնէին, միայն

Թէ ինչ իշխանութիւն որ տրված էին բօզօյ-
քին՝ անիկայ չափը անցած էր կըսէին ։
Պրուշնալ որ պիտոր հաւնէր աս տաձկին
դաշնադրութեանը վրայ՝ իր չհաւնիլը յը-
յուց լեհի ժողովին մանաւանդ Թէ ուզէց
արգելել ։ անանկ բանէր կըսէր որ լեհերը
կասկածի մէջ իյնալով սիրտերնին պաղե-
ցաւ պրուշին վրայ ։ վասն զի անդադար լե-
հերուն ետևէ կիյնար տանձքան ու Թօռն
քաղաքը իրեն տալու ։ կըսէինալ որ պրու-
շը գաղտուկ նեմցէին կըխոստանար իրեն
երկիր մը առնել տալ տաձկին հողէն՝ Թէ
որ ինքնալ Թող տար պրուշին առնելու
տանձքան ու Թօռն քաղաքը , մեծ լեհը , ու
լիԹուանիային կտորը ։ և Թէպէտ լեհաս-
տան եղած պրուշին դեսպանը աս բանս
սուտ կըհանէր , բայց լեհերուն կասկածը
օրէօր շատցաւ մտմտալով որ պրուշը օր-
մընալ մոսկովին կընայ ասանկ առաջարկու-
Թիւն ընել , Թէ որ նեմցէն յանձ չառավ՝
մոսկովը յանձ կառնէր ։ Ա՛ս կասկածէն ի-
րենք իրենց մէջը աւելի միացան , աւելի
կատարելագործել նայեցան իրենց նոր սահ-
մանադրութիները ։ վանաձան վՀիւնէրալ հա-
նեցին օգտակար քաղքցոց ու երրորդ կար-
գի պատուիրակներուն , որոնց շատ արտու-
նութիներ տրվին լեհին ազնուականքը ։ ժո-
ղովրդեան իշխանութիւն տրվին ազնուակա-
նաց երկիրները ծախու առնելու , նաև ազ-
նուական գրվելու ։ գեղացիներուն որ
առաջ գերի էին՝ հրաման տրվին վարձով
ծառայելու գետին ունեցօղ տիրվըտոցը ։

Մինչ ներհական մտածութիւն որ մարդկան մէջ կը պատճառի . մի և նոյն առենի մէջ երբոր ֆրանսան կը նայէր աղնուականքը ոտ-մակացընելու , լեհը անոր դէմ կը նայէր ոտմիկը աղնուական ընելու : Այս նոր սահմանադրութիւնը լեհին վճռեցաւ 1791 մայիսի 3 ( ըստ ոմանց յունիսի 3 ) . վճռեցինալ որ ամէն տարի ան օրը հանդէս ընեն ազատանալ խաղաղութիւն առանց արեան լինելուն համար [1] :

## Ներմակ ծովին սև ծովին մէջ ծեծկըվելը , իմայելին առնըվելը .

1790–1791 :

Այս առենները Հէզայիրին նաւերը աղէկ քաջութիւն ըրին զարնելով վախցընելով լամպռօ քաջիանին . որ խրվաթլըխէն եկած մոսկովի բադէնդա առած՝ Ներմակ ծովին մէջը երկու տարի ասպատակութիւն ( խուրսանտութիւն ) կընէր . արշիբելակեան ծովին սկսելով ինչման աքեայի ու պերուժի առջին Թող չէր իտար վաճառականի նաւէր անցնելու . ատ դիս ան դին պատեհելով երբոր 1790 յունիսի մէջ մենք քէֆալօնիա գացինք , լամպռօն իր նաւերը կղզին էտի դին քերերը նորոգելու , ուր քէֆալօնիա

---

(1) Գանաարը հէլէ պիր մուրի , անդը խայրէ պէ-
չարէթ տիր ,
անը պիլմէզ քի պիչարէ , ղէվլէնէ իչարէթ տիր :

կղզին դիմացի եղած Թիաքի կղզին մէկ տեղ աղէկ նաւահանգիստ մը կըներ . երբոր դուրս մենծ ծովը ելավ Ձեզայիրին 16 նաւերը յանկարծ պաշարեցին լամպռօնի նաւերը որ էր 2 ֆրխաթա , 2 շամպէք , Ձեզայիրցիք թէպէտ շատ կռտրտըվեցան՝ բայց պինտ եռքը լամպռօն 2 միայն շամպէքով փախուցին սերակուզա ուսկից որ եկեր էր . իսկ լամպռօնին ֆրխաթանները տեսնալով որ Ձեզայիրին ձեռքը պիտոր կըսնան , իրենք իրենց կրակ տալով երկինքը ելան :

Այսն ատեննէրնալ սև ծովին վրայ ծեծ կըլլար մոսկովին ու տաձկին մէջ . 40 տաձկի նաւ մեծ ու պզտիկ յունիսին առջի օրերը երևցան դունայեան բերնին առջին . մոսկովին ռխալի նաւը սեվաստուպօլսէն ելը լալով ասոնց դէմ եկավ , վրանին խրկեց ռխպաս նաբօլցի զօրապետը չորս նաւով որ իրեն տեղեկութիւն բերէ տաձկին նաւերուն վրայ . ասիկայ համարձակելով խիստ քովերնին մօտիկցաւ . տաձկին նաւերը ասիկայ մէջերնին առին շատ ծեծկըվեցան , բայց անիկայ իր վարպետութիւնը զարնելով եկավ հասկըցուց որ տաձկին նաւերը մոսկովինին աւելի շատ կին : Այսպէս . 12 երկու տերուէ նաւատորմիղը չարաչար ծեծկըվեցան իրարու հետ իրենք ամբողջ օր . տաձկինները առջի օրը վերոյիշեալ ռխպասը թիւֆէնկով զարկին վերաւորեցին , բայց եռքը կռտրտըվեցան : Այսեմբ . 2 . պզտիկ նաւատորմիղնին զարնըվեցան դունայեան բե-

ըանը, տաճկի նաւերուն գլխաւորը Թա-
Թար էր իւլամինք պաթալ անունով որ ու-
րիշներուն հետ մեկ տեղ գերի գնաց պէն-
տէր։

Մոսկովը ցամաքին վրայալ սաստկացուց
ծեծը որպէս զի տաճիկը նեղը ձգէ հաշ-
տութիւն ընելու՝ ինչ ԹէուԹը որ մոսկովը
կուզէ. անոր համար բօդէմքին իշխանը
հրամեց որ ամէն զօրքնալ ուր որ էն՝ միան-
գամայն յարձակին տաճկին վրայ ձմռւան
սկիզբը. գիտնալով որ տաճկին զօրքը գար-
նան առեն առիւծի պէս կըյարձակին, բայց
ձմեռը անանկ չէն, յուրտէն նեղելով չէն
ուզեր ծեծկըվիլ։ Հոկտ. մէջ նոր քէլիին
վրայ վազեցին մոսկովները, պատէն դուրս
եղած պատնէշները առնելու համար ուԹը
ժամ ծեծկըվեցան. տաճկըները անանկ
քաջուԹիւ դէմ դրին ասոնց՝ որ շատ մոս-
կով կոտրեցին. բայց ետքը ան պատնէշնէ-
րուն առնըվիլը տեսածնին պէս՝ վախնա-
լով չըլլայ որ քաղաքնալ անանկ յարձակ-
մամբ առնըվի՝ անձնատուր եղան. 5 հա-
զար եկնիչերի մէջէն եկան ազատուԹեամբ
վառնա գացին. քանի մը տաճկի պզտիկ
նաւերը որ կային ան դիերը՝ անոնքալ քաշ-
վեցան. մոսկովնները պզտիկ կղզիմընալ ա-
ռին դունայնին մէջը իսմայիլին խիստ մօ-
տիկ. տաճկին նաւերուն հետնալ ծեծկը-
վեցան որ իսաքչայնին քովը կեցած էին։
Դեկտ. 2 երկու տէրուԹեց պզտիկ նաւե-
րը նորէն ծեծկըվեցան ուԹը ժամէն աւե-
լի, տաճկին ծեացած նաւերը փախան, իս-

մայիլը բայը ձնայ , մէկ օգնութիւն մը չէր կրնար տեղայ մը գալու և ոչ բանակէն . որովհետև սուվարոֆ զօրապետը կեցած ըլլալով սիրելի գետին երկանքը՝ մարդ մը չէր Թողուր անցնելու . անանկով իսմայիլ բոլորովին պաշարված ձնայ, նաև մը չինայ իպրայիլի ու քալասին քովերը . պրուշին զօրքնալ որ տաձկին հետ մէկ տեղ պիտոր ծեծկըվեկին , ամենևին հեռու կըկենային : Իսմայիլին բերդը Ֆ . սուլդան մուսդաֆային ատենը մէկ տկար բերդ մը ըլլալով՝ ռումանցոֆ զօրապետը առերեր 1770 քայնարձրք եղած հաշտութիւնէ ետև մավրոսսի պուղտան պէկին յորդորելովը՝ դուռը քանի մը հազար քէսէ խարձելով զօրացուցաս բերդը մէկ քաղաքացոնացի վարպետի ձեռքովը , քովերնալ աղէկ ամրութիւներ շինելով եղավ աշխըրհիս առջի բերդերէն մէկը . և իր դրիցը համար աղէկ շահաստան քաղաք ամնէն տեղէն հեշտ ( խօլայ ) ապրանք գալու հոն , 8 մղոն իր պտոյտը : Այ էզիրը աս բերդիս պիտականութիւնը Ձանչնալով փաշայ դրեերը հոն , և իրեք իշխան խրըմու կիրայներէն , 35 հազարի չափալ զօրք , շատալ պաշար ու Ձեպխանէ . քօդէքինին աչքը աս զօրաւոր բերդին վրայ ըլլալով աղէկ մը պաշարել տըվավ . դուշային դիացէն վերցիշեալ ռիպաս զօրապետը պաշարերեր , իսկ ցամաքէն կուտոզվիչ ու սամոյլով զօրապետները . նոյեմբեր մէջը մսկովիները դուրսի պատնէշները պատռելով անդադար կրակ կըթափէին

վրան, բայց մէջի տաձկըները անանկ աղեկ դէմ դրին՝ որ մէկ ոտք մը առաջ չկրցան գալ մոսկովները։ Անանկ երկան քշելով պաշարումը, բօղդմքինը որ իր մեծ բանակովը քիչ մը հեռուն էր կեցած՝ ձանձրանալով երկննալէն՝ չկարծելով որ այսչափ դէմ դնեն տաձկըները՝ հրամեց սուվարօֆ գօրապետին ամէնն հոգը վրան առնել, օգնութեի գալու ձամիայները կտրել, վերջապէս իսմայիլը առնել։ Այս պատուերը առածին պէս սուվարօֆ կոմսը՝ եկավ քննեց պաշարումը նոր կարգի մը մէջ դրաւ, նորէն զաղախները բերել տալով հին օխտը թև բաժնեց, ամէնն մէկը 2500 հոգի, ուրիշ նոր զօրք կեցուց, ամէնն գունդ գինաւ զատ զատ գործք յանձնելով միաբը դրաւ մէկէն յարձակելով առնել գեկատեմբերի մէջ նը նկողսին օրը՝ որ մեծ օր է մոսկովներուն մէջ։ Իսմայիլ բերդը ուրիշ դուրսի եղած ամրութենէն զատ՝ մէկ պատնէշմնաւ ունէր բոլորտիքը 54 թօփով. ասոր վրայ սանդուխք (նկրտիվէն) գնելով ամէնն դիացէն ամէնն բազմութիւ յարձակեցան մոսկովները. գետին մէջի կեցած նաւերնաւ իրենց օգնելով. տաձկըները կարկուտի պէս վրանէն կրակ թափելով շատ մոսկով ջարդեցին, բայց վերջապէս ջարդվելովաւ վեր ելան. հոն մեծ կռիւ եղաւ, տաձկըները հինկ հեղ քաշուելէ վռնտեցին մոսկովները, երկու դիացնաւ սաստիկ կոտորած եղաւ. սուվարօֆ մեռածներուն տեղը նոր զօրք բերելով միա-

քը դրամ վեցերորդ յարձրկիլը ընել, ու-
րիշ ձիաւոր զօրքաւ հոն բերել տրվավ։
Այսանկ կատաղութե յարձրկելով երկու
դիացինալ անչափ շատցան մեռնողները որ
լեռան պես դիզվելով՝ ան մեռելներուն
վրայեն ելլալով կրցան մնալ բերդին մէ-
ջը. առջևնեն ելլող քաղքցիք կըջարդը-
վեին, միացած քաղքցիք աղաչելով հաղիւ
կըխալըսեին. բայց տաճկին զօրքը քաղ-
քին մէջն ամփիայները բաժնըվելով՝ չին-
քերուն մէջէն տեղ տեղ շատ մարդ ջար-
դեցին մոկոնցիներէն, անանկ որ բոլոր պա-
տերազմին մէջ անչափ մոկով չէր ջարդը-
ված. 3 մեծ զօրապետ մեռան, 6 գնդա-
պետ (քօլօննել). 1 պուիկատիհա ըսված
զօրապետ. կօհէն աւելի վարի զօրապետ-
ներէն. իսկ հասարակ մոկովի պինուոր 12
ըստ ոմանց 25 հազար հոգի. ան օրվան ա-
րիւնին շատութիը դունայնի ջուրին մէջը
խառնըվելով՝ երկան բարակ ծաւալելով
կարմիր արիւնի գոյն գետմիներ եղած։
Անդի եղած փաշան տեսնալով մոկոնցնե-
րուն լցվիլը քաղքին մէջ մեծ քաջութի ցը-
ցուց. կարիճ պօշնախներէն 1300 ընտրը-
ված զօրք իրեն առնելով՝ ամիհիմը կրթը-
նելով սաստիկ ձեծկըվեցաւ. ամիհինալ
մովընին դնելով ինչվան եաքի շունչը կը-
ռուիլ. ասանկ ձեծկըվելովալ շատ մոկով
ջարդեցին հոն։ Ուվարօֆ շատ հեղ կը-
պատուիրեր իրեն մննող զօրացը չիջար-
դել քաղքցիքը, բայց դժար կըլլար ա-
նոնց կատաղութիը զսպելու. որովհետև

*չէին կարծէր որ տաճկերները անչափ դէմ պիտոր դնեն, անչափ մոսկով ջարդեն։ Իսմայիլին մէջն ճնացած քնակիչքը որոնց մէջը հրէայներուն կային՝ շատը նիքօլաւ փոխադրեցին որ վօլկա գետին վրայ է։ Այս կէց եղքը օգտուն եկաւ շուտիա նստաւ. գօձա եուսուֆ փաշան երրորդ անգամ վէզիր եղաւ։*

*Ինկլիզին ու սպանիային վէճը. ղէրսին ու մոսկովին դաշնադրութիւնը։*

1790–1791։

*Այս ատենները արտառոց վէճ մը եւաւ սպանիային ու ինկլիզին մէջ աս պատճառով. ինչպէս որ աս դարուս եղքին հատորընին մէջ պիտոր պատմենք, քուք ինկլիզը իրեք անգամ ովկիանոս ծովը Ամերիկայ երաւ նոր երկիրներ գտնալու, հասկըցուց որ ան նեղուցին հարաւային դիւերը որ ասիան ամերիկային կըզատէ, մէկ ծովեզերք մը կայ անծանօթ որուն մէջը լեցուն են մուշտակ (քիւրք) բերօղ կենդանիներ, հոն է նօդքասուննտ պարոյրը. աս լուրս (խապարս) առնելով ինկլիզներէն ոմանք սկսան հոն երթալ, անկից շատ մուշտակ բերելով էնուսմայէն [1] մեծ շահ ըրին, տես-*

---

(1) Ուր տեղ որ մուշտակ կելլայ ալէկնները կըզատեն առաջ էնուսմայէն կըսանին. մանաւանդ աս մուրին ալէկը ալնիւը էնուսմայէն կերթայ Մոյմը

նալով ուրիշ ինկիւիզիտներնալ՝ անոնքալ սկը-
սան աս առուտուրս ընել ու շահիլ։ Այսոր
վրայ խիստ տաքցան ամերիկա եղած սպա-
նիացիք, զինեալ նաւեր խրկեցին հոն տե-
ղը տեսնալու, ինկիւիզիտներուն ըրածը հաս-
կընալու. սպանիային հրամանատարը պըն-
դել սկսաւ որ՝ ան հողը իր ազգին կկրնար
հին իրաւամբք որովհետև իրենք գտերէին
ան կողմերը. անոր համար 1789 ապրիլի մէջ
բռնադատեց ինկիւիզիտները անկէց դուրս ել-
լալու, իրեն առաւ անոնց խանէրնին մահ-
սէնին։ Պախչօղ ինկիւիզիտները գանկտեցան
իրենց բառլամէնդին, բառլամէնդնալ Թա-
գաւորին. ինկիւիզիտն տերութիւնը խնդրեց
սպանիայէն աս բանիս վրէժխնդրութիւն հա-
տուցում ընելու պատերազմ սպառնալով,
հիմակուհիմա ազատ ըլլայ ըսալ նաւարը-
կութիւնը ան ծովին մէջ. սպանիացիք անանկ
պատասխան տըվին որ՝ բանը երկնցընել
կընայէին, անոր համար ինկիւիզիտը արտա-
քոյ կարգի դեսպան մը խրկեց սպանիա,
կամ պատերազմ կամ խաղաղութիւն ընե-
լու։ Ինկիւիզիտներուն սիրտը աւելի կըբռընկ
ցընէին եկող նաւապետները ըսելով որ՝
աս Ճամիւորդութիւնը շատ շահ կըլլար մեզի.
կրնանք սպանիային ունեցած երկիրները
ելլալ որ էն մէքսիքօ, ցամաք երկիր, ու
բերու ևն, ան երկիրներէն շատ աւար կըր-

---

մտիկ ըլլալնուն համար, մէյմընալ իրենց խիստ հա-
ճոյ ըլլալով ծանր գնով կառնեն. անանկ ալնիւ մուշ-
տակներ տոանալով չէն խգար, այլ անոնցմէ վար ինն-
րը հոն կըբերեն։

նանք ձեռք ձգել. հիմաալ լման ատենն է կըսեին. [illegible] որ ժէ. նահանգ ըսված նոր տէրութիւնը ավըրված էին սպանիացոց հետ միասիսիբի գետին պատճառովը, որուն համար ասոնք կըսեին որ՝ աշատ պիտոր ըլլայ անոր վրայի նաւարկութիւնը վերէն [illegible] վար. մաղըրպին թագաւորնալ ձեծ բանալու վրայ էր սպանիային հետ, չէվգան պաշարված էր, օռանննալ կէսմը շարժէն ավըրված կէսմընալ ձէզայիրնէրը կընեղկէին, ան ընտանեկան պայմանին որ սպանիացիք ունէին ֆրանսզին հետ՝ հիմա ոչնչացած էր ֆրանսան խառովութէ մէջ ըլլալով։

Ըլ տարաձայնութիւս լսելով մոսկովը՝ խօսք տըվավ սպանիային օգնուի խրկելու, դրաձի ըլլալով երէն ան կողմերը. որովհետև մոսկովին ձեռքն է ալքուշեան ու վօլըեան ըսված կղզիները՝ որ քալիֆօռնիային քիչ մը վեր կիյնան. իրաւ է որ միայն մոսկովը կընար ան դիէրը ցամաքի զօրք խրկել ու պաշտպանել. արդէն մոսկովցիները իրէնց վերոյիշեալ տեղվանքը աղէկ առուտուր կընէին աշխիւ մուշտակներ հանելով։ Այդ սպանիան կըմտածէր որ մոսկովին հետ խիստ դժար պիտոր ըլլար աս բանիս մէջ մէկ չափ մը դնել, որ սկսերէր աս մեծ առուտուրին համը առնելու. միտքնալ դրէրեր ամերիկային ցամաքը մոսկովը ժողովուրդ բերել բնակեցընել, անոր համար քիչ վտանգաւոր սեպեց իրէն ու աւելի օգտակար՝ ինկիլիզին հետ միանալ պայման մը դնելով, քան թէ մոսկովին հետ. ետ

տալով իրեն վաճառականներէն առած տե-
ղերնին մահկէնին, վճարելով նաև իրենց
եղած վնասը։ Այս պայմանադրութիւնը հաս-
տատուեցաւ 1790 Հոկտ. 28։

Այսիսկ 10. 1791 վառելա տեղը շվէտն ու
մոսկովը դաշնադրութիւն ըրին մարտավար
ու մարտապահ երկու տարւան. թէ որ
դուրսէն մէկ թշնամի մը վրանին ելլայ՝ ի-
րարու օգնել խոստանալով զօրք ու նաւ
տալով. աս բանս կուսդավոս շվէտին թա-
գաւորը ըրաւ. որովհետև զօրքով ֆրան-
սային վրայ պիտոր երթար, ֆրանսային
թագաւորը իր առջի իշխանութիւնը հանե-
լու համար՝ օրուն հետ անձնական բարե-
կամութիւն ունէր և դաշնադրութիւն, ուզեց
որ իրեն օգնական ունենայ մոսկովին ու լեհ-
բոլտոս կայսրը, որուն հետաւ նոյնպէս
խիստ բարեկամուէ ունեցած էր 1783 թի-
ւը քաղաքը։ Այսոնց ասանկ կապվելէն տա-
նիմարքան վախ մը ունեցաւ. բայց մոսկո-
վը ապահովցուց անիկայ՝ որ աս դաշնադ-
րութիւնս իրեն համար վախնալու բան մը
չիկար։

Տաճկին հալածելը նէմչէին հետ.

1791։

Պատերազմող տէրութիւնց նոյնպէս միջ-
նորդ եղող տէրութիւնց երես փոխանակերը
զիշխով ժողվրվեցան խաղաղութիւն ընելու
նէմչկի ու տաճկի միջ, որոնց միջ վէճ ծա-

գելով ուշացաւ. 1791 յունվ. 27 տաճիկը պատրաստ ցրցուց վինքը հաշտութիւն ընդունելու անանկ պահելով սահմանները ինչպես որ էին ծեծը չըսկըսած, հաստատ պահելով ամմէն հին դաշնադրութիւնները որ ինչվան հիմա եղած էին: Այսիսկի հաքի օրերը նեմչէն հասկըցուց իրեն երեսփոխանիներուն [1], որ հաշտութիւն չըլլար ինչվան որ տաճկին թագաւորը ասոնք չընդունի: ա. Տաճիկը նեմչէին տայ ան ամմէն խըվալելչիխին սահմանը որ կըհասնի ինչվան ունենա գետը՝ ինչպես որ 1783 ը. յովսեփ կայսեր ատենը տըված էր, սահմաննէրուն վրայի վէճը դադրեցընելու համար: բ. Տաճիկը նեմչէին տայ հին օրշովային բերդը իր ամմէն վիճակովը որ արդէնն եմ ցէին կիւնայ ասոր համար որ՝ տաճիկը իր դիացէն չիպահէց 1739 եղած պելիոդրատու դաշնադրութէ ան թէութիւնը ուր կըսէ թէ՝ օրշովան իր վիճակովը կայսեր ձեռքը դառնայ, թէ որ դաշնադրութէնէն տարի մը անցնելէն ետև տաճիկը իր խարճով ցէռնա պզտիկ գետը ուրիշ տեղ չիդարձը նէ, անանկ որ անոր վիճակը բոլորովին զատված մնայ դմիվարի պանտադի սահմաննէն: գ. Տաճկին մարդիկը չիներգն վաճառականութէ ու նաւարկութէ ազատութիւը որ նեմչէներըը ունին սև ծովին ու դունայի վրայ, ինչպես որ ունին ուրիշ գետերուն

---

(1) Նեմչէին երեսփոխաններըը էին պարոն հէրպէրդ ու էսդերազի կոմսը:

ու նաւահանգիստներուն մէջնալ, այլ մա-
նաւանդ օգնեն։ Ը. Ցաձիկը Թուղ վճարէ
ինչ առնելիք որ նեմչկները ունենին տաձ-
կին ժողովրդենէն ծեծը բացվելէն առաջ։
Ե. Ա Երոյիշեալ պետրոսատու դաշնադրուե-
մէջէն վերցվի ան ԹեուԹիը՝ որ կարգելէ
նեմչկին նոր բերդ մը շինելու դուռնային
ու սահայինը վրայ, ըստ որում խաբէուԹիւ
ու ամէնէն խրատանց դէմ խօԹած էր ան
ԹեուԹիը։ Ը. ՀօԹունը և ուլահ պուղ-
տանը աւանդ մնան կայսեր ձեռքը քանի
որ մոսկովին ու տաձկին մէջ ծեծը քշէ։
Ժ. Հինգ ԹեուԹիներուն վրայ արդէն խօս-
ված էր ռէյչէմնախ տեղը. հիմա միայն
վեցերորդին վրայ խիստ զարմացան տաձ-
կին երեսփոխանները. մօտիկ էր մայիս ա-
միսը լճենալու որով կըլճինար զինադուլին
(միւԹարէքէին) աատնը. ստանպօլէն պա-
տասխանի կըսպասէին, շատ օր էր որ ժո-
ղով չէին ըրած խօսակցելու, մէյմընալ
նայիս որ պատասխանին տեղը ինքը եուս-
սուֆ փաշան նոր վեզիրը հոն եկավ քանը
լճնցընելու. ասիկայ տեսնալով որ դժար
է իր խօսքին պառկեցընել ուրիշ տերու-
Թեանց երեսփոխանները՝ նոր ձամփայ մը
մտմտաց. վիշԹովցինները ոտք հանեց որ ան
երեսփոխանները վախցընեն, որպես զի ա-
նով բռնադատվին ձեռք դնեն ան Թեուեց
ինչ որ կառաջարկեր ինքը վեզիրը. քիչ
մնաց որ պիտոր մեռցընէին. ատոնք խալը-
սելու համար բան մը չկրնցուցած արտոր
նօք փախան եկան պուքրեշ. ինկիլիզին

պրուշին ֆիլհմինկին գեսպանները բարկա-
նալով աս բանիս վրայ գրեցին իրենց տե-
րուԹիւններուն, անոնքալ գրեցին տաճկին
որ՝ ԹԷ որ դուռը սուտ խուրըլայ աս բա-
նիս վրայ, աղգաց օրինաց դէմ բան է,
մենք մեզի կելլանք կըձգենք, դուք ձեզնէ
ինչ կուզէք ըրէք: Պարելի է որ վեզիրը
յանձնապաստան մարդ ըլլալով չէր ուզեր
որ հաշտուԹիւն ըլլայ, անոր համար ասանկ
ըրաւ, պատճառն որ գործքովալ շուտ մը
հրամմեց կամուրջներ (քէօփրիւներ) շի-
նել սիլիսԹրիին քովՀ միտքը դնելով որ
մսկովիներուն վրայ կռնըկին վազէ ուրա-
մանալով, իր զօրքը օրշօվայի ու պելիղրա-
տի մէջ տարածելով. բայց նեմչիները իր
միտքը հասկընալով նորին մտաւ զօրք
շատցուցին կլատօվա և ուննա պետին քո-
վերը. բոլոր մտաւ ազգնալ իրենց առջի
հանգստուԹիւնը գտած ըլլալով խոստացաւ
լեհբոլտոս կայսեր 60 հազար մարդ տալ
ԹԷ որ ծեծը քըշէ. բայց կայսրը հերիք սե-
պեց ան ատենը միայն 6 հազար մարդ առ-
նել, քանիմընալ դուռնդ ձիաւոր: Պիչնորդ
եղող տերուներները կըսիրեցընկին տաճկին
ԹԷ ինչպէս մսկովին ու նեմչին միացած էին
իրարու հետ, ինչպէս յովսեփ կայսեր ատեն՝
անանկալ հիմա լեհբոլտոսի ատեն, անոր
համար հաշտուԹիւն ընելին աղեկ բան չիկայ
կըսէին, միանգամայն իրենքալ կըսպառ-
նային:

Այս խօսքերուս տաճիկը մտիկ ընելով մի-
մին երեսփոխանները օգոստ. 4 նորին գնաց

Թով դարձան խօսակցելու տեղը, հոն ձեռք դրին միանձնաւոր խաղաղութեն նեմչիին ու տաճկին մէջը 14 թէուէթ սահմանելով, ամէն բանը Թողլով առջինին պէս ինչպէս որ էր 1788 փետր. 9։ Այսրը տաճկին դարձուց ամէն առնուած տեղվանքը, սահմանները որոշելով ինչպէս որ էր կռիւէն առաջ, միայն Օթաուոնը իր վիճակովը իրեն պահեց ինչուան որ մոսկովին հետաւ հաշտուելը կատարեալ լինայ։ Այսկայ եղաւ առջի որոշեալ դաշնադրութիւնը նեմչիին ու տաճկին մէջ. ինչու որ հնուց եղած հաշտուելները ը. սուլդան միւրատեն սկսեալ (որ ֆաթիհ սուլդան ը. Մհմմտին հայրն էր,) ինչուան աս ատեն մէյ մէկ վնասադուլ (միւթարէքէ) էին 20. 25 տարուան, որոնք լինալու ատենը երբեմն կընորոգվէին. իսկ հիմակվանը անանկ հաստատուն եղաւ որ՝ անոր զօրութենէն նեմչիները ամէն իրենց արտուներնին վայելեցին ինչ որ առաջուց ունէին։ Այսկէց զատ տաճկին մէկ ուրիշ դաշնադրութեամբնալ ձեռք դրաւ նոյն օրը. նեմչիին տալով հին օրշովա ըսուած բերդը գեղը իր վիճակովը ինչուան ցկընտ պզտիկ ջուրը, բայց խօսք դնելով որ ամրութեն մը չվնչինք ոչ հոն ոչ ցեդդինը և ոչ տեղեանք ամէն գաւառովը ուր որ կրտսրածվն տաճկին խրվաթըլխը ինչուան ունենա դետին ձախ կողմը իբր 90 մղոն երկան, և իբր 10. 15 մղոն լան. աս տեղվանքը նեմչիին աղեկ եղաւ, երկու բերդնալ քարձր տեղվանք ըլլալով, մանաւանդ հին օրշո-

վան իբր նախապարիսպ մինչ դմվարու պանդին. խրվաթլըխին ասով բոլորեալ եղավ, որուն մէջն է գրեթէ ամմէն խըլ-

վաթլըխին թագաւորութիւնը։

Այս հաշտութիւնը հաստատվելէն ետև գոր ծադրութիւնը ուշացաւ. տաճկին երեսփո խանները դժվարութիւն կըհանեին մանր ու մունը բանկրու վրայ. Թէպէտ սահմանն բուն բաժանումը 1739 պէլկրատ եղած դաշնադրութիւն մէջ մանրամասն որոշված էր, բայց տաճկընները պզտիկ բանկրու վրայ վէճ կըհանեին գեղացոցմէ վկայութիւն բե րելով, որոնց յատուկ է ինչ որ իրենց շա հաւոր է ան զուրցել. ասկէց նորինոր վէճ բացվեցաւ մէջերնին. ձիւննալ շատնալով սահմանակից տեղվանքը դուռնային ու սա վային քովերը՝ ուշացան ետ տալու պէլկրատ ու պզտիկ ուլահը ինչվան ալուճ գե աը։ Դժվարալ եղավ սիրտերնին շինել պօշնախներուն և ան տաճկընկերուն որ տաճկին խրվաթլըխին մէջը տեղվանք ու նէին, հիմա անոնք նեմչկին ձեռքը անցնե լով ինչպէս պիտոր զրկըվինք կըսէին. ասոնց սիրտը խաղաղասեր սուլդան սելիմը շինեց խօսք տալով որ քաշած վնասնին հատու ցանէ, նոյնչափ երկիր իրենց տալով պօս նային ներսի դիները. ասանկալ ընելով չորս տարի անցաւ ինչվան որ աս բանկրս շարը վեցան։

Վաստիկ պատուհար հանեց սուլդան սելիմը ոմ որ նեմչկի գերի առերը՝ ամմինոնալ ետ դարձընէն, խոստանալով գինը վճա-

րել. ընդհանուր ներումի տրվավ ուլահյոց որ ուզեցին իրենց տերը փոխել. երկու տարի չափ քիչցուց իրենց սովորական տուրքը։ Այս աղեկուԹիներուն վրայ որ ըրավ սուլդան սելիմը շատ կըգովին զինքը եւրոպայի պատմագիրք. ուլահ պէտի ըրավ միքայել սուցցօն. նեմցկնալ ազատեց իփսիլանդի պուղտանին պէսը. երկու տերուԹիք նեմցկին ու տաձկին՝ իրարու նոր դեսպան նէր խրկեցին շնորհաւորելու Թէ հաշտուԹիը և Թէ նոր Թախտ նստընին։ Ամանք վար կըզարնեն ասանկ հաշտուԹիւն ընելը լեհաստոս կայսեր իրեն վախտ բնուԹիը տալով, բայց ինքը իգալիայի մէջ կենցաղակըԹուԹէ խելքը աղեկ տորմած ըլլալով խելացի փըԹելով աս հաշտուԹիս արտորաց ընելու[1], որով իրեք աղեկուԹիւն ըրավ իր տերուԹիը. մէյմի՝ քանի որ իր երկրին մէջնալ էր բռնկած ան ապստամբուԹէ ոգին՝ որ ֆրանսայի մէջ սկսելով ամէն տեղ մարդիկ խրկերէին ժողովուրդը ոտք հանելու, ինքը նայեցաւ տաձկին հետ հաշտուԹիւ ընելու՝ որպէս զի ան զօրքով աս բանիս վրայ հոգ տանի զուսպ պահէ, մանաւանդ որ գերմանիայի մէջնալ տեղ տեղ սկսերէր իր եղբօրը ըրածներուն պատճառովը. երկրորդ՝ անանկ վախնալու տեն արդէն ապստամբած ստորին նա-

---

(1) Տէրունէ աշնա ծ, Թաշըտաէն պիկանէ սանսընլար,
պու պէր վնպա ըէվաձ տըր, ադիւ օվ տիվանէ սանսընլար։

հանգնելը իր տակը գարձընէ. երրորդ՝ պրուշը իրեն թշնամի չհանէ անանկ վտանգաւոր ատեն՝ որ վինքը տաձկին պաշտպանող հռչակելով միշտ կըսպառնար նեմցիին վրան: Վնաս համար խելացի կենցաղակիրթ մարդիկ շատ դովեցին աս բանիս մէջ լեռըլտոսին խելքը:

## Ը. Վեպին մէջ եղած փոփոխութիւնները.

### 1791:

Ը վեպին մէջնալ սկսերէր ձայնէր փսըլթուքնէր ելլալ ապստամբելու. կուսդավոսին քայարձակ թագաւորութիւնը վրայ որ 1788 և 1789 ձեռք ձգերէր՝ շատ կոխային աւելի շվեհին աղնուականքը. կուսդավոս վարպետ կենցաղագէտ ըլլալով շատ ուրիշ կերպ կըվարվէր իր բանը շտկելու քան ինչ որ լեհերը կըվարվէին. լսածին պէս շվեհներուն խորհուրդը մտածեց մէկ ընդհանուր ժողով մը ընել ձնֆլէ կամ կնֆլէ ծովեզերեայ քաղաքը որ կոսթֆրիզիա կամ ձոսթֆրիզիա գաւառին մէջն է. ամենանալ զարմացան որ անանկ պզտիկ քաղքին մէջ ինչպես ժողովը ընել կուտար, որուն մէջը իբր 6 հազար հոգի կային, կարելի եր թէ բաւական ապրուստալ չիգտնային. բայց խիստ զգուշանալու համար չուզեց ընդհանրական մայր քաղքին մէջ ընել ժողովը. աւելի զգուշութեն բանեցընելու համար պատուիրեց ամենն վինուորական ու քաղաքա-

կան հաղարապետաց (որ աղնուականաց կարգին կը վերաբերէին), իրենց զօրաց մէջը մնալ, ուր որ տեղաւորված էին չի-շարժիլ ամենևին ան տեղերէն. ասանկով աղնուականաց կարգը որ առջի ժողովեն-բուն ատենը աւելի ընտիր եր և աւելի զօ-բաւոր՝ հիմա ուրիշներէն տակար եղավ. կէ-ֆլէին մէջը 800 զօրք կեցուց կուսդավոս իր պահապան զօրքերէն, օսթրօկօթիային մէջ նալ մէկ բանակ մը։

Յունվարի 28 ժողովը սկսաւ ուր 118 աղնուականք ժողվվեցան առջի կարգէն, 110 երկրորդ կարգէն, 187 երրորդ կար-գէն. քաղքներէը այնչափ հաւատարմու-նէին կուսդավոսին վրայ որ իրեն թո-ղուցին՝ ով որ ուզէ իրենցմէ անիկայ կան-չէ ժողովը։ Ինքը կուսդավոս սկսաւ ժովո-վը բանալ իրեն գերազանց Ճարտասանու-թիը համառօտելով վերինիվար պատմեց ինչ որ հանդիպեցաւ շվէտի մէջ 1772 եղած սահմանադրութենէն ետև. կենդանի խօս-քերով նկարագրեց դուրսի ու ներսի կա-ցութիը շվէտի Թագաւորութե. ըրցուց որ ինչչափ հարկաւոր եր քաղաքական միաբա-նութե աղնուականաց իրեք կարգին մէջը, և հոգ տանիլ ամէն սրտով որ եկամուտը աղեկ կարգի մը մէջ դրվի. իր ամէն խօս-քին մէջ կըցըցներ սաստիկ սէր հայրե-նեացը վրայ։ Ասիկայ եղավ անանկ աղեկ օրինաճ ատենաբանութի մը զօրաւոր պատ-Ճառներով խօսվաճ՝ որ շվէտի պատմու-թե մէջ իբրև մէկ աղնիւ յիշատակարան

մը պահելու արժանի եղավ. բայց այսչափ խօսք լսելէն ետևաւ չկրցակցեցաւ մեջերնին խառնուելիքը, ինչպես որ առջի ժողովներուն մէջ անանկալ հիմա եղավ. ան կողմը որ հակառակ էր արքունեաց՝ միշտ նոր ուժ առնելու հետ էր, պատճառն որ ազնուականաց կարգը իրեն կողմնակից մնալ. դիկ գտաւ քաղքացոց ու եկեղեցականաց կարգին մէջ՝ նաև գեղացոց կարգին մէջ՝ որ իրենց մնացածը պիտոր տպեին։

Ըն մնալուին որ մէյմը կարմատանայ (քէօք կըկապէ) մեկ ազգի մը մէջ, որչափ դժար կըլլայ անիկայ շտկել. ամմէն մեկ շտկելու առեննալ մէյ մեկ վտանգ կըլլայ մահաբեր. կուսդաւոս Հաղիւ դադրեցուց տպագրութիւնը որ սկսեր էր, բայց ժողովականաց շատը աս բանիս վրայ խիստ տաքցան, կուսդաւոսին առաջարկութիւնները կըմերժէին. որ մէյմը առաջարկեց մեկ միլիոն ու 200 հազար ռխալի կամաւոր ընծայ տալ, որովհետև պատերազմը հատուցերը ամմէն շլէտին խաշնան. ինքը կուզէր որ գեղացիներուն ու արհեստաւորներուն վրայէն տուրքերը թեթևցընէ, որոնց մեծ մասը աստնք էին վճարօղ, զօրքնուէ անոնց տուները չնեղկէ բնակելու. մէյմընալ առաջարկեց որ Վորձ վաբանութիւնը ապահովութիւնը ըսված օրէնքը 1789 սահմանվածի՝ բռնվի իբրև հիմնական օրէնք տերութեան։ Ժողովին մեծ հաւանութիւնը շատ յորդորեց կուսդաւոս Թագաւորը աս բանիս եռանդն ընկնալ, ցըցընելով ինչ չար հետևու-

Թէնէր կրնային ելլալու. կուսդաւոս մարիկ դրաւ անոր խօսքին. առաջին կարգի ազնուականքալ շատ հնորհակալ եղան մատէշալին աս բանիս համար. իրեն պատկերը ժողովին տեղը դրին, ոսկի միտալներ տպեցին իրեն պատիւ։

Այս բանս անչափ մնաւ կուսդաւոսին սիրտը՝ որ վախնալէն չըլլայ Թէ ֆրանսային ժողովքին դիպուածնները հոսալ ըլլան՝ ժողովը վերջացուց պատրուակ (մահանայ) բերելով իրեն մէկ նոր ՀամիորդուԹիւն մը ընելու նեմցկի մէջ ըսբա տեղը, առողջարար ջուրերը խմելու մէկ խոցին համար՝ որ Թևին վրայ եղերեր ծեծին մէջ. գնաց հոն քանի մը ամիս կեցաւ բայց ջուրերը չխմեց. անոր համար ըսին որ՝ ուրիշ մեքով հոն գացերեր. ֆրանսայի Թագաւորին փախչիլը ան առիԹը պատահելով՝ կուսդաւոսնալ պօվիլ կոմը իրեն զօրապետ ընելով՝ ամէնուն կարծիքը աս եղավ որ կուսդաւոս շատ զօրք իրեն առնելով պիտոր երԹար ֆրանսային Թագաւորը առջի տերուԹէ մէջ նստեցընէր. որուն համար 200 հազարն աւելի զօրք կըպատրաստուվէր։

## Տաճկին ու Մոսկովին ծեծկըվելը. Բօղեմբինին հետևելը.

1791։

Լեհըստոս կայսրը հաշտութիւնը լինցընելէն ետև Ֆիօռէնցա գնաց նաբօլիի թագաւորին ու թագուհիին հետ, ուր հանդէս կընէին դօսքանայուն նոր դուքս նստելուն համար, որ էր Ֆերտինանտոս արշիդուքսը։ Այդ մոսկովներուն հետ տաճկին հաշտութիւնը լինցած չըլլալով նորէն ծեծ կընէին. բօղեմբին իշխանը բեդրօպուրկ գացած ըլլալով բանի մը համար՝ ռէքնին իշխանը զօրագլուխ էր եղած մոսկովներուն վրայ. ասոր հրամանովը կալլիցին իշխանը ապրիլի մէջ իր զօրքով դուռնա գետը անցաւ. ասանկ ըրավ նաև քուդուսօֆ զօրապետը դուլջայուն քով, որ ապրիլին 10 յարձակեցաւ մէջինի քաղքին վրայ կոտրտելով. և որովհետև մոսկովը չէր ուզեր ան քաղաքը իր ձեռքը պահել, իր ամբողջ թիւնները պարուրով երկինքը հանեց, մէջինները քիչ մը օգուին գաւառը տարաւ քիչմընալ քեֆէ։ Մոսկովները քունեցաւ ցամաք կողմն մտան. հասան ան ծայրը ուսկից խպրակիլ կերևար, որ դունայուն ան ձիւղին աչ դին է որ մէջինին կերթայ ինչվան հոն. ուրիշ զօրապետը իր պզտիկ նաւերով հոն հասած ցամաքը զօրք էր հանած. տաճկընները վախան մտան մէկ բերդ

մը որ գետին մկալ դին էր, ուր փաշայ մը կընստեր. ռխլաս տեսնալով ասոնց փախչիլը քանի մը նաւ ղազախ խրկեց, որ գիշերանց վրայ յարձրկեցան մտան կոտրելով, բերդը առնելին ետև բոլորովին քակեցին։ Ալ Էդիրը հասկընալով որ մոսկովները խպրախլին վրայ պիտոր գային, 10 հազար մարդ աւելցուց հոն, ուրիշ զօրքալ խրկեց մոսկովներուն գալը արգելելու. ասոնք մայիսի 1 մոսկովին հետ զարնըվեցան. մոսկովին զնդապետը քիրն անուն 36 ժամ ծեծկըվեցաւ, բայց չկրնալով տաճկին բազմութեը դէմ դնել փախաւ. 19 Թօփ 3 շայքա 17 պղտիկ նաւեր տաճկին ձեռքը Թողուց. տաճկընները 600 մոսկով կոտրեցին 2 հազարապետ։ Ալս լսելով կալնչին իշխանը մկ դիկն՝ ռէբնին իշխանը մկալ դիսացկն՝ եկան մաջինին վրայ, ուր աւերնելին մոսկով մը չըլլալով տաճկընները նորըն աւերելին. յունիսի 17 ռէբնին վրայ յարձրկելով կոտրելով աւաւ։ Տաճկին ժողովուրդը ձանձրցած ըլլալով պատերազմին՝ իր ձգոհանքը կրցըցըներ յաձախ կրակ ձգելով ստանալը ինչպես որ սովորուն է 1790. 1791. անոնցմէ մկիը եղավ յունիսի 1, որ 9 հազար տուն ու խանութ երեց ըսին նաև մարդ. եղած վնասը 80 հազար քեսկին աւելի դրին։

Ալուդան սելիմը դեսպան խրկեց Ը. կուլնիեմսի պրուշի Թագաւորին խոստացած օգնութիները ուղելու համար. բայց պրուշնալ ինկիլնզնալ կընայեին որ կենցաղագետ

Համիայնքով իրենց ուզածը լմնցընեն քան
Թէ ձեծի մէջ մտնալով, ուսկից կրնար ի-
րենց ձեաս մը հեռևելու. և Թէպէտ ին-
կիլիզը ամէն Թագաւորներուն գրեց հրա-
տարակելով որ իրեն նաւաստրմիզը պալ-
դիկ ծովը պիտոր խրկեր, բռնադատելով
մոսկովը որ հաշտուԹի ընե ամէն բան ետ
տալով ինչպես որ առաջ եր, և ինչպես որ
կուզեին ծովեղերեայ տերուԹիք, բայց այս
նաւաստրմիզը որ 35 նաւ եին երկու խա-
փախով՝ տեղերնեն չելան, մանիքա նեղու-
ցեն ոչ երբեք հեռըցան. միայն ՖրխսաԹա
մը ուրիշ երկու նաւով գնաց փնտռելու որ
դին քիչ վտանգաւոր եր պալդիկ ծովին նե-
ղուցը (պօղազը) մտնալու համար. հասաւ
ինչվան պելդ՝ անկեց նորեն մնաւ որ հեղի-
նե տեղը. որովհետև բաւլամենդին մէջ
ան վաճառականները որ շատ առուտուր
կընեին մոսկովին հետ՝ էին ուզեր որ ձեծ
բացվի, իրենց վաստրկին ձեաս ըլլայ. ան
միջոցին մէջ մոսկովացի նոր պատրաստուԹ
կըտեսնար նաւերու՝ ինկիլիզին դէմ դնե-
լու համար: Վ՛սանկ ըլլալով Ջանացին խօս-
քի բերելով լմնցընել. բիդդ ինկիլիզին վե-
զիրը դեսպան խրկեց մոսկովին Ֆաւքնեռ
խորհրդականը, որ կատարինե Թագուհին
սիրով ընդունելով իր սեղանը հրաւիրեց
ցարաքօզել տեղը. հոն երկան խօսակցելով
իր ուզածը ընդունել տրվավ. անոր համար
տանիմարքային խմացուց կատարինեն, ու-
զելով իրմե որ միջնորդ ըլլայ հաշտուԹիը
լմնցընելու, օգուն մոսկովին ձեռքը Թող-

լով, տնեսթեր կամ Թուռլա գետը սահ-
ման ըլլալով տաճկին ու մոսկովին մէջը։
Տանիմառքային վեզիրը պետրոսթօրֆ կոմ
սը աս թէուենները հասկըցուց մէկալ մէջ
մնսօղ տէրութեց՝ որոնք ամէնէնալ հաւ-
նեցան. բայց իրենց ուզածին մէկնալ աս
էր որ՝ մոսկովը խօսք տայ ինչ նոր երկիր
ձեռքը անցնի աս հաշտութես մէջ ամենևին
չամրցընէ. ասոր պատասխանը կուզէին.
որոնց աս տըվին պատասխան որ՝ մոսկովը
որովհետև ամէնուն ազատութէ պիտոր
տայ Թուռլա գետին վրայ նաւարկելու,
ալ աւելորդ էր աս խնդիրս առաջարկե-
լու։ Ընկից ետև սկսան ասոնք տաճիկը
յորդորելու, օգուն մոսկովին ձեռքը Թող
լու համար. չէնէ հաշտութէ չըլլար ըսին,
մինքալ կըքաշվինք բանի մը չէնք խառնը-
վիր. ասոր վրայ հրաման գնաց վեզիրին
հաշտութէն խօրաթելու ան կերպով ինչ որ
դէնէն խրկեցին իրեն։ Բայց վեզիրը եռա-
սուֆ փաշան ուղելով անուն հանել՝ ամիս
ու կէս պարապ եղած ատենը զօրք ժողվե-
լու հետ եղավ պօսնայէն առնալուտլուս-
խէն 100 հազարէն աւելի զօրք պատրաս-
տելով ուզեց անանկ մը մոսկովին վրայ վա-
զել որ իսմայիլ նորէն առնէ. ռէբնին իշ-
խանը հասկընալով անոր միտքը՝ յուլիսի
8 իր ամէն զօրքով որ 45 հազար կըհաս-
նէին՝ դունան անցաւ քալասին քովէն. աւէ
սոյն 10 դիմադէմ զարնըվելով վեզիրին
զօրքը կոտրըվեցաւ. աս կոտրըվիլը անա-
տոլցիք ռումելցոց վրայ, ռումելցիք անա-

տօլցոց վրա ձգելով, 10, օրէն ետև փախչօղ տաճկները մեջէրնին մեծ կռիւ մը ըրին իրար վարկին։

Այս առենները կուտօվից մսկովին զօրապետնալ քուպանի մէջ ու կովկաս (եալպուշ սար) լեռան դիւերը վազելով Այնաբա քաղքին վրայ եկավ, որ մէկ աղէկ բերդ մը ունէր խիստ բարձր պատերով շինած, մէջնալ 15 հազար թաթար զօրք կար, որ դուրսէն շինած պատնէշին (մեթերիզին) մէջ կրկեսային. օգոստոսի 2 մսկովիները անոր վրայ յարձակելով մէջը մտան, կոտրելով մէջի եղած զօրքը որ քաջութիւն դէմ կըդնէին. բերդին մէջի եղողները դերի էյնալով անձնատուր եղան. չէյին մանսուրնալ որ առաջները յիշերենք դերի ընկավ. կուտօվից առաւ նաև Սուճուպ քալէն, աս պատերազմը վերջինը եղավ, ուր որ առաջ սկսերէր՝ հոն վերջացաւ։ Այսոր վրայ վէզիրը արտորայ հաշտութիւն խօրաթելու ինչպէս որ հրամայեր սուլդան սելիմն, ռէբնին իշխանէն զինադուլ (միւթարէքէ) խնդրելով՝ որ տասը ամբողջ համար խօսք կապեցին. ան առենը ձեռք դրին հաստատեցին հաշտութեան նախադուռը. մէյմը որ՝ տաճիկը օղուն իր ամէնն վիճակովը մսկովին տայ, որուն վիճակը կամ երկիրը 120 մղոն երկայն կերթայ, 100 մղոն լայն, տեսութիւնին (դուռլայնին) տեղերնին ու պօկ գետերուն մէջ որոնք ամէնտեղ յարմար են նաւարկութեան. երկրորդ որ՝ պարպարըշնէրուն ասպատակութիւնը ծովուն

վրայ տաճկիկը դադրեցընել տայ մոսկովի նաւերուն համար : Այս ձեռք դնելը եղավ գիշերովին մէջ եղած հաշտութենէն 18 օր ետև օգոստոսի 22 . ան օրնալ սև ծովին մէջը ուսջաքօվ մոսկովի ռիալին վաւնայէն քիչ մը հեռու խիստ սաստիկ կռիւ եր ըլած տաճկին նաւերուն հետ :

Այս հաշտութենէ լմննալը մոսկովներուն աղէկ եղավ ասոր համար որ՝ ինչպես իրենք տարի առաջ նեմցիին զօրաց մէջը գէշ պլշտրկվող հիվանդութիմնին ընկած վրի մաճառքի ու դմբվարի պանտադին մէջ՝ ասանկալ հիմա ուլահ պուղտանի ու քովի երկիրներուն մէջ ընկերեր , ուսկից կանցնին դունայիին զանազան ձիւղերը . հոն գետինը թաց ու ցեխոտ ( ճամուռոտ ) ըլլալով՝ բնակիչքը անհոգ՝ ամրուվան մէջ անանկ գոլոշտիք կըհանեն՝որ մահաբեր տենդ ( սըթմա ) կըբերեն աւելի օտարականաց : Հաշտուե նախագուռը հաստատելին ետև բուն հաշտութիը խօսելու տեղ սահմանեցին եաշ քաղաքը . բօդեմքին իշխանը որ զօրագլուխ եր՝ հիմա երեսփոխան եղավ մոսկովի տէրութիը . ասիկայ քալասին մէջ բռնըված եր տիրացաւէն ( չիւրիւկ հիւմայէն ) , ուսկից որ մոսկովին շատ մեծծերը բռնըվերէին նաև ռէբնին իշխանը , տեղէն փախչելով միայն խալըսերէին . բօդեմքին նալ առաջ հուշ ետքը եաշ փախչելով քիչ մը առողջութիե գտեր . կատարինէ թագուհին լսածին պես իրեն երկու վարպետ բժիշկներէն հոն խրկեց , որոնք երբոր ե-

կան՝ քիչ մը աղեկցած գտան, որովհետև քնուԹքալ զօրաւոր առողջ մարդ էր. բայց իր զբաղմունքին մէջ նորէն մոնալով մանաւանդ տաձկին հետ հաշտուԹի խօրատԹելու պատճառով՝ դէղ ընելուալ հոդ չի տանելով՝ իրեն զօրաւոր խառնուածոյն վրայ ապաւինելով՝ ոգելիր ըմպելինէրալ խմելէն չիդադրելով՝ աս բանէրէս նորէն դարձաւ իր ցաւը ալ աւելի դէշ հիվընտացաւ. տեսնալով իր վերջանալը կարծեց որ դէշ օդէն հեռընալու ըլլայ՝ կըընտայ, ուզեց որ միւքօլկեֆքա տանին գինքը, որ պօկ գետին վրայ է, օդնալ առողջ է. կամ ըստ ոմանց նիքօլակֆ պզտիկ քաղաքը ուզեց երԹալ որ ինքը շինել տըվերէր, ուր տեղ որ եուկու Ջուրը պօկ գետը կըխառնըվի. քանի որ ուրիշներըը յորդորեցին ձամ փայ չընել մտիկ չըրավ. 8 մղոն ձամփայ չառած անանկ ծանրըցաւ որ՝ առապայինշարժմունքինալ չիդիմանալով գինկրցաւ անկարձ ձամփան ընել, ինքը խնդրեց առապայէն վար ինչեցընել գինքը որ դոնե քիչ տանջանքով հոգին տայ. հոն քարի վրայ ընկած անանկ բռնեց տենդը՝ որ ան բայ անապատ տեղը հոգին տըվավ 52 տարվան. 1791 հոկտ. 16. իրեն մարմինը առաջ հուշ բերին, իրեք օր հոն կեցընելէն հանդես ընելէն ետև բերդրօպուրկ տարին: Մեծ մեռնելովը տաձկըներըը իրենց մէկ մեծ թշնամիէ մը խալըսեցան. իր մեռնելէն ուԹն օր առաջ վերջիրը իրեն աղաչանք էր իրկեր հաշտուԹե քանի մը ԹէուԹի ինձէ

ցընել որ խիստ ծանր էին, բայց բօդէմքին խստութէ՛ն պատասխանելէր, նորին ծեծ բանալ կուզէր։

Անպէտ կատարելոյ թագուհին շատ մարդ մեծցուցեր էր, բայց բօդէմքինին մենծութէ՛ն մէկը չկրնար։ Եղավ վէզիր ու Փէյտ մա՛ռեշալ, գլուխ հրամանատար մոսկովին ամ՛ին զօրացը։ գլուխ ամ՛ին նաւատորմիղին (ծովնամայնէրուն) որ կըգտնըվին սև ու ազախ ծովին մէջ, նաև կասպից ծովին մէջ։ գլուխ պատերազմի վրայ եղած աւեանին։ ընդհանուր հոգաբարձու (նազըր) ամ՛ին գործոց։ գլուխ ամ՛ին պատերազմական շէնքերուն ու Թօփ Թափելու տեղերուն։ ընդհանուր կառավար կատարելնէլավիւ տաւրոսի (խրըմու)։ ընդհանուր Թիկնապահ, շամպէլան ։ որոնք Թէ որ ամ՛ինննալ կիշէլու ըլլանք, խիստ երկան կըլլայ։ Նմանկալ շատ ասպետութէ՛ն նշաններ ունեցաւ, նշան Եըլն անդրէասի կարգին, Եբ աղեքսանդրի նէվաքին, Եբ գեորգայ, Եբ վլատիմիրայ, Եբ աննայի։ ուրիշ Թագաւորնէրուն ասպետութէ՛ն նշաններնալ ունեցաւ։ սև ու Ձերմակ արծուիի ասպետութիը պրուշին, սրբոյն ստեփաննոսի լեհին, փրկ ըսվաճ ասպետութէ՛ր տանիմարքային, սերբ բեան ասպետութէ՛ր շվէտին։ Նրին ունևորութէ՛ննալ մէկ մանաւորի մը կէօրէ շատ մեծ բան ելավ քովին, որ էր 40 միլիոն ռուպլիին աւելի։ Նչափ մենծութէ՛ն հասաւ բօդէմքին իշխանը գրիգոր աղեքսանդրաւրիկեան իրեն քանքարին ու բարի սըր-

տին Համար. պատճառն որ ասիկայ լեհի ցեղէ մը ինձած ըլլալով՝ բայց մոսկովին ծառայութեանը մէջ գտնըվելով՝ առաջուցմէ ինչվան եաքը միշտ օգուտը փառքը մոսկովի տերութեէ նայեցաւ չեթէ իրենը. կատարիսէ Թագուհինալ Ճանչնալով իր արդիւնքը իր խելքը՝ միշտ առաջ քաշելու հետ եղավ. որ է հին ինչևիցէ Հասարակութեէ առաջ երթալու, երբոր գլխաւորը ան Հասարակութեէ կամ տերութեան՝ խեղճացեալները քանքարաւորները առաջ քաշելու հետ կըլլայ: Ասոդէնքին կենցաղագէտ մարդ ըլլալով ուներ մէկ զարմանալի խելք մը կառավարութեէ, հերիք ըլլայ ըսելը որ կառավարութեէ ամէնէն բանի մէջ ասիկայ կըխառնըվեր. ասոր Հրամանին տակն եր ինչվան նաև բէդրօպուրկին խորհրդարանը. կատարինէ Թագուհին որ ասչափ ծաղկեցուց իրեն տերութեը՝ ասոր խորհրդով շարժելովը ծաղկեցուց. մէկ մեծ խելք մը նաև կատարինէին ան եղավ որ՝ Ճիզվիթնէրը իր երկրին մէջը այսինքն Ճերմակ ռուսիայի մէջ պահեց, որպես զի անկիրթ ազգը իրենց վարպետութեը կրթեն անոնք. աս բանիս մեծ պատճառ բօդէնքինը եղավ. անոր Համար ազէվէտօ Ճիզվիթը իրեն մէկ գիրքը բօդէնքին իշխանին նուիրելով, լատին ոտանաւորով կըսիշէ գովասանքով: Պատերազմի արհեստին մէջնալ անանկ վարպետ, քաջասիրտ, արի եղավ որ՝ Ին-

յաղթելի իշխան ըսվեցաւ:

## Մոսկովին հաշտութիւնը Լեհաստանի։

1792։

Մոսկովը բոդէմքինին տեղը պէսԹպօրօսքօվ կոմսը եաշ խրկեց, որ իրենց ըհխս էֆէնտին էր. ասիկայ 1791 դեկտ. մէջ հոն հասնելով՝ մայիսի քաղաքը խօսեցան հաշտութեան վրայ, որ ետքը 1792 յունվարի 11 ձեռք դրին հուշ գեղին մէջը որ բրուԹ գետէն քիչ մը հեռու է. հաշտութիւնը աս ԹԷուԹեց վրայ հաստատեցին։

ա. Սկսէց ետքը անկեղծ ու ձշմարիտ բարեկամութիւն ըլլայ մոսկովին ու տաձկի տէրութեց մէջ։

բ. Ամէն եղած դաշնադրութիւնները լինչպէս որ ծեծէն առաջ անանկալ հիմա օրինաւոր ըլլան, իրենց ամէն զօրութիւնը ունենան։

գ. Տնեսութիւնը կամ թուրլա գետը ըլլայ սահման տաձկին ու մոսկովի տէրութեց մէջ, ամէն երկիր որ գետին ալ դին կկլնան՝ տաձկին ձեռքը տրվին։

դ. Ասոր ներհակ ամէն երկիր ձախ դին ընկած՝ օզու քերդնալ իրեն վիձակով մէկ տեղ՝ մնան մոսկովին կատարեալ ու մշտնջենաւոր իշխանութեան տակը։

ե. Հաստատվին նորէն դարձվին ուրիշ պուղտանին գլխաւոր քաղքերնէրուն հին իրաւունքը և արտոնութիւնները. երկու գաւառին քնակիչքնալ երկու

տարի ազատ ըլլան ամէնէն հարկէն (խա
րաձէն), որոնք որ ուզենան ուրիշ տեղ
երթալ իրենց ապրանքը ծախելով՝ հա
մարձակ ընեն առանց մէկ ծանրութե
մը նեղութե մը տալու։

Ը. Տաձկին դուռը ասկից ետքը պաշտպան
կենայ որ հանգիստ ձնան քարթլին ու
վրաստանին թագաւորութիւնները. մե
տիկ եղող փաշայներուն ապստրելով
որ ամենևին մէկ պատրուակով (մա
հանայով) մը նեղութե չիտան։

Թ. Պանակալ ընելու հոգ տարվի կովկա
սեան (եալպուզ սարին) երկիրներուն
համար։

Ժ. Տաձկին թագաւորը ամէն պատշաճ
միջոց բանեցընէ որ շուտ մը դադրի
պարպարըշներուն ասպատակութիւնը
(խուրսանտութիւնը) մոսկովի ու իր
դաշնակցաց նաւերուն վրայ։

ԺԱ. Տաձկին թագաւորը պարտաւորեալ
ըլլայ հատուցանել մոսկովի բայկնե
րուն ան վնասները՝ որ կրնան քաշել
թէ որ վերոյիշեալ իրեք թէուխնները
չիպահուին։

ԺԲ. Երբ ուշտ մը ազատվին մոսկովին հոռմին
պուղտանին ու լեհին բանտարկեալ
նները որ մոսկովի տակ զինուոր են գըլ
ված. ծախու առնելով խալըսին ա
նոնքալ որ աս բանիս համար գերիի
պէս ծախվերեն։

Պոնցմէ զատ երկու ուրիշ թէուխնները
ըրին ծածուկ։ ԺԳ. Տաձիկը ասկից ետքը

ամենևին չիմանայ լեհի բանին (մասլահաթին) մէջ, ինչ գալու որ ըլլայ ան թագաւորութե՛ն վրայ. ստպգ դիանալով որ բան մը չըլլըվիր առանց նեմցիին ու պրուշին միաբանութե՛ն։ ե. տաձկին թագաւորը 12 միլիոն ղուրուշ վճարէ մոսկովին իրէք անգամն իբը մէկ հատուցում մը ընելու համար։ Այայ երբոր երկու դիացին ձեռք դրվեցաւ, մոսկովին երեսփոխանը յայտնեց որ՝ մոսկովին տերութիը աս 12 միլիոնը առնելէն ետ կրկենայ։

## Ֆրանսային խառնըվիը պատրէ վրայօ։

## 1787։

Ասոր պատճառը աղէկ հասկընալու համար աղէկ միտք բերելու է ինչ որ առաջները գրեցինք, թէ ֆրանսային եկամուտը եղերեր մէկ խառնուրդ կռնձմըտած բան մը, չէր ձանչցըվեր ո՛չ եկածը ո՛չ գացածը. ասիկայ մէկ պակսութիւնմընէ որ յաձախ կըպատահի խելացի մարդիկներու. ուրիշ բաներու մէջ աղէկ կըշարժին, ուրիշներուն հաշիւները (հիսապները) աղէկ կըտեսնան, օտարներուն խելացի խրատ կուտան, իրենց խարձին վրայ եկածին պէս՝ կամ չեն կրնար կամ անհոգ կըլլան նայելու, ասնոր կեօրէ պիրենք կառավարելու։ Ալ ման ասանկ եղերեր աս առիններս ֆրանսան, որ ուրիշներուն ամմէն բանի մէջ խելք կըսորվեցընէր, բայց իրեն շահը խարձը ինքը չէր

Ճանչնար, ինչվան օտար Հինդուացի նեքե-
ռը կանչեց Ճար մը գտնալու. ասիկայ նոր
հաշիւ մը ըսելով քիչ մը հասկըցուց։ Ա-
տակ ժողվելնալ մեջերնին խիստ դժարցած
էր. մեջերնին անանկ մատրապաղութիւն
մտած էր որ՝ ըստըկին մեծ մասը մատրա-
պաղութիւը կըքաշէր. ամմէն մարդ իր շա-
հիլը կընայէր հասարակին վնասելովը. շա-
տոնցվընէ սկսերէր Ֆրանսա առանձին շա-
հը նախադասել հասարակի շահին վրայ, որ
է առաջին կործանումը մէկ ազգին։ Ա-
կալ դիացինալ արքունիքը այնչափ բուռ
ըստակ կըբաժներ ասոր անոր՝ որ չափը
կանցներ. և որովհետև ամմէն կուիւ ըստը-
կին պակսութենէն կելլայ, ան խռովարար-
ները որոնց միտքը Ֆրանսային կառավա-
րութիւնը կործանել էր, աս բանս իրենց
աղեկ առիթ (սեպպ) առնելով՝ շտկելուն
տեղը կընայէին որ ալ աւելի ավերն էանա-
գարեն. անդադար գէշ գրքեր դուրս կը-
հանէին հաւատքի ու տէրութենէ դէմ. քա-
նի որ արքունիքը կըջանար Ճար մը գըտնա-
լու դեղ մը գնելու ասոնց դէմ, բայց ու-
շացած դեղը որովհետև շահ մը չըներ, ա-
նոնք ալ յայտնի կըմերժէին թող չեին ի-
տար։ Ահա բոլոր պատճառ Ֆրանսայի կոր-
ծանման եղալ աս խռովարարներուն միտ-
քը, իսկ եկամուտին խաղնային պակսութիը
եղալ մէկ գործիք մը։

Անկ դժարութիմընալ խաղնային պակ-
սութիը գոյելու՝ էր դժարութիւնը տուրք
ժողվելու, որ բոլորովին ժողովրդեան վրայ

կէյնար. աշնուականքը ասանկ տուրքերէն ազատ կէին, եկեղեցականքը բան մը չէկին վճարեր (1). բայց անոնքալ կամաւոր ընծայէ անուհով տուրք տալով այնչափ պարտքէ տակ ընկած կէին՝ որ չէյտէկին ինչպէս վճարըէն։ Ինչպէս որ առաջները գրերինք, երբոր Ֆրանսայի շահապ իշխան (տէֆթերտար էֆէնտի) եղալ Լօմէնի պռիան գօլօսսային եաքը սենանդ արքեպիսկոպոսը խռովուէթը ալ աւելի շատցաւ. ասիկայ Թագաւորը դրած էր Թագուհիին յորդորելովը. ինչպէս որ առաջները Ֆրանսային շատ կառավարուէթը կնկան ձեռքով գարցած էր՝ հիմնալ չէր գադրած անոնց խռռնըվելը. աս պռիանը որ առաջ խիստ խելացի մարդիկներէն մէկը կերևնար, երբոր իշխանուէ վրայ ելաւ՝ մէկ հասարակ մարդ մը երևցաւ. ասկից յայտնի կըլլայ որչափ զանազանուէթ կըմտնայ խօսքով ընելուն և գործքով ընելուն մէջը. ասիկայ քառտինալ ռիշլիւին պահսուէթիւննէրը ունէր՝ բայց անոր աղէկուէթիւները չունէր. սուտ ձեռնարկուէթեց հետևօղ ըլլալով՝ բռատեսին սկզբունքները բռնօղ՝ խռովուէթի հանօղներուն մէկ կարապետնալ աս եղավ. վերջապէս աշխերտը ըլլալով կրնանար իրեն աղանդը մոցընելու, կրօնքը ու տէրուէթը

(1) Ֆրանսա 60 հազար աշնուականք կամ աշնուականացեալ կային. 100 հազար արտունուէթի ունեցօղներ կային, որ արտունուէթի ունէին տուրք մը չվճարելու. 200 հազար քահանայք. 60 հազար կրօնաւորք։

կորմնցընելու. անանկ Ջամիքեանները կըբա-
նեցըներ որ անկարգութիւնները վերցընելուն
տեղը աւելի կըշատցըներ. շատ վանքեր
վերցուց իրենց ապրանքները առնելով. մե-
կալ դիայէն ուկօնօդ ու քալվին հերետի-
կոսներուն երես տըվավ. իրենց աշատուե
տըվավ թագաւորական պաշտօնեներու վրայ
ելլալ, դատաւոր ըլլալ հրապարակաւ վար-
պետութիւն ընել. աս բանիս համար թագա-
ւորական հրամանը ելավ 1788 յունվարի
29 որ վարը պիտոր յիշենք. անանկ բաներ
կըներ իբր հերետիկոսները շահելու հա-
մար, բայց ուղղափառաց կողմը կրտկարա-
նար, իսկ հերետիկոսներուն կողմը անչափ
կըզօրանար որ՝ իրենց հին միտքը կըյան-
դգնեին առաջ տանելու, որ էր ֆրանսայ-
ին միապետութիւնը փոխել հասարակապե-
տութիւն ընել. ինչ խրատ որ կուտային ա-
սոր՝ մտիկ չէր դներ, իր գիտցածին ետ չէր
կենար: ( )ր մը երբոր մեկ վանահօր մը ը-
սավ թէ պէտք է կրօնաւորներուն վրայ
կարգադրութիւն ընել, վանահայրը պատաս-
խան տըվավ. չըլլայ թէ կրօնաւորներին ե-
տև կարգը քահանայներուն վրայ գայ, քա-
հանայներին ետև կարգը Թօփերուն գայ.
ըսել ուզելով որ աս բռնած Ջամիհան ամ-
մէն աղէկ բան պիտոր վերցըներ, խառվուի
ու պատերազմ պիտոր բերէր, ինչպէս որ
իրաւ եղավ:

Ինչպէս որ պատմեցինք թէ Կրօնաւորնե-
րը (Կօզասլնները) ժողվըվելով բան մը չի-
կըրցան ընել, արքունիքը ետքի հարկաւո-

բուԹիը տեսնալով ուզեց նոր տուրք ձգել. վերոյիշեալ պռիանը յունիսի 6 հերիք սեպեց ան ատենվան համար երկու տուրք ձգել. մէյմը կնքըված կամ զմռւած ԹղԹերու վրայի տուրքը եվելցընել Ոչխարոսված, որ իրեն հաշուին կեօրե 80 միլիոն եկամուտ կըբերէր տարին, մէյմընալ կալուածոց վրայ հարիւրերորդ մը եվելցընել որ 20 միլիոնէն աւելի չէր բերեր. բայց բառլամէնդը դէմ ելավ իբր խիստ վնասակար ազգին, աւելի Ոչխարին դէմ. ասոնք դուրսէն ազգը պատճառ կըբռնէին, տակէն իրենց համար ու դատաւորներուն համար կըվախնային որ շահերնուն արգելք չըլլայ: Էմակվան ատենս (կըսէ ալեքսէյ) ամէն մէկ ասպէձանէ մարդիկ եղբեն դէպ դէպ պղտիկ բռնաւորները, որ կըբաղձան ուրիշներուն ամենուն վրայ լման բռնաւորի բանեցընել[1]:

Բառլամէնդը խնդրեց որ եկամուտին հաշիւը (հիսապը) իրենց ցըցընեն, արքունիքը տեսնալով որ Ոչնանաւոր ըսածներուն ցըցընելով ան հաշիւը պտուղ մը չէլավ, այլ անօգուտ հակաճառութի մը որ ամէնն բան արգելեց, անոր համար չցըցուց բառլամէնդին: Այս բանս պատճառ առնելով բառլամէնդին մարդիկը վերոյիշեալ դիմպրս ըսված տուրքին հաւանուի չտրվին. ասոնք չէին նայեր որ իրենց կառավարութիը

---

(1) Այս բանս կըգրէ ալանպէռ ֆ. ֆեռերիքոսի պրուշի Թագաւորին իր մեռնելէն քիչ մը առաջ, որ տպած է ֆեռերիքոսին ծածուկ ԹղԹակցութեցը մէջ:

ան նեղուԹիւն էր հասեր, որ հօրին մէջ ըն-
կած մը կլմանէր, շուտ մը պէտք էր ձեռք
տալ հօրէն հանել. ետքը պատճառները
քննել. ասոնք իրար Թէ հօրին մէջէն չէհա-
նած կուզէին փնտռել իմանալ այրդեօք
պատահմամբ Թէ բռնուԹիւ կամ խեղԹուԹիւ
եղած էր հօրին մէջ խյնալը: Ինչ դեղ
կըգտնային ուրիշները, ասոնք ամէնհնուհնալ
դեմ կելլային, իրենք մէկ չար մը ընել
չէին մտածէր, որովհետև մտէրնին իրենք
իրենցմէ կործանել էր տէրուԹիւը առանց
մէկ Թշնամիի մը. գիշեր ցորեկ աս էր մտա-
ծածնին [1]:

## Ղաղաղմէդին ու օղլանները գրկելը.

1787:

Պաշտօնատէրերը տեսնալով վերոյիշեալ
երկու տուրքերուն հարկաւորուԹիը, խոր-
հուրդ ըրին Թագաւորը յորդորեցնին որ՝
բառլամէնդը վերստայլէ եղած տեղը իր սէ-
րայը կանչէ. հոն իր դերագոյն իշխանուԹիը
բանեցընելով աԹոռէն խօսելով (որ իրենց
լեզուով կըսվի Ղադըրլը Հիւքիւմ), իր ու-
զածը ընել տայ, երկու վերոյիշեալ տուր-
քերը քիւԹիւկը անցընելու խայտէրնին
հանելու համար. բառլամէնդը հոն ժողո-

(1) Ասիկ աշըդ կիզլէնիր մի օղուշադ գիւմմալ, Թէնտէ մէհնէԹ, ճանտէ ահ, տիլտէ աԹէղ, կէօզտէ նէմ:

վրվելու ատենը խօսք տրվավ ընելու. բայց երբոր փարկզ դարձաւ՝ բողոքեց ըսելով. սերպային մկը մեզի դէմ բռնութիւն ընելնուն համար ակամայ հաւանութիւն ցըցուցինք. բայց կըհրատարակենք որ ան թագաւորին հրամանագիրը երկու տուրքերու վրայ ապօրինաւոր է, այսինքն մկմը զմուռսած թղթերու վրայի տուրքը, մկմընալ կալուածոց վրայ. աս ըսելով կըպնդեին որ ընդհանուր ժողով ըլլայ ամմէն իշխանները: Յաջաւորը աս բանիս վրայ խիստ սրդողելով օգոստոսի 15 բառլամէնդին մեծ մասը քշեց դուօժէս քաղաքը որ շամիայն գաւառին մկը է. և որովհետև գինուորները ասոնք հրապարակաւ կըտանեին՝ տեսնօղ ժողովուրդը առաջուցմէ գրգռվածըլլալով մկ բերան կըկանչէին. մենք բառլամէնդը Թող չենք իտար երթալու, հոս կուզենք որ մնան. աս ըսելով հայհոյութիւն անէծք կուտային ընօղներուն. անանկ որ ասոնք զսպելու համար հարկ եղավ քանի մը մարդ մեռուցին, որ եղավ սկզբնաւորութիւն յետագայ արեանհեղութեց որ պիտի պատմենք:

Յանք որ օռլէանսին դուքսը աս ատենները խիստ երևան կր հանած իր լըբուրիր հակառակութիւնը որ ունէր արքունեացը դէմ. ան եղավ գլխաւոր պատճառը որ բառլամէնդին Թող չիտրվավ վերոգրեալ տուրքերը յանձն առնել որով կըգոյվեր ան ատենվան խռովութիւնը. ետքնալ շատ ըստակ բաժնելով փարէզին մէջի եղած դա-

տարկապորտնէրը ոտք հանել բառլամէնդը գովելու համար, որ կանանչէ շինված պսակները դրին անոնց թևէրնուն վրայ ան տուրքերը ջընդունելնուն համար։ Այս մարդս եւրոպայի հարուստներուն մէջ ամմէնէն հարուստը ըլլալով՝ իր ամմէն հարըստութիւնը դրեր կըխոստանար իրեն դին մարդ շահելու՝ Թագաւորին դէմ խռովութիւն հանելու, ասանկ մարդուն ձեռքը ընկած ըլլալով հարստութիւնը՝ կըլլար լման մէկ թիւն (զէհիր) մը հասարակաց պատիժ. բայց դուն ան տես որ՝ իր հարստութենէն զատ՝ բօնթեվռի դուքսին փեսայ ըլլալով՝ անոր անչափ հարստութենաւ ասմարդս ժառանգ պիտոր ըլլար։ Ինքը խիստ գոռոզ ամբարտաւան ըլլալով ինչպէս որ առաջները գրերենք, որովհետև բօնթեվռի դուքսը խափուտան փաշայ եր եղած՝ կուզեր որ էտքը ինքը անոր տեղը անցնի. անոր համար իր հայրը չիմեռաց՝ երբոր միայն շառլի դուքս եր ան ատենը և ոչ օռլէանսի դուքս՝ ուզեց որ օվկսանդ եղած ծովու ծէ ծին մէջը գտնըվի, բայց մեռնելէն խիստ վախկոտ ըլլալով անանկ վախ ցըցուց ան ծէծին մէջը՝ որ ամմէննալ հասկըցան իրեն անարժան ըլլալը, անոր համար առդուայի կոմսին (Թագաւորին եղբօրը) առջինեկ զաւակը խափուտան փաշայ ըրին. աս բանիս վրայ անչափ սրդողեցաւ չարաձձի օռլէանսը՝ որ անկից էտքը մէյմընալ արքունեաց մէջ չերևցաւ ամենևին։ Ինքը կապելու համար մնացեցին խնամուԹի ընե-

լու օռլէանսին ու Թագաւորին ցեղին մէջը. օռլէանսին առջևնեկ աղջիկը՝ առաջուայն առջևնեկ տղին ուղեցին առնել. հարևնքն ամէնն բանը պատրաստուած էր պիտոր ըլլար՝ մէյմըն ալ մէկէն խափանուեցաւ՝ ասոր վրայ ժանտ օռլէանսը երդուեցաւ սրտին մէջը վրէժ առնել Թագաւորէն, անիկայ ձգել ինքը Թախտը անցնիլ. ասոր համար կըպտըտէր որ ամէննալ Թագաւորին դէմ հանել տայ։ Ին ատենվան Ֆրանսայի խռովարարներուն լման ուզած մարդերնին եղավ, որոնք իրենց բանին համար մէկ հատիկ գործիք գտնալով աս մարդը՝ կըխոստանային իրեն անտարակոյս իր ուզած Թագաւորուեը հասցընել. իսկ աս կուրացեալը չէր իմանար որ ան խռովարար Ֆռամազոններուն միտքը չէ Թէ Թագաւորին անձին դէմ էր, հապա ամէնն Թագաւորի ամէնն իշխանի դէմ նաև իրեն դէմ։ Ին սանկով օռլէանսը ուզեց ան ատենը որ խռովարարները իրեն գործիք առնէ, ժէ. լուիզը Թախտին վար ձգելու համար. խռովարարներնալ ասիկայ իրենց գործիք առին բոլոր Ֆրանսային Թախտը կործանելու համար։ Ճատ հեղ գիշերնէրը ժողովներ ընել կուտար մէկ ընդհանուր ապստամբուԹի մը հանելու օգոստ. 15. ան օրը ինքը օռլէանսը պիտոր ըսվեր Ին Հանուր պեղակալ, իսկ բառլամէնդցիք պիտոր ըսվեին Հարբ հայրենեաց, նեքերնալ ետ պիտոր կանչեին։ Ին բանէրս ամէնննալ խափանեց բառլամէնդին քշվիլը. բայց ինչ

օգուտ, Թագաւորը վախկոտ ըլլալով՝ 35
օրէն ետ բերել տրվավ բառլամինդը, ը-
սելով Թէ համաձայնիլ կըցըցընէին արքու-
նեացը հետ։ Այս ատենվան Ֆրանսային Թա-
գաւորը պէտք էր ըլլալ Ֆ. կուսդավոս չվէ-
տին Թագաւորը, որ ասանկ փորձանքներուն
մէջէն իր խելքովը խալըսեցաւ, Թագաւո-
րական իշխանութիւնը առաջ տարաւ։
Պաշտօնատերերը ու Թագաւորը Չար մը
ընելու համար նոյ. 19 Ժողովի ընելով մտա-
ծեցին նորէն փոխ ըստակ առնել 400 մի-
լիոն լիրէ. խնդրեցին որ բառլամինթը աս
վճիռը քիւթիւկը անցընէ խայտը հանէ.
բայց ան ժողովին մէջը յայտնի դէմ կե-
ցան Թագաւորին, իրեն պատուոյն դէմառ-
բանէր զուրցեցին մանաւանդ օռլէանսը
լըբուրթը Թագաւորին երեսին բողոքելով
անանկ բանէր խօսեցաւ որ իբր Թէ Թա-
գաւորը ամէնէն բան իր կամքին կէօրէ (քէ-
ֆինէ) կուզէ կառավարել։ Այս խօսքերուս
համար Թագաւորը տակնուվրայ ըլլալով
կրնար շուտ մը ժողովին մէջը անիկայ բըռ-
նել տալ, բայց վախնալով չըլլայ որ խառ-
վուռթիը եվլէնայ, հերիք սեպեց քշել տալ
օռլէանսը քօղարէ քաղաքը, փարելէն 6
ժամ հեռու, չէ Թէ միայն հիմակվան դէմ
խօսելուն համար՝ այլ նաև իր մտածած-
ներուն համար որ վերը պատմեցինք. եր-
կու իրեն պէս համարձակախօսներալ ես-
քռէմիլ ու մընդալսկէ ըսվածՙ սուրբ մի-
քայէլ ու տուլէս բերդը խրկեց։ Այս ըլլա-
լէն ետևեալ անանկ յանդուգն մարդեր դըտ-

նըվեցան՝ որ վեհասյալէ սերայը մարդ խըրկեցին աղաչելով Թագաւորը՝ որ օռլեհանսին դուքսը ազատէ ետ դարձընէ, բայց կէս գիշեր ըլլալով՝ սերային դռնկերը գոյ-ւած՝ չկրցաւ մարդ ներս մտնալ խօսիլ, միայն պատասխան լսեց որ՝ Թագաւորը ա-նոր գլուխը պիտոր կտրէր չէթէ ազատէր։ Ով որ իրաւ Թագաւորը իր ամէնէն խստու-Թիւը բանեցընելով ան ատենը կտրէր օռ-լեհանսին գլուխը, ամէնէն խռովարարներուն սիրտնալ կըկոտրըվէր. օռլեհանսին տուրք-նալ պակսելով կըպակսէր ան խռովուԹէ կրակը՝ որ ասոր անոր ըստակ տալով կը-քաշընկըշնէր սկզբնաւորուԹէ ատենը, ինչ-ւան որ ան չարերը հաքը ուզածնին պէս քանուԹիւը տերուԹիւը իրենց ձեռքը ձգե-լով՝ կարօտ չեղան օռլեհանսին ըստրկին. բայց Թագաւորին մամաճակ բնուԹիւը չէր կրնար մահուան սպառնալիքը գործքով կատարել, այլ մանաւանդ աղաչանքին լսե-լով չուտով ետ դարձուց. իսկ օռլեհանսը դառնալէն ետև աւելի զգուշուԹիւն բա-նեցուց, բայց իր մաքի դրածէն ետ չկե-ցաւ [1]։

---

(1) Այս Թաչը Հէվհէր օլըրմուս, սագլասան սանը տուղլէ,
գարըզա Թաուս օլըրմուս, կյրէԹի գույրուղլէ։

1788։

Հին ատեանը հինգհարիւր էր, Ֆրանսայէն Թա-
գաւորը 1598 ապրիլի 25 մէկ հրաման մը
հանած ունէր բռնադէտդանդնելու դին՝ որ
Նանթէսի հրամանագիրը կըսվէր, ան հրամանա-
գիրը ետ դարձուցեր էր, լուիզ Թագա-
ւորը 1685 հոկտ. 22 խստութեն բանեցը-
նելով բռնադէտդանդնելու վրայ, հին աս
Թագաւորս ժէ. լուիզ յունվարի 29 ան
ետ կոչելը վերցուց. որով նանթէսին հրա-
մանագիրը նորէն հաստատվեցաւ. աս բանս
շատ դէմ եկավ եկեղեցականաց։

Գանք որ Թագաւորը և արքունիքը տես-
նալով բառլամէնդցոց յանդգնութիւնը՝ մը-
տածեց միջոց մը գտնալ անոնց խառնըվի-
լը քիչցընելու համար. սկսան խիստ գաղ-
տուկ խորհուրդ ընել մէկնոր դատաւորու-
թիւն մը դնելու բառլամէնդներուն տեղը
Նորէպոհան արխոնէ կոչելով, որուն մէջը
պիտոր մտնային Թագաւորը՝ Թագաւորա-
զունք՝ բառ ըսված իշխանները՝ Թագաւո-
րին մեծ հազարապետները՝ վարի բառլա-
մէնդներուն մեծ մասը՝ հաշուելդրին երկու
խորհրդականքը. իսկ գաւառներու մէջ եր-
կերկու հոգի պիտոր մտնային ամէնն մէկ
բառլամէնդէն, երկու արքեպիսկոպոս և
երկու եպիսկոպոս. վերուցին նաև ամէնն
հին դատաստանարանները անոնց տեղը նո-

րեր դնելով որ պիտոր ըսվէին Պայլը-Ըխո (Պալիաժ), ասոնք պիտոր դատաստան ընէին, ժողովուրդը պիտոր հոգային որ աս դիւէն ան դիւէն կուգային բառլամէնդը գտնալու։ Ու բանս պէտք էր որ՝ հրատարակվէր մէկ ժողովքի մը մէջ ուր պիտոր գտնըվէին իշխանները՝ էաւէ ըսվածնէր՝ ու դատաւորներ. զինուորներաւ պատրաստըված էին խափանելու ամէն անկարգութիւն որ ելլալու ըլլար, բայց երբոր Թագաւորական տպարանի մէջ կըտպվէր աս բանս որ ան ժողովին մէջը պիտոր հանէին՝ բառլամէնդն մէկ կը շատ ըստակ տալով մէկ օրինակ մը ձեռք ձգեց տարաւ ցըցուց իր ընկերներուն, որոնք ամէն բառլամէնդը ժողվելով՝ հասկրնալով որ աս բանս բողոքովին պիտոր փլցընէ զիրենք՝ հոն երդում ըրին դէմ դնելու ամէն կերպ առաջարկութեց որ պիտոր ընէին կամ խափանելու և կամ ուշացընելու համար ընդհանուր իշխաններուն ժողովը։ Թագաւորը լսածին պէս ասոնց ըրածը՝ տեբռէմէնիլ խորհըրդականը բանտը դրաւ որ գաղտուկ առերր տպարանէն օրինակ. բառլամէնդին սերայնալ զինուորնէր խրկեց, որ մէկիննէրը դուրս հանեցին դուռնները գոցեցին։ Այսիսկ 8 հրաման հանեց Թագաւորը մտածածը՝ի գործ դնելու, բառլամէնդներուն իշխանութիւնը քիչցընելով, Ղրեօֆոան աբռուանէ կամ Պոան սահմանելով. երբոր աստոնց առջի անգամ ժողվըվելուն օրը եկավ՝ բառի ըսվածնէրը նաև առաջնորդները

չուզեցին հոն գտնըվելու ըսելով՝ թէ մեր խղճմտանքին ձեռք չիտար գործակից ըլլալ ան բանին որ փրանսայի հին սահմանադրութիւնը կըքակէ։ Ուրաւ է որ կերտանըլիսին բանէն ետև որ առաջնէրը պատմբենք՝ աղնուականք ու եկեղեցականք խիստ ատելութիւն մը ունեցան արքունեացը դէմ, անոնց ամէն ըսածին կըհակառակէին, ամէն բանէրնին դէպի կըտանէին։ Պատգարոը վէրսայլէի մէջ իր աթոռէն խօսելով (կամ Մըրտրոնէան անկողին ընելով ինչպէս իրենք կըսէն) հրատարակեց թէ ան երկու տուրքը վճարեն որ վերը գրերնիք, բայց նորէն դէմ դրաւ բառլամինդը. ան ատենը Թագաւորը ուրիշ ասանկ ժողով մը ընել ուզեց աթոռէն խօսելով նոյն իսկ փարէզի մէջ, բայց անչափ յանդգնութիւն տեսաւ որ՝ խոհեմութի սեպեց զանց ընելը. Ֆրանսային մէկ ծայրէն մինչև ծայրը ուրիշ բան չէր լսվեր բայց եթէ ժողով ըլլայ կըկանչէին ընդհանուր իշխաններու, ալ արքունիքը յոյներէն վնձէլէն. Թագաւորը տեսնալով որ ուզածը չըլլար՝ ետ կանչեց օգոստոս 8 իրեն վճիռը նոր ատեան սահմանելու վրայ Մրեֆոխան արխինէ ըսված. երրորդ անգամ տեղը դրաւ բառլամինդը. հրատարակեցալ որ ընդհանուր կամ աշխարհախօսմը իշխաններու ժողովը ըլլըվի։ Այս վճիռս ըրաւ խաղաղութի գտնալու համար՝ բայց իր վճռովը իր ոտքը քերաւ մեծիկցուց մէկ հորի մը բերան ուր հարկաւորապէս օր մը պիտոր կենար. 174 տարի

անցած էին քանի որ ասանկ աշխարհա-
խուռմբ ժողով չէր եղած , քառասնալ մա-
զառևնին՝ ռիչլիւն՝ և ուրիշ ֆրանսային
վէզիրները չէին ուզած ասանկ ժողով ընել.
աղէկ գիտէին աս ժողովը ընելով ինչ վտան-
գի մէջ կ'իյնար Թագաւորական իշխանու-
թիւնը :

Այս ատեններդը ուրիշ դիպուածներալ ե-
ղան . պռիանը տէֆԹէրտարուԹէ պաշտօ-
նին անյարմար մարդ ըլլալով ամմինուն
ատելի էր եղած . անոր համար օգոստ . 25
ինքիրմէ ձգեց փախաւ նիցցա քաղաքը որ
բռօվանս գաւառին մէջն է . ան ատենը
սաւտէնեայի Թագաւորին տակն էր , հոն
քառասնալուԹէ պատուոյ կըսպասէր , որ
սաւտէնեայի Թագաւորը անոր կըխոստա-
նար կորսըված պատուոյն տեղը : Ռա-
լէանս դուքսին մտածածներնալ սկսան է-
րևան ելլալ . բայմուէ տղաքներուս կորիճ
նէրու կըժողվէին դլխին ( տօֆէն ) ըսված
հրապարակը , հոն խռովուԹէ աղմուկ ( ար-
պէտ ) կըհանէին . քանի մը օր ասանկ ը-
նելով՝ պռիանը փախչելէն օր մը ետև 26ին
իրեն պատկերը երեցին նաև լամուայօնին
պատկերը որ հինգապատկն էր . կուզէին որ
անոնց տուներնալ երթեն . երբոր հասարակ
պահապան զօրքը ասոնց դէմ դնել ուզեց ,
անոնք յանդգնելով ցրուեցին , 200 հոգի
ան զօրքէն կորսնցուցին . ասոնց կատաղու-
Թիը դէմ խրկեցին ֆրանսզ ու ըղվեցիներդ
պահապան զօրքերը՝ որ Թուր'իվէր Թուր-
'իվար ընելով ան ժողովրդեան վրայ շատ

յանցաւորները բռնեցին բանտը դրին, հնա-
ցածը ցրուեցին. բայց բառլամինդը յան-
դգնեցաւ ուզեց որ բանտարկեալները խա-
լասին. վերնաւորներնալ կանչէց համար տա-
լու իրենց ըրածին վրայ քաղքրցոց դէմ.
քննելէն ետև աղեկ հասկրցաւ քաղքրցոց
ըրած յանցանքը զօրաց դէմ. վճիռ մը հա-
նեց արգելելով աղմուկ հանելը. ասոր աղմուկ
հանողները անչափ շատցած անչափ կատ-
ղած էին որ՝ բառլամինդոյց դէմ դարձան
իբրև ժողովրդեան թշնամիներու։
Պռիանին տեղը նորէն շահագ իշխան ե-
ղաւ նէքերը. Թագաւորը ասոնմարդուս չար
ըլլալուն վրայ կասկած ունէր, բայց չիտես
ինչ գաղտնի հնարքներ կային որ մտվընին
դարձուցին մանաւանդ Թագուհիին միտքը՝
որ իր ձեռագրով Թուղթ գրեց նէքերին՝
ան հպարտ Ջինեվրացիին՝ որ դառնայ նո-
րէն իր պաշտօնը առնէ. նէքերնալ երկու
ԹէուԹէ դրաւ դառնալու. Մէյմը որ մի-
այն Թագաւորին տակը ըլլայ ուղղակի, ու-
րիշ մէկէմը կախում չունենայ. Մէյմընալ
որ կառավարուԹէ խոհուրդին մէջը առե-
լի վերագոյն պաշտօնը ինքը ունենայ. Թա-
գաւորնալ անչափ բարեմիտ եղաւ որ ամ-
մէն բանին հաւանուԹէ տըվաւ. Թող տը-
վավ որ ինքը Թագաւորը կարգաւորվի մէկ
խեղճ օտարականէ մը, որ նոր էր երևցեր
Ֆրանսայի մէջ հայ գտնալու համար, ինչ
գէհ բան կըլլայ երբոր կնիկ մարդ կըխառ-
նըվի կառավարուԹէ մէջ։ Ամիկ ժողո-
վուրդը լսածնին պէս նէքերին դառնալը

խիստ ուրախացան պարապ յուսերով, ու-
րախութենէն փարելզ երկու դիշեր լուսա-
ւորութիւն ըրին։

Թագաւորին խելացի պաշտօնեայները
խիստ կրցաւէին աշխարհախուժը իշխանութ-
իւն ժողովրդ ըլլալուն վրայ. կըյիշեցընէին
Թագաւորին որ ամէնն ատեն երբոր ժող-
վրդերեն միշտ վտանգաւոր է եղեր, ուր
ինաց հիմակվան ատենս որ ընդհանուր ա-
տելութիւն մը կայ Թագաւորի դէմ, կրօնքի
դէմ։ Այս իրաւ փորձըլած բան է, ամէնն
հասարակութիւն մէջ երբոր կռիւ մը կելլայ
անոր դէզ մեծ ժողովրդ ըլլալը կըսեպվի,
բայց ան մեծ ժողովը շատ հեղ պատճառ
եղերէ ալ աւելի բռնկցընելու. ասանկ խօս-
քեր ըսելով խորհուրդ կուտային ամէնն
միջոց բանեցընել աս ժողովը խափանել.
մէկը այնչափ համարձակեցաւ որ ամէնն
ալքոնեաց առջին ըսավ։ "Թագաւոր քու-
" կին Թախտդ վտանգի մէջ է. ան աշխար-
" հախուժը ժողովը որ պիտոր ըլլըվի աղ-
" վոր պատրուակով (մահանայով) մը խո-
" ցերը բժշկելու՝ բոլորովին պիտոր կոր-
" ծանէ Թագաւորութիւննալ հին սահմա-
" նադրութինալ. աս կործանութիւնը շատոնց
" մըտնէ կըպատրաստէին Թագաւորական
" ցեղին թշնամիները. ան աստիճան հա-
" սերէ մարդկային խելացնորութիւնը որ՝
" ով ըլլայ մէկ խենթ բան մը առաջարկող,
" խակոյն երեսն հեռուօղնէր կըգտնայ. ան
" ժողովին մէջը Թագաւորական արտու-
" նութիւնները շնաս պիտոր սեպվին երեսնց

„ իւրաքանչիւր . ապրանքի ըստ կիր անհաւա-
„ սարութիւնը որ մէկը շատ մէկը քիչ ու-
„ նի՝ կամ նորոգել պիտոր ուզէն և կամ
„ վերցընել . ամէնն կարգ աշխարհականաց
„ եկեղեցականաց մտածերուն վերցընել
„ ուսկից չփոթուի անտեր անտերունչ ըլ-
„ լալ պիտոր հետևի . անկից պիտոր ավելը-
„ վին ձեռագործ արուեստներէն , պիտոր
„ ավելըվին հիմնական օրէնքը ան թագա-
„ ւորութէ որ 1300 տարվընէ վեր անչափ
„ պատուով կեցած է „ : Այս խօսքերուս
վրայ արքունիքը վախի մէջ մնաւ , շատ օր
ալէկոծեալ մնաց չկրտէր ինչ որոշելու , բայց
նէքերը որ թագաւորին թշնամիներուն ու
օրէնսին դին էր՝ Ձինեվոյի հասարա-
կապետութէ մէջ ճնած ըլլալով և ոչ միա-
պետութէ մէջ , բռօդէսդանդ ըլլալով , և ոչ
ուղղափառ , աղնուականութիմընալ չունենա-
լով՝ իրեն առջին մէկ էր ուղղափառ կրօնքը
եկեղեցականքը ու աղնուականքը մնա-
ւանդ թէ ատելի , անոր համար ուրիշ կերպ
կըմտածէր . սիրտ կուտար թագաւորին տա-
րակոյսը փարատելու համար , ուրիշ Ձար
չիկայ կըսէր . ամէն Ձամիայ փորձեցինք
նաւահանգիստը հասնելու՝ քիչ մնաց ամէնն
բան կըլլինայ . բնութէքալ փառասէր մարդ
ըլլալով ու հպարտ՝ կարծէր որ իրեն շատ
խօսութէքը ուզածին պէս պիտոր դարձը-
նէր ան ժողովը [1] . թէպետև ինքը գրագ-

(1) Ա՜հագ էհլինէ ալէմտէ տիւ արա մը պուլունմազ , մէՁնուն ուսան էյ տիւ , սանա էյլըմմը պուլունմազ :

րուեձէ մէջ էր մեծցած և ոչ կառավարուէ մէջ. ասոր համար ետևէ ընկաւ աշխարհա-խուզմը ժողովը ժողվել, անանկ կերպովալ ժողվել տըվավ որ անով ժողովին հին կար-գը բոլորովին կավըվէր։

Այս ժողովին մէջը իրեք դաս կամ կարգ մարդու կըմտնային, եկեղեցականք աղ-նուականք ու քաղքենիերու պատուիրակ-ներ՝ որոնք երրորդ կարգ կըսվէին. աս կերպն էր ճեացած գեղեցիկ փիլիպպոս Թագա-ւորէն ետև. ամէնէն դաս կամ կարգ ին-քիմմ առանձին կըմտածէր, ինքիմմ իր կարծիքը կուտար. բայց աս կերպս հիմակ-վան խառնվարարներուն մտքին ամենևին դէմ էր, որոնց միտքն էր ավերել կրօնքնալ Թագաւորութիւննալ ազնուականութիւն-նալ։ Այեքերը պատրուակ (մահանայ) կը-բերեր ըսելով՝ Թէ որ երկու կարգին խօս-քը քալելու ըլայ՝ չեն Թողուր որ կալուա-ծոյ վրայ տուրք ձգվի. անանկկնկ ըսավ ընենք որ՝ երրորդ կարգին խօսքը հաւա-սար զօրութիւն ունենայ երկու կարգին հետ միանգամայն առեալ. ըսել ուզեց որ՝ երկու կարգը որք են եկեղեցականք ու ազնուականք՝ քանի պատուիրակ որ խըր-կեն ժողովին մէջ՝ նոյնչափ համրանքով պա-տուիրակներ Թող խրկեն երրորդ կարգը մինակ առեալ որ է հասարակ ժողովուր-

---

կեուշ էթ նէֆէսին էյլէմէ, ֆիրեաօը չէմէն-ղար,

էյ պիւլպիւլ, սանա զօնչէի հէմրահ մը պուլուն-մազ։

դը. անանկ որ 500 պատուիրակ էին եկե-
ղեցականաց ու աշխուականաց մէկ տեղ ա-
ռեալ. 500 պատուիրակ եղան միայն աս
երրորդ կարգին խրկածները: Արծիքնին
ժողվելնալ՝ ամէնն մարդ զատ զատ Թող
տայ ըսավ իր կարծիքը իր հաւանուելը, և ոչ
զատ զատ կարգերը տան ինչպես որ առաջ
կընէին: Ա՛ս բանիս վրայ շատ կռիւ ելավ,
հատորներով գրքեր շինվեցան. բայց վերի
աստիճանի եկեղեցականք աս անկարգուե
առջի հիմը ձգեցին. վասն զի աւագ երեց-
ներուն (քուռադներուն) շատը մէկալ ե-
կեղեցականներէ զատվելով գացին երրորդ
կարգի պատուիրակներուն հետ միացան.
Ճնացած եկեղեցականք ու աշխուականք
շատ անանցին արգելել աս կարգերուն խաո-
նափնդորութիւը. փարէզին արքեպիսկոպո-
սը ծունկ չոգելով Թագաւորին առջին ա-
նանկ աղաչեց արգելել աս բանս որ կործա-
նիչ պիտոր ըլլար հաւատքիալ տէրուհեալ.
երրորդ կարգը տեսնալով որ ասոնց դէմ
չկրնար պատճառներով խօսիլ՝ որովհե-
տև հին կարգադրութիւն էին և հին սահմա-
նադրութիւն, ամէնն բանը ըրին անկարգուե
ու բռնակալութիւը, ժողովրդեան հանգըս-
տութիւը կուզէին իրենց մտքին կէօրէ կա-
ռավարել, այնչափ հին աստենվան փորձը
ոչինչ կըսեպէին: Ա՛նչափ խռովութիւ մէջ
վախնալով նէքերը՝ չըլլայ որ մինակ իր վրայ
խնայ վտանգը, հոկտ. 8 երկրորդ անգամ
կանչել տրվավ նշանաւոր ըսածները. ա-
սոնք նէքերին ըրած առաջարկութիւը մեր-

ժեղին. երրորդ կարգը աշխարհախուռմբ ժողովականաց չունենայ ըսին ան զօրուները ինչ որ ունին երկու առջի կարգը մկ տեղ առեալ ինչպես որ կուզեր նէքեր. կարծէքնին տալնալ ամմէն մարդու ձեռք չըլլայ. հապա իրեք կարգնալ զատ զատ Թողտան։ Պսակեց եաքը ֆրանսային ամմէն բառլամէնդները կըստիպէին Թագաւորը որ աշխարհախուռմբ իշխաններու ժողովը ժողվէ սովորական կերպին կեօրէ, մանաւանդ ինչպես որ եղեր եր 1614. բառի ըսված իշխաններնալ մկ մուրհակ (արզուհալ) մը տըվին Թագաւորին ապահովցընելով՝ որ իրենք պատրաստ են ընդունելու ինչ տուրք որ վրանին ձգվի, պիտենքալ որ կըսկսին ֆրանսային ամմէն սեպուհները (բիձալները) ասանկ մեղի պես պատրաստ են. բայց աս իրենց խօսքը տակէն բոլորովին ուրիշ միտք ուներ։ Իշխանաւորներուն ժողովը դեկտ. 13 արձակվեցաւ. և որովհետև ասպետամբներուն սովորութի է իրենք մայր քաղքին մէջ հանդարտ նստիլ, զիրենք խաղաղասեր ցըցընել, դուրսի գաւառներու մէջ ասպետամբութի հանել որպես զի Թագաւորնին մենծերնին վախցընեն, խօսքերնին առաջ տանին, հիմաալ նէքերին խօսքը առաջ տարին զինքնալ խաչցուցցին, որուն խորամանկութիը աղմուկ ներ հանել տըվալ դուրսի գաւառներու մէջ. առջինը հանեց կռնիոպլ տօֆին գաւառին մայր քաղաքը. ուր աս տարվան ձմռվանս մէջ ժողովուրդը լեցվեցաւ քա-

զաքսապետին պալատը • պատին վրայ կա-
խած հայլիին չուանները ուզեցին իր խու-
ցին մէջը կախել քաղաքապետը • ասանկ
ըրին ուօան քաղաքնալ որ նօռմանտ գաւա-
ռին մայր քաղաքն է, նաև լանկրտօք, և
գրեթէ ուրիշ ամմէն գաւառներէ • գինուո-
նները որ ասոնք պիտոր զսպէին՝ իրենց հա-
զարապետներէն արգելված էին, ըլլալով
աղգական կամ բարեկամ քաւլամինդնե-
րուն : Այս խռովութիւնները լսելով թագա-
ւորը և իր արքունիքը՝ խաղաղուի գտնա-
լու համար դեկտ • 27 վճռեց որ գալ տա-
րի մայիսի 1 ըլլայ իշխաններու աշխարհա-
խուռմբ ժողովը • և թէ երրորդ կարգ իշ-
խաններու ունենայ կրկին զօրութիւն ինչպէս
որ առաջարկերը նէքերը, բայց կարծիք-
նին տալու կերպը այրդեօք ամմէն մարդ
զատ զատ տայ՝ թէ իշխաններուն կարգը
զատ զատ, աս բանս Թոդ նոյն ժողովը ո-
րոշէ ըսին :

## Աշխարհախռովը ֆրանսայի •

## 1789 :

Տագնիը կարդացող մը շատ կըզարմա-
նայ, ինչպէս կրնայ ըլլալ ան ֆրանսան որ
իր վեցերրին ձեռքովը խրատ տըվալ սորվե-
ցուց կուսդավոսի շվէտի Թագաւորին խա-
լըսիլ իշխաններուն բռնակալութենէն, Թա-
գաւորական կորնցուցած իշխանութիւնը
նորէն ձեռք ձգել, հիմա ան ֆրանսան չի-

կընայ իր ձեռքը պահել իր հին թագաւորական իշխանութիւնը, անանկ մը կապվի որ՝ Թող տայ իր վարի ռամիկ ժողովուրդը իւրենց քաշէն առնեն թագաւորական իշխանութիւնը իր աչքին առջեւն։ Այս բանիս հիմն ու պատճառը իրաւ լուսիլ ժէ, թագաւորը եղավ, որ Թող տըվավ ապստամբներուն աշկերտներ շատցընել, իրենց միտքը գերքերով ու խօսքերով ծաւալել, բայց հիմակվան բուն պատճառը եղավ ժէ, լուսիլ թագաւորին դաշտուկ մամածակ բնութիւնը ու վախկոտութիւնը։ Իրաւ Ֆրանսայեն վազերը սորվեցուց կուսդավոսին վեր ելլալու ձամիան, բայց կուսդավոսին մէյմը քաջասրտութիւնը մէյմընալ ձարտասանութիւնն էր որ կրցաւ անշփոթ գեղեցիկ կարդով՝ի գործ դնել, խօսքով սրտերնին իրեն քաշել, ջըլլալու բանը ընել [1]. ահա այսչափ հարկաւոր է համարձակութիւնը և ձարտասանութիւնը ասանկ վտանգաւոր ատեն՝ որ չէ թէ մինակ թագաւորի՝ հապա ամէն մէկ գլխաւորի մը և ամէն կառավարներու՝ աս երկու բանը խիստ պիտուական են տեղին կեօրէ։

Ասոր փետրվարի առջի օրը հասաւ՝ Թղթեր սփռըվեցան թագաւորէն ամէն տեղ աշխարհախումբ ժողովը ընելու որ իբր թէ իրեն մահ բերող Թղթերն էին. աս Թղթերը սփռըվելու ատեն սկսաւ երկ-

---

(1) Խալխագը ձիհան ալէմէ գըլըգտա թէձէլլի, հէր չախսի պիր նէվ իլէ գըլսը միւթէհսէլլի։

պառակուԹիւնը շատնալ . եկեղեցականք ու աշխուհականք մէկ դիէն՝ ժողովրդականք մէկալ դիացէն՝ իրարու դէմ գրուածներ հանեցին նախատական խօսքեր , եւ քը֊ ըար գարնեկներ եղան : Այս ատեն օռլէանսին դին եղօղները ամէն դին սիռըված ըլլալով՝ ջանքերնին բոլորովին դրին քաղ֊ քըներուն պատուիրակները անանկ մար֊ դիկ ընտրել՝ որ իրենց մտքով ըլլան ջնջա֊ հաւատ ու անխիղճ չարագործ մարդիկ , միայն Թէ լեզուանի շատախօս ( լափազան ) մարդիկ , անանկալ անօԹի չքաւոր մար֊ դիկ որ բան մը կորնցընելու վախ չունե֊ նան՝ այլ մանաւանդ խռովուԹիւն հանելով վաստկելու յոյս ունենան . ասոնցմէ մէկը եղաւ միռապօ , որ Թէպէտ քանքարաւոր մարդ էր՝ բայց քանսարկու խառնօղ մարդ , որ օռլէանսը իրեն խորհրդական էր առած Թագաւորը մեռցընելու՝ զինքը Թագաւոր նստեցընելու համար :

Ինչ ապստամբուԹիւն որ պիտոր հանէին՝ օռլէանսին դին եղօղներէն քանի մը հոգի առջի նշանը տըվին . ասոնք փարիզին ան արուարձանը ( վարըշը ) որ սուրբ հոնորադ կըսվի , ապրիլի 28 յարձակեցան մէկ հա֊ րուստ վաճառականի մը տուն , որ կըսվեր Լէվիյըն . աս մարդս շատ բանւորներ կը֊ բանեցընէր իր ձեռագործներուն համար . տարին 200 հազար լիրէն աւելի կըվաս֊ տըկցընէր , աւուրչէք տալով 30ին ինչվան 50 ըստակ . հիմա ձայն հանելով Թէ աւուր֊ չէքը 15 ըստըկի քիչցուցեր էր , երկու ար֊

ուարձաննէրուն քնակիչէքը տանը վրան վա-
ղեցին . աս մարդուն չինծու արձանը երե-
ցին մահապարտ է ըսելով. դատաւորնէրուն
հոգը չէղաւ, միայն պահապան զօրքը վա-
ղեցին հոն բայց բազմաւոր չկրցան զսպել,
որոնք իր տունը իր պարտէզը մտան, ամ-
մէն բան թալէցին ավերեցին . տեսնալով
որ կատղած ժողովուրդը շատցան՝ կրկին
զօրք բերել տըվին . աղմուկ հանօղները
ալ աւելի շատնալով 20 հազարէն աւելի
եղան զօրաց դէմ ելլալ սկսան . տուն-
րուն տանիքներուն վրայէն անձրևի պէս
զօրաց վրայ կըթափեր քար քիրկմիտ , ձրը
զօրաց ձեռքէն թիւֆէնկը կըյափշտակեր ,
ձրը զօրաց ձիերուն ոտքը կտրել կընայեր ,
ձրը սպաննել. զօրքը քանի մը հոգի ժողո-
վուրդէն սպաննելէն ետև քաշվեցան , մէկ
լան տեղ մը ելլալով կրակ ըրին աս խռո-
վարարներուն վրայ . ետքը Թրով սկսան՝
բայց անոնք նորէն դէմ կըդնէին . վախ-
ցընելու համար պարապ Թօփ նետեցին վրա
նէն առանց գնտակի , անոնք խաղաղելուն
տեղը ալ աւելի կատղեցան . տեսան որ չըլ-
լար՝ լեցուն Թօփ նետելով շատ մարդ ջար-
դեցին խռովարարներէն։ Վագաւորին գո-
նէ հիմա պէտք եր իր ամէն ուժը ձեռք առ-
նելով գլուխ ըլլալ փարեզին մէջը երևնալ ,
մէկ դիւինքներուն վրայ ամէն խըստութիւը
բանեցընել , մէկալ դիւինքներուն վրայ գը-
Թութիւն պաշտպանութիւ . ինչու որ՝ դեռ
փարեզին մէջը 40 հազար մարդ ուներ ի-
րեն դէն հաւատարիմ ձեացած որ ինչվան

ան ատեն չէին ալըվաճ. ասոնցմով կըը-
նար շուտ մը ան ապստամբները զսպել.
մէյմը որ զսպելու ըլլար սկսվաճ ատենը՝
անկէց ետքը մէկը չէր կրնար ձայն մը հա-
նել. փարէզքներուն շատը որ իրենց Թա-
գաւորին վրայ սէր ունէին՝ամմէնուն յայտ-
նի իրեն դին կանցնէին: Ա՛ր խորհուրդս
տըվին իրեն քովի եղած հաւատարիմ բա-
րեկամները, բայց գործադրելու սիրտ չու-
ներ Թագաւորը, կըվախնար չըլլայ որ ա-
չէլի արեանհեղութէ պատճառ ըլլայ:

Ա՛յսիսին 4. եղավ ան անուանի ժողովը
աշխարհախուռմբ իշխաններուս. առաջ Թա-
փօր մը եկան որուն մէջն էին Թագաւորը
Թագուհին ամմէն ընտանեօք, և Թագաւոր-
ազգուն իշխաններ օգնուէ խնդրելով ՅԾմմէ.
հետևեալ օրը 5 ժողվըվեցան 1200 պա-
տուիրակները մէկ մեծ տաճարի (տիվան-
խանէի) մէջ, որ աս ժողովին համար պատ-
րաստըված էր վեհասայէն Թագաւորական
պալատին մէջ. լուիզ ԺԴ. եկավ շափղան
գլուխը դնելով նստաւ իր Թախտը. եկե-
ղեցականաց ու աշխուհականաց կարգնալ
շափղանին գլխընին դնելով նստան, բայց
խիստ զարմացան երբոր երբորդ կարգնալ
որ հասարակ ժողովրդեան պատուիրակներ
էին՝ մէկալոնց պէս շափղանին գլխընին
դրին. աս բանս եւրոպացոց մէջ խիստ մեծ
համարձակութէ է. Թագաւորը չիտեմնա-
լու զարնելով սկսաւ խօսրաթել որուն բո-
վանդակութէը աս խօսքերուս վրայ կըքա-
է: "Ա՛սկայ է ան երջանիկ օրը որուն ան-

,, չափ կրբաղձայի քովը տեսնալ ան ազգին
,, պատուիրակները որուն վրայ կըհրամմեմ:
,, մեկ գար ու կէս անցած է՝ քանի որ չէ
,, եղած աշխարհախուռմբ իշխաններու ժո-
,, ղովը՝ որ թէպէտ մուրըվաճ բանմըմնեը
,, եղած՝ բայց ուզեցի նորէն ընել տալ, ո-
,, րով նոր ուժ մը կրնայ առնել իմ թա-
,, գաւորութիս, հանգստութի գտնալ իմ
,, ժողովուրդս: Ա)ազգաւորական պարտքը
,, որ առաջուցմէ ծանրըցած էր՝ իմ նստե-
,, լէս ետև ալ աւելի շատցաւ. որուն պատ-
,, ճառը եղավ տուրքը եվելցընել, բայց ան-
,, հարկ եղավ տուրքը եվելցընել, բայց ան-
,, հաւասարութիը տուրք տալու մեկ նոր
,, խռովութի մը կրսպասնայ հանել թէ որ
,, աս ժողովը միաբանելով ձար մը չընէ,
,, աս պատճառիս համար ձեզ հոս ժողվե-
,, ցի: Երկու կարգ իշխանութիրու կըլսեմ
,, որ պատրաստ են վճարելու ինչ որ որոշ-
,, վի տալու, յուսամ որ երրորդ կարգնալ
,, (որ է հասարակ ժողովուրդը) ասանկ
,, պատրաստ ըլլայ վճարելու. մեծ ըլլալով
,, խոցը պէտք է քիչ մը քրտնիլ. ասոր վրայ
,, ձեր կարծիքը կուզեմ լսել, բայց խոհե-
,, մութի. կըվախնամ չըլլայ որ ժողովուր-
,, դը շուտով ապստամբի տուրքին ծանրու-
,, թեան համար: Իմա ձեր առջևը կը-
,, դըրվի տերութե եկամուտին չիլտ չափը՝
,, անիկայ լսելէն ետև յուսամ որ մեկ մի-
,, ջոց մը գտնաք շտկելու. փրանսզներուն
,, սիրտը ալեկոծութե մը մէջ է, բայց ձեր
,, իմաստութիը ձեր խոհեմութիւնը կրնայ

„ շակել. իրաւ է որ՝ շատ հեղ պակսերէ
„ աս բանս՝ բայց ձեր իշխելու սէրը մտած-
„ մունքը միաբանվի ան ազգին յօժարուելը
„ հետ որ առատաձեռն է ու միշտ սիրօղ
„ իր թագաւորը: Այս պէտք է որ պաշտպան
„ ըլլամ անանկ ժողովրդեան որ հաւատա-
„ րիմ է, կրբռնէ միապետութեան օրէնքը
„ որ ֆրանսայի պարծանքն է. ընեմ ան
„ ամմէն բանը որ շահ է ու յաջողութի ժո-
„ ղովրդեան. ՚ծ տայ որ՝ միաբանութիւն
„ տիրէ աս ժողովքին մէջը և յիշատակաց
„ արժանի ըլլայ հանելով ամմէն ժողո-
„ վրդեան մանաւանդ աւելի կարօտ եղող-
„ ներուն. աս բաղձանքս երած սրտէս ա-
„ ռաջ կուգայ իմ սիրոյս առաւելութենէ
„ որ ունիմ ժողովրդեանս վրայ: Ինկ դի
„ Հողէք ներսի ատելութիը որ անչափ ատեն
„ է կրվախցընէ ժողովուրդը, յիշեցէք որ
„ ամմէնքդալ եղբար էք. ոչդիքներ մի
„ ընդունիք օտար մտածմունք մը որ դէմ
„ ելլայ ձեր հաստարակաց մօրը հայրենեաց,
„ այլ ձեզի առաջնորդ ըլլայ միակամութիը
„ և բարի նախանձը հաստարակաց բարւոյն
„ համար „:

## Ա. Էջուելեաւ ծողովը յանկարծ Ազգային ծողով հանուանք կ՚ինդը.

1789։

Թագաւորը բարի կըսեպէ աս ժողովը որ պիտոր ըլլար կործանիչ Թագաւորութեան, թէ որ ալ աղէկ մտածէր՝ վերոգրեալ խօրաթային մէջը խօսքեր կան որ՝ պէտքը չէր զուրցել. Թագաւորին եաւ կնքապահ իշխանը (նիշանձի փաշան) խօրաթել սկսաւ, ամմինէն եաւ նէքերը, որ դրսեցի ըլլալով իրեն չէր կրնար աս ժողովքին մէջը իր կարծիքը զուրցել, բայց իրէք ժամին աւելի խօսեցաւ ինչվան ձանձրացուց. զանազան ձամփայները ցցընելէն եաւ ըստակ գտնալու համար պէտք ետքը առաջարկեց նորէն փոխ ըստակ առնել 80 միլիոնի չափ, որուն շահը Ֆրանսան կրնայ տալ ըսաւ թէ որ մանաւոր մարդիկ իրենց արտուներնէրը ձգեն, աղնուականք եկեղեցականք հաւասար տուրք տան ինչպէս որ խօսք տըվին Թագաւորին։

Լսանք լսելով երկու կարգը որ միկընիմիկ պիրենք բերան տըվաւ, չհաւնեցան իրեն խօսքին բայց երրորդ կարգը (որ էր ժողովուրդը) խիստ հաւնեցաւ. քառասուն օրէն աւելի խօսեցան բան մը չկրցան որոշել. միշտ կըհակաձառէին մանաւանդ կերպին վրայ թէ իրենց կարծիքը պրդեօք իրէք կարդ զատ զատ զուրցեն՝ թէ ամմին մարդ

զատ զատ. Թէ որ առջինը ըլլալու ըլլար՝ երկու կարգին խօսքը կըքալէր որ էն ազնուականք ու էկեղեցականք. իսկ Թէ որ երկրորդը ըլլար՝ երրորդ կարգին խօսքը կըքալէր որ էին 600 պատուելրակ հասարակ ժողովրդեան դիացէն, քաղքցիք, փաստաբանք (ավօքադք) ու վաճառականք։ Ալէքերը որ Թագաւորին Թշնամեաց դէն էր՝ աս երրորդ կարգին տէր կելլար. Էսբէմնիլը որ նէքերին խիստ հակառակ էր՝ աղնուականաց մէջէն ըլլալով կրկանչէր՝ Թէ աս ներս մտած օտարականին (նէքերին) միտքը չար է։ Ալտքը վիճակներուն համրանքին վրայ վիճեցան, պինտ ետքը երրորդ կարգին պնդելովը որոշվեցաւ որ՝ երբոր մէկ վիճակմընալ միայն կէսկն աւելի ելլայ՝ հերիք ըլլայ ան կարծիքը բանաւոր սեպելու՝ օրէնքի պէս բռնելու։

Ալն առեն սկսան մարդուն իրաւունքին վրայ խօսքեր դուրս ձգել, ազատութե՛ն հաւասարուե՛ վրայ խօրաթայներ ընել, բայց ուրիշ մտքով ուրիշ մեկնութե՛ որ մանաւանդ դէմ էին մարդկային ընկերութե՛, ինչպես որ կըսեր բօռդալես առենաբանը երբոր երևան հանեց Փրանսայի ու Հնդմայու մէջ եղած միաբանութիւնը, Թէ Ալռնոյ խօսքերով գեռինը ընկա՝ արդարութիւնը, ոճ ունեցողները պէրներո՝ անիրաւութիւն ըրին, պաղպաղան էնկար առնո՛ պաղպաղանելո՝. Բարբարական մարդեկ ամենուն ապրանքը յափշտակեցին, որոնց ալնարգնաւոր էլլոանները հեղինակութե՛ պըված էին։ Ալն ինքնակամ հեղինակութե՛ ժողովքին եր-

ըորդ կարգը որ կին ամէն տեղ ժողովըր-
դեան պատուիրակները՝ յունիսի 17 մինչ-
նիմիկ իրենք զիրենք կոչեցին Ազգային ծո-
ղով. աղաղակեցին միաբերան Կեցցէ Խոհա-
արն և Ազգային ծողովն. ըսել է մինչ ժողով մը
որ ամբողջ ազգը կրնէրկայացնէր, անոնց
ըրածը բոլոր ազգին ըրածը պիտոր սեպ-
վէր. աս բանով Թագաւորինաւ վեր պի-
տոր ըլլար, Թագաւորինաւ հրամինէր, Թէ-
պէտ և ընդհանուր ազգը աս մտքով չէր
ընտրած զիրենք. անչափ սաստկացաւ աս
երրորդ կարգին բռնութիւնը որ ամէնուն
վրայ եկաւ, բանի տեղ չկսկպեց ոչ եկեղե-
ցական և ոչ արտաքին իշխանութիւնը. առ-
ջի բանէրնին եղաւ մինչ բացատրութիւն մը
մինչ վէճիւռ մը ընել ան բանին վրայ որ կըս-
վէր Արդկային երաւունք. ասիկայ կրկայա-
նայ ըսին մարդկային ազատութիւն ու հաւա-
սարութիւն վրայ. աս ընդհանուր անունով
ձամբայ մը բացին ամէնն սանձարձակութիւն
ու անպետութիւն. ասանկով հասարակ ժո-
ղովուրդը իրեն ձեռքը ձգելով ամէնն իշ-
խանութիւն ամէնն իրաւունք՝ ինչ որ կուզէր
կընէր. իրեն մինչ կապ մը մինչ խափանա-
րար մը չիձանձնալով Թուրը ձեռքը առած
ամէնն բանի վրայ վէճիւռ տալ սկսաւ, ամ-
մէն բանի հրամինել. անոր համար շուտմը-
նալ վէճռել սկսաւ Թէ ան տուրքը որ տալ
սկսերէին՝ շարունակվի. և Թէ ինքը մինչ
ուրիշ ժողովքի մը յանձնել պիտոր որ ձա-
րը գանայ չքաւորութիւնէ խոլցրնելու Թա-
գաւորութիւնը. ասով եղաւ որ իշխաններ-

նաև իրենց արտունուվճիւնները կորմնցուցին • որովհետև ազգը աւելի մեծ է քան իշխանները՝ ազգին ձեռքն է ամէն իշխանութիւնը որուն ներկայացուցչութիւնը մենք ենք ըսին։ Այդ ան որոգայթը որ այսչափ ատեն կըմտածէին Թագաւորը կորմնցընելու՝ ասանկ ընելով ձեռք ձգեցին, այսինքն է իրենք ունենան մէկ իշխանութիւն մը որ Թագաւորին վրայ իշխէ հրամայէ • բայց աս իշխանութիւնը իրենք իրենց տրվին և ոչ ազգը։ Այդ Թագաւորին հնուցմէ վեր ազգը սովաձ էր իշխանութիւն զիրենք կառավարելու։ Այս բոլոր Թագաւորին ականջը հասուցին, հասկըցուցին վտանգը որուն մէջը ընկաւ ինչպես որ առաջ գուշակերէին • նորէն խորհուրդ տրվին իրեն որ գլուխ ըլլայ օտարական զօրաց վրայ որ ինչվան ան ատեն հնազանդ էին, երթայ փարէզ զսպէ ցրուէ նորահնար միաբանութիւնները • բայց Թագաւորը իր կակուղ բնութիւնէն աւելի մարիկ դնելով նեքերին ու մէկ քանի քովիններուն որ ներսէն Թագաւորին դէմ էին՝ կըվախնար ասանկ արիութիւն բանեցընելու • պատճեայի մտածեցին նաև ուզեց որ ոտանաւոր ու ձիաւոր զօրք առնելով իրեն՝ երթայ բռնէ երևելի տեղվանքը որ յարմար էին ապրուստամբներուն զսպելու՝ բայց անորոշ Թողչտրվավ Թագաւորը այլ մտածեց ինքը անձամբ երթալ ան ազգային ժողովին մէջը՝ իրենց ամէն մտածածը ոչնչացընել • սեպելով որ ասչափ հերիք կըլլայ անոնք վախցընելու։ Իրեք օրէն ետև յունիսի 20 եր-

բոր պիտոր ժողվըվելին ուր եկեղեցական-
քալ պիտոր միանալին անոնց հետ՝ խմացան
որ ժողովնին կախեալ էր, Թագաւորը ար-
գելեր էր. ինքը պետք էր որ գար նստեր հոն
ամսոյն 22ին. անոր համար իրեք օր գոց պա-
հելով տեղը զարդարելու հետ եղան Թա-
գաւորին Թախտ շինելու համար: Պատուի-
րակները գալով գոց տեսնալով տեղը շատ
սրդողեցան. վեռսալեայինն մէջ բաց տեղ
մը որ գնտակ խաղալու տեղ էր ժողվըվե-
ցան. հոն իրարու սիրտ տալով խօսք դրին,
ձայնելնին բարձրցընելով նշաններ տա-
լով ամենը մեկտեղ երդում ըրին, Որ
ըլլայ ժողվըվինք, ոչնչինք, բայց երբոր էրթանք
վինք, ինչպան որ մէկ սահմանադրութիւն մը չունինք ու
րով ապէր նոր ծնանիք: Այս օրը այսինքն յունի-
սի 20 իրենց մէջը խիստ նշանաւոր եղավ,
որ տեղին անունով կըսեն Ջեու էրտան փոս
կախաղանը. գաղղերէն Վերսան փոթ թէօ պէ
բօմ: Այսոյն 22 պատուիրակները վեռսա-
լեայի մէջ բարբարական կըպատահին ժող-
վելու տեղ մը գտնալու, վերջապէս գնա-
ցին սուրբ լուիզ եկեղեցւոյ մէջ ժողվըվե-
ցան, ուր 149 եկեղեցական պատուիրակ-
ներ միացան հետերնին որոնց մէջ շատ ե-
պիսկոպոսներալ կային. Թագաւորը 23ին
նստաւ ժողովին մէջը իր ամենն փառաւո-
րութիւնը որ մեկ ներգործութիւն մը չըրավ.
Թագաւորը ելավ գնաց ժողովին՝ բայց ե-
րբորդ կարգին պատուիրակները ինային Թա-
գաւորին ըսածը մերժելու համար. Թագա-
ւորը մարդ խրկեց որ ելլան երթան, բայց

իրենց գլխաւորը աս պատասխանը տրվավ. Յոյներուդ ներկայացնօղները մարդու մը հրամանէ պակ չէն կրնար ընել, այլ օրէնքները ան ծողովին հրամանին պակը պէտք ըլլան: Ինն յաղթակէց մեռաւոն ըսավ պրէգլէնին որ Թագաւորին հրամանը բերօղն էր. Վանաւ ըսէ տուէլին որ մեկ գունդ մը զօրաց ծողվել տայ ազգային պահպանութեե համար, հեռըցընէ ան զօրքը որ փարէզին չորս դին կեցեր էին, դեսպաններնալ տեղերնին դարձընէ. առաջարկեց որ Թագաւորուե պարտքը ազգային պարտք սեպվի, բացը ելլալը կամ միւհլիւզ ելլալը ոչինչ սեպել տրվավ: Յողովին մէջ կենալովը գիտես թէ բոլոր Ֆրանսայի կըխօսէր անանկ բաներու վրայ որ պրստամբութի կըդրդռեն, Թագաւորին յաջորդութեը վրայ, անոր վճռին վրայ, կառավարութե վրայ, հասարակաց երաւանց ու զանազան մասանց կառավարուե վրայ, խաղաղութե ու պատերազմի երաւանց վրայ, որ գործադիր իշխանութեը չհնար կըսէր, կալուածները վերցընելու վրայ: Ինչ անանկ խնդիրներ էին՝ որ շատ հեղ ըրա պատին մէջը խօսելը աղէտ բան մը կերևնայ, բայց ետքը գործադրելու առնը խիստ տարբեր կելլայ, ինչպես որ շատ

բանին մէջ փորձը յայտնի ցոյց ֆրան-
սային. եկեղեցականաց ապրանքնալ ազ-
գին ապրանքն է ըսավ: Նոյնք կուրցեւլէն
եւս առաջարկեց որ ազգային ժողովը հի-
մակուհիմա ծածուկ վճռով մը հոն տեղւոյ
եղածները հրատարակէ իբր արժանաւոր
ու օրինաւոր պատուիրակները. աս առա-
ջարկութիւնը շուտ մը լմնցուցածնին պէս ի-
րենց տեղերը նստան, ինչերնին սկսան խօ-
սիլ Թագաւորին ըսածներուն վրայ. և որ-
պէս զի վախէն խալըսին՝ իրենք իրենց վրայ
վճիռ հանեցին թէ ինկը չիկրնար պատժել
աս ազգային ժողովքին պատուիրակները.
ով որ յանդգնի անոնց ազատութենէ դպչե-
լու՝ քրէական յանցանք սեպվի: Ին տես-
նը միւսայօն դարձաւ իրենց աս խօսքը ը-
սաւ. Թագաւորական բռնաւորութիւնը կրնայ ը-
լալ որ ղէպ ամէնսսալ ըռւբէ անցընէ՝ գէպինը չգէ,
բայց աս ըրած բարբարոսութիւնը չէնկրնար խալըսել
25 ղէտեն ջրանսպնէրէն՝ որոնց վէրէձնդէրը պէտք
ըլլան ղէլէ որ ամբողջ ապգը կընէրկայացընէնք:
Թագաւորին մարդիկներէն միայն նէքէրը
եղաւ որ ժողովին մէջ չեկաւ, ուզեց իր
պաշտօնը թողուլ՝ բայց շատոնք նաև Թա-
գուհին Թող չիտրվին, որուն վրայ ժողո-
վուրդը խիստ ուրախացաւ:

## Ս. Լեհաստանի դատական ընթացքը, ժողովրդեան խռովութիւնը.

### 1789։

Իրեք կարգ ժողովականաց իրենց ժողովները կընէին քայլ զատ զատ. որ էին ազնուականք եկեղեցականք ու հասարակ ժողովուրդ. քայլ եկեղեցականք քիչվոր էին. ազնուականաց մէջէնալ օրէնսդուքսը 47 ազնուականներով (որոնք ըստրկով իրեն դին էր քաշած) ձգեց իր ազնուութիւնը, յունիսի 25 գնաց միացաւ երրորդ կարգին հետ որ էր հասարակ ժողովուրդը. ասով երրորդ կարգը աւելի հեղինակութիւն մը առաւ քան միւս երկուքը. ասոնց ալ աւելի յաջողութիւն տալու համար՝ ժողովուրդնալ խռովութիւն կը հաներ փարէզի նաև վէրսալէայի մէջ, այնչափ որ փարէզի արքեպիսկոպոսին վրայ վազեցին քարկոծելու համար, հազիւ կըրցաւ փախչիլ։

Այս առեղծան պատմութիւնը ինչ որ պիտոր պատմենք աղէկ հասկընալու համար պիտի նալու բան է, որ փարէզի մէջ թագաւորական պալատ մը կար, ասիկայ եաքը օրէնսդուքսին վերաբերելով՝ հոն միշտ ժողով կըլլար ասդուքսին հրամանին տակը. ուր կըմըտածեին խորհուրդ կընէին օրէնսին ուզածը առաջ տանելու. քանի մարդալ կար որ ասանկ նորութիւններ ընելու հոգ ունէր՝ ամէնն նալ հոն կըժողվըվէին.

անանկ որ պարապ չէր մնար բազմութենէն ո՛չ գիշեր ո՛չ ցորեկ. աս ժողովը կիշխեր մեկալ ազգային ժողովին վրայ, ուր ազատը ընել կուտար անոր. մեկմը որ՝ 150 հազար զինեալ մարդ քովը պատրաստ ունէր իրեն. մեկմնալ որ ազգային ժողովքին մէջնալ շատ համախոհներ ունէր իրեն: Յանկով երբոր Վաճառաւրեան պալատ կըմտնէր փարեզին մէջ աս օձլեանսներուն պալատը պիտոր իմանաս. իսկ փարեզին մեկալ պալատը ուր երբեմն Թագաւորը երբեմն ազգային ժողովը կերթայ, անիկայ Վաղչին պալատ կամ Ինակարան կըսվի: Վանք հիմա օձլեանսին վրայ. ասիկայ որովհետև երդվեցած էր վրէժ առնել ան քամահրանքին որ Թագաւորը ու Թագուհին իրեն կըցցընէին՝ աս պարագայներս իրեն աղէկ միջոց առնելով յայտնի բացաւ իր միտքը: Որոր Թշնամուե պատճառները թէպէտ առաջները պատմերնք, բայց հոս մեկ դիպուածմընալ պատմենք յատուկ Թագուհիին դէմ ատելութենէ կապելու. օր մը օձլեանսը գեղի ատեն իր սեղանը կանչերեր Թագուհին, որուն խնդիրքը կատարելու համար գնայ Թագուհին. բայց սեղանին վրայ տեսնալով որ՝ իր քովը պիտոր նստեր օձլեանսին հարճը, դժվարելով ապսպրեց անոր հեռըցընել ան կնիկը իր քովէն[1]. աս կնիկը

---

(1) Գազարա պիր եապան Թասը սունուլսա ալ Թուն քեասէյէ,
նէ Թասըն գըմէթի արնաը, նէ գըմէթէն ախուշը քեասէ:

Ձենլիս ըսված Թէպէտ դուրս ելալ սեղա-
նէն , բայց կատղելով երդվըցաւ վրէժ
առնել Թագուհիէն , և որովհետև կնկան
ամէն կիրքը ան դիի ծայրն է՝ աս կինս էր
որ միշտ կըգրգռեր օռլեանսին դուքսը ար-
Թընալ իր Թմրութէն , հնարք մը գտնալ
Թագաւորը Թախտէն վար ձգել , ինքը ա-
նոր տեղը Թախտը անցնիլ . աս կնիկը ե-
տևէ խնալով չար միաբանութէ մէջ մտուց
պիւօն դուքսնալ ուրիշ մենծերալ՝ որոնք
ամէննալ բարերարութէ տեսած էին Թա-
գաւորէն . ասանկով մէկ դիէն մէկալ դիէն
վերջապէս կնիկներու ձեռքով պիտոր կոր-
ծանէր ֆրանսայի Թագաւորութիը :

Հիմա օռլեանսին ուզածը առաջ տանելու
համար իրեն համախոհները ըստակ բաժ-
նելով ժողովրդեան ու զինուորներուն ան-
կարգութէ ընել կուտային [1]. զինուորնէ-
րը անկարգները բռնել զսպելու տեղը հե-
տերնին կըմիանային, քանտերը կըբանային
կապեալները կարձրկէին : Ամէնուն բեր-
նէն աղաղակը աս էր որ՝ խաղաղութէ ըլ-
լայ , իրեք կարգ ժողովականաց մէկ ըլլայ .
Թագաւորը հրամեց ազնուականաց ու եկե-
ղեցականաց գլխաւորներուն որ միանան
մէկ ժողով ըլլան . անոր վրայ եկեղեցա-
կանք շուտ մը միացան բայց ազնուականք
ուշացան . ետքը լսելով որ Թագաւորին

(1) Թէսատուր էյլէսէ նատան՝ զամ տէյիլ ֆէվ-
գինտէ տանանըն ,
օլուր Ձէվհէր տիպինտէ , խասուխար ֆէվգինտէ
տէրեանըն :

կեանքը վտանգի մէջ կ՚ինար՝ իրեք կարգ-
նալ յունիսի 27 մկ տեղ միացան։ Յա-
գաւորը ուրախացաւ բայց լուչէմպուրկին
դուքսը արձուն մարդ ըլլալով հասկըցաւ
որ աշխարհախոմբ իշխանները անունները
փոխելով հրամանքի դէմ և ան թղթերու
դէմ որով կանչըված էին ժողվըվելու՝ թա-
գաւորական իշխանութիւնը շուտ մը պիտոր
ոչնչացընէին, աս բանս խափանելու հա-
մար պէտք է ըսավ թագաւորը քու զօրքդ
ցրցընել, ուրիշ ձար չիկայ։ Յագաւորը
պատասխան տրվավ ասոր. ես ամէնն բա-
նի համար մտմտացի, որոշեցի ամէնն բա-
նէն անցնիլ, միայն թէ մարդ մը չիկորսը-
վի իմ իշխանութիս պաշտպանելու համար։
Յողովուրդը աս բաներէս համարձակուե
առնելով զինքը ազատ սեպելով՝ փարէզի
մէջ ուրիշ տեղվանքալ ալ աւելի անօրէ-
նութիներ կընէին. ասոնք արքունիքը լսե-
լով որոշեց փարէզի մօտիկցընել ան զօրքը
որ շատ հեռու չէին։

Յուկեանները զօրք բերել տալ լսածնին
պէս յարմար առիթ սեպեցին խռովութիը
աւելի սաստկացընելու թագաւորը կործա-
նելու. բարձրաձայն աղաղակել սկսան որ
վէհասլեայի մէջ խորհուրդ կընեն մեզ փա-
րեցցնելները ու ազգային ժողովը ջարդելու.
աս ձայնէս վախ մը ընկաւ ամբողջ փարէ-
զի մէջ որ ամէնն բանի խիստ դիւրահա-
ւատ է. եւեւէ եւս գրուածներ կելլային,
աս պիս ան դին թղթեր կրկպցընէին։ Ա-
խօսքերս պատճառ եղան, ան հնցած առե-

լուրթին որ մարած կրկարծէին Թագաւո-
րին ու Թագուհիին դէմ, մկկնիմկ բռըն-
կեցաւ. ժողովուրդը ապստամբիլ պատ-
րաստըվեցաւ. մանաւանդ որ օրէնսանէ-
րը երկրէն պղնձէ կտորներ կըբաժնէին
ժողովրդեան գաղտուկ. աս կտորներուն
վըայ դրած կար Լէկյէ օ-Լէանս, ամէնուն
ձրի գինի ուրիշ խմելիքներու կըբաժնէին.
անզգամ մարդոց՝ քաղքին պահապան զօ-
րաց՝ նաև ան զօրացը որ դուրսը կեցած
էին բուռ ըստակ կուտային ապստամբելու
յորդորելով: Քաղքացիք դիմեցին ժողովը-
վեցան Թագաւորական պալատը որ ինչպէս
ըսինք օրէնսանէրուն ժողովատեղի էր.
մէջերնէն Լէռէն անունով փաստաբանը
յանդգնեցաւ, ան պալատին առջին բարձ-
րաձայն խօսիլ սկսաւ. խօսքին մէջը առա-
ջարկեց որ օրէնսանսին դուռքը ըսվի Լէդ-
հանոթ պեղակալ Քրանսայէ Նագաորութիւն: Լէռ-
գայեն ժողովական միւսապօին խօսքէն շար-
ժեալ խնդրեց Թագաւորէն որ զօրքը հե-
ռըցընէ փարեզին քովէն ու վերադայլանէն.
Թագաւորը պատասխան տըվաւ որ՝ ասանկ
վտանգաւոր ատեն ան զօրքը կեցած են հոն
միայն հասարակաց խաղաղութիւը պահելու
համար. բայց միւսապօն խիստ վախնալով
իրեն ու իր համախոհներուն համար՝ ոտք
կոխելով կըպահանջէր զօրաց հեռընալը,
ասանկալ ապստամբներուն ուրիշ գլխա-
ւորները կըպահանջէին, ամէնն փարիզցոց
ձանձրնալով Թէ արքունիքը առդուայի կոմ
սին դրդելովը (որ Թագաւորին եղբայրն

էր), պատրաստուէն կրտեմնայ միտքը դրե-
րէ մէզ ամմէնքսալ Ջարդելու։ Այս որով-
հետև ամմէն անկարգութէն գլխաւոր պատ-
ճառը նէքերը սեպհելով՝ Թագաւորը անի-
կայ քանի մը հոգիով յուլիսի 11 գաղտուկ
քշերը, ժողովուրդը 12ին իմանալով ան
ատեն որ ալ նէքերը ֆրանսայէն դուրս
ելած էր ֆիանտրայէն դիացին՝ առջի բե-
րանը չհաւատացին, անչափ որ վէրսայ-
լաէն առջի եկողը աս բանս պատմողը ու-
զեցին սենա գետը ձգել. երբոր ուրիշնե-
րէնալ ստուգեցին՝ ան ատենը յուսահա-
տութիւը տիրեց. յուսահատութենէն կա-
տաղութի՛ եկաւ վրանին։

## Պաստիլիան խառնէն կըտակէն.

## 1789։

Նէքերը չիյտես ինչ ուներ վրան որ՝ ա-
ռաջալ եռքնալ ատելի ըլլալով՝ բայց ժո-
ղովուրդը որ ամմէն բանին ան դիի ծայրը
կանցնի, անանկ վարկում ուներ վրան որ
իրեն կիսարձանը ծաղկընեռկ շինված պատ-
կով զարդարված աթենացոց պէս հրապա-
րակ տեղ դրին, օրէնսանին կիսարձանին
հետ մէկ տեղ բազմութի՛ ժուռ ածցուցին։
Հագաւորական զօրայ հրաման գնաց ա-
տոնք ցրուել, զօրքնալ Թուրեր զարնելով
կիսարձանը Ջարդեցին շատ մարդալ զար-
կին. լամպէշի լօռէնայի իշխանը նոյն Թա-
գաւորական նեմցէ զօրքով կեցած էր փա-

ըհղին ան հրապարակին մէջը որ ժէ. լուխ զլխին անուն ովը կիշվի. ժողովուրդը ասոնց վրայ անձրևի պէս քար քիրեմիտ կըթափէ ին, անանկ որ հարկ եղաւ զօրաց Թուրքը Ձեռվընին Թուլկէռին պարտիզին մէջը քաշվիլ. հոն զօրապետնին աղեկ մը չհնայելով՝ ան ամբոխին մէջէն մէկ ծերու մը գլուխ զարկաւ որ զինք չուներ վրան, անկից տղաք ու կնկտիք վախերնէն բարձրաձայն աղաղակ վերուցին, Թօփ նետեցին, ժամերու զանկակներ զարնելով ամէնն ալ օգնութեի կանչեցին մենծ ու պզտիկ արք և կանայք։ Սելով որ լամպէղի իշխանը շատ զօրքով իրենց վրայ կուգայ՝ մենծերուն տունները մտան, անոնց կնկտիքը ու տղաքը դուրս հանեցին, իրենց առջին ձգելով անանկ քալեցին եկող զօրայը դէմ, որպէս զի Թէ որ Թօփ նետելու ըլլան վրանին՝ առջի մեռնողները ասոնք ըլլան. իրենք իրենցմէ վար ձգեցին վաճառականներուն գլխաւորը որ քաղքին մէջ մեծ իշխանութիւն ունէր, ասանկալ ձգեցին իր տակի եղողնիրը. նոր քաղաքական զօրք ժողվել սկսան. հին պահապան զօրքնալ յորդորելով սէր ցըցընելով իրենց դին քաշեցին. երգումտալ տալվին իրենց վրայ Թուր չքաշելու. ուրիշ զօրքերնալ ասոնց հետևեցան նաև ան կրԹեալ զօրքերնալ որ փախած էին. անչափ սէր կապել տալվին իրենց վրայ որ փարէզին մէջ զինուորները քաղքցոց Թևէրէն բռնելով մէկ տեղ կըքալէին. աս զօրքը բազմութի վերոյիշեալ Թագաւորական

պալատին մէջ խօթելով՝ հոն կեր կերա-
կուր խմելիք տալէն ետև մտովընին կըխօ-
թէին Թագաւորին հնազանդութէ դուրս
ելլալ՝ ազգին հնազանդիլ. առաջ որ կ'ես-
ջե երբորդ կարգ եղեռնէրո՝ կըկանչէին (ա-
սով իմանալով ժողովրդեան պատուիրակ-
ները), հիմա ամէնն ալ մեզ կ'եսջե ազգն կը-
կանչէին, որովհետև ան պատուիրակները
իրենք զիրենք ազգ սեպեցին:

Ամէնն փարէզցիք ինչվան կնկտիք նորնշան-
նէրով հագուստ մը հագան. երբոր օձլեանս
ըս ետ կըդառնար ժուռ գալէն՝ իր առա-
պային վրայ վազելով կաղաչէին որ իրենց
օգնութէն մը ընէ ալքունեացը դէմ, որով-
հետև մեզ փարէզցիները ամէնքսալ պի-
տոր կոտրէ կըսէին. սա չար յուդիանոս-
նալ իրը բան մը չիգիտցող ցաւակցելով ա-
նոնց վրայ ասչար խրատը տրվավ. Կ'իմանաք
որդեակներ ըսավ. մեղ որ սա խեղճութը մէջ ընկաք,
ձեզի ո՞րտեղ ձար չկայ որ՝ փայն մէկ հարուկ ձար ա-
մէնդեալ կընդ առնելն է վրանիդ: Կ'ինքն եր որ
ասվախս ձգել կուտար ժողովուրդին վրայ,
ինքն եր որ ետքը կըմեղքընար: Կ'ըսոր խօս-
քին սիրտ առնելով ան չարաժողով բազ-
մութիը վազեցին կոտրեցին հիւանդանո-
ցին դուռը ուր 30 հազար թիւֆէնկ ճալ
Թօփ պահված կային. ասոնք առնելէն ե-
տև մէկ նաւակմընալ պարունթ առին որ
սենա գետին վրայէն կուգար. զինք ծա-
խօնէրուն խանութներնալ մնալով զինք
առին, Թագաւորական զօրքին մէկ խումբ
մը զարկին. ասկից իրաւցընէ ծեծ մը բաց

վեցաւ ժողովրդեան ու զօրաց մէջ յուլիսի 13 օրը լինչան որ գիշերը վրայ եկաւ։ Դուրսը եղող անզգաստները ան գիշերը պատնէշները երելով փարիզին մէջը մտան. շատ բան ունէին ընելու՝ բայց գիշերվան խավ պատճառ զինուորները Թող չտրվին. եաքը մէկի մը խորհրդով ազատեցաւ փարիզ իրենց կոտորածէն. 200 հազար մարդ կայ ըսավ փարիզի մէջ զէնք առնող՝ բայց մէկ գլուխ մը վրանին չկայ. աս խօսքէս արթննալով գլխաւորները դրին, ժողովուրդը սկսաւ անոնց հնազանդիլ։

Յուլիսի 14 եղավ յատուկ օր մը ամբոխուն ու փոփոխութեն ֆրանսայի տերութեան. 60 հազար հոգի զինեալ ոտքի վրայ կեցած էին. առտըվանց վրայ հասան ազգային ժողովոյն պատուիրակները իբր խաղաղեցնու համար ապստամբած ժողովուրդը, բայց մովընին առաջնորդել էր ան ամբոխին որ վախճանին հասնին, ինչպէս որ գաղտուկ խորհուրդ ըրեր էին չար միտքանեալքը։ Ընդհանուրը ոչ որ կըտեսնային ան ամբոխին մէջէն աւելի սրտոտ աչելի յանդուգն՝ 6 կամ 7 հազար հոգիէ շինչ բաժնեցին որ գաղտուկ շինած պատրաստած ունէին աս բանիս համար. օդիսանոցին ծառայներնալ իրենց տանը նշանները հագուստը հագած յայտնի կըկառաչարէին ան բազմութեն ամբոխը որ միշտ ետևնալու հետ էր. օհարսըկէն երկու ժամ անցնելէն ետև աս բազմութիւնը ձերմակ դրօշակ բացած ունենալով վազեց պասթի-

լեայն վրայ, որ բերդ մընեը ժա. լուիզ Թագաւորին սահմանը չհինված, բանտի հա- մար բանեցուցած. մտվընին ան էր որ՝ հոն եղած զինքերնալ իրենց ձեռքը ձգեն, Թող տուր ուրիշ մտքերը: Լերդապահը լսնայ անուն ուզելով քաղուելի ցցընել՝ 200 հո- գի իր զինուորներին ներս առնելով կա- մուրջը (քէօփրիւն) վեր առնելով որ կատ- ղած ժողովուրդը ներս չմտնայ՝ ասոնց վրայ Թօփերը պարպեց, կէսին չափ ուրը մեռ- ցուց ուրը վիրաւորեց. բայց ան ամբոխին մէջէնալ ժողովուրդը իրեն վարպետները ու- նենալով՝ Թօփ պարպելով՝ կամուրջը վեր բռնող շղԹայները (զինճիրները) կոտրեց կամուրջը վար ձգեց, անոր վրայէն անցնե- լով, յարձակեցաւ: Լ՚ս տեսնալով բերդա- պահը հետերնին խօսք կապեց դռնները բա- ցաւ [1] ժողովուրդը ներս մտաւ բերդին մէջ. հետևաւ օրը անանկ քակեց որ գետ- նի հետ հափ հաւասար ըրաւ. Թէպետ և մէջը հասարակ ժողովուրդէն մէկը չիկար բանտը դրած. բերդապահին գլուխնալ կտրելով սուրի վրայ տնկելով ամէնն տեղ ժուռ ածցուց. ասանկալ ըրին վերոյիշեալ վաՀառականներուն գլխաւորը ու բերդին պահապան զօրքը ամէնքնալ ջարդեցին: Լ՚ս ամբոխը գիշեր ատեն լսելով որ դուր-

---

(1) Ուրիշները կըգրեն որ լսնայ առաջ ժողովուրդին հետ խօսք կապելով անձնատուր ըլլալու՝ ժողովուրդը ներս բակին մէջը առաւ. եաքը խաբէութէ վրա- նին Թօփ պարպեց. անկէց ժողովուրդը կատղելով յարձակեցաւ առավ:

սէն զօրք կուգայ իրենց վրայ, զանկակիներ զարնելով ոտք ելան, անչափ շատցան որ 800 հազարի չափ եղան [1] ամմինոնալ զինեալ արք և կանայք, որոնք ամմինոնալ բարձր ձանով կրկանչէին Լէյեյ Լլաաու-է. Թօփիր տարին պատնէշներուն տեղը շատ հեղ պարսպեցին. ամմին տուն վառած պատրաստ կեցած զօրքը զարնելու. Ամմիուն քարերը քակելով տուներուն մէջը առած, ինքինին պատրաստ կեցած զինուորներուն վրայ ձգելու։

Յաւաւորը վախէն ալքայեն ծաղովին հապաւինէ, Նէոէրը եա կըհանէվէ։

1789։

Բանը բռնկեցաւ գէշի գնաց, ձեռք առնելու Ճար չմնաց. արքունիքը սասանված ծնալով կըյիշեր հառաչելով աս Թագաւորին հայրը, որ տարաժամ մեռնելով 1765 չկրցաւ Թագաւորել. Թէ որ անիկայ ողջ մնացած ըլլար կըսէին, իրեն խելքը Ճարպիկութիւը կրնար խափանել աս ապստամբութիւնը որ շատոնցմէնկ կըպատ-

(1) Աչքափ բազմութենեն հասկըցիր որ դուրսեն շատ մարդ եկերէին փարէզ. որովհետև փարէզին բնակիչքը ոչ երբէք հասած է եղեր 800 հազար, այլ տղաք կնկաիք մէկ տեղ 750 հազար. ինչպէս որ աս խռովութենէ առեն իրենք Ճիշտ համրելով գտան, և մերժեցին իրենց առջև օրացոյցներուն մէջի գրածները, որ միլիոն մը բնակիչք կըդնէին փարէզ։

թաստէին ֆրանսայի մէջ անհաւատներուն ժողովը. Հիմա ժէ. լուիզ Թագաւորը չի- կըրնալով ուրիշ բան ընել՝ իր յոյսը դրե- բեր միայն ան զօրաց վրայ որ փարիզին ու վերսալեայինն մէջը կեցած էր պաշտե մա- ուեշալին տակը՝ որուն ձեռքը կապուածի պէս էր, մէյմընալ ան օտարական զօրաց վրայ որոնց գլուխը էր լամպէշ իշխանը, բայց մեծ մասը անոնցմէ ըստակ ուտելով Թագուհեր ապստամբներուն դէն գացեր- էին. օրինակ առնելով իրենց հազարապետ- ներէն որոնց շատը ասանկ եկին ըրած։ Ա- գայինն ժողովը երկու հեղ մարդ խրկեր էր Թագաւորին զօրքը հեռացընելու համար, բայց Թագաւորը մտիկ չէր ըրած. ջորս դէն

ջուր կտրած չկրտեր ինչ ընէ։

Ամբոխը գիշեր ատեն իրեն քունին մէջն էր՝ լեանքուռ դուքսը որ Թիւրին աւագ հան- դերձապետն էր նեղս մտաւ Թիւրին խուցը, իրեն լմացուց եօթի բօթը՝ Թէ բոլոր փարիզ ապստամբեցաւ չլինցաց քեզի ոչ ժողովուրդ ոչ զօրք ոչ իշխանուն. վտանգի մէջ է քու- կին կեանքդալ ամէն ընտանեացդալ։ Ա- ձայնին վրայ շփոթած զարմացած ցնալով Թագաւորը, չուզելովալ աւելի Թշուառու- Թեան մէջ ձգել ֆրանսզիները, ուրիշ միտք մը որոշեց ընելու բոլորովին դէմ ան մըտ- քին որ երկու շաբաթ առաջ մտածվերէր. առաջ երկու վերոյիշեալ զօրապետներուն շուտ մը հրաման խրկեց ետ դառնալու, ո- րովհետև ասոնք տեսնալով որ օրէօր փախ- չող և անհնազանդ զինուորները կըշատ-

նային , վախցան չըլլայ որ անոնք ժողովը-
դեան ձեռքը մատնեն զիրենք , անոր հա-
մար սահմանագլուխ տեղվանքը փախած
էին ուր որ մահիկ էր . եաքնալ լինքը մեկ
նուաստ յաճ գործք մը ըրավ , առանց պա-
հելու իր շուքը իր մենծութիւը , մեկը հե-
տը չառնելով ոչ մենծերէն ոչ պահապան
զօրքերէն գրեթէ մինակուկ ազգային ժո-
ղովրդին մէջը երեսյաւ յունիսի 15 . օգնութի
ու պաշտպանութի ուզելով իրենցմէ . որ
ըսել է՝ Թագաւոր մը իր ապստամբած ժո-
ղովուրդէ , ասանկ վախցած մէջերնին է-
րևնալով՝ վախէն սիրտը ելլալով խօսքերը
կարտելով աս զուրցեց ։ “ Ի՞հաւասիկ ես
„ ալ հոս եկայ ձեր մէջը , եսալ մեկ եղայ
„ իմ ազգիս հետ որուն վրայ դրեբեմ իմ
„ ամէն յոյս . օգնեցէք ինծի աս ցաւա-
„ լի ժամուս մէջ . աս իմ վիճակսալ հաս-
„ կըցուցէք փարեզցոց „ ։ Ժողովը սկսաւ
Թագաւորը մխիթարել , բայց առաջարկեց
որչափ հարկաւոր էր նեքերը ետ կանչել .
շուտմընալ մարդ խրկեց փարեզ հասկըցը-
նելով ժողովուրդին որ Թագաւորը մեր ժո-
ղովին ընկաւ բանը շտկելու . օրէնսանսնե-
րը շտկվելու ձայնը չէին ուզեր լսել , կը-
վախնային չըլլայ որ խաբվելով եաքը պա-
տիժ քաշեն . անոր համար յունիսի 16 եր-
կու գլուխ ընտրեցին որ Թագաւորին հրամ
մեն խորհուրդ տան . մեկը եղավ պայլի ըս-
վածը՝ որ երևելի մարդ էր իրեն շինած
գրքին համար՝ որ է աստղաբաշխական պատ-
մութի . մեկալնալ եղավ ֆաժէդ մառքե-

զը փառասէր Մարդ՝ որ ամբիկայի ծեծին մէջ անուն էր հանած. առջինը ըսվեցաւ Դատաւոր (տրիբուն) ժողովրդեան, Վերակացեալ փարեզի. մկալը ըսվեցաւ Դատաւոր (տրիբուն) քաղաքական գինուորական. որ էր հրամայօղ գլուխ ան զօրաց որ ըսվեցան Ազգային պահապանք։

Ըն մարդն որ ազգային ժողովը վէճասայլեան փարեզ էր խրկեր՝ ետ չդարձաւ. արքունիքը միայն կըլսեր ժողովրդեան պղտրուիը՝ հնազանդելու դժվարութիը՝ կասկած կառնէր որ շատը ան ժողովքին աւելի ապստամբութե դրդօղ կին տակէն քան թէ հնազանդութե ինչպես որ իրաւ էր։ Ֆրանսային մենծերնալ թագաւորութեան հետ միանալուն տեղը ուսկից որ ունեցեր կին իրենց մենծութիը, փոքրոդի ըլլալով ու վախկոտ՝ յուլիսի 15 մէկմէկ դի փախան, ասոնք էին առաջուայ կամ առաջնիայի կոմսը որ Թագաւորին եղբարն էր, որուն խիստ թշնամի էին օրէնսեանք, քօնտէ ու լամպէռ իշխանը, բօլիմնաքին ընտանիքը, ուրիշ շատ մենծեր փախան նեմիկին սահմանները։ Թագաւորին քով միայն միայն բաւականին կոմսը որ նայնպես իր եղբարն էր, քանիմը նալ իշխանները։ Ըս յուսահատելու բաները տեսնալով Թագաւորը աղէկ սեպեց ժողովրդեան մէջ երևնալ, Թէպէտ և իրեն ընտանիքը դէմ կըկենային. անոր համար առաջան մտնալով փարեզի մէջ քալեց յուլիսի 17. մտածելով որ խաբված ժողովուր-

դը տեսնալով իր Թագաւորը ասանկ պարզ սրտով իրեն ապաւինած՝ նորին կը դառնայ Թագաւորին հաւանուե տակը յոքնած ըլլալով իր կատաղութէն. և որովհետև իր հետը ընկերացած էին քանի մը մարդ ազգային ժողովքին մէջէն՝ փարեզին նոր քաղաքապետը վերոյիշեալ պայլին դրանը մէջ գալով հանդիսով ընդունեցաւ, փարեզին բալլիքները Թագաւորին ձեռքը տալով համարձակեցաւ ըսելու: "Ասոնք են Թա-
"գաւոր ան բալլիքները որ ատենօք ջ-
"էնրիքոսի տրվեցան. անիկայ իր ժողո-
"վուրդը վաստկեցաւ, հիմա ժողովուրդը
"իր Թագաւորը վաստկեցաւ": Ասկէց ա-
ւելի հեգնական խօսք գտնուեցաւ լալի դօլեն տալը որ ազգային ժողովին մէջէն էր: Ասանկով քաղքին պալատին մէջը գնաց Թագաւորը նստաւ, հանդիսով ընդունեցաւ պայլին ու ֆաժէդին ընտրութիւնը, ասանկալ ընդունեցաւ ինչ որ փարեզին հաստարակութիւնը ըրեր էր ապստամբութեն հանելու. հարկ եղաւ իրեն լռել երբոր տեսաւ ամէն ժողովուրդին շափկայլին վրայ իրեք գունով նշան դրած՝ Ֆերմակ կապուտ ու կարմիր. իրեն գլուխնալ հարկ եղաւ դնել երբոր իրենալ տրվավ քաղաքապետը ան նոր նշանը, անանկով պատուհանէն ելեցաւ ժողովրդեան [1]. որոնք տեսնալով

(1) Փիրլիք էրտի, մէֆալիմ կիթախ, գուտրէթ գալմասը.
գլուխի իւղ Թուխաուս պիղի, Ֆիսիմիմակ գուվվէթ գալմասը:

ան նշանը վրան՝ որ ըսել էր աղջկն կամքը կատարել, ամէնքը մէկ բերան աղաղակեցին Աեղջէ Նագաւորը և աղաւնաբնակը. Յօժ նետելով նշան տըվին, որ էր ուրախութէն ցըցընել աւելի Թագաւորին իշխանութէն ցածնալուն համար, քան Թէ Թագաւորին վրայ գոհ ըլլալուն համար։ Լաւ որովհետև ամէնքնալ խուռն բազմութէն 150 հազար մարդ զինված էին՝ Թագաւորը վախով կըպատրաստէր մէջէրնին. երբոր ան հրապարակին մէջէն անցաւ որ ժե.լուիզիին անունովը է, հեռվանց Թագաւորին վրայ իրեք չորս Թիւֆինկ պարպեցին մէյմընալ բիշՅօֆ, ուսկից մէկ հնիկ մը մեռաւ որ պատուհանը կեցեր էր, տղայմընալ խոցվեցաւ. ան առենը դիպուածով ըլլալ հասկըցուցին, բայց ետևէն գործքերէն յայտնի եղավ որ յատուկ դիտմամբ նետերէին. Թագուհինալ վէռասալիա պալատը նստած՝ աս բանները լսելով վախի մէջ ալեկոծեալ ճայեր էր չըլլայ Թէ Թագաւորը սպաննեն։ Ուրիկվան Թագաւորին առջին դրին ուտելու պատառ մը հաց չիշէ մը գինի լսելով որ ուրիշ բան չիպտնըվիր. իրեն Ձամիայ չը-

---

Տիլտէ իշ իւ իչլէթէ մէլլի մուհապպէթ գալմասը,

կէթոթ կիւլըստրի վիւճուտիմտէ Թէրավիհ գալմասը։

Տիլտէ սապր, կէօզտէ խատ, Թէնտէ Թագաթ գալմասը,

պիլմէխիմ հալիմ նօլա պիր եէրտէ բահաթ գալմասը։

յուլին վերասլեա գահընալու՝ որ առանց
մինծի մը ընկերութե դարձաւ եկաւ։
Ի ալեկոծութե մէջ նեքերը նորին բարձ
բըցաւ. ազգային ժողովը ցածնալով մը աս
Թուղթը գրեց զինքը կանչելու։ "Ազգը
" կաղաչէ քեզի Թագաւորին փափաքը կա-
" տարելու. քուկին քանքարդ քուկին աղէ-
" կութիդ չուզեր աւելի յորդոր տալու,
" անանկկընէ պարապ մի հաներ ան ատենը
" որ է պատուական, եկո"։ Ի խօսքերս
մէկ մարդու մը կըգրեն որ փառասէր ըլ-
լալով խիստ վարի ցածութէ ելած հասած
եր ան փառքին ան իշխանութե՝ որուն հա-
սուց զինքը ոչ իրեն գիտութիը կամ իշխա-
նաւորութիը՝ այլ միայն կոյր բաղդը. իր
գիտցածը մինակ Թուաբանութե եր, բայց
կենցաղագիտութե չէր գիտեր ամենևին։
Ինչևիցե յուլիսի 18 խաղաղկեցաւ փարեզ,
սկսան առապարներով համարձակ ժուռ գալ
ինչպես առաջ. բայց դուբսի գաւառնե-
րուն մէջ շատ խռովութիւն ելան յուլիսի
19. աղնուականներուն բերդերը քակեցին,
Թղթերնին երեցին, արքունեաց դին եղող-
ները միապետութե ուղղոնները ջարդեցին,
գլխաւոր մինծերուն վրայ տուրք ձգեցին.
ամէնէն դիւն չնորհակալութե գրեցին ազ-
գային ժողովքին որ ասանկ հաստատուն
կեցաւ, ասանկ վրայ եկաւ. ուրթը օրվան
մէջ իրեք միլիոնի չափ մարդ զինք առած
ոտքի վրայ ելան։ Ֆագաւորը 21ին Թող
արվավ պահապան զօրքերուն որ մնանան
փարեզին քաղքցի զօրայ հետ խառնըվին,

քայց հետեւեալ օրը մէկ խռովութիւն մը ե-
լաւ. Փուլըն անուն վէգիրը նախատես ըլ-
լալով ան չարիքներուն որ պիտոր ըլլային՝
հագուստը փոխելով ծպտեալ (Թէպտիլ)
փախեր էր, մեռածի անուն հանելով իր
վրայ. բայց փախչելու ատենը քանի մը գե-
ղացիք Ճանչնալով անիկայ՝ բռնեցին խոտե
առապայի ետեւը կապելով փարէզ բերին.
ապստամբները անանկ կըսեպէին որ աս
մարդս հրապարակաւ խօսք տըլալ հայը
աժնցընելու (20 ըստակ լիպրէն ինչեցընե-
լով), խօսքը չկատարեց. անոր համար ամ-
մհնուհալ ատելի էր եղած. Ճամփան եր-
բոր քրտինքը երեսէն կըվազէր՝ փուշերով
կըսրբեէին. երբոր կըծարվէր՝ պիպէռով
քացախ խառնած կուտային. ծաղր ընելու
համար վիզէն չուան անցընելով Ճամփայ-
ները քաշկըռտեցին. երբոր չուանը փըր-
Թաւ՝ տանջանք տալով խղդեցին, գլուխ-
նալ կարելով մէկ խումպարաձիի մը ձեռք
տըվին, բերանը յարդ (սաման) լեցուցած
անանկ չորս դին ժողովրդեան մէջ պատ-
ցուցին, իր մարմինալ կտոր կտոր ջարդե-
ցին. ան ատենը փարէզ եկավ պէռթիկ
Փուլօնին փեսան բանին տեղեակ չըլլալով.
ասիկայալ տեսածնին պէս՝ իր առապային
մէջը կապեցին, դուրս քաշելով զարնելով
գլուխը կարեցին, աղիքները հանեցին,
սիրտնալ քաշելով երկինքը նետեցին ընդ-
րուն կերակուր տըվին. աս ընօղները եղան
փարեզցիք, որ ուրիշ ասանկ ընօղները բար-
բարոս կըկոչէին։ Գ.ղգային ժողովը չիդի-

## Մանալով 23ին Թուղթ Հանեց Ժողովուրդը Խաղաղցընելու Համար։

### Հին սահմանադրութիւնը կոչնչացընեն, նոգաւոր բին եկեղեցականաց կբռնէ։

### 1789։

Նկերը իր քշվելեն ետ կանչվելով յու-
լիսի 28 վեռսայլա հասաւ. ան օրը եղավ
օր ուրախութե ընդհանուր ամմեն Ֆրան-
սայի. ասիկայ խնդրեց ազգային ժողովեն
որ պեղենվալ իր բարեկամը բանտեն հա-
նեն, որովհետև իբրև մանիչ հայրենեաց
բանտը դրեբեկեն. բայց ժողովը չհանեց,
և ոչ ընդհանուր Թողութե տըվավ ամմե-
նուն՝ ամմեն անցած գացած բաները չխի-
շելով՝ ինչպես որ կուզեր նեքերը։ Ազգայ-
ին ժողովը վեճու ըրաւ որ ամմեն օր ժող-
վըվի. լսելով դուրսի գաւառներուն ավըր-
վիլը առաջարկըվեցաւ մեկ դեղ մը ընելու,
բայց նօայլի վիսքօնդեն եկիլօն դուքսին
հետ մեկ տեղ յորդորեցին որ անոնք զսպե-
լեն առաջ պետք եր անկարգութիւնները
վերցընել. անկարգութե ըսելով կիմանայ-
ին եկեղեցականաց ու աշխուականաց ար-
տոնութիւնները։ Ժողովին աս ըլլալով
օգոստոսի. 4 ազգային ժողովը ոչնչացուց
Ֆրանսային հին սահմանադրութիր արտու-
նութիները որ 1200 տարիեն աւելի բռներ
կերթային. վերուցին եկեղեցականաց տա-
սանորդ առնելը՝ պատարագուցը՝ անորոշ

տուրքերը որ գեղացիները իրենց ժողովը-
դապետներուն կուտային, աղնուականաց
իրաւունքը որ իրենց կալուածոց վրայ ու-
նէին, քաղքերուն գաւառներուն նաև
մանաւորաց արտունուքիւնները, պաշտօն
ներուն ծախելը, պաշտօններու մէջ մտնա-
լը ամէնուն ըլլալ վճռեցին. տուրք տա-
լու մէջնալ հաւասարուքիւն ըլլայ ըսին, ու-
րիշ մանրամասնը փոփոխուխիները 24 գլուխ
բան հանեցին, ուր կըմեկնըվեր մարգու և
քաղաքացիի իրաւունքը, իբր թէ առջին-
ները չէյտէին աս իրաւունքը:

Այս եղաւ նախադուռը նոր կառավարուե
որ պիտոր սահմանէին, բայց աս իրաւուն-
քի վրայի նոր վարդապետութիւնը բերաւ
զարհուրելի անիրաւութիւն ու անկարգուե,
ըրած վճիռնին թէև անիրաւ չըլլար ըսենք,
բայց ասանկ պարագայներու ատեն վճռե-
լը մեծ անխոհեմութիւն եղաւ. ժողովրդը
իրարու դէմ երկպառակութիւն (ֆռախայի)
մէջ ձգեց. ժողովրդեան ան մասը որ բան
մը չունի կորսնցընելու՝ անկարգուե եղած
ատենը կըսեպէ իրեն վաստըկելու ատեն:
Տեսնալով զինքը անսպատիժ Թողուցած իր
առջի ըրածներուն վրայ, հիմաալ լսելով
ազգային ժողովին աս վճիռը՝ որ իբր ծեծ
բանալ մէնէր եկեղեցականաց ու աղնուա-
կանաց դէմ՝ անզգամ ժողովրդը բոլո-
րովին զինքը տրվավ ասանկ բաներ ընելու.
իրենց գործքը եղավ երել սպանել Թալ-
լել քանդել կալուածներ պալատներ ժա-
մեր վանքեր. ան ատենը տեր մը չըլլալով՝

ամէն մէկը ինքիրեարմէն տեր էին եղած. դատաւորները չէին ուզեր ժողովրդիլ կամ բան մը վճռել, վասն զի ամէն դիացէն սպառնալիք կըլլային Թէ ըրածնիդ պէս պիտոր կախվիք. դատարկապորտ գեղացիներու քաղմութիւն որ աշխատիլ չէին ուզեր՝ արտերը կավըրշտըկէին. անցաւորներէն ով որ ունևոր կարծէին՝ աւազակի պէս վրանին յարձակելով կըթալլէին. մէկ ամբողջ մը մէջ քաղքերը ու վանքեր Թալլեցին. ան կրօնաւորները որ մնըացկան էին կորըտեցին սպաննեցին, ժամերը կողոպտեցին, մեռելները կաոր կաոր ըրին մենծի պըզտիկ:

Լ՚ըքունիքը ժողովքին առջին նկարագրեց զարհուրելի խռովութիւնները դեղ մը ընելու համար որ ամբողջ ֆրանսան ալեկոծութէ մէջ ձգերեր. բայց անոնք աւելևալին մտիկ չդրին, ինչու որ ժողովքին մէջը շատ հոգի կային աս ալեկոծութիը ուզող վնասուղ. Թէ որ ոմանք տգիտութէ ըրին աս վճիռս՝ բայց մէկալնոց բուն մտըրնին աս էր. Թէպէտ ամէն օր նոր նոր ահռելի բարբարոսութիւն կըլլըսվեր ազատութիւն է ըսելով՝ բայց միւսայն ժողովին մէջ յայտնի կըջատագովեր անոնց ըրածը: Լ՚ի ժողովուրդը որ պարծենալով ամէն ժողովուրդէն մարդավար ու քաղցրաբարոյ կըսեպէր ընքը՝ հիմա աս բարբարոսութիւնը կըջատագովէ. խափանելուն տեղը ամէն ֆրանսա գրքեր կըցրուէ եկեղեցականաց ու աշխուատականաց դէմ. ամէն տեղ Թա-

դաւորին քերդնէն սուտ հրամանագիրները կը խարկէին, որով Թագաւորը իբր Թէ իշխանութի տրված ըլլայ ժողովրդեան ասանկ բաներ ընելու. ամէն տեղալ ատեն ատեն Թաթարները կը Թագըցնէին հրչակելով որ՝ արքունն կեցիք. աղնուականք զորք ժողված յանկարծ վրանիդ պիտոր վազեն աս բաներս ընելնուդ համար. իրաւ ժողովին մէջ ինձնէրէն կային նաև խոհեմ մարդեր, բայց խիստ քիչըոր ըլլալով ձեռվընէրնէն բան մը չէր իգար։

Հինգ օրէն ետև փարեզի Թագաւորական պալատէն՝ ըսել է օրէնսանութենէն պատուիրակներ եկան ազգային ժողովքին՝ որոնք 11 եպիսկոպոսի, 16 աւագ երիցու գլխներին կըտրել առաջարկեցին, Թէ որ տասանորդներուն վերնալը չուզենան։ Ինկ ընդհանուր ապահովութիւն մը ունենալու համար օգոստ. 10 ազգային ժողովը 12 մարդ դրավ յանցաւորները դատելու, բայց ամենևին չորոշելով Թէ ինչ յանցանքը պիտոր դատեին. աղնուականք ու եկեղեցականք իրենց վրայ մեկնեցին իբր Թէ գիրենք պիտոր պատժէին Թէ որ ալըրշտրկօղներուն դէմ դնելու ըլլան, որ եաքը ըղորդ ելավ. աս 12 հոգիին իշխանութիւն տըվին բարևաւ գիրնին բանալու անանկ մարդոց որ կասկածաւոր կըսվեին. մէջերնէն շատ դէմ դնօղ ելան աս բանիս՝ բայց մեկ չըրին։

Ինքերը լեցված ըլլալով վրէժխնդրութիւն ոգով որ իրեն պատուոյն դէմ ըրին՝ վար ձգելով հեռըցընելով գինքը, անանկ բա-

ներ կըներ որ բանը չակելուն տեղը կավ-
ըեր . ասիկայ առաջարկեց ժողովքին որ
30 միլիոն լըրկ փոխ առնել հրամին որպես
զի խարձերուն հատնըվի . որովհետև ան ա-
լեկոծութեց համար որ յիշեցինք՝ խազնան
սովորական եկամուտը չէր իգար գաւառ-
ներէն . ժողովը որ նեքերը բերել տըվերեր
միայն ժողովուրդին կամքը կատարելու և
թախտին իշխանութիը ցածցընելու համար՝
շատ դժարութի ցըցուց նեքերին ըսածին
դէմ . պինտ ետքը մարդիկ դրաւ աս բա-
նիս վրայ մտածելու , որոնք օգոստ . 9 վճռե-
ցին աս 30 միլիոն փոխ ըստակը առնելու
համար հարիւրին չորս ու կէս շահ վճարե-
լով . բայց անանկ վտանգաւոր ատեն մկը
փոխ ըստակ չտրվավ թագաւորութեան :
Ռուչանսկին համախոհները որպես զի ժո-
ղովուրդը աւելի գրգռեն թագաւորին ու
արքունեացը դէմ՝ աս ատեններս միշտ կը-
նայէին որ ցորենը քիչցընեն փրանսային
մկրկին . խելք անօթի ժողովրդեան աղաղա-
կը կտրելու համար օգոստ . 21 շատ տեղ
բրինձ բաժնեցին հայի տեղ . առաջարկե-
ցինաւ հարուստներուն արծաթեղինները
զարպխանին բերել անոնցմով ըստակ կո-
խել . թագաւորն ու թագուհին առջինը ե-
ղան աս բանիս օրինակ տալու , բայց եղավ
իրը մեկ կաթիլ մը կաթեցընել ծովու նման
խարձերու մէջ :

Փարեզին հասարակութիը ամենեննալ թալ-
ւօղ մարդիկ ըլլալով՝ հասարակաց ձախող-
ութեե ատենը իրենց շահը փնտռօղ՝ աչ-

վընին անկած ունեին եկեղեցականաց վրայ, անոր համար ֆրանսայի նոր սահմանադրութեէ իբրև հիմնական սկիզբն հրատարակեցին, թէ եկեղեցականաց ամմէն կերպ ապրանքը ազգին կիյնար. 1790ին սկիզբը պէտք է որ գադրի ըսին անոնց ամմէն եւ կամուտը։ Ազգային ժողովը ասոնց խնդիրքը լսելով՝ առանց քննուէ մը ընելու վճիռ կտրեց ասոր վրայ. ինչ որ դօսքանայի եւ աւագրիոյ երկիրներուն մէջ ըրեցին օրինակ բերելով՝ Թող ֆրանսայի մէջնալ անանկ ըլլայ ըսին։ Ազգն ժողովը իրեն դին քաշելու համար արքունիքը վճռեց, թէ Թագաւորը Թագուհին իրենց զաւկընեռնալ էին պատուելիք ու սրբազանք. Թագաւորը իբրև աւանդապահ գործադիր իշխանութէ՝ պիտոր ունենայ իշխանութիւն իր ուզածին պէս վերջին վճիռը տալու այո՝ կամ ոչ՝ ան օրէնքներուն վրայ որ պիտոր առաջարկվվեր իրեն. իրեն անձինալ օգոստ. 13 մակագիր տրվին Լրոթէլ Ֆրանսայի ազգաժողովէ. ասիկայ եր քիչ քիչ Թագաւորութենէն հանել անիկայ. Թագաւորնալ ընդունեցաւ աս անունը. անոր համար ժամու մէջ հնարհակալութէ աղօթք երգեցին, միտալ մընալ տպեցին յիշատակի համար։ Անանկ վճիռ ընել կուտային չար միաբանեալները խաբելու համար՝ որ կամաց կամայ առաջ երթան արքունիքը կործանելու. մէկալ դիացենալ ամբոխը կըզրդեին որ լուռ չկենան, իժիր վրդովումն (արուեստ) հանեն. որոնք աս վերոյիշեալ վճռին

վրայ տաքնալով սկսան սպառնալ ջարդե-
լու երեսու. նաև ազգային ժողովքին վրայ
սպառնացան կոտրելու. անոր համար ազ-
գային ժողովնալ վախնալով սեպտ. 7 հրա-
տարակեց. [illegible] որ Խոսքորը հասանութիւն
չէ պայ մը վճռողուն որ եթե եթե պէտք ընէ,
տէր մը պէտն դայն տղէ կալ Խորհուրդը.
ազգային ծողովնալ դէպ ոտի վրայ կենայ. երբ կարգ
եղանակերուն պատճառ էլենան առջինն պէս,
հապա ամէն ջնջինները գոցած ճան ապառնալու
եկեղեցականք ու ծողովրդականք: Ա՛ս ըսելով
քանի մը օր խաղաղուցին ռամկին խռո-
վութիւնը. Թագաւորը հասկընալով բանսար-
կուներուն չարութիւնը Թուղթ մը գրեց ազ-
գային ժողովքին ցրցրնելով ինչ գէշ հե-
տևութիւններ պիտոր ելլային ասկից. բայց
աս Թուղթը չընդունեցան, պատճառ բե-
րելով թէ գէշ սովորուի չխմացընենք, մեր
մտածելու ատենը Թագաւորական Թուղթ
առնել. հետևցընենք ամէն բան որ կրնայ
ընդդիմանալ ազատ կամաց ժողովականնե-
րու: Ա՛ս ըսելով ետ դարձուցին, վախցան
Թուղթը բանալու՝ չըլլայ որ բան մը գրած
ըլլայ մէջը ժողովին համարձակուելը դէմ
որ ամէն օր կըներ. բայց երբոր իմացան
որ՝ Թագաւորը ան Թղթին մէջը կընդու-
ներ իրենց վերոյգրեալ վճիռը, միայն կը-
խորհրդրեր որ իր կարծիքին կախ Թողուլը
քշեր ամէն հեղ ինչվան երրորդ ժողով
ըլլալու, ան ատեն խնդրեց ժողովը՝ որ ինչ-
վան երկրորդ ժողովը քշէ կախ Թողուլը,
անկից ետքը Թագաւորին բացասական կար-

ծիքը ուժ չունենայ։ Այսկէց եղավ որ Թա-
գաւորը չէր կրնար ժողովին վճիռը չընդու-
նել։ Հապա ամէն մէկ վճռին քովը կըդնէր
վտանգները անկարգութիւնները որ կրնար
անկից հետևիլ։ Մանաւանդ դուրսի երկիր
եղած կալուածներուն վրայ որ ալսացիայի
ու լօռէնայի մէջ կային, որոնց իրաւունքը
վերցընել (ինչպես կուզէր ժողովը), դէմ
էր կըսեր դաշնադրութեց որ ուրիշ տէրու-
Թեանց հետ եղած են։

Այայց աս խորհուրդները որ արդարութի-
ու խաղաղութի ընել կընայէին՝ ամենևին
հաճոյ չէր անցներ անոնց որ խռովութիւն
բռընկցընել կընայէին։ իսկ երբոր Թագա-
ւորը չընդունեցաւ եկեղեցականաց ապրան-
քը ծախու հանել՝ սկսան ձանձրնել Թէ ինչ
որ ազգը կըհոգայ Ֆրանսային ազատութիւը
կանգնելու, անիկայ արքունիքը կընայի աւե
րելու։ աս խօսքերս ժողովին գլխաւորներ-
նալ կըվկայէին։ Թատրոններուն (քօմե-
տիաներուն) մէջը ժողովուրդը ապստամ-
բեցընելու խաղեր կըխաղային։ Հրապարա-
կական երգեր կըհանէին կառավարութե
և ուղղափառ հաւատքի դէմ։ Այ աձառա-
կանութիւը ընկած էր՝ արուեստները Թո-
ղուցած՝ ձեռագործները օրէօր քիչցած։
վարի ժողովուրդնալ ըստ մեծի մասին Թո-
ղուցերը աշխատիլը։ աշխատելուն տեղը
դողնալու խռովուի հանելու հետ կըլլար։
Կոստոսի մէջ հային կարօտութիւը օրէօր
եվեցաւ։ հացագործներուն խանութնե-
րուն առջին շատ կռիւ կըլլար։ պատճառն

որ ան տարին քիչ էր եղած ցորենը. եղած ցորենն ալ շատը կորսըված էր երբոր ազնուականաց կալուածները երեցին. աւելի մեծ պատճառը եղավ օձլեանս դուքսը, որ ամէն խռովութեց արմատը (քէօքը) ինքը ըլլալով՝ կամք ցորենի պակսութիւն սղութեի ձգել կուտար որպէս զի անով ժողովուրդը գրգռէ ուղածը ընել տայ։ 27ին նեքերին առաջարկելովը վճռեցին 80 միլիոն փոխ ըստակ ուղել հարիւրին հինգ շահ տալով. խաթունները սպատ. 7 իրենց զարդերը բերին տվին ազգին պիտոյքը հոգալու համար. 29ին ժամերուն արծաթները առին։

## Ֆրանսուրին պալատը էքսթեն վէրսայլէ դէպ. 1789։

Խռովարարներուն կատաղութիւնը աւելի բռնկցուց մէկ զինուորական հարկինք մը՝ որ հոկտեմբերի առջի օրը վէրսայլէի մէջ ըրին Թագաւորին պահապան զօրքը ան հազարապետներուն՝ որ ֆիանտրայէն բերել տըվերէին պահպանութեե համար. ձան հանեցին որ ձերմակ քօքքառտա բաժնեցին ասոնց գլուխը դնելու, որ էր ֆրանսայէն առջին հինն Թագաւորութե նշանը, անանկով Թագաւորին կենդանութեանը համար գինի խմեցին. ազգային քօքքառտանալ իրեք գունով եղածը ոտքի տակ առին կոխկռտեցին. ասոնք իրեք օրէն ետև ուրիշ

սեղան մընալ ըրին զօրաց , ուր Թադուհին գլուխ եղալ ըսին . անանկ խօսքեր խօսե- ցաւ որ՝ ազգին դէմ գրգռօղ էին և Թա- գաւորին դին քաշօղ : Այս բանս որ ասոնք անխոհեմութիւնէ ըրին՝ խռովութիւն ուզողնե- րը մեկնեցին որ՝ ահա արքունիքը սկսաւ իր միաքը ցրցընել՝ ազգային քօքքառտան անարգել՝ ազգին կենդանութիւնէ գինի խմե- լը արգելել՝ մեծ նշան է ըսին ծեծ բանա- լու . ուրեմն մեր միաբանութիւնը դէմ գաղ- տուկ միաբանած են արքունիքը ու աղնուա- կանքը մեզ ամէնքս կոտրելու , առջի կա- ռավարութիւնը խօթելու , աղքատները ա- նօթութենով մեռցընելու . անանկէնէ ա- ղէկ կըլլայ ըսին որ փարէզ բերենք Թա- գաւորը . աչքովը տեսնայ մեր քաշած ա- նօթիութիւնը . որովհետև ձայնէրալ առե- րէին Թէ պիտոր փախչի : Այսանկով օձ- լէանսը միւսպօն ուրիշ ասոնց համախոհ- ները գաղտուկ փարէզ մտան ժողովուրդը ոտք հանելու . տասնըչինկ օր մը կար որ աս որումն կրցանէին խեղդ ժողովրդեան մէջ կըփչէին կըգրգռէին , հիմանշան աս գտան . հոկտեմբերի 5 փարէզին արուարձանները- ըուն ( վարըշներուն ) մէջ ցած մարդկանց ձկնորսներու բեռնակիրներու ժանտ կնիկ- ներ աղջկնկեր ոտք ելան կատաղութիւնէ որոնք յատուկ գրգռւած էին , ասոնց հետ խեն- Թարիւն մարդիկ վազեցին քաղքին պալա- տը գինք առնելու . բազմութիւն անամե- լերը կնիկներու իրար գիրար անցած ձէա- լով կանչվռտելով հաց կուզէին . ապսպրե-

ցեք կըսեին զօրաց որ մեզ վեռասյալ տա-
նեին . հան հասկընանք թագաւորին ազգայ-
ին ժողովքին ինչ է աս ապրուստի չքաւո-
րութիւնը , քանի մեկ քաշենք . չինէ հիմա
կրակ կըձգենք կերենք պալատը , հան թա-
փեցան չորս դիացին դատարկապորտ աւա-
զակօղ մարդիկ , շատ տուներ խանութներ
թալըէլ սկսան կանչվռտելով , Հայ կո՞ղնո՛ ,
աղէկ կո՞ւվարո՞ւնէ կո՞ղնո՛ . ինչպես որ սոր-
վեցուցերէին իրենց վարպետները : Զ-
գայլին պահապան զօրքնալ ասոնց հետ մեկ
եղան կանչել սկսան . Վէ՛ռայլա երնո՛ ,
հայ ո՞ղնո՛ , մեր հնինէրնալ պղտինէրնալ հեռէրնո՛
պանո՛ . օռլհանսին համախոհներնալ ասոնց
կըկանչէին , Վէ՛ռայլա գայէ՛ :
Ա՛ս ամբոխին մէջէն 60 հոգի աւելի կատա-
ղի արիւնկզակ մարդիկներէն իբր ան ամ-
բոխին պատուիրակները եղան , գացին փա-
րլզին դատաւորներէն հրաման խնդրեցին ,
անոնքալ հրաման տըվին երթալու : Ա՛սոնց
ամմէնուն գլուխ եղավ մայլառ մէյմը որ
կառավարել սկսաւ . աչափ բազմութիւն
վեռասյալա հասան չարաչճի հնիհներ իրենց
հետևօղներ ուրը թուր առած , ուրը թիւ-
ֆէնկ . ուրը սուր կամ գաւազան . ասոնց
ետևէն եկան իբրև վերջապահ զօրք բազ-
մութի արիւնախանձ մարդիկներու՝ հնիհան
հագուստ հագած , խենթաբիւն աղաքներ .
և թէպէտ արևը մարը մտած էր՝ բայց կը-
պահանջէին որ ապգային ժողովը մինիկ գնէ
իրենց . մայլառը թող չիտալով լիրբ հնիհ-
նէրուն ներս մտնալ՝ ինքը քանի մը հոգիով

ներս մտաւ մէյմը հայ ուզելով, մէյմընալ պատիժ անունց որ աղգային քօքքառտան անարգելին. աղգային ժողովը ասոնց խօսքը իբրև օրինաւոր պատուիրակներու խօսք մտիկ դնելէն ետև՝ սիրտերնին առնելով պատասխան տրվավ որ ամէնն բանին ձարը կըհոգանք: Այ՝ եկալ լիրք կնիկները դուրսը կեցած գոռում գոչում կընէին, աղաղակելով կընախատէին Թագաւորական պալատան զրքը ուր որ կրգտնային. օռլեանսէին դուքսնալ ծպտեալ (Թէպտիլ) հագուտով, իր հետնալ միառպան ու պառնօն ասոնք ամբոխին մէջը մտած, ըստակ կրբաժնէին անզգաւներուն, ասոր անոր սիրտ կուտային կանչելով Վիւռա՜ռէ, Վիւռա՜ռէ, մի վախնայ մենք ձեզ կրպաշտպանենք: Այ՝ տեն մը ըստակը հարստութիւնը օռլեանսին հօրը ձեռքը երջանկուն էր փարէզցոց, մխիթարութիւն աղքատաց, հիմա ասոնց օռլեանսին ձեռքը՝ ժանտախտ մը եղավ փարէզցոց. միառպան կուզէր որ օռլեանսը մէկէն յայտնի բանայ բանը. ձիու վրայ հեծած ցրցրնէ գինքը ան խռովարարներուն բազմութե գլուխ ըլլալով. կըխոստանար իրեն որ ան օրը գինքը ֆրանսայի Թագաւոր կանչէ ատայ. օռլեանսը Թէպէտ չարաբարոյներուն գլուխն էր՝ բայց վախկոտ ու փոքրոգի ըլլալով՝ սիրտ չըրավ ասոնց վտանգին մէջէն անցնիլ:

Այ՝ րքոր տեսան Թագաւորին պահապան զօրքը ասոնց անկարգ բազմութիւը, Թէպէտ կըրնային անունք կոտրել, որովհետև Թագա-

ւորին քով դեռ կըգտնըվեր հերիք զօրք փախցընելու ան աւազակներուն խումբը, բայց Թագաւորին չափ դուրս մարդավա- րութիւնը վախը կամ Թմրութիւնը անոնք խաբացուց զինքը կորնցուց. անանկ ապրա- պրեր որ ամենևին արիւն չընեն այլ միայն պաշտպանեն. Մանաւանդ հրամ- մեց՝ քանի հաց որ գտնըվի վեռսայլսի մէջ ծախու աւնեն, անոնց մէջ եղած աւելի անզգամներուն ձրի բաժնեն: Վրովի եղող- ները մտածեցին Թագաւորը իր ընտանեօ- քը մէկ քաղաքը փախցընել, բայց ամբոխ պալատը պաշարված ըլլալով անոնց ամ- բոխով չկրնցուցաւ. որովհետև օգնուի եկավ իրենց փարիզին ազգային պահապան զօրքը՝ որ վերջապահ էին ուրիշ եկող զօ- րաց. Թագաւորնալ չուզեց փախչիլ ըսե- լով, աւելի կուզեմ մեռնիլ քան Թէ իմ պատճառովս ասչափ մարդու արիւն Թա- փել: Կըսեն որ մէկ փարիզցի զինուոր մը ուժ տալով վանդակագործ (փարմախլըխ- լը) տեղը մտնալու՝ Թագաւորական զօր- քէն քանի մը հոգի ետ հրեցին ասիկայ, ե- տևէնալ Թրով վազեցին, անալ բիշՀով մը պարպեց. աս եղավ առջի սկզբնաւո- րութիւնը. Մկակնոնքալ բազմութիւն պար- պեցին, Թօփերը շտկեցին, շատ բան պի- տոր ըլլար՝ մկյմընալ կէս գիշերուն իրեք Համիտին 15 հազար մարդ հասաւ փարիզին հետերնին Թօփեր բերելով. ասոնց գլուխ եր ֆաժէդ մառքիզը, որուն ապսպրեցին դաւաւորները փարիզ բերել արքունիքը.

ասիկայ Թագաւորին առջին երեւցածին պէս
աս խօսքս զուրցեց ։ Ա՛յլեւս նախադասեցի
Թագաւորիդ առջին իմ արիւնս Թափել,
քան Թէ Թողուլ որ ժողովուրդը իս կտոր
կտոր ընէր պարապ տեղը ։ Խորունկ գիշե-
րը վրայ գալով անձրեւնալ չատնալով փա-
րէզին եկած զօրքն ու ամբոխը կուգէին
պալատին մէջը մէկ տեղ մը գտնալ սղմը-
վելու՝ բայց ներս չառին . եղածին կէօրէ
ժամերու վանքերու մէջ նաեւ տուներու
մէջ տեղաւորվեցան ։

Ա՛մէնուն ոխը աւելի Թագուհիին վրայ էր .
Թագուհինալ հասկընալով ասոնց միտքը
կըսեր ։ Վ՛ախեմ որ իմ գլուխս կուգէն՝
բայց իմ մօրմէս սորված եմ մեռնելէն չի-
վախնալ, անոր համար անվախ սրտով կըս-
պասեմ ։ Վ՛եռ չիլուսցած ամմէն դիացէն
աղաղակ վերուցին որ Թագաւորին պահա-
պան զօրքը ջարդվին կորսըվին . գունդ մը
արիւնկզակ մարդիկներու պալատին վրայ
գացին որ բերդալ կըսվի , ասոնց դէմ չկըր-
բին նաեւ փարէզէն բերած ֆաժէդին զօր-
քը որ պահպանուԹէ համար հոն դրբերը ,
այլ Թողուցին որ անցնին , պալատը տեղ
տեղ աղէկ գոց չըլլալով մտան լեցվեցան
արքունիքին մէջ . արքունի պահապաններր
ասոնց դէմ դնելով մէկը սպաննեցին , ան
ատենը կատղելով պահապաններու վրայ
վազեցին , Թալէլու բաղձանքով ներս Թա-
փեցան ։ Ա՛յն միջոցին մէջ միւսապօն Թուրը
բացած քանի մը արիւնկզակներէն հետը
առած վեր ելլալ ուզեց գաղտուկ վերտե-

վէնէն որ Թագուհիին խուցը կըմտցընէր. բայց երկու հոգի պահապան գիշերէն դէմ դնելով հարցուցին ինչ կուզէք, ասոնք ըսին Թագուհիին սիրտը կուզենք. ասոնք կառնելով երկու պահապանները հոն մեռան. բայց ինչվան որ առաւօտ եղավ կրցաւ Թագուհին ատեն գտնալ՝ կես հագ- ուած լեզապատառ Թագաւորին քովը փախ- չիլ: Երբոր առնք ներս մտան Թագուհին հոն չիգտան՝ կատղելէն իր մահճին վրայ Թուրքեր քաշելով հազար կտոր ըրին. ան ատենը Թագաւորին պահապան գիշերէն շատ մարդ զարնըվեցան, արիւնը պալատին մէջ գետի պես կըվազեր Թագաւորին առ- ջին. առտու եղածին պես ճաշացած պահա- պան գիշերը սուսերահարկ (տալ խըլըչ) Թագաւորին քով եկան, իրենց հաւատար- մութիւնը ցրցուցին կեանքերնին դնելով. Ֆաժէդնալ լսածին պես՝ փարէղին բերած գիշերովը եկավ դուրս ըրավ ամբոխը: Ին ատենը զարդէն դադրելով իբր յաղթող սկսան ուրախութիւն ընել. մեհնօղներուն դլխընկերը Թուրքերուն գլուխը տնկելով՝ ձամփայները պտըտցընելով անցվորներուն առապայներուն մէջը նետելով՝ ինչպես որ եղավ Չինիվիզի ու Լինկիլզի դեսպաննե- րուն և տունեանի քառասնալին որ սրբա- զան պապին նուիրակն էր. Թագաւորն ու Թագուհին ժողովրդեան սիրտը հանդար- տեցընելու համար՝ իրենց կեանքին վրայ խղճալ տալու համար՝ պէտք եղավ զիրենք ցրցընել պատուհանէն ողջ ճաշկին հասկը-

ցընել, բայց մեջերնին անանկ չարերալ կայ-
ին խառնած՝ որ ինչվան Թիւֆենկ շակեցին
զարնելու ։

Մոփաուրը թաղեց Ղըզիլադրեն ։

1789 ։

Այս աղմուկը արիւնը ընելէն ետև ան բազ-
մութիը սկսան աղաղակ վերցընել բռնա-
դատել որ Թագաւորը փարիզ տանինք ,
ինչպես որ խրատված էին օրլեանսին հա-
մախոհներէն ։ պատրուակ (մահանայ) բե-
րելով Թէ հոն ապահով կրնայ նստիլ ։ բայց
ծածուկ մտիքնին ան էր որ փարիզ տանե-
լով իրենց ձեռքը կրնային Թագաւորը , հոն
հեշտ (խօլայ) կըլլար կորսնցնել ։ Մոփա-
ւորը աս Թէութիը յանձն առաւ երթալու
որ իր ընտանիքնալ մեկ տեղ գան ։ անան-
կով հոկտ ։ 6 Թագաւորը Թագուհին աղ-
քարը իր զաւկըները առին փարիզ տանե-
լու ։ աս լսելով ազգային ժողովը՝ մեջեր-
նէն ոմանք առաջարկեցին որ պետք եր ի-
րենցալ մեկ տեղ ընկերանալ Թագաւորին.
միւսայոն դարձաւ ըսաւ որ , Ժողովը ազ-
գին մենծութիը կընկերկայացընէ ։ չիվայէը
ազգին մենծութիը ասանկ ցած ծառայու-
Թիե մեջ մտնալ ։ Բայց վերջապես վճռե-
ցին որ իրենց մեջէն հարիւր հոգի ընկերա-
նան Թագաւորին , ետքը ժողովնալ հոն փո-
խադրվի ։

Ալ Լաֆայեաէն ինչվան փարիզ Համիման առ-

հասարակ զօրք կեցած էին. տեղ տեղալ
Թօփ չարած. ամէնէն առաջ կերթային
ան վերոյիշեալ անամօթ լրբը կնիկներուն
բազմութիւը խաղալով երգելով, ետքը կեր-
Թային գիշերվան կտրըված գլուխները սու-
րերու վրայ տնկած, իբր Ճրագի պէս ձեռ-
վրընին բռնած, ետքը կըտանէին Թագաւո-
րին Թագուհիին աւելի սիրելի ծառայնե-
րուն մեռելները ջարդըված, կտոր կտոր
ձեռ վրընին բռնած. անոնցմէ ետև բազմու-
Թիւն ձկնորսներու արիւնկզակ մարդիկնե-
րու՝ իբր յաղԹանակօղ զօրաց բազմութեի
Թագաւորին առասան մէջէրնին առած.
ետևէն ժողովքին պատուիրակներուն ա-
ռասպայները։ Ետնկ սոսկալի Թափօրով
մը բերին ուզածնին պէս Թուլլեզ պալա-
տին մէջը դրին որ շակըված պալատ չէր,
մէջը Հարկաւոր բաներ կըպակեր, վեր-
սալեայի պալատը ձգել տըվին ուր 120 տա-
րիէն աւելի Հոն նստած էին Թագաւորնե-
րը. Թագաւորը դարձաւ եղավ իբր մէկ
տղայ մը իրենց ձեռքը։ Ետյց փարէզցիք
փոփոխամիտ ըլլալով Թագաւորին գալը և-
մացածնին պէս ուրախութեե նշաններ ձայ-
ներ Հանեցին. անկից մեռածներուն գլուխ-
ները բերօղներնալ սկսան աղաղակել Կէյ-
զէ Նագաւորն ու Նագաւէն. փարէզցին զանա-
զան գատաւորներէն 300 պատուիրակ ե-
կան Թագաւորին գալը շնորհաւորելու. ան-
ջափ բազմութի լեցված էին Ճամփայները
որ շատ դժար եղավ Թագաւորին առասպայ-
էն վար ինջնալ մէջէրնէն անցնիլ. ըսելով

երբեմն երբեմն։ Ո՛րդիներէ մեծ անցած բա-
ները, ան ատենը ամէնուրեք հանգիստ կըլլան։
բայց իրենք անանկ անհանգիստ եղան ան
գիշերը՝ որ ամէն Թագաւորին ընտանիքը
չունեցան մահիճ մը պառկելու (1)։
Ո՛ր աղվան օրը օհարսըկին նորէն դարձան
եկան ան լիրբ կինոտիքը ու կնկան հագուստ
հագած ամբարիշտ մարդիկը, կըկանչէին
կըպօռային որ Թագուհին անդօնիէդան
կուզենք տեսնալ. Թող գայ մեզի հասկըց-
նէ ինչպէս եղաւ որ Թագաւորին սիրտը իր
ձեռքը առաւ։ Որոնց Թագաւորին քոյրը
երևցաւ եղիսաբեթ անունով, բարձրէն
պատուհանէն ըսաւ. Հանգիստ կեցէք երեսամ
գոնամ. բայց գիտցէք որ երբոր դարբի հասարակաց
խռովրդիը՝ թաբէղ ան ատենը կըխաղաղի. կանցնին
ան նեղութիւնները որ ձեզ կընեղեն. աս խօսքերս
անուշադրութիւն ըլլըցելուն համար քիչ մը խա-
ղաղցուց անոնք։ Ծագուհին առանց վախ
մը ցըցրնելու երևցաւ ատոնց մէկ ձեռքով
բռնած իր առջևնեկ զաւակը, մէկալ ձեռ-
քով բռնած անկուլիէմ դքսուհին քառ-
ասդա. ան անզգաստները ամէնեննալ զինված
չուզեցին աս կերպ տեսնալու, մէջերնէն ո-
մանք կըպօռային որ քովէն հեռացընէ զաւ-
կըները. Թագուհին չիսկսելու բերելով ի-
րեն ծանրութիւը անանկ մը խօսեցաւ անոնց
որ՝ սրտերնին իջնալով սկսան ծափ զար-

---

(1) Ֆիրաշի նաղշնինէ պէյհնմէզլիքէն վաթանլարտա, խասիրէ միհմանտ էյլէմէ ֆէզլէ պիզի պու խանլարտա։

նել Կէդէկ Խափուէին ըսելով. Հոն երեւցաւ նաեւ Թագաւորը։ Կտքը ասոնք երբոր իրենց մէջը եկան՝ իրար տեսնալով կուլային կողբային ամէնն Թագաւորազունք թէ ինչ վիճակ հասաւ Ֆրանսային Թագաւորութիւնը. ասոնք էին ըսին որ մենք կրվախնային կըդողային, հիմա ինչ ողորմելութեան հասանք որ՝ մենք անոնցմէ կըդողանք, չկրտեսնք թէ ինչպէս սրտերնին առնենք [1]։ Յողովուրդը խաղաղցնելու համար Թագաւորականք հացին գինը աճցնելու տրվին. որչափալ գրաւ (ըուհին) գրած ունէին աղքատները ինչվան 24 լիրէն չանցնող՝ ամէննալ Թագուհին վճարելով հոկտ. 11 հանել տրվալ, տիրվըտոյը դարձընել տրվալ, որոնց ամէնուն գինը հասաւ 4 միլիոն լիրէ։ Ով որ տակէն օրէնսանսները դրգռօղ ըլլային՝ կարելի է որ խռովութիւը քիչ քիչ իջնալ, բայց ասոնք ամէնն բանը գէշի տանելով ժողովրդեան մէջ վախ ձգելով ամէնն իւիր կըբռընկըցնէին։

Կատաւորները արգելք մը հանեցին որ ժողովուրդը խռովութիւն մը չհանէ. ոչ փարիսային մէջ և ոչ գաւառներու մէջ. Ֆրանսային խորհրդարանալ մէկ ատեան մը սահ-

---

(1) Շէմեմ ֆէլէք պուլուա օլսուս, նուր զէյասըն քէսսի պէնաէն,
սայէսինտէ չըսպգըլըզն սըրասընը քէսսի պէնաէն։
Ինշալլահ ադրպէթիմ խայրէ վարէը նիկեահ-սիզսէն,
ֆէլէք պէնիմ վաթանըմա օլսա սէպէպ կէչմիմ վաստան։

մանեց որ քննուէ ընեն հոկտ. 5. 6 եղած խռովութիւներուն վրայ, պատճառ եղող-նելընալ պատժէն. քննութիւն ընելու առնը ֆաժէդ միաբանեալներուն ամէնն չարու-թիւը երևան հանեց առեանին. ցրցուց որ ամէնն չարեաց գլուխը օռլեանսին դուքսն եր, 400 հոգի վկայութիւն յայտնի եղավ որ օռլեանսը ու միռապօն էին գրգռօղ։ Օռ-լեանսը վախկոտ ըլլալով լսածին պէս ին-քիրմէ փախաւ գնաց ինկիլդեռռա. իսկ ո-մանք կըպատմեն որ յանձն առավ ցածնալ Թագաւորին ոտքը իյնալ Թողուէ ներում խնդրելով, ան առնը Թագաւորը մեծ ա-ռիթ (ֆռասանտ) ունեցաւ աս մարդս վեր-ցընելու, դատաստանին օրէնքին ձեռքը յանձնելով զինքը՝ որ դեռ ոտքի վրայ էր կըպատժէր, բայց հոսալ իր հեզութիւը բա-նեցընելով ներումն տալով Թող տըվավ որ լօնտռա երթայ, մանաւանդ Թէ ինքը Թագաւորը խորհուրդ տըվավ կըսեն ոմանք ինկիլդեռռա երթալու։ Ազգային ժողով-քին մէջէնալ 300 հոգիէն աւելի չուզելով ֆրանսայէն հին սահմանադրութիւը բոլո-րովին ոտքի տակ առնել, հասկընալովավ որ իրենք չիկրնան պիտոր մկակընոց դէմ դնել, ձգեցին ժողովը մէջէն դուրս ելան։

## Ազգային ժողովը փարեզ հեռագրվելը. Լու-
## ծերը հրաման.

### 1789.

Թագաւորին փարեզ հռոմադրվելը հարկադրեց նաև ազգային ժողովը վերսալեան եւ ելլալ փարեզ ժողովելիս հոկտեմ. 12։ Քսանք առաջ երկու դաս բաժնըված էին, մէկը անոնք էին որ չէին ընդուներ կրօներ. Հին ան ամէնն բան որ հաւատքի ու Թագաւորուն դէմ էին. ասոնք կըսվէին Ազգ. Ղղեանա աջ դին նստեընուն համար ժողովի մէջ. Մէկալ դասը կընայեր որ ֆրանսային մէջէն ամէնն բան վերցընէ, ասոնք կըսվէին Ձախակողմեան ձախ դին նստեընուն համար. առջի դասին գլուխն եր մօռի քահանան որ ետքը քաւտինալ եղավ. և քաղաքս, ուրիշ խելացի իմաստուն Ճարտասան մարդ եր. երկրորդ դասին գլուխը էին Միռապօ, պառնավ, լամէթ, ուրիշ ասոնց նմաններ։ Այս ձախակողմեան դասը մէկ ուրիշ ժողով մը կընէին իրենց մէջը դումնիք կեան կրօնաւորաց վանքը, (որոնք փարեզի մէջ Յակոբէն կըսվէին իրենց ժամուն անուանովը՝ որ սէն ժաքօպ այսինքն՝ սբ. Յակոբ առաքեալ կըսվեր, հիմա ասոնց ժողովնալ ան վանքը նստեընուն համար Յակոբէններու ըսվեցաւ. մէջիններնալ Յակոբէն ըսվեցան). Հոն կըխօսէին ինչ որ պիտոր առաջարկէին ազգային ժողովքին.

կըշտկէին ինչ Ճամիկայ բռնեն որ Թագաւորնալ ազգային ժողովնալ բռնադատեն իրենց ուզածը վճռել տալու. բերընին ուրիշ բան չեր լսվեր որ ժողովրդեան ապրուստը հանգստութիւնը ու իշխանութիւնը հոգալու. ասանկ անուշ ձանէրով խաբեցին չէ Թէ մինակ ամիկ ժողովուրդը, հապա նաև խելացաս բարի մարդիկը. կարծելով որ մովընին իրենց զուրցածին նման է: Ալ րիշ քլիւպմընալ տանթօն մէյմը սահմանեց ֆրանչիսկեան կրօնաւորներուն վանքին մէջ, որոնք փարեզ Վ[illegible]ե ըսվելով՝ աս քլիւպնալ նոյն անուններով ըսվեցյաւ. ասոնց միտքը ժաքոպէններուն միտքէն տարբեր էր, միայն աղմուկ ու նորութիւն հանելու միաբան, ասոնք օռլէանսեան էին. մովընին ան էր որ ֆրանսայի Թագաւորը ձգեն, տեղը օռլէանս դուքսը նստեցընեն. յայտնի գլխաւորնին եղան տանթօն, ռօպէսբիէ, ու մառաթ: Այս երկու քլիւպներնալ ժողովրդեան մէջէն իրենց դին շատ մարդ ունէին, իրենց դին գրով ու բերնով քարոզիչներ. օռլէանսին ըստակնալ ջուրի պէս կըվազեր աս երկու քլիւպին վրայ. ժաքոպէններըը աղէկ գիտէին օռլէանս դուքսը ձեռք առնել իրեն ըստրկին կարօտ ըլլընուն համար. երկու քլիւպնալ յայտնի պարսաւներ գրքեր կըհանէին հաւատքի՝ Թագաւորի՝ եկեղեցականայ ու աղնուականաց դէմ. ինչվան պղնձի վրայ տպած պատկեր մը հանեցին Թագաւորը խաչ հանած երկու հոգիի մէջ մէկը եկեղեցական

մեկը աշնուական, ան երկուքնալ կախ-
ված։

Վերոյիշեալ ժողովականներուն դուրս եր-
թալնալ ատոնց աւելի համարձակութիւն
տալավ. թէ որ ատոնք մեջերնին չելլային՝
կրնային շատ բան արգելել. ատոնցմէ զատ
շատ հարուստ կարօղ աշնուականներալ
մէյ մեկ դին քաշլած ֆրանսայէն դուրս ե-
լած էին յուլիսի մեջ, որոնց պէտք էր մեռ-
նելնին յանձն առնել, բայց ինալ թախ-
տը չիկորսնցընելու համար։ Լսանկներուն
դուրս ելլալովը չարերը անչափ համարձա-
կուէ առին որ՝ եռևէ եռև չորս դին շատ-
յուցին քլիւպները ամէնն գաւառ ամէնն
քաղաք, ամէնն դաս մարդոց մեջ, ինչվան
դատաւորաց գլխաւորաց ու եկեղեցականաց
մեջ քլիւպ կըլլային. մեջերնները գրեթէ
ամէնննալ չարաչարի մարդիկ, մերկ աղ-
քատ բան մը չունեցօղ աներես լիրբ. որոնք
վախ չունէին բան մը կորսնցընելու, ոչ ըս-
տակ և ոչ պատիւ [1]։ Այս որովհետև աս
ատեն արքունիքը չունէր մեկ ուժ մը, դա-
տաւորներնալ ոմանք չէին կրնար իրենց իշ-
խանութիւնը բանեցընել, ոմանքալ աս չա-
րերուն կարծիքը ունէին, անոր համար ա-
զատուի դանալով զատ զատ քլիւպներ կամ
ժողովներ ընելով կրխօսէին խորհուրդ կը-
նէին ինչպես ծաւալէն իրենց չարութիւնը.
առջի իրենց մրտածմունքն էր եկեղեցա-

---

(1) Այս քլիւպները եաքը երբոր քօնսօլներ նստան
ֆրանսա, առջի քօնսօլը խափանել տալավ ատոնք։

կանքը բոլորովին վերցընելու. որոնց դէմ
ու հաւատքի դէմ խենթութենէ գրուած-
ներ կը հանեին. գրոհներնուն խենթութենէն
մարդիկ ոչը գող, ոչը աւազակ, որոնք կը-
յիշէ լուսիանոս պօնաբաւադէն երբոր դա-
տաւորաց առջին խօսեցաւ կրօնքը նորո-
գելու համար։ Ա՛ս քլուսներըը իրենց մար-
դիկալ ունէին որ խաչվէնեղու մէջ իրենց
ուզած բաները կըքարոզէին. մէկը ասոնց-
մէ անչափ յանդգնեցաւ որ՝ յայտնի սկսաւ
հռչակել ժողովրդեան ականջը թէ երկու
բանէ պէտք է որ խալըսինք, մէյմը արքու-
նիքէն (ըսել է իշխանութէ) մէյմընալ հա-
ւատքէ. ասիկա մարդս քանեցին քանտը դրին,
ինչու որ ատենը չհասած իրենց խորհուր-
դը յայտնեց. բայց չիպատժեցին ըստ ո-
րուամ իրենց մտածածն էր անոր ըսածը։
Ա՛չափ աղատութիւր զսպելու համար նաև
պիրենք ապահովցընելու համար աղգային
ժողովը վէհու մը հանեց խռովութէ դէղ՝
որ ըսվէցաւ ( )բէնտ տաստիալ. երբոր ժողո-
վըրդեան մէջ մէկ խռովութէ մը սկըսէր՝
քաղքին պալատին պատուհաններուն մէջ
կարմիր դրօշակ պիտոր բացվէր, ան ատեն
նալ թղթէր պիտոր հանվէր հրամէլով ժո-
ղովրդեան որ զատվին. թէ որ ասիկայ շահ
մը չընէր՝ զօրք իրկըվէր պիտոր վրանին որ
ցրուին։ Ա՛յայ ժողովուրդ մը ոտք հանել
ձեռվընին զէնք տալ խիստ հեշտ բան, ոտք
ելածը զսպել խիստ դժար բան։

Հոկտ. 19 առջի ժողովը եղավ ազգային
փարէզի մէջ. եւևէ եւև բաներ կըվէռեր

աւելի եկեղեցականներուն ունեցածին վը. աս բանս որոշերկին չուտ մը երբոր Թագաւորը վեհասլեակն դուրս ելավ. գլխաւոր յորդորողը եղած էր Թայլեռան եպիսկոպոս որ օթիւնի եպիսկոպոս էր. հոն մէջերնին որովհետև քիչ մը տարաձայնութիւն եր եղած աս բանիս վրայ, հիմա փարելզ աս Ձամիան գտան առաջ տանելու. ամէնէն առաջ վերուցին տարեկան տուրք տալը հռոմայ, որ պօղոսիա եղած միաբանութեր մէջ սահմանվերէր ։ Ֆրանչիսքոս Թագաւորին ու Ճ. լեռն քահանայապետին մէջ։ Թագաւորական պալատին վրայ հոկտ. 20 Թուղթ մը կպուցին. անով 1200 լիրէ կը խոստանային ով որ սպաննէ ան մարդը՝ որ եկեղեցականաց դին կըպաշտպանէ աս դատիս (տավայիս) մէջ։ Ինչափ ծարվաճ էին եկեղեցականաց ունեցածին վրայ որ հոկտ. 31 արիւնկղակ օռլեանսներըը ժողվըվեցան պալատին բակին մէջ, մէկ բերան կըպօռային ամէնն եպիսկոպոսներնալ քահանայներնալ կըմեռցընենք Թէ որ ունեցածնին չառնէք, մէկ վախմընալ ձգելու հասար աղգային ժողովին վրայ՝ անցվընեերէն մէկ խեղճ անմեղ մարդ մը սպաննեցին, երբոր ժողվըվելու տեղը կըմտնային՝ անոր դլուխը սուրի վրայ տնկած ամէնն մէկ ներս մտնողին ծռել տալով կըբարևէին. ըսել ուղելով ձեզալ ասանկ կընենք. բայց անանկովալ ժողովականաց մէջերնին անչափ քաջասիրտ կար՝ որ չուզեցին աս վհատս ընելու։

Նոյեմբերի 2 ղարհուրելի աղաղակ մը վե-
րուցին երդվելնալով՝ Թէ որ ազգային ժո-
ղովը այսօր ան վճիռը չընէ՝ բոլոր փարե-
զի մէջ մէկ քահանայ մը ողջ չենք Թողուր
ամենևնաւ կրնարդենք. ասոր վրայ ժողովին
մէջի երևելիներէն շատը պահվեցան. միա-
ցածներէն 568 հոգի վճռեցին որ եկեղե-
ցականաց ունեցածը ազգին կարգաւորու-
Թե տակը ըլլայ. 340 հոգի համարձակեցան
մէկ դի նետեցին վճիռը: Այս բանիս վրայ
դեկտ. 19 եղավ որ՝ առանց սպասելու գա-
ւառներու վճռին որոնց հարցուցերէին՝
400 միլիոնի եկեղեցական կալուածները ի-
րենց ձեռքը առին, եկեղեցականաց ամենն
մեկին Թոշակ կապել վճռեցին: Այսց առ-
կէց առաջ նոյեմբ. 14 վանքերու զրքա-
տուններուն վրայ վճիռ հանեցին. իսկ 19ին
ֆրանսայէն առջի գաւառները վերուցին
նոր բաժանում խօսեցին, որ իրենց լե-
զուով Տէբառթման, Տիստրէ, Վանիօ ըս-
վեցան, որուն վրայ հետևեալ տարին յուն-
վարի մէջնալ, նաև փետրվ. 7. 8. 26 զա-
նազան վճիռներ հանեցին:

Նոյեմբ. 20 ազգային ժողովին մէջինները
իրենց արծրԹէ քօփհանները (որ ան ատենը
կրտանէին իրենց խուհտուրանէրուն վրայ,)
զարպխանէն խրկեցին հալելու, որպէս զի
ըստրկի պակսուԹեը մէկ օգնուԹի մը ըլ-
լայ. ասոր տեղը չիմտածեցին որ իրենց ամ-
սական խարՃը քիչցընեն որ հասարակաց
բեռներ եղած, որովհետև ամէն խար-
Ճը մէկ տեղ առնելով՝ 20 հազար լիրե օրը

խարէ կերթար իրենց։ Անոնց հետևելով փարիզին հասարակութենաւ շատին տրուած իրեն քօփէհանները. իրենք ասանկ ըրին որ ժողովուրդնաւ իրենցմէ օրինակ առնելով ասանկ ընէ. անոր համար ալ որ իր քօփէհան չէր խտար՝ ամբողջը կուգար բռնութեամբ կըքաշէր կառնէր։

Վեկտ. Մէջ նոյն ազգային ժողովը ապրուպրեց ալ որ Թագաւորական գանձէն ձրի մէկ Թոշակ մը կառնէր՝ ամմինուհնաւ Ձիշտ համարը ըլլըվի. աս պատճառով երեսան եկաւ Պարէր գէրէ ըսուածը գաղտուկ պահ վածը, որուն մէջն կին արքունեաց ամմինն խարէը, և ծածուկ ըստակ տալը ասոր ասոր, ժէ. լուիզ Թագաւորին նստած օրէն ինչվան հիմա. անով իմացվեցաւ որ ան իրեք տարվանը մէջ 228 միլիոն լերկ գացած էր ասանկ բաներու համար. Թող տուր 420 միլիոնը՝ որ սովորական Թոշակին գացած էր. հասկըցվեցաւալ որ՝ ան առնողնեերէն շատը անչափ արժանաւոր չէին, ասոր համար Թագաւորը առաջարկեց որ անկից եաքը մէկի մը Թոշակ չկապվի, իր պաշտօնատեերէրնաւ նաև ազգային ժողովականներէն մէկը կարող չըլլայ Թոշակ խնդրելու։

Վանէրը բառնալնդնէրը ալնոտականութիւնը կը-
վերցնէին. նոր սահմանադրութիւնը հնազանդելու եր-
դում կառնէին. օրէնսնուը կըդառնայ, նէտէրը կը-
գնայէ.

1790։

Ասոնցմէտև եկեղեցական նաև Թագաւո-
րական ունեցած գետինները կալուածները
եղան ազգին համար մը Ազգային ապրանք ըսված,
մտածելին անոնցմով Թագաւորական խազ-
նան ոտքի վրայ հանել. ան գետիններուն
վրայ գմբըլված Թղթէ ըստահներ հանելին
կանոնները դրին ապրիլի 15. 17. որ Ազ-
նապ ըսվեցան. աս բանս ազգային ժողովը
անցած տարի նոյեմբ. 17 վճռեր էր։ Ա՛ստ
մարդ աս բանիս վրայ հաւնեցաւ, բայց չի-
մտածելին Թէ ուրոնց ձեռքով կրգառնար
ան բանը որպէս զի խազնային օգուտ մը
ընէր. անչափալ շատցուցին ան Թղթէ ըս-
տահները՝ որ ետքը չկրնալով վճարել քա-
ցը եղան. եկեղեցական ու Թագաւորական
ապրանքը քանի մը մանաւորաց ձեռքը ան-
ցան. շատ տուրքեր եվելցուցին՝ բայց չար
մը չեղավ։

Ինչ որ կրվճռեին Թագաւորէն հաստա-
տուելի կուզէին, որ չէր կրնար չէ ըսել,
Թէև չուզածը ըլլար՝ պէտք էր որ ձեռք
դնէր. սակէց շատ մարդ ան վճիռները
Թագաւորական չէին սեպէր. աս կասկածը
վերցնելու համար հարկ եղավ Թագաւո-

բլն փետր. 4 ազգային ժողովին մէջը գալ հրատարակել որ ես ազատ եմ ազատուած կրնեմ. հոն հանդիսաւ խոստացաւ բռնել պաշտպանել սահմանադրութիւնը որ կրնէին. միայն գիտցողները գիտէին որ քիչմը դէմ դնելու ըլլար իրենց ըսածին՝ սպառնալիք կըլլեր: Վաղաւորին ասանկ ընելէն խիստ ուրախանալով 14ին շնորհակալուհ ազդեց երգեցին տնտանմա ըրին, անկից ետքը ապրիլի 27 որոշեցին երդում առնել ժողովքին ան ամէն մարդէն որ պաշտօնի մը վրայ պիտոր ելլայն:

Ազգային ժողովին առջի հոգը գիտես թէ եղավ կրօնաւորներուն վրայ. փետրվարի 5 վճռեց ամէն վանքերը վերցընել, միայն մէկ հատը թողուլ՝ որպէս զի հոն ժողովքին նոր դատաւորները որ Արխիեպիսկոպոսին ըսվեցան. ամսոյն 13 կրօնաւորական ուխտը վերցուց, մէջերնին կառաջ ու տիւբօռդ չանդգնեցան ոչինչ սեպելու խօսքեր խօրամէջին. ամէն կրօնաւորներուն մապրպետներուն հրաման գնաց դուրս ելլալ, չէնէ բռնութիւ պիտոր հանէին. առաջ ամէն մէկուն թոշակ կապեցին, ետքը անալ կարեցին: Մէկ ժողովքինալ դրին դատաւորներու որ եկեղեցականաց համար Ռաչգական սահմանադրութիւն մը շինե. մէջինները ըստ մեծի մասին փաստաբաններ ու չայտնի չանսենեաններ, եպիսկոպոսներալ կային բայց բան մը չէին կրնար ընել, որովհետև հաւկրնալով ասոնց սոսկալի միտքը ելան մէջերնին: Ու սահմանադրութիւնը եղավ

նշան մը ան Հալածուին որ անհաւատնե-
րը Հանեցին եկեղեցականաց վրայ . ապրի-
լի 9 վճռեցին որ եկեղեցականաց պարտքը
աղգային պարտք սեպվի : Ի՛նչ վրայ եկե-
ղեցականք չկրնալով խնդրեցին ազ-
գային ժողովքէն գոնէ վճիռ մը Հանէ որ
ֆրանսայի մէջ տիրօղ Հաւատքը ըլլայ ուղ-
ղափառ Հաւատք . ասոր բանիս վրայ շատ
կատղեցան , բայց դեռ կըվախնային ուղ-
ղափառներէն անձնուէր վճիռ Հանել ,
անոր Համար ապրիլի 12 . 13 ասանկ պա-
տասխանեցին Հեգնելով . Ա՛ղաչաս Հաւա-
րը այնչափ յարգի է՝ որ մեր էնդրէնը ընչ ըլլալը
վրան :

Արդ մեծ գործքնալ ազգային ժողովքին
եղաւ բառլամէնդները վերցընել . ինչ որ
կըցանես՝ անդադար կըհնձես կըսկ առակը .
բառլամէնդներն էին որ միշտ կուզէին Թա-
գաւորին իշխանութիւնը ցածցընել , անանկ
կըսեպէին որ ան ցածցընելով իրենց իշխա-
նութիւնը կըբարձրընար . 500 տարի մը կար
որ՝ բառլամէնդները ժողովուրդին տեր կը-
կենային՝ ժողովուրդնալ բառլամէնդնե-
րուն տեր կըկենար , ինչվան անոնց Համար
Թագաւորին դէմ ապստամբութիւն կրՀա-
նէին . հիմա նոյն ժողովուրդին դրած ժո-
ղովն է՝ որ նոյեմ . 30 բառլամէնդը միշտ
ջենաւոր կըընէր , վճռով կարգելէ որ մէյ-
մինալ չժողովըվին . իսկ դատաւորութիւ-
նը յանձնեցին ուրիշներուն՝ որոնց անուն
դրին Ա՛նհնէբալիէդ , ոմանք բառլամէնդնե-
րէն բողոքեցին ասոր բանիս դէմ՝ բայց պա-

բապ, եաքնալ չիփախչօղները ջարդվեցան։ Ձայն եւալ մէկ փալտաս անուն մառքէպի մը վրայ, թէ ասիկայ պիտոր առնէ Թագաւորը իր ընտանեօքը սահմանագլուխ տեղ մը փախցընէ. գաւառներէն զօրք բերել պիտոր տայ փարէզ, ֆրանսզ աղգին դէմ ապստամբութիւն հանել պիտոր տայ. աս մարդս անցած տարի դեկտեմ. 25 բռնած էին. Թագաւորին եղբարնալ փարէզ կանչելով քննութի ըրեր էին վրան. և Թէպէտ բաւական վկայութիւն չիկար, մանաւանդ Թէ դատաւորներուն շատը սուտ կըհանէին աս բանս, բայց ժողովրդեան հաճոյ բան ընելու համար աս տարի փետրվ. 19 հրապարակաւ պատժեցին ասիկայ։ Ուրիշ դէմ անցած տարվան հոկտ. 5. 6 խռովութիւն հանողները քննելէն եաև լինչպէս որ վերը պատմերնք, Թէպէտ միաբերան յայտնի վկայութի գտան անոնց ըրած չարութիւնը վրայ՝ բայց միաբանեալքը համոզեցին ժողովուրդը որ՝ մենք երաշխաւոր (քէֆիլ) կըլլանք անոնց անմեղ ըլլալնուն վրայ. ան մարդիկներուն վրայ քննութի ընելը իբր Թէ աղգին աւելի աղէկները քննել ու դատել էր ըսին ժողովականներուն շատը ու փարիզցոց շատը։ Ուրիշ արդարանալը լսածին պէս օրէնքանոր՝ինքնալ որ չարերուն գլուխն էր արդարացած ըլլալով, լինկիլդեռայէն աներկիւղ դարձաւ եկաւ փարէզ. ան օրը երեսյաւ ժողովին մէջ որ օր յունիսի 19 ժողովը վճիռ հանեց ջնջելով ամէնն ազնուականութե անունները, ամէնն նշանները,

զանազան յեղերու կնիքներ, ասպետութե-
կարգեր, հազուստներու տարբերութիւներ,
ամէնքսալ մէկ ենք հաւասար ենք ըսելով։
Այիռապօն առջինը եղաւ Լոմոք մականու-
նը վրայէն վերցընելու. անոր համար եր-
բոր ժողովքէն դուրս ելլալու եղաւ հոն
խառնիճաղանճ մարդիկ իրենց կռնըկինէն
շալկելով անանկ տարին Ջաթոֆով հայրե-
նեաց ու Հայր կոչելով զինքը. բայց բիւր
հազար մարդոց շատ դէմ եկաւ աս բանս.
որովհետև Ֆրանսայի մէջ հնուցմէ վեր
ամէնէն տեղէն աւելի շատ պատուով կընայ-
էին յեղերուն զանազանութիւնը աղնուակա-
նութիւնը՝ կերպ կերպ գուներով ձևերով
նշաններ կնիքներ սահմանելով, որոնցմէ
եաքը անցաւ սպանիա գերմանիա նաև Ի-
դալիա։

Լոմնք առաջ սահմանեցինալ որ յունիսի
14 պասթիլիա առնուելուն տարեդարձ օրը
ամէնէն ֆրանսզ մեծ ու պզտիկ մանաւանդ
զօրքը երդում ընեն գոհ ըլլալու և հնա-
զանդելու նոր սահմանադրութիւն ու վէճ-
ներու որ ազգային ժողովը կընէր, անոր
համար աս տարի յունիսի 14 եկան ժող-
վըվեցան ամէնուն պատուիրակները փա-
րիզ Պարոն դալո ըսված տեղը 30 հազար
մարդով լեցված, յատուկ տեղ շինված ու-
նենալով զօրքը երդվընցան Ֆեդերաթօրը
վկայ կանչելով, որ ըսվեցաւ Ֆետ ֆեթանուե
ֆրանսիերուն։ Այս երդումը ընօղներէն մէկ-
նալ եղաւ օռլեանսը՝ որ իրեն պատուա-
նունալ ձգելով ժողովրդեան աւելի հա-

Ձոյ ըլլալու համար՝ իրեն անուն առավ Փիլիպպոս Հաւասարութիւն. Թեպէտ և իր միաքը հաւասար ըլլալ չէր այլ Թագաւորը. ան օրը Թեպէտ առտուընուց ինչման իրիկուն անձրև կուգար՝ բայց Ձամփայնէրը լեցուն էին ժողովրդով. Թագաւորին հարկ եղավ 6 ժամ հոն նստիլ երդումին պատճառովը, օթիւնի եպիսկոպոսնաւ (որ դայլէանան կըսվէր) ընկաւ 60 առաջնիկայներով աս հանդէսը լմնցընել։ Այայ ընդհանուր չփոթութիւնը օրէօր կեվէրնար, զօրաց մէջէն հնազանդութիւնը կըվէրնար, իրենց հազարապետներուն չէին ուզեր հնազանդիլ, քաղքցոց ռամիկը ու գեղացիք չէին ուզեր տուրք մը վճարել. իսկ ամերիկայի կղզիներուն մէջ որ կըսվին սուրբ դոմինիկոս, մարդինիքա, ու կուատալուբա, ներքին հակառակութիւնէր կըշատնային, շատ տեղալ քաղաքական կռիւներ կելլային. ամերիկայ եղած սևերը լսելով Պէտրոնէ անունը՝ Պարթէյէմ էրաւնդը իրենքալ իրենց տիրվըտոցը դէմ ելան, անչափ որ աղգային ժողովքին հարկ եղավ վճիռ հանել թէ ինչ կարգադրութիւն որ կըլլային ֆրանսային համար՝ անոնք իր գաղթականներուն համար չիմացվին պիտոր։

Պա միջոցին մէջնալ որ ժենեվիեֆա ժամուն մէջ որ խոստ երևելի ժամ է փարիզին մէջ՝ ռուսօին ու վոլդեռին արձանը տնկեցին. Ձգոհայօղները օրէօր շատցան գործադիր իշխանութեան վրայ. իժիր կաղաղակէին բարձրաձայն Թուլլիեռ պալատին

քաղաքտիքը. Հանէցէք հրանոցէք գործարքը եղկանոնէ պաղատանէները, ըէ չէ՝ ան գիշեր մինչ հոգանի գլխընին կառնինչ հեռանին հերթերիս կըտանին։ Ա՛սկից հարկ եղաւ արքունեացը արձրկել հեռացընել քովի մնացած քիչերը խորհրդականները. անոնց տեղը իրեն խորհրդական առնել ժաքօպէններուն մէջէն՝ որոնք իրեն թշնամիներն էին։ Վարգը եկաւ նեքերին վրայ, ամբաստանվեցաւ որ ազգին ըստակը մխերեր. ազգային ժողովը որ իբր ֆրանսայի ազատօղ ետ կանչերեր քշվելէն՝ հիմա իր առջին կանչեց դատաստան ընելու վրան համար պահանջելով. նեքերը աղեկ համար տալով արդարացաւ. բայց իր պաշտօնին նայելով՝ թեպետ գող չըսվեցաւ բայց տգետ ու չարամիտ ըսվեցաւ. աս խօսքէս խիստ դժարելով նեքերը հիվընցաւ կամ հիվընտնալ ձևացուց. պաշտօնէն ելլալ խնդրեց [1]. իր հաւատարմութիւնը ցըցընելու համար ըսաւ, թեպետ երկու միլիոն առնելիք ունիմ տէրութենէ, բայց ես միայն 400 հազար լիրէ կուգեմ իմ պիտոյքիս համար. ինչ որ ուզեց տըվին. բայց շատ մարդ զարմացաւ վրան, ինչպես մեկ անձնական ձինիվիզմը ասանկ քիչ առեղի մէջ եկամտից վրայ գլուխ ըլլալով՝ ասչափ շատ ըստակի տէր ըլլայ։ Ա՛նանկով

---

(1) Խուբեանըմ պիւրեան էֆէնտիմ չու տէմի սերմատէ,
էյէր սինճապ խէ կիյիվը կերմատէ։
Փիւրք խաթէմէյէ խավճի էտերիմ,
զիրա ֆէյրէվէն ֆէյրէյ պիր հաղըրը խմլատէ։

բաղդ ունեցաւ որ սեպտ. 4 փախաւ գնաց ըզվերցեկուի, բայց գէշ անուն ձգելով։

## Ա. Ղեղեցկանաց նոր սահմանադրութիւնը. երդում չընելուն համար քահանայից հալածանքը.

## 1790–1791։

Ա՛ս ատենները ձայն ելլալով որ՝ գերմանիա եղած իշխաններէն ոմանք Ֆրանսայի դէմ պիտոր ելլան՝ թէ ինչու ալսասիա ու լոռէնա եղած երկիրներուն իրաւունքը Ֆրանսան խափանեց (1), աս բանիս համար առաջարկեցին որ՝ թագաւորին ու արքունեաց մեացած քիչ իշխանութենէնալ սխմին. և որովհետև Ֆաժէ մառքիզենալ ուզեց որ քանի մը գունդ պահապան զօրաց եվեր ըլլային ազգին գլխաւորին ու թագաւորին քով՝ որպէս զի աւելի պատիւ ըլլայ իր արժանաւորութեը, անոր համար ազգային ժողովը ակամայ հաւանութեի տրվավ քանի մը զօրք եվեցուց. բայց և առաջարկեց ա՛րդեօք թագաւորը իրաւունք ունի անձամբ հրամմել զօրաց վրայ։ Ա՛կսան ասոր վրայ մտմտալ, թէ որ աս արտունութիւնս տանք ըսին թագաւորին՝ օր մը կրնար թագաւորը իր թմրութենէն արթընալ ու-

---

(1) Ինչպէս որ վերը յիշերինք, աս երկիրները իրաւունք մը ունէին առաջ չխոսլու. աս բանս հաստատված էր զանազան դաշնագրութեց մէջ որ եղան վեսթֆալիա 1648, ռիսվիք 1697, ռաշտատ 1714. բայց հիմա ֆրանսզները սկսան առաջ պահանջելու։

բնիք պատժել, իր Թագաւորական իշխանութիւնը նորին ձեռք ձգել. մինչեռնին միապօն որ ամէնէն աւելի կրվախնար՝ առանկ ձեռնարկութիւն ըրավ։ Հրամայօղ մը զօրքի ու նաւերու վրայ պարտկան կըլլայ համար տալ իրեն ըրածներուն համար, և որովհետև օրէնքը կըպատուիրէ որ Թագաւորին անձը սրբազան է ու անպարտ համար տալու, կըհետևի որ չիկրնար հրամմդ ըլլալ զօրաց։ Առանկ ձեռնարկելով հրամանն չիտրվին. խիստ վեր բարձրացուցին Թագաւորը որ ետքը աղէկ մը վար ձգեն։

Ազգային ժողովը անանկ գործքեր սկսաւ ընել որ՝ հաւատքը վերցընել եկեղեցականքը ձնշել կրնայէր. իրենց առաջնորդը միապօն՝ որուն խօսքովը առաջնորդութիւը կըգառնար կըկառավարվէր անտեսը ազգային ժողովը՝ արդէն զուրցեր իրենց որ՝ Ֆրանսայի մէջ փոփոխուելու համար պէտք է առաջ սկսիլ ուղղափառութիւնը վերցընել. աս խօսքս հերիք կըլլայ գոցելու ան պատմագրաց բերանը որ ազգային ժողովքին ամէնն ըրածները բարիի կը մեկնեն. իբր Թէ բարեկարգութիւն համար կընէր կըսեն։ Այս ազգային ժողովը եկեղեցականաց ապրանքը նաև Թագաւորական ապրանքը ձեռվընէրնէն առնելով մէկ տեղ ծախու հանեց. եպիսկոպոս ու ժողովրդապետ ընտրելը ժողովրդին ձեռքը տրվավ. նոր ընտրելը Թող ծանուցանէ միայն ըսավ սրբազան պապին՝

բայց հաստատուէր անկէց չառնէ՝ ինչպէս
որ առաջ կընէին ։

Ի՛ս առենները դուրս ելավ վերոյիշեալ Պաղտասարեան սահմանադրութիւնը եկեղեցականաց համար, որ կըսահմաներ եպիսկոպոսարանները քիչցընել, աբբայութիւնները ու գլխաւոր ժառանգութիւնները խափանել, ամէն թեմերը նաև ժողովրդապետութիւնները քիչցընել մէկ նոր կերպի մը մէջ խօթել. ամէն մարդու համարձակութեի տալ եկեղեցական ըլլալու, հրեայ հերետիկոս հաւասար սեպել ուղղափառաց հետ, վերջապէս ամէն բանին կարգը եւ թիը ինչվան անունները փոխփոխտել տակնուվրայ ընել, որ դէմ եր ընդհանուր կանոնական օրինաց՝ ժողովներու վճռոց՝ նաև ֆրանսազ ազգին հին սահմանադրութեը. անոր համար եպիսկոպոսները որ ժողովին մէջ պատուիրակ եկած էին՝ միաբան դէմ ելան մէկ զօրաւոր գրուածք մը հանեցին ոչնչացընելով ասոնց բռնած նոր ձամփան. ցցընելով որ՝ աս փոփոխութիւններս միայն սրբազան պապը կրնայ ընել միաբանելով ֆրանսազ ազգին բոլոր եկեղեցականացը հետ. խօսքովալ շատ պատճառներ զուրցեցին, շատ դէմ կեցան. ինչվան հիմա որչափ որ մեր ապրանքներուն գլաք ըսին՝ լուռ կեցանք բան մը չխօսեցանք, բայց չենք կրնար լռել երբոր մեր հաւատքին կարգին կանոնին կըդպչինք ։ Ի՛ս խօսքերս աւելի անոր համար կըսեին՝ որ Թագաւորը արձնայ գոնէ իր հաստատութիւնը չկտայ. որուն

սրբազան պապնալ գրած էր կըսորդորեր ընդհանրապէս ասանկ քանէրու իր հաւատնուէիրը չիտալու. երբոր ազգային ժողովը Թագաւորին ետևէ իյնալ սկսաւ որ իրեն վճուին ձեռք դնէ ստորագրէ, անիկայ պատասխանեց որ՝ աս քանս 'ի գործ դնելու համար անուշուշ պէտք է յորդորել. բայց աս պատասխանս հաճոյ չըլլալով իրենց՝ ժողովին գլխաւորը նորէն ստիպեց Թագաւորը. Թագաւորնալ իրենց ձեռքը քանտարկեալի մը պէս ըլլալով իրենց սպառնալիքէն վախնալով՝ ժողովրդեան կատաղութիւը լինչեցընելու համար՝ ասոնց ըրած անշռնի սահմանադրութեանը եկեղեցականաց համար իր հաւանութիւնը տըվավ

1790. օգոստ. 24։

Ազգային ժողովը Թագաւորին հաստատութիւնը առածին պէս՝ ան եպիսկոպոսնէրուն պատճառները յանդիմնուի առստամբ ըութիւ սեպեց. ան օրերը պատահեցաւ որ՝ քվիմբէրին եպիսկոպոսը մեռաւ, ժողովքին մէջի ժաքոպէնները որ միշտ կըմտածեին ինչ ընեն որ նոր սահմանադրութիւը 'ի գործ դնեն՝ էքսբիլի քահանան ուզեցին անոր տեղը եպիսկոպոս դնել իբր վարձ իր աշխատանաց որ ան սահմանադրութիւը շինելու աշխատակից էր եղած, բայց ան արքեպիսկոպոսը որ աս քահանաս եպիսկոպոս պիտոր ձեռնադրէր՝ յանձ չաւաւ ձեռնադրելու՝ պատճառները զուրցելով։ Այս քանէն ահա փրթաւ հալածման ծայրը. խորհուրդ ընելով մէջերնին ժաքոպէննե-

րը Թէ ինչով կրնան հարկադրել եկեղեցա-
կանքը իրենց զուրցածը ընդունելու՝ նոյ-
եմբերի 27 վճռեցին որ ամէն եկեղեցա-
կանք եպիսկոպոս՝ աւագ երէց ու ժառան-
գաւորք՝ ով որ մէկ եկամուտ մը ունի, ու-
Թը օրվան մէջ Թոշղ երդում ընէ աս եկե-
ղեցական նոր սահմանադրուԹիւնը բռնելու,
ով որ երդում չընէ՝ զրկվի իր պաշտօնէ
ու ժառանգուԹենէ, անոր տեղը ուրիշ մը
դրվի երդում ընօղ. Թէ որ երդում չընօ-
ղը մտիկ չընէ՝ իր պաշտօնը բանեցընելու
ըլլայ՝ երբև յայտնի խռովարար պատժը-
վի, երդվընօղնալ Թէ որ խօսքէն դառ-
նալու ըլլայ՝ ամէն պաշտօնէն Թոշակէն
զրկվի: Ոչն ժողովն որ քիչ մը առաջ չու-
ղեց վճռել Թէ ինչ հաւատքը տիրօղ ըլ-
լայ Ֆրանսայի մէջ, մեղի չխնայ ըսելով
ասանկ մեծ բանի մէջ խառնվիլ վճիռ
տալ՝ հիմա ան դիի ծայրը ասանկ կըխառ-
նըվի:

Ֆրանսայի եպիսկոպոսները արդէն գրած
ունէին սրբազան պապին՝ երբոր խռովուԹիւ-
սկսերէր Ֆրանսա, երբոր հաւատքի դէմ
հալածում կըցըցըն էր, խորհուրդ հարցը-
նելով իրմէ. ան ատենը սրբազանը խոհե-
մուԹի չէր սեպած յայտնի երևան ելլալ
դէմ գրել բանի մը՝ որ դեռ տարակուսան-
քի մէջ էր, միայն ընդհանուր խրատներ
գրած էր Թագաւորին ու եպիսկոպոսնե-
րուն: Այդ եղբը Ֆրանսան սկսաւ ամէն
օր գրեԹէ վճիռները հանել եկեղեցակա-
նաց դէմ որ ատեն չէր ձեռ հռոմայու խոր-

հուրդ հարցընել. սրբազանը խրատ տը-
վավ Թագաւորին երկու եպիսկոպոսներու
հետ խորհրդակցիլ որոնք որ աւելի ու-
սումնական ու նախանձախնդիր էին հա-
ւատքի. հասկըցուց որ ազգային ժողովին
ըրածներըը չէին կրնար միաբանվիլ ուղղա-
փառ հաւատքին հետ՝ եկեղեցական օրի-
նադրութեց ու բարոյականին հետ։ Նա-
գաւորը դրերեր սրբազանին՝ եկեղեցակա-
նաց քաղաքական սահմանադրութեը վրայ,
բայց պատասխանը գալէն առաջ իր հա-
անուէը տրվավ, ետքը ինքնալ ցաւելով
իր ըրածին վրայ՝ հիմա երբոր քահանայից
երդումը տալու վճիռը իրեն առաջարկե-
ցին՝ սկսաւ ուշացընել չէր ուզեր իր հա-
անութիը տալ. ասկէց խիստ կատղեցան
ժաքոպէնները Թագաւորին վրայ նաև սըր-
բազանին ու եկեղեցականաց վրայ, մեծ
հակաճառութեի ելավ ժողովին մէջը. հոն
մօռի (մավռի) քահանան որ ետքը քառ-
տինալ եղավ՝ շատ զօրաւոր պատճառնե-
րով ու ճարտասանութեը ցրցուց որ ըսաւ
էր աս երդումն ուղղափառ հաւատքի. ը-
ցուց նաև ինչ չար միտք ունէին աս երդումը
պահանջողները։ Այլ ժաքոպէնները յա-
տուկ պատուիրակներ խրկելով Թագաւո-
րին առին իրեն հաստատութիը դեկտ. 26.
դէշը ան եղավ որ՝ փարէզին համալսարա-
նը աղէկ չիքննելով մէկէն առջինը եղավ
աս երդումը ընելու. քանիմընալ քահանայ
սուտ ու խաբեբայ մեկնութենէն խաբվե-
լով երդումը ըրած էին ամիսիմամբ մնաց.

*Երսունի չափալ ժաքօպէն քահանաները կայ-*
*ին որ շուտ մը երդում ըլլին։*

Ժաքօպէնները 1791 յունվ. 4 վճռեցին՝ ժողովին մէջ եղած եկեղեցական պատուիրակները մկիկ մկիկ առջևնին կանչել անանկ երդվընցընել տալ ան օրը, ժողովրանին ամէնն դռնները գոցեցին, չարաձգի մարդիկներուն ըստակ տալով հոն ժողվել տրվին, որոնք հազար նախատինք հազար սպառնալիք Թուք ու մուր կուտային եկեղեցականաց վրայ. ասոնց մէջէն անցնելով եպիսկոպոսները քահանայները մտան ժողովարանը ըլլալով ազգային ժողովքին պատուիրակները. երբոր երդման ատենը եկավ՝ դուրսը կեցած անզգամներուն ձայնը աղաղակը բարձրցաւ. կըմեռցընենք կըպօռային ան եպիսկոպոսները քահանայները որ չուզենան երդվընալ։ Ժողովին մէջ կանչեցին պօռասը որ աժէնի եպիսկոպոսն էր՝ ասիկայ քրիստոնէական առիւթ ու խոնարհութ հրաժարեցաւ երդում ընելու. եարը ան եպիսկոպոսին Թէ մեզի մկիկ կանչեցին դուռնէ անուն. ասիկայ ըսավ՝ ինծի փառք կըսեպեմ իմ եպիսկոպոսիս հետևիլ ինչպես որ սուրբը ըրինդիոս սարկաւագը հետևեցաւ իր հայրապետին, պատրաստ եմ ինչվան արիւնս Թափելու. իսկ բօագիդեռնին եպիսկոպոսը ինքիրմէ ատեանը ելավ ըսելով. ես 70 տարվան ծեր մրնեմ, 33 տարի է որ եպիսկոպոս եղած եմ, իմ ծերութիս չեմ արատաւորեր ձեր վճռին երդում ընելով. քա-

նի եկեղեցականք որ կային ժողովին մէջ դէմ՝ ոտք ելան մէկ բերան մինքալ աս մըտքիս վրայ ենք ըսին ։ Այս խօսքերէն ձախակողմեանքը որք են ժաքօպէնք ամէն եղան, չէին գիտեր ինչ ըսուրցեն ։ միայն ան խառնիճաղանճ անղգամներուն ձայնը չէր դադրեր, միշտ մահ կըկանչէին քահանայից վրայ։ ժողովին մէջէն կռնչիւնք մէյմը որ առաջ. ըսուցմէ երդվընցած էր ըսավ, ժողովին միտքը հաւատքի հոգւոյը իշխանութենէ դպչիլ չէ՝ անոր համար ամէնննալ ապահով սըրտով կրնան երդում ընել, բայց աս խօսքով չկրցաւ անոնք խաբել ։ Ժաքօպէնները բանը փոխեցին ամէնն մէկը կանչէ ըսուն տեղը՝ անոնք միայն Թող դան ըսին որոնք որ կուզեն երդվընալ, բայց եկեղեցականք որ 29 եպիսկոպոս էին, 230 քահանայ, մէկնալ չեկաւ երդվընալու ։ աս տեսնալով ան քահանայները որ խաբեբայ մեկնութենէ երդվընցած էին, իրենց ըրած երդումը ետ կանչեցին ։

Ճատ զարմացան անհաւատներուն ժողովը՝ ասոնց քաջասրտութեանը վրայ՝ ինչվան զուրցեց միւսալօն ։ Այնչ եկեղեցականներէն վերոյիշեալ իրենց ապրանքը, բայց անոնք պահեցին իրենց պարէ։ Արդ ասոնց ըրած քաջագործութիւնները չմարիտ հաւատքին համար՝ եղան լման հին հայրապետներուն նըմանն յիշատակաց արժանի, որ իրենց եկեղեցական պատմութենէ մէջ երկան կըպատմվին ։ Անդէսին եպիսկոպոսը որ ժողովին մէջ ուրիշներուն հետ դէմ կեցեր էր

աս նորուԹեց՝ քիչ մնաց որ պիտոր սպան-
նելին, ամբոխը դուրսը կըսպասեր որ՝ ժո-
ղովքին դուրս ելլալուն պես մեռցնեն, ա-
նոր համար անձնաչ հագուստով դուրս
ելավ։ Ինչ որ ըրին ազգային ժողովքին
մէջ՝ նոյնը ըրին ամբողջ Ֆրանսայի մէջ,
ամէն տեղ տօն օրերը միւնիսիբալիտները
այսինքն դատաւորները ժամերը կըմտնային
զինուորներով անզգամ մարդիկներով, կը-
բռնադատեին եկեղեցականները կամ ե-
դում ընել կամ մեռնիլ. շատ ժողովրդա-
պետներ խորանին վրայ մորԹեցին, որը
Թիւֆէնկով որը սուր խօԹելով սպաննե-
ցին, որնալ ծեծելով կիսամեռ Հանեցին,
չերդվընցող եպիսկոպոսներուն տեղը հա-
սարակ քահանայներ դրին։ Ինչ և դրե-
Թէ ամէն եպիսկոպոսներ քրիստոնէական
արիւնԹիւնը ձեռք առնելով յանձն առին
ամէն բանի զրկըվիլ արիւննին Թափել՝ ա-
սանկ երդում չընել. հասկըցան որ յայտ-
նի բացվեցաւ անհաւատուԹեան հերետիկ
կոսուԹե հալածուելը. քիչ քահանայ քիչ
կրօնաւոր դանըվեցան որ յանսխենեան ըլ-
լալուՇին ընդունեցան երդում ըրին։ Իսկ
եպիսկոպոսներէն միայն չորս հոգի դանը-
վեցան երդում ընող. որոնց մէկնալ եղավ
օԹիւնի եպիսկոպոսը ԹալլեռանՇան որ
նորուԹեց պաշտպանող էր. ինքը երդում
ըրավ ետքը աԹոռէն ձգեց փարիզին ար-
քեպիսկոպոսը քլեռք, ժուլին ըսված՝ որ
աասը տարվընէ վեր ան աԹոռը նստած
էր, անոր տեղը դրավ լիտտա եպիսկոպո-

սը. ուսանէին քառատիներ արքեպիսկոպոսը հանէր՝ տեղը սղրասպուրկին եպիսկոպոսը դրավ. մեկալ երդվընցող եպիսկոպոսներնալ ասոր պէս նոր եպիսկոպոսներ կընձեռնադրէին. աս նոր եպիսկոպոսներնալ նոր ժողովրդապետ կըղնէին։

Այս նոր մտուցած եպիսկոպոսները որ սահմանադրութեան եպիսկոպոսներ ըսվէցան պատճառ եղան ընդհանուր հալածմանն որ ուղղափառ հնացած ժողովրդեան մէջ եւ լավ. վասն զի ուղղափառ եղողները խըղճմտանք կընէին աս սուտ հովիւներուն հետ հաղորդակցիլ, անկից ժողովուրդը երկու բաժնըվէցաւ, ոմանք աս ոմանք ան կը պաշտպանէին, որով շատ արիւնհեղութիւն եղան։ Այ երոյիշեալ աներես ժանտ հնիկներնալ մարապետներուն վանքերը մտնալով չարիք կընէին անոնց՝ թէ ինչու երդումը ընող քահանայներուն պատարագները չէք ուզեր տեսնալու. աս քահներուս համար նէ մէս լիսն ուսան և ուրիշ շատ քաղքընէրու մէջ պատերազմելու պէս ծեծկըվընէր եղան ձամիըներու վրայ նաև եկեղեցիներու մէջ, որոնց մէկ պատիժ մը չէին իտար նոր դատաւորները։ Այնչափ ժանտացան ուղղափառութիւնէ դէմ որ չարերը համարձակութիւն առնելով կրօնաւորաց ու քահանայից դէմ գէշ կըխօսէին ամէն տեղ. ինչվան ձամիու մէջ անոնց վրայ կըվազէին նախատինք կուտային. պարսաւանայց համար խենթութիւնէ քաշված պատկերները կըպատռըվընէին. ան քահանայներուն որ

երդում չէին ըրած՝ սեկեմուկի (կէտէ ղուշլի) թևերը քաշելով, իսկ ան քահանայնե-
րուն որ երդում ըրած էին հրեշտակի թևերը քաշելով. ան դատաւորները որ եկեղեցա-
կանքը կը յատատովէին՝ բռնութիւն քաշելով
բանտը կը ղնէին։ Այրկու քահանայապետ կա-
խեցին հրապարակաւ առանց քննութեան. պա-
հապան զօրքը ասոնց վրայ վազեցին խալը-
սելու համար՝ չկրցան բան մը ընել. քա-
հանայի տէր կենալը անչափ վախնալու բան
էր որ՝ թագաւորական հրաման գնաց աղ-
գայինն ժողովէն, իր քովի քահանայներէն
որոնք որ չէին ուզեր երդում ընել՝ հեռա-
նալ իրմէ։ Շատ գրքեր դուրս հանեցին
մէջը ծաղր ընելով կրօնքնաւ կրօնաւորները-
նալ. ասոնք հերիք չեղաւ իրենց, դէշ կնիկնե-
րուան մարապետի լաթեր հագցընել ա-
նանկ չամիչանները քալցընել տրվին բան
չիմողուին ընելու՝ որպէս զի ուղղափա-
ռութիւնը քամահրեն առելի ընեն ժողո-
վուրդին սրտին մէջ։ Այրբոր ասանկ ուղ-
ղափառները կընախատեին, ուղղափառ ե-
պիսկոպոսները քահանայները կը զրկեին,
իրենց ապրանքը եկամուտը պաշտօնն ու խ-
րատունքը ձեռվընէրնին կառնէին, բռօ-
դեսպանդ հերետիկոսները կուրախանային.
մնաւանդ երբոր հրամեցին որ բռօդես-
պանդներուն ժամերը երկիրները թեև թա-
գաւորին ձեռքը անցած ըլլան՝ եա դարձը-
վին իրենց։

Այս ցաւագին բանները տեսնալով չկրնա-
յան սկսան փախչիլ եպիսկոպոսները, ժողո-

վըրդապետները, քահանայները, կրօնաւորները, մարապետները, նաև աղնուականները. արքունիքնալ միտքը դրավ փախչիլ, բայց որովհետև բազմութիւն մեկին չէր ըլլար՝ մտածեց քիչ քիչ փախչիլ. առջինը եղան Թագաւորին հօրքուրերը հրաման խնդրեցին քաշվիլ հոմ երթալ. ազգային ժողովը ասոնց Թուղթ (Թեզքիրե) տըվավ երթալու, բայց փարիզին դատաւորները Ասեմպլէին ըսված ետ դարձնել ուզեցին ժողովքին հրամանը. խառնիճաղանճ ամբոխնալ արգելեց անոնք երբոր Ճամփայ ելած կերթային: Ասանկ շատ ընդդիմութիւններ գտնալով աւելի սահմանազուրկ տեղվանքը՝ վերջապես հազիւ կրցան փրանսային դուրս ելլալու հոմ հասնելու. ասոնցմէ ետև փախան քօնտէ իշխանը, նաև առաջուա իշխանը որ Թագաւորին եղբարն էր: Ուրիշ Թագաւորազուններալ առաջ փախած ունէին. ասոնք գացին քօպլէնց, ուր առատ ըսարկով կըհոգար զիրենք մանկովի Թագուհին ը. կատարինէն, ինչվան յատուկ մարդ մընալ խրկերեր իրենց քովը կենալու:

Երբոր պապը լսելով աս աղետալի հալածումը ուղղափառաց՝ երկու Թուղթ գրեց 1791. մէյմը մարտի 10. ուր կըվճռէ որ ե. կեղեցականաց սահմանադրութիւը հերձուած բերող է, լեցուն է հերետիկոսական մոլորութիւ. մէյմընալ ապրիլի 13 գրեց. ուր կըդատապարտէ երդումը ընդհանրապէս. երդվընցող քահանայները կախեալ կընկ

իրենց կարգէն թէ որ 40 օրվան մէջ ետ չկանչէն իրենց երդումը, կոչնչացընէ նոր եպիսկոպոսարանները, նոր մտուցած եպիս-կոպոսները կախեալ կըլնէ իրենց պաշտօ-նէն։ Ի՛ր թղթերը երբոր փարէզ երևան ելան՝ ժաքօպէնները ամէն ամբէ մէկ դի ձգելով՝ սրբազան պապին մէկ արձան մը շինեցին լաթէ, իշու վրայ հեծցընելով հա-զար անարգանք տալով ետքը երեցին. ա-վիներորդ դքսուհինալ վենսէնօին կոմսու-թիւննալ որ հռոմայու յատուկ էր՝ յա-փշտակեցին առին. սուտ թուղթմընալ հա-նեցին սրբազան պապին անունով, ուր իբր թէ սրբազանը կըգովէր երդվընցօղները ու նոր մանօղ եպիսկոպոսները, բայց լսե-լու բանը ան եղավ որ՝ նիմէս քաղքին մէջը մէկը ուզելով տպել աս սուտ թուղթս իր տպարանին մէջ՝ տղայ մը թաց օրինակին մէկը առավ որ կրակին քով բռնելով չորցընէ. աս օրինակը բռնկեցաւ քովի օ-րինակներնալ բռընկցուց. անկից տպագրո-ղին տուննալ բռնկեցաւ ամէն բանովը եր-վեցաւ, ան որ ցաւալին է՝ իր նշանած աղ-ջկնալ երվեցաւ ցաւէն մեռաւ։

Սրբազանին թղթերը երկու բաժնեց Ֆրան-սայի եկեղեցին. մէկը իր առջի անունը պա-հելով Գաղղիա կամ Գալոգղիէ ըսվեցաւ. երկրորդը Ազգանագրական եկեղեցի ըսվե-ցաւ։ Ուղղափառները շատ ոսկի տալով քանի մը եկեղեցի ծախու առին, ուծային խորհուրդը հոն կըկատարէին մէկ ջերմե-ռանդութէ մը՝ որ եղավ նման առաքելոց

ատենին. բայց շատ հեղ եղավ որ հալա-
ծիչները բռնուբ մնալով ուղղափառնե-
րը կըջարչարեին, խորանները կըքակեին,
խաչելութիւնը պատկերները կրկոտրեին կը-
պատռատեին, կնիկները կըծեծեին. որով-
հետև քօնտօռսին խորհուրդ տալովը կնիկ
ծեծելը հասարակ բանմընեը եղած, շատը
ծեծի տակ մեռան. նաև տղաք ու աղջիկ-
ները 8, 10 տարվան թէպէտ անխնայ կը-
ծեծվելին՝ բայց իրենք միշտ աս կըղուրցե-
լին. մեզ թէև սպաննեք՝ ուղղափառ հա-
ւատնիս չենք թողուր. ասանկ չարչարող-
ներ անչափ շատցան՝ որ պահապան զօրք-
նալ երբեմն ասոնք չէին կրնար զսպել:
Վասնզ որ նոր մնռող երդվընցող եկեղե-
ցականց վարքերնինալ պաշտամունքնալ
ատելի էին եղած չէ թէ մինակ ուղղափառ-
ներուն՝ հապա նաև անհաւատ ֆրանսզնե-
րուն. անոնց եկեղեցիները մեծ մասը պա-
րապ մնացին: Ազգային ժողովը հալածող-
ներուն անդթութիւնը ուզեց վերցընել, ա-
սոր վրայ խօսեցաւ ժողովին մէջ դայլէհան
օթիւնի եպիսկոպոսը. որովհետև բսավ
ընդհանուր թոյլտուութիւն եր սահմանված՝
պէտք է ուղղափառները ազատ թողուլ,
միայն Սահմանադրական հերձուածող կոչել ա-
նոնք. բայց ժաքօպէնները ասանկ խօսքե-
րու վրայ կըծիծաղէին, թուրը սուրը ձեռ-
քէ չէին ուզեր թողուլ ուղղափառաց դէմ:
Սրբազանին թղթերը ուրիշ պատուվընալ
բերին, շատ ժողովրդապետներ դուրսի գա-
ւառներու մէջ՝ որ կամ սխալմամբ և կամ

վախերնէն երդում ըրած էին. ան թղթե-
րը տեսածնին պէս ղջալով լալով իրենց
ըրած երդմանը վրայ յայտնի յետս կոչում
ըրին. Պէարրո խօսեցաւ ըսին, ամէն պարկեշտ
քաղաքացի: Օրինաւոր եպիսկոպոսներնալ որ
Ֆլորիտ հովիւ էին՝ յայտնի բանադրեցին
եղբէն մեռուցած սուտ հովիւները. անկէց
հետևեցաւ իրենց բանտը մտնալ, քշվիլ,
ամէն պատիժ քաշել. բայց ասչափ հալա-
ծումը ոչինչ սեպելու է ան հալածման քո-
վը որ եղբէն հետևեցաւ:

Ա՛նտապօլին մահը, իրեն վարքը:

1791:

Ով որ աս առեններս չիմռունեը միտա-
պօն՝ կարելի է որ Թագաւորը կամաց կա-
մաց ձեռք ձգէը իր առջի իշխանութիւնը.
որովհետև միտապօն տեսնալով աս օրերս
որ բանը իր մտքի դրածին չափը անցաւ.
Թագաւորին իշխանութիւնը քիչցընել ըսել-
նին՝ բոլորովին անտեր անտերունչ ըլլալ
սկսաւ ֆրանսա, մէյմը աս բանիս համար՝
մէյմընալ օրէնսդիրներուն դէմ Թշնամա-
նալուն համար՝ իր միտքը խօսքը փոխեց.
Թագաւորին ու արքունեաց դէն սկսաւ ջա-
տագովել: Ա՛սոր վարքը պատմիչը խիստ
կապված ըլլալով հիմնկլան ֆրանսայկին
պատմութիւնը հետ՝ հարկաւոր է կարգացո-
ղին տեղնիտեղը լմնալ:

Ա՛ս մարդս որ կըսվէը ռնորիոս գաբրիել

ռիքեդ, կոմս Միռապօ՝ Ֆրանսային բռօ-
վանդակաւորը ծնած էր, որուն ժողովուրդը
դէմ հասարակօրէն յանդուգն կըլլան. որ-
չափ որ ինքը խիստ տաքարիւն լիրբ տղայ-
մըներ՝ անչափահ իր հայրը [1] խիստ ժանտ
էր, կուզէր դատաւորի մը պէս տղին վրայ
իշխել, ահա ասանկ հօրը բռնութիւնը պատ-
ճառ կըսեպէին որ տղան Համիւէ դուրս քա-
ներ ըրավ, պարտքերու մէջ ինկաւ։ Այրբոր
քսան տարուան եղաւ Հարուստի մը աղջիկ
առաւ միայն իր հարստութիւնը համար, ո-
րուն բերած ըստակը շուտ մը մսխեց կե-
րաւ միռապօն. քսանըհինգ տարուան ըլլա-
լով իր ըրած չարութիւնը համար աս դիս
ան դին փախաւ, բանտը դրվեցաւ, փիլե-
մէնկ փախաւ, ուր չնեց անուանի գիրքը
Ծ֊ալաճ Ղաղէրու դէմ. փիլեմէնկ խար-
դախուի ընելով խաղերու մէջ՝ գաղտուկ
փախաւ եկաւ Ֆրանսա, հոն քաղքէ քա-
ղաք պտտելով իր ազգականները Ճանչ-
ցան, վախերնէն բերդը դնել տըվին լիօնի
մօտիկ. ուր իրեք տարի կեցաւ միռապօն,

---

(1) Ասոր հայրը կըսվէր վիքտօռ ռիքեդ մարքէզ մի-
ռապօի, մարսիլիացի որ մեռաւ 1790 ժողովրդեան
ազատութիւնը քարոզելով աւելի ան գրքին մէջը որ
կըսվի Բարեկամ մարդոյն, բայց իր տանը վրայ բռնուե-
կըբանեցընէր։ Աւելկայ ոմանք չփոթելով Միռապօ-
ին հետ որ մեռաւ 1760, հեղինակ կըսեպէին ան գէշ
ընջահասաա գրքին՝ որ կըսվի Դրու֊է կամ Մոպէան
բնութիւն, ամսգրատմ տպված 1770. բայց աս գիրքս
ոչ միռապօին է և ոչ միռապօտին, այլ Հօլպախ ա-
նուն մէկի մը՝ որ ամէն չնած գրքին մէջ իր անուա-
նը գոցելով ուրիշ մեռնողներուն անունը իր գրքին
վրայ կառնէր։

բանտին նեղութիւնը բարեխառնելու համար
զինքը ուսման տըվաւ։ Աղատվածին պես
առջի գործքը եղաւ դատաստան կանչել
իր կնիկը՝ որ չէր ուզեր քովը գալ. բայց
ինչ չարտասանութիւն որ բանեցուց դատաս-
տանին մէջ՝ իր դատը (տավան) կորնցուց,
կնիկը իրմէ բաժնըվեցաւ։ Տեսնալով մի-
ռապօն որ (անչափ գովելով իր կնիկը դա-
տաստանի մէջ, ինչվան հրեշտակ կոչերը
զինքը թէ վարուց և թէ գեղեցկութեան
դիացին,) վերջապէս կնիկը չուզեց միա-
նալ, կատղելով սկսաւ իր կնիկը ամբաս-
տանել ծանր անհաւատարմութեան վրայ,
ապացոյց աս բանիս բերելով իրեն հին քա-
րևագիրը. բայց ան ատեննալ դատաւոր-
ները Աղեսօ գրագրին ըսածը բռնելով մեր-
ժեցին միռապօն, որուն ըսածը աս էր. Մէկ
մարդ մը որ էր կնիկը կամքաւոյնէ, երբեմն ըս-
նէնար պահանջել նորէն անիկայ էրէն առնելու։
Աքանչ պատկ մը՝ կարգըվիլ մը՝ ըստըկի հա-
մար միայն, չիկրնար խաղաղ կենալ, ասանկ
կալ վերջ կունենայ։

Իր խեղճութեանը մեղքընալով հայրը իր
տունը առաւ կըսեն, բայց միռապօն քուռ
զաւակը մէկ գիշերվան մը մէջ ինչ ըստակ
ու աշխիւ բան պահված կային տանը մէջէն
գողցաւ, չիբռնըվելու համար գնաց Իսլա-
մոռաձի գրվեցաւ դատաւորին՝ որ ան ատե-
նը սուրթէնն էր. ետքը ծածուկ լրտեսի
(կէօզէիւլի) մը պէս խրկըվեցաւ ըսբա ըս-
ված Ջերմուկները (իլիճաները), ուր մի-
մին ամառ թագաւորները՝ մեծամեծ իշ-

խանները կուգային, թող տուր ուրիշ շատ
ֆրանսազ ու ինկիլիզ մեծերը. որպես զի ա-
նոնց խօսքերը իմանայ ծանուցանէ: Ինկից
անցաւ գնաց պէտլին պրուշին մայր քաղա-
քը նոյնպէս լրտեսութիւն համար. տեսնող
եղավ մեծին ֆէտերիքոսի ետքի օրերը, և
անոր յաջորդին կուլիելմոսին առջի օրե-
րը, հոն մտիկ իրեք տարիի չափ նստելով
երկու հատոր գիրք շինեց Վաղվան պատմու-
պրուշին վրայ, մէջը լեցուն նախատինքով
է, կուլիելմոսի թագաւորին վրայ, նաև է.
յովսեփ կայսեր վրայ. աս գրքիս յաւե-
լուած գրեց Վաղնեան լուսաորելոց աղան-
դին դէմ, որոնց խիստ հակառակ էր ան ա-
տենը. աս գիրքս 1788 դուրս ելավ տպվե-
ցաւ, բայց բառլըմանին վէճովը փարելդի
մէջ երվեցաւ: Յորոր ֆրանսա դարձաւ՝
հոն էր հէնրիքոս պրուշ իշխանը՝ է. ֆէ-
տերիքոսին ալևոր աղբարը. ասոր հետ է
ղօղ պրուշ իշխանները շատ պատեցան մի-
ւսապօն ձեռք ձգելու. կուզէին ականձը
կտրել, երեսը ձղքտել իրեն տրված նա-
խատինքներուն համար պրուշին վրայ:
Յորոր 1789 հրաման ելավ ազգային ժո-
ղովը ըլլալու համար՝ միւսապօին ուզածը ըլ-
լալով՝ շատ ետևէ ինկաւ ան ժողովին մէջը
դանըվելու՝ պատուիրակ ըլլալու աշնուա-
կանաց դիացին. բայց բռւվանսին աշնուա-
կանքը որովհետև կըձանձնային ասոր ըրած
չարութիւնները՝ մէկէն մերժեցին. ան ատե-
նը միւսապօն երդվըցաւ ամէն ֆրանսայ-
ին աշնուականներէն իր վրէժը առնելու.

ետքը պտրտեցաւ ժողովին մէջի պաշտօնէին մէկը ձեռք ձգել, բայց անորալ նէքերը հա կաւաակ կեցաւ. ան ատենը միւսպօն սըրտին մէջը դրաւ վրէժ առնելու նէքերէն ու ֆրանսայի արքունիքէն: Տեսաւ որ իր մըտքին դրածները չեղան՝ հրապարակաւ հրաժարեցաւ իր հայրենական աշնուականութէ ու Լոմ անունէն, որպէս զի հասարակ ժողովրդեան մէջ մնալով անոնց դիացէն զոնէ ազգային ժողովը խրկըվի. այս քաղաքը ցած խանութպաններուն մէջ մտավ ելավ, մաւսիլիա գնաց որպէս զի վինքը պատուիրակ ընտրեն ուսյնալին տեղը որ հրաժարեր ժողովը երթալու: Տեսաւ որ անալ չըլլար՝ իր ունեցածին կէսը ծախեց, 14 հազար լիրէի ապրանք առաւ. խանութը բացաւ առջևը նշան կախելով վրան գրըված Լէ-ապօ պէլպ. ինքնալ խանութպանի հագուստ հագած՝ կանգունը ձեռքը բռնած ասոր անոր կտաւ կըծախէր: Այս բանս նոր տեսիլ մը երևնալով ամէն քաղքացոց՝ բազմութէ հոն կըթափէին տեսնալու համար. որոնց սիրտը շահելու մտքով ան խորամանկ նոր խանութպանը աղէկ առիթ գտաւ քարոզելու, Ով որ ես ժողովը երթալու ըլլամ ըսաւ՝ քիչ մը անցնելէն ետև չիտեսնաք պիտոր տարբերուէ մենծի պզտիկի մէջ, հարուստի աղքատի մէջ, ազնուականի հասարակ ժողովրդեան մէջ. ամէն մէնքնիդալ հաւասար պիտոր ըլլաք, մէկ չափով ունևոր պիտոր ըլլաք: Երբոր աս անուշ ձայնը առին հասարակ ժողովուրդը

որ աղբատուԹիւն կրտառապէին՝ խեղճուԹեան, միաբան հաւանուԹիւն ասիկայ ընտրեցին պատուիրակ, Թէ մառսիլիայէն հասած բակուԹիւնը՝ Թէ այդս քաղաքին ժողովուրդը. այնչափ զմայլելով վրան՝ որ գիշեր մը իրենց Թատրոնին մէջը իրիկ հոգի ամմինուն առջին միառապօին գլուխը կանանչէ կապված պսակ մը դրին, ինչպէս որ սովորուԹիւն ունէին հռոմայեցիք դնել իրենց հայրենասէրներուն գլուխը։

Ա՛ս մարդուս հասակը բարձր էր, երեսը խոժոռադէմ ծաղկէ ավերված, խոշոր ընքաւի, աչվընները վառվռուն, մազերը շատ՝ որոնք ծռել պլօրել շատ հոգ տանելով մէկ նմանուԹիւն մը կրբերեր առիւծու. իր ձեռվընները աղվոր ըլլալով աս խօսքս ըսել տրվավ. Ա՝ֆոպօ աւելի պեղ առավ՝ֆէվընէրով (այսինքն գրելով), չան ըէ դէմդով։ Ա՝արմիով ուժով էր, բնուԹիւն յանդուգն անհանդարտ. իրեն անչափ դէմ էր հնազանդիլ՝ ուրիշի տակ ըլլալ՝ հեղուԹիւն խոնարհուԹիւն ցրցընել՝ որ անանկ բանէրու մէջ կրկատղեր կրժանտանար. իսկ խռովուԹիւն հանելու անանկ յարմարուԹիւն ունէր որ՝ ամմէն տեղ նաև միս մինակ եղած տեղը կրնար տակն ու վրայ ընել. մէկին ըսածին պէս բարեկարգուԹիւնը գլխաւոր Թշնամի կըսեպէր մարդուս։ Ա՝անք որ՝ խօսելու դիւացին անանկ մէկ կատարելուԹիւն մը ունէր՝ որ ամմինուան գերազանցեց. ինչ որ պէտք է մէկ ատենագրանի մը համար՝ ան ամմէն բանը ունէր միառապօն. դուրսէն մէկ

արգելի կերպարանք մը՝ ծանր կեցվածք
մը՝ մկ երեսի տեսիլք մը խորունկ մտա-
ծօղ մարդու՝ մկ ահաւոր նայվածք մը որ
առեներանը կըցրցընեն իբր ուրիշ աշխըր-
քէն եկած մարդ մը. շարժուածքնալ ինչ-
պէս որ պէտք է չափաւոր՝ բայց զօրութէն
տըվօղ. ձայնալ անոր կեօրէ, իր զուրցը-
վածնալ եռանդոտ՝ կիրք շարժօղ որ խիստ
պէտք է համոզելու (խանտրմիշ ընելու),
անանկ մկ ազդու կտրուկ Ճարտարմտուի
մը՝ անանկ մկ խտակ երևակայութի մը
ուներ որ՝ գիտես թէ մկ աղբիւր մըներ
Ճարտասանութէ. երբոր բան մը բացատ-
րելու ըլլար՝ անանկ խորունկին հանելով
պարզ խտակ կըսկարագրեր, վերէնվար
լսօղին առջին կըդներ, որ գիտես թէ հայ-
լնի պէս ամէնուն միաքը կըբանար սրտեր-
նին կըբաշէր իր խօսքը կատարելու: Ա՛սանկ
կով եղավ լման դէմոսթենէս կամ կիկե-
րոն մը որ ատենաբաններուն գլուխ եղած
են աշխըրհիս վըայ, առջինը յունաց մէջ
երկրորդը հռոմայեցոց մէջ. ասոնց պէս մէ-
ռապօն պերճաբանութիւն մը ունենալով
արհեստաւոր՝ իր քովինալ մկ յատուկ
ձիրք մը ունեցաւ բնական՝ որ չէ եղած կը-
սեն. այսինքն է մկ հատիկ յարմար առե-
նևին սիրտ քաշելու՝ թէ վաստըկելու թէ
չվաստըկելու սիրտերը. ասկեց զատ մկ
ձիրքմընալ ուներ որ՝ քանի աւելի կիրքը
էլլար տաքնար՝ այնչափալ աւելի կարգա-
ւորեալ կըխօսեր:

Ա՛ս լեզուով միռապօն երկու տարի լման

իշխեց ազգային ժողովքին վրայ, որուն մէջ
ոմ էր կարօղ ոմ տկար՝ խիստ աղէկ կը-
ձանչնար. փարելզիք ինչ փոփոխականութի
ունին և ինչ դիւրահաւանութեն՝ աղէկ կը-
հասկընար. ասոնք հասկընալովը արուեստ
չիթողուց որ չիբանեցընէ ամէնհնաւ իրեն
դին դարձընելու համար. ֆրանսային գըլ-
խաւոր շարժօղը խռովութեն ապստամբուի
հանելու համար աս միւսպօն եղավ: Դայց
ինչ անհիմն են ապստամբ մարդու վճիռ-
ները. ասանկ ժողովրդեան ազատութիւն
վճռօղ ջատագովօղ մարդը՝ երբոր ազգայ-
ին ժողովին մէջը ամբաստանվեցաւ թէ
1789 հոկտ. 6 եղած խռովութեն մէջ մաս
նակից էր միւսպօն՝ փարելզ ոտք հանօղնե-
րէն մէկը ինքն էր, աս խօսքերս լսածին
պէս շուտ մը դարձաւ, ազատութեե դէմ
քարոզել սկսաւ. սպառնալով որ ամէնն
տեղ պիտոր երևան հաներ զուրցեր ոմ
էին ապստամբներուն գլխաւորները. ետ-
քը գնաց Թագաւորին հետ տեսնըվեցաւ,
ժողովին մէջն եղած տարաձայնութիւնները
հասկըցուց, խոստացաւ իրեն դին պաշտ-
պանելու. Թագաւորնալ իրեն բարեկամա-
Թեան փոխարէն՝ իրեն պարտքը վճարեց
որ 127 հազար լիրե էր. ամէնն մէկ ամիս
ալ 6 հազար լիրե տալու իրեն խօսք տը-
վավ. այնչափ պաշտպան եղավ որ Թագու-
հին կըսեր. Դա չեմ վախնար ինչ որ ալ է պ-
ատահի. Թէ որ Թագաւորը անանկ բռնները
միւսպօին խօսքը ինչպես որ Թագուհին
կըբռներ՝ ասանկ չէր ըլլար կըսեն: Դայց

ասոր վրայ քիչ մը անցաւ մարտի 30 մի-
ռապոն յանկարծ անանկ մէկ հիւանդու-
մը բռնըվեցաւ՝ որ կասկած տըվավ օձ-
լէանաներէն դեղված ըլլալու. ժողովրդեան
բազմութիւը իր տանը ջրա դին սկսան պտը-
տիլ իրենց տրտմութիւնը ցըցընել. միռա-
պոն հասկընալով ըսավ. ատեն մը լռնժի
սիրելի եր ժողովրդեան համար ապրիլ, հի-
մակ պարծանք պիտոր սեպեմ ժողովըր-
դեան ձեռքը մեռնիլ. բժիշկին աֆիոն ու-
զեց առնել որպես զի չխմանայ իր ցաւը.
երկու ժամ մը թմրելէն ետև մէկ դողա-
լով մը արթննալով շատ հեզ ըսաւ ասոնք
քը. Ա՛ս կըմեռնիմ հետս կըտանիմ ֆրան-
սըզին միապետութիւնը, իր մեացորդը կը-
տեսնաք որ ապստամբները իրենց մէջը պի-
տոր բաժնեն: Ա՛ս ըսելով մեռաւ ապրիլի
2. հ2 տարվան [1]. մեռնելէն ետև իր մար-
մինը բացին, մէկ նշան մը դեղված ըլլալու
չիգտան կըսեն գոնէ բժիշկներուն խօսքին
կեօրէ:

Միռապոն եղավ թագաւորական իշխա-
նութիւը դեռ չգօղ, բայց թէ որ միռա-
պոնալ ողջ մնար՝ անանկ էր կործաներ կը-
սեն թագաւորին իշխանութիւնը. արդէնալ
միռապոին միտքը թագաւորին իշխանութիւը
պզտիկցընել եր և ոչ լման հասարակապե-
տութիւն (Ռէփուպլիք) ընել, որ ֆրանսայի
ընդարձակ երկրի մը համար գիտեր որ ան-
յարմար եր՝ որոնք Ռոյալիստ կըկոչեր: Ա՛յսան-

(1) Ոմանք սխալմամբ կըդնեն 5ղ տարվան:

կով երկու կերպ մարդ եղալ ասիկայ . մ-
կը պարսաւելն իր չարութեցը համար՝ մ-
կալը գովելն իր կատարելութեցը համար ,
երկու տարբեր կերպարանք ցրցընելով աշ-
խըրհիս մէջ լինյուց իր կեանքը [1] : փա-
րեզիք անանկ մէկ թաղուամ մը ըրին աս
մարդուս՝ որ անոր նմանը չէր տեսած փա-
րեզ . ան օրը ամէն խանութ գոցել տըվին
աւելի գուարճութե խանութները . ամէն
ազգային ժողովին մարդիկները ամէն դա-
տաւորները պաշտօնատէրերը սուգի հա-
գուստով թափօրի մէջ մտան որ 3 մղոն
տեղ բռնեց , և ժամ քշեց . քաղքցիքըմ
մեծ ու պզտիկ՝ երիկ մարդ կնիկ մարդ հե-
տը երթալով բանթէոն տարին , կարդե-
սիոսին քովը թաղեցին [2] : Ահ ինչ վար-
կուամ , ինչ չափ դուրս զմայլուամ ուշին ե-

---

(1) Միւպթէլայըմ կերչի սանա պիվէֆա սըն նէյ-
լէյիմ ,
կէօրախիյիւն հէր եար իլէ աշնա սըն նէյլէյիմ ,
Պիր թապիպ ճանսըն , ամմա պիվէֆա սըն սեվ-
մէյիմ ,
Հադդա մուրաատմ ճա կիւզէլ սին բիւր ճէֆա-
սըն նէյլէյիմ .

(2) Ան տեղը երևելի մարդիկները թաղել որոշէր-
էին , միռապօն առջինը եղավ , պատուհա որ միռա-
պօին հաւատարիմ աշկերտներէն մէկն էր՝ առաջոր-
կեց ազգային ժողովքին՝ որ միռապօին կէս արձանը
մէրմեռէ փորվի , բանթէոն ըսված տաճարը դրվի :
Նայէ հիմա փարէզյոց փոփոխամտութե՝ որ քիչ
մը առաջ բուն ներքուն արձանները դրվելուն վրայ
չէին հաւներ , հիմա միռապօին և ուրիշ անհատա-
ներուն արձանները հոս կըդնեն պատուհելու համար .
հիմա բանթէօն թաղեցին միռապօն , եաքը անկէց հա-
նեցին , անոր տեղը մարաթը թաղեցին :

ղեր փարեզցիք աս մարդուս վրայ՝ աւելի իր մահուան ատենը երևցաւ. օրերով ա-նանկ մկ ընդհանուր սուգ տրտմութեի եր ընկած ամէնուն վրայ որ մարդ կըզարմա-նար. երբոր բարեկամները ձամիհան իրարու կըհանդըպէին՝ ամենևին բերըննին չիկըը-նալով բանալ՝ չիկրնալով բան մը խօսա-թել՝ միայն իրարու ձեռք սխմելով գետի-նը նայելով աչվըներնին արցունք թափե-լով կըսկին. Ա՜խ դոռոժ չէկայ. դոռոժ գնայ, ուրիշ խօսք չէին կրնար զուրցել լա-լէն հեկեկալէն։ Փարեզցոց սիրտը շահե-լու հերիք է կրսեն նորուն, հերիք է աղ-վոր զուրցըվածնէրու կերպէր եղանակները. աս բնութեը հետ թէ որ ասիացոց ծանր մտածութիը ունեցած ըլլայլին՝ ան ատենը բարեխառնած կըլլար, չէին կրնար ան խոռո-վութեց մէջ որոնց մէջ ընկան իրենց վատ-վարուն բնութեը համար։ Ըն ատենը թէ ինչ աստիճանի տաքցած եր իրենց ըղեղը հասկընալու համար բերնէնք աս տապանա-գիրը՝ որ ֆիլեվէ անուն մկը շինեց. Ո՛վ դո՜ ըէ որ չես ճանչնար Ըլաոռո՜է պերո՜ըէը, ըէ որ չո՜էին սէրտ չէշըրթէը պէսնալով աս գերեզմա-նը, հե՜ըչէը ասկէց ո՛վ պէղճ, ըէ խօսք մը դիայն հերէթ պէտը ըլլայ չէզէ. Չոռ ըաղվածը դոռո-պօն է։

Յաջորդը հարցնելն անգամ մը գեղ երթալն, անգամ մըն ալ խոչնելն. նոր սահմանադրութիւնը հընծայնէն. ազգային ժողովը հրաւիրնէն.

1791։

Փետրվ. 28 Թագաւորին արքունիքէն 400 հարիւրներ ամէնը գինեալ եկան մտան Թուլերիա բերդը, ուզեցին հոն եղած ազգային պահապան զօրքը դուրս հանել, Թագաւորը աս 400ին զինքերը հանել տրվավ։ Այս որովհետև իր վախէն ու սրտադողձէն որ առաջները քաշեց երկու ամսէն աւելի եր որ հիվընցած եր, բժիշկները իրեն խորհուրդ տվին գեղ երթալու. որովհետև նոր սահմանադրութիւնը կամ ազգային ժողովը հրամայեր կուտար Թագաւորին ինչվան 60 մղոնի չափ հեռու տեղ երթալ իր ուզածին պես օդափոխուելու համար։ Այսպէս որովհետև ազգային ժողովական ժողովուրդին բազմութիւնը տակ ընկած եր՝ ըստ որում ժողովրդեան պաշտպանութիւնը միայն ոտքի վրայ կեցած եր, անոնց ապաւինելովը միայն կիշխեր, չիկրցաւ իր վճիռը բանեցընել. պատճառն որ՝ երբոր ապրիլի 18 Թագաւորն ու Թագուհին առապան մտան որ Պէն քաղաքը եղած տեղը երթան ողջութիւն գտնալու՝ Ազգմընական զօրականք հաղորդութիւնը հոն առնելու երդում չընծայեցին Թագաւորին որ իրենց ուզածը չըրաւ Թագաւորը ձեռ-

վընեռնէն կորսնցընէն, շուտ մը սուտ ձա-
ներ հանեցին թէ Թագաւորը կըմտածէ
փրանսայէն դուրս ելլալ, նեմչէն զօրքը
(որ է, լեռնոլտոս կայսրը պատրաստեր)
հետը առնել, անչափ զօրքով մը վրայ գալ։
Ասրիները կելլային կըսէին որ՝ մեզի դէմ
ծածուկ ապստամբութիւն մը կայ ելլալու
մտիկներս՝ անկից խալըսելու համար Թա-
գաւորը կուզէ սկզբիլ դուրս ելլալ։ Վանկ
խօսքեր ըսելով ամէնհնալ տաքցած գլխով
10 հազար հոգիէն աւելի լեցվեցան բակը,
ձիերուն սանձը (եուլարը) բռնելով Թող
չիտըվին երթալու, ծանր խօսքեր զուրցե-
լով շատ նախատինք տըվին աւելի Թագու-
հիին դէմ. հոն վազեցին ազգային պահա-
պան զօրքը հասնելու խալըսելու, բայց ան
ապստամբները ետևէ ետև շատնալով վախ-
ցան անոնց դէմ ձեռք վերցընելու. Ֆա-
ժէդը մէյմը զօրաց կըխօսէր մէյմընալ ա-
պրստամբ ամբոխին որ դադրին խաղաղին.
ինչևիցէ Թագաւորն ու Թագուհին խիստ
ամօթով ետ դարձան իրենց մարդիկներով
որ առապային չորս դին առնէր փաթթե-
րեին Թագուհին խալսցընելու համար. աս
ապստամբները իրենց վրէժը առնել ուզե-
ցին Թագաւորին քովի եղած մենծերեն.
շատ չարիք ըրին անոնց Թագաւորին առ-
ջին՝ որ Թևերը բացած անոնք պաշտպանել
կուզեր ընորհք խնդրելով։ Վաղուան օրը
ազգային ժողովքին գանկատ գրեց Թագա-
ւորը, Թէ ինչ ներհական բան է որ ազգայ-
ին ժողովը իս կանչէ Վալպան ապաոլնկան

ֆրանսէ, բայց ես միևնակ ըլլամ որ ազա-
տութիւն չունենամ և ոչ ոտքս տընկեն դուրս
կոխելու[1]. Ֆաժէդը յանցանքը ձգեց ազ-
գային պահապան զօրացը վրայ, որոնք չու-
զեցին իրեն հնազանդելու, անոր համար
խնդրեց հրաժարելու իր պաշտօնէն թէ-
պէտ կեղծաւորութիւ՛ն: իսկ ազգային ժողովը
ապսպրեց որ ապստամբներուն գլխաւորնե-
րը հրապարակաւ պատժվին:

Ապրիլի 23 Թագաւորը ծանուցում ըրավ
դրսի տէրութեց իր անհանգիստ երդումն
որ ըրավ նոր սահմանադրութիւնը պահելու.
իսկ յունիսի 16 քաղքացի կըսրիչները եր-
դում ըրին ապրիլ ու մեռնիլ հայրենիքը
պաշտպանելու համար: Տեսնալով Թագա-
ւորը որ քաղաքական եկեղեցական անկար-
գութիւնները օրէօր կավելնան, ուսկից Թա-
գաւորին կենաց վտանգնալ կըզուշակվեր,
ալ միտքը դրած եր ֆրանսայէն դուրս փախ-
չիլ միայն յաջողութիւն կըվիտըռեր. միա-
պօն ետքերին ինչպես որ գըտերնք Թագա-
ւորին դին ըլլալով չիմռած շատ ձեռք
ունեցաւ աս բանիս մէջ. անիկայ խօսքերը
ֆաժէդին հետ որ Թագաւորին փախչելուն
շատ օգնեց. բայց Թէ արդեօք մեղքընա-
լուն համար օգնեց ֆաժէդը Թէ աւելի
ինաս տալու համար՝ զանազան կարծիքով
են պատմաբանք, որ մարդ չիկրնար իմա-
նալ իրաւը: Ասոր օգնելովը Թագաւորը

(1) Ըօլ գասար ահ լյերիմ քի ահ ելիմեն ահ իտեր,
տելեթ պաղըմ ահըն ահըմ, օնուն իչին ահ իտեր:

ուրիշն Թուղթ (Թէղքիրկ) ու անուն առ-
նելով վրան յունիսի 21 իր ամմին ընտա-
նեօքը Չամիայ եկաւ, որ կիւն Թագուհին,
եղիսաբեթ իր քոյրը. իսկ Թագաւորին աղ-
բարը բռօվանսի կոմս ըսվածը իր ընկերովը
ուրիշ դի Չամիայ բռնելով կրցաւ փրան-
սայէն դուրս ելլալ պրուքսել փախչիլ. Թա-
գաւորը անվտանգ հասաւ ինչվան նը մէ-
նէհուլ տեղը, բայց ձիերը փոխելու ատե-
նը հոն եղած բօստային մինծը՝ կամ փա-
ժէդին ապսպրելովը ինչպէս որ ոմանք կը-
սեն, կամ ինքիրմէ, Չանչցաւ Թագաւորը
առաջուցմէ տեսած ըլլալով. ասիկայ ու-
րիշի մը հետ մէկ տեղ արտերուն մէջէն
կտրուկ Չամիով Թագաւորէն առաջ հաս
նելով վառէն տեղը, հոն եղող գինուոր-
ներուն հասկըցուց. Թագաւորը իր հետ
եր առած քանի մը հաւատարիմ գինուոր-
ներէն ծառայի հագուստով. ասոնք հաս-
կըցան առաջարկեցին Թագաւորին սպան-
նելու ան երկուքը, չէնէ ասոնք մտածիչ
են մեզ կորնցընեն պիտոր ըսին, բայց Թա-
գաւորին սիրտը արիւն ընելէն վախնալով
հրաման չտրվավ: Վառէն հասածին պես
ամսոյն 22, հոն եղած գինուորները արգե-
լեցին կամուրջը (քեօփրիւն) ուսկից պի-
տոր անցներ Թագաւորը, ամմին ընտանեօ-
քը առին բերին փարեզ, Չամիան շատ նա-
խատինքներ լսել տալով իրենց: Վաքօ-
պէննէրուն արիւնը յամքերեր վախերնէն
երբոր լսեցին Թագաւորին փախչիլը, բայց
հիմա բռնըվիլը լսելով ուրախանալով ա-

դային ժողովէն իրեք հոգի առջևը խրկե-
ցին, որոնք Թագաւորին քով նստելով ա-
նանկ մտուցին փարեզ ամսոյն 25. ուր ան-
բաւ բազմութեի ժողվըված տեսնալու հա-
մար՝ բայց անշարժ լուռ կեցած ամենևին,
որոնց ամէնուն ապսպրված էր գլխընին
չվքանալ անցնելու ատենը, զօրաց բազմու-
թիւննալ առապային չորս դին փաթթած
կերթային։ Երբ վեհին Թագաւորը որ եկե-
րեր ինչվան ըսբա ըսված տեղը ատոնք խա-
լըսցընելու համար՝ պարապ ելլալով ետ
դարձաւ։ Յաքօպէննները քօռտիլիէռնէ-
րը շատ եաւէ ընկան որ՝ ան օրը Թագա-
ւորը Թախտէն վար ձգեն, բայց ազգային
ժողովին շատերը իրենց գլխաւորովը որ ան
ատենը մօռի քահանան էր՝ դէմ կեցան.
աչափս վճռել տըվին որ՝ Թագաւորին գոր-
ծադիր իշխանութիւնը կախեալ ճայ ինչվան
որ ընդունի նոր սահմանադրութիւնը որ մե-
տիկ էր լինելու, իրեն ընտանիքնալ բան-
տարկեալի պես պահեցին Թուլլէռիին մէջ
ֆաժէդէին յանձնելով։ Տեսնալով Յաքօ-
պէննները կամ (իրենց ժողովքներուն ա-
նունով ըսենք) քլիւպները որ խնդիրքնին
առաջ չկրնան, իրենց սովորական հնարքը
սկսան ձեռք առնել՝ որ էր ժողովուրդը
ոտք հանել. յուլիսի 17 կատղած խեղեթ-
րու բազմութիւն ժողվել տըվին Մարս ըս-
ված դաշտը, մէկ բերան Թագաւորը վար
ձգել կըպօռային. ասոնք ցրուելու համար
Մառկիզ օրլէռ բանեցուցին, որ էր կար-
միր դրօշակ բանալ սէրային պատուհանէ-

բուն վրայ. տեսան որ չէին զսպըվիր՝ զօրք խրկեցին վրանին որ արիւն ընելով կրցաւ ասոնք ցրուել: Այս առաջիներուն անուն տըվին Փրանսըները Այն Տօլը, իբր պալատըրը չըպլախ, որոնք ժաքօպէնները իբր ըմբիշ (փէհլիվանները) եղան. բայց ան օրէն ժաքօպէնները կորսնցուցին իրենց հա մարումը. դաշտնալ Պօպոմբօղ անուն առավ վրան:

Նըրբոր սահմանադրութիւն շինելը լմնցաւ սեպտ. 3. ազգային ժողովքին մէջ կարգացվեցաւ, որուն վրայ մէկ պակսութիւն մը գտնալ չէր ըլլար. բայց որովհետև կուզէին որ Թագաւորնալ ձեռք դնէ ընդունի, իրեն իշխանութիւը նորէն դարձուցին, բանտի պահ տեղէն հանեցին. սեպտ. 4 ընդունել տըվին. իսկ 14ին 60 պատուիրակ ազգային ժողովին մէջ տարին ներկայացուցին հանդիսով ընդունել տըվին, որ երդվընցաւ պահել պաշտպանել ան ամէնն իշխանութիը որ տըրված է իրեն. անոր համար 18ին ազգային տօն ըրին լուսաւորութիւ, 22ինալ հնորհակալութիե աղօթք երգեցին ժամը. և որովհետև Թագաւորին դին շատվոր էին՝ մէկ ընդհանուր ուրախութիւ մը եղավ ամէնկրնին, անանկ սեպհականով որ ամէնն խաւսութիե վերջացաւ:

Ազգային ժողովը 28ին հաւատքի վրայ աս վճիռը հանեց որ՝ ամէնն հաւատք ազատ ըլլայ. ինչ հաւատքի մարդ որ ըլլայ՝ մէկը չկրնայ քաղաքացիութիե դուրս սեպել անանք թէև հրեայ ըլլան. վայելէ ինչ իրա

ւունք որ կուտայ սահմանադրուհիը . միայն
Թէ ինքնակալ Թէոդոսիները պահած ըլլայ :
Նոկ սեպտ . 30 իր վերջին ժողովը ըրաւ .
Թագաւորնալ հոն նստած խօսեցաւ . ետքը
ժողովին գլխաւորը ելաւ զուրցեց . Ազգայ-
ին ժողովը սահմանադրութիւն շնորհելէ
որ՝ էր գործէը լմնցաւ , էր ժողովնալ վերջացաւ :

Ասկովին մենծնալը , լեհին վրայէ ըրած խոր-
հուրդը .

1791–1792 :

Ղեկրքիս տեսիլքը դիպուածները մէկ
չհասկըցվելու խաղմընեն . երբոր Ֆրան-
սային մեծ հին տէրութիւը ինքիր զինքը կոր-
սընցընելու հետ էր , ուրիշ տէրութեի մը
որ է մոսկովինը՝ ան ատենը ինքիր զինքը ա-
ւելի մեծցընելու հետ եղաւ : Ինչպէս ա-
նունով մեծ ժողովուրդ մը կայ կասպից ծո-
վին արևելեան դին՝ սիպիրին հարաւային
դին . աս ժողովուրդը իրենց վրայ նոր խան
նստեցընելով քանի մը հոգի դեսպան խրր-
կեց բեգրօպուրկ մոսկովին . իրենց առջին-
նէրուն պես հաւատարմութեի երդվեննա-
լով , բայց և խոստանալով որ ասկէց ետքը
լեզկի Թաթարներուն ամենևին օգնութեի
մը չիտան մոսկովին քերվաննները զարնելու
Թալլելու համար : Ին ատեննները կիլանի
խանէնալ մէկ երեսփոխան մը եկավ , ուրիշ
երկու դեսպանալ շիրազի խանէն եկան .
ասոնք ամէնն ալ եկան մոսկովին պաշտպա-

նուէրը խնդրելու համար, որոնց հիմա խա-
կոյն խօսք տրվավ մոսկովը, բայց բօդէմ-
քինը քանի որ ողջ էր՝ ասոնց վրայ գէշ
աչքով նայելով՝ ոչ երբեք խնդիրքնին ան-
ցած էր։

Ասկից ետքը մոսկովը Միքօլայօն ըսված
տեղը մէկ վաճառատուն մը սահմանեց փի-
լէմենկին խաներուն կէօրէ որ հինտիստան
ունենին. մոսկովին միտքը աս էր որ՝ ամէնն
հեռու տեղերուն առուտուրի կեդրոն՝ աս
տեղս ընէ. անով կատարեալ հաղորդակ-
ցութի մը բանայ ասիային ու եւրոպային
հետ, դիրքը խիստ յարմար ըլլալով. որով
հետև պոկ գետը լան ու խորունկ՝ լիման
ըսված լիճնալ իրեն մօտիկ ըլլալով՝ հեշտ
կընենին (կըհօլայցընէին) ամէնն խոշոր նա-
ւերուն եղումուտը, անոր համար շատ վա-
ճառականներ տնով տեղով հոն եկան բնա-
կելու։ Ալինին հետաւ առուտուրի համար
դաշնագրութի մը հաստատեց ուրիշ տար-
վան, որ 4 միլիոն ռուպլիէն աւելի շահ
կըբերէր մոսկովին, թէղ տուր ան շահը որ
կըլլար մոսկովին ապրանքները աւելի մուշ
տակնկրը (քիւրքերը) փոխելով չինին խու-
մաշներուն հետ։

Այայ մոսկովին աչքը աւելի լեհաստան առ-
նելով մեծնալ էր, որոնք 1788 քիլէրնին
վեր վերցընել սկսերէին մոսկովին զօրա-
պետներուն վրայ գոռոզնալով. ետքնալ ի-
րենց դաշնակիցները պատրաստելով ինչպէս
որ առաջները պատմեինք. անանկով բո-
լորովին փոխերէին լեհին կառավարութե

հին ահմանադրութիւնը, որ 1775 մոսկովը
տըվերէր իրենց, որուն համար նեմցկնաձ
պրուշնաձ պաշտպան եին կեցած։ Այս բա-
ներուս վրայ խիստ տաքնալով մոսկովը՝ սկը-
սաւ նեմցեին ու պրուշին հետ նորէն քան
եփել լեհին վրայ. նեմցեին հեշտ (խօլայ)
էր իր կամքին հետևցընել՝ ինչու որ միշտ
միաբան էր մոսկովին հետ պատճառով իր
վեղիրին որ էր քաժնից իշխանը. ասիկայ
միշտ խորհուրդ կուտար կրջանար որ նեմ-
ցեին շահը միշտ կապված մնայ մոսկովի շա-
հին հետ. բայց պրուշին թագաւորը ը,
կուլհելմոս՝ փոխելով իրեն նախորդին ը,
ֆեոդերիքոսին Ճամփան՝ խիստ դէմ եղավ
մոսկովին առաջ երթալուն վրայ ամմէն բա-
նի մէջ. անոր համար խիստ սեր կապեց ին-
կիլիզին և ուրիշ հիւսիսային տէրութեանց
հետ։ Այս առենները մոսկովը տեսնալով որ
պրուշը սաքսոնիայի մէջ խօսելով նեմցեին
հետ միաբանեցաւ ֆրանսայի թագաւորը
խալսցընելու համար՝ յոյս առավ իրեն հե-
տալ միացընելու իր մտածմունքը առաջ
տանելու համար. գաղտուկ առաջարկեց
նեմցեինալ պրուշինալ նորէն երկրորդ ան-
գամ լեհաստան բաժնելու իրենց մէջը։
Այս խօսքերս լսածին պէս պրուշին թագա-
ւորը՝ փոխվեցաւ իր միտքը, հասկըցաւ որ
իրեն աւելի շահաւոր կըլլայ մոսկովին հետ
միանալը քան թէ անոր թշնամանալը. ի-
րեն աչքը տանձքա ու թօռն քաղքընեըը
առնելու վրայ էր, ասոնք առնել չէր ըլ-
լար ինչլան որ չիմիաբաներ նեմցեի ու մոս-

կովի հետ, որուն համար խօսքալ տըվավ մոկովը։ Ա՛նանկով աս իրեք տէրուհիը մէկ միտք մէկ խօսք ըլլալէն ետև՝ մոկովը իրեք մարդու յանձնեց աս բանս կարգադրել ա-ռաջ տանիլ. որոնց մէկին էր պղատոն ցու-պօվ որ խիստ սիրելի էր մոկովի Թագու-հիին, մէկալը մառքօֆ կոմսը, իսկ մէկալ երրորդը նիկողոս սօլթիքօֆը որ ծեծի վրայ իշխան էր։

Լ՛ՀԵՐը ան ատենը վարշով քաղաքը իրենց մեծ ժողովքին մէջը ըլլալով՝ տաքցած գըլ-խով կը խօրաթէին կրկարգաւորէին քոլո-րովին վերցընելու մոկովին իշխողութիը որ մեծին պետրոսէն սկսեալ իշխերէր վրա-նէն, Թող չըտալու որ ասկից ետքը իրենց վրայ խառնըվի. յանձն առին իրենց նոր սահմանադրութիը ամէնն սրտով պաշտպա-նելու. գիտնալովալ որ ասանկ նոր բան մը սահմանել չէր ըլլար առանց մեծ պատե-բազմի առանց արիւն Թափելու, ինչպէս որ շվետին նոր օրինակը իրենց առջին կե-ցած էր, անոր համար որոշեցին գործով ծեծկըվիլ մոկովին դէմ կենալ։ Ա՛յց ա-սանկ ուշ ատեն լեհցոց արքինալը նմանե-ցաւ մէկ հոգեվարք մարդու մը՝ որ իրեն մահուան մօտիկնալու օրերը հոգեդարձ մը կընէ, կելլայ կընստի քալել կուզէ առնելին ողջ մարդու բաներ կընէ, խելքը չկայտէ որ ասոնք իրեն մեռնելու նշաններ են, դուր-սը իրեն Թաղման վրայ կըխօսին։ Կըսեն որ Ֆրանսէզները ուզելով որ մոկովը իր երկրին մէջը ծեծի մէջ մնալով ատեն չի-

գտնայ իրենց վրայ գալու՝ քաղմութեն ժա-
քօպէնհաղրու լեհաստանի մէջ թափեցին,
անոնք ամէն լեհերուն ականջը ապստամ-
բութե ու հակառակութե կրակը կըփչէին
կըդրդռէին որ լեհերնալ մէկ ամբոխութե
փոփոխութե մը հանեն՝ ինչպես որ իրենք
ֆրանսզիները հաներէին իրեք տարվընէ
վեր։ Ոանք որ թէպէտ հայրենասեր լե-
հերը ընդհանրապէս իրենց նոր սահմանադ-
րութիը պաշտպանելու պատրաստ էին՝ բայց
մէջերնին կայինալ որ կամ նախապաշար-
մամբ հին կառավարութիը աւելի ուզելին՝
կամ թէ իրենց յատուկ շահ մը ունենա-
լէն օտար տերութեց հետ դէմ կըդնէին
նոր սահմանադրութիը, ամէն կերպով կը-
ջանային անիկայ ջնջելու. ասանկներուն
մէջը նշանաւոր եղան աւելի երկու զօրա-
պետները ռէժէվսքի ու բօդօգքի, որոնք
եաքը ուրիշ միաբանութիմբնալ հանեցին
առջի միաբանելոց դէմ, որ սովորական
քահմրնեը եղած լեհերուն մէջ։

Հաշտութէին որ մոսկովը ըրավ շվետին ու
տաճկին հետ՝ հետ ըրավ (խօլայցուց) լե-
հին մտքի դրածը առաջ տանելու. յար-
մար պարագայ գտնալով լեհցոց հարստու-
թիւնը թալէլու, վարշավ նստած իր դես-
պանին որ յակոբոս պուլկաքօվ կըսվէր՝ ա-
պսպրեց որ թուղթ մը տայ լեհի մեծ ժո-
ղովքին. պատերազմ հրատարակելով ձամ
փայ ելլայ եաք գայ։ Ոնոր տրված թղթին
քանը աս խօսքերուս վրայ կըպտըտի։

## Մոսկովին հաշտած Ռուսիոյ ընդհարումն վրայ.

1792. Մայիս 18։

« Լեհին հասարակապետուն անկախ ազա-
» տն իր ամէն ատեն արթուն պահել սը-
» վերհ դրացի տէրութինները, անոր հա-
» մար Մոսկովի Թագուհինալ պարտաւորեա-
» լի պէս մընէ եղած արթուն կենալու որ
» չիշնասվին ան արտունութիները՝ որուն
» վրայ կեցած է իրեն տէրութե կառավա-
» րութիր. և որովհետև լեհին ու Մոսկո-
» վին ազգը մէկ ցեղէ են իջած՝ մէկ լեզու
» կրխօսին, Թագուհին յատուկ հոգ մը ու-
» նի լեհին իրաւունքը արտունութիը պա-
» հելու. գէմ է անոնց որ հերիք չիսեպե-
» լով օրինքին տրված իշխանութիը՝ կրջա-
» նան ընդարձակելու իրենց օրինքը ոտքի
» տակ առնելով, Թագուհին հոգը պարապ
» հանելով, մանաւանդ Թէ սուտ խօսքե-
» րով զրպարտելով։ Ասանկ խարդախ խօս
» քերով գէշ մեկնեցին Մոսկովին ըրածը՝
» որ ըրավ լեհին հասարակապետութեան
» օրինաւոր սահմանադրութիը պաշտպա-
» նելու համար, որնոր ընդունեցան նաև
» աւստրիոյ տունը և գերմանական կայսե-
» րութիը։
» Ասոր ետքի ատենները Մոսկովը պաշտպա-
» նելով լեհը՝ յայտնի ցըցուց իր բարեկա-
» մութիը. Թէ որ Մոսկովը օգնութե չիհաս
» նէր՝ լեհը իր նեղքին Թշնամիներուն տա-

„ կը խնայով ոչ երբեք ուներ խալըսելու ,
„ որոնք ատեն գտնալով երբոր մոսկովը նո-
„ րէն պատերազմի մէջ մտաւ՝ վարշով քա-
„ ղաքը ժողով ըրին , որ չեղավ ազատ ժո-
„ ղով սովորութիւնը կեօրէ , չիմտածեց ինչ
„ բանի համար որ պէտք էր մտածել , այլ
„ եղավ ժողով առաջուց մէկ տեղ խօսք
„ դնօղներու , երկու տարի ու կէս քշեց որ
„ ոչ երբեք քշերէր . պիտի ետքը 1791 մայի-
„ սի 3 հիմնոյ վերցուց իրենց առջի կա-
„ ռավարութիւը որ այնչափ տարի քշերէր .
„ անոր տեղը մէկ միապետութի մը դրավ
„ ժառանգութը որդւոց որդի՝ որ բոլորո-
„ վին դէմ էր իրենց առջիններուն դրա-
„ ծին : Իրենց խօսքը քալցընելու համար
„ ժողովարանին մէջ գինեալ մարդիկ խօ-
„ թեցին , թօփերը բերին , մահ սպառնա-
„ ցան ան պատուիրակներուն՝ որ իրենց
„ առջի կարծիքներուն վրայ կեցած էին ,
„ մանաւորապէս կուկօզէվսքի անուն քա-
„ լիսի պատուիրակին շատ անարգանք տը-
„ վին . իրենց մէջը աս չարիքը ընելէն ետև՝
„ դուրսնալ պատերազմ բացին մոսկովին
„ դէմ , որ իրենց հին դաշնակիցն էր ու
„ աւելի բարեկամ տերուե : Երբոր մոս-
„ կովի ու տաճկի մէջ ծեծ բացվեցաւ՝ հաս-
„ կըցուցինք իրենց որ լեհաստանին մէջէն
„ զօրք պիտոր անցընենք , քիչմընալ զօրք
„ հոն պիտոր Թողունք որ մեր համբարնէ-
„ րը պահեն . ասոր վրայ առաջ խօսք կա-
„ պելէն ետև լեհերը դէմ կեցան , Թող
„ չտրվին պաշար տանելու նոր համբար-

„ Ներ չլինելու. մանաւանդ թէ բռնադա-
„ տեցին եղածները սահմանին դուրս հա-
„ նելու. տնէսթեր գետը անցնելու համար
„ ծանր տուրք պահանջեցին: Մոսկովին
„ ժողովուրդին ոմանք որ լեհաստան գնալ
„ վեցան առուտուրի համար՝ իբրև ապըս-
„ տամբ ըրպարտելով քանտը դրին, երբոր
„ դատաւորները յանցանք մը չգտան ա-
„ նոնց վրայ՝ տանջանք տալին բռնութէ խոս-
„ տովանելու, անանկով պատժեցին առանց
„ լսելու իրենց ջատագովութիւնը. յուն-
„ դաստանները չարչարեցին. բրեզլավիային
„ եպսը՝ ըզլուքին արհիմանարիտը՝ մոսկո-
„ վի հպատակ (բայէ) ըլլալնուն համար
„ հալածեցին, իբրև ծանր յանցաւոր վար-
„ ժուք քաշեցին տարին քանտը դրին՝ թէ-
„ պէտ և բարեպաշտ մարդ: Արշով է-
„ գաճ մոսկովի դեսպանին մատուռը մտան
„ լեհին գործը, քահանայ մը բռնութէ ա-
„ ռին անանկ դատաւորներուն առջին տա-
„ րին որոնց չէր կրնար դատելու. երբոր
„ դեսպանը հատուցում ուզեց՝ չըրին ոչ
„ ինչ պատճառներ բերելով. երբոր մոսկո-
„ վը տաձկին հետ ծեծ ուներ՝ լեհը արտա-
„ քոյ կարգի դեսպան խրկելով տաձկին
„ հետ մարտաւոր դաշնագրուի մը ըրավ.
„ ժողովին մէջը քանի որ խօսք կըլլար՝ մոս-
„ կովի թագուհիին պատիւը չէր պահվեր
„ ինչպէս որ կրվայէր. ժողովին գլխաւոր-
„ Ները ասոնք զսպելուն տեղը՝ աւելի սիրտ
„ կուտային:
„ Այսպես համառօտիւ յիշեցինք որպէս զի

„ Այ ու ամէնէն աչխըրհիս առջին ցըցընեանք
„ իրաւունքը որ ունինք մեկ աղեկ հատու-
„ ցում մը ընելու լեհին . Թեպետ և գիտ-
„ նալով Թագուհին որ լեհին շատը հաւ-
„ նած չըլլալով ան բաներուն որ վարշա-
„ վեայեն մեզը ըրին մոսկովին դեմ՝ պատ-
„ րաստ է ներելու , Թէ որ լեհերը նոր ժո-
„ ղով մը ընելով իրենց առջի օրինացը կեց-
„ ըն՝ իրենք միաբան ըրած անարգանաց
„ տեղը լեցընեն . Թէ չէ՝ ինքնալ կըմիանայ
„ ան լեհերուն հետ՝ որ քարի նախանձ ու-
„ նենալով իրենց հայրենեացը համար՝ մեկ
„ օրինաւոր միաբանութիւն մը ըրին իրենց
„ հին ազատութիւնը ու անկախութիւնը ձեռք
„ ձգելու համար . ասիկայ կրնայ ըլլալ դեղ
„ ան վնասներուն որ վարշավեայի ապօրի-
„ նաւոր միաբանութիւնը ըրաւ ազգին , աս
„ բանիս համարալ ինդրեցին մոսկովին օգ-
„ նութիւնը : Նոր համար մոսկովի Թագու-
„ հինալ իր զօրքին ապսպրեց լեհաստան
„ մտնալու բարեկամի պէս , լեհին իրաւուն-
„ քը տեղը դնելու համար . ու որ ընդու-
„ նի ան զօրքը՝ ներում առնելէն զատ օգ-
„ նութիւն պիտոր գտնան իրենց ու իրենց
„ ապրանքներուն ապահովութիւը համար՝ որ
„ խռովարար լեհերը կուզեն յափշտակել :
„ Նշանակ ընելով իրենց երդումը կատա-
„ ղող կըլլան որ ըրին իրենց հին կառավա-
„ րութիւը պահելու համար , Թողութիւն կը-
„ գտնան իրենց ստերդմնութիւը որ ըրին նոր
„ կառավարութի խօթելու համար . իսկ Թէ
„ որ դէմ դնեն մոսկովին ու հայրենասէր

„ լեհերուն՝ ամէնէն խստութեի ու պատիժ
„ իրենց վրայ թափել պիտոր տան „ :

## Լեհին հանաձ Թուղթը Մոսկովին դէմ.

1792 • յունիս 2 •

Վերոգրեալ Մոսկովին Թուղթը միանգամայն պատմութիւն ըլլալով հարկաւոր եր կարդացողին գիտնալը • բայց նոյն պատմութիւը լեհերնալ Թուղթ հանելով կըպատմեն • կարդա՛ նայէ որչափ տարբեր կերպով պատմութի է • Չմարտութիը հասկընալու համար ան լեհերուն Թուղթնալ հոս դնենք , որ աս խօսքերուս վրայօք կըպտըտի :

„ Պուկաքօվ դեսպանին տըված Թուղթը
„ որ վարշավիայի ժողովքին տըվավ՝ բա-
„ ները օտար կերպ մը ձևացընելով խիստ
„ դժարը բերավ լեհի ազգին որ ազատ ու
„ անկախ ազգ է , բարեկամ է խաղաղութե
„ ու արդարութե , կընայի միայն գինքը ա-
„ պահով պահելու • աս կերպ առիթներ
„ տալը որ մարդկութե դէմ են , մէկ գէշ
„ սրտե մը առաջ եկած են որ Թագուհիին
„ մեծասրտութեալ դէմ է նաև Չմար-
„ տութե • ան Թուղթը դիպուածները փո-
„ խելով կըբերե , գէշը տանելով կըպատ-
„ մե , հերիք է որ Թուղթին մէջի եղած բա-
„ ները բերենք քննելով բացատրելով , ան
„ ատենը իրեն խաբէութեը չարութեը ին-
„ քըմէ կիյնայ :

„ Լեհին ազատութեը անկախութիը ամէնէն

» դրացի տէրուէթեց ուզածն է , ինչպէս որ
» պուլկաքօվին հանած Թուղթնաւ կըվը-
» կայէ . աս ազատուելը հաստատելու հա-
» մար եղած է աս ժողովքս . որպէս զի ցը-
» ցրնենք եւրոպայի առջին նաև նոյն իսկ
» մոսկովի Թագուհիին առջին Թէ լեհին
» ազատութիը որ ամանք որոմնացանք կու-
» ղեն կործանել , չիկրնար վեասվիլ այլ մա-
» նաւանդ Թէ կըխաւսցընենք յափշտակո-
» ղաց ձեռքէն նոր օրէնքներ դնելով . ա-
» սանկով ապօրինաւոր չըլլար աս ժողովս
» ինչպէս որ խիստ խօսքերով կըչարախօսէ
» ան պուլկաքօվին Թուղթը . աս բանս ա-
» ղէկ յայտնի ընելու համար ժողովքին ը-
» րածնները առաջ բերենք : Հիմակվան լե-
» հին ժողովը հասարակաց ուզելովը եղավ
» նորոգութի մը տալու համար . անոր հա-
» մար չէր կրնար կարճ ատեն մէջ ան կեր-
» պով լինալ՝ ինչպէս որ կըլլային մեր սո-
» վորական ժողովները . աս պատճառիս հա-
» մար առաջուցմէ խօսք դնելով միաբա-
» նելոց ժողով ըրինք , ինչպէս որ եղած են
» ուրիշ պզտիկ դիպուածներու մէջնալ :
» Սկիզբ եղավ որ ժողովին մէջը միութիւն
» համաձայնութի եղբայրսիրութի տիրեց .
» ասկէց սիրտ առնելով օրէնք դնօղները
» աւելի աղէկ բանը սահմանեցին քան ինչ
» որ մեր միաբանութիը մտածերէր սահմա-
» նելու . արդար դատաստան՝ աղէկ կա-
» ռավարութի՝ աղէկ եկամուտ՝ վճնուորա-
» կան ուժ , ասոնք եղան ահա ժողովին քըն-
» նելու բանները . ինչալ որ կըկարգաւոր-

„ վեր՝ ամէն ժողովականք միաբան հաւա-
„ նուիրեալն կուտային , լեհին քաղաքացիքը
„ միաբան հայրենասիրութեի կըցըցընէին .
„ անոր համար 1791 մայիսի 3 նոր սահմա-
„ նադրութեի մը հաստատեցինք . այսինքն
„ մէկ համառօտութեի մը ան բարեկարգու-
„ թե որ նոյն ժողովը յանձ առերը մտա-
„ ծելու լինը տարի առաջ :
„ Լեհին թագաւորութիը ժառանգութի
„ որդւոց որդի սահմանելը և ոչ ընտրութի
„ փորձը սորվեցուց . որպես զի խռովութէ
„ խալսցընէ զինքնալ դրացի տէրութինները
„ նալ՝ որ ամէն թագաւոր մեռնելու առե-
„ նը կըքաշէին , ինչպես որ կըվկայեն ան
„ դիպուածներըը որ եղան 1697 . 1704 .
„ 1733 . 1764 . 1771 . Թագաւորին քովը
„ խորհրդականպաշտօնեայներ պիտոր դըը-
„ վին՝ որ Թող չիտան անկարգ իշխանութէ
„ մը բանեցընելու . ասանկով լեհին հասա-
„ րակապետական կառավարութէ դէմ բան
„ չըլլար , և ոչ բռնաւորութի հաստատել
„ կուտան ինչպես որ կրզրպարտեն բարե-
„ կարգութեան Թշնամիները : Այսիսկին 5
„ եղած ժողովը շուտ մը ցըցուց ինչպես հա-
„ ճոյ եղալ ամէնուն աս բարեկարգութիը .
„ զանազան ազգային ժողովներալ անհատ
„ անձինքներալ լեհաստանին մէկ ծայրէն
„ մէկալ ծայրը Չէմարիտ հայրենասիրութէ
„ շարժած չնորհակալութի ըրին Թագաւո-
„ րին աս նոր սահմանադրութիը համար՝
„ որ մէկ հատիկ յարմար է լեհին ընդհա-
„ նուր հանգստութիը և անկախութիը պա-

„ Հելու · աս առանձին ժողովրդուն միա-
„ բան հաւանութիւը երդումը նոր բարե-
„ կարգութիւը պահելու համար զարմացուց
„ ամէնն եւրոպա , ոչնչացուց ան զրպար-
„ տուիը որ կըսէ , լեհաստան մէկ երկրա-
„ ռակութի ( ֆեդերա ) մը կայ · և թէ նոր
„ սահմանադրութի չինելով լեհին միաքը
„ հաւասարութիը վերցընել է , որ հաստա-
„ բակապետութե կառավարութիը կըբե-
„ րէր : Ո՞ր առջի կառավարութի փոխե-
„ լուն միաքը ան է որ խռովութիը վերցը-
„ նենք · աս բանս համաձայն է ամէնն կա-
„ նոնաց իրաւագիտութե ամէնն տեղ ամ-
„ էն ատեն · ամէնն ժողովուրդ որ անկախ
„ է՝ շատոր կամ քիչոր՝ ուրի իշխանուի
„ իր կառավարուիը փոխելու՝ աղէկցընե-
„ լու համար · մենք երկպառակութիւն մը
„ չունինք մէջերնիս , հապա ընդդիմութի
„ ունինք անանկ մէկ երրորդի մը՝ որ կու-
„ զէ մեր իրաւունքը ջնասել · նոր կառա-
„ վարութի մը խօթել տարբեր մեր ըրա-
„ ծէն : Ո՞րոր օրինակը կուտայ գերմանա-
„ կան կայսերութիը որ զանազան ազատ
„ անկախ իշխաններէ են մէկ տեղ ժողվը-
„ ված մէկ տեղ խօսք դրած · երբոր մէկը
„ կամ ներսէն կամ դուրսէն իրենց սահ-
„ մանադրութիը խռովելու ըլլայ՝ շուտ մը
„ կրպաշտպանեն իրենց անդամներուն ի-
„ րաւունքը · բայց լեհին հասարակապե-
„ տութիը մէկ քաղաքական մարմին մը ըլ-
„ լալով չիկրնար գերմանիայի պէս ըլլալ ,
„ հապա ինչպէս որ ըրինք անանկ կրլլայ :

„ Ա՝եր չարախօսները գէշի տանելով ըրած-
„ նիս միաբակալ կըսեպէն հայրենեաց ու
„ դրացի տերութեց . ամմէն տեղ կըհռչա-
„ կէն որ՝ լեհին դէսպանը տաճկին խրկը-
„ ւած՝ դաշնագրութիւն մը ընելու համար
„ էր մարտավար մոսկովին դէմ . բայց աս
„ դէսպանը ան մտքով էր խրկըւած ինչ
„ մտքով որ կըխրկենք ամմէն տերութեց
„ նաև մոսկովին , որ էր խաղաղութիւը օգու-
„ տը մեր ներքին կառավարութիւն . աս էր
„ ապսպրածնիս բօղոքել կոմսին որ դէս-
„ պան խրկեցինք . Թէպէտ և անիկայ ին-
„ քիմն ուրիշ կերպ բաներ ըրավ մեր ը-
„ սածներին դուրս . տաճկին լեհին հետ
„ իր բարեկամութիը նորոգելին եաև՝ չա-
„ նայ որ լեհնալ հակառակ հանէ մոսկո-
„ վին ու նեմցիին դէմ որոնց հետ կըճեճ
„ կըվէր . աս բանս իմանալով լեհին հա-
„ սարակապետութիէ իշխանները , մտածե-
„ ցին իրենց առուտուրին դիւրութիէ ( խո-
„ յտութիէ ) գտնալու համար մէկէն չիմեր-
„ ժել . նոր պատուէրքներ խրկելով բօղոք-
„ քի դէսպանին՝ լեհին օգուտը աւելի ա-
„ պահովցուցին առանց վտանգելու դրացի
„ տերութեց օգուտը . ասանկով մեր դէս-
„ պանը թէ որ կենար ան խօսքերուն վրայ
„ ինչ որ մենք գրեցինք իրեն , մոսկովի թա-
„ գուհին գովելը պիտոր մանաւանդ չէ թէ

„ գանկտեր :

„ Ա՝ոսկովին զօրքը ու համբարները լեհին
„ դուրս հանելու համար չափին աւելի կը-
„ գանկափ պուլկաքովին թուղթը . բայց մենք

» ան առևնը ամէնէն տեղէն կըլսեկինք որ յու-
» նադաւաննները կըպատրաստըվին ապըս-
» տամբութի՛ մը հանելու. և իրաւ քանի
» մը յունադաւան աքեղայներ մոսկովից-
» րուն հետ միանալով պիտոր հանէին, ա-
» սանկալ ընել կըմտածէին տեղ տեղ՝ օ-
» րէօրալ կըշատնային. ասկից մեզի իրա-
» ւացի վախ մը կուգար ջըլլայ որ ասոնք
» օր մը միանան մոսկովից զօրացը հետ որ
» իրենց համբարնէրուն համար լեհի մէջ
» կեցած են մեկ դաւանանքէ ըլլալով. ա-
» նոր համար հարկ եղաւ մոսկովին զօրք-
» նալ իրենց համբարնէրնալ լեհաստանէն
» դուրս հանել: Մոսկովի Թագուհին աղեկ
» հասկըցածին պէս լեհի ժողովքին ըրած-
» նէրը՝ կիմանայ որ վախէն ալեկոծուԹէն
» ըրավ չէ Թէ չարուէն. աս պատճառով
» լեհը բռնեց պատժեց ապստամբուԹիւն
» մտածողները, իրենցալ գլխաւորները.
» աս բանէրս հալածանք կրկոչէ պուլկա-
» քովին ԹուղԹը, խոստովանցընելու հա-
» մարալ տանջանք տըվին կրսէ որ է սուտ.
» որովհետև տանջանք տալը շատ տարվը-
» նէ վեր խափանված է լեհին մէջ: Ալ
» քին արհիմանարիտը պէտք էր քանտը
» գնել, որովհետև ինչ կարծիք ապստամ-
» բուԹե որ վրան կար՝ ամէնննալ կըստու-
» գէին պարագայները. իրեն լեզուանի ըլ-
» լալը՝ յունադաւաննէրուն մէջ մեծ վար-
» կու՛մ ունենալը՝ ԹղԹէրուն վրան գտնը-
» վիլը եւ: Ալ արշով յունաց մատուռը մըտ-
» նալը՝ քահանան բռնելը անանկ մեծ բան

„ մը չէ . մեկ հասարակ հազարապետ մը
„ քանիմընալ զինուոր խաբվելով սխալե-
„ լով ըրերեն որոնց պատիժը տրվեցաւ :
„ Այս է ձշմարտութիւնը ինչպէս որ պատմե-
„ ցինք . Թագուհիին արդարութիւնը խելա-
„ ցիութիւնը կըհասկընայ թէ ինչ գանկատ
„ որ ըրին չար սրտէ են առաջ եկած . լե-
„ հին ազգը կըյուսայ որ՝ ասոր վրայ աւե-
„ լի լոյս առնէ մեծանուն Թագուհիին՝ ո-
„ րուն վրայ արժանապէս մեծ վարկում
„ ունի ամմէն եւրոպա . բայց թէ որ չա-
„ րաճանչրուն աւելի լսելով լեհին օրի-
„ նաւոր տերութիւը վտանգի մէջ կրնայ մնա-
„ սելու՝ լեհին ազգնալ կըհարկադրի զին-
„ քը պաշտպանելու :

Լեհին պարբառութիւնը , պրուշին օգնութիւն խընդրելը , անոր պարտականը :

1792 :

Ասանկ Թուղթ հանելով լեհերը հրամանալ հանեցին զօրքը շատցընելու ինչվան 100 հազար , ըսելարօսելիութիւը ծախու հանեցին ըստակ գտնալու համար . Թագաւորին եկամտաւը՝ կնեզնայի նախագահ եպիսկոպոսին և ուրիշ եպիսկոպոսներուն եկամտները քիչցուցին , Թէպետև հռոմայի նուիրակը սալուծցօ անուն շատ դէմ կըկենար աս բանիս համար . ըրախեի Թիւթինի կնքըված Թղթերու և հրեից գրքերուն վրայ եղած տուրքերը շատցուցին .

ամէնէն գաւառներուն հրաման խրկեցին պաշար տալու, նաև մարդ անասուն որ աշխատին, Թօփեր տանին. անանկ կերևնար որ լեռը 120 տարիի չափ Թմրած կենալէն ետև մկկէն ալ Թնցաւ իր առջի ուժը առնելու. իրեք օրէն ետև ժողովը վճիռը նալ հանեց Հասարակաց պաշտպանութեան անուն. ով որ կարողութէն ունի՝ զէնք առնի իրենց ազատութիւնը ու նոր սահմանադրութիւնը պահելու համար, չէ Թէ ուրիշ տերութեց ինաս մը տալու համար. մհ սպառնացաւ ով որ իրեն Թղթին դէմ Թուղթ հանէ. ռէժէվսքիին ու բօդօյքիին տունէրը Թալեց, որ երկուքնալ մեծ իշխան էին բայց յարեալ էին սահմանադրութէ ու մնալովին. միայն Թէ ինչ զօրք որ պատրաստեց լեռը քիչվոր էին դէմ դնելու մոսկովի տերութիւնը որ 270 հազար զօրք կըհաներ։ Ինկ տերութիւնալ չուզեց օգնելու աս խախուտ հասարակապետութիւնը. նեմցէն օգնութէն ուզեց լեռը, բայց նեմցէին գլուխը ան ատենը կրակ կըվառեր Ֆրանսայի հետ ծեծկըվելու. Թող որ մոսկովին հետ դաշնակցեալ ըլլալով չեր կրնար մոսկովին դէմ դնել Թէև ուզենար լեռը պաշտպանելու. անոր համար լեռին ժողովը յոյսը աւելի պրուշին վրայ դնելով անկէց օգնութիւն խնդրեց, ստիպելով յիշեցրնելով ինչպէս անդառնալի խօսք տուիերեր լեռերուն ամէնէն կերպով օգնելու՝ Թէ որ մէկը դուրսէն լեռին վրայ ելլալու ըլլայ. ըսդանիա լավոս լեռին Թագաւորնալ յատուկ Թուղթ

դրեց պրուշին օգնութիւն խնդրելով. յիշեցընելով գործքով ցրցընել ան գաշնագրութիւնը որ ըներկին մէջերնին 1790 (1): Այայ պրուշի մէջ առաջ ուրիշ վէպիր կընստեր պարտն հերցպերկ ըսված, որ 1746ին սկըսեալ է. ֆեատերիքոսի Թագաւորին ներքին խորհրդականը ըլլալով միշտ հետու կըպահ էր պրուշը նեմցէկէն ու մոսկովէն. հիմա տաճկին հաշտութիւնը ըլլալէն ետև պրուշին Թագաւորը է. կուլիեվմոս անանկ մը կապվեցաւ մոսկովին հետ՝ որ իրեն մեծ շահ սեպեց մոսկովին մտիկնալը. հերցպերկը վերադարձնել հանեց խիստ ծերացած ըլլալուն համար, իրեն եկամուտը պատիւը վրան Թողլով. միտքնալ փոխեց լեհը պաշտպանելուն տեղը ինքնալ միաբանեցաւ մոսկովին ու նեմցեի հետ նորէն բաժնելու լեհաստան իրենց մէջը: Այսոր վրայ բիւնից եղած խօսակցութիւնէ մէջ ամէն քան շտկերէին. ան առենվան ֆրանսայի մէջի եղած խառվուռթիւնալ Թող չէր իսար ուրիշ տերութեց աս բաժանման դէմ կենալու. անոր համար պրուշին Թագաւորը անանկ ցրցուց որ՝ չկրնար Թէ ինքը դրդած ըլլայ լեհերը անկախ ըլլալու համար. կամ Թէ իրեն վէպիրը կ'ուզ կումը յայտնի հաւանուէն տրված ըլլայ լեհին սահմանադրութեանը վրայ որ ըրին 1791. այլ ինքը նախատես կըլլայ որ

(1) Թալէհիմ ալը, հէր քիմէ եարիմ տէսէմ, ալէտար օլուր,
պու ֆիկիա տիւնեաէ պիր եարը սաոլդ պու-
լունմազ օլուր:

լեհին ըրած նորութիւներէն դէշ հետեւու-
թիւներ պիտոր հետեւին, անոր համար ա-
ղէկը ան է կըսեր որ մոսկովին կամացը հե-
տեւիք։ Ա՛ս խօսքերս որովհետեւ աղէկ մը
կըբացատրվին պրուշի Թագաւորին գրած
Թղթին մէջ որ գրեց պատասխանելով լե-
հի Թագաւորին՝ համառօտելով մը հոս բե-
րինք։

" Լիթուանիայի մեծ մառէշալը բօդօյքի
" կոմսը մայիսի 31 գրած Թուղթերնիդ տը-
" վավ ինծի. խիստ կըցաւիմ որ լեհին հա-
" սարակապետութիւը հիմակվան նեղութեան մէջ
" կըգտնըվի, բայց համարձակ կըխոստո-
" վանիմ ինչ որ հանդիպեցան ադ տեղը
" մէկ տարվընէ վեր՝ յայտնի կըցըցընէր աս
" բանս. պէտք էր որ դուք նախատես ըլ-
" լայիք. կըսիշէք որ ես շատ հեղ իմ դէս-
" պանիս լուքքէզինի մառքէզին յանձնե-
" ցի զուրցել Թէ ձեզի և Թէ ուրիշ կառա-
" վարչաց իմ գիտցածս աս բանիս վրայօք։
" Հիմա որ եւրոպային ընդհանուր հան-
" դարտութիւը ինծի ատեն տըվավ յայտնի
" զուրցելու, մոսկովի Թագուհինալ ձեր
" ըրած նոր սահմանադրութեը դէմ գիր հա-
" նեց, յայտնի կըսեմ որ իմ մտածմունքս
" և իմ դէսպաններուս բերանը միշտ միա-
" կերպ են եղած. ձեր նոր սահմանադրութիը
" որ ըրիք իբր ինծի քամահրանք և առանց
" ինծի հարցընելու՝ ոչ երբէք իմ մտքէս
" անցերէ անիկայ ջատագովելու. մանա-
" ւանդ Թէ ասոր դէմ առաջուցմէ կըսէի
" Թէ սպառնալեաց կերպերը ու ծեծի

„ պատրաստուիը որ իժիր ընելու հետ էր
„ ձեր լեհի ժողովը՝ մոկովի թագուհիին
„ դժարը բերել պիտոր տայ, լեհին վրայ
„ թափել պիտոր տայ ան չարիքը ուսկից
„ որ կրվախնայիք: Վորձը հաստատել տը-
„ վալ աս իմ խօսքս. ըղըրդ է որ մոկո-
„ վը անանկ էր հակառակը՝ թէ որ լեհը
„ նոր կերպ կառավարութիւն չիխօթեր, ա-
„ նիկայ պաշտպանելու չիպատրաստվէր:
„ Հիմա գիտէք դուք որ՝ իմ ըրած գաշ-
„ նագրութիս ետև բաները բոլորովին փոխ-
„ ված ըլլալով լեհին սահմանադրութիւնալ
„ որ 1791 մայիսի 3 ըրինք՝ իմ դաշնադ-
„ րութիս ետև ըլլալով՝ ես չեմ պարտաւո-
„ րիր աս բաներուս մէջ մտնալ. չեմ կրնար
„ ձեր յոյսը լինցընել թէ որ լեհին տաքցած
„ հայրենասէրները իրենց մտքին վրայ կե-
„ ցած ըլլան: Այայց թէ որ ետ կենան՝
„ պատրաստ եմ մոկովի թագուհին ձեզի
„ հետ համաձայնեցընել. նեմցիին հետալ
„ խօրաթել հաշտեցընելու լեհին խաղա-
„ ղութիը գտնալու համար „:

Պէռլին 1792. յունիսի 8:

Պարկովէցեան դաբանութիը, Վրօվէոսի ղօրա-
պետը.

1792:

Կարդալով պրուշին առջի խոստմունքնե-
րը որ հաստատուն կերպերով խօսք տրված
էր լեհին, հիմաալ ասանկ քերելը իր վրայ-

էն, հասկըցան լեհերը իրենց միամտութիը, որ պրուշին խօսքին նայելով գոռոզնալ սկըսան մոսկովին վրայ. չիմանալին որ ամէն ատեն խօսք տալը շահին հետ մկ տեղ կըպտըտի. բայց պրուշին փոխվելուն մեծ պատճառնալ եղավ ֆրանսային խառնուրթիը, որուն դէմ պէտք էր իրեն պատերազմիլ. ան միջոցին մէջ շատ անխելքութիւն ըրած կըլլար մոսկովին հետաւ ծեծկըվիլ լեհին համար. գիտէրալ որ լեհին աղգը ոչ զօրք ուներ և ոչ ըստակ. ըսդանիսլավոս Թագաւորնալ սուր չվերցընէր պիտոր մոսկովին դէմ որուն ձեռքով Թագաւոր էր եղած լեհին վրայ, Թող տուր տեղին հեռաւորութիը: Այսոնք մտածելով պրուշը Թողուց լեհի իշխաններուն բազմութիը, ընտրեց հետևիլ ան լեհի իշխաններուն՝ որ Թէպէտ քիչվոր էին բայց երևելի, էին ուզղը աս նորութիները, այլ անանկ ինալ ինչպէս որ որոշվեցաւ 1775:

Այն բանիս համարալ իրենք իրենց մէջը մայիսի 14 միաբանութի մը ըրին նոր սահմանադրութիը դէմ դարկօվից տեղը, աս նոր համար ըսվեցաւ Կոնֆէտերասիան վաբսօ, որոնց գլխաւորն էր Վաւեշալ ռեժվսքի կոմսը, պրանիքի, ու բօդօցքի կոմսերը: Վոսկովին 80 հազար զօրքը որ ծեծը դադրած ըլլալով պուճախ Թաթարին ետ կուգային՝ աս առիննիերը լեհաստան մնան վըշնիա ու բօտոլիա գաւառները առնելու, որոնք բերդ մը չունէին դէմ դնելու. 20 հազարալ քիօվիային դաշտը

մեռան. 30 հազարաչափ լեռնուանիա սկսան երթալ. ասոնց հետ միացաւ բօդօյքի լեհ զօրապետը 2 հազար զազախով 30 թօփով որ իրեն ազգը երթայ զարնէ։ Այս լսածին պէս լեհին ժողովը իր ամէնն զօրաց վրայ զօրագլուխ դրաւ յովսէփ բօնիատօվսքի թագաւորին ազգականը, լեհին զօրքը աս դիս ան դին կըզարնըվէին մոսկովի զօրայը հետ աւելի ուքռանիայի ու լեռնուանիայի մէջ, շատ մարդ կըջարդէին մոսկովին՝ որոնց առաջ գալը շատ մարդ կորսընցընելով կըլլար. ասանկ մնար ձեծէը շատ երին լեհերը, ամբողջ յունիս ամսուան մէջ։ Այդ յունիսի 17 պօրուզքովին ջուրին քովը մեծ կռիւ մը երին 7 ժամ ձեծ կըվերլով. լեհերը յաղթօղ ելան մոսկովին վրայ. և որովհետև լեհերէնալ շատ մարդ կօրտրըվեցան՝ հարկ եղաւ իրենց ետ քաշվիլ. ան ատենը մոսկովներուն նոր օգնութիւն գալով նորէն առաջ եկան վիլնա մտան, որով վարշավիա երթալու ճամբայ բացվեցաւ իրենց։

Այս ատենները երևան ելաւ Թադէոս Կօջիւսքի լեհ զօրապետը որ շատ անուն հանեց. ասիկայ պզտիկուց սէր մեծ ցերցուցերը վինարուեստի վրայ. մկ մենծի մը ազջկան հետ կարգըվիլ ուզելով՝ երբոր չհյաջողեցաւ, դժվարելէն փախաւ գնաց ինչվան ամերիկայ, հոն ծառայեց կաթէս և ուաշինկթըն զօրապետներուն՝ որոնք վերի ինկիլիզներուն դէմ կըկռուէին, հոն շատ քաջութիւն ցըցուց շատ անուն հանեց.

հիմա լեհաստան գարձաւ եկաւ քաղաքէն կառուցաւ մոսկովին դէմ, թէպէտ և քիչ զօրք ունէր, թէպէտև լեհցոց մէջնալ տա-բաձայնութիւն ու մատնիչ ունէր, որոնք իւրեն ընելիքը կերթային մոսկովին կըմատնէին։ Ա՛ս մարդս կարճահասակ դէմքնալ հասարակ՝ բայց աչքերը կրակի պէս վառ-վելով կըցցցնէր իր կրակոտ տաքարիւն բնութիւնը, ամենևին վախնալ չէր տեր յոր-նիլ չէր տեր, ձախորդութե ու վատանգի մէջ չէր չփոթէր, յաղթութե մէջնալ չէր բքրէր չէր գոռոզնար, սրտցաւ էր ուրիշներուն վրայ, արդարադատ նաև քաղաքական կառավարելու մէջ, մեծ մեծ բանելու մտա-ծող բայց միանգամայն գործքովալ կատա-ղող, ինքը գործքով ընելու ատենը չուստ շարժող արի ըլլալով՝ ամէնն քովինններնալ արի կտրուկ կըներ, անուշութիւն մը ամէն-նուն սիրտը իրեն կըքաշէր, իր ըսածներըը մտիկ դնել կուտար, անոր համար ամէնն մարդ մենծ ու պզտիկ՝ գեղացի կամ վա-նուոր կըսիրէին գինքը, պատճառն որ մէկ գաղտնի արուեստ մը ուներ ավերվածք սիր-տերը շահելու, իրարու դէմ եղողները հաշտեցընելու, տարաձայնութիւնները վեր-ցընելու։ Ա՛ս քօղիւսքին հիմա պօկ գետին վրայ 5 հազարով դէմ եկավ 14 հազար մոսկովներուն որոնք գետը կուգային անցը-նիլ, շատ քաղաքէն ըրաւ հոն, բայց մոս-կովները վարի գիներն անցան յուլիսի 5, երկու ուրիշ մոսկովի գունդալ իր վրայ ե-կան մէջերնին պիտոր առնէին, անկից հարկ

եղավ քօջնւսքիին քաչվիլը բայց Ճամիայ Թո-
ղօվ Մսկովնիկրուն վարչօվ երԹալօւ ։
Տեսնալով լեհին ժողովը որ Մսկովվին զօր-
քը վարշավկայի կրմօտիկնան , սիրտ տա-
լու համար սուտ ձայն մը հանեց Թէ լեհին
Թագաւորը անձամբ պիտոր երԹայ զօրայ
վրայ գլօխ ըլլայ ։ բայց լեհին զօրքին շա-
տը տեսնալով որ վՃարքնին չէն կրնար առ-
նել կրձգէին կրփախչէին ։ լեհին Թագա-
ւորնալ կամ հասկընալով որ Մսկովվին դէմ
չիկրնան պիտոր դնել , կամ իրեն անարի
քնուԹիը համար , և աւելի Մսկովվին հետ
միշտ միաբան ըլլալուն համար երկու հեղ
երկան խօսելէն ետև իր խորհրդականնե-
րուն հետ՝ Մսկովվի խօսքին մտիկ դնելով
մէկ եղավ դարկօվիցեան միաբանուԹիւնը
ընդունեց ։ և որովհետև լեհին ժողովը ազ-
գին դիացին Թագաւորին բայարձակ իշ-
խանուԹի տըվերեր՝ ինչ որ ազգիկ Ճանչնայ՝
ընէ ՚ի գործ դնէ , աս իշխանուԹիը բանե-
ցընելով յայտնի ԹղԹով ոչնչացուց նոր
սահմանադրուիը՝ որ լեհին ժողովը ըրեր
1791 ։ ասանկ խօսելով ան ԹղԹին մէջ ։
« Իմ ազգս որ զիս պարզ քաղքցիուԹէ
» վեր հանելով Թախտը նստեցուց՝ կուզէ
» անկախուԹի ազատուԹի հասարակապե-
» տուԹէ , որպէս զի ունենայ աղէկ կառա-
» վարուԹիւն մը կենցաղակիրԹ ու քաղա-
» քական ։ եսալ անոր մտքին հետ միանա-
» լով կրջանամ հասարակաց բարիքը ու
» հանգստուԹիը առաջ տանելու , ազգին
» փառքը և իմ պատիւս պահելու , բայց ո-

„ մանց նորութե՛ սէրը թող չիտվին իմ
„ մաքինս ՚ի գործ դնել ։ Ի՛նոր փորձը տե-
„ սաք լեհին ժողովքին վրայ որ նոր վեր-
„ ջացաւ , մէջինները օրէնսդիր ըլլալով
„ խաբվեցան անանկ նորասիրութե՛ մը՝ որ
„ ժողովուրդին հանգստուիը կալներ , իմ
„ կամացս դէմ համարձակեցան օրինաց մա-
„ տեանը փոխել՝ որ հասարակապետութե՛
„ առջի տարիներէն սկսեալ իրեն հիմն էր
„ եղած . դրին մէկ ցուցանքաւոր կառավա-
„ րութե՛ մը միապետական և միանդամայն
„ ռամկապետական , նոյն ժողովնալ տեսաւ
„ որ իր դրած օրէնքներուն շատվորութիը
„ շինի շիտակ իրարու դէմ կուգան , մանա-
„ ւանդ ան օրէնքին դէմ որ լեհաստանին
„ յաջողութիը պիտոր ապահովցընէր ։ Ասոյց
„ հիմա ամէն հարազատ լեհ եղօղը հաս-
„ կընալով անոնց սխալիլը՝ եսալ ըլլալով
„ թագաւոր և գլուխ՝ և իբրև հայրենա-
„ սէր քաղքցի՝ կրծանուցանեմ որ մեր
„ հին հասարակապետութե՛ կառավարութիը
„ կրնայ լեհաստանին աղեկութիը քշել տալ .
„ և իրաւի՝ երբոր մէկ ազգ մը հին կառա-
„ վարութե՛ պակսութիները շտկելուն տե-
„ ղը՝ կընայի անիկայ բոլորովին կործանել՝
„ ծայրագոյն ջնաս կրբերէ անոր ։ Ի՛ս ձեշ
„ մարիտ սկիզբը դնելով ես յայտնապէս
„ կըհրաժարիմ ան միաբանութե՛ որ 1778
„ վարշավիա եղավ , որուն գլխաւորն էր
„ ըսդանիսլավոս մալախօվսքի . աս ժողովը
„ նոր փոփոխութե՛ ընելու համար ջնասա-
„ կար երևցաւ դրացի տէրութիներուն .

„ չորս տարիէն աւելի քշեց որ հասարակա-
„ պետութեան սովորութեան դէմ բան է նաև
„ ամէն օրինաց դէմ, անոր տեղը կըմիա-
„ նամ դարկովիչեան միաբանութե հետ որ
„ եղաւ աս տարի ըսդանիսլաւոս Ֆելիքս
„ բօդօքիէն յորդորելովը։ Ու միաբանու-
„ թիս որուն հետ հանդիսապէս մէկ եղաւ
„ լիթուանիայի միաբանութիը կըճանչնամ
„ միայն օրինաւոր, կերդվընամ առաջ
„ տանելու իրեն ամէն մտածածը որովհե-
„ տև հասարակաց բարիքն կընայի. ասոր
„ համարալ աւելի կըյօժարիմ միանալու՝
„ ըստ որում իրեն մտածածը համաձայն է
„ արդար մտածման մօսկովի թագուհիին՝
„ որ լեհը իրեն պաշտպանութե տակը առ-
„ նելով առջի խաղաղութիը պիտոր հաստա-
„ տե, իրաւունքը պաշտպանէ։ Իմ խոստ-
„ մունքս աւելի ապահովցնելու կըխընդ-
„ րեմ որ աս իմ դրուածս մատենի մէջ ան-
„ ցընվի երկու դիւանի մէջ լեհաստանին ու
„ լիթուանիային, նաև ամէն երկրի դա-
„ տաստանարանութեանց մէջ„։

Պոհովը լեհերուն վրայ հիշելէ, պրուշը պոհե-
ման կառնէ.

1792–1793։

Հիմա մէկ ազգի մը մէջ կարծիքները ա-
սանկ կերպ կերպ բաժնըվելու ըլլան՝ նայե
որ ինչ կըլլայ ան տերութիը. խաղաղութե
տեղը նոր նոր երկպառակութիներ (ֆըռ-

խանէը ) ելան , կծու խօսքերով գրուած֊
նէը ելան Թագաւորին դէմ ու մոսկովին
դէմ . անոր համար մոսկովին զօրքը դուրս
ելլալուն տեղը՝ աւելի մօտիկցան վարշա֊
վիայի . ժողովին մէջինները որ ինայուն ժո֊
ղով կըսվէր մէյ մէկ դի ցրուեցան . ժողո֊
վին երկու գլխաւորները որ մտածել կըս֊
վին ու հաղարաւոր աշնուականք բողոքում
նէը հանեցին Թագաւորին դէմ , ըրած զի֊
նադուլին ( միաթարէքէին ) դէմ . ոմանք
իրենց հեռաւոր բերդերը քաշվեցան , ո֊
մանք իրենց ապրանքով լեհաստանէն դուրս
ելան . լեհին զօրքնալ ոմանք աս դիս ան
դին բաժնըվեցան , ոմանքալ մոսկովի զօ֊
բայը հետ միացան , անոնց տեղը մոսկովին
զօրքը պահպանել սկսան լեհին ամէն քա֊
ղաքը ։

Յոհանկով դարկօվիցեան միաբանութիւնը
ամէն մը ետև եղավ ընդհանուր միաբա֊
նութիւն լեհի ու լիթուանիայի , հին կառա֊
վարութիւնը նորոգվեցաւ . իրենց գլխաւոր
մտածելով ընտրեցին վերոյիշեալ ֆելիքս բօ֊
դօքին , որ մոսկովին խիստ յարեալ ըլլա֊
լով շատ յորդորեց կատարինէ Թագուհին
լեհին նորութիւնը դէմ ելլալու . կըսուսար
որ աս բանիս համար իրեն վարձ՝ զինքը
ընէ լեհի Թագաւոր բօնիատօվսքին մեռ֊
նելէն ետև ։ Յմէն մեծնէրուն որոնց շա֊
տը սաքսոնիա ու նեմցիէն երկիրը փախե֊
րէին՝ իմաց տըվավ որ հինգ շաբթվան
մէջ լեհաստան դառնան , թէ չէ իրենց ստ֊
բանքը արքունիքը կառնէին . առջի ժողո֊

վին ըրածները ոչնչացուցին. ասանկալ ոչընչացուցին ամին դատաստանին ան վճիռները որ ժողովին խօսքովը ըրած էին. տըպագրութե ազատութիը խափանեցին որ հակառակութիը քննկցընելու պատճառ եր եղած գրգռօղ գրուածներով. ասանկալ արգելեցին դիտակները կամ կապզեցին. ամին գաւառներուն ասպարեցին պատուիրակներ պատրաստել մեկ մեծ ընդհանուր ժողովքի մը համար որ կառնիս քաղաքը պիտոր ընկին սեպտեմբերի մէջ. մեկ չըրին ընդդիմուելը որ կընկին քառքովին ու սանտօմինկն երկու իշխանները. ասոնք երկուքը կըմտածկին բաժնըվիլ նոր տերուն մը սահմանել քան թէ գլուխ խոնարհեցընել մոսկովին։

Ա՛ս ատեններս երևան ելավ նոր թէորիները որ մոսկովը լեհին առաջարկեց իբրև յաղթօղ և իբրև օրէնսդիր խօսեցավ։ ա. Լեհին բանակը վիսթօլա գետը անցածին պէս՝ աս դիս ան դին թողլ բաժնըվի։ բ. Ա՛ս բանէս առաջ թագաւորը ու բանակը երդմամբ թողլ հաստատ դարկավ վնցեան միաբանութեան հետ մեկ ըլլալը։ գ. Ա՛ր քաղաք որ լեհի զօրք կըպահպանէր՝ ասկից ետքը մոսկովին զօրքը պահէ։ դ. Ա՛մին լեհ նայի որ խաղաղ նստի ամին տեղ աւելի վարչօվ քաղաքը՝ ուր մոսկովին ձիաւոր ու ոտանաւոր զօրքը պահեն։ ե. Ա՛հմանադրութիը շուտ մը՝ի գործ դնեն։ Ա՛սկից ետքը խափանեցին ամին դատաստանարան քաղաքական ու քրէական որ

1791 սահմանված էին, ասոնց տեղը նորին դրին առջինները. վերջապես վերջի ժողովքին ամէնն ալ ըրած բանը վերուցին. և որովհետև կասկած ունէին որ Ֆրանսոյին դեսպանը տէքօռշ անուն շատ ձեռք ունէր ան նորուներս ընելու՝ ասանկ զուրցեցին իրեն թէ լեհին հասարակապետութիւնը չի՛ Ճանչնալով հիմակու ըրած նոր կարգադրութիւնները՝ և դուն քու թագաւորիդ թուղթը չունենալով՝ չենք Ճանչնար քեզ դեսպանի տեղ. անոր համար իբրև մէկ հասարակ մարդու մը քեզի թուղթ (թէզքիրէ) կուտանք, որչափ կարելի է շուտով ելլաս լեհաստանէն դուրս երթաս. դեսպանը շատ աղաղակ վերուց, բայց վերջապէս հարկ եղավ ելլալ երթալու։

Յանկով ամէնն բան մոսկովին իշխանութեան տակը անցաւ, և ան լեհերուն իշխանութեան տակը՝ որ մոսկովի պաշտպանութեան ներքև էին։ Պրուշին զօրքը 1792 տարիին ետքերը նորէն լեհ մտան, նեմցիին զօրքնալ դեպ՚ի քաւաքով մօտիկցան. մոսկովին զօրքը որ օրէօր շատնալու հետ էր՝ լեհին զօրայ վրայէն ղէնքերնին հանեցին. աս բաներէս գարկօվիցեան միաբանութիւնը վախնալով չըլլայ թէ լեհաստան նորէն բաժնեն, պրուշինն ընկան աղաչելով. պրուշնալ անոնք կապհովցըներ՝ բայց ինքնալ 1793 յունվ. 24 լեհ մտնալով, 36 հազար զօրք կըխրկէր կնեզնան՝ քօշնանիան՝ քալիսքնալ կառնէր անանկ գաղտուկ որ զօրքը մտնալէն ետև իմացան. ան առենը լեհերը երկու հոգի

Հանդիսական պատուիրակ Խրկեցին կատա-
րինէ Մոսկովի Թագուհիին, խոնարհութիւ-
ազաչելով որ լեհին ամբողջ ազգը նորէն իր
պաշտպանութիւն տակը առնէ, անցած բա-
ները մոռնայ, իրեն արդար բարկութիւը ին-
ջեցնէ։ Ինչ ըսնազանութիւն, ինչ ներհակ
բերան մի և նոյն ազգին մէջ. բայց պա-
տուիրակները անանկ խաբէական պատաս-
խան մը առին՝ որ լեհին դարկօվիցեան միա-
բանութիւը Մոսկովին հետ դաշնակցեալ տե-
րութիւն մը սեպեց զինքը. Մոսկովը խոստա-
նալով նորէն 50 հազար զօրք Խրկել լեհաս-
տան. ասկէց լեհերը սիրտ առնելով սկսան
դէմ կենալ պրուշի զօրքին, տեսնալով որ
չեն կրնար՝ Ինկիլտրօմ Մոսկովի զօրապե-
տէն օգնութի խնդրեցին. անիկայ պատաս-
խանեց որ առանց Հրամանի Թագուհիին
չեմ կրնար օգնելու. մանաւանդ յորդորեց
որ լեհը թէ որ չուզեր մեծ փորձանք մը
տեսնալու՝ իր զօրքը քաղաքներէն ու սահ-
մաններէն Թող ետ քաշէ։ Ի միջոցիս մէջ
պրուշը տանձքա գնաց Հրամեց 24 ժամու
մէջ անձնատուր ըլլալու. տանձքացիք տես-
նալով որ Ձար չունին դէմ դնելու՝ ինչ
Թէութիւն որ դրաւ ընդունեցան. մաս-
կովն որ առաջ խիստ դէմ էր Թող չէր
իատր պրուշին Թօռն ու տանձքան առնե-
լու, հիմա իրեն շահին համար Թող տը-
ւալ։ Ի երկու քաղաքնալ երևելի են.
Թօռն խիստ Հարուստ ու շահաստան քա-
ղաք է պալդիկ ծովին վրայ, իսկ տանձքա
հնուցմէ վեր ազատ քաղաք. ասոնց առնը-

վիլը օրինակ եղավ նաև ուրիշ քաղքենի-
րուն համար։

## Լեհին երկրորդ անգամ բաժնվելը։

## 1793։

Պարկավիցեան միաբանութիւնը որ զինքը ապահով դրեր՝ յաղթանակող կրկարծեր, տեսնալով տանձքային աւերվիլը չորս դին ջուր կտրեցաւ, չէր գիտեր որ դրացի տէրութիւնները մովընին դրերէին լեհերը բոլորովին ձգմելու։ լեհին իշխանները սկսան չարաչար նախատել պրուշը։ երևան հանելով ամբաստանելով որ տաձկին ծեծին առենը պրուշը եղավ պատճառ ու գերգռիչ ինչ նորութիւններ որ ըրավ լեհին ժողովը։ բայց ինչ որ խօսեցան՝ չկրցան պրուշին զօրքը լեհէն դուրս հանել։ Հօգօյքի մառեշալը իբր թե բան մը պաշարել կարծելով անձամբ գնաց բեդրօպուրկ մոսկվի թագուհիին պաշտպանութիւնը խնդրելու։ թագուհինաւ շատ պատուով ընդունելէն ետև անիկայ յայտնի բացաւ բանը, պզտոն ցուպովին բերնովը զուրցեց։ " Կուրդ
" պային վտանգաւոր պարագայները կը-
" պահանջեն որ իմ դաշնակից տէրութեց
" խօսքը կատարեմ. մոսկովի տէրութեան
" ապահովութիւնաւ կրպահանջէ որ լեհաս-
" տան նորէն բաժնըվելով տկար մնայ, որ-
" պէս զի իրենց հայրենեաց դէմ եղող լե-
" հերը ատեն չունենան ասկից ետքը քա-

„ գաբական կառավարութ մէջ խօթել մոս-
„ կովը, ինչպես որ եղավ ինչվան հիմա գրա-
„ ցի տէրութեց խաղաղութիւնը վտանգի
„ մէջ ձգելով „ ։

Այսանկ շահեչիտակ պատասխան տալէն ե-
տև հրաման հանեց մոսկովը լեհին գօրաց
վրայ որ քիչվըր էին մնացեր, կամ իրենց
տուներըը երթալ արտերնին քանիլ, կամ
մոսկովի գօրք գրվիլ. անոնքալ ուրը աս հրա-
մանս կատարեց, ուրնալ նեմչեի գօրք գըր-
վեցաւ։ Վարկովիցի միաբանութեալ հրամ-
մեց մոսկովը որ մեկ ընդհանուր ժողով մը
ժողվեն կռօսնօ քաղաքը աս նոր բաժան-
մանը համար՝ իրենց կամքովը տան մոսկո-
վին ու պրուշին, ինչ տեղվանք որ լեհին
կառնեն անոնք. պարտաւորենալ զիրենք
ուրիշ տեղերալ նեմչեին տալու. աս բա-
նիս վճիռ տալու չսպասելով՝ ինկելսդռօմ
գօրագլուխը ապսպրեց նոր գիծ քաշելու
սահմաններըը որոշելու համար լեհաստանին
ու մոսկովին մէջ. սկսեալ պրուցա պզտիկ
քաղաքեն որ վիլնա բալադինոյին մէջն է
տուներ գետին վրայ. շատ հեռու չէ լիվո-
նիայի ու քուռլանտիայի սահմանեն ինչվան
Թուռլա կամ տնեսթեր գետը, և ինչվան
եօռկալիք որ քիչ մը հեռու է պլենտերեն.
աստվ վօլհնիայի ու բօտօլիայի կէսեն ա-
ւելի մոսկովին անցաւ, ասանկալ Ձերմակ
ռուսիայէն ամբողջ մնացածը, ու լիթուա-
նիայեն մեծ մասը։ Մոսկովը աս երկիրնե-
րըը առնելեն ետև հրաման հանեց որ մէջի
փախչողներըը 6 ամսվան մէջ ետ դառնան.

իրեն առաւել անոնց ապրանքը որ մոսկովին ուզած սահմանադրութիւնը դէմ դրեր էին. քամհրից ետրդին դուռը բանալ տալով մոսկովի զօրք խօթեց. մինչև եղող լեհ հազարապետներէն մինձերը 80 հոգի, պզտիկները 160 հոգի, 7 հազարաչափ զինուոր երդում հաւատարմութիւն ըրին մոսկովին: Վնկելս դուօմ զօրագլուխը իր զաղախ զօրքերը առնելով կուօտնօ եկաւ, յորդորեց լեհին ժողովը ձեռք դնելու երկու դաշնադրութեց որ առաջարկեց Թադուշիին անունովը: Լեհինը 5 թեռւէ ուներ մոսկովի ու լեհի մէջ բարեկամութիւն պահելու համար. կըպատուիրեր որ չփոխեն իրենց հին սահմանադրութիւնը որուն պաշտպանօղ եղած էր 1775. հռոմէական և յունադաւան հաւատքնալ կըպատուիրեր ազատաբար քանեցրնել: Իրկրորդը 15 թեռւթիւն ուներ իրար պաշտպանելու համար. մոսկովը 40 հազար զօրք կրխոստանար տալու՝ թէ որ մէկ օտար մը յանկարծ լեհին վրայ ելլալու ըլլայ. լեհնալ կրխոստանար դաշնադրութի մը չընել միկապվիլ ուրիշ տէրութե մը հետ առանց մոսկովին գիտնալու. մոսկովնալ կրխոստանար իր դիւցէն պաշտպանել լեհին ժողովքին ըրածները ինչ որ կրնէ հասարակաց աղէկութե համար. իշխաններուն ապահովութի կուտար վայելելու ան արտունուչները ան չնորհքները ինչ որ կըվայելէին 1788էն առաջ:

Այսոր հաստատութիը եղավ ապրիլի 15. իսկ փախչօղ լեհերը ամենևին հանգստու-

Թէ չիկրցան գտնալ գէշ կասկածներու հա-
մար որ ան ատենը կըպտըտէր. Ֆրանսա
փախած լեհերուն վրայ Ֆրանսիները կը-
կասկածէին լրտես (կէօզՀիւ) ըլլալու ու-
րիշ եւրոպայի իշխաններու դիացին՝ որ
խօսք դրկը միաբաներ էին Ֆրանսայի վրայ
վաղելու. նեմցեի ու իդալիայի մէջ փախչօղ
լեհերուն վրայ կրկասկածէին իբր Ֆրան-
սզի ապստամբութիւնը տարածօղ որ ան
ատենը ժաքօպէն կըսվէին: Ա՛ս կասկածէս
պրուշն ու մոսկովը յունիսի 25 Թուղթ հա-
նեցին աս խօսքերուս վրայօք. "Մոսկովի
" Թագուհին Թէ ինչ մտքով զօրք խօթեց
" լեհաստան՝ անցած տարի մայիսի 7 իր
" միտքը յայտնի ըրավ. պէտք էր որ լեհին
" ազգնալ իր երախտապիտութիւը հնազան-
" դութիը ցըցնէր, բայց եւրոպա տեսաւ
" ինչ կերպով ընդունեցան ան զօրքը. ո-
" րովհետև դարկօվեցան միաբանութէ
" խօսքերը առաջ տանելու համար հարկ
" եղավ ծեծկըվիլ, ապստամբներուն գըլ-
" խաւորները որ 1791 եւլան՝ ղինքը չիձգե-
" ցին ինչվան որ չհյաղթըվեցան չհցրուե-
" ցան: Ա՛րդոր ատենք յայտնի ընդդիմա-
" նալը վերջացուցին՝ սկսան ծածուկ բան
" խաւռնել որ աւելի վտանգաւոր էր, ան
" խաւովութէ ոգին որ միշտ ծաւալվելու վրայ
" է՝ երբոր ուրիշ տէրութէց մէջ չիկրցան
" ընդհանուր տարածել՝ մտան խաբելու ան
" ազգը որ միշտ հեշտ կրխաբվի. անանկով
" աս լեհին ժողովուրդնալ համախոհ եղավ
" ատելութէ ու թշնամութէ ընելու որ մա-

„ կովի դեմ գրգռեցին։ Ողողունք յիշե-
„ լու ուրիշ գեղ ունակութիւնները որ լեհ-
„ ցոց մեծ մասը ունին՝ յիշենք իրենց ըրած
„ տմարդութիւնը որ մոսկով զօրապետներուն
„ ըրած մարդկութեանը դեմ ըրին. կերպ
„ կերպ բաներով անոնք չարչըրկել, քա-
„ մահրել, ծաղր ընել, նաև խօսք դնել
„ իրենց մէջը որ մէկ օրվան մէջ ամէն մա-
„ կով զօրքը ջարդեն. ասկէց կրնայ իմաց-
„ վիլ անոնց բարեսրտութիւնը որ դարկովի-
„ ցեան միաբանութենէ մէջ անցան խաղա-
„ ղուէ ուղեցին։ Ոսկովի թագուհին 30
„ տարի սորված ըլլալով դեմ կենալ խռո-
„ վութենէ որ միշտ նորէնոր կըհաներ լեհը՝
„ հիմա կըմոռնար իր ամէն քաշածները՝
„ թէ որ աւելի վտանգաւոր բան մը չհա-
„ ներ լեհը. բայց լեհերը տեսնալով ֆրան-
„ սըզներուն կատաղութիւնը՝ անոնցմէ հեռու
„ կենալուն տեղը՝ գիտես թէ օրինակ ա-
„ րին անոնց հետևելու. անոր պէս կաշ-
„ խատին լեհի հասարակապետութենը մէջ
„ խօթել ան դժոխային վարդապետութիւը
„ աղանդը՝ որ ամէն կենցաղական քաղա-
„ քական ու եկեղեցական ընկերութիւը կը-
„ քակէ կավրէ. հիմակուցմէ լեհին գլխա-
„ ւոր քաղքին մէջ ու շատ գաւառներու
„ մէջ չար ժողովներ կընեն նման փարեզի
„ ժաքօպէններուն, չար վարդապետութի-
„ կըցանեն ամէնուն ականջը։ Այս կրակը
„ ամէն դրացի տերութեց վտանգաւոր ըլ-
„ լալով՝ արթընցուց զիրենք ասոր ձարը
„ դանալու արգելք դնելու որպէս զի ի-

„ բեռից մեջնալ չիծաւալի . անոր համար
„ մոսկուլի թագուհին և պրուշի թագաւո-
„ րը կայսեր հաւանութիւն ուրիշ ձար չիգը-
„ տան զիրենք ապահովցընելու՝ բայց ե-
„ թէ աւելի պզտիկցընելով լեհին հասա-
„ րակապետութիւնը , երրորդ աստիճանի տէ-
„ րութիւն մէջ բերելով , որպէս զի դրացի
„ տէրութիւնները կարենան հոգ տանիլ ա-
„ ռանց վնաս մը տալու լեհցոց հին ազա-
„ տութիւն . մէկ խեղացի կանոնաւոր կառա-
„ վարութիւն մը սահմանեն , չափաւոր ուժ
„ զօրք ունենան դէմ դնելու ամէնէն խռո-
„ վութիւն որ ամէնէն իժիր կաւիլէ լեհին ու
„ դրացի տէրութեց խաղաղութիւնը :
„ Ես մտքին վրայ միաբանելով մենք մոս-
„ կովի թագուհին ու պրուշը՝ հասկընալով
„ որ լեհը պիտոր ոչնչանար իրենց մէջն ե-
„ զած կարծիքներու տարբերուի ու գէշ
„ սկզբունքներ ունենալուն համար՝ ասկէց
„ աւելի աղէկ ձամփայ չիգտանք լեհին ոչըն-
„ չանալը խափանելու . ասոր համար լեհա-
„ տանին ինչ գաւառ ինչ տէրութիւն որ մօ-
„ տիկ է՝ ան գաւառները միր երկուքին
„ պիտոր առնենք շուտմընալ պիտոր տի-
„ րենք . որպէս զի պահենք զարհուրելի դի-
„ պուածներէն որ ան գէշ սկզբունքը կըր-
„ նան հանել : Ասոր հաստատուն որոշումը
„ աս բանիս վրայ ամէնն լեհի ազգին կը-
„ ծանուցանենք , որ ժողով ընեն իրենքալ
„ մեզի հետ բարեկամաբար գործակից ըլ-
„ լան աս օգտակար գործքս ընելու , որ
„ միայուն խաղաղութեամբ ապահովցընէ

„ պիտոր իրենց աշխարհը, հաստատուն ու
„ խաղաղ կառավարուի մը պիտոր բերէ։

Ա֊ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՆ ՂՓԸ, ԼԵՀԻՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈ֊
ՐՈՒԻՆԸ։

1793։

Ա֊ՆԱ ծանուցումը ահա պատճառ եղավ որ դարիօվլիցեան միաբանութէ աչքը բացաւ, որոնք չկրնալով բան մը ընել՝ կաղաղա֊կէին կուրանային թէ լեհի մէջ չիկայ չար ժողով մը ժաքօպէհնէրուն նման. մանա֊ւանդ շատ լեհի ազնուականք կըքարոզէին ինչ գէշ վտանգաւոր բան է ապստամբ ըլ֊լալը անտէր մնալը ինչպէս որ ժաքօպէհնէ֊րը կուզէին։ Տեսնալով լեհին ազնուական֊քը որ իրենց քաղքցիք իրենց վրայ աղբայ կըկրճտէին՝ դուրս ելան լեհաստանէն, ա֊նոնք որ հոն մնալով կառանձին ժողովքը կընէին՝ չորս դիմէն ջուր կտրած չկրտէին ինչ ընեն. ան ատենը լեհին թագաւորը գրուած մը հանեց, ուր լեհաստանին վրայ ողբ մը ընելով եարքը կըսէ։ „ Հատ հեղ
„ օգնութիւն խնդրեցի օտար տէրութիւններէ՝
„ պարապ ելայ. հիմա իմ ուղածս չիկրնա֊
„ լով ընել՝ կուտամ իմ հաւանութիւս լե֊
„ հաստան բաժնելու համար բայց առանց
„ գործակից ըլլալու „։

Երբոր յուլիսի 13 հաստատվեցաւ կառա֊նօ եղած դաշնագրութիւնը լեհաստան բաժ֊նելու համար, լիթուանիային կեսը մոսկո֊

վին տալով իրեն ուզածին պես, պրուշնալ առաջարկեց որ լեհը թող մարդ իրկէ նոր սահմանները իր երկրին հետ որոշելու համար. լեհին ժողովը թեպետև խիստ տկար՝ աս բանիս շատ դէմ կեցաւ. լեհին թագաւորը վերջապէս ժողովին բազմութիւնը հանեցուց պրուշին կամքը կատարելու, գիտնալով որ չէին կրնար երկու ահեղի տէրութիւնէ դէմ դնել. բայց լեհին իշխանները ուն մեծ մասը ան ատեննալ դէմ կրդնեին. անանկ որ սիեվէնս զօրապետը պատրաստվեցաւ վարշովին բերդը թօփերով պաշարելու. ասով լուեցին. սեպտեմբերի 25 կուօտնօի դաշնադրութիւնը պրուշին տվին մեծ լեհին մէկ կտորը. իսկ որոնք որ չիլուեցին՝ անոնք զազախները բռնեցին տարին. քիչ մը լեհի զօրք կար մատալինսքի իշխանը հնազանդեցընելու համար՝ որ ամէնէն աւելի պինդ կեցերեր իր մարդին վրայ, մոսկովը պահանջեց որ լեհին թագաւորը ու խորհրդականքը ան զօրքնալ իրեն խրկեն. ուզեցալ որ կասկածաւոր մարդիկը բռնեն, բայց աս բանս չիկատարեցին լեհերը:

Պրուշին առած տեղը եղալ 1061 քառակուսի մղոն, որ ուներ 262 քաղաք, 8274 գեղ. 1 միլիոն 100 հազար բնակիչ. 3 միլիոն 6 հարիւր հազար ֆիօրին եկամուտ: Իսկ մոսկովին առած տեղը՝ ուներ 4553 մղոն քառակուսի. 455 քաղաք. 10011 գեղ. 3 միլիոնէն աւելի բնակիչ. 5 միլիոն ու կէս եկամուտ: Լեհի տերութիւնը ինայ

4000 մլն քառակուսի. 697 քաղաք. 10589 գեղ. 3 միլիոն ու կէս բնակիչ. 13 միլիոն ու կէս եկամուտ։

Ահա զարմացան ան ատենը եւրոպայիք, ինչպէս մկ ատենի մէջ Թագաւորները կը ծեծկըվեին Ֆրանսային Թիրը իր Թախտը նստեցընելու համար, մկկալ դիացին մա կոշի ու պրուշը կըծեծկըվեին լեհին Թախտը վերցընելու համար։ Կեմցին մկ քաժին մը չկհանեցին հիմա, ասկէց ոմանք կը կարծեն որ նեմցին մոսկովին մտքին համաձայն չէր, երկրորդ անգամ լեհաստան բաժնելը չէր ուզեր, բայց Ֆրանսային հետ ծեծի մէջ ըլլալով չէր կրնար խափանել։

Այս ատեններս ընդունեցան լեհերը 1775 եղած սահմանագրութիւնը, նոր օրէնքներ ելան. իշխաններուն առջի արտունութիւնը որը քիչցուցին որը շատցուցին ատենին պարագային նայելով. Ֆրանսզներուն հետ ԹղԹակցութի ընելը նաև Ֆրանսզ ներս խօԹելը խիստ պատժով արգելեցին. լեհին զօրքը 6 հազարի կընչեցուցին որոնցմէ հազարը միայն ձիաւոր պիտոր ըլլար. քաղաքական կամ եկեղեցական պաշտօններու վրայ ելլալը միայն ազնուականաց Թողուցին, անոնցալ արգելեցին Հեվահիր կամ մարգրիտ վրանին տանելու. օտար երկիրներու մանաւանդ Ֆրանսզի չուխա ով որ հագնի՝ 2 հազար ֆիօրինի տոյժ (Հերիմ) կապեցին. պաշտօնատերներուն ապսպրեցին ան հագուստով քալել դուրսը՝ ինչ հագուստ որ իրենց որոշվի երկրին չուխային

կարըվաճ, հրեաներուն և ամէնէն ժողովուրդին արգելեցին խաւիճէ հագնիլ և ոչ սուզ մուշտակ։

Ի ԵՀաստան ասանկ բաժնըվելէն ետև կառավարին ժողովը եւրոպային հասկըցուց որ՝ ԼեՀաստան 1793ին ետքը անչափ գաւառներն միայն երկու գաւառ ունէր. այսինքն լիթուանիայի ու սամոկիցիայի պզտիկ կտորմը. առջինը ութը վոյվոտայութի բաժնեւով երկրորդը տասը. մէկ գաւառը ըսվեցաւ Վարշաւա-ուրուբէ երէէր, մէկալը Ի Նովա-Նէայէ գ՛սու-Նէ. քաղքընէրնալ իրեք կարգ բաժնըվեցան։ Ի Վարշավիայի մէջ ատեան կամ խորհուրդ մը կար որ կըսվէր Ի՝Նայուն խորհուրդ, աս խորհուրդիս տըվին իրեն հին իշխանութիւը. բայց մէկ օգուտ մը չըրաւ իրենց մաքի դրածին (1)։

---

(1) Տիլպէրին հիւանիւ կիպի՝ խուլքուտա եար օլսա կէրէքմէր քէնտինէ,
եօգսա էյլէ չօք սիւրէթ չէքիլի սիր մէյքէտէ տիվարինէ։
Մ՝իւէլլիֆ օլմահան տիլպէր, հէման պիր նագչի սուրէթ սիր,
պագար կէօղլէ շահին կիպի, ամմա հագիգաթտէ սըղըրճըք սըր։

## Ռէնէդ եղած դաշնադրութիւնը, լեհ-լոտոս հայոց համը.

1791–1792։

Մինչ որ Ֆրանսայի մէջ նոր խռովութիւն նոր վարդապետութիւն ելած էր անհաւատութիւն անպետութիւն խօթելու՝ նոյնը գերմանիայի այսինքն նեմցիի մէջնալ ելլալ սկսաւ երբեմն մէկ տեղը երբեմն մէկալ տեղը. հանօղնները եղան ժաքօպէններուն Ճորտերը որ Ֆրանսայէն աս դիս ան դին կըխրկէին նոյն որոմը ցանելու. և որովհետև գերմանիայի մէջնալ արգէն կային Ֆռամասօնները ներու ծածուկ ժողովները որ կըսվէին Ռէպէռ Տռոպօնները, Ռոսոռըէները, ուրիշ գաղտուկ մեացած աղանդները. գերմանիայի իշխանները տեսան որ ասոնք ամէննալ ան ատենը երեւան ելան, մէկ սիրտ մէկ հոգի եղան ժաքօպէններուն հետ։ Ասոր վրայ մտածելով վախցան որ Ֆրանսայի պէս իրենց երկիրնալ վտանգի մէջ պիտոր իյնար, անոր համար Ռէնէդ տեղը ժողվուվեցան լեհ-լոտոս կայսրը՝ պրուշին Թագաւորը՝ սաքսոնիային կայսրընտիրը՝ ուրիշ շատ երեւելի անձինքներ, հին խօսք գրին որ Ֆրանսայի Թագաւորին իրաւունքը պաշտպանեն, Թագաւորին ու Թագուհիին կեանքը պահին, չիմոլուն որ ան Ֆրանսային խռովարար վարդապետութիւը կոտորածը եւրոպային ուրիշ տեղերնալ տարածվի. Ասանկով

Թուղթ մը հանեցին կայսեր ու պրուշի թագաւորին անունով մէջը գրելով. «Որ ֆրանսայի նախարարին երեսուն երեք հեծելազէնն՝ պատրաստ են միշտով պաշտպանելու երբոր ուզէ ինքնիշխան մէկ պեղ ընդհանուն աս աղէկ գործը առաջ տանելու»։ Այլ ժաքօպէնները ասնանկ ձանձրացեցին որ՝ ասոնց միտքը ֆրանսան առնել էր, եւքը ուրիշ թագաւորնեբուն հետ մէկ տեղ իրենց մէջը բաժնել։ Հոբօլտոս սկսաւ իր զօրաց վրայ նոր կարգադրութիւն ընել՝ մէյմընալ լսեց որ ֆրանսային թագաւորը ընդունելութեան նոր շինած սահմանադրութիւնը. ան ատենը ինքնալ իրեն հետ մէկ եղած տերութիւնները վերուցին իրենց ըրած դաշնադրութիւնը որ բնինից տեղը ըրերին. սեպհելով որ ֆրանսային փոփոխութիւր աս եղավ որ՝ մէկ խառն կառավարութիւն մը սահմանվեցաւ. յուսալով անով ամէն բան շտկըվելու։ Հոբօլտոս հրաման խրկեց պռուսկով՝ աւսգրիայեն ուրիշ տերերը՝ առիթ մը չտալ ֆրանսըզիները չիդժվարցընել, փախչող ֆրանսըզներուն զինք չտալու։ Ֆրանսային թագաւորը իր էնիշտին ըլլալով գրերը լեոբոլտոսի ինչպես նոր սահմանադրութիւր ընդունեցաւ, լեոբոլտոսնալ իրեն հնորհաւորութիւն գրեց ուրախանալով ֆրանսային խաղաղկելուն վրայ, հասկըցուց որ ինքնալ կուզէր լման պահել ան դաշնադրութիւր որ 1756 եղած էր երկու տերութեց մէջ։ Այլ կայսրընտիրները վախնալով վերոյիշեալ աղանդներէն կայսեր հաւանութեք սաստիկ

հրամանով արգելեցին անոնց ժողովները ամէն կայսերուէ երկրին մէջ. միայն թէ ուշ արթընցան. անոնք անչափ տիրապետ- ըեին որ՝ մենաքոյին դատաւորները յայտ- նի դէմ կեցան աս հրամանին, հազիւ կըր- ցան անկէց ջնջել։

Ուրիշ մէկ վէճմընալ գերմանիայի իշխան- ներու և ֆրանսզնեերու մէջ եւալ. երբոր վեսդֆալիա հաշտութէ եղերէր առաջնէ- րը, ալսացիա գերմանիայի գաւառը ֆրան- սըզներուն տրվերէր աս պայմանով՝ որ գեր- մանիայի իշխաններէն ով որ հոն գետին ու- ներ՝ իրենք պիտոր վայելէին անոր պտու- ղը, հիմա ֆրանսզնեերը չենայելով ան դաշ- նադրութիը իրենք առնել սկսան գետնին բարիքը. անոնց տեղը անշահ տեղվանք ցը- ցուցին հատուցում ընելու, որոնց ամենևին չի հաւնեցան իշխաններէր գանկտիլ սկսան, ռադիսպոնային ժողովին ձգեցին բանը, ուր շատ կայսրընտիրներ իշխաններ ան մտքի վրայ եղան որ ծեծ բանան, ասանկ մեծ խ- րաւունքը զենքով պաշտպանեն. բայց պը- րուշը պօհմիան սաքսօնիան հաննօվերը խա- զաղութէ բանը լսնցընել նայեցան, կայ- սեր աղաչեցին որ ֆրանսայի թագաւորին հետ դաշնադրութիը նորոգէ։ Սանկ ըսին յայտնի չիգիտնալէն ան ատենը ֆրանսայ- ին կացութիը, ուր ժաքօպէններէր տիրած ըլ- լալով պատերազմ կրվնտուէին չէթէ դաշ- նադրութէ. որոնք 1792ին սկիզբներէր ամ- մէն կերպով պատրաստըված ըլլալով հար- ցընել տըվին ինչու նեմցին ու բոլոր կայ-

սերուԹիւնը ճեմի պատրաստուԹիւն կրտես-
նայ. ինչ որ ան հրամանը որ նեմցին իր
պէտքեր մառէշալին խրկերեր պաշտպանել
իր դիւերը, ինչ մտքով միաբաներ էին ան-
չափ եւրոպայի իշխաններ ֆրանսայի դէմ.
ինչ պատճառով կայսրը պիտոր խառնը-
վեր ֆրանսայի ներսի բաներու: Այս հարց-
մունքներուն աղէկ պատասխան տըվավ
քաՀինից նեմցէկ վեզիրը: "Ասելի մենծ
" ըլլալով ըսավ ֆրանսային պատրաստու-
" Թիւնը հարկ կըլլար կայսեր պատրաստ կե-
" նալ, մանաւանդ որ ժաքօպէններուն կար-
" ծիքը նէմցիստանալ մտած ըլլալով խա-
" զաղուԹիւնը վտանգի մէջ էր ընկած, ա-
" սելի ստորին նահանգներու մէջ հարկ էր
" պատրաստ կենալ: Պէնտեր մարէշալին
" խրկած հրամանը միևնակ պաշտպանելու
" համար էր և ոչ ֆրանսային ձեռս մը տա-
" լու համար. Թագաւորներուն միաբանու-
" Թիւնալիրենց պաշտպանուելը համար էր.
" ֆրանսայի վրայ գալու միտքը շուտ մը
" վերջացաւ երբոր ֆրանսային Թագաւորը
" ընդունեցաւ սահմանագրուԹիւնը. կայսրը
" ֆրանսայի ներսի բաները կարգաւորելու
" չխառնըվիր, բայց իրեն կիյնայ զգոյշ
" կենալ ան բաներէն որ ընդհանուր ապա-
" հովուԹիւնը ուրիշ իշխաններուն իրաւունք
" քը վտանգի մէջ կըձգեր:

Այայ ինչ աղէկ պատճառներ որ բերվեր՝ ոչինչ էր ժաքօպէններուն առջին, արդա-
ւուԹիւնը իրենց կրսեպէկին՝ անիրաւուԹիւնը
ուրիշ Թագաւորներու. առաջ առաջար-

կեցին ամէն Թագաւորներու դէմ պատեր-
բազմ բանալ. Եթէ քիչ ընէլով բռնադա-
տեցին Ֆրանսային Թագաւորը որ նեմչէի
դէմ պատերազմ բանայ ոչ ըստ որումմ
կայսր, այլ ըստ որումմ Թագաւոր մաշա-
ռըստանու և պօհէմիայի: Կայց աս պատե-
րազմը չկրնցաւ Լեոբոլտոս տեսնալու, որ
քիչ մը առենէն վրան մկկ տկարութիւն մը
կիմանար. փետրվ. 26 տաձկի դեսպանը
ընդունելէն ետև ալ աւելի շատցաւ, իժիր
ծանրընալով դուղ կրբերէր տենդի (սըթ-
մայի) պէս. Ինքը բանի տեղ չիդրաւ, բայց
մկյմընալ մարտի 1. յանկարծ արիւն փըս-
խելով մեռաւ. ամմինհնալ ըսին որ Ֆրան-
սըզներէն դեղվեցաւ. որովհետև առանք
յայտնի կըսպառնային սպանելու ամմէն
Թագաւորները ով որ իրենց ապստամբուե
դէմ պիտոր ելլար:

Լեոբոլտոս ունէր քնութիւն խաղաղ, խար-
ձելու չափաւոր, ունէր յիշողութիւն սուր,
ճարպիկութիւն ու պերճաբանութիւն մը զար-
մանալի, գիտես թէ բառերը աղբիւրի մը
պէս բերնէն կրվազէին. 25 տարի որ Ֆիս-
ռենյա դօսքանային դուքս նստաւ՝ շատ ա-
ղէկութիւններ ըրավ. միշտ հոգ կրտաներ որ
դատաւորները ու դատաստաններ արդար
ըլլան, մարդ դնելու դատերը (տավանե-
րը) երկան չկրըշեն. Ինքնալ օր չէր անցը-
ներ որ չընդունէր իրեն եկողները, ինչվան
գիշեր առենալ քունէն կելլար թէ որ տա-
պողական բան մը ըլլար. տանջանք տալը
վերցուցած էր նաև մարդ մեռցնելը՝ որ

երկու հեղ միայն եղավ դօսքանա իր դըք-
սուհե ատենը. բանտերը աղեկցուց սան-
կալ հիւանդանոցները. մեծաշէն նազարե-
թի տեղ չմնաց. չարագործները անանկ
վերցուց՝ իր երկիրը դօսքանան անանկ խա-
ղաղցուց՝ որ ամէն տեղ գիշեր ցորեկ մար-
դիկ կրնային անվախ երթալ գալ. եկա-
մուտը աղեկ կարգի մէջ խօթեց։ Նշան-
կալ կուզեր շուկել կայսր եղած ատենը,
բայց ան բանն որ ալտիկ երկրի մը մէջ կըր-
նայ ըլլալ ինչպես է դօսքանան՝ դժար կըր-
նայ ըլլալ մեկ մեծ թագաւորուհե մը մէջ՝
ուր զանազան աշխարհ կան զանազան ազգ
ինչպես է նեմչկին երկիրը։ Երբեն պակսուի
կըգնեն իր եղբօրը նման ը, յովսեփ կայ-
սեր պէս փոփոխասիրութիւնը երբոր դօսքա-
նայի վրայ դուքս եր երիտասարդ. երբոր
դեռ չէր տեսած թէ ինչ փորձանք բերին
իր եղբօրը ըրած փոփոխութիւնները։ Երաս
է որ 25 տարվան իր դքսութիւն ատենը քո-
ղոքովին կործանելու հետ եղավ աղեկ կա-
ռավարուհե օրէնքը՝ որով մէտիչի ցեղը 300
տարի կառավարեցին դօսքանան, ամէն
արտունութիւններէ զզկելով որ հնուցմէ կը-
վայելէին դօսքանցիք. նոր օրէնքներ դրավ
13 մեծ հատոր. ամէն փոխելուն ատեն-
նալ կըվկայեր որ՝ իմ միտքս ժողովրդեան
աղեկութիւն ընել է. վերջերը աւելի ավերեց
իր անունը հռոմայու հակառակ բաներ ը-
նելով, բիւզդոյա ժողով ընելով, նաև փիո-
ռէնցա արքեպիսկոպոսու և եպիսկոպոսու ժողով.
նոր նոր կարգադրուհե ընելով. անկից հա-

կառավարել եղելով ոմանք դուրս եկան դօս-
քանայէն, ոմանքալ մնաս քաշեցին։ Կայց
կայսր եղած ատենը աղէկ կառավարութեա
ըրավ քաշմիյ իշխանին՝ մանֆռետինի մար-
քեզին՝ ու քօլօռետօ կոմսին խորհըրդովը.
ասոնց խրատին մտիկ դնելով կրցաւ խա-
ղաղցնել ներսի եղած խռովութիւնները՝ որ
իր նախորդին ը. յովսեփայ նորասիրութը
եղերկին։

Լ էոպոլտոս կայսրը մեռնելէն ետև հազիւ
2 ամիս անցաւ կայսրուհին մեռաւ մարիամ
լուիզա, դուստր ը. կարոլոսի սպանիայի
թագաւորին, բարեպաշտ խոհեմ տիկին, 17
զաւկի մայր, որոնցմէ 14 ողջ մնացած էին.
10 մանչ, 4 աղջիկ։

Ա՜ոհ ը. կոսդավոսի ղվէսի ընտրուին.

1792։

Շ վէտին թագաւորը ը. կուստավոս սե-
լովի ֆրանսայի թագաւորին քաշածնները՝
խիստ խղճալով վրան ամէն կերպով կը-
պատրաստըվեր որ պատիկ ծովուն վրայէն
երթայ ֆրանսա, նորէն անոր թագաւորա-
կան իշխանութիը ձեռքը ձգել տայ, որուն
հետ անձնական բարեկամութիւն մը ունէը
ու դաշնակցութիւն, մանաւանդ որ երախ-
տապարտ կըմնար զինքը ան բարերա-
րութիւնը որ ֆրանսան իրեն ըրավ 1772,
թագաւորական բացարձակ իշխանութիը
ձեռք ձգելու համար. ասոր բանիս համար

նաև Մոսկովի Թագուհին կըսէն որ յորդո-
րերը գաղտուկ խօսք տըվերը իրեն օգ-
նելու, 12 հազար զինուոր տալով, ամին
տարիալ 300 հազար ռուպլի ֆրանսային
վրայ ծեծի երթալու համար։ Բայց կուա
դավոս տեսնալով որ շվէտին եկամուտը
խիստ ավըրված եր Մոսկովին կառուն եւս,
ընդհանուր ժողով ըրաւ չորս կարգ իշխան
ներու կէֆլէ (Ձէֆլէ) ըսված պզտիկ քաղ-
քին մէջ որ պօԹնիա գաւառին մէջն է.
հոն մէկ զօրաւոր կարգաւորեալ Ժարտա-
սանուՀ մը խօսելով որ իրեն քնական ար-
հեստմընեը եղած՝ ամինհուն միտքը խօ-
Թեց իր ուզածները լինցընելու. բայց ազ
նուականները որովհետև նեռսէն միշտ կո-
խային իրենց իշխողուՀը կորնցընելու հա-
մար որ կուսդավոսէն առաջ ունէին, մէ-
ջերնին չորս տարվընէ վեր մէկ գէշ միաբա-
նուՀ մը ըրած ունէին կուսդավոսը սպան
նելու (1). իրեք մենծերու զաւակ խենԹա
բիւն երիտասարդը աս բանիս վրայ խօսք
կապեցին որը կըսվէին կոմս Հօռն, կոմս
ռիպպինկ, ու անքաստռօմ Հաղարապետ.
ուրիշ աղնուականներէնալ շատ մարդ կա
մակից էին եղած աս սպանուԹէ բայց ո՛չ
գործադիրը, ինչպէս որ քննուԹէն եւս
յայտնի եղավ. աս իրեքը մէջերնին վիճակ
ձգեցին Թէ ո՛վ զարնէ Թագաւորը՝ վիճա-

(1) ԳրեԹէ ան աստենը՝ որ աստեն որ չուզեցին հա-
զարապետները Մոսկովի դէմ ծեծկըվիլ. ըսելով որ
շվէտին Թագաւորը չիկրնար պատերազմ բանալ ա-
ռանց միաբան հաւանուԹէ ամբողջ աղգին։

կը ելաւ անքասդուօմին վրայ որ բնուքեալ
մէկ ժանտ վայրենաբարոյ մարդմընիկը ։ Ո՛
սիկայ վինքը պատրաստելով մէկ սուր դա-
նակ մը շինել տրվալ վրան պղտիկ Ճանկ
(չէնգել) ունեցօղ, որպէս զի զարնըվածքը
մահաբեր ըլլայ, վերոյիշեալ ժողովքին ա-
տենը կէֆլէ գացած էր աս մտքով բայց
չէր յաջողած. ժողովքին ետևաւ շատհեղ
կըսպասէր հակառըսած Ճամփուն վրայ ուս-
կից շատ կանցնէր կուսդավոս՝ բայց նոյն-
պէս չէր յաջողած. անոր համար դաւաճան-
նէրը որոշեցին որ հասարակաց թատրոնի
մէջ զարնեն երբոր գիշեր ատեն կաքաւ պի-
տոր ըլլար դիմակաւոր, (այսինքն անանկ
պալօի մէջ ուր ամէնը մասխարայ կըդնեն
երեսնին), հոնաւ շատ հեղ ուզեց զարնել
աւելի մարտի 9, բայց բազմութեն քիչ ըլ-
լալով աս չարաձըձին սիրտ չիկրցաւ ընել,
վախնալով որ քիչերուն մէջ չիկրնար գոցվիլ
կըբռնըվի. անոր համար դաւաճաննէրը
բանը կարգաւորեաւ շուկեցին մարտի 16ին
գիշերվան համար. ամէնհնաւ խօսք դրին
բազմութի բերելու հոն որպէս զի սպանհողը
կարենայ բազմութի մէջ խառնըվիլ պահ-
վիլ չիմանալնէն որ սուր առնողը սրով կիյ-
նայ ։ Ո արնըվելէն գիշեր մը առաջ կուս-
դավոս մէկ անձանաչ մարդէ մը Թուղթ ա-
ռավ առանց անուան առանց ստորագրու-
թի, որուն մէջը ասանկ կըգրէ ։ "Ո՛ւրժա-
" նի ըրէ Թագաւոր աս ծանուցումը լսե-
" լու մէկ մարդէ մը՝ որ Թէպէտ քու ծա-
" ռայուեդ մէջը է՝ բայց կըբաղձայ քեզ

„ խալըսելու մէկ մօտիկ վտանգէ մը որ քու-
„ կին կեանքիդ վրայ կըպտըտի , հասկըց-
„ վեցաւ որ մէկ դաւաձանութեի մը մտած-
„ ած է քեզ սպանելու , ասոր վրայ մի
„ տարակուսիք . մօտիկ էր անցած շաբաթ
„ բանը լսելնելու՝ բայց կաքաւները ( պա-
„ ղնէրը ) խափանվելով այսօր պիտոր լմընա-
„ յրնեն գարնեն . անոր համար ձեր արքու-
„ նեայը մէջ նստեցէք . կաքաւներու մէջ
„ մերևնաք գոնէ տարի մը , հակառին չամ-
„ փէնալ շատ մանցնիք , գոնէ երկու իրեք
„ ամիս զգուշութէ կեցիք : Այտևէ միւնաք
„ աս թուղթիս գրօղը իմանալ . հերիք ըլ-
„ լայ ձեզի գիտնալ թէ գրօղը պատահ-
„ մամբ մը հասկըցաւ աս դաւաձանութիը ,
„ որուն ատելի է ասանկ չարութի „ :

Կուսդաւոս աս թուղթը կարդալով չիշար-
ժեցաւ , վախնալը իրեն ամէն սեպեց փո-
խանակ խոհեմութի սեպելու որ է մէկ ախտ
մը յաջողված մարդիկներու . աս խրատը
մէկ հնարք մը սեպեց իրեն թշնամիներուն .
երբ թէ ասանկ գինքը վախցընելով իրենց
ուզածը առաջ տանիլ տան . չերբալ կար-
ծեր որ չլեհներուն մէջը անանկ արքայաս-
պան մարդ գտնըվի . ինքը ամէնեն գովա-
սանք կըլսեր իր երեսին իրեն ըրածներուն
համար՝ կարծեր որ իր եաևէնալ ամէնքը
գինքը կըգովեն . կարծիքալ գնաց որ փը-
րանսըներուն հնարքն է , երբ թէ աս կեր-
պով գինքը վախցընելով Թող չիտան փը-
րանսայի վրայ վազելու . ասանկ մտքեր եր-
թալով մէկէն քամահրեց Թղթին խօսքե-

ըը · վախ մը չէր ցընելով դիմակ ( մասխա-
րայ ) դրած երեսը գնայ մնաւ կաքաւելուն
տեղը որ պիտոր ըլլար արքունեայ թատ-
րոնին մէջը : Դահաւանները տեսածնուն
պէս բազմութէ մէջէրնին առին կուսդա-
վոսը , ուր կային նաև անմեղ անձինք որ
հետաքրքրուէ համար միայն եկած էին · ան
դահաւաններէն մէկը չխսխալելու համար
կուսդավոսին մօտիկնալով՝ ձեռքը վրան
դնելով ըսաւ · Ա՛խէյ ենէ աղէր պէմաւոր
( մասխարայ ) մընէ եղէր : Ա՛յս խօսքս նշան դրէ-
րեն եղած իրենց մէջը · անքաստդաօմը աս
խօսքս լսածին պէս շուտ մը անոր վրայ չըտ-
կելով եկէ բիշթովին պարպեց մօտիկանց ,
մէջը մանր գնտակներ մանր գամէր լեցուն
ըլլալով մէջքին մօտիկ զարկաւ քովընտի ·
իսկոյն դահաւաններըը ձայն մը հանեցին ,
Ալրակ էյ ըսելով բազմութիը շփոթուէ մէջ
ձգեցին · ան շփոթութէ մէջ խառնըվելով
գոցվեցաւ արքայասպան անքաստդաօմը , ա-
ւելի զգուշութէ համար գետինը ձգեց իր
բիշթովնալ դանակնալ , որ վրան փնտռե-
լու ըլլան՝ չիգտնան · բայց մարդասպանին
իր զգուշութիը իրեն գտնըվելուն պատճառ
ընել կուտայ ՚ա : Դահաւաններըը կուս-
դավոսին զարնըվիլը յայտնի տեսնալով եր-
բոր կրսպասէին մէկէն անոր գետինը իյնա-
լուն՝ անոր գէմ տեսան որ ոտքի վրայ կե-
ցած է՝ խիստ վախ ընկաւ սրտերնին · կուս-
դավոսին համար գէշը ան եղավ որ շուտ
մը ձերբահ չիգտնըվեցաւ որպէս զի գամ-
ըը հանէր զարնըված տեղէն , ինչվան որ

Հերրահը եկաւ՝ խոցը խիստ ուռեցաւ . ա-
ռին մօտիկ մկկ խուց մը տարին , որ իր քա-
ջասրտութիւնը բնական զուարթութիւնը վրան
պահելով ըսաւ , Թէ պէտք է նման եղավ յո-
լեռս կէսարոսին . անոնք ինձի նման առաջնոյն խոցոտ
վէրաս , ինձի պէս բաղնուելէ ետքը պիտի
անկից տարին թագաւորական պալատը ,
վրան ժողովուեցան վարպետ Հերրահները՝
բայց չկրցան ամէնն ալ մօտիկ դամբնալ
հանել որ խիստ ներս իր աղիքներուն մէջ
մտերկին : Դատաւորները շուտ մը բօս-
տանները բռնեցին որ մարդ չփախչի , վա-
ղուան օրնալ դատաւորներն մկկը զօր-
քով գնաց ըսդօքօլմ քաղքին հրապարակ-
ները՝ Թատրոնին մէջ ձգած բիլեթովը ու
դանակը աւմնուն առջին ցրցընելով մեծ
վարձք խոստացաւ ով որ Հանչնալու ըլլայ
անոնց տերը . շատ հեղ ասանկ պզտիկ բա-
ներ ընելով դատաւորները երեւան կըհա-
նեն մեծ յանցաւորները . աս խօսքիս վրայ
հոն վազեցին բոլոր քաղքին բազմութիւնը .
ով պիտոր Հանչնայ ըսելնին՝ տես այ բա-
նը որ հոն գտնըվեցաւ նաև ան դանակին
չինօղը . ասկայ պատմեց տէղնիտեղը ան-
քաղդէօմին ապսպրելը իրեն շինել տալը .
շուտ մը բռնեցին աս արքայասպանը որ շատ
աղէկուէ տեսերեր կուսդաւոսէն . գիտես
թէ ասանկ դաւաճանութիւն սպանութիւն է-
ղածները աշխըրհիս վրայ շատը երախտիք
տեսնօղներէն է եղեր : Նքաքսդէօմը խոս-
տովանցընելով մկկալ գործակիցներնալ է-
րեւան ելան , զատ զատ տեղ բանտարկե-

ցին, քննուէ ընելով հասկըցան դաւաճանուԹիւնը. հասկըցանալ որ ֆրանսզ ժաքօպէններուն մատնալ մէջն է եղած. ԹղԹակցուԹիւն կրնան եղեր շվէյտ եղած դաւաճաններու հետ, որոնք ամէն Թագաւորները սպաննել կը յորդորէին, աւելի աս կուսդաւլոսը որ ֆրանսայի վրայ պիտոր գար. մանաւանդ որ Լեոբոլտոսին մահնալ կուսդաւլոսին մահնալ նոյն ամիսը վանը մէջ ըլլալով 16 օր իրարմէ ետև շատ վախ ձգեց ամէնուն սիրտը. անչափ որ ձեռնհասի մէջ աս ժաքօպէններէն մէկ ժանտ լերը մը չվախցաւ գուշակելու ըսելու Թէ մարտի 9 շվէյտին Թագաւորը Թատրոնի մէջ պիտոր սպաննեն մէկ ձանկաւոր դանկով մը. երբոր լսեց որ ան օրը չկայ ըղձեցաւ՝ նորէն գուշակեց որ ուրիշ օր մը պիտոր սպանվի բիչԹովով։ Յիացանալ որ վերոյիշեալ ԹուղԹ գրողը խրատ տըվողը եղերէ լրկեքօռն գնդապետը, որ Թեպետ դեմ էր կուսդաւլոսի՝ բայց չէր ուզեր ասանկ ըսպանվիլը։

Տասվրեք օր խիստ ցաւ քաշեց կուսդաւլոսը, անանկ ցաւի մէջալ ըլլալով ինչման եօթի օրերը հակաւոր բաները կըհոգար Թէ հասարակի համար և Թէ իր տանը համար, բայց ցաւին չդիմանալով մարտի 29 մեռաւ 46 տարվան, 22 տարի Թագաւորելէն ետև. մեռնելէն քիչ մը առաջ աս խօսքս ըսըրցեց. Յես կըմեռնիմ, ձի նէրէ էմ յանդանգներուս ինչպէս որ եսալ կընէրէմ ամէնուն որ մանաւանդ եղան էմին մահուան։ Յէր եղբօրը որ

Թագաւորահայր պիտոր ըլլար ապսպրեց որ դաւաճանները վրայ գուբ ցըցընէ՝ մէկը անոնցմէ չխնեղցընէ. բայց անիկայ ամէնէն յանցաւորներուն ընորհք ըրաւ մէ-այն արքայասպան անքաղաքօմը անպատիժ Թողուլ յանձ չառաւ. ասանկ անձուկներ չարուի գործօղը իրեք օր մէկ վանդակապատ (խափէսլի) տեղ մը դնել տալ մեծ հրապարակի մէջ ամէնուն ցուցանք, եւ-քը մեռցընել տրվալ հասարակ մահուամբ ինչպէս որ կը մեռցընեն մարդասպանները

և ոչ տանջանքով։

Փարեզ եղած ժաքօպէններուը իրենց ժողով-քին մէջը մեծ պատուով յիշատակը ըրին ասարքայասպան անքաղաքօմին, որուվ ցը-ցուցին իրենց մտնակից ըլլալը. վերուցին աշխըրքէ անանկ մէկ մարդ մը [1] որ երևե-լի Թագաւորներու կարգը անցած իրեն կա-տարելութեցը համար մանաւանդ պաշա-րուկ ընութեանը համար. շատ մարդ կայ աշխըրհիս վրայ քաջասիրտ խելացի՝ բայց գործքի եկածին պես չիկրնար պաշարել կավրէ. աս Թագաւորս ինչ բանի մէջ որ մտաւ՝ իր կարողութեը կեօրէ պաշարեց լինցուց։ Մեծ բան պաշարել էր Թագա-ւորական իշխանութիւնը նորէն իր ձեռքը ձգել որ ժբ, կարոլոս Թագաւորին քոյրը տկար ըլլալով կորսընցընել տրվեր եր 1718.

---

(1) Պէր կիւմիւշխէն գալա կէօրսիւմ, հապա օլուպ տուր անտա ասպ,
կէլիր գէրլին Թօփ իլէ, ֆէթհ էակր անը աֆի-Թապ։

անալ Հաստատուն ընել տրվավ, 57 Թեոնէ
վրայ նոր օրէնք չնեղելով ընդունել տրվավ
աշնուականներուն ասպետներուն եկեղե-
ցականներուն և գեղացիներուն. ինչ որ իր
Թագաւորութենէ փառք կրբերէր՝ ինչ որ իր
ժողովրդեան յաջողուի՝ մեկնալ զանց չը-
բավ. անով վերցուց ան ատելութիւնը որ 50
տարվընէ վեր երկու բաժիներէր շվեյտ ազ-
գը. ծովու վրայի ուժը ան աստիճանը հա-
նեց որ՝ շվեյտին նաւերը ամէն ծովու մէջ
համարձակ կրնային նաւարկել. ցամաքի գի-
նուորութենը ոտքի վրայ կեցուց նոր կանոն-
ներու մէջ խօթելով. գիտութիւնները ար-
հեստները ծաղկեցուց, գիտուն մարդիկը
վարպետ մարդիկը առաջ բերավ. իրեն
գրքատունը հանդիսարանը հարստացուց հա-
տընտիր բաներով որ իր Համիտոդութենը
մէջ ձեռք ձգերէր. Թագաւորական կարգ
կամ եղբայրութիւն մը սահմանեց վազային ա-
նունով ամէն բան ծաղկեցընելու համար՝
որ ետքի հատորին մէջը պիտոր դնենք. ան
աստիճան հասուց շվեյտին անունը՝ որ իրեք
Թագաւոր երբոր կուգային մոսկովին դէմ
մէկը հանել՝ շվեյտը հանեցին. կուսդավոս
վրան առաջին պես վեց շաբաթվան մէջ
շուտ մը նաւատորմիղ մը հանեց, ծովէն ցա-
մաքէն մոսկովին հետ ծեծկըվեցաւ: Ամէ-
նէն աւելի բան պաշարելը ան սեպելու է
որ՝ երբոր տանիմառքան մէկ դիէն՝ մոսկո-
վը մէկալ դիէն՝ կըծեծկըվեին շվեյտի հետ՝
ան առնելով իր մէջէն նորէն ապստամբու-
թիւն հաներեին՝ ինքը ամենևին չշփոթե-

լով ձգեց պատերազմիլը ըզօքօլմ եկաւ. ժողով ընելով հանդարտուԹիւ ամմէն քան հասկըցընելով իշխանուԹեն առաւ ինչպէս որ առաջներըը պատմեր ենք. պատերազմի մէջ տաքցած մարդը իբր Թէ պատերազմի մէջ ըլլար՝ անանկ կարդով կանոնով չակէ- լէն եաև նորէն ծեծի մէջ մտաւ փառաւո- րապէս ընցուց, իր վախճանին հասաւ որ երկու բան էին. իր տեղը Թէ որ ուրիշ մը ըլլար սիրտը կոտրելէն կամ դժվարելէն կըյուսահատեր մէկ դի կըքաշվեր: Ա՛ս բա- ներս կըցըցընեն իր խոհեմ երկայնմտուԹիը իր վեհանձնուԹիը՝ որուն վրայ նաև դուրսէն կերևար. երբոր մեզի տեսնըվիլ եղավ վե- նետիկ մեր վանքը գալով՝ որ Թէպէտ ծըպ- տեաւ (Թէպտիլ) անձանաչ եկավ՝ բայց իրեն մէկհատիկ վեհանձնուԹիը վարմունքը զինքը Ճանչցընել կուտար: Ինչ քաջասըը- տուԹի էր որ ձախորդուԹեց մէջնալ զին- քը չէր կորսնցըներ. իրաւ է ըսածնին որ կուսգավոսի քաջասըտուԹիը իր բաղդէն աւելի էր. ինչ ՃարտասանուԹի որ ժողո- վականաց բազմուԹիը քանի անգամ որ ու- զեց իրեն դին քաշեց. ասանկ լեզուն մեծ պարգև մեծ նիւԹ (սերմայէ) է մարդուս՝ որ խաղնային չկըլլար ընելը աս լեզուն կը- նէ. ուր որ կըխօսէր կուսգավոս միշտ յաղ- Թանակօղ կըլլար. աս երկու ձրից վրայ դիը նաև իր խոհեմուԹիը իր կենցաղակըը- ԹուԹիը: ԻնուԹէ քաղցրաբարոյ սրտցաւ ըլլալով իրեն շատ Թշնամիները ներելով ու բարերարելով վաստրկեցաւ և ոչ վրէժ

խնդրելով. շատ բարեկամ վաստկեցաւ իր ձամիսրդուԹեցը մէջ աւելի գօսքանայի մէջ, յատկապէս լեռօլտոսը որ ան ատենը գօսքանայի մեծ դուքս էր, նաբօլիի մէջ նաև ֆէրտինանտոս Թագաւորը ունեցաւ բարեկամ, հաւատքի վրայի խստուԹենաև վերցուց որ շվէտի մէջ միշտ կըբանեցընէին. ուղղափառներուն շատ համարձակուԹիւն տըվավ։

Բայց որչափ վախնալու կիրք է յանձնապաստանուԹիւնը. մարդս մէկ յաջողուԹիւն մէկ քաջուԹիւն մը ունեցածին պէս աս ինքնակալը կիրքը խելքին սրտին մէջը կըտնկըվի. կարծէ որ միշտ քշէ պիտոր ան յաջողուԹիւնը, զգուշանալը իրեն ծիծաղական բան կերևնայ. շատ մարդիկ որ խիստ եռևելի եղան քաջագործուԹիւն կրտեսնանք որ ետքը աս պակսուԹեան մէջ ընկան, իրենց յանձնապաստանուԹիւնը անհոգ եղան ուրիշի խրատին մտիկ դնելու, իրենք զիրենք կորսընցուցին։ Յօհանկ վերջացուց ահա կուսդավոս իր կեանքը. իրեն ցաւալի մահը մեծ քարոզ Թողուց աշխըրհիս մէջ աս բանիս վրայ։ Ունի գրուածնեը եւրոպայի զանազան ԹագաւորուԹեց վրայ, կենցաղագէտ ԹղԹիկը շվէտի երկրին ու քնակչաց վրայ, ըլլալով գիտուԹեց տեղեակ՝ բայց աւելի գեղեցիկ գպրուԹեց մէջ եփուն. մէկ հետաքրքրական գիրք մընաւ ունի որուն խոբագիրն է, Ա՞նգ հաւաստիացուցիչ եւրոպիոյ յաղագս մահուանէ պերուենան առաւոյ։ Գրեց նաև պատմուԹիւն իրեն ատենին՝

ապսպրելով որ դուրս չհանեն չիտպեն ինչ
վան գոնէ 50 տարի մը անցնի ։

Նմանկով կուզավոս եղավ կենցաղագէտ մատենագիր , Ճարպիկ պաշարօղ կենցաղակրթուէ նաև գինարուեստի ու պատերազմի մէջ . աս աղեկութիները կուտան իրեն բարի կրթուէը որ դէսսին կոմը իր վարպետը տըվերէր . նոյնպէս և իր մօրը կրթուէը՝ որ ը . ֆեոերիքոսի պրուշի թագաւորին քոյրը ըլլալով՝ կին գիտուն աղեկ կրթուէ եփված՝ իր զաւակնալ կուզգալվոսը պղտիկուց հոգ տարաւ ամէն աղեկուէ մէջ կրթել . իր մայրական պարտաւորութիը կատարեալ բանեցընելով ջանաց աղեկ բարոյական սովրեցընել , բարի վարմունք , սրտցաւ ըլլալ ուրիշի վրայ , չարքաշ ըլլալ իր վրայ , ոչ զի ժողովրդեան վրայ գութ ունենայ , իրեն գործքերուն մէջ չարքաշուէ վարժած ըլլայ դիմանայ ։ Ոչ ոք լսեն անոնք որ միայն քիչ մը հարստութի ունենալնուն համար զաւկրնին փափկուէ մէջ կրսորվեցրնեն , խեղեպցած չիպցած կրպահեն , իրենց ամէն կրսեպեն չարքաշ պահելը , բայց մէկ բան մը գլխրնին գալու ըլլայ՝ էն կրնար քաշել չիսորվածծ ըլլալնուն համար ։

## Լրկրորդ ժողովոյն կառավարութիւն Ֆրանսայի
## որ է
## Ազգային ժողով Զինադրեր.

## 1791–1792:

Ինչպան հիմա պատմածնիս Ֆրանսայի խառն վուխթե սկսելուն ու իրենց ազգային ժողովոյն ըրածնեբն էին, որ ըսվեցաւ Սահմանադրեր ժողով. ասկից եաքը պիտոր ըլլան աս նոր ժողովքին ըրածնեբը, որ կոչեցին Զինադրեր: Սկիզբ 1791 Հոկտ. 1 իր առջի ժողովը ըրավ. 5ին որոշեց ժողովին մէջը ինչ կարգ ինչ արարողութիւն (Թեշրիֆաթ) պիտոր պահեին. անանկով Թագաւորին համարաւ որոշեցին որ ասկից եաքը Սիւէ չըսեն իրեն, որ իբր Սուբեան ըսեր է. և ոչ Ա՛ծնէնէ, որ իբր Հուդրոս ալէ ըսեր է, որովհետև հիմա քիչնար պիտոր ըսին իր իշխանութիւնը. նստելու տեղնալ ժողովին մեծնին ձախ դին նստի ըսին. երբոր Թագաւորը նստելու ըլլայ՝ ամմէն ժողովական քալ գնալնին դնեն իրենց շափդան. բայց ասանկ ցած կերպով ժողովին մէջը երևնալ չուզեց Թագաւորը [1]. ամմէն փարէզալ աս բանիս վրայ սկսաւ բերանը բանալ Ճշդոհալ. հարկ եղաւ ժողովին աս վճիռը

(1) Ա՛հ հաերսեմ աէրա էլինաէն, կիպլի սըրըմ ֆաշ օլուր,
սապը հաէրսեմ, հէր պիրի՝ պաղրըմա իւզ պին Թաշ օլուր:

եւ կանչէլ. միայն թէ աս բանով ժողովըրդին միտքը պղտորեցաւ ժողովականաց վրայ։ Թագաւորը ժողովը եկաւ հոկտ. 7. իրեն Թուղթ հանել տըվին 14ին փախչող ֆրանսըզներուն դէմ, պատիժ սպառնալով թէ որ ֆրանսա չդառնան, ժողովքնալ 28ին վճիռ հանեց Թագաւորին մեծ եղբօրը դէմ, թէ որ երկու ամսէն ֆրանսա չդառնայ՝ իր իրաւունքէն ընկած ըլլայ, որ էր Թագաւորահայրը ըլլալը, ինչպէս որ իրաւ ըրավ

1792 յունվ. 16։

Փարէզին մէջի եղած ժաքոպէններըը կրնային որ չհնած սահմանադրութիւը ջնջէն, դուրսի գաւառներուն մէջի ժաքոպէններուն չանքը աս էր որ ամէնն տեղ ավրեն ավերըշարկեն. աւելի քաւօվանս գաւառին մէջը չարերու միաբանութէ մը կար՝ որ հոն բարբարոսութէ ընելէն ետև ավելնօվին վրայ վազեցին որոնց գլուխը ժուռատանն էր. ա վելնօնը որ հռումայու իշխանութէ տակն էր՝ ֆրանսային տակը առին սեպտ. 15, թէ պէտ և իրենց սահմանադրութիը վճռերը որ բռնութէ առնըվաճ տեղը ետ դարձըվի։ Ֆաժէդը հրաժարած ըլլալով փարէզին զօրագլխութէ ասանկալ պայլին, թէ թիոն մէյմը ազգային պահպանութէ գլուխ եղավ, նոյեմբ. 17 իր զօրքը ընտրեց առաջ ամէնէնալ յաճ մարգիկ, օռլէանսէն ըստակ քաշօղ, որ 100 հազար սուր չհնել էր տըված իրեն մարդոց բաժնելու համար. միշտ քլիւպներու մէջ խորհուրդ ընել կուտար ինչ չար գանան որ Թագաւորը մեռ-

ցընեն։ Ծագաւորը վրան մէկ արատ մը դնել չկրնալու համար կընայեր որ սահմանագրութիւնը ձիշդ պահէ. կը փոխեր իր պաշտօնեայները որոնց վրայ որ կասկած ունէր. քան մը ըսելու թշնամիներուն Թողչէը իտար։ Նոյեմբ. 29 Ժողովը վէճ հանեց որ չերդվընցօղ քահանայները Թողչիենց երդումը ընեն, ով որ չընէ ամէն Թոշակէն զրկուած ըլայ. և որովհետև փախչօղ ֆրանսզները գերմանիայի իշխաններուն քով կը ժողվըվէին՝ ան օրը վճռեցին Թագաւորին գրել տալ որ ասոր պատճառը հարցընէ անոնց. վասն զի շատ ձայներ կելլար որ հոն մեծ բանակ ըլլալով ֆրանսայի վրայ պիտոր վազեն. անոր համար դեկտ. 13 մէկը շատ յորդորակ զրկեց Ժողովին որպէս զի մեծ բանայ դուրսի տէրութեց դէմ։

Նայց եկեղեցականաց հալածումը օրէօր սաստկանալու հետ եր. դուրսի գաւառներուն մէջ տեղ տեղ անանկ կատղած էին՝ որ չերդվընցօղ քահանայները բազմութեն բռնելով բանտը կրդնէին, հազար չարչարանք կուտային. պռիսնին քաւտինալը որ երդվընցեր՝ սրբազան պապին Թուղթ գրելով յատադովեց իր երդումը իբր ատենին յարմար, բայց յանդիմանութեն պատսխան առնելով ետ խրկեց իր քառտինալութեն նշանը, ելավ փարիզին եպսքոսաչար մեռաւ 1795։ Ամանք առաջարկեցին աս օրինադիր Ժողովին ամէն քահանայները քշել Նոյանային անապատը, ո-

բուն օդը խիստ ժանտ ըլլալով մեկին մեռ-
նիլն . ատեն ատեն աղմուկ ( արպէտէ ) կը-
հանելին՝ պատճառը քահանայից վրայ կը-
ձըգելին : Առիւծ նոր որոգայթմընալ հնա-
րելին չերդվընցօղ քահանայներուն վրայ ,
նայեմբ . 29 վճիռ եր եղած նոր ժողովքին
որ ամէնհնալ երդում ընեն , երդման ձևը
ասանկ եր . Այս երդվընամ հաւատարիմ ըլլալ
ազգին՝ օրէնքին՝ նահատուրին . երդվընամ պա-
հելու սահմանադրութիւնը որ ազգային ծողովէն է
վճռըված , նահատուրն ընդունված : Այսկայ
դրսըվանց կերևնար երդում մը տարբեր
անկէց որ եկեղեցականաց սահմանադրուե
համար կըպահանջէին , բայց իրօքնոյն դժա-
րութիւնը ուներ , որովհետև աս սահմանադ-
րութիւնե մէջնալ շատ եկեղեցական բաներ
կային . ով որ աս երդումը չընէր՝ ամէն
պաշտօնէն թոշակէն զրկըվեր պիտոր , օրի-
նաց դէմ ելլօղ սեպվելով կամ քշվեր կամ
բանտը պիտոր մնար . բայց աս երդումը
՚ի գործ չդրվեցաւ , վասն զի շատ փրան-
սըզներ կային որ խաղաղուե պահելու հա-
մար ամէն սրտով ընդունեցին ան սահ-
մանադրութիւնը , հիմա ասանկ երդում պա-
հանջելը նոր չիոթուեթի մը հանել է ըսե-
լով փարիզին գաւառը դէմ ելավ աս վճռ-
ուին իբր սահմանադրութե դէմ . թագա-
ւորնալ դեկտեմ . 19 Այրեցաւ դրելով աս
վճռուին վրայ խափանել :

Այրքոր նոր տարին պիտոր սկսեր երկու նոր
բան վճռեց ժողովը , մէյմը դեկտ . 31 վեր-
ցուց ինչ արարողութիւն որ կընեին նոր տա-

բին չնորհաւորելու համար։ Ապրիլ 1792 յունվ. 2 վճռեց որ յորդորդ տարին սկսած աս տարի յունվարին առջի օրը, և թէ ամէն դատաստանական գրուածք աս թուականիս հետևին (որուն վրայ տես վարը)։ Կտքը սկսան պատերազմի վրայ մնացեալ. յունվ. 17 Ապիկը առաջարկեց ջնջել դաշնադրութիւնը որ 1756 ըրած ու նեին աւստրիոյ այսինքն նեմչիին հետ. ժողովը սկսաւ իրաւ 25ին վճռեց որ թագաւորը որոշ պատասխան մը ուղէ կայսերմէ իրենց ժողովելուն վրայ. մարտին առաջ պատասխան չտրվածին պէս՝ նշան սեպվի ծեծ բանալու. ետքը փետրվ. 9 վճռեց ժողովը փախչող ֆրանսիզներուն ապրանքը առնել. մարտի 20 ընդունեց նոր կերպ գործիքով գլխատելը՝ որ ետքը Կիլեոտէն ըսվեցավ։ Կայց մեծ բանը եղավ ապրիլի 20 ծեծ բանալը նեմչիին դէմ ըստ որում թագաւոր մաշառի ու պօհմիայի. աս պատերազմիս պատճառին վրայ շատ կըտարբերին պատմագիրք. ֆրանսիզները պատճառը իրենց փախչող հինծերուն ու քահանայներուն վրայ կըձգեն. բայց ետքի եղած գործքերը յայտնի կըցցցընեն որ՝ պատճառ ժաքօպէնները կամ օռլէանսեաններն էին թագաւորը կորնցընելու համար. ետքը երբոր ուզածնին եղավ՝ ան ատենը իրենցմէ Ապիկը լամեթ պուիսօդ ու իր ընկերները յայտնի պարծենալով հրապարակական ժողովի մը մէջ ըսին, թէ հինք եղանք ան կըռուին պատճառը. հինք բռնադատեցինք

Թագաւորը ծեծ բանալու որպէս զի կա-
րենանք Թախտին վար առնել, առանց ա-
նոր չէինք կրնար բռնաւորը վար ձգել, չէ-
ինք կրնար ռամկապետութիւն կանգնել։
Ցէս 1820 տարւան եղանակին մէջ ինչ որ
գրերինք Ֆրանսայի Թագաւորին մահուան
վրայ։

Պնաց որ ամէն ժաքօպէններուն սիրտը
Թագաւորէն աւելի եկեղեցականաց վրայ
կատղած էր. իժիր կըմտածէին առնել գըլ-
նալ ամէնը մէկէն կորսնցընել. աս պատ-
ճառով դուրսի գաւառներուն մէջ լավալ,
պրեսդ, և ուրիշ տեղեր աղմուկ հանելով
բազմութեի՛ քահանայից բանտը դրին. ամ-
էն օր ժաքօպէններուն քլուպներէն պա-
տուիրակներ կուգային օրինադիր ժողովին
առջին, նորէնոր ամբաստանութի՛ կընէին
ներդվընցօղ քահանայներուն վրայ Թէ խոր-
հուրդ կընեն ապստամբութի՛ հանելու ջար-
դելու, ասոնց վրայ պէտք է արԹուն կե-
նալ կրսէին, անանկ մարդիկ են որ կրնան
ամբողջ Ֆրանսան տակն ու վրայ ընել։
Պ՛ոլի որոշումին եղավ եկեղեցական հա-
գուստը ջնջել Ֆրանսայի մէջէն, ճեացած
միաբանութիւնները՝ քարոզչները՝ կըր-
Թօղներնալ քիչքընել. երդում ընելուալ
աւելի բռնադատել սկսան. աս պատճառ-
ներով շատ համալսարանները ինչպէս են
քայհնին՝ այքսին՝ սօռպօնին՝ ցրուեցան.
մէջի տղոց վարպետ կարգուրայները ճնա-
ցին։ Պ՛ոգային ժողովը մտածեց քշել ուղ-
ղափառ քահանայները պատճառ բերելով

Մեյմը ժողովրդեան կատաղութիւն խլացը-
նելու համար անոնք, Մեյմընալ Ֆրանսան
խաղաղցնելու համար. բայց ժողովրդեան
առջին արդար դատաստան ըլլցընելու հա-
մար հրամեց որ եղած ամբաստանութիւնց
վրայ նոր քննութիւն ըլլըվի. աս բանիս քըն-
նիչ Մկ կալվինեան Ֆրանսզ մը դրաւ. ա-
սիկայ քննելէն եաև ուղղափառ քահանայ-
ները անանկ չար մարդիկ են ըսավ, որ եթէ
դուք անոնք չիքշէք ըսավ, անոնք ձեզ սի-
տոր քշեն: Այս խօսքիս վրայ ժողովը մայի-
սի 26 քշելու վճիռը ըրավ 10 թէութիւն,
բայց որովհետև պարզ քահանայները պար-
տաւորեալ էին երդում ընելու՝ ամէնքնուն
վրայ խմացվելու համար վճիռը՝ ծանու-
ցում ըրավ որ, ինչպէս սեպտեմբերի 3, ո՛վ
որ քաղաքական երդում չընէ՝ ամէնքնալ
վճռին կեօրէ Թող քշվին, ուրալ որ 20
քաղքցի մը միաբան խնդրեն չերդվընցօղ
քահանայ մը քշելու՝ կառավարութիւը պար-
տըկան ըլլայ քշելու: Ակեղեցականք գիր
հանեցին ցըցընելով որչափ անիրաւ էր աս
վճիռս, սրբեցին իրենց վրայէն ան չարիք-
ները որ վրանին կրճգէին. Թագաւորնալ
յունիսի 19 Արգելով գրելով ան վճռին
վրայ խափանեց. որուն վրայ ժաքոպէննէ-
րը խիստ կրկատղեին, ուր տեղ որ ժաքո-
պէնները շատ հետևօղներ կային աւելի
հալածում կը հանեին քահանայից նաև ամ-
էն ուղղափառաց վրայ տիօն, մառսիլիա,
լիօն, շալօն ու նիմէս քաղաքը, ուր աւելի
չարեր կային. ծեծի տակ կըմեռցընէին էն-

Թէ մինակ չերդվընցօղ քահանայները , հա-
պանաև ուրիշ ուղղափառները երիկ մարդ
կնիկ մարդ , ինչվան տղաքները , մինքելնիկի
մէջ չէթէ մինակ ծեծով հապա նաև թիւ-
ֆէնկով սպանեցին քահանայներ աչխար-
հականներ : Քահանայներուն ձարը հա-
տաւ , սկսան փախչիլ ան քաղքերները ուր
քիչ հալածօղ կային իրենց մանաւանդ փա-
րէզ , ուր բազմութէն ըլլալով կրնային հա-
գուստնին փոխելով պահվիլ , իսկ հայ գըտ-
նալու համար եղան բեռնակիր ջրկիր նման
հին ատենի քրիստոնեից պէս չարչըրկելով :
Ուղղափառները սասնկ կըչարչըրկեին կը-
մեռցընեին , իսկ Թագաւորը մեռցընելու
պատճառներ կըփնտռէին , մանաւանդ օո-
լէանսը որ կուզէր ինքը անոր տեղ Թագա-
ւոր նստիլ . հիմա աս պատճառնալ գտան
որ ուղղափառաց տեր կըկենայ , Թող չի-
տար Ժողովին վճիռը բանեցընել : Յունի-
սին 8 վճռերեին որ փարէզին քով մկ բա-
նակ մը պահեն 20 հազար հոգիի , բայց Թա-
գաւորը չկԹողուց , սակայն Թանը կեօրէ
վճռին վրայ դրելով Վ.բէլը-ո , այլ սուա-
սօն տեղը բանակ մը պահել հրամմեց . աս
վճիռը ան օրը արգելեց՝ որ օր քահանայից
դէմ եղած վճիռնալ արգելերկը որ վերը
յիշեցինք յունիսին 19 :

Վաքօպկնններուն խելքը միտքը որովհետև
մէյմը Թագաւորը ձգել էր՝ մէյմինալ սահ-
մանադրութիը ջնջել Թէ անով ինչու աս-
չափ իշխանութիւն տըվերեին Թագաւորին ,
աս բաներս առաջ տանելու յարմար գոր-

ծիք՝ ժողովրդեան աղմուկ հանելն էր, ա-
նոր համար յունիսի 20 նորին աղմուկ մը
հանել տրվին՝ եթէ անտօն ու եթէ մարկեղոս
ըսված արուարձաններու մէջ. 30 հազար
զինեալ մարդ դուրս ելան, ձամիհանալ 20
հազար մարդ հետերնին առնելով որոնց
գլուխ էր սանթէնը՝ գացին ժողովին հաս-
կըցուցին որ Նապոլէոն չուզեր ժողովուրդը
թագաւորին կամքին հետևիլ, թէ որ ինք-
նալ ժողովրդին կամքին չհետևի, ժողո-
վուրդը իր զէնքը ձեռքէ չվճգեր ինչվան
որ իր խօսքը ձիշդ չկատարվի: Նկսկսայ
յիշեցընել էր թէ ինչու կարգելէ ժողովին
վճռած բանները. ասոնք ըսելէն ետև գացին
ան պալատը ուր թագաւորը կընստեր, մը-
տան ինչվան թագաւորին ու թագուհիին
խուցը, թագաւորին գլուխը դնել տրվին
կարմիր գտակ մը որ ժաքօպէններու նշան
էր, ազգին ողջոյնները համար գլխի խմցը-
նել տրվին: Նթագաւորը անվախ սրտով
ասոնց ամէնէն բանը ըրավ, բայց երբոր ըսին
մենք հոս եկանք ձեռք դնել տալու ժողո-
վին վճիռներուն որ ըրավ քահանայից ու
ազնուականաց դէմ, փարելգին քօշնալ բա-
նակ մը պահելու համար, դուն ինչու Նդ-
գեղմ ըսելով խափանեցիր, ասկից ետքը
ասոնք Նդգեղմ ըսելը վերնայ պիտոր: Նյ
խօսքիս թագաւորը համարձակ պատաս-
խան տրավ, ես իմ գործքերուս համար
ուրիշ կանոն չունիմ որ՝ միայն սահմանադ-
րութիւնը. իրեն վախմընալ չունենալը ցոյց-
նելու համար պահապան զօրքէն մէկը կան-

չէց, ձեռքը բռնեց իր սրտին վրայ դպչելով, նայէ ըսելով աս սիրտս մէկ դող մը ունի. ամէնեւնալ զարմացան իր քաջասրտութեը վրայ։ Մանք կըպատմեն որ Թագաւորին նստած խուցին դուռը կոտրելով ներս մտան, երկու հեղալ զարնել ուզեցին Թագաւորը որ Թող չիտըվին. բէ Թիոն որ գլուխ էր փարիզի միւնիսիբալիտին այսինքն դատաւորներուն՝ տեսնալով որ իրենց մտքի դրածը առաջ չիգնաց, եւ կավ Թողուլի ուզելու Թագաւորին, բայց աղէկ յանդիմանուելի լսեց իրմէ։

Ի դիպուածին վրայ որ 3 ժամ քշեց՝ երկու բաժնըվեցան ժողովուրդը. փարիզցիք ու սահմանադրութէ դին եղողները խնդրեցին ժողովքէն որ վերսիչեալ աղմուկ հանողները պատժէ. ժաքոպէններուն քլիւալը ասոնց դէմ խնդրեց որ Թագաւորը Թախտէն վար իննջեցնէ. ֆաժէդնալ զօրաց դիացէն գալով խնդրեց ժողովքէն որ խռովարարները պատժէ, բայց ազգայինն պահապանները որոնց վրայ յոյսը դրեր՝ առջինը չէին. մէջինները մեծ մասը օռլեանսեան ու ժաքոպէնեան եղերէին, անոր համար աս խօսեցէն ետև վախէն գընաց դուրսի երկիրները փախաւ։ Տեսնալով որ աս աղմուկ հանելնալ պարապ գընաց՝ հալածումը ջարդը նորէն սաստկացուցին դուրսի գաւառներու մէջ. ժաքոպէնները և ուկսնօդ ըսվօղները ձեռվընին ընկած քահանայները կրբռնէին բանտը կընդնէին, դատաւորները ասոնք քննելով Թէ

պէտ անմեղ կրհանէին, բայց անոնք չար-
չարանք տալով կրջարդէին, ասանկ ըրին
պօռտօ, լիմօժ, նաև փարէզի մէջ, շատ
տեղ կնիկները աւելի չարութիւն աւելի կա-
տաղութիւն կրբանեցընէին քան երիկ մար-
դիկ. օրէնք կարգ դատաւորուն չէր ինա-
ցած. 5/4 գաւառներէն դանկատ եկավ Թա-
գաւորին յունիսի 29. խռովարարներուն
պատճառ եղողները պատժել խնդրեցին,
որ յունիսի 20 փարէզ հաներէին: Բայց
աս ձայներս գոցելու համար ժաքօպէնները
րը պատերազմին ձայները կրտաքցընէին,
որովհետև ան ատենները կըլսէին որ նեմ-
ցէն պրուշին հետ մէկ տեղ առաջ կուգայ-
ին ֆրանսային վրայ. ան ատենը վազող
վազողի եղան, կամաւոր զինուոր գրվեցան
արհեստաւորներ աւելի դատարկապորտ
մարդիկներ, անչափ որ 925 հազար զինուոր
ելան աս կամաւորներէն, Թող տուր 203
հազար բուն զինուորները: Վհանի որ ձա-
խորդ կերթար պատերազմին բանը՝ ամէնն
պատճառը Թագաւորին ու չերդվընցող
քահանայներուն վրայ կրձգէին, անոնք
Թղթակցութիւն կընէն կրսէին, նեմցին ու
պրուշը ներս կրկանչէն, ազգը կրմատնեն,
աշատութիւնը սահմանադրութիւնը ոչնչացընել
կուզեն. քանի որ ասանկ Թագաւոր ունինք,
ասանկ չերդվընցող քահանայներ, չիկրնար
հանգիստ ինալ Ֆրանսա, ինչ Թշուառութի
ինչ չարիք որ կրլլան Ֆրանսայի մէջ՝ ամ-
մինալ Թագաւորին ու քահանայներուն
հնարքն է կրսէին. խեղճ Թագաւորը ա-

սոնց դէմ բան մը չէր ըսեր . լուռ կըկե-
նար [1] :

Մադաւորին դէմ եղողները օրէօր հա-
մարձակութիւն կառնէին . միաբանութէ ոտնը
առնել առնելով որ մտիկ էր՝ շատ զօրք
բերել տըվին մառսիլիացիներէն . ամէն-
նալ խենթարիւն ժանտ արիւնկզակ մար-
դիկ . օդոստ . 3 բէթիօն ժողովին առջին
ելավ , փարէզին հասարակութէ դիացին եր-
կան խօսելով խնդրեց որ Թագաւորը Թախ-
տէն վար ձգվի , զըպարտելով որ Թշնամի
է հայրենեաց , օգնօղ է Ֆրանսզի Թշնա-
միներուն , անոր համար պատերազմը ձա-
խորդ կերթայ . ինչ որ խօսք կուտայ չի-
բռներ , ապերախտ է ամէնէն աղեկութէ որ
ազգը իրեն ըրավ չէ՛ճանչնար : Այսանկ խօս-
քերը մերժելուն տեղը՝ վճռեցին որ մէկ
ժողով մը ըլլըվի Հաստրակաց պահպանութեան
անունով հոն քննութէ ըլլըվի , բայց աս քըն-
նութիը դէմ էր ժաքօպէններուն , գիտէին
որ ան ատենը շատ կային Թագաւորին դէմ՝
պիտոր գային չատագովէին , անոր համար
ամէնէն օր իրեն վրայ զըպարտութիւն կըհա-
նէին , ժողովուրդը վախցընելով կըսէին թէ
Թագաւորը իր պալատին մէջը շատ դէնք
կըժողվէ զաղտուկ , միաք ուզի իր տնովը
փախչիլ մեզ ամէնքս ջարդել [2] . Թագա-
ւորը մարդ կանչեց որ գան փնտռեն , բայց

(1) Թագաւորի խոստատէն Թէվադոսի եօք տուբ :
Թէքեալիի էրզագէ Թէզալիւի եօք տուբ :
Ալրանչի էլիզաղ դէրաֆէթ սանմա ,
ալէմտէ սիւքեուրթ կիսլի նէզաբէթ եօք տուբ :

մարդ մը չիգնայ գիտնալով սուտ ըլլալը ։
( )գոստ . 9 բէթիւն ժողովքին առջին եղ-
լալով հասկըցուց որ փարեզ տակն ու վրայ
է . կէս գիշերուն զանկակներ զարնելով
մարդ ժողվելու համար պիտոր խռովութիւն
հանեն , ես հերիք ուժ չունիմ դէմ դնե-
լու , և իրաւ ըսածին պէս գիշերը զանկակ-
ներ զարնելով աղաղակ վերցընելով օգոստ.
10 ամմէն դիւային բաղմուէ ժողվըվեցան .
առաջ փարեզին հասարակուէ ժողովը կամ
խորհուրդը վերուցին , անոր տեղը խռովա-
րար միւնիսիքալիդ դրին , որոնց գլուխ բէ-
թիսը ու մանուելը դրին , յարձակօղնէ-
րուս ժողով մը սահմանեցին , սանթէհնալ
փարեզի մէջ եղած զօրաց վրայ զօրագը-
լուխ դրին , մարսիլիացիներով թագաւո-
րին պալատը փաթթել տըվին ։ Ասոնք
մէյմը խրատ տըվավ թագաւորին իր ըն-
տանեօքը ժողովքին երթալ ապաւինիլ թա
դուհին ասս խրատը մերժեց . անիկայ դար-
ձաւ ըսաւ՝ թէ որ չերթաք պատճառ պի-
տոր ըլլաք մեռնելու թագաւորինալ զաւ-
կըներուդալ քեզիալ . թագաւորը ասս խօս
քիս վրայ վախնալով իր ամմէն ընտանեօք
ժողովքին գնաց ընկաւ . ահա ասս բանս
ժաքօպէններուն յաղթութիւը որոշեց ։ Ա-
տենը ազգային պահապան զօրքը՝ որոնց
մէջը շատ գտնըվելով թագաւորին դէն եր-
դումի ըրերէին քիչ մը առաջ ինչվան ետքի
շունչը պաշտպանել թագաւորը , տեսնա-
լով թագաւորին ձգել փախչիլը՝ սրտեր-
նին կոտրելով ամմէննալ փախան , մնացին

միայն 500 հոգի, 1500 զգվիցցեռւի զօրքով 15 Թօփով որ կեցան պալատը կամ քերդը պաշտպանելու. զգվիցցերցիք յարձակօղներուն դէմ կեցան քաջութիւն ինչվան որ հատաւ ձեռքնին. երբոր Թուր Թուրի եկան՝ յարձակօղները շատվոր ըլլալով 1000 հոգի մը կոտրվեցան պահապաններէն, մնացած 500 հոգին փախան, որոնցմէ քանի մը վենետիկի դեսպանին պալատը խոնալով խալըսեցան: Պատամբները իրենց կատաղութիւը մեռնելնէրուն վրայ Թափեցին, գլխընին կտրելով ձամիըներուն մէջ կըգլտորելին խաղալու համար, աչքնին սըրտերնին աղիքնին կըհանելին. կնիկները իրենց Թաշկինակնին վազած արիւնին մէջ Թաթխելով վիզերնին կըկախելին իբր զարդի համար: Պս խռովութիւը ուինալ քէեց. որչափ Թագաւորնէրու արձաններ կային ամմէննալ վար առին. իրենց ամմէն րրած անգթութիւնին պատմել երկան կըլլայ:

Թագաւորին ընտանիքը ժողովին մէջ երթալով շատ անարգ ընդունելութի գտան, շատ նախատինք տըվին մանաւանդ Թագուհիին դէմ, վռնեցին որ ժողովին մէջը ձեան ինչվան որ փարեզ խաղաղի. Թագաւորին գործադիր իշխանութիւը վերուցին. վճիռ հանեցին ազգային ժողով մը սահմանել որպես զի որոշէ Թագաւորը Թախտէն վար առնելը՝ որ ժողովուրդը միշտ կուզեր կաղաղակեր. իրեն ու իր ընտանեայ նստելու տեղալ որոշեցին լուքսեմպուրկ պալատը. ան գիշերը մէկ պզտիկ խշտյի մը մէջ կե-

ցուցին, եւթը ելան ըսին որ աս պալատը խիստ մենծ ըլլալով Թագաւորին ընտանիքը չեն կրնար հոն ապահով նստիլ, անոր համար 12ին մէկ աշտարակի մը մէջ դրին որ կըսվէր Աշտարակ պաճարի. ան ատենը ուրիշ տէրութենց դեսպանները փարեզ ձգեցին գացին։ Ժողովը ամէն բան ուզածին կէօրէ ըրաւ, միայն մէջնիները կըցաւէին որ նոր ազգային ժողովին մէջ իրենք չկըրնան պիտոր գտնըվիլ, որովհետեւ վէճու կար որ մէկ հոգին չկրնայ երկու ժողովի մէջ մտնալ իրարու ետեւ. ասոր Ճարը ասանկ գտան, իրենք առին իշխանութի ան նոր ժողովին մարդերը ընտրելու, անանկով խիստ չարերը ընտրեցին, երեւելի պաշտօնները անոնց տըվին, բարի մարդիկը դուրս հանեցին։ Ինչպէս անարգ կերպով կըպահէին Թագաւորին ընտանիքը՝ քէհէի անունով Թագաւորին սենեկապետը օրագրութի մը հանած ունի, ուր կըպատմէ ինչ֊վան իր մտհուան օրը որ միշտ իր քովէն էր։ Ան ատենը անհաւատութիը անպետութիը եւ անառակութիը որ շատոնցմընէ կեփեր՝ յայտնի գլուխ վերցուց. 14 օրվան մէջ երդումէ չընող քահանայներուն քշվիլ վըճռեցին, բայց երբոր կուգային Ճամիուն Թուղթը (Թէղքիրէն) առնելու համար՝ բանտերու մէջ կրդնէին. երբոր ձայն առին որ պրուշն ու նեմչին օգոստ. 23 լսնկվի երկիրը մտերին՝ հրամեցին ան մարդերուն քովէն զէնքերը վերցընել որոնց վրայ որ կասկած ունէին Թագաւորին դին ըլ֊

լաշ, ասով տները մտան վիտաւեցին, 29ին անանկները մկ տեղ ժողվեցին, ջըլլայ որ փախչելով խալըսին քշվելին. օրլեանանցը մկ ընդհանուր կոտորած մը կուզեին ընել որպէս զի անով Թագաւորին տուննալ կոտրեն խալըսին. ժաքօպէններըը ընդհանուր կոտորածը կուզեին աս մտքով որ վախ ձգել տան, անով ուզածնին կեօրէ ընտրել տան ազգային ժողովը որ պիտոր ըլլար Թագաւորը վար ձգելու համար, և իրենցմէ կախեալ պահել ան ժողովը։ Իսկ բաներս տեսնալով օրինադիր ժողովը՝ հասկընալով որ բանը գէշի կերթայ, օգոստ. 30 վէհ հանեց ընջել փարեզին միւնիսիբալիդը, բայց ժողովուրդը աղաղակեց՝ պէտք է որ մենք աս աղմուկներըը վայնասուններըը հանենք, դուք չէք կրնար մեր վրէժխնդրութիները արգելել, աս ըսելով ետ դարձընել տվին վէհը։

Իսռովարարներն ու ժաքօպէններըը բաժնըված էին իրենց մէջը, գատ գատ մտքի վրայ կըքալէին, միայն անտեր ըլլալու՝ չարութիւն ընելու՝ միաբան էին. ժաքօպէններուն մկ քլուպը կոտրեց հատուց մկկալ քլուպը, ինչվան ամէնհնուանալ անարգ ատելի եղան. բայց առաջ փարեզին ու ֆրանսան արիւնով լուացին. քանի քահանայ կամ եպիսկոպոս էրդվընցօղ՝ անուննին առին. ձայն հանեցին որ աս քահանայներէն շատը վերադարձել օգոստ. 10 ըզվիցկենտրոնէն հետ մկ եղան ժողովրդեան դէմ Թուր քաշեցին ըսելով՝ վանքերու մէջ բազմաւ բան

տը դրին. Ժաքօպէնները քլուպին մէջը վճռեցին ամէնինալ ջարդել՝ բայց դեռ ծածուկ կըպահէին: Ազգային օրինադիրը ժողովը օգոստ. 26 վճիռը գրեց: "Ամէն "պաշտօնի վրայ եղած քահանայները որ "երդում չէին ըրած, կամ երդումնին ետ "կանչերէին, 8 օրվան մէջ դաւառէն դուրս "ելլեն, իսկ 15 օրվան մէջ ամբողջ Ֆրան- "սայէն, ան չերդվեցօղ քահանայները որ "գործքի մը վրայ չէին՝ ինչվան մահ բան- "տարկեալ մնան. Թէ որ քահանայ մը խոս- "վանի հանելու պատճառ կըլլայ, թէ որ "տեղ մը 6 հոգի քաղքացիներէն ուզեն "քահանայ մը դուրս հանելու, ան քահա- "նայնկերնալ քշվին. Ամէնորդուն ատե- "նը ամէն 10 մէն Ամէնայ առնելու ա- "տենը 3 լիրէ տրվի իրենց ինչվան որ Ֆը- "րանսայէն դուրս ելլեն, ետքը բան մը "չտրվի": ()գոստոսի 10էն ինչվան սեպ- տեմբերի 3 փարեզ եղավ մէկ ահռելի տե- սարան մը. Ժաքօպէն միւնիսիբալիտները իրենց ընկերներով ծառայներով ամէն տեղ վազելով ուր որ Թագաւորի արձան կըգըտ- նըվէր կամ մէկ յիշատակ մը՝ ամէնինալ վար կառնէին կավրէին, ժամերը կըմըտ- նային խորանները կըթալչէին, ամէն բան կըքակէին ինչվան պատուհաններուն եր- կաթները, վանքերէն կրօնաւորները դուրս կըհանէին նաև մարապետները անանկ ար- տորնօք որ չէին հասնիր լաթերնին առնե- լու. Մէջերնին հիւանդները անկարները Ամէնու վրայ ընկած մնային, մէկը չէր

կրնար անոնք ներս առնել. ան չարերը տու-
նէ տուն կըմտնային ամէնն տեղ կըխաո-
նէին որ քահանայ մը պահված չըլլայ, Թէ
որ մէկին վրայ կասկած առնէին որ քահա-
նայ պահերէ տունը՝ շատ փորձանք բերել
կուտային գլուխը։ Քահանայները կար-
ծեցին որ պիտոր քշվին միայն՝ երբոր իրենց
դատաստանին առջին հանեցին՝ ոմանք քա-
հանայներէն յանձնարարական գիր ունե-
նալով մանուէլի վրայ որ դատաւորներէն
մէկն էր՝ կրցան Թուղթ (Թէզքերէ) առ-
նել դուրս ելլելու համար, բայց չիմացան
որ իրենց տարբերուիը աս եղավ որ՝ քան-
տարկեալ քահանայները փարէզի մէջ պի-
տոր մնային, իսկ իրենք դուրսի գաւառ-
նէրու մէջ, որովհետև ամէնն տեղ ապրս-
պըրված էր մեռցընել։

Այս անգամ մանուէլը գնաց կարմելեան
կարգին վանքը ուր քանտարկեալ կային
քահանայները, սալէնս քահանային հետ
ընտանեբար խօսելով ըսավ՝ ամէնքդալ
կասկածաւոր մարդիկ եղաք ձեր մէկ տեղ
փոփրսալուն համար. յատուկ դատաւորնե-
րէն պիտոր դատվիք։ Անիկայ քանը չի-
գիտնալով պատասխան տըվավ Թէ որ դա-
ւաճանուի մը հանելու համար է ատ կաս-
կածը՝ ամէնքնիսալ կարդարանանք ան-
մեղ կելլանք. մանուէլը դարձուց խօսքը
ըսավ, ձեր վրայ քշվիլ որոշված է՝ միայն
գործ դնելու վրայ կըմտածեն, նաև մէկ
Թոշակ մը կապելու, բարբարոսուի է ան-
չափ հոգի քշել ապրուստնին չիհոգալ. ա-

սանկ կըխօսի ան մանուկը որ ապսպըրըր մեծ փոս մը փորել իրենց մեռելը հոն ձգե-լու համար ։ ( )գոսա . 31 մանուկին ու բէ-թիօն մարդ խրկեցին իրենց քշվիլին հաս-կըցնելու . սեպտեմբ . 2 երբոր պարտէզը ժողվըված աղօթքի հետ կին՝ քովի ձամ-փէն անցան դահիճները որ անոնք պիտոր սպաննէին զարհուրելի ձայներ հանելով . ասոնց ձայները առածնին պէս հասամնները որ վանքին մէջը պահված կային՝ անոնքալ ձայներ հանեցին . պատուհաններէն թու-րքը սուրը խաղցընելով քահանայից վրայ հաղար հայհոյանք խօսելով ներս մտան . ան առենը հասկընալով քահանայները իւ-րենց մահը՝ ամէնհնալ պարտէզին ծայրը ժողվըվեցան . ասոնք պարտէզին դուռը կոտրելով վրանին վազեցին երկու քահա-նայ սպաննեցին . ետքը առէքսին արքեպը սպաննեցին որ մարդան մը մէջ ամբողջ օ-րը կեցած աղօթքի հետ եր միշտ , ամմէ-նունալ սիրտ կուտար կըզօրացընէր , դա-հիճը վրան վազեց , դուն չես մի՞ ըսալ ան չարագործ մարդը որ առէքս քաղքին մէջ անչափ արիւն թափել տըվիր . աս ըսելով զարկաւ մեռուց (1) ։ Եցուն եր ան մա-տուռը քահանայներով որ ծունկ չբաժ ան-մէ կըխնդրեին իրենց համար չարաչուչի , դահիճներուն համար ԹողուԹէ . ասոնց

(1) Կէ միւքին տիր՝ չբգա տիլտէն խայալին նագ-չի սուլԹանըմ,
միչէր սեվտաի աշգինդա էօլմ, Թէնտէն չբգա ձանըմ ։

վրայ դահիճները պատուհաններին թիւ-
ֆէնկ պարպելով մեռուցին իրարու վրայ
ձգելով. ուրիշ դահիճներնալ պարտէզի
մէջ եղողներուն վրայ յարձակելով չէին
թողուր որ ծունկ չոքած աղօթքի հետ ըլ-
լալով մեռնէին, այլ իրարու վրայ դիզելով
անանկ թուրերը սուրերը խօթելով կոըրտե-
լով կըմեռցընէին, իրենց երգերը երգե-
լով, հազար հայհոյանք խօսելով։ Դահիճ-
ներուն մէջը կային որ հասարակաց մար-
դոցմէ չէին, այլ իրենց կատաղուիը թա-
փելու համար և հաւատքի դէմ ըլլալով
էկեր դահճի գործ կընէին. 80 հոգի եղան
որը մեռած որը խոցված. ան ատենը դա-
տաւորներուն դիացին մէկը եկավ հրամ-
մեց որ մնացած քահանայները ժամը մըտ-
նան, քայց ժամը մտնալին ետև դահիճնե-
րը վազեցին կուզէին ամէնը հոն սպան-
նել. եկող մարդը տեսաւ որ չկրնար զըս-
պել, աչափս ըրավ որ մէկիկ մէկիկ առ-
ջևը բերելով առաջարկեց կամ երդվընե-
նալ կամ մեռնիլ. երբոր յանձ չառին եր-
կու երկու սպանեցին սուրեր թուրերը խօ-
թելով, կեցցէ ազգն կանչելով։ Ասոնք մեռ-
նողները եղան երկու եղբար եպիսկոպոս, մե-
կալոնք զանազան կարգին կրօնաւորներ.
պենետիքտեանք, ֆրանչիսկեանք, ամէն-
նէն աւելի Ձիզվիթներ որոնք 10 հոգի մե-
ռան, մէկ հոգիմընալ սօռպօնի վարդա-
պետ. 180 քահանայ էին՝ մէկնալ կարգու-
թայ չեղավ, միայն 40 հոգիի չափ խալըսե-
ցան պահվելով կամ ուրիշ ձամփով։

Ին միջոցին մէջ 16 քահանայ Թէզբիրէ ձեռնադրեալով փարէզին դուռը եկան որ անցնին իրենց քշելու տեղը երթան, բայց դռները ասոնց դէմ գոցեցին պատիա տեղը բերին, ուր ուրիշ 15 քահանայ բերելով հինգ կամ 40 եղան. ամէնալ հոն սպաննեցին բայց 'ի մէկէն (1), ուրիշ տեղալ ուրիշներ մեռուցին միայն հաւատքի համար, որոնց մէջն էր անգիան Ձիզվիթը որ աղքատնեաց քարոզիչն էր. ժողովուրդը ուզեց ասիկայ խալսցընել, բայց անզգամներէն չորս հոգի վրան վազելով սպաննեցին. շատալ աշխարհականները ասանկ սպաննեցին հաւատքի համար ու թագաւորի դին ըլլալու համար. սեպտ. 3 որ Փիրմինոսին դպրոցերէցին մէջ 90 քահանայ սպաննեցին, մեռելնին պատուհանէն վար ձգեցին, Թէ որ մէջերնին կխօսմեռ գտնըվէր՝ հոն եղած ժանտ կնիկները կուգային գլխընին զարնելով կմեռցընէին, մկրատով մեռածներուն աչվերները կըփորէին, գլխընին ձեռվնին կկտրէին։

ԻնգԹուԹիը ան ծայրը հասաւ որ՝ ժիռօնտեան ըսված ժաքօպէններնալ խղճալով գնացին տանԹօնին աղաչելին ասոնք զսպելու՝ որովհետև մէջերնին շատ անմեղներալ կըպտնըվին ըսելով. տանԹօնը պատասխան տըվավ մի վախնաք մէջերնին մէկ անմեղ

(1) Եբրիշտ սէվգեթի մուբտաէ հէր քես պաղի լուԹֆինէն,
հէման պիր պախԹը սէյահ սէյեարէ պէն գալտըմ չէպի ղուրմաճաէ։

մընալ չկայ . ասով ազատուել տըվալ աս
դիս ան դէն քահանայ ու աշխարհական
մեռցընելու . տօֆէնին հրապարակին մէջ
կրակ մը վառերէին , ան կրակին առջեն կա-
մայ կամաց կըխօրվէին ( քեպապ կընէին )
քահանայներ՝ ազնուականներ՝ կնիկներ՝ աղ
ջկներ՝ առանց մէկ պատճառի մը բայց
եթէ իրենց զուարճութիւնը համար . 5 քա-
հանայ քիչ քիչ խորվըվելուն տանջանքը չի-
քաշելուն համար՝ իրենք զիրենք բոցին ( ա-
լէֆին ) մէջը ձգեցին : Տանթեանն ու Չա-
ապակայ պահպանութեան ժողովը դուրսի գա-
ւառներնալ հրաման խրկած էին գաղտուկ,
որ ամէն տեղ քահանայները՝ թագաւորին
դէն եղողները՝ սահմանադրութիւը պահել
ուզողները՝ սպաննեն ինչպես որ փարեզ կը-
նէին . աս հրամանը առածնին պէս ժաքո-
պէններըը որ ամէն տեղ կըգտնըվէին՝ ամ-
աւելի սաստկացուցին իրենց բարբարոսու-
թիւը . օռլեանս գաւառին մէջ 57 հոգի բըռ-
նըված կային որոնց վըրայ քննութիւն պիտոր
ըլլար . ասոնք ամէննալ վեռսայլա բերե-
լով սպաննեցին . ասոնց մէջն էին պռեսաք
դուքսը ու մօնտէսկին եպիսը . 7 քահանայ
քանտարկեալ կային վեռսայլա՝ անոնքալ
մեռուցին . օխտնալ մէօ քաղաքը կային՝
անոնքալ սպաննեցին , թէպէտ և դատա-
ւորները ուզեցին ձեռվըներէն առնել . ուէ-
լիմ քաղքին մէջ աղեքսանդր կանոնիկոսը
ողջ ողջ երեցին , թող տուր ուրիշները որ
պայօնէդդա խօթելով սպաննեցին . լիոնի
մէջ սեպտ . 2 փարէզէն աւելի ջարդ պի-

տոր ըլլար, բայց մարդավար քաղաքցիք
մէջերնին վազելով դահիճներուն ձեռքէն
առնէին խալսցուցին, 5 քահանայ միայն հոն
սպաննեցին, ուրիշ քաղաքներու մէջալ ա-
սանկ ազատօղնէր եղան, ուր տեղ որ փա-
րէզին չափ չէր հասած բարբարոսներէն:
Ա՛Յ ողորմութիւնը ըրավ որ մէկալ դիացե-
նալ թէզքիրէ կուտային չերդվեցօղ քա-
հանայներուն ֆրանսայէն դուրս ելլալ. ա-
նանկով 50 հազարի չափ եկեղեցականք կըր-
ցան դուրս ելլալ. իրենց տեղը մնան կար-
գուրացներ՝ երդվեցօղներ. տեղ տեղ մի-
այն շատ անգթութիւններ կրնէին ժաքօպէն-
ները, հարկ կըլլար դուրս ելլօղներուն պը-
տոյտ ձամփաներով ասոնց ձեռքէն փախ-
չիլ. տեղ տեղալ պաշտպաններ կրգտնայ-
ին որ ասոնց գթութիւն ընելով փախչելու
ձամփաներ կըսորվեցընէին. ասոնք աւե-
լի հալածօղները եղան կարգուրացները.
ասոնցմէ մէկը անանկ ըրավ որ՝ 80 քահա-
նայ ինկիլզեռա գացօղ ջարդել պիտոր
տար՝ պայէնաին մէկ դատաւորը խալսցուց,
բայց որչափ ըստակ որ վրանին կար առնե-
լով դահիճներուն տալով որ եղավ 20 հա-
զար լիրե: Շատ տեղ գիշերները գաղ-
տուկ ձամփայ ընել տալով փախուցին քա-
հանայները. բայց նաւապետին մէկը տիւ-
շէզ անունով մեծ որոգայթ մը ըրավ քա-
հանայից. ոման քաղաքը թուղթ գրաւ ծա-
նուցում ընելով որ օսդէնտա պիտոր եր-
թար, ով որ ուզէ կրտանի չափաւոր նաւ-
լուն առնելով. աս լսելով 230 եկեղեցա-

կանք իրեն նաւը մտան. բայց ասիկայ խօս-
քը մէկ ըրած ուշեն նալով ժաքօպէններուն
հետ քվիլպէօֆին առջին կեցուց նաւը.
հոն 4000 գեղացիք Թափեցան նաւուն մէջ
ժաքօպէններէն խրկըված, աս քահանայ-
ները զարնելով ցամաքը հանեցին մեռցը-
նելու մտքով. հոն եղող դատաւորները աս-
ւոփս կրցան ընել որ՝ սպասել տըվին ին-
վան փարելին հրաման գար՝ամէնն ալ բան-
տը դրին. եւ էն նոյնպէսմընալ բերին,
մեռցընելու օրնալ որոշեցին, բայց ռօս-
նէն զօրք գալով Թօփ նետելով անզգամնե-
րը ցրուեցին, քահանայները խալսցուցին
ռօսան տարին, բայց ամէն բանէ Թալը-
ված, որոնց մեծ մասը ան չար նաւապե-
տը առավ։

Ե ատ քահանայի նաև եպսիալ եղավ որ
Թէզքերէ չիտըվին, և որովհետև չէին կըր-
նար Ֆրանսայի մէջ կենալ՝ Ճարերնին հատ-
նելով յորեկները անտառներու քարայրե-
րու (մաղարաներու) մէջ կըպահվէին,
դիշերները անՃանաչ պտոյտ ու վտանգա-
ւոր Ճամբայները կըպտըտէին, անանկով
կեանքերնին լծցուցին մեռան. իսկ փա-
խըստական քահանայք ելան ցրուեցան ի-
դալիա, սպանիա, ֆիլէմէնկ, ըզվիցեռի,
նեմցիստան, ինկիլդեռա, ասոնք Թեպէտ
դուրս ելան Ֆրանսայէն՝ բայց ամենևին
մերկ՝ բան մը չունեցող, որոնց շատ տեղ
աղէկ ընդունելութիւն ըրին. ամէն տեղէն
աւելի ինկիլդեռա, որոնք Թեպէտ օտա-
րահաւատք՝ բայց աս ողբմալիներուն վրայ

խղճալով սեր ցըցուցին. մկըրտին Թուղթ հանեցին կամաւոր ողորմութիւն գրելու. անանկով առատ տուրք ժողվելով խիստ աղէկ հոգացին նայեցան իրենց քով փախչողջ ֆրանսըզները որ 8000 կային, եպսկոպոսները քահանայները կրօնաւորները մարտպետները. ինչվան վանքի պես տեղվանք չկնեցին ասոնց համար, ժամերը բացին. ասանկալ սըրբազան պապը իր հռոմայոց երկիրը եկող-ներուն ամէնն բանէրնին հոգաց նայեցաւ, որոնք 2000 հոգի կային:

Այս պատմածնիս հաւատարիմ մնացած ժողովրդեան քաշածներն են, որոնց ամէնն քաշածները տանջանքները պատմելու կամ լսելու՝ մարդու սիրտ չդիմանար. Ալիզիթ քահանային մկրը 3 հատորի մէջ ժողվեց տպեց միայն ան ուղղափառ նահատակներուն մահը՝ որոնք ականատեսներ եղած ատջին վկայութիւն տըվին ստոյգ ըլլալնուն համար. ան գրքին մէջը կըկարդաս աւելի տանջանքներ քան ինչ որ ըրին դեկոս, ներոն, դիոկղետիանոս հին ատեններ քրիստոնեից վըրայ, անանկ որ մարդուն սիրտը չդիմանար կարդալու: Այդ ժաքօպէնները աչքը աւելի Թագաւորին տունը չարդելու վըրայ ըլլալով հիմա անոր քաշածներնալ պատմենք:

Ամպալ իշխանուհի մը կար որ Թագուհիին խիստ սիրական ըլլալով ինքիրմէ եկեր մտերեր ան աշտարակին մէջ ուր որ Թագուհին կըկենար իրեն ընկերանալու համար, անզգամները ասիկայ Թագուհիէն զատեր դուրս հանեցին, իսկ հիմա գլուխը

կտրելով սուրի մը ծայր անկեցին. սիրտ-
նալ հանեցին Թուրի մը ծայր անցուցին,
եկան մէկ պատուհանի մը առջին վերցընե-
լով ցոյց տըվին, ուր որ Թագաւորին ըն-
տանիքը հաց կուտէին. բայց անոնք հացէն
ելած ըլլալով՝ ան ատենը հացի նստած էին
Թագաւորին սենեկապետը քլէուի, դիսօն
ու իր կնիկը. աս կնիկը մէկէն տեսնալով
ան գլուխը Ճանչցաւ, վախէն վայնասուն
փրցուց. անզգամները կարծելով որ Թա-
գուհին է՝ սկսան բարձր ձանով անկարգ
ծիծաղներ վերցընել, ուրախութէն ցաւ
կուտէր։ Ա՛ս օրվան համար մէկ միւնիսիբա-
լիդ մը ընտրըված էր, որ չորս պատուի-
րակներով եկավ բռնադատեց Թագաւո-
րին ընտանիքը պատուհանին առջին գալ,
բայց որովհետև ուրիշ միւնիսիբալիդներ
Թող չտըվին որ ան աշտարակը պահօղ
էին՝ նէրս մտաւ զուրցեց Թագուհիին. քէ-
նէ կուզէին գոցել լամպալին գլուխը՝ որ կը-
ցըցընենք տեսնալու հասկընալու համար
Թէ ինչպէս ժողովուրդը իր վրէժը կրնայ
առնել բռնաւորներէն։ Ա՛ս լսածին պէս
Թագուհին մարեցաւ ընկաւ, հազիւ կրցան
անոնք դուրս հանել աշտարակէն. շատ
կուուեցան ժողովուրդը արգելելու՝ որ կու-
գէին Թագաւորին նստած տեղը ելլալ քար-
դել, որուն համար օրէնսնոը միշտ դըրդե-
լու փչելու հետ էր։

## Ներսէս Տէրեանէն Հաւաքուելէ Քրանսայի, որ է Ազգային Դաբանութիւնը. 1792–1793.

Եպտ. 21 օրինադիր ազգային ժողովը հրատարակեց որ իրեն ժողովելիը դադրեցաւ, անոր տեղը Ազգային Դաբանութիւնը յաջորդեց. ասիկա ժողովին մեծ մասը ժաքոպինները էր ժողովեալ ըլլալով մեկին ըսածին պէս ճնաւ արեան մէջ, ապրեցաւ մեռաւ արեան մէջ: Իր ճնած կամ առնչի ժողովեալ օրը որ եղաւ սեպտ. 21 Թագաւորութիւնը ջնջեց, հասարակապետութիւնը սահմանեց. ասիկա օրէն՝ ըսել է 1792 սեպտ. 21էն սկսաւ Ֆրանսային նոր Թուականը, որ է Թուական իրենց նոր Հասարակապետութեան, որ ամսոյն 25ին անուանեց Հասարակապետութիւն և անբաժանելի:

Ինչ որ՝ ան ատենն որ կուզէին Թագաւորը սպանանել՝ նեմզէն ու պրուշը կինչման վէճ ելեր էին, փարէզին կըմտիկնայի. ասիկա Թշնամիներէն խալըսելու ձարը նոյն Թագաւորէն գտան. իրեք հոգի իրեն առնչին ելան որոնց մեկին եր բեթիօն՝ ըսին Թէ որ կուզես քուկին ու քու ընտանեացդ ողջ ծնալը՝ պէտք է գրես Թշնամիներուն որ վերջացընեն իրենց առաջ գալը. երբոր պրուշը առավ Ֆրանսայի Թագաւորին գիրը՝ ուր կըգրեր Թէ իրենց առաջ գալը ի-

ըեն համար գեշ կըլլար չէթէ ալեկ, մ-
կէն քաշվեցաւ գնաց նեմչկներէն բաժնը-
վելով, որոնք հոն մինակ մնալով 20 հազար
հոգիով տակար մնացին, ֆրանսզները ամ-
մէն ուժով վրանէն վազելով ստորին նա-
հանգները առին, մեծը շատ անկարգութ-
ըրին. թէպետ և փարեզի մէջ անանկ ձայն
հանեցին որ իրենք ֆրանսզները ծեծկըվե-
լով վռնտեցին պրուշը։ Ա։ նոր ժողովին
միաքը որովհետև Թագաւորը սպանեել էր,
14 հոգի կեցուց աս բանիս վրայ խօսելու.
անոնցմէ մէկը վալազէ անուն նոյեմբ. 6
սկսաւ ամբաստանել թէ Թագաւորը շատ
ըստակ ֆրանսայէն դուրս հանել տըվեր էր,
Թշնամիները շամբայն գաւառը գալ կան-
չեր էր, և այլ ասոր նման բաներ. վաղուան
օրը մայլը երկան բարակ խօսեցաւ թէ քրիս-
նուԹիւնը ինչպէս պիտոր ընկեն. բայց ինչ
յանցանք որ գտնային Թագաւորին վրայ՝
ուրիշ պատիժ չէին կրնար տալ իրենց սահ-
մանադրուեր կեօրե բայց եԹէ Թախտէն
վար ձգել, որ արդէն ձգերէին. անոր մա-
հուան դատաւորը չէր կրնար աղգային միա-
բանութիւը ըլլալ, պատճառն որ ինքն էր
ամբաստանող ու դատախազ (տալճէ).
արդ դատախազ և միանգամայն դատաւոր
ըլլալ մէկ օրինք մը Թող չիտար։ Ա։աքօ
պէհներըը հնարք մը գտնալու համար՝ մէկ
վէռի ձև մը հանելով ժողովրդեան մէջ
ձգեցին, հասկընալ ուզելով իրենց միաքը,
կարծելով որ մէկը չիշխէ պիտոր դէմ խօ-
սելու. բայց նոյեմբերի 6էն ինչվան 15 շատ

գրուածներ տեսան ան վճռին ու բերած պատճառներուն ստուգիը ոչնչութիը ցըցնող. ամսոյն 15 նստան քննութիւն ընել Թագաւորին դատին (տավային) վրայ, մէկ վկիս մը առաջարկեցին ուր իբր ապացուցեալ կենթադրվեր Թագաւորին սուտ երդվընցող ըլլալը, Ֆրանսայի մատնիչ, Թշնամիներուն շատ ըստակ կերցընող. հաղարաւոր Ֆրանսզ սպանելէ տրվող, անոր համար կրնար պատժվիլ կըսէին կամ բանտարկելով կամ քշելով և կամ մեռցընելով. քանի մը օրվան մէջ շատ գրուածներ ելան Թագաւորը արդարացընող, բայց աս ամէնն արդարացընող Թուղթերը գաղտուկ գողցան, Թէպէտ և վկայները դեռ ողջ կեցած էին՝ որ կրնային սուտ հանել ան գրպարտութիները:

Յաղորդուրդը կաղաղակէր որ արդարութիւն ըլլայ, դատաստանի օրէնքով կանոնով քննութիւն ըլլայ, որոնց պատասխան տրվավ պուռտոն ժաքօպէնը, Ռոբէսպիէռ ու Ֆաբր դ՚Էգլանթինէ՝ ամբաստանութենէ համաձայնութենէն է: Յակոբինեան անգութ մարդը կուզեր որ բանի մը չհնայելով շուտ մը լմընցնեն. պուռպօղ մէյմը դեկտ. 6 վճռել տրվավ ժողովին որ Թագաւորը դայ դատաւորներուն առջին քննըվելու համար. քանի մը մարդ յանձնեցին իրեք օրվան մէջ ներկայացնել ինչ ամբաստանութիւն որ կան Թագաւորին վրայ, ան միջոցին մէջնաև ուտելիքները քիչցուցին փարեզին մէջէն որպես զի Թագաւորը պատճառ բռնեն: Յանկով

ամսոյն 10ին՝ Մկիկն կանչեցին Թագաւորը առանց իրեն իմաց տալու առաջուցմէ. սանձ Թէոը Թագաւորին Թևէն բռնելով ինչպէս որ յանցաւորները կըբռնեն՝ անանկ առապայէն հանեց քերաբ քննըվելու տեղը պղտիկ աԹոռի մը վրայ նստեցուց. ինչ ամբաստանուԹ որ իրեն վրայ ըրին համարձակ պատասխան տըվավ, զըպարտուԹինէըը մերժեց. Մկիալ բանէրուն որ իր կառավարուԹէ ատենը եղած էին պատասխան տըվավ որ՝ ես ամէնն բան նայերեմ իմ աղգիս աղէկուԹէ համար ընելու, բան մը չեմ ըրած օրէնքի դէմ. Թէ որ իմ պաշտօնատէրերս ըրերեն՝ ան բաները ես չեյտեմ, շատ բաներալ իմ կամքիս դէմ էն եղած, ես ան բաներուն համար պարտըկանուն չունիմ պատասխան տալու։ Յետքը խնդրեց որ իրեն ցըցընեն ան ամբաստանուԹիներն ու ԹղԹերը. Թող տան որ իրենալ ջատագովներ ընտրէ. շատ ԹըղԹեր ցըցուցին իբր իրեն գրածը որ սուտ էին. քանիմը ԹուղԹալ Ճանչցաւ միտքը բացատրեց։ Երեկվան տարին իրեն տեղը տաՃարին աշտարակը, բայց տեսաւ որ ամէն բան անկէց վերցուցերէին ինչվան իր գրիչը. իր ամէնն ընտանիքնալ անկէց հաներ էին. աս բանս իրեն խիստ դէմ եկավ մեծ նեղուԹէ բերավ. ժաքօպէնները չէին ուզեր Թագաւորին ջատագովօղ տալ, և ոչ ատեն տալ ջատագովելու ան մարդը որ իրենք հարկաւորապէս պիտոր դատապարտէին, ասոր վրայ շատ վէՃ ելլալով միա-

բանուԼՁԵ ժողովքին մէջ՝ վերջապէս Թո-
ղուցին, բայց անչափ քիչ ատեն տալվին որ՝
ոչ ԹղԹերը կարդալու և ոչ քննելու ատեն
կըմնար։

Մադաւորը իրեն չատագովող և խորհըր-
դական ընտրեց դուռնչը ու դառաժը, առ-
ջինը գեղը ըլլալով լսածին պէս վազեց և-
կաւ. երկրորդը հիւանդ ըլլալով չեկաւ,
իր տեղը խրկեց լամուայնօն ու մալսհեռ-
պը. աս երկուքը իրենց ընկերը առին տէ-
սեղ երիտասարդը որ Ձարտար փաստաբան
էր։ Մադաւորը հասկընալով իր մահուան
վտանգը դեկտեմ. 14 իր կտակը ըրավ[1].
26ին նորէն բերին հարցման տեղը՝ իրեք
չատագովողալ իր հետը. տեսնդ հոն աղէկ
պաշտպանեց Թագաւորը ամէնն ամբաստա-
նուԹեց վրայ, վերջը ասով կոՁկեց իր խօս-
քը, ամէնն եւրոպա լսավ ձեր ըրած դա-
տաստանին կընայի, անանկ բան մը չընէք
որ ետևի եկողներուն առջին ծաղը ըլլաք։
Ասոնք կըսեր ամչցընելու համար՝ բայց ժա-
քոպէններուն քով ոչինչ էր սեպված ամե-
Թը. միայն Թէ ժողովին մէջինները ամէնն
նալ մէկ մտքով ըլլալով մենծ կռիւ բաց
վեցաւ ան չատագովուԹե ետևէն. մէկ քա-
նին ըսին որ առջի հին աւագանեաց ժո-
ղովքներուն ձգենք աս դատը (տավան),
ասոր վրայ խիստ տաքցան ժաքոպէնները,

(1) Սալըպ խամանէ տիլ ֆիւլքիւն ղամինէ օլմու-
չէմ պէրպատ,
մուխալիֆ ըիւղիւեար ոլը, էմմա քօ էսսին հէր
չի պատա պատ։

ժողովին գլխաւորին վրայ սպառնացան, ասոնց հետևեցան նաև ան դատաւորները որ Պոէպէն (տրիբուն) կըսվէին, նաև կնիկները, ասկէց վախ կրնալով մկրէրնին վճռեցին որ ազգային միաբանութիւնը իր ամէն զորձը թող մկ ղի ձգէ, միայն Թագաւորին դատը նայի ինչվան որ լմնըցնէ։ Ալ սխենալուն պատճառը ան էր որ՝ ամբողջ ֆրանսայի մկջ հազարաւոր քլուպ կըլլար՝ որոնց վրայ իշխող կառավարող փարէզ եղած քլուպն էր. ասոնց մկջէն միշտ դանկատ կելլար ազգային միաբանութէ վրայ Թէ չուզէր Թագաւորին մեռնիլը. ով որ չուզէր անոր մեռնիլը Թշնամի է հասարակապետութէ, ձեռք տըվող է Թշնամիներուն որպէս զի նորին կեցընէ ատելի միապետութէը. ասանկով Թէ որ ժաքօպէնները կամքը չկատարվէր՝ Թագաւորը չմեռնէր՝ ամէն ժողովուրդը ոտք պիտոր հանէին սպաննել պիտոր տային ազգային միաբանութէ մկջէն անունք որ դէմ կեցան Թագաւորին մեռնելուն։ Վերջս մկյմ որ գլուխ էր ժիռոնտեան ըսվօղներուն՝ իր մկ կաղեդային մկջը շատ վար գարկաւ ժաքօպէնները. ասոր վրայ շատ տաքնալով երդվընցան անիկայ ու իր ընկերները մեռցընելու։

Այս ատենները պէտքաւանտ որ առաջ վէզիր էր եղած երկու Թուղթ հասուց, որ խիստ աղէկ կըջատագովէին Թագաւորը երկու գլխաւոր ամբաստանութէով վրայ, բայց ժաքօպէնները անանկ օր երեան հանեցին

ան Թլթերը որ բանը բանէն անցերեր , օ-
գուտ մը չեր ըներ ։ Վ Կ՚ելավ մկրչէրնին
Թէ ինչ կերպով մտածվի Թագաւորին դա-
տին (տավային) վրայ · պուայեռ ֆօնֆռէտ
աս կերպս առաջարկեց որ ամէնէն գէշն
եր ։ ա · Ո՚զգային միաբանութիները Թող ա-
ռաջարկէ , արդեօք լուիզը ուզերէ դաւա-
ճանութիւն մը հանել ազգին ազատութիները
ավերելու ֆրանսային ապահովութիւնը վտան-
գելու համար ։ բ ։ Ո՚րդեօք իր դատաստա-
նը պէտք եր ձգել առջի հէն աւագանեաց
ժողովներուն տակը ։ գ · Ո՚ինչ պատիժ պէտք
է վճռելու ։ Ո՚սոր վրայ որոշեցին որ 1793
յունվ · 15 քննութիւն ըլլըվի · 721 Հոգիէն
որ ժողվըվաճ էին՝ 683 Հոգի վճռակ ձգե-
ցին առջի բանին համար Թէ պարտաւոր
է · մեծ մասը անոնցմէ՝ միայն Ո՚յո՝ մը ըսե-
լով անցան , միւսայծնները ըսին , մենք ա-
նանկ կրկարծենք որ մեզի չէ՛ինար աս ամ-
բաստանվաճ լուիզիին դատաստանը կտրե-
լու ։ Ա՚րկրորդին համար 273 Հոգի ուզե-
ցին առջի աւագանեաց ժողովներուն յանձ-
նել վճիռը · 424 էէ ըսին ։ 24 Հոգի չուզե-
ցին իրենց կարծիքը կամ վճռակը տալու ։
Ո՚ւ վճռակ ձգելը լմնալէն ետև ժողովին
գլխաւորը բսավ , որովհետև լուիզ յանցա-
ւոր եղավ ազգին ազատութէ ու երկրին
ապահովութեան դէմ , իրեն վրայի վճիռը
պէտք է որ ժողովրդին որոշմանը յանձնենք ։
Ա՚ռաքօսկենները իրենց դիւայէն վճռերէն
Թագաւորին մեռնիլը , բայց ինչպէս որ կը-
պատմէ քլէռի սենեկապետը՝ Հասարակայ

կարծիքը միշտ Թագաւորին դին էր, մինչ չէր հաւատար որ ազգային միաբանութիւնն ան աստիճան հասնի որ Թագաւորը մեռցընել վճռէ. ժողովուրդը աս իրենց կարծիքը ինչպէս Թատրոնի խաղերուն մէջը կըցըցնէին. աւելի ցըցուցին հեղ մը վօտվիլի մէջ եղած Թատրոնին ատենը, ուր երբոր շուշանայ խաղը կըձևացընէին՝ շատ հեղ ազաղակեցին, [illegible] ասիկա ֆրանգաստանի պատմութիւնն է. ասոնք իսօսքս իբր երկու ծերերու դէմ կըզուրցէին, բայց մտիքնին ազգային միաբանութեան ժողովին դէմ զուրցել էր։ Մանաւանդ գտնըվեցան որ կարծելով Թէ Թագաւորը կրնայ ըստրկով խալըսիլ՝ ձեռքի տակէն ուզեցին իրեն ըստակ տալու, բայց անիկայ չուզեց, ըլլայ որ իր պատճառով անհանգստութիւն մը քաշէին։ Ժողովուրդին ասանկ Թագաւորին դին ցըցընելը արտորցուց Թագաւորին մահը. ժաքոպէնները վախի մէջ կրնային աւելի գրգռվեցան շուտով անիկայ մեռցընելու. փարիզին արուարձաննները լեցուն ըլլալով աղքատ ու կոպիտ մարդով, որ վաճառ ըլլալով ժաքոպէններուն օգնականներուն ըստրկովը ապրիլ, պատրաստ կէին օգնականանալու ուզածը ընել, ամէն գանութիւն քանեցընելով. ժաքոպէններուն գլխաւորները յայտնի մահ կըսպառնային ժողովականաց վրայ Թէ որ իրենց մտքին դէմ վճռակ ձգելու ըլլային։

Ժողովելու օրը որ կրսվի օր Բողոքման՝ որոնց վրայ որ կասկած ունէին, ժողովարանը մըտ-

նալու ատենը շատ գէշ բաներ ըրին. մաս-
սիլիացիներնալ իրենց միաբանեալներովը
մարտ դաշտին մէջը ժողվուած էին ամէն
չարիք ընելու իրենց կամքը առաջ տանե-
լու համար: Ամէն օրինքին կէօրէ երբոր
մէկ յանցաւոր մը օրինապէս քննելով պար-
տաւոր կելլայ՝ անոր մահուան պատիժը տա-
լու համար պէտք է որ դատաւորներէն գո-
նէ իրեք մասին երկուքը մեռնելը վճռեն,
որպէս զի ան մարդը մեռցընեն. բայց հի-
մա ազգային միաբանութիւնը վճռեց որ՝ մի-
այն մէկ վիճակմընալ կէսէն աւելի եղա-
ծին պէս՝ հերիք ըլլայ լուիզը մեռցընելու:
Յունվ. 16 եղավ օր վճիռը տալու. ամ-
բողջ օրը խօսելով բան մը չկրցան որոշե-
լու, գիշերն ի լուս հարկադրեցան խօսա-
թելու, որովհետև ազգային միաբանութիւնը
վճռերէր չարձրկել ժողովը ինչվան որ չիլը-
մընցընէ լուիզին բանը. երբոր լմնցաւ՝ ժո-
ղովին գլխաւորը յայտնի ըրաւ որ 721 հո-
գիէն 387 մեռնելու համար վիճակ ձգեց.
334 հոգի ուրիշ պատիժ մը տալու համար
ձգեց, 5 հոգի վիճակ չձգեցին, 23 հոգի
դուրսն էին, անանկէնէ ըսաւ լուիզին պա-
տիժը՝ է պատիժ մահուան: Այլ թէ որ
իրաւ է վալազէին ըսածը՝ վիճակ համրող-
ները որ ժաքօպէններն էին՝ խարդախուի
բանեցուցին. չմեռնելու վիճակները որ
համրանքով շատ էին՝ մեռնելու վիճակ-
ներն է ըսին. ասոր բանս խռովուէ հանեց,
ստուգելու եռևէ իմալով ասչափ հասկը-
ցան որ՝ վիճակները միայն 5 հատ աւելի

էին եղած, աս հինկնալ ոչինչ կըլլար՝ թէ որ վերոյիշեալ դուրսը եղող 5 հոգինալ վէճակ ձգելու ըլլային. հասկըցվեցաւալ որ առջի հեղուն համրելու ատենը կամ սխալ եր եղած և կամ խարդախութիւն. ա սոնք անանկ բաներ էին՝ որ ոչինչ կընէին ան վէճակընկեցութիւնը։

Ժողովին ատենը գլխաւորին ձեռքը երկու Թուղթ եկան, մէկը Թագաւորը պաշտպա նօղներուն դիացին, մէկալը սպանիային դիացին, ասոր բանը ժողովը ձգեց ցորեկ վան, իսկ առջինին համար ըսաւ որ ժողո վը լմնալէն ետև մտիկ դնենք, ինչպես որ ըրին։ Տէսէզ փաստաբանը կարդաց Թա գաւորին բողոքումը որ կըներ առ ժողո վուրդն իր մեռնելուն վէճին դէմ, բայց ասոր նալ ետև սպանիային գրվածնալ մեր ժեցին, իրեք հոգի ռօպէսբիէ պառէ ու կվատեդ՝ Թագաւորին բողոքման դէմ խո սեցան. խորհուրդնին միայն աս եղավ որ՝ արդեօք արտօրան Թագաւորին մեռնիլը Թէ կախ Ժողուն, ասոր վրայ շատ օր վի ճէլէն ետև ժաքօպէններուն խօսքը վրայ ելլալով վճռեցին որ յունվ. 21 լուիզ Թա գաւորը մեռցընեն 24 ժամու մէջ։ Իրբոր Թագաւորին իմաց տրվին իր մեռնելուն համար՝ հանդարտ սրտով լսելով Թուղթ մը տրվավ ուր իրեք բան կըխնդրեր ազ գային միաբանութէն, շուտմը պատասխա նը կուզեր. մէյմը իրեք օր իրեն միջոց տալ մտհուան պատրաստուի տեսնալու համար. երկրորդ՝ իր ընտանեացը հետ համաբաձակ

տեսնելիս. երրորդ՝ Թող տալ իր ընտանեացը ազատաբար քաշվելու նստելու ուր որ ուզեն, իրեն ծառայութեէ մէջ եղողնէրուն վարձքերնին Թոշակնին տալ։ Վ։ Թոշակնին տալը՝ իրեք օր միջոց տալը չըրնան, իսկ իր ընտանիքը տեսնալու չնորհէցին իրեն, խօսք տրվինալ զանոնք հոգալու, բայց Թէ ինչպէս հոգացին՝ ետքը ուսնիս կարդալու։

Ա։ Ազատաւորը իրեն խոստովանահայր ընտրեց ինկիլիզ ուղղափառ քահանայ մը որ փարիսեզ կրնստեր. Ֆրանսեզ քահանայ մը չընտրեց որ մեկ վտանգ մը չըլլայ քահանային. իր ետքի օրը շատ անգթութիւն ցցուցին. խիստ ցաւ ու անդուլ մարդիկ խրկեցին քովը պահապան կենալու, աւելնալին մինակ չթողուցին, հայ կտրելու դանակնալ քովէն վերուցին չըլլայ Թէ ինքիր զինքը մեռցընէ. բայց Թագաւորը հանդարտ սրտով հայը կերաւ, կես գիշերին ետև պառկելու գնաց հանգիստ քնացաւ. արթննալին ետև պատարագ տեսնալով հաղորդութիւն առնելով անանկ պատրաստըված կեցաւ. քէհվի սենեկապետին յանձնեց իր ընտանիքը, ապսպրեց իր որդւոյն ծառայել։ Վաբվանց կանուխ սանթէխը եկավ միւնիսիբալիդնէրով տասը հատասող Թագաւորը տանելու. դուրս ելլալու ատենը Թագաւորը իր ձեռքովը տրվավ իրեն կտակը քահանայի մը որ չառավ. ուրիշի մը տալով մնաւ առապան իր խոստովանահայրնալ երկու հատասալ մեկ տեղ։ Ֆրենկիստան

որովհետև սովորութիւն կայ որ՝ մկկ մահա-
պարտ մը խալըսելու համար մենծ (բիձակ)
մը կամ ժողովուրդը Ը՞ոչխ կաղաղակէ,
անոնց խնդիրքին համար չեն մեռցըներ՝ ու-
րիշ պատիժ մը կուտան, հիմա ամմինուն
մահ սպառնալով սպսպրերէին ասանկ բան
չխնդրել, բայց Թագաւորը դուրս ելլելու
ատենը՝ ժողովուրդը չդիմանալով Ը՞ոչխ
կանչեց, լալով հեկեկալով հետը գնաց. եր-
բոր հասան քառուսել ըսված հրապարակը՝
հոն Թագաւորը ելավ ան բարձրաւանդակ
տեղը՝ ուր որ գլուխը պիտոր կտրէին, տես-
նալով բարձրէն անչափ բազմութիւն ժողո-
վրդեան ամուր ձանով ըսավ. Ջրա՞ծողներ եա
չընե՞նմ անվեղ, չընե՞ր եմ ընծամի՞ներուս, չբիաղ-
չամ որ եմ մահս հե՞ղընե՞, հոս հասածին պես՝
սանթեխը զարնել տըվավ տավուղները որ
խօսքը չիլսվի, ըսավ երեն, եա ֆեղ հոս բերի
մե՞նելու չէ ըե խօսելու համար։ Ասկոյն դա-
հիճները մազերը կտրեցին, ձեռ վրնները
կապեցին, որուն վրայ խիստ նեղելով Թա-
գաւորը ըսավ. Ը՞րչ֊ ինչ որ կո՞չչ ընելու, ա-
սիկայ է եաֆե վերը։
Ը՞նականով 1793 յունվ. 21 գլուխը կտրե-
ցին ժշ. լուիզ Թագաւորին՝ [1] որ շատ ա-

---

(1) Ինգլիսայի մէջ Փասսօ անունով բանաստեղծ մը
ելած է որ մեռաւ 1595. ասկիայ երուսաղէմայ վրայ
երկու բանաստեղծութիւն չինած ունի, որոնց մէկը
կըսվի Երուսաղէմ ազատեալ, մէկալը Երուսաղէմ
դարձեալ։ Ինքը Թէպէտ մարգարէ չէ, բայց մար-
գարէի պէս երկրորդ դրքին մէջը յայտնի կըզուրցէ,
Թէ ինչպէս աստեն պիտոր դայ որ ֆրանսայի Թիկը,
իր ընտանիքը, բոլոր իր ցեղը պիտոր սպանանի։

ռաքինութեի ունէր՝ բայց Թագաւորական մեծութեի մը չունէր. իրեն պակսութեի ասեղավ որ՝ աւելի անուշութեի աւելի մարդավարութեի բանեցուց անանկ մարդոց վրայ որոնք որ պատիժ կարդիւնաւորէին. ինչ դժբաղդ ատենի մէջ հասեր էր որ ասանկալ քաղցրաբարոյ մարդ ըլլալով զինքը բռնաւոր կրկանչէին ժաքօպէններէը։ Ի՛նչ ձակ ձգողին մէկինալ եղավ օրլեանս դուքսը իր մտիկ ազգականը, որ ամէնն օրինաց կեօրէ պէտք էր անիկայ դուրս հանել յայտնի թշնամի ըլլալնուն համար, ասոր ըրածներէն ինչվան ուսկեսքեանք զարհուրեցան, որ իր աչքովը տեսաւ Թագաւորին գրկատուիլը, յայտնի ցըցուց իր ուրախութիւնը, բայց չիգիտցաւ որ շուտով պիտոր տրտմութեի փոխվէը։

## Լուդովիկոս ԺԶ-ի եղածները.

1772–1795։

Ս՛ոաջներէը պատմերենք ինկլիզին մեծ կռիւը ամերիկացի ապստամբներուն պատճառովը 1174էն ինչվան 1783. հոս պատմենք ուրիշ դիպուածներէը որ եղան։ Այս ատենվան ինկլիզին վրայ Թագաւոր էդոլը էր Գ. գեորգ. ասոր մայրը որ կալլէսի իշխանուհի կըսվէր՝ մեռաւ 1772. այնչափ ողորմած էր՝ որ մեռնելու ատենը բան մը չունէր որոնց վրայ կտակ ընէ, որովհետեւ ամէնն իր ունեցածը ողորմութեի տըվեր էր

աղքատաց։ Ուրանտայի մէջ լեռընցիք միա-
նալով ան ջինուորներուն հետ որ կամ ան-
կար էին և կամ փախչող՝ ապստամբութիւն
մը հանեցին, որոնք զսպելու համար շատ
արիւն եղաւ։ Մագաւորին աղջիկը քու-
պեռանտի դուքս ըսված առանց գիտնա-
լու Թագաւորին՝ հասարակ կնկան մը հետ
կարգըվեցաւ. և որովհետև չիկար մէկ օ-
րինք մը աս բանիս վրայօք՝ Թագաւորը չէ
կրցաւ դէմ բան մը ընել միայն ուզեց բաւ-
լամնդէն ասոր վրայ կապ մը դնելու, որ
մէյմընալ ասանկ բան չըլլըվի. ազատուե-
պաշտպանները շատ վիճմունք ըրին շատ
դէմ կեցան, բայց ետքը վճիռ մը ելավ որ
շատ չափաւորեց ասանկ պսակը։

Երբոր ֆրանսային խռովուելը սկսաւ, ընդ-
հանուր ժողովուրդը կուզէր անոր վրայ
ձեռ բանալ, յարմար առեն սեպելով իր
վրէժը առնելու, բայց կառավարքը սպա-
նիային հետ մէկ տեղ ուրիշ կերպ կըմտա-
ծէին. չըլլայ թէ իրենց ձեռ բանալովը՝
ֆրանսայի Թագաւորին տունը Թուրէ ան-
ցընէին վրէժ առնելու համար, անոր հա-
մար աղէկ սեպեցին ֆրանսղները իրենք ի-
րենց Թողուլ, որպէս զի իրենք զիրենք կոր-
սընցընեն, մանաւանդ որ իրենց երկիրնալ
այսինքն ինկիլիզներուն մէջնալ կըտեսնայ-
ին ֆրանսղներուն աղանդը շատցած, կը-
վախնային չըլլայ որ իրենց մէջնալ բան մը
հանեն։ Երեք տարի ասանկ անտարբեր կե-
նալէն ետև՝ երբոր ֆրանսային Թագաւո-
րը սպաննեցին՝ ան ատենը ամէնն ինկիլի-

ղին ժողովուրդը ոտք ելան աս անիրաւ մա-
հուան վրայ. Ինկիլիզին Թագաւորը ցաւա-
դին խօսքերով իմացընելով բառլամինդին՝
ըստրկի օգնութեի խնդրեց. ժողովականայ
մէջ ֆրանսզի դին տաշօղները շատ դէմ
ելան աս բանիս, բայց ետքը տըվին ուզած
օգնութենը: Վրէ մը անցնելէն ետև իմա-
ցան որ ֆրանսզիները առանց ծեծ մը բա-
նալու 60 Ինկիլիզի նաւ բռնեբէկին. ժաքօ-
պէննէրուն մարդիկնալ խիստ շատցեբէկին
Ինկիլզէռռա, կըջանային որ հոնալ իրենց
աղանդը ծաւալեն. ասոր վրայ Ինկիլիզին
բառլամինդը կատարեալ իշխանութի տը-
վավ Թագաւորին՝ որ ան բան խառնօղ օ-
տարականներէն շատը բռնեց բանտը դը-
րավ. ասոնք իրենց Թղթէ ըստակները որ
Ասիայէ կըսվէին՝ մէկ խորամանկութ մը
Ինկիլզէռռայի մէջ մտուցերէին աս Ձամ
փով. խահվէնէրուն մէջը 100 լիրէի Թուղ-
թը՝ 30 լիրէ ըստակ առնելով կըփոխէին.
ան Թուղթը առնօղը Թէ որ լօնտռա տա-
նէր՝ ֆրանսզին մարդոցը ցըցընէր՝ անոնք
100 լիրէ զուտ (նաղտ) ըստակ տալով ի-
րեն Թուղթը կընդունէին. ռամիկ ժողո-
վուրդը աս մեծ շահը տեսնալով՝ ասանկ
Թղթէ ըստակ առնելու հետ եղան. չիմըտ-
մտացին որ երբոր աս Թղթէ ըստակները
շատնային՝ ան մարդերը ալ պիտոր չկրնա-
րէին. 100 Թղթէ լիրէին մէկ լիրէմընալ
զուտ ըստակ տըլօղ չիգտնային:

Ինչ որ երկու տէրութիւն իրարու շատ
հեղ Թուղթ գրեցին բայց պտուղ մը չե-

լավ. սկիզբ եղաւ 1793 փետրվ. 1 Ֆրանսան ծեծ բացաւ Ինկիլիզի Թագաւորին՝ ու Ֆիլէմինկի շղթայ հալդեաին դէմ. իսկ փախչող Ֆրանսզները օրէօր կըշատնային Ինկիլդեռա, ինչվան 1795 փախստական Ֆրանսզներուն համրանքը հոն եղավ 40 հազար, որոնց ամէնուննալ շատ աղէկ ընդունելուի ըրավ Ինկիլիզը: Այս տարվանս մէջ Ինկիլիզը դեսպան խրկեց Չինուսմաչին մաքառդնէյ միլօռտը՝ որ Թէպէտ չինու կայսերմէն աղէկ ընդունելութիւն գտաւ, բայց Ինկիլիզին տերութիւնը չիտեսաւ ան պտուղը որուն համար խրկերէր անիկայ, միայն աղէկ չիտակ ծանօթութիւն բերաւ Չինուսմաչինի երկրին վրայ, իրեն Չամիթորդութիւնալ տպվեցաւ: Այն տարին Ինկիլիզնէրը առին գօպակօ կղզին, որ պետրոս ու միքելօն կղզին. մառդինիքայի կղզին ան կտորնալ առին որ Թագաւորական Ֆրանսըզնէրը առած էին. իսկ 1794 ամբողջ մառդինիքան առին. որ դոմինիկոս կղզին մէջնալ զանազան տեղ առին. Հինտիստանի մէջնալ ինչ տեղվանք որ ունէին Ֆրանսըզնէրը ամէնննալ ինչվան քունդիչէրինալ առին: Ֆրանսզները քանացին քանատայ վազել, բայց բան մը չկրցան ընել: Այնայ որ Ինկիլիզնէրը աւերիկայի ժէ. նահանգներուն վրայ վախ ունէին, չըլլայ որ Ֆրանսըզներուն հետ մէկ ըլլան, բայց անոնք 1795 դաշնադրուի ըրին Ինկիլիզին հետ: Սպանիան ու Ֆիլէմինկը Ինկիլիզին հետ բարեկամ ու դաշնակից էին, բայց եաքը

Ֆրանսզնները Ֆիլեմենկի մէջ վազելով՝ ըս-
պանիային հետաձ հաշտութեի ընելով եր-
կուքնաձ Ֆրանսզնին հետ մեկ տեղ Թշնա-
մի եղան ինկիլիզի դէմ. աս բանս օգտա-
կար եղաւ ինկիլիզին, որ ան պատճառով
Ֆիլեմենկին անհատնում դանձը՝ նաւերը՝
տեղվանքը՝ որ հինտուսմէջ ուներ՝ իրեն ա-
ռաւ. սպանիային ձեռքէնաձ առաւ սուրբ
երրորդութիը, Հարուստ նաւահանգիստը,
Թոզ տուր ուրիշ տեղվանքը: Այդ ժա-
քօպէնները շատ մարդ վաստկած ունեին
իրենց դին ինկիլիզին մէջ որոնք քնութե
աղատութեի կուզեն. ասոնք գաղտուկ ժո-
ղովները (քլիւպ) կընեին, զինք կժողվե-
լին, խաղաղութե կուզենք կանչելով՝ ժո-
ղովուրդը Թագաւորին ու կառավարչաց
դէմ հանել կըջանային. երբոր 1795 Հոկտ.
29 քառասմնդը պիտոր բացվեր՝ Թագա-
ւորը առապայով կերթար ան հանդէսը ը-
նելու՝ ժողովուրդը Համիու վրայ ժողվը-
վելով 200 հազարէն աւելի աղաղակել սկը-
սան խաղաղուի կուզենք, բիդ վեզիրը չենք
ուզեր հաց կուզենք. աս ըսելով եկել Թիւ-
ֆենկի մը պարպեցին առապային մեկ Հա-
մը կոտրեցին. Թագաւորը անչափ բառ-
լամնդը մտաւ, դառնալու ատենը քար
մը նետեցին առապային վրայ. Թագաւորը
ուրիշ առապայ մը մտնալով Թագուհիին
քովը գնաց հաց ուտելու. ժողովուրդը Թող
չտրվավ, պահպան զօրքը հալիւ ցրուե-
ցին ասոնք. բայց երբոր պարապ առապան
դառնալու եղավ՝ սեխը գետինը ձգեցին

որուն երկու ոտքը կոտրեցաւ, առաւօտեան քարկոծելով կատր կատր ըրին։ Այսր վրայ քանի մը հոգի բանտը դրին, ժողովներ ընելը խստութեամբ գրքեր հանելը արգելեցին, թէպետև կաղաղակէին որ աս բաներս ինկիլիզին ազատութիւնը կվերցնեն, չենք ուզեր։

## Փօրթուկալին դէպքերը.

1785–1792։

Այս տարի փօրթուկալի թագուհին տղան յոհաննէս՝ պսակվեցաւ քառլօդդային հետ՝ որ սպանիայի ասդուրիաս իշխանին աղջիկն էր. սպանիայի թագաւորին տղանալ գաբրիէլ՝ պսակվեցաւ մարիամա վիքդօռիայի հետ՝ որ փօրթուկալու թագաւորին աղջիկն էր. և որովհետև 1788 պրասիլու իշխանը յովսէփ ֆրանչիսքոս քսավիերիոս մեռաւ 27 տարվան, վերոյիշեալ յոհաննէսը ըսվելով պրասիլու իշխան՝ եղավ ժառանգ թագաւորութեան։ Փօրթուկալի թագուհին 1790 նոր կանոն դրավ յաջորդութե վրայ. երբոր մանչ զաւակ պակսելու ըլլայ՝ թագաւորին աղջիկը նստի թախտը, թէ առջինեկը ըլլայ, թէ երկրորդը, և թէ երրորդը։

Երբոր ֆրանսային խռովութիւնը եղավ՝ թագուհին զգուշութե համար արգելեց նորելուք նշանով (քօքառատայով) մարդ իր երկիրը չխօթել, նորելուք գրքերը չմոյը-

նել չկարդալ մանաւանդ Ֆրանսզին գըրքերը. բայց Ֆրանսզին աղանդը արդէն մտերկը իր երկրին մէջ քառվալհօին գործքերովը, հիմաալ ազատուէ անունը լսածնին պէս ամէնն աղքատ ու չարագործ մարդիկ վառվեցան. աս բանս երևան ելավ երբոր 1790 դատաւորները իրեք աւազակին համար կախել վճռեցին, ան զինուորները որ գացին ասոնք բանտէն դուրս հանելու՝ տեսան որ ամէնն բանտարկեալները զինք առած դէմ կեցան իրենց, Թող չտրվին կախելու. 30 ժամ բանտը պաշարված պահելէն ետև՝ անօթիութէ չկրնալով Թող տրվին: Ին ատեննալ ժողովուրդը ոտք ելավ ուզեց զինուորներուն ձեռքէն աւազակները փրցընելու. դատաւորները տեսնալով որ բանը գէշ կերԹայ Թէ որ առջի բերանը ասոնք չկոպկեն՝ կրակ ընել տրվին վրանին, անկէց ոմը մեռաւ, ոմը խոցվեցաւ. 300 հոգիմընալ գլխաւորներէն վարի աշխարհ քշեցին, անոր վրայ մէյմընալ բան մը չեղավ:

Յաջորդին որ կըսվեր մարիամ Ֆրանչէսքա Հղիսաբեթ, շատոնցմընէ եր որ մտաձոտուէ ցաւ ունէր վրան. 1792ին անչափ եվեցյալ որ ալ կառավարուէ բանի մէջ չեր կրնար խառնըվիլ. Ինկիլիզ բժիշկը վալլիս՝ վարպետ ըլլալով ասոր ցաւս ըրբնտցընելու, մէկ լճի մը մէջ խուց չինել տրվավ, որուն յատակը վարպետութէ մը յանկարծ բացվելով՝ նստած տեղը ջուրը ընկավ՝ աս բանս Թէպետ իրեն դեղ մը եղավ՝

քիչմը խելքը վրան եկավ, բայց քիչ մը անդնելէն ետև դարձաւ առջինին պէս ե՛ղավ, անոր համար վերոյիշեալ պրասիլու իշխանին յանձնեցին կառավարուիը Թագաւորահայր (լալայ) կոչելով։

## Սպանիային դէպռաճնէրը.

### 1789-1793։

Սպանիային նոր Թագաւորը Գ. կարոլոս շինուԹէ ընելու հետ ըլլալով՝ երկրագործուԹիը վաճառականուԹիը նաւարկուիը շատ ծաղկեցուց. զօրաց դիացէն մեռնող Թագաւորը խիստ ազէկ կարգի մէջ էր Թողուցեր. ցամաքի վրայ 100 հազարէն աւելի զօրք էր Թողուցած, ծովու վրայ 60 խոշոր նաւ, 40 ֆռխաԹա, Թող տուր բազմուԹիւն պզտիկ նաւերու. ասանկալ ազէկ եկամուտ էր սահմանած. կերևար որ սպանիան խիստ հանգիստ պիտոր ՄՆար, բայց էր դրացիին ֆրանսային խռովուԹիը հանգիստ չԹողուց զինքը։ Անգլիացին հետ մեծ հակառակուԹիւն ունեցաւ 1790 հարաւայլին ծովուն տէրուԹիը վրայ, ասոր վրայ մանրիկ էր ծեծ բայվելու՝ բայց ֆրանսացին վտանգը աւելի մեծ ըլլալով մէջերնին շտկվեցան, դաշնադրուԹիւն մը ըրին հոկտ. 28։ Մեծ վնաս մը սպանիային ան եղավ որ՝ մէկ արքունի մեծ նաւ մը ալեկոծուԹիւն մէջ կորսվեցաւ, մէկ նաւմընալ փորձանքով մը երվեցաւ։ Միւրիկէի մէջնալ պար-

պարըշներէն նեղուէ ունեցաւ 1791. Ֆէ-
զայերը հաշտուի էր ըրած սպանիային հետ,
հաշտութիւնը ընելէն ետև օռանսօ քաղքին
վրայ վազեց Թալլեյրօ՝ երբոր շարժը քաղ-
քին մեծ մասը փլցընելով՝ քաղաքապետը
1/4 հազարապետով շատ զօրքով գետինն էր
Թաղած. ասիկայ պատճառ եղավ որ 1792
ան քաղաքը Թողուց սպանիան, որովհետև
շատ կորուստ կրքներէր ըսարկի ու զօրքի,
բայց շահ ոչինչ: Պաղրպնալ դեսպան էր
խրկած մատրիտ հաշտուի խօրաթելօ՝նոյն
ատենները 50 հազար մարդով չէվգա քա-
ղաքը կըզարներ: Շարժը ամերիկա քու-
պայի երկրին մէջ մեծ վնաս տըվավ 1791.
շատ տեղ գետինը պատռեց, գեղեր տներ
Թաղեց. 3000 մարդ 8000 անասուն կոր-
սընցուց, պուռնօթիի աղացքներ ավերեց:
Տեսնալով որ 1790էն սկսեալ շատ ֆրան-
սըզ սպանիա կուգային կըԹափէին, սահ-
մանագլուխ (սերհատ) տեղվանքը կարգաւ
զօրք կեցուց Թագաւորը որ քննեն նային
եկօղները, խռովուէն սերմանօղներէն չըլ-
լան. խռովարար գրքերնալ որ աշխարհ
ամէնն կրճաւալէին՝ սաստիկ արգելեց. ա-
ւելի աչքը բացաւ ամերիկային վրայ, ուր
աւելի կրնայէին ապստամբուԹիւն ոգին խօ-
Թել: Իսկ ֆրանսայէն փախչօղները սիրով
ընդունեց, աշխարհականները չորս քաղքի
մէջ սահմանեց նստելու՝ որպէս զի հեշտ
ըլլայ անոնք քննելու Թէ որ մէջերնին չար
ֆրանսզներալ գանըվէին բան խառնելու
համար եկած, ինչպէս որ շատ տեղ պատա-

հերը. եկեղեցականաց համար գօլէտօի
ազգեցիկը Թուղթ գրելով ամէն եղա-
ծուն յանձնեց ընդունիլ, անոնց ապրուս-
ը հոգալ։ Ֆագաւորը կընայէր որ Ֆրան-
սայէն հետ սիրով երթայ առանց բանի մը
խառնըվելու. 1792 Ֆլօրէտտա պիանքա կում
ը քշելով որ վճռիր էր՝ անոր տեղը նորին
դրաւ առանտա կոմսը. նոր եկող Ֆրան-
սայի Թագաւորին դէսպանը հանդիսով ըն-
դունեց. ինկիլիզին հետ խօսք դրաւ իրար
պաշտպանելու՝ ծովու ցամաքի վրայ զօրք
հանելու, Ֆրանսային կարծիքը խառնվուիլը
իրենց մէջը չիմացընելու. փարեզ միջնոր-
դութի ըրաւ Թագաւորին կեանքը պահե-
լու. բայց Ֆրանսէզները 1793 Թագաւոր-
նին մեռցընելէն ետև յայտնել սկսան ի-
րենց Թշնամիները սպանիային վրայ, իրենց
նաւահանգիստներուն մէջ եղած սպանիայի
նաւերը բռնելով. ետքնալ մարտի 7 ծեծ
բացին սպանիայի վրայ։

Սպանիան մարտի 23 իր յայտարար Թուղ-
թը հանեց. ժողովուրդը կամաւոր տուրք
տալով, կամաւոր զինուոր գրվեցան հայ-
րենիքն ու հաւատքը պաշտպանելու հա-
մար, մանաւանդ երբոր հասկըցան որ շատ
ժաքոպէններ եկեր էին գաղտուկ ապստամ
բութի հանելու. վալէնցա տեղը պալանչէ
անուշով մէկը բռնեցին. իր Թղթերուն մէ-
ջը գտան հրամանագիրը որով ժաքոպէննե-
րը զինքը ընդհանուր մեծաւոր կեցուցերէ-
ին սպանիան ապստամբեցընելու համար,
անով իրեն համախոհները բռնեցին, ան-

կից եաքը աչվընին բային իրենց մէջի չա-
րագործներուն վրայ որ շուտ մը կաշկեր-
տին : Արբիլի մէջ սպանիացիք վաղեցին
մնան ռօսիլեօն երկրին քանի մը քաղաքը
առին , ասանկալ Նաւառռայի մէջ առաջ
գացին . Ֆրանսզին նաւերը սառտինեա ու
քալիառի երթալէն ու անպտուղ ելլալէն
ետև երկու կղզի առերէին որ պետրոս ու
որ մագդալենի , հիմա սպանիային 23 խո-
շոր նաւերը հոն երթալով հալածեց Ֆրան-
սըզը , 70 Թօփերնին առավ . ասանկալ յու-
նիսի 24 . օգոստոսի 30 սպանիացիք յաղ-
թութեի ըրին ցամաքի վրայ : Այդ գլխաս-
վերու վախը որ Ֆրանսայի մէջ տիրերէր
աս ատեն՝ ան վախէն 60 հազար Ֆրանսզ
փախեր եկերէին սպանիային սահմանագը-
լուխ տեղերը , ամմինալ անօթի մարդիկ
թալլելու աչք տնկած . ասոնք շատ տեղ
վաղեցին նավառռայի ու քաղալօնիայի մէջ,
բայց սպանիայի գեղացիները իրենց զօրա-
յը հետ միանալով ամմին տեղէն հալածե-
ցին անոնք , տեղ տեղ զարնըվէցան՝ բայց
դեկտեմ . 7 ռօսիլեօն տեղը սպանիացիք
Ֆրանսզին բանտին ու պաշարմին նաև 34
Թօփերնին առին :

## Ֆիլէմենկին դեսպանութիւնը.

## 1788–1795։

Պրուսիոյ Թագաւորը երբոր Ֆիլէմենկին շատ հալածեր տեղը դնել տրվավ ինչպէս որ առաջները 1788 պատմեցինք, իր տղին հետ այս քաղաքը եկավ իր քրոջը տեսնելի՝ որ շատ հալածին կնիկն էր, պրուսղվնկի դուքսին յիշատակը ընել տրվավ, որ Ֆիլէմենկին մառեշալը ըլլալով մեռեր էր, շատ բան քաջելով շատ հալածին թշնամի ներէն. չորս օրէն ետև ինքը գնաց, իր տղան հոն մնաց Ֆիլէմենկին երկիրը քալելու համար։

Ֆրանսայի ծեծը բացվելու ատենը՝ առջի բերանը չխառնըվեցան ոչ ինկիլիզը և ոչ Ֆիլէմենկը, միայն երկուքնալ պատրաստութեի տեսնալու հետ եղան. բայց մնջերը նին շատ կային Ֆրանսզի դիտցին, ասոնք 1791 յուլիսի 6 ամպրատամու թէրսանեին մահսին կրակ ձգեցին, 12 միլիոն ֆիւռինի բան երեցին, որչափ որ քննութի ըրին՝ ընդոզ չիգտան. նայն Ֆրանսզի դին եղոզները 1792 Ձամիայ տրվին 50 հազար նեմցի զինուորներբուն ըսելով, ասչափ խարճի տակ չենք ուզեր մտնալ, բայց մովընին նեմցին հեռացընել էր՝ Ֆրանսզը ընդունելու։ Ա՛ւաջ նեմցին ուզեց Ֆիլէմենկին հետ կապվիլ՝ Ֆիլէմենկը չուզեց, ետքը պրուսցի նեմցին առաջարկեցին իրենց միաբա-

նուէներ մէջ խօթել Ֆրանսիոյ դէմ՝ մէկ որոշ պատասխան մը չէտրվավ. միայն երբոր նոյն տարին տիւմուռիէ Ֆրանսիզ զօրապետը ստորին նահանգներուն մէջ վազեց որ նեմպէին եր, զօրք խրկեց ան կողմը որ իրենց երկիրը չմտնայ Ֆրանսիզը։ Ապայց 1793 Ֆրանսիսկերը առանց ծանուցանելու յանկարծ վէնլօօ տեղը անցան մտան Ֆիլէմէնկին երկիրը՝ որպէս զի կվէլ տրիան զարնեն որ պրուշիոն եր, չէլտա գետը մտան՝ անոր նաւարկուէրը ազատ է ըսելով. Ֆիլէմէնկնալ լինկիլիզնալ բոլոր վերացին աս բանիս վրայօք Ֆրանսայի, բայց երբոր մտիկ չըրին՝ նաւէր խրկեցին գետին բերանը գէմ դնելու. երբոր Ֆրանսայի Թագաւորին մահը լսեցին Ֆիլէմէնկին իշխանները՝ ան ատենը ալ աւելի կապվեցան լինկիլիզին հետ. շուտ մը ըստակ ժողվեցին, միայն օլանտային գաւառը 17 միլիօն Ֆիօրին տվավ ծեծին խարձին համար, 15 հազարաչ զօրք եվելցուցին, շդատ հալդեռը վրանին գլուխ դրին։

Ֆրանսան ծեծ բացաւ բայց ոչ Ֆիլէմէնկին հասարակապետութեանը դէմ՝ հապա շդատ հալդեռին դէմ միայն. Ֆիլէմէնկնէրը աս նոր զանազանութիւնը չկնայելով պատրաստվեցան իրենց երկիրը պաշտպանելու, բայց ան ատենը աղէկ հասկըցան իրենց մէջի եղած հակառակութիւնները. տիւմուռիէ շատ զօրք ունենալով որ աղգով Ֆիլէմէնկ էին բայց աղանդով Ֆրանսզ, անոնց վրայ յոյսը դնելով եկավ պաշարեց

պուէտա բերդը. Մէջի եղած Ֆրանսզին հա-
մախոհները առջի Թօփ նետելուն մէկէն
բացին դռնները. քանի ապրանք որ ունէր
շքատ Հալդէոը ան երկրին մէջ Ֆրանսզը
իրեն առաւ, երկու գունդ զօրացալ Հեսը
տարաւ որ Ֆիլէմինկով Ֆիլէմինկներուն
դէմ ճեծկըվի, ան զօրքով եկաւ տիւմու-
ռիին Ճէռդրուտէմպերկ բերդը պաշարեց՝
որ անձնատուր եղաւ, անկից վիլիամշդատ
վազեց միտքը դնելով շուտ մը այս ու ան-
դրտամ գալու. բայց լսելով նեմցէին ու
պրուշին յաղթուհինները ձգեց ամէնն բան.
Ֆիլէմինկէնալ նաև ստորին նահանգներէ-
նալ դուրս քաշվեցաւ շատ Թօփեր Թողով:
Ի տիւմուռիին երբոր մարտի ամսուն մէջ
կորսնցուց նեվինտէնին ու լօվանիոյին ճե-
ծերը՝ Ֆրանսզին ազգային միաբանութիւնը
հրամեց վինքը բռնելու, ան ատենը տիւ-
մուռիին խօսք դրաւ նեմցէին դին ան-
ցաւ. պուէտան ու Ճէռդրուտէմպերկ բեր-
դերը խալըսեցան. Ֆիլէմինկը դուրսի Թըշ-
նամիին խաղաղեցաւ. իրեն զօրքը նեմցէ-
ին հետ մէկ տեղ 1796ին սկիզբները աղէկ
ճեծկըվեցաւ, բայց երբոր նոյն տարւոյն
եռքերը բանը դարձաւ՝ Ֆրանսզիները նո-
ր ին վազեցին մտան ստորին նահանգներուն
մէջ՝ անկից մէկէն մտան Ֆիլէմինկ, ուր
շատվոր գանըվելով Ֆրանսզին դին եղոշ-
ներ՝ մէկէն ընդունելութիւն գտան: Երբոր
նեմցէին քօպուռկ զօրապետը քաշվեցաւ՝
Ինկիլիզին զօրքը միացաւ Ֆիլէմինկին զօ-
րացը հետ, ամէնը մէկ տեղ եղան 40 հա-

զար . բայց Ֆրանսզին բիշկուիւ զօրապետը վրայ գալով իբր 80 հազար զօրքով . ժուռ. տան զօրապետնալ 60 հազարով մասդրիքը պաշարելով , ինկիլիզը սեպտ . մէջ Ֆրանսզին զարնըվելով ետ քաշվեցաւ . Ֆիլէմինկալ բերդին մէկը Ֆրանսզին ձեռքը տըվավ : Ու ձախորդ դիպուածիս վրայ քանի հոգի որ կային շուտ հալդէնին դէմ , քանիալ որ կային Ֆրանսզին դին , ամմէննալ յայտնի գլուխ վերուցին , ապստամբիլ կըսպառնային թէ որ զատ հաշտութիւն չընեն Ֆրանսային հետ . ասոնցմէ քանի հոգի որ բանտը կըդնէին անոնք ալ աւելի կըսխորտային , որոնց քով շատ պահված զինք գտան . ամմդրտամի մէջ եղած իրենց ժողովքը կոխեցին , մարդիկն ու թղթերնին բռնեցին , անոնցմէ շատ վախնալու բաներ հասկըցան . բայց շուտ հալդէնը ամմէն սրտով կըջանար երկիրը պաշտպանել սըրտերնին խաղաղցնել :

Ֆիլէմինկի երկրին մեծ պաշտպանութիւնը իր պատուարները ( պինատերը ) բանալն է , ջուրերը թողուլ որ թշնամին չիկրնայ կոխել , բայց 1794ին ետքը և 1795ին սկիզբը անանկ խիստ ձմեռ մը ըրավ որ ամմէն ջուրեր պաղեցան , Ֆրանսզի զօրքին աղեկ կամուրջ ( քեօփրիւ ) մը եղան , որոնց վրայէն 12 հազար հոգի անցնելով զարկին Ֆիլէմինկները որ քիչվըր էին ու անմիաբան :

## Ը. Ֆրանչիսկոս կայսրը.

## 1792։

Լեոբոլտոս կայսրը մեռնելէն ետև իր տղան Ֆրանչիսկոս տեղը նստաւ յունիսի 6 մայտաի վրայ Թագաւոր պսակվեցաւ. յուլիսի 5 Թագաւոր հռոմայեցոց ընտրըվեցաւ. նոյն ամսոյն 14 կայսր պսակվեցաւ. օգոստոսի 9 պօհեմիայի վրայ Թագաւոր։ Բայց քանի որ նստելուն պէս տեսաւ Ֆրանչիսկոս՝ եղաւ Ֆրանսային ծեծ բանալը, որուն նախատես ըլլալով Թագաւորները արգէն պատրաստութիւն կըտեսնային նեմչին՝ կայսերութիւնը՝ (որ ըսել է գերմանիայի իշխանները), պրուշը՝ մոսկովը՝ շվետը՝ սպանիան՝ Ֆիլէմինկը՝ ինկիլիզը՝ ասոնք ամէնը մէկէն միաբանված որոշեցին Ֆրանսային դէմ կենալ իրար պաշտպանել, բայց շվետին Թագաւորին մահը եվել եվելօք սրտերնին կոտրեց, որովհետև ինքը պիտոր ըլլար զօրագլուխ շվետին ու մոսկովին զօրաց վրայ, անանկ կերևար որ նաև ամէնն միաբանեալ Թագաւորներուն զօրաց վրայ։ Ինկիլիզը Ֆիլէմինկին ու սպանիան չհաշուեցան ինչվան որ չիտեսան Ֆրանսայի Թագաւորին խեղճ մահը, ետքը ծեծկըվելուն բերը նեմչին ու պրուշին վրայ, որոնց հետ միացան փախչող Ֆրանսըզնաւորը էին 36 հազար հոգի, իրենց գլուխ էր քոնտէ իշխանը։

Նեմչին յայտարար Թուղթ մը հանեց Ֆը-

ըանսզին հանած Թուղթին դէմ, ասանկ-
ալ պրուշը հանեց. պրունզվիկին դուքսնալ
(որ զօրագլուխ էր եղած նեմչկին ու պրու-
շին ամէն զօրայ վրայ) յուլիսի 22 քսա-
լէնց տեղը յայտարար Թուղթ մը հանեց.
մահ սպառնալով անոնց որ ֆրանսայի Թա-
գաւորազուններուն մէկ բանուԹէ մը ընե-
լու ըլլան, ապստամբ սեպելով անոնք որ
Թագաւորականաց դէմ բան մը ընելու
ըլլան, ազգային պահապան զօրայ վրայ
պարտք ձգելով զգուշանալու որ խռովուի
մը չելլայ, ազգային ժողովին ապսպրելով
որ Թագաւորին իշխանուԹէ դէմ բան մը
չընէն, հաստատ վկայելով որ չիգար ֆը-
րանսայէն տեղվանք վաստըկելու և ոչ ազ-
գին ազատուԹիը կոխելու, այլ Թագաւո-
րին իշխանուԹիը իրեն դարձընելու համար,
որպէս զի ազգին հետ մէկ տեղ ամէն բան
կարգի դնէ ազատուԹէ ու հանդարտուԹէ:
Ա՛ս Թուղթը հանեց որ ժաքօպէններուն
սիրտը վախ ձգէ, Թագաւորական դին ե-
զողներուն սիրտ տայ, անանկ սեպելով որ
ազգին մեծ մասը ան դին էն, բայց աւելի
դէշ ըրավ քան Թէ աղէկ, պատճառն որ
ժողովրդեան գլուխը ան ատենը տաքցած
ըլլալով ազատուԹ անունին վրայ՝ դեռ չէր
տեսած ան չարիքները որ ազատուԹ անու-
նին ետևէն եկան. փախչող ֆրանսզներուն
կամ եկեղեցականներուն ապրանքներուն ձեռք
ձգողները չէին ուզեր փոփոխուԹի մը ըլ-
լալ, չըլլայ որ անով կորսնցընեն ձեռքի ու-
նեցածնին, իսկ ժաքօպէնները աս Թուղթը

դէչի մեկնելով հռչակեցին որ վրանիս ե-
կօղները կուզեն աղգային ազատութիւնը
ֆրանսայէն ջնջել։

Ֆրանսզները առջինը եղան իրենց թշնա-
մութիւը ցրցընել զարնելով Ջասեւով ֆիանտ-
րայի մէջ և ուրիշ տեղվանք, անոր հա-
մար զանազան բանակ հանեցին. առջի զար-
նելը եղավ ֆիանտրայի մէջ ապրիլի 29.
ֆրանսզի զօրաց մէջ աղգային պահապան
ներէն շատ կային, ասոնց շատը էին ար-
հեստաւորներ՝ փախչող ֆրանսզներուն ճա
նայներ՝ ասոնք յուսահատված մարդիկ ըլ-
լալէն էր որ զինուոր էին գրված, քանի մը
թօփի ձայն առնելնուն պէս չիզարնըված
փախչող փախչողն եղան, ամէնն բան նեմ
ցէին ձեռքը ձգեցին. իրենց հրամայօղնե-
րուն վրայ վազելով քանի մը ֆրանսզ ըս-
պաննեցին. մինս քաղքին քովերնալ ապրի-
լի 30 կռիւ եղավ, ուր նոյնպէս ֆրանսզը-
ները զարնըվեցան։ Նեմցէին բանակը չորս
բաժնըված էր՝ մովընին չիտակ փարեղ եր-
թալ էր, բերդեր պաշարելով ատեն չի-
կորնցընել, որովհետև տեղ վաստկելու
համար էին եկած այլ կարգ դնելու. բայց
ֆրանսզ զօրապետը ֆաժէդ՝ շատ զօրքով
ներս վազեց ստորին նահանգներուն մէջ,
անկէց շատ ջարդ եղավ. նեմցէին ասկէց
դէշ եղավ որ հին եղած հին ապստամբնե-
րը նորէն ոտք ելլալ սկսան։ Նեմցիները
մայիսի 23. յունիսի 11 աղէկ ծեծկըվե-
լով տեղ տեղ ֆրանսզները վռնտեցին.
բայց վերոյիշեալ ֆաժէդը շատ տեղվանք

առաւել մեջլինները օգնելովը . նեմչեին օգնուի հասաւ դէջլին սաքսօնիային դուքսը՝ և կարողաց արշիդուքսը որ կառավար էր դրված ստորին նահանգներուն վրայ , անանկով արիւնահեղ պատերազմ մը ընելով յունիսի 23 աղեկ տեղ մը առին նեմչեները հառլըպեք լսված : Ֆրանսզ զօրապետները ֆաժէդ ու լիւքնէռ ամէն օր անհնազանդութեի տեսնալով իրենց զօրաց մեջ , ֆրանսայի մեջն եղած անկարգութինալ լսելով , վախցան որ չորս դիսացին թշնամիին մեջը կիյնան , մանաւանդ որ ան ատենը պրունզվիք դուքսը պրուշի զօրքով ուրիշ դիսացին առաջ կըքալեր , յունիսին եաքեր ետ քաշվիլ սկսան . քաշվելու ատենը ֆառուա ֆրանսզը իր զօրքովը երեց մրկեց քուռդդայի քաղքին աղվոր արուարձանները ու արտերը , 3 միլիոն ֆիօռինի չնաս տալով :

Այսոնց ասանկ ըլլալնին վախ ձգեց ֆրանսըզնիներուն սիրտը՝ որ ժաքօպէնիներուն ուզածն էր . ինչ ձախորդութիւն որ կըլլար՝ պատճառ Թագաւորն ու սահմանադրութիը կըըռնէին . ան ատենը ֆրանսզնիները հըռչակելով որ հայրենիքնիս վտանգի մեջն է՝ հրամմեցին ով որ զէնք կրնար բանեցրնել պէտք էր զէնք առնել , թէ որ Թիւֆէնկ պակսեր Թիւֆէնկի տեղ սօփա առնել : Այնկ գունդմընալ վճռեցին հանել անուն դնելով Լառնաուրնէրը սպանիօղ գոնդ . ասոնք էին իբը գաղտուկ զինուոր , որոնց պարտքըն էր կամ դեղելով կամ սրով Թագա-

ւորները և իրենց զօրապետները սպաննել։ Մկ վՀիւ մընալ Հանեց ազգային ժողովը որով ամէն ժողովուրդը իրենց Թագաւորներուն դէմ Հանեց, Հրամմելով ուր որ Ֆրանսզ զօրքը մնալու ըլլայ՝ ամէն կառավարութիւը վերցընեն, մկ ազատ ժողովրդական կառավարութիւն մը սահմանեն, ինչ ժողովուրդ որ չընդունի՝ Թշնամի սեպվի։

Ներեմէն ու պրուշը առաջ գալու Հետ ըլլալով՝ անհամար ժաքօպէններ մկ ըլլալով լուքնեռն ու ֆաժէդը զօրապետութէ ձգեցին, մանաւանդ ֆաժէդը սահմանադրութէ ջատագով ըլլալուն Համար ժաքօպէններուն Թշնամի, մարդիկ խրկեցին որ զինքը բռնեն. անիկայ խմանալով ինքը բռնեց ան մարդերը, փիլեմենկին դին քանի մը Հազարապետներով գաղտուկ փախչիլ սկսաւ. այլ Հաւատարմութէ չունենալով ոչ ֆրանսայի կառավարութէ վրայ և ոչ իր զօրացը վրայ, բայց բռնըվելով ստորին նահանգներուն մէջ բանտը դրվեցաւ։ ( )

գոստ. 31 վերտիւն քաղաքը անձնատուր եղաւ, ուր անձամբ մնաւ պրուշին Թագաւորը բռօվանս կոմսին Հետ մկ տեղ որ ֆրանսայի Թագաւորին եղբարն էր. վերտիւնէն ինչվան փարեզ 100 մղոնի չափ Համիպայ մնալով, ըսել է իբր կէսկիսօլուէն ինչվան ստանպօլ, մնացած ֆրանսզ զօրքնալ քիչ ուժ ունենալով դէմ դնելու. ա նանկ կերևնար որ ասկէց ետքը փարեզի վրայ պիտոր վազեն, քիչմը ատենէն ամէն

բան պիտոր շտկեն, բայց ասոր ներհակը ե-
ղավ. առաջ երթալուն տեղը ետ քաշվիլ
սկսան, որուն պատճառը զանազան կեր-
պով կըպատմեն. ոմանք տիւմուռիկ ֆը-
րանսէզ զօրապետը պատճառ կըդնեն, որ
ֆաժէդին տեղը զօրագլուխ գալով գա-
լուն պէս աղէկ տեղ մը ձեռք ձգեց հոն
կեցուց իր ֆրանսէզ զօրքը. սեպտեմբ. 20
ծեծկըվեցաւ վալնիւս տեղը ուր ֆրանսըզ-
ներըը վըայ ելան, նեմցիներըը վախցան յու-
սահատեցան առաջ երթալու, ուտելիքնին
պակսած ըլլալով՝ եղանակնալ անձրևային
երթալով՝ պրուշին զօրքնալ խիստ շատ խա-
վող ուտելու ետևէ խլնալով (իրենց եր-
կիրը չկրնանըվելուն համար) անկէց փոր-
հարուելի (խաչ) եր ընկած մէջերնին՝ ա-
նոր համար կըսեն պրուշին թագաւորըը բըռ-
նադատվեցաւ ետ քաշվիլ: Նայց ուրիշ
պատմագիրներ ասով կըցրուեն աս պատ-
ճառները, որ վալնիւսին կռիւը 4 ժամ
քշեց, ուր 5 հազարապետ և 93 հոգի մե-
ռան վարի հազարապետներէն ու պրուշի
զինուորներէն, իբր 200ալ ֆրանսզներէն.
ասանկ ծեծը չըսվիր որոշող բանը լմընը-
նող, ուր միայ վախցընող նեմցիի պրուշի
բանակը, որ ինչվան ան ատեն յաղթութի
ընելու հետ եր. անձրևային եղանակնալ
ուտելիքի պակսութինալ ասկից ետքը ե-
ղան. իսկ պրուշին զօրայ հիւանդութիը մեծ
բան մը չեր շատալ չեր. երբոր վերտիւնը
առին՝ տիւմուռիկին զօրքը զատված միա-
յած եկին մկալ ֆրանսզին զօրքեն որոնց

վրայ զօրապետ էր քելէհմանն. վաղիւանէն կռիւը ընելէն ետև նեմչին պրուշը բարձր տեղվանքը իրենց ձեռքը առած էին, իսկ ֆրանսզնները մէկ դաշտի մը մէջ քաշված։ Այսանկ վրայ ըլլալով պրուշն ու նեմչին հինչու պիտոր ետ քաշվէին, բայց ասոր բուն պատճառը հոքը հասկըցվեցաւ որ եղավ ասանկ։

Պրունզվիկին դուքսը խորհուրդի նստաւ ձեծի համար, ուր ժողվըվեցան պրուշին նեմչէին ու փախչող ֆրանսզներուն զօրապետները. հարցուց ասոնց արդեօք ձեծկըվինք առաջ երթանք թէ չէ, առջի պատահանօղները եղան փախչող ֆրանսըզներուն զօրապետները, այսինքն Թագաւորին դին եղող ֆրանսզնները, ասոնք մէկ բերան ըսին որ շուտ մը ձեծկըվելու է, որովհետև մեր Թշնամիները ամէն տեղ զարնըվեցան, համրանքովալ ուժովալ մինչ վար էն, մէկ ձեծկըվիլմընալ ընելու ըլլանք պատերազմը կըլլինայ, ամէն բան կըշտկըվի, լման ասոնց պէս ըսին նեմչէին ու պրուշին զօրապետները։ Այն ատենը պրուշին Թագաւորը դարձաւ պրունզվիկի դուքսին ըսավ, ասոնք իրենց կարծիքը զուրցելէն ետև դուն հինչ մտքի վրայ ես. դուքսը պատասխան տըվավ, երբոր ամէն զօրապետ ձեծկըվիլ կըսեն, իմ կարծիքս բան մը չըրըշեր, ձեծկըվելու է, բայց ուրիշ օր աւելի կուզեմ բաները շտկելու։ Այս խօսքին վրայ ամէն խորհրդականք շփոթեցան, աւելի շփոթեցան փախչող ֆրանսզնները, խիստ

դէմ կէցան ըսելով որ ծեծը չուտ մը ընէ-
լու է քանի որ Թշնամին ատեն չունի ու-
ժոյնալու, քանի որ անձրեւները չեն սկսած՝
ուտելիքնիս չեն հատած՝ զօրքնալ չեն Թու-
ցած։ ասանկալ ըսին նեմչիին զօրապետ-
ները աւելի քաշադվայդ, բայց պրունզվիկ
կին դուքսը պատասխանեց, պատճառներ
ունիմ ասանկ ընելու՝ ուրիշ կերպ չեմ
կրնար ընել։ Ասոր վրայ խիստ տրտմու Թիւ
ցրուեցաւ խորհուրդը։ փախչող Ֆրանսա-
ները դողալ սկսան տեսնալով նաւակոծիլ
մը նաւահանգստի քով. մէջերնէն երևելի
ները եկան իրեն ըսելու, Թէ որ ինքը կը-
վախնար իրեն զօրքը վտանգի մէջ ձգելու՝
մենք նեմչիներով մէկ տեղ կրծեծկըվինք,
միայն քանի մը ձիաւոր զօրք տաս մեզի։
ասոնք և ոչ պատասխան առնելով դարձան
նեղելով, անձրեւները սկսան, պէքսիմիտ-
նին ալիւրնին Թացուէ ավըրվեցան, Ֆրան-
սըզներուն զօրքը չատցան, անդադար մարդ
կուգար կերԹար պրունզվիկի դուքսին ու
տիւմուռիկէն, պրուշի Թագաւորին տղան
Ֆրանսզին բանակը կերԹար, հոն փառա-
ւոր ընդունելուէ կրգանար, ամէնն զօրաց
սիրտը կեռար կեփեր աս բաներուս վրայ։
ՅօԹներորդ օրը հասածին պէս փախչող
Ֆրանսզնները ամէնն կերպով պատրաստը-
վեցան խօսքին կեօրէ հետևեալ օրը պատե-
րազմելու, մէյմընալ հրաման ըսեցին որ պա-
տերազմելուն տեղը պէտք էր ետ դառնալ։
աս բանս ամէնուն սիրտը կոտրեց։ հաս
կըցան որ Ֆրանսզի Թագաւորէն ԹուղԹ

էր եկած ասանկ ընելու . վասն զի ինչպէս
որ վերը գրեցինք՝ ժաքօպէհնները տեսնա-
լով որ Թշնամիներուն փարելգալը իրենց
մահ պիտոր ըլլար՝ գլխաւորին բէկթիճ՝
մանուէլ՝քերսայնդ՝սպառնալով բռնագա-
տեցին Թագաւորը գրել Թշնամիներուն որ
հեռանան . անալ վախէն սեպտ . 9 գրեց
աղաչելով պրուշի Թագաւորին որ ձեծը
դադրեցընէ հեռանայ , շատ բանալ Թրղ-
Թաբերը կըհասկըցընէ ըսելով. պրուշի Թա-
գաւորնալ սեպտեմ. 16 վէզիրհինէն գրեց
անոր խոստանալով եւ քաշվիլ զինեալ չէ-
զոքուԹի պահելով , գերմանական սահման-
ները պաշտպանելով :

Ասանկով պրուշին զօրքը որուն հետ միա-
ցեալ էին փախչօղ ֆրանսիսներուն զօրքը
բաժնըվելով նեմչէի զօրքէն դէպ ՚ի քօպ-
լենց քաշվեցաւ . նեմչիին զօրքնալ որուն
քլայս-ֆայդ զօրապետը կըհրամմէր՝ քաշ-
վեցաւ ստորին նահանգները նայելէն . սաք-
սոնիայի դուքսնալ որ լիւլեան պաշարերէր ,
անալ Թողուց քաշվեցաւ : Տիւմուռիէ ֆը-
րանսզ զօրապետը անանկ ձան հանել տը-
ւալ անանկ հաւտացուց իբր Թէ ինքն էր
ցրուէլ տուլօղը աս Թշնամեաց զօրքը , բայց
ինչպէս որ գրեցինք անանկ եղալ , միայն
Թէ ասոնց անանկ եւ քաշվիլը անգործ կէ-
նալը շատ յաչողուԹի բերաւ ֆրանսզի զօ-
րաց , որոնց մէկ մասը քիւսդէն զօրապետին
տակը 40 հազարով ալսացիայէն գերմա-
նիա վազելով զանազան քաղքերներ առավ.
հոկտ . 19 մակննցայէն տակը եկավ . ուր մէ-

այն 2300 պահապան զօրք գտնըվելով մէ-
ջինները դռները բացին, անկից քալեց փը-
ռանքփօռդին վրայ նաև հասսիային վրայ
ուր ամսոյն 22 զարնըվեցաւ, ան ատենը
պրուշնալ սկսաւ դէմ դնել անոր յարձակ-
մանը։ Տիւմուռիէ 80 հազարով վրայ գա-
լով շուտ մը հոկտ. 14 վէռտիւնը առաւ,
քլայռֆայդ նեմցէի զօրապետին եաևէ ըն-
կաւ որ մենս տեղը կեցած էր 20 հազա-
րով, նոյեմ. 6 մեծ կռիւ եղաւ հոն. քլայռ-
ֆայդ ֆրանսզներէն շատ մարդ ջարդելով
անանկ ետ քաշվեցաւ. բայց տիւմուռիէն
ազգային միաբանութեե անանկ գրեց որ 20
հազար նեմցէն 30 հազարով փախուցի, փո-
խանակ գրելու 80 հազարով. ուրիշ գը-
րուածներուն մէջնալ շատ սխալ կան։
Քլայռֆայդին քաշվելէն եաևէ սաօրինա-
հանգներուն մէջինները իրենց հին ապըս-
տամբութիը նորոգելով շատ տեղ նեմցէին
տակէն ելան ֆրանսզին դէն անցան, զան-
կակներ զարնելով ուրախութեե ընելով ա-
նանկ ներս առին ֆրանսզները իբրև պաշտ-
պանօղք ու ազատօղք. բայց խիստ քիչ
քշեց իրենց խաբէութիը։ Ծարվածք ժաքո-
պէնները ամէնն բան յափշտակեցին առին
ավրեցին. ասոնք ազգային միաբանութե դի-
մեցին գանկտելով. անալ աւելն տուրք վրա-
նին ձգելով մխիթարեց, ան ատենը բանը
հասկընալով նորէն դառնալ ուզեցին նեմ-
ցէին տակը, ապրանքնին կեանքերնին դնե-
լով միայն թէ ազատվին աս խաբեբայ ա-
զատուէն։ Ինոց որ՝ 35 հազար ֆրանսզը

որ քիւտդէն զօրապետը խրկերէր նեմցէնէ-
րը զարնելու որ վէտդ լեռան վրայ կեցե-
րէին՝ կոտրըվեցան փախան լօռէնա. նեմ-
ցէները աղէկ տեղ ձեռք ձգեցին, կարեցին
հաղորդակցութիւնը քիտդէնին ու տիւմու-
ռիէին մէջ. պրուշին թագաւորնալ ան ա-
տենը շարժեցաւ Ֆռանքֆօռդը Ֆրանսըզ-
ներուն ձեռքէն խալսըլնելու. գեկտեմբե-
րի 2 հասսիայի զօրքը դէնէրը կոտրելով
ներս մտան, 6 հազար Ֆրանսզնէրէն ուրը
կոտրըվեցան, ուրը փախան, 1200 գերի ըն-
կան. քիւտդէնը վրայ հասաւ պաշտպանե-
լու՝ բայց անալ կոտրըվելով փախաւ։

## Ը. Պոլշան սէլիմին ըրած նոր կարգադրու-
թիւնները.

1792։

Երբոր տաճիկը սկսերէր մոսկովին ու նեմ-
ցէին հետ ծեծկըվիլ՝ մըրայ պէյերը իրենց
յարմար ատեն գտնալով՝ նորէն մըսըր մի-
տած առած էին. անատօլուին փաշանե-
րէնալ ոմանք ապստամբած. առնաւուտի
փաշանալ սովորական տուրքը կտրած. ա-
ՀԷյնալ 80 հազար զօրքով տաճկին երկի-
րը վազած։ Բայց եթէ երբոր հաշտուիը
լսեցին, դրանը պատրաստութիւնալ տեսան
իրենց վրայ գալու՝ ասոնցմէ ոմանք հնա-
զանդելով Ճամիայ եկան, մէկալնունքալ
զարնելով կոտրելով հնազանդեցուցին.
լամպռօնալ որ հաշտութէ եաւ ծուլու աս-

պատակ էր եղած՝ քվայլիանաւահանգստին մէջ զարկին փախուցին։

Երբոր Ֆրէնկիստանի Թագաւորները իրարու հետ կռուելու հետ էին՝ սուլդան սէլիմը խաղաղուե՛ մէջ ըլլալով նոր կարգադրութիւններ ընելու հետ եղաւ. որովհետեւ բարեկարգութի՛ւն ընելու յօժարամիտ Թագաւոր ըլլալով նաեւ զբօսասէր ու զուարճասէր՝ կուզէր որ ժողովուրդնալ խաղաղ ուրախ ըլլայ, աղէկ օրեր տեսնայ։ Ուրաջ ուզեց զօրքը կարգաւորել. գիտնալով որ հիմակվան Ֆրէնկիստանի ծեծկրվիլը առջի կերպն ու ձամփան փոխած ըլլալով՝ էր ըլլար անոնց հետ հին կերպով ծեծկրվիլ, հոգ տարաւ որ անոնց կերպը կրթուելի՛ը իր տերուելե՛ մէջնալ խօթէ։ Ուս քանիս գլխաւոր զրդօղը կարգի դնօղը եղաւ էլէպի մուսդաֆայ էֆէնտին, որուն վրայ խօսեր էնք 1774 տարիին պատմուե՛ր մէջ. ասոր յորդորելովը սկսաւ նոր զօրք ժողվել Ֆէլեմի ձեւով կոչելով, նոր խշլաներ շինել, նոր Ֆրանսզ վարպետներ կանչել Թիւֆէնկի աւելի Թօփ նետելու կրթուելի՛ որովհետեւ[1]։ Ուս պատճառով Թօփխանէին աղբիւրին առջին եղած հրապարակը՝ որ առաջ մեր ատենը խիստ մեծ էր, շատ Թօփեր զրլած կային հոն. անոնք վերցընել տալով՝ հրապարա-

(1) Ըէլէպի էֆէնտիին զրդօղնալ եղավ կըսեն ան ատենվան եկող Ֆրանսզի դեսպան մը, որ տուն տը-վավ տուրք ձգել ամէն բանի վրայ, անանկով եկա-մուտ կապել ա՛ս մեծ խարճիս համար։

կին կէսը զատեց սուլդան սէլիմը. անոր կանակը լիւլէձինէրու խանուճնէր կային կարգաւ, ան խանուճնէրը անկից վերցընելով՝ ղալաթայէն պատին տակը բերել տալավ խէնտէկին ձամփան ուր խանուճ չկար. քովերնէնալ տունէր աւնելով 1792 և 1793 նոր Թօփձինէրուն համար խշլայ շինել տալավ, նոր տեղ Թալիմ ընելու կրակովը շաբաթը երկու օր։ Թօփձի պաշինալ մէկ Թուղլուի պատիւ տրվավ, քիւրքին երեսնալ տիվանի մէջ սերասէ հագնիլ, իրեն ձինալ տիվան ըահմիով զարդարված ըլլալ. չօրպաձինէրուն խաքերլէթ չուխայէ ֆէրաձէ հագնիլ սահմանեց. հին գարագուլլուքձինէրէն զատ ամէն մէկ Թօփին վրայ Թօփ ուստասը, եամագ, և ուրիշը նէֆէր դրավ. ասանկով ամէն մէկ Թօփին վրայ 10 մարդ եղան. նաղըրմընալ քեաԹխպմընալ ըստակը բաժնելու՝ համբանքին ցանկը բառնելու համար. ասանկալ ամէն հասարակ վինուորներու զգեստին նշաններին զատ զատ կարգաւորեց նոր կըրԹուԹէ կանոններով. ասոնք հոգալու առաջ տանելու համար մէկ մեծ պաշտօնատեր մը դրավ Թօփչիլէն ասդէր Նաղէրէ անուն։

Կանունի սուլդան սիւլէյմանին ատենը միայն ստանպօլին խշլաներուն մէջ 100 հազար էնինիէրի կելլան եղեր, սուլդան սէլիմը Թախտը անցած ատենին կարգադրեց որ՝ 400 հազարին աւելի զօրք ոտքի վրայ կեցած պատրաստ ըլլան Թալիմ սորվելին.

գտաւ որ հին ատենը 54 պէօլիւկին չօրպա-
ձին կրնօղ կըլլայ եղեր հնիչերնիներուն :
Ա՛ս քանս նորէն հաստատեց , կրնուէ օրեր
սահմանեց ուր ամէնն մէկ գունդին պաշ-
քեաթիսը ( գործակալը ) 6 եաղըձի ներ-
կայ գտնըվին , 4 օրնանաւ հոն գտնըվին ,
խորհէզէն ինչվան խասըմ շաբաթը 2 հեղ
կրնուէնի ընեն . մէյմը սէյիրտիմ մահալ-
լեսին Թօփ գափուին դուրսի դին , մէյմը-
նալ սէյտապատ որ է քեաղէտխանէն . ձը-
մեռնալ Թալիմ ըլլըվի երբոր օդը ձեռք
տայ . Ա՛նոնկալ ձկպէձինիներուն ապսպրեց ,
որոնց գլխաւորին ձկպէձի պաշին մէկ
Թուղլուի պատիւ տըվավ : Ա՛ռապաձինի-
րուն խշլան որ առաջ ահըռ խափուն էր՝
հիմա Թօփձինիներուն քով յատուկ խշլա մը
շինեց ասոնց համար . ասանկալ խումպա-
բաձինիներուն ու լաղըմձինիներուն մեծաշէն
խշլա շինել տըվավ սիւտլիւձէ տեղը , և
միւհէնտիսխանէ , ուր կըսորվեցընեն ու-
սուճականուԹի որչափ որ պէտք է իրենց :
Ա՛մէնն տեղէն երևելի եղավ իւսքիւտար
շինած նոր Թալիմին տեղը . ուր մեծաշէն
ձամի մը շինեց սուլդան սելիմ երկու մի-
նարէով , մեծաշէն բաղնիք , խշլա , ամբողջ
մահալլէ մը իր անունովը Այէվէ ըսված ,
լան ձամիճանէրով խանուԹներով խահվէ-
հներով որ իւսքիւտարի մէջ ամէնէն աղ-
վոր տեղը եղավ . սանտալձինիներուն խան
շինել տըվավ , որոնք ամէնննալ ախարկէթ
կապեց սելիմիէ ձամիին : Ա՛նոնկալ պօս-
Թանձիի օձախին համար Թալիմի տեղ ու

խչլա չինեց Լիվինտ չիֆտլիկին, ուր պօս-
Թանձինէրուն Թալիմին կերպ կերպ չարժ-
մունքը պատկերի մէջ կրնաս տեսնալ մա՛ն-
մուտ բաիֆ էֆէնտիին հանած գրքին մէ-
ջը Թուղթ 54։

Լ՝ որովհետև աս նոր կրթուԹԵ ձամիան
բանելու չէր ըլլար առանց մեծ եկամուտ
ունենալու՝ անոր համար նոր պաշտօնատեր
դրավ Լրաւէ ձէֆիկ ֆէֆիէրաւէ անունով.
ասոր տրվավ իչխանուէ տիվանին մէջ պաշ
տէֆԹերտարին քովը նստիլ, քիւրք հագ-
նիլ կարմիր երեսով, եէտէկ ձի մը քաշել,
որչափ եկամուտ որ ծեծի համար կապած
էին առաջուցմէ՝ ասոր մնտուկը մտնալ
հրամմեց, 1792 (1207 հիճրէԹին) ան մա-
լիքեանէները որ 500 ղ՚ուշէն ինչվան 15
հազար ղ՚ուշ եկամուտ կըբերեն՝ սահմա-
նեց որ տէրը մեռածին պէս մէզաԹ ըլ-
լըվի, աւելը տըվողին ծախվի. իսկ ան մա-
լիքեանէները որ 15 հազար ղ՚ուշէն աւե-
լի իրատ կըբերեն՝ տէրը մեռնելու ատե-
նը չիծախվին, այլ պատերազմի մնտուկին
կապվին։ Լ՚ուաջ կէօմրիւքը նաև ԹիւԹիւն
կէօմրիւյին՝ տաձկին տէրուԹԵ մէջ սէհիմ
ընելով կտոր կտոր կըծախվեր, հիմա վըճ-
ռեց որ առնողը մեռնելէն ետև չիծախեն,
հապա աս նոր մնտուկին մէջը մտցընեն։
Հնուցմէ դրված եր որ Օ յառէնէ ու Լվէխա-
էէ տիրվըտանքը պարտկան ըլլան, ծեծի
ատեն իրենց ձիով պատերազմ երթան.
բայց ետքերէն ոմանք մէյ մէկ պատրուակ
(մահանայ) բերելով չէին երթար. սուլ-

դան սէլճիմ պատերազմը լինցընելէն ետև որ առաջները պատմերենք՝ 1790 Ձիշդ ցանկ մը ընել տրվավ ասոնց . ով որ ծեծի չէր գացած՝ յանցաւոր սեպելով անոնց կալուածները նոր մնտուկին առավ : Տերեա գալէմին տակնալ ուրիշ զիամէթ ու Թիմարները կային , բայց որովհետև ծովն հաճար ձիաւոր զօրք պէտք չէր ըլլար՝ անոնց եկամուտնալ սահմանեց որ տիրվըտանքը մեռածնին պէս նոր մնտուկին երթայ : Ղրիստոնեից վրայալ ամէն տեղ բէոհ պէճրէն եվելցուց , 2 փարայ մէկ օխայ գինիին վրայ . 4 փարայ ըրախիին վրայ . բամպակ առնողները առաջ օխային ըստակ մը կուտային , հիմա հրամեց փարայ մը վճարել , իսկ մանածին 2 փարայ . բուրդին հաճարալ ամէն ոչխար ու այծ գլուխ մէյ մէկ փարայ վճարել ապսպրեց . գնեթորինալ ( սաչը խրպրըզնալ ) օխային 1 փարայ : Ասոնցմէ եկածները համրեցին 1798 (1212), տեսան որ 64 հազար քէսէ , 250 հազար ղէշ տարին եկամուտ կապված կըլլար աս նոր մնտուկին : Մէկ եկամուտի տեղը նալ զալաթա սերայիին պօսթանը եղավ որ երկուք էր , մէկը մեծ՝ պէյօղլուէն կըսկըսեր դեպ ’ի վար չուխուրը ինչնալով լեհի դեսպանին սերային քովէն ինչվան Թօփխանէին Ճամիան կըհասներ . ասիկայ կաոր կաոր բայէներուն ծախելով տներ շինեցին , որ կերթայ ինչվան լեհ սօխախին ըսված Ճամիան . Թօփխանէ ինչնալու Ճամիանալ տուներ ու խանութներ շինվեցան . ամէն

պէտք ըլլալու էմնաֆիէն մէյ մէկ խանուքի քանալով որ եէնի չարշի ըսվէցաւ . մէկալ պօսթանը վերը ձատէ սօխախին վրայ էր , անալ ծախէլով տներ շինեցին , ուր փորէլու ատենը հին գերեզմաններ գտան վրան գրերով :

Օ օրաց ապրուստնալ հոգալու համար որ պէս զի ծեծի ատեն նեղութիւն չիքաշէն՝ դուռնային քովերը համբարներ շինել տրվավ , բարեբեր երկիրներու մէջ ու ծեծի մօտիկ տեղվանք . ստանպօլի մէջնալնոր նոր համբարներ շինել տրվավ , մանաւանդ ան մեծ քեավկիր համբարը որ էօքիւզ լիմանին է . 23 հազար քէսկալ տրվավ ստանպօլի համար ցորեն առնելու . աս քանիս համար նոր պաշտօնատեր մը գրավ Չոպպօպէ նաղըրէ անունով , որ երկրորդ տէֆթերտարի կարգը անցաւ երեն յատուկ դուռ ունենալով յատուկ մարդիկ՝ աումինալ աղեկ թոշակաւոր , որուն մտատուկին քեավկիր տեղ շինվեցաւ սերային առջի բակին մէջ . ցորենին գիննալ որ առաջ խիստ ցած գնով կառնէին միրիի համար , մանպահեաձիները շատ ճնաս կուտային , ապրսպրեց ատենին հասարակ գնովը առնել : Պարուէնալ հոգաց սուլդան սելիմը վարէն եկած նոր վարպետներ բռնել տրվավ , որին 500 որին 1000 ղուռուշ վճարք տալով ամիսը . առաջ թէպէտ պարուէթխանէ կար ստանպօլ , բայց ձիով կրգառնար . հիմա ջրով դարձընելու համար նոր պարուէթխանէ մը շինել տրվավ Ղաթալը

գեղը, որ քիւչիւք չէքմէճէին քովը ըլլալով՝ շատ է հոն ջուրը՝ ասոր ու հին պարուրթ-խանէին համար նոր վարպետաբան չարխեր հնարեց հայկազեան առաքել աղան հաճի տատ ըսուած [1], որուն շատ պարգև պա-տիւ ու ֆէրման տըւաւ սուլդան սէլիմը իրեն շինել տըւած հարտարագործ չարխե-րուն համար, նաև իրեն շինել տըւած պա-րուրթին աղէկ որակուրթը համար. յա-տուկ սէյմէններ տալով 48 գեղի վրայ հոր դատաւոր կեցուց. աս չարխերով 10 հա-զար քվինդալ պարուրթ կելլայ տարին, նը-ման ինկիլիզի ու ֆիլէմէնկի պարուրթին ո-րակուրթ. իսկ թէ որ աւելի հանել ուզեն՝ չարխերը բանվորները շատցընելով ինչվան 30. 40 հազար քվինդալ պարուրթ կրհա-նեն տարին. ասոր համար խափանվեցան մէկալ հին պարուրթխանանները որ սէլանիք ու կէլիպօլու կային:

Ըէ թէ միայն զօրաց վրայ նոր կարգադ-րուրթ ըրաւ սուլդան սէլիմ, հապա նաև կառավարուրթէ վրայ. որովհետև իրեն ա-տենը կառավարուրթէ մեծ բաները օխտը հոգի ընել սկսան. չորսը դուրսէն. ասոնք են չէլէպի մուսդաֆա էֆէնտին որ գլուխ էր նիզամի ճէտիտին. իպրահիմ քեահեան (այսինքն վէզիր քեահեասին). վալիտէ քեահեասին եուսուֆ աղան. հաճի իպրա-

---

(1) Ասիկայ դովելով մը կըսէէ մահմուտ բաֆֆ է-ֆէնտին իր դրքին մէջը թուղթ 27. որ գաղղերէն պատկերազարդ չինած տպած ունի ստամպօլ 1798:

հիմ էֆէնտին որ ետքէն նիշանի Ձէյտինին տէֆթէրտարը եղավ . իրեք հոգիավ ներ-սէն սերայէն, ասոնք են սըռ-քեաթխիի մուս-դաֆայ էֆէնտին , ահմէտ պէյ մապէյն-Ձին , գահվէձի պաշը ըիւսթէմ աղա : Ա-օխտը հոգին սկսելով կառավարուԹԵ մէջ խառնըվիլ , կամայ կամայ բանը հոն գը-նաց՝ որ իրենք եղան բոլորովին կառավա-ըող . վեզիրին առջի բացարձակ իշխանու-Թիւնը մարեցաւ . Թագաւորնավ քիչ քիչ ետ քաշել տըվին . իրեն հաւնեցուցին ամ-մէն մէկ բանի չխառնըվիլ , սիրտը չիմա-շել , այլ իրեն զբօսանքին ու զուարձուԹը նայիլ . անանկ որ տաՁկին տէրուԹիը միա-պետուԹԵ դարձաւ եղաւ հասարակապե-տուԹի մը աս օխտը հոգիի վրայ . մէջեր-նին ամմէնէն երևելին՝ ամմէնէն աւելի խօսքի տեր եղավ վերոյիշեալ եուսուֆ ա-ղան որ կիրիտցի էր , վալիտէն իրեն կըռ-նակ ունենալով՝ ինչ որ կուզէր , վալիտէ-ին անունովը ընել կուտար սուլդան սելի-մին . ինչվան գրեԹէ բոլոր կառավարուԹիը կամայ կամայ իրեն ձեռքը առավ . բան մը չէր ըլլար առանց իրեն գիտնալու , ա-ռանց իրեն կամայը . ետքերէն անանկ է-ղավ որ դեսպաննէրը ասոր անունը մեծ Թագաւոր դրին , բուն մէկալը պզտիկ Թա-գաւոր կանչեցին . ամմէնէն պարգև կու-գար իրեն դուրսէն նեբսէն հեռու երկիր-նէրէն , ամմէնավ ասոր կըվազէին խնդիրք-նին կատարելու . ընծայ , ըստակ , ամմէնէն գետի պես կըվազեր քովը : Այսչ իրեն հաս-

յընելու համար դուրսերը շատ զրկողու-
թիներ կընկին. շատ դիպուածներէն մե-
կը միայն պատմենք: Նշանաւորի երկիրը
մեկ երեւելի մարդ մը թիւրքի մը ձեռքէն
բռնութիւն կառնէ իր ձին որ խիստ ընտիր
էր. ասոր ըրած զրկողութիւնն ձանձրացած
ըլլալով թիւրքը՝ ստանալու կուգայ ամբաս-
տանելու գանկտելու մանաւանդ աս վալի-
տէ քեախեասիին եուսուֆ աղային որպէս
զի արգարուշի ընէ. բայց երբոր իր խօնա-
խը կըմտնայ՝ մէյմընալ կըտեսնայ իր փնտը-
ռած ձին ասոր ախոռին մէջ կապած. աս
տեսածին պէս առանց բան մը զուրցելու
խակոյն կելլայ կըփախչի. կըհասկընայ որ ա-
սոր պարգև խրկելու համար առէրեն եղեր
իր ձին. թէ որ բան մը հոն զուրցելու ըլ-
լար՝ իրեն գլուխը կըկտրէին ինչպէս որ ե-
ղերը շատոնց: Նոր ասանկ իշխելը տի-
րապետելը օրէօր առաջ երթալով՝ իրեն
հետ մէկ տեղ նաև վերոյիշեալ վեց հոգին
բոլոր տէրութիները կառավար եղան. իրէքը
ներսէն թագաւորին միտքը իրենց դին կը-
փոխէին, մանաւանդ սրտքեաթխային ու-
զածին պէս գրել կուտար ամէն բան. չոր-
սը դուրսէն. հոն հասուցին բանը որ թա-
գաւորին արզուհալ տալնալ ընչացուցին.
կամ ձեռքը չէին իտար հասցընել, և կամ
գանկատի արզուհալին տեղը ուրիշ արզու-
հալ մը կուտային կըփոխէին: Նկին չարը
հատնելով ուրբաթ օր մը երբոր թագա-
ւորը այս սօֆիան եկեղեր սկլամըշխ, որ-
պէս զի իր արզուհալը թագաւորին ձեռքը

հանել՝ արդուհալին վրայ երկրքեն կիւռվե
կապելով՝ անանկ վարէն վերնատունը նե-
տեց Թագաւորին առջին ուր որ նստեր էր.
քովինները առնելու կարգալ տալուն տե-
ղը շիտ Թուրքի մը հանելով իբր թէ ասով
Թագաւորին ուզեց զարնել ըսելով՝ չուտ
մը ան մարդը գլխատել տրվին։ Ինանքալ
անանկ կլսպատմեն որ՝ աս օխտը հոգին Թա-
գաւորը միշտ կը յորդորեն եղեր որ շատ
դուրս չերևնայ. Թշնամիները շատ ըլլալով
ջըլայ Թէ օր մը փորձանքի բերեն զինքը
ըսելով, որպես զի իրենք ընեն ամէն բան
Թագաւորը չիմանայ. բայց որովհետև սուլ-
դան սելիմը արի մարդ ըլլալով ասոնց մը-
տիկ չեր ըներ, աս մարդուս ան կիւռվէն
նետել տրվին որպես զի վախցընեն, չուտ
մընալ գլխատել տրվին, ջըլայ Թէ մարդը
խօսեցընել տալով երևան ելլայ իրենց դըր-
դելով եղածը։

Բայց ասոնց ասանկ չորս դիէն կապելը
Թագաւորը, իրենց ուզածը ընելը, շատ
Ճշդոհանք բերաւ մկակ ըիձանէրուն մէջ.
չիհանիլ սկսան նաև իրենց ըրած աղէկ
բաներուն վրայ. իրենց պատճառովը սուլ-
դան սելիմի պես աղէկ Թագաւորնալ աչքե
հանել տրվին որ ամէն սրտով կուզեր որ
ժողովուրդը հանգիստ ուրախ ըլլայ, չէ Թէ
զրկեալ ծնայ. բայց ինչ ընէ, աս օխտը հո-
գին չորս դիացեն անանկ կապել տրվերեին
զինքը, որ Թող չեին իտար բանի մը խառ-
նըվիլ։ Ճշդոհայօղ ըիձանէրը տեսնալով
որ ներսէն քաղքին մէջէն չեն կրնար ան

օխտը հոգիին վրէժը առնել, որովհետև ամէնն տեղ լրտես (կէօզՃիւ) դրած էին, ինչ որ կըզուրցէին՝ կիմանային, սկսան դուրսէն ռումելիին թէնտիներ հանել Տաղլը անունով. որոնք աս դիս ան դին կըզարնէին աւազակութիւ կընէին, ինչվան իլիմա բանայիրին զարկին, շատ մնաս տըվին վաճառականներուն. ինչվան եկան ըստանպօլին դրանը կարնէնէ գափուսիին մօտիկցան: Ա՛ֆկալ դիացէնալ ենիչէրի օՃախին դէմ ելլալով աս նոր կրթուէ զօրաց, անոնքալ տակէն ուրիշ կերպ թէնտուէթի մը կընէին. անանկ եղավ որ վերջապէս աս նոր կարգաւորութիւը պատՃառ եղավ սուլդան սելիմին մահ բերավ. որուն պատմութիւնը կկրնայ հետևեալ դարուն մէջ:

Ա՛իայն թէ աս օխտը հոգիին ատէնը քանի մընալ աղէկ բան մտաւ կառավարութէ մէջ. մէյմը ծածուկ պահել խորհուրդնին. առաջ ինչ որ տաՃկի խորհուրդին մէջ կըզուրցըվէր՝ դրեթէ նոյն օրը դուրսնալ կիմանային ամէնը նաև հասարակ ժողովուրդը. ասոնց ատենէն սկսաւ խորհուրդը դուրս չիհանել. որովհետև ներս մտնօղնէրը ամէննալ երդվընցած ըլլալով բան մը չէին կրնար դուրսը պատմել: Ե՛րկրորդ՝ լրտես (կէօզՃիւ) ունենալ ամէն տեղ որով կառավարըը կիմանան ամէն բան: Ե՛րրորդ՝ ինչվան հիմա մէկի մը պատիւ տալու նշան՝ քիւրք հագցընելն էր տաՃկին տէրութէը մէջ. սուլդան սելիմին օրը ֆռէնկ-

ներու պէս ասպետուԹէ կարգ (օռաինէ) հանեցին, ոսկի միտալ վրան կէս լուսին ու աստղ ունենալով։ Ղորղորդ հիւանքեար իա քէլէսին մեծագործ չինուածով քեաղետխանէ չինեց սուլդան սելիմը ԹուղԹի գործարան։ Հինգերորդ՝ տաՀկական տպագրուԹիւն որ շատոնցմընէ խափանված էր՝ նորէն բացաւ իւքիւտար։ Վեցերորդ՝ ֆրէնկիստանի տէրուԹեց դեսպաններ խըրկել սկսաւ. ինկիլիզի, ֆրանսզի, նեմչէի, պրուշի, որ առաջ չունէր տաՀիկը, Թէպէտ եաքէն վերջացաւ։ ՅօԹներորդ՝ գիտնալ ֆրէնկիստանի տէրուԹեց Հետ խօրաԹէլ մնաւ, պատՀառներով իրենց իրաւունքը ցըցրնել։ Ուս քանէրս սորվեցընող աւելի եղան մուհիզները, որ չորս աղբար էին, ալէսսանտրօ որ պէյ եղավ, տիմիդրաշքօ, եօռկօ, քանաեօդ, որոնք ԹէրՀի մանուԹէ մէջ պտըտեցան, խօսքերնին անցուկ եղան մանաւանդ տիմիդրաշքօին, բայց իրեքնալ սպանըվեցան. խիստ կարդացող, աչվընին բացված, կառավարուԹէ կենցաղակրԹուէ մէջ եփած մարդիկ էյան. ասոնց աղէկ կրԹուէ տըվողը եղերը իրենց Հայրը մուհիզ կոստանդնին ուլաՀ պէյին. որուն բաղձանքը աղէկ կրԹուէ տալու Թէ իրեն և Թէ իրեն տղոցը զարմանալի քանմընեը. տղակուց աղէկ ֆրանսզերէն խօսիլ սորվելու Համար՝ մէկ ֆրանսզ մը իր ընտանիքով տանը մէջ կըպահէր, աղէկալ լատինէրէն խօսիլ սորվելու Համար՝ մանաՀ մը կըպահէր. որովՀետև անոնց մէջ

հասարակ է լատին լեզուն. ասանկալ ուրիշ լեզուներու և ուսմանց համար հոգ տարաւ. գիտութեն սորվելու համար մատչան ձեռվիթը ուշադ տարաւ իր տունը նըստեցուց վարպետ ըրավ, որ խիստ կարդացող մարդ էր։

Երբոր սուլդան սելիմը ասանկ ներսէն շէնցընելու հետ էր օսմանեան տէրութիւնը, դուրսէնալ փառաւորցընելու հետ եղավ երևելի մուրատձանը. ասիկայ ֆրանսզերէն աղեկ գիտնալով ան լեզուով գրքեր հանեց օսմանեան տէրութեը վրայ. որուն առջին տպածը եղավ կրօնքին վրայ, ուր կխօսի նաև իրենց հանդէսներուն վրայ. ա գիրքս 1784 փարկզ տպելէն ետև, երբոր ստանալ եկավ նոյն պատկերազարդ գիրքը մեծ դրքով տպածը դուրս տարաւ Թագաւորին տալու համար. ցըցընելով որ չափ փառաւորուն կըլլար անով եւրոպացոց առջին։ Ա՛ս գիրքս անչափ ընդունելի եղավ սուլդան սելիմին՝ որ 15 հազար պարգև տըվավ իրեն. աւելի փառաւորութեն կըլլար թէ որ օսմանեան կառավարութիւը, գինուորութիւը, պատմութիւը եւ տպած ըլլար ինչպէս որ ինքը կըխոստանայ յառաջաբանութեը մէջ, և ձեռագիրնալ լմնցուցած է չէ թէ միայն օսմանեանց վրայ՝ այլ նաև ամէն տաճկական Թագաւորութեց վրայ, նաև ան ազգաց որ օսմանցիին տակն են. անոր համար երբոր վենետիկ մեր վանքը եկավ 1792, մենք ուզեց հայոց Թագաւորներուն վրայ տեղեկութիւնը, հայաս-

## տանին ձեռագիրը նոր աշխարհացոյցը [1]։

### Հիւսէյնին խաֆուրան ֆալային ըրածները։

Սուլդան սելիմը նոր նստած աթոռը ներսէն ելած երկու հոգի խիստ մեծցուց. մէկը իրեն լալան (դայեակն) էր, որ կըսվէր Լալա Մահմուտ պէյ. ասիկայ վալիտէ քեահեասի ըրավ [2], որ բուն Թիւրքք ըլլա-

---

(1) Ինքը մուրատճան բուն սահանպօյլի էր Հայու ցեղէն. որոնց յատուկ տուընն էր պէյօղլու՝ որ անուն նայ ժամին քովինը, որ եաքը լօռէնցօ ձկերքայինն ձեռքը անցաւ. բայց իր հայրենիքը գոցելով գրքին ձայնը միայն ապահա օսմանի զինքը կրկոչէ, որով ոմանք եւրոպացոցմէ չհմանկընալով իր ազգը, իրենց գրքին մէջը յոյն կըկոչեն զինքը: Ասիկայ սահանպօյլէն ֆրէնկիսան երթալով հոն սորվեցաւ ուսումը. եաքը աղէկալ տաճկերէն սորվելով շվէտի դեսպան՝ նին Թարհման (Թէրճիման) եղավ, շվէտ գնաց՝ Օսմանի ասպետութենէ պատիւը առավ. մէյմընալ երբոր դարձաւ նորէն գնաց՝ ինքը շվէտի դեսպան եկավ. սահանպօլ. լինելուէն եաւ նորէն գնաց դուբրով մեռաւ: Անչափ սէր ունէր կարդալու գրելու՝ որ որչափ գրաղեալ ըլլար թագաւորական գործքերու մէջ՝ ամէն օր 7 ժամ գրելու կարդալու հետ կըլլար ասելի գիշեր տուեն, ինչպէս որ ինքը մեզի կըպատմէր. ան սերովը օսմանեանց վըռյի գիրքը սկսաւ, իրենց գրքերէն բուն տեղերէն հասկընալով:

(2) Սուլդան ահմետէն վեր չէր եղած թագաւոր որ թախտը նստած տուընը վալիտէ ողջ ունեցած ըլլար. անկէց քանի խաս որ ուներ վալիտէն (որ խիստ շատ է), միրեկն կըձախվէր. հիմա սուլդան սելիմին վալիտէն իր խասերը ամէնուն ամբողջ ուզեց. ասկից եղավ որ սէրուճիները շատ աշխատանքով ան խասերը սերվըռոցը ձեռվընէրնէն առնելով վալիտէին ձեռքը տըվավ: Իրեն սէրայ գալու օրը մեծ ալայ եղավ. հսկի սէրայէն հարիւրաւոր առագաստներ ասղընկերով

լով՝ Թիւրքին աղէկ բնութիւնը ունէր . ուրիշներուն բարերարօղ, առատաձեռն, գըթած . շատ մարդ պիտոր ինտար իր կռնըկէն , բայց կեանքը կարճ ըլլալով իբր տարի ու կէս անցնելէն ետև մեռաւ . իր տեղը վալիտէ քեախեասի եղաւ վերոյիշեալ եուսուֆ աղան . որ Թիւրք չըլլալով այլ կիրիտցի , քուն կիրիտցիի բնութիւնը բանեցուց :

Արկաղնալ եղաւ Ռիւշտիւք Հիւսկինը, որ սուլդան սելիմին շահզատութէ ատենը իրեն քեօլէն էր կիւրձիկն եկած , մանաւանդ տիկ անդամներով պզտիկ մարդ մը՝ քիչ կուտեր քիչ կըքնանար , բայց բնութիւն արի վառվռուն ձարպիկ . որ իրեն բնութիւնը հաճար խիստ սիրելի ընկեր էր եղած սուլդան սելիմին երբոր ներսն էր . ձիրիտ խաղալ , լօպուտա նետել , օխ նետել , Թիւֆենկ նետել , ասանկ բաներու խիստ յաջող խիստ վարպետ . Թուր բանեցընելու անանկ ձարտարութիւն ( ուսուլ ) մը ունէր՝ որ մեկ զար-

---

սօրղուճներով զարդարված առջևէն եաւէն , Թող տուր բիձաներուն տղայներուն բաղմութիւնը՝ բերին ինչվան պապի հիւմայունին սերային առջև բակը մտուցին . սուլդան սելիմը ձի հեծած ներսէն ալայ նէրով իր առջին ելավ դիմաւորեց . հոն երբոր փոտուլային փուանը առջին հասաւ , ձիէն վար ինջնալով դէպ ՝ի վալիտէին առտպան քալելով իրեք տեղ ԹէմէլաՀ ընելով անանկ գնաց առտպային մէջէն ձեռքը պագաւ . եաքը նորէն ձի հեծնալով իր առջին ըլնելով ներս բերաւ իր տեղը նստեցուց , որ ան օրը էակի սերայէն բերած ամմէն աղջիկներնալ չրաղ հանելով մէյ մէկ պաշտօնի մը վրայ գրաւ վալտէն իր ծառայութիւնը մէջ :

նելով 12 Ձիզմին կեցած տեղէրնին կըկըտ-
րեր. 36 խաթ ծալած ու Թրջած քէչէն
չուանէ մը կախված տեղը՝ մէկ զարնելով
երկու կաոր կընէր։ Ասիկայ ետքը խազի-
նելի օտան ելավ աղայ եղավ, խազինէ քեա-
խեաիէն խաֆԹանէն եղավ. բայց երբոր
սուլդան սելիմը Թախտը անցաւ՝ խիստ սի-
րական ըլլալով պաշ աղայ ըրավ իրեն, ետ-
քը խափուտան փաշայ. տարիմը անցնելէն
ետև՝ Եսմա սուլդանը որ սուլդան Համիտին
աղջիկն էր՝ իրեն տալով Թագաւորի փեսայ
ըրավ. որուն ելլէն դրնախէի ըսված ե-
լլէն եղավ, բայց բոլորովին նոր չհնելով ե-
ղավ ան արքայավայել ելլէն՝ որ ինչվան
հիմա կեցած է խուրուչէշմէին մօտիկ։
Ասիկայ փաշան խափուտան փաշայի իշ-
խանուԹիը ձեռք առածին պէս Թէրսանէն
փոխվեցաւ. չուտ մը նոր բարեկարգուԹիե-
ներ ընել տըվավ. ֆրէնկիստանէն վար-
պետներ բերել տալով նաեր շինել տը-
վավ ամենևին հիմակվան եւրոպացոց վար-
պետ չէնքերուն նման. իրեն մարդոցնալ
սորվեցընել տըվավ ան վարպետներուն
ձեռքովը, որով հիմաալ կըշինեն անոնց
նման նաեր. կարօտ չէին ըլլար օտար վար-
պետներու չէ Թէ մինակ ստանպօլի մէջ,
այլ նաև սև ծով ու Ձերմակ ծով եղած
Թէրսանէներուն մէջ, որ 19 տեղ կըդտնը-
վին։ Հավաքմընալ շինեց որուն մէջ կըշի-
նեն խոշոր նաերը. ոչ երբեք ասանկ եղած
էր օսմանեան Թէրսանէն. առաջ որովհե-
տև խզախով ծովը կըձգէին, Թող տուր

ծանր աշխատանքը՝ երբեմն նաւերը կրճխա-
սէին, երբեմնալ դիմացի մները, ինչպէս
եղաւ մեր օրերը սուլդան Համիտին ատե-
նը, Թէրսանէն պէյլիկ նաւ մը խզախուղ
ծովը ձգելով՝ գնաց դիմացը ֆէներ մէկ
եալը մը փլցուց։ Ա՛րաջ մարանկօզները
22 փարայ աւուրչէք կառնէին Թէրսանէն,
ան ատենն որ վաճառականի նաւերու վրայ
բանեցող դուրսը իքիլիք կրնային առնել.
անոր համար Թէրսանէն կրփախչէին, չա-
վուշները բռնի կրբերէին Թէրսանէն բա-
նելու. հիմա հիւսէյին փաշան աղէկ վճարք
տալով 500 մարանկօզ. 150 պուրղուձի, 40
շաղիրտ սահմանեց. ասանկալ աղէկ խա-
լաֆաթձի չիգտնըվելուն համար Թէրսա-
նէի մէջ մնրէն բերել տրվավ 200, վար-
պետ խալաֆաթձի, անոնց համարալ խշլա
շինել տրվավ. նաւերուն մէջէն պայրախ-
ներով խօրաթել մտուց. աս բանիս համա-
ր՛ալ նաւերու մէջ հօձանէր պահեց 500
ղուռուշ ամսողչէք տալով, պայրախով խօ-
րաթձան հասկընալու համար. նաւերուն
տակերնալ շատին պղինձ (պախըր) պա-
տել տրվավ դրսէն։ Ա՛ն ատենը մենծերու-
նալ հրաման ելավ վաճառականի նաւեր
շինել տալ, կամ դուրսէն նոր ծախու առ-
նել, որպէս զի սև ու ձերմակ ծով երթան
գան վաճառականութիւնը ծաղկեցընեն։
Ա՛սոնցմէ զատ հիւսէյին փաշան ամպարնէ-
րը երվելչէն եաև՝ իրեն համար մէկ սէրայ
մը շինել տրվավ բարձր տեղ մեծաշէն ար-
քայավայել, ուր ինչվան հիմա կընստին խա-

փուռտան փաշայներըը իրենց տնով ընտանիքով. մէջը ուրիշ փառաւոր շինքերէն զատ տիվանխանէի պէս մէկ մեծ օտայ մը շիներ միսաֆիր ընդունելու համար, իվէզ խատիֆէով պատած ամմէն դիսացէն պատերնալ Թաւանոնալ. գիշերը մոմերուն իսը չավրելու համար ամմէն մէկ փենճիրէին մէջ տեղը հիւճիւբիւնէր շինել տըվերէր, մէջը հայլով պատած, դուրսը պիլլօռ ձամ վերնալ ծակ բացված. ասանկով մէջն վառած պալմոմիկ կերոնները ներսը կըլուսաւորէին, իսը դուրս կըհանէին։

Պասանկ ամմէն բանի մէջ հավէսլի ըլլալով հիւսէյին փաշան՝ ամմէն բան գերագոյն կերպով մը շտկեց զարդարեց իրէն տանը բանէրնալ Թէրսանէհնալ, որով անուանի մարդ մը եղավ Թէ տաճկի տէրութէ մէջ և Թէ եւրոպացոց տէրութէ մէջ. ամմէն տեղ անունը էլավ, ամմէնուն վրան մեծ համարում ունէցան. սուլդան սէլիմը ասանկ կըսիրէր զինքը, այնչափ համարձակութէն էր տըված իրէն որ ինչ կուզէր կընէր, ամմէն բանի մէջ կըխառնըվէր, ով կուզէր կըմեռցընէր, մէկը չէր կրնար անոր դէմ խօսիլ. եղերէր իբր մէկ ուրիշ Թագաւոր մը. աղէկ հասկըցընելու համար ասոր մէկ դիպուածս պատմենք։ Պայրամին հետևեալ օրը ինչպէս որ սովորութէն է Թէվ Ճիաթ կըլլըվի մանսուպներուս. տարի մը ան օրվան համար դռնէն ծանուցում եղած էր վաղը 4 ժամուն ամմէնունալ դուռը գալ. ասոր հիւսէյին փաշան 3 ժամուն եկավ

դուռը . ամէնն ըհ՛ալ երար զիրար անցան որ անանկ մեծ մարդ իրենցմէ առաջ եկէ-րեր , վազող վազողի եղան շուտ մը հոն ժողվըվեցան . գանք որ վեզիրը օտաուն ըլլալով որովհետև գայիմմագամ կընստեր դուռը . ան ատենվան գայիմմագամը շուտ մը իր հարեմին ելլալով մտաւ ան օտան ուր որ նստերեր հիւսէյին փաշան . բայց արտորնօք ներս մտնալնին ոտքը դրանը եշխկին զարնելով ընկաւ . ընկածին պէսալ մեռաւ . ( կարելի է աւելի վախէն քան թէ ընկելէն ) . հիւսէյին փաշան խսկոյն մեռելը վերցընել տալով , ինքը գայիմմագամին տեղը նստելով , թէվհաթին թուղթը կարդալ տըվաւ . անոր կէօրէ ամէնհունալ քիւրք ու խաֆտան հագուց , եօքը ելաւ գնաց թէրսանէն : Պուրգան սէլիմը աս լսելով մէկ բան մը չիզուրեց , թէ դուն գայիմմագամ չըլլալով ինչպէս իշխեցիր աս բանս ընելու , որ միայն վեզիրը կամ գայիմմագամը կրնար ընել . իր ըրածը դէմ եր ամէնն կարգի կանոնի :

Պատճառով ինքը մէկէմը թագաւորհնալ էր վախնար , ուրիշներըը ամէնհնալ իրմէ կըվախնային , ինչվան վերոյիշեալ օխտը հոգևնեղնալ , որոնց քովը գիտնալով որ դուրսէն շատ ըստակ կուգար մանաւանդ եուսուֆ աղային , իր քովը կանչելով՝ թուղթը շիշը ձեռքը բռնած ահ ձգելով . անանկ վախցընելով խօրաթելով շատ հեղ 1000 , 2000 քէսէ մէկէն կըպահանջէր , թէ որ քիչ մը դէմ կենալու ըլլար՝ կրկինը կառնէր .

առած ըստակնալ քովը չէր պահէր. խիստ առատաձեռն ըլլալով բուռ կառնէր բուռ կը խարձէր։ ||՝Ինկ հասարակ բանվորի գործք մը հանած ատենը՝ մեկ հասարակ մարդու պախշիշ տալու ատենը՝ բուռ ոսկի կուտար. իր արհեստաւորներուն մանչերը քանի հեղ որ լմնցած բան մը կըտանէին իրեն կըյանձնէին, ամէնն հեղուն թէև օրը իրեք հեղ ըլլար՝ նոր նոր պախշիշ կուտար, տըվածնալ ամէնն անգամուն բուռ ոսկի. մեկ խալաթաձի գործք մը հանելով, 2000 ղրուշ շալ գլուխը կապել կուտար, որով շատ մարդ հարստացաւ իր կռնըկին։ Շատ ըստակ խարձեց նաւերը զարդարելու, ոնք իր սեպհական պէս զարդարերէր ամէնն թախըմով. շատ ըստակ խարձեց նաև իր ձամիւորդութիւններուն մէջ. ամէնն հեղուն որ նաւերով դուրսը ձերմակ ծովը կելլար՝ նոր նոր թախըմներ շինել կուտար, ծանր բանված բարձերով փերտեներով զարդարել կուտար, որ հարիւրաւոր բանվորներ հազիւ կրնային հասցընել. երբոր թագաւորը նաւը գալու ըլլար՝ վերէնիվար կոխած տեղը շալ փռել կուտար ամէն մեկը 4.5 հազարնոց, որ շալերուն վրայէն կոխելով քալելով կելլար։ Յաղնայներ կը խարձըվեր իր մարդոցը համար՝ նաև ֆըռէնկի մենծերուն համար՝ որոնք որ իր նաւը կուգային. մեծ հարկինք ընելով, ծանր ընծայներ տալով. անգամ մը մոսկովի դեսպանին հարկինք մը ըրավ թէրսանէն արծըթէ թախըմներով էսկի մատէն ֆաշ-

ֆուրինեբով, մրթնպանինեբով, չիգանը-
ված բանեբով. եաքնալ ծանրագին պող-
չայ մը տրվավ դեսպանին մէջը ծանրագին
շալեբը սեվայինեբը դրած, 12 ձիալ խիստ
ծանր բանված թախըմինեբով. իր մատա-
մայինալ որուն իր հարէմին մէջը հարկինք
ընել եր տրվեր, աւելի ծանրագին ընծայ
մը տրվավ ձեվահիրնեբով զարդարված։
Ղսանկով օսմանեան տերութե փարթա-
մութիը իր առատաձեռնութը ցըցուց ամ-
մէնուն աս հիւսէյին փաշան, բարեկարգու-
թինեբը մտուց. նիզամի ձետիտ վինուորաց
կրթութինալ ինքը առջինը եղավ խօթե-
լու. վասն զի թէպէտ չելեպի մուսաֆայ
էֆենտին մտածերեր կարգի դրերեր ամ-
մէն բան, բայց ինքը չիկրնալով համարձա-
կիլ'ի գործ դնելու՝ հիւսէյին փաշան ձեռք
առավ, անոր սիրտը շարժեց յորդորելով.
անանկով առջի թալիմ խօթօղը եղավ աս
հիւսէյին փաշան. որ առաջ պզտիկ տղաք-
նեբ իր քեօլէնեբէն միակերպ վինուորի լաթ
հագվեցընելով, պզտիկ թիւֆէնկնեբ ձեռ-
վընին տալով, իր տիվանխանէին մէջը կըր-
թուի (թալիմ) ընել կուտար ամէնէն օր,
եաքնալ թէրսանէին մէջ նոր զօրք ժող-
վեց, նոր հագուստանեբով նոր վարպետնե-
բով թալիմ սորվեցընել տրվավ. անկից
եաքը եղավ որ թէրսանէէն դուրսնալ սկը-
սան նոր զօրք գրել նոր թալիմ սորվեցը-
նել։

Այս ասանկ զօրաւոր անուանի ըլլալը հա-
կառակաբար նախանձ բերել պիտոր տար,

ան վերոյիշեալ օխտը հոգին շատ նախանձիլ սկսան հիւսէյին փաշային վրայ, կըմըտմտային կրջանային ասիկայ ստանպօլէն դուրս նետել. բաւզան օղլուին ապստամբութիւնը (որ վարը պիտոր յիշենք) աղէկ առիթ գտնալով՝ ասիկայ սերասքեր փաշայ ընել տըվին սուլդան սելիմին, շատ գօրքով դուրս հանել տըվին. երբոր դուրսն էր՝ ինչ ընեն որ ասիկայ թագաւորին աչքէն հանեն մեռցընել տան, խանչէրլի պէյին պատուէր խրկեցին որ՝ դուռը ստանպօլ Թուղ գանկատ գրէ հիւսէյին փաշային վրայ աս խօսքերով: Այս չեմ կրնար առաքանի պոյրէրս պալա դրան, որովհետեւ հիւսէյին փաշան հանի որ դուրս ելած է ապտնպօլէն, անկէ ըսպառ կըպահանջէ կառնէ ինձմէն, որ ամէն ծողովրդը երեսով հաւնցընել չեմ կրնար երբեմ դային հասցընելը, ա՛ր ինչ ձեղի: Այս խանչէրլին առաջ տերիա Թերձիմանի էր, հիւսէյին փաշան զինքը սիրելէն ուլաճ պէյի էր ըրած, հիմա բռնադատվելէն աս լեզու Թուղթը գրեց ստանպօլ դուռը. դուռնալ նեռս սուլդան սելիմին խրկեց. բայց սուլդան սելիմը անչափ կըսիրեր որ՝ սրդողելուն տեղը՝ պէյին գրած Թուղթը հիւսէյին փաշային ձեռքը խրկեց. անալ կարգացածին պէս կրակ կառեցաւ, մեկէն օռտուն կանչեց խանչէրլին, գլուխը կտրեց. աղէկը ան կըլլար որ գլխատելէն առաջ խօսեցընել տար, իմանար գրելուն պատճառը, որով կիմանար նաև իր Թշնամիներուն որոգայթը, որ ինք պիտի եաքը դեղ տալով մեռուցին

կըսեն աս մարդը իբր 53 տարվան . 13 տա-
րի ու կէս խափուտան փաշայութէն ընելէն
ետև : Որ եղավ մարդմը եղական , իր քա-
րեկարգութիը , առատաձեռնութիը , նաև
արտառոց բարեբաղդութիը մէկ հատիկ .
ինչ բանի փակչելու ըլլար կըյաջողեր , ինչ
բան ուզեր նաև չիգտնըված բանալ ըլլար՝
ինքը ուզածին պէս՝ կըգտնըվեր . իրեն սի-
րելի բան աշխըրհիս մէջ՝ մարդ մեծցընել
մարդ հարստացընելն եր . թէ որ ողջ մնալու
ըլլար՝ միտք ուներ իրեն քովի եղած քէօլէ-
ները ամմէննալ ուզմէլի անատօլու մէյմէկ
վէզիր նստեցընել : Այսոր ուրիշ ըրածները
եթքնալ ունինք պատմելու :

Հիւսէյին փաշային պէս բաղդաւոր եղավ
նաև իր քոյրը նէվրէկ Հանըմը , որ իր եղ-
բօրը հետ ներսը սերայը ծառայութէ մէջ
եր . երբոր սուլդան սելիմը թախտը ան-
ցաւ՝ ասիկայալ իր եղբօրը պէս մեծցուց ,
չորրորդ խաշնատար ուստա ըրավ . իրեն
հրաման տըվավ քիւրքով երևնալ իր առ-
ջին նաև վալիտէին առջին , որ բայ՝ի վա-
լիտէին ու պաշ գատընէն մէկի մը հրաման
չիկայ . իրեն յատուկ եալըմընալ տըվավ
որ ատենօք Հանըմ սուլդանի եալը եր օր-
թա գեղին մօտիկ . երբոր իր եղբայրը հիւ-
սէյին փաշան թէրսանէն մեծ սերայը շի-
նեց , ասիկայ հոն նստեցուց ամմէն փառա-
ւորութէ , ( որովհետև իր ընկերը էսմա
սուլդանը միշտ ստանալու իր սերայը կընըս-
տեր , տարին 1200 քէսէ եկամուտ քաշելով
ինչվան հիմա ) : Որչափ որ հիւսէյին փա-

չան առատաձեռն էր՝ անկէց շատ աւելի եղերեր աս նէվրեզ Հանըմը. քանի՛ ընծայ ըստակ որ կուտար իրեն սուլդան սէլիմին ու իր եղբարը հիւսէյին փաշան՝ գրեթէ նոյն օրը կրնար ձեր, ամէնէն կուտար կըբաշխէր։ Հիմա իրեն կարգը գալով երկրորդ խազնատար ուստա է եղած վերոյիշեալ եալըն նատէլով, իրեն մեծ եկամուտը քաշելով։

## Ֆրանսային մտնալը էդալիա բէյլիքին վրայէն. 1792–1795։

Ֆրանսային խռովուելէն սկսելու ատենը միւսալօն իրատ տըվերեր որ՝ երբոր եկամուտնին Հատնելու ըլլայ՝ իդալիա վազէն առնեն, անոր առատ երկիրը Հարուստ քաղքերը թալանելով հերիք գանձ կըգտնան իրենց. աս մտքիս վրայ ըլլալով՝ առաջուց մէ իդալիային ամէնէն տեղվանքը մարդիկ խրկըվաճ էին ժաքօպէններէն ժողովուրդը ապստամբեցնելու՝ Ֆրանսզին դէն քաշելու Համար, անոնք իդալիացիներէն շատ մարդ վաստըկած էին. անկից եղավ որ՝ Ֆրանսզը քիչ մը զօրքով տեղ մը վազելու ըլլար՝ մէջն վաստըկած մարդիկը որ մենք ապստամբ կըկոչենք, Հազար Համիչայ բանեցընելով կընայէին որ՝ մէջինները մատնեն Ֆրանսզը ներս առնեն. եկօղ Ֆրանսըզնէրնալ թղթեր Հանելով խօսք կուտային փարեզին կառավարօղներուն դիւացին

ապահովուէ հաւատարմուէ պահել ամէն կերպով. ասանկ խօսք տալէն ետև չարիք չէր ընար որ չընէն խեղճ իդալացոց վրայ, ինչպէս որ ետևէ ետև պիտոր պատմենք։ Այս որովհետև իդալիայի մէջ բիւմոնդին երկիրը մօտիկ դրացի է ֆրանսայի՝ ամէն առաջ հոն նայեցան մտնալ, ուր արդէն խիստ շատ ֆրանսզ փախեր եկեր էին, նիցցա քաղքին մէջնալ առաջուցմէ ֆրամազօննե րուն սերմանքը կըցանէին, դուռնին մէջնալ գտան ժաքօպէննէրուն մարդիկը, որ ըստակ տալով կընայէին զինուորները ապրստամբեցընել։ Սառտինեայի Թագաւորը (որուն տակն են աս յիշած տեղվանքը) տեսնալով աս բաներս, սահմանակից քաղքներուն մէջի եղած խռովութիւններնալ լսելով՝ ջանայ կարելւոյն կերպ ասոնք զսպել, 15 հազար զինուորալ էվեցուց, բերդերը ամրցուց. նեմսէին հետալ միաբանուէ կապեց, որ իրեք գունդ խրվաթներու օգնութիւն խրկեց սառտինեայի Թագաւորին, որոնք միանալով ան նեմսէ զօրացը հետ որ արդէն լոմպառտիայի մէջն էին՝ մէկ աղէկ բանակ մը եղան։

Սեպտ. մէջ ֆրանսայի խաչ գաւառի մէջ զօրք կըժողվըվեր. ասոնք փարիզէն հրամանն ուզեցին սավոյա վազելու որ սառտինեայի Թագաւորին տակն է, Թագաւորը ասոնց միտքը հասկըցաւ, բայց չուզեց իր զօրքը երկու բաժնել, մէկ անբեր երկիր մը պաշտպանել լեռներէն ան դին ինչպես

էր սակայն. մենդէսքիու ֆրանսայ զօրապետը փարեզին հրամանին չըսպասելով սեպտ. 22 սակայն մտաւ, շամպռին առաւ, 30 հազարով ինչ-ինչ քօնֆլանս եկաւ, պատճառ դրելով փարեզի կառավարիչներուն թէ իրեն ձեռքը չէր զսպելու իր ֆրանսայ զօրքը՝ որոնց շատը խառնիճաղանճ ժողովրդենէ ժողվըված էին. ան օրնակ անսելմ ֆրանսայ զօրապետը ուրիշ քանակով մը նիցցա քաղքին վրայ եկաւ առաւ, որուն ինչիններէն ոմանք կանչէրէին ֆրանսայը։ [՝Ինչմէնդիկ տեսնալով որ իրենց ուժը քիչ էր՝ Թողուցին, բիչմէնդին լեհներուն կապանները (պօղաղները) գացին պաշտպանելու. քաղքին եռալը իմդրեց անսելմ զօրապետին ապահովութիւն ժամերու վանքերու և ամէն եկեղեցականաց համար. իրեն պատասխան աս եկաւ որ կէս ժամ քեզի ատեն՝ քաղքէն դուրս ելլաս երթաս. ինքը դուրս ելաւ՝ իրեն հետաղ նաև շատ եկեղեցականք ու անվորներ. միացած նիցցացիներուն շատ ծանր նստաւ ֆրանսայ կանչէլին, հարկ եղաւ իրենց 2000 լիրէ տուրք տալ օրը. իսկ իրենց առաւտուրին մէջ զուտ (նպաղտ) ըստրկին տեղը թղթէ ըստակ առնել ֆրանսիներէն, տղաքնին տալ, որ ֆրանսիները բռնութիւն առին ֆրանսայի նեղսիդին իսրկեցին զինուոր ընելու համար, ժամերը վանքերը թալէցին, մահնէն ըրին, խորանները քակեցին, զանկակները երկաթները հալելով թօփ թափեցին, տունէն դուրս ելլօղ երիկ մարդ

հնիկ մարդ մշ մկ փորձանքի կըբերէին։ Նովուն դիացհնալ ֆրանսզնները ոնելիա զարկին, մչլհինները քաղաքը ձգելին փախան, դուրսը դաշտի մը մչ ժողվվելով երբոր ֆրանսզնները քաղաքը կրթալըէին՝ ոնելիացիք ամմէն ուժով անանկ վրանին վազեցին որ կոտրըվելով նորէն նաւը մնան փախան։

Ա՛ս եղաւ ահա առջի վայնասունը իդալիայի վրայ, բայց ասչափս հերիք չեղաւ իդալիայէն տերութիւնները մկ տեղ միաբանեցընել զիրենք պաշտպանելու համար, այլ ամմէն մկ տերուե տարբեր կարծիքները զիրենք զատեց իրարմէ, անանկ զատված ինալով մչմկ՝ մչմկ՝ թշնամւոյն տակը ընկան։ Ինսկըմ զօրապետը առեն առեն զօրք կըխրկեր սօսրէլլօ ու սաօռ-Ճիօ տեղվանքը զարնելու մնաւանդ 1793 մարտի 7, որպէս զի Ճամիայ բացվի բիեմոնդը մտնալու, բայց խրկած ֆրանսզնեըէն շատ մարդ չարդըվեցան թօփերնէն կօրմնցուցին. ազգային միաբանութիւը անՃարակ սեպելով անսկըմ՝ ետ կանչեց քրնուէ ընելու վրան. անոր տեղը իդալիայի բանակէն վրայ զօրագլուխ խրկեց քելէռմանը, ասիկայ յունիսի 8 մկ ընդհանուր յարձակումմ մը ըրավ բիեմոնդցոց վրայ մինդդօ տեղը, ուր շատ ֆրանսզ կոտրըվեցան, բայց բիեմոնդցիքալ ետ քաշվեցան սաօռՃիօ տեղը պաշտպանելու համար։

Երբոր մարսիլիա խառվուէ ելավ՝ մկ մասը սավոյայի մչ եղած ֆրանսզին զօրքը

հոն գնաց. ան առենը բիւմանդիք սավոյան մէջ քիչ մը առաջ դային ետքը քաշվեցան. ան միջոցին մէջը ինկլիզին ու սառատենեայ-ին Թագաւորը դաշնադրութիւն մը ըրին, խօսք կապելով որ սառատենեան 50 հազար զօրք հանէ ֆրանսզին դէմ, ինկլիզնալ 200 հազար կինեն վճարէ տարին սառատենեային. անկէց զատ մէկ նաւատորմիղ մը հանէ Չերմակ ծովը պաշտպանելու համար: Այայ ինկլիզին նաւերը հասնելէն առաջ ֆրանսզը զօրանէն նաւեր հանելով սառատենեայի կղզիին վրայ եկավ, քայլիաւի գալով պետրոս կղզին առավ. 1794 յունվ. 22 բալինաս մտաւ, անձնատուր ըլլալ առաջարկեց. փետրվ. 14. 15 քաղաքը Թօփտեց. 40 հազար անդամն աւելի վրան Թօփ պարպելով. 15ին 4000 մարդ ցամաքը հանեց. բայց սառատենեայիք աղէկ ծեծ կրվելով նորէն նաւերուն մէջ փախուցին զիրենք: Վասիլիկ փոթեմրիկին որ 27ին եւ լավ ֆրանսզի նաւերուն շատ մեաս տըվավ, նորէն ծեծել սկսաւ 100 հազար հեղ Թօփ պարպելով վրան. սառատենեայիք աղէկ դիմացան. ֆրանսզիներուն նաւերնալ փոթեմրիկն աւելի քաղքին Թօփերէն մեաս վէլով զօրն դարձան: Աղկէց ետքը եկան սպանիայի նաւերը սառատենեայոց օգնութի ընելու 23 խոշոր նաւ, 6ալ ֆռեգաթա. ասոնք երկու կղզիները առին որ պետրոս ու մագդալենին, ուր խօսք կապելով ֆրանսզիներուն հետ դադրեցան ծեծկըվելէն, 70 Թօփերնին խռումպարանին առնելով:

Ջմռւման ատենը խիստ շատ ձիւն ու սա-
ռոյց (պուղ) գտնըվելով աբբեհեան ու
ալբեհան լեռներուն վրայ Թող չկրնա-
ծեծկըվելու. հաղիւ որ գարունքը եկավ
սկսան ամէն տեղէն վրայ վազել. 1795
ապրիլի 6 մեծ ու պզտիկ մննչենիսիի վը
շատ հեղ վազեցին, բայց բան մը չկրնա-
լով շահիլ դադրեցան ան դիւէն վազել:
Ան օրը մտաբերին դրերէին նիցցաի վրայ
վազել, բայց որովհետեւ բիւմոնդին ամէն
տեղվանքը աղէկ պաշտպանված էին՝ սաօռ-
ձիօ քաղաքնալ անառիկ կրսեպվէր՝ սկսան
յանկարծ ձիւնիվիզին երկիրը մտնալ, որոնք
չեզոք ըլլալնուն վրայ ապահով կենալով
ամենևին չէին պաշտպանած տեղերնին:
Ֆեմշները աղէկ տեղ մը կեցած էին ա-
ղեքսանդրիային ու դօրդօնային մէջ տե-
ղը, որպես զի ֆրանսիզներուն Թող չտան
լսմպառտիա մտնալու, բայց ետքը տեսնա-
լով որ բիւմոնդը վտանգի մէջ կը՝ հոն դա-
ցին պաշտպանելու. ֆրանսիզները սաօռ-
ձիօյի վրայ վազեցին, շատ հեղ կոտրը-
վելով առաջ եկան մօտիկ տեղ մը առին,
քօլլի զօրապետը ապսպրեց սաօռձիօյի մէ-
ջի բերդակալին՝ որ առանց իրեն ըսելու
բերդը չտայ, բայց բերդակալը անոր խօս-
քին չհնայելով՝ դուռը բացաւ ֆրանսիզնե-
րը ներս մտուց. ասանկ մատնութեը հա-
մար ետքը յունիսի 4 դուռնին մէջ Թիւ-
ֆէնկի բռնելով սպանեցին անիկայ. ա-
սանկով ֆրանսիզները 1794 ապրիլի 29 ա-
ռին մէնին, սաօռձիօ բերդը, ու պէլվէ-

տեղէն ։ Վասկեց ետքը՝ որ բեռնարդոս ըս-
ված տեղին դիացին սկսան ֆրանսզներըը
առաջ գալ, առանց Թօփի առանց մէկ
պատրաստութեան մը դուռինի կրմտիկնայ-
լին, որուն պատճառը ետքը հասկըցան որ
ամէնէն տեղ մարդ ունենալը մէջէն մատ-
նուի ընելն էր՝ որ անոնք առաջ կըբերեր,
աս բանս առաջ լօնտռա մանիչներուն
Թղթերը բռնելով իմացան, ետքը դուռին-
ցոց հասկըցուցին, անոր վրայ քննուի ընե-
լով իմացան որ ալբեան լեռներուն վրայ
եղած զօրապետները՝ մէյմընալ Թօփերուն
ձեպանէներուն վրայի հաղարապետները՝
ֆրանսզներուն տըվերեն եղեր. դուռինին
բերդին մէջնալ ական (լաղըմ) բացած
պատրաստերեն եղեր, անով Թագաւորին
դարպասը ընտանիքը պարուհով երկինքը
պիտոր հանէին, շատալ գինք պահած ու-
նին եղեր. ասոնց գլխաւորները պատժե-
ցին. բայց աս ձայնս ամէնն եւրոպայի տե-
րութիւնները վախի մէջ ձգեց ։

Ֆրանսզները լսածնին պէս որ իրենց որո-
գայթնները երևան ելան՝ ամէնն տեղէն ետ
քաշվեցան, բայց ամէնն տեղնալ Թալըե-
լով քաշվեցան, ինչվան որ իրենց նոր զօրք
եկավ սպանիայի դիւերէն, որուն հետ ան-
ցած տարի 1794 հաշտութի ըրերէին ։

## Հռոմայոս խոռվարարին ակնբախորհուրդը, Վաւա-
## լէսորոս մարդուն վարձն ու մահը։

1790–1791։

Ան խռովութենին որ Ֆրանսայի մէջ հանե-
ցին՝ իրենց համախոհներէն շատ հոգի հը-
ռոմ խրկելով հոնալ կուզէին հանել. բայց
Ֆրանսզներէն առաջ մէկը եկաւ հռոմ ի-
րենց ազանդէն՝ որ յուցանքաւոր մարդ մը
ըլլալով պէտք է կարդացողին անոր որպէս
սուրթիը իմանալ։ Ան մարդս ծնած էր բա-
լէդմօ 1743. իր անունը Յովսէփ պալսա-
մօ էր, բայց իր մօրքոյրը իրեն կընքամայ-
րը ըլլալով՝ եղբը անոր մականունը առաւ
ըսվեցաւ Վալէօտրօ. պզտիկութենե առեղը
իր հայրը մեռնելով իր մօրը ու իր պապուն
ձեռքը մեծցաւ. ասանկ ինքնագլուխ եղո-
ղը քիչ մը մեծցածին պէս առջի խաղը բա-
լէդմօի մէջ ան ըրաւ որ՝ մառանաս անու-
նով խոյդումէի մը խաբեց, շատ ըստակը
առաւ խոստանալով իրեն որ գեղնի տակ
խաղնայ մը պիտոր գտնայ. անկէց փախաւ
արապիստան մէջքէ մէհինէ և ուրիշ տաճ
կի երկիրներըը քալեց, բժիշկ ձեւանալով շատ
մարդալ հոն խաբեց. եղբը նաբօլի գառ-
նալով 1773 վերսիշեալ մառանօն ասի-
կայ ձանչնալով բանտը դնել տրվաւ, ան
առենը իրեն անուն էր առած Ռէլիքինի
Տաւէդ. 17 օրէն ետև ազատելով եւրո-
պային հիւսիսային գիները քալեց, միշտ իր

անունը փոխհատելով, ամէնն տեղ իր խա-
բեբայ Ճառատօղ (լափաղան) ըլլալը ե-
րևան հանելով քաղքէ քաղաք կըփախչէր.
սդռապետ ըրկէն փախաւ եկավ լիմն, պօռ-
տօ, փարէզ, ամէնն տեղ իր նմանները իր
գլուխը ժողվելով մարդ կըխաբէր, ինչվան
պասթիլ ըսված բանտը դըվեցաւ փարէզ.
աղատվելու ատենը բանտապանին վրայ
ամբաստանութեի ըրավ որ՝ իր ըստակները
Ճեվահիրները վրայէն առեր. բայց դա-
տաւորները իր սուտը բռնելով մերժեցին:
Ան ատենը լօնտրա երթալով տետրակ մը
հանեց Ֆլոռընթին Քրանոայ ծողվըրեան. մէջը
գուշակելով որ՝ պասթիլ բանտը պիտոր
փլչեր ինչվան գետինը, ժուռ գալու տեղ
մը պիտոր ըլլար, (ինչպես որ իրաւ եղավ):
Ան մարդը իր սուտերովը իր լեզուանի շա-
խօսութիը մէկ խաբելու կերպ մը ունէր,
անիմանալի անուններ բանեցընելով՝ նոր
հրաշալի բաներ պատմելով՝ սուտը շինե-
լով կըզմայլեցընէր միամիտները, գաղտնի
հրաշալի դեղեր սորված կըցըցընէր վինքը
արապիստանին գալով. աւելի խաբօղ իր
հապկերը եղան, ով որ կառնէր ան հապը
մէկ թեթևութի մը հանգստութի մը կի-
մանար, անկէց հրաշալի բան մը սեպեցին
ասոր հապկերը, բայց երբոր քննեցին՝ հաս-
կըցան որ մէջի եղած գլխաւոր բանները սա-
րը սապոն էր. իրեն համար կըպարծենար
կըսէր որ երկու հազար տարվան մարդ էր,
և թէ կրնար մեռելները երևցընել խօսիլ
տալ, շատ տեղ քալած կըցըցընէր վինքը,

ամէն բանի ծանօթ, հայ մը տեսնալու ըլ-
լար՝ հայաստան քալած կըցըցընէր վինքը
մասիս լեռան վրայ ելած՝ քանի մը շինծու
բան պատմելով։ Ի՛նչ խաբելու կերպին հետ
շատ բանի տեղեկութիւն ունէր ու ձարպի-
կութիւն. ինչպէս եգիպտեան ըսուած ֆրա-
մազոններուն մէջը ըսվեցաւ իրենց արտա-
ոց լեզուովը Այգիպոեան բնակչի, որէ մալ-
պայի մեծաւորին ի էլեանուտոյն պրապիկընի, մար-
գարէ եկեալ՝ ի Դէոէայ, վարդ խալանիշ, որ ըսել
է անմահ։ Ֆրանսային խաւովութիւը գուշա-
կեց ըսելով. Ո՛ւր վրադ մէկ իշխան մը պի-
տոր թագաւորէ, որ զմբըլսած թղթերը
պիտոր վերցընէ, ամէն ֆրանսային ի-
խաննէրը ժողվէ, ֆրանսային գլխաւորը
պիտոր ըլլայ. իր կնիքնալ (մօհիւրնալ)
տակը խաչ մը ունէր, որուն վրայ իրէք կիր
էին գրված, որ իրէք լատին բառերուն
սկզբնաւորութիւնն էր, Շ՚ուշանը ոսովը կոխէ.
շուշան (զամպախ) ծաղիկը ֆրանսային
նշանը ըլլալով՝ ըսել էր որ՝ ֆրանսան ոտ-
քիդ տակը կոխէ։ Ի՛նչ առեւնն որ ֆրանսայի
մէջ ելլալու վրայ էր աս խաւովութիս որուն
վրայ որ կըզըրցէ, նոյն առեւնալ ինկիլ-
դեռւայի մէջը հանելու կըպատրաստէր.
հոն մէկ թուղթ մը սիրեց իրենց ֆռամա-
զոնի անէրուն խրկեց խրթնագրութիւ փա-
կագիրներով գրված որուն վերնագիրն է.
Ի՛մէն ճշմարիտ պռոնէրուն ողջոյն յանուն եէհո-
վայի. ետքը կըսէ. Ի՛նչինը եկած է եէհին նոր
պաճարը շինելու. գիտցիր որ աս ծանուցումը չեղ
նանչելու հնարը է ամէն ճշմարիտ պռոնէրը, լսող

ա՜ա ծողովրդեան յանուն եհաղորդէ, թէ ինչո՞ւ յորմէ ի դուն ծագումն երբորդութե՛ն. 1786. հետեւեալ գիշերը ժամ 9 գոնէ վեցէ՛ա ան ինչ պեղ, որպէս պէտ մտածելո՛ա ձգմաբեա պաճարին առ՛ն ժորը յիեզը՛ա ան երեւելի աշխարհին վրայ. տակնայ իր անուանը գրած: Որ որ իր սուրթիը երեան կելլար՝ կրփախչէր. անոր համար երկրի երկիր պտըտօղ, բանտէ բանտ մտնօղ մարդ եղաւ, ինչպէս եկաւ հոս, հոն տեղ տեղ իր աղանդին ժողովրդը սահմանեց, որ էր վերցընել կրօնքը ու տէրութիները. բայց օր մը իրեն մէկ թուղթը ձեռք կ՚անցնի եւ երեան ելաւ իրեն պատրաստութիը որ կուզէր ապստամբութի՛ն հանել, անոր համար 1791 թուականին, որ հրեշտակի բերդը դրին քննութիւն ընելով հակըցան որ՝ ասիկայ ֆրամազոններուն գլխաւորներէն մէկն է եղած, 20 միլիոն մարդ իրեն հետեւօղ ունի կրսէր, ամէնհնաւ ջանացող եկեղեցին փլցընելու. ինքնաւ ժողովատեղի մը սահմանած որ Լեգիպեան պոռն կրսվէր, բայց գլխաւոր տեղերնին լռնտուա է եղած, շատ աղանդ բաժնըված, բայց գլխաւորները երկուք. մէկը առաջ գացող աշխերաներուն, ասոնք երդում կընեն եղէր ուղղափառ կրօնքը և ամէն թագաւորները ջնջելու, ամէնհնէն առաջ ֆրանսայէն թագաւորը Լուրը հոս. ասոնց երդումը իրենց արիւնովը կրգրեն եղէր. շատ տեղ շահու ըստակ գրած ունին, ան ըստակները իրենց եգիպտեան տուներուն կրբաժնեն, և ան աշխերանեքրուն որ թագաւորներուն դէմ բան

մը կը հանեն։ Երկրորդ եգիպտեան աղանդը քնալուծութեի (քիմիքա) ընելու հետ է, մանաւանդ ոսկի շինելու եռանդ է։ Ի վախցող մարդ իրենց աշխերտ կառնեն, փորձելու համար վախցընելու բանը կընեն։ Նստած տեղը յանկարծ մախարանքով վեր կը քաշեն, աչվընները կապած ձեռքը բիշթով մը կուտան որ ինքը լեցընէ։ Երբոր կը լեցընէ՝ ձեռքին առնելով կը փոխեն ուրիշ բիշթով մը կուտան որ ինքը չմանար, կը հրամայեն գլխուն պարպելու, երբոր կը պարպէ՝ մէկը գլխուն ամուր մը կը զարնէ ցըցընելով որ իբր թէ զարնըվեցաւ բայց չիմնասեցաւ։ Ասանկ վախցընելու բաներով փորձելէն ետև երդում ընել կուտան իրենց մեծին հնազանդելու, գաղտուկը պահելու։ Ասանկով եղավ որ հին խելացիները եղբայրութենէ կը հանէին բարեկարգուի խօթելու, օրէնքները թագաւորները հաստատելու համար, ասնոր աշխարհաւէր խելացիները եղբայրութի կը հանեն անկարգուի խօթելու՝ օրէնքը թագաւորները վերցընելու համար։ Հռոմայեու դատաւորները աս մարդս մահապարտ վճռեցին, բայց սրբազան պապը ըզ հրեշտակի բերդէն հանելով ան բերդը դնել տրվավ որ կըսվի ըզ լեռն, գիրք հանելով ամէն եւրոպայի հասկըցուց իրեն ըսածնէրը, որպես զի թագաւորներնալ ժողովուրդնալ աչվընին բանան զգուշանան։ Իր աղանդակիցները շատ ջանացին ան բերդէն ազատելու բայց չեղավ. ան բերդին մէջը

կենալով անապաշխար մեռաւ աս նեռին նման մարդը 1795. իր կնիկնալ որ իրեն հետ համախոհ էր՝ վանքի մը մէջ գոցված մնաց։

## Հռոմայոս երկերնէրուն մէջ եղած խռովութիւնը. 1791-1792։

Վալիօսդռօին խռովուէ հանած ատենները՝ աս դիս ան դին հռոմայոս հողին մէջ ապստամբելու նշանները երևան կելլային ինչպես նաև պօլօնիա քաղաքը, որունք քիչ վըր տակր ըլլալով դուրսէնալ օգնուէ մը չունենալով շուտ մը կըզսպըվէին։ Ֆրանսայի մէջը Ա՛վինօն կամ Ա՛վինիօն անուն տեղ մը կայ որ յատուկ էր հռոմայոն, աս տեղսալ խռովութիւն հանել սկսան. սրբազան պապը հոն խրկեց էվէսպիսկոպոսի քահանան խաղաղցընելու համար՝ բայց պատուղ մը չեղավ. մէջինները ոմանք Ֆրանսայի աղանդէն ըլլալով 1791 կուիւ հանեցին հռոմայոս հաւատարիմ մնացողներուն հետ, ան կուիւներէն ինչվան արիւն հեղուելիւն եղավ. ատոնք զսպելու համար Ֆրանսզի զօրք խրկեցին, բայց աս զօրքը խաղաղցընելուն տեղը՝ հռոմայոս նշանները ու զէնքերը վերուցին, Ֆրանսզի նշանները դրին։ Սրբազան պապը գանկատ գրեց Ֆրանսայի Թագաւորին՝ Թէպէտ վերուցին անկից Ֆրանսզին զօրքը՝ հռոմայոս նշաններնաւ տեղը դրին, բայց Ֆրանսզ

ժաքօպէնները ան զօրքին տեղ ուրիշ զօրք
խրկեցին , որ լման աւազակները էին և ոչ
զօրք · գլխաւորնին կըսվէր Վլըտ կոլօղ
Ժուռքան · ասոնք քաղքըցինեըէն շատ հոգի
կըբռնէին բանտը կըդնէին իբր կասկածա-
ւոր մարդիկ · մէկիկ մէկիկ բանտէն հանե-
լով՝ գլխընին Թօփուզով մը զարնելով՝ աշ-
տարակին գլխէն վար կըձգէին պուզնա-
նայի մը մէջ , թէ որ ուրիշ շատ մեռնէնը-
րուն վրայ խնալով չիմեռնէր , կըհրկէին
ինչվան որ մեռնէր · ասանկով այնչափ հո-
գի մեռուցին այնչափ կոտորած ըրին ավլ-
նօխն մէջ՝ որ գետերուն ջուրերը կարմրե-
ցան արիւնին շատութենէն : Վերնա եռքը փո-
խեցին , աս աւազակներուն տեղը մարդու
պէս զօրք խրկեցին հոն , որ աս ջարդը վեր-
ջացընել տըվին · քանիմընալ ան աւազակ-
ներէն բանտը դրին , բայց ժաքօպէնները
ասոնց տեր կենալով ձամփով մը բանտէն
փախուցին : Ե ատ վեճ ըլլալէն ետև թէ
ինչու կըխառնըվին առանց պատճառի մէկ
երկրի մը վրայ որ օտարի եր ինչպէս է ա-
վլինօնը , ազգային ժողովը լսելուն տեղը՝
իր վերջանալէն քիչ մը առաջ սեպտ · 15
վճիռ մը հանեց , ավլինօն ու վէնսաէնօն
միացուց Ֆրանսայի հետ , իբր թէ մէջնե-
ները անանկ կուզեն ըսելով : Սրբազան
պապը թէպէտ շատ գանկատեցաւ ասոր վը ,
ամէն եւրոպայի թագաւորներուն հաս-
կցուց՝ բայց պարապ ելավ . ան ատենը
դեռ չկրտէին որ ամէն թագաւորներու-
նալ ասանկ պիտոր ընէին :

Այս բանս իբր մեկ նշան մը եղավ հռոմայու
ներհակութեանը որ ունեին, բայց 1792 թուն
հռոմայու մէջ բանալ սկսան իրենց միտ-
քը, ուր հալարապետ մը խրկեցին փլօդ
անունով, հետևալ ուրիշ մը հուկօ պաս-
վիլ, ասանկ ապստրելով իրենց, ինչ չէն-
քեր որ ունին ֆրանսզները հռոմ՝ վրաներ-
նէն թող թագաւորական նշաններըը վեր-
ցընեն, իրենց նոր հասարակապետութեան
նշաններըը դնեն. բայց սրբազան պապը թող
չտըվավ մէյմը որ՝ ուրիշ թագաւորներըը
չընդունելին առաջ չուզեց ինքը առջինը
ըլլալ իրենց նոր հասարակապետութիը ըն-
դունելու. երկրորդ որ՝ ֆրանսզներըը փա-
րիզի մէջ սրբազան պապին պատկերը խիստ
անարգերեին, մարսիլիայի մէջնալ հռոմայ-
ու նշաններըը վերուցերեին իրեն քօնսօլին
տանը վրայեն, կտոր կտոր ըրերեին, թող
չեին տըված նորեն դնելու, քօնսօլնալ ա-
նարգերեին: Այսոնք երկուքնալ մտիկ դնե-
լուն տեղը դժվարելով մը թուղթ գրեցին
դիւանադպիր քառտինալին լեցուն սպառ-
նալեօք, բայց լսելի չեղավ. ասոնքալ այն
չափ կատղեցան որ բռնութիւ ուզեցին ընել.
նոր քօքառտան վրանեն դնելով, իրենց նոր
դրօշակնալ իրեք գունով բանալով, յայտ-
նի սկսան առապայով ժուռ գալ. ժողո-
վուրդը տեսածին պես չդիմանալով առա-
պային վրայ քարեր նետել սկսան. ասոնք
ալ առապային մէջէն բիչթով մը պարպե-
ցին որ թեպետ մարդու մը չդպաւ՝ բայց
ժողովուրդը ալ աւելի կատղելով հասնեն

վաղեցին ուր որ փախան, վրայ հասնելով մեջերնին մեկը զարկաւ պասվիլը. շուտ մը քաղքին զօրքը վրայ հասնելով՝ պասվիլին տղան ու ֆլօդը իր կնիկովը առին հռոմայէն դուրս հանեցին, որպէս զի ինծա մը չի հասցընէ ասոնց ժողովուրդը։ Պասվիլը դեկտ. 14 մեռաւ ետ կանչելով իր քաղաքական երդումը, խոստովանելով իր յանցանքը իր մտիկ դնելը մեկ խենթ մարդու մը։ Ա՛ս դիպուածս առիթ մը եղավ ֆրանսըզներուն՝ որով հռոմ յանցաւոր սեպեցին, ուզածնին ըրին, որ վարը պատմենք։

## Նաբօլէի դէպքերը.

1790–1795։

Ա եսուպ լեռը նորէն պատռելով կրակ ցանկեցուց ինծանիը տրվավ. էդնանաւ պատռեցաւ բայց անչափ ինծա չտրվավ. մեկ փոթորիկմընաւ շատ ինծա տրվավ քաղանիայի՝ որ ետքը վերջացաւ շաժ հանելով. 4 մղոն քաղքին հեռու բլուր մը կար՝ ասոր կէսը գետինը անցաւ։ Ուկ դեկտ. 10 յանկարծ նաբօլիին առջին երևցան 14 ֆրանսզի նաւ երկկարգեան (երկու խափախով) որ բոլոր քաղաքը շփոթցուց։ Նրբոր իգալիայի տէրութիւնները որոշեցին չէզոք մնալ՝ ուրիշներուն հետ նաբօլինաւ սկսաւ զինվիլ իր ծովեզերքնաւ ամրցընել զինքը պաշտպանելու համար. Թագաւորը վճռնայեն գառնալու առիթը 1791 հռոմ

եկավ. հոն սրբազան պապին հետ իրեք հեղ տեսնըվելով երկան բարակ խօսակցելով անձամբ ուզեց լմնցընել ինչ որ իրենց մէջը կար, ասոր վրայ սահմանեցին որ քասդիլիօն տեղը քամբանէլլի քառտինալը ու աքդօն զօրապետը մէջերնին խօսքաձեն բան մը կապեն. բայց բան մը չկրնալով որոշել՝ նաբօլիի մէջ խօսել տրվավ Թագաւորը. հոն որոշեցին որ՝ Թագաւորը անուանէ եպսկոպոսները իրեք հոգի ներկայացընէ, անոնցմէ մէկը սրբազան պապը ընտրէ. իսկ ուրիշ պզտիկ ժառանգաւորները սրբազանը ընտրէ, միայն թէ նաբօլցի ըլլան և ոչ դրսեցի. պսակի վրայի դատաստաններըը հռոմ ըլլան ինչպէս որ առաջ կըլլային, բայց ինչվան հիմա եղած տնօրինմունքը որ նաբօլիին եպսկոպոսները ըրերկին՝ հաստատեց սրբազանը. ամմէն Թագաւորաշնորհ նըստած ատենին 500 հազար տուգաթ որոշեցին տալու սրբազանին կամ հռոմայու։

Նաբօլիի տերութիւնը 1792 ինկիլիզին հետ կապվելով դաշնադրութիւն ըրավ 4 խոշոր նաւ, հալ ֆռանսացա ինկիլիզի նաւատորմին տալու. 600 մարդալ ոտքի վրայ պահելու ինկիլիզի կարգաւորութիւն տակը. ասով ձեռ քացաւ ֆրանսացին դէմ. երբոր օգոստոսի 28 գօլսը ինկիլիզներուն ու ըսպանիացոց ձեռքը տըվին՝ նաբօլիին գլուխը գօլսն տարին, ուր շատ քաջութիւն ցըցուցին։ Այայց նաբօլիին մէջը արդէն մտած կար ժաքօպէններուն աղանդը, որ 1794 մարտի 26 դատաւորները երեսան հանեցին կո-

խելով ան տունը ուր ասոնք կը ժողվէին. հոն գտան իրենց թղթակցուհին որ կընկերանար ֆրանսիզներուն հետ. ասոնք կըսպասեն եւ ղեր ֆրանսի նաւերուն որ հոն պիտոր գան եղեր. հոն գտան նաեւ խուճտախները որ պատրաստերէին կրակ տալու թերսա-նէին՝ կէօմրիւքին՝ և ուրիշ տեղերուն. շատալ ըստակ գտան ասանկ բանի խարձերնուն համար. 70 հոգիի չափ բռնեցին ուր ամ-մէն գաս մարդու կայլին. աս բանս տեսնալով՝ 18 հազար մարդ որ պատրաստերէին դաշնակից տերուհեց խրկելու՝ չիխրկեցին, նաբօլիի մէջ պահեցին զգուշուհ համար։

Ի ժաքօպէնհերուն աղանդէն մէկն էր՝ որ մայիսի 18 չիդիմանալով իր անհատատուհ թիւնը (վէհիրը) դուրս պօռ թքաց. յայտ նի եկեղեցնայ մէջ ելլալով պատարագի ա տեն զարհուրելի հայհոյուհներ խօսեցաւ. ժողովուրդը վրան վազեց պիտոր սպաննէ-ին՝ հոն հասան քանի մը զինուոր բռնեցին բանտը դրին, ուր շարունակ հայհոյուհթի կըխօսեր թագաւորին ու դատաւորայ դէմ։ Ե ատ քահանայներ նաեւ նաբօլիի արքե-պիսկոպոսը հոն գացին դարձի բերելու աս մարդս որ կըսվեր Թոմաս ամագօ մէօնա-ցի, բայց անհնաքալ նոյն նախատինքները լսեցին. մէյմը կասկած գացին խենթ ըլ-լալու՝ բայց ետքը հասկընալով որ անհատա-տուհթէ ապստամբուհ աղանդին մէջէն ըլ-լալէն էր որ ասանկ կըխօսեր, նոյն եկե-ղեցնայ առջին սպաննեցին դահձի ձեռքով։

Այս անցնելի, օրմընաւ արքունեաց մէջ մարդ-
մը երեւցաւ քափուչին կրծնաւորի հագուս-
տով. կուգէր որ գաղտուկ Թագաւորին հետ
խօսրաձէ, եւր Թէ մեծ բան մը ունէր ի-
րեն հասկըցընելու. ասոր վրայ կասկած եր-
Թալով երբոր հանվեցուցին՝ տեսան որ վը-
րան լեցուն էր վինք (սիլահ). ինչ որ ըրին՝
աս անզգամը աւելի ընտրեց անօձի կենա-
լով մեռնիլ քան Թէ իր չար միտքը բանալ։
Այսօրկիէ աս բաներս տեսնալով սկսան
աչվընին բանալ զգուշանալ, ուրիշ վախ-
մընալ ձգեց իրենց վրայ վեհսուպ լեռան
բռնկիլը՝ որ յունիսի 15 սկսաւ սաստկա-
նալ մնաս տաւ, շատ օր քշեց. միայն յու-
լիսի 25 ուրախութեի ըրին նաբօլիի Թագա-
ւորին առջինեկ տղան կարգելով արշիդք-
սուհի մարիամ քլեմենդինային հետ։

Այսց աւելի վախնալու բան բալեռմոյն
մէջը եւալ, որ սիջիլիա կղզիին մայր քա-
ղաքն է նաբօլի Թագաւորին տակը. հոն
շատնցմընկ կրպատրաստվին եղեր 1795
աւագ ուրբաթ գիշերը երբոր ժամերը Թա-
փօր կելլան՝ արքեպսկին վրայ վազել մեռցը-
նել. ուր ան աստենը ինքն էր կառավար,
փոխարքային հոն չըլլալուն համար, եռքը
եկեղեցականաց գլխաւորներըը ու ազնուա-
կանքը սպաննել, հարուստներուն տուները
Թալլել, բերդը առնել. բայց մէջերնէն
մէկ վինուոր մը ներում խնդրելով եկաւ
դատաւորներուն հասկըցուց. անոր վրայ
400 հոգի բռնեցին. մէկ փաստաբանմընալ
որ գլուխ էր եղած աս դաւաձանութե կա-

խեցին. ասիկայ խոստովանեցաւ Թողուե խնդրեց ամէնին. մկակլոնք Թեթև պատժեցին. Թագաւորնալ Թուղթ հանեց ամէնուն նալ ներել խոստացաւ ու որ իր ապստամբութե յանցանքը խոստովանի ետկենայ: Այց աս անանկ մկ աղանդ մը նէր՝ որ ներելով շահ մը չէր ըլլըվեր. քիչ ճաց որ ուրիշ մկ ապստամբութինալ նայ բալի քաղաքը պիտոր ելլար, ուր սկսերկին գետնի տակէն փորել դատաստանարանը փլցընելու համար, որ իմացվելով 40 հոգի բռնեցին, փորած տեղերնին գտան: Այսոնց վախը պատճառ եղավ որ՝ նաբալին չկըրցաւ իր զօրքը օգնութե խրկել բիեմոնդին ու լոմպառտիային:

## Անիվէնի վրայ.

1792–1795:

Անիվէնը պզտիկ հասարակապետուե մը՝ բայց մկ հարուստ տերուի մընէր եղած. իր հարստութինալ վաճառականութենէն էր եղած, որ հարիւրաւոր տարինէրով առուտուր ընելով Գերմակ ծովին մէջ խիստ վարպետ էր եղած ու խիստ հարստացած. հիմա երբոր ֆրանսային կրակը բորբոքեցաւ՝ կըմտածէր որ իրեն ամենևին օգուտ մը չունէր ծեծի մէջ մտնալ. ասոր ներհակ կըմտածէր որ ուրիշ տերութիւններուն պատանկ սաստիկ կռուին ատենը թե որ ինքը չէզոք ձեալու ըլլար՝ մինակ իր նաւերը ա-

զատ Համարձակ ծնալով Հերմակ ծովին մէջ, ինքը միայն պիտոր ընէր նաւարկուել, ինքը միայն պիտոր Հարստանար : Այս մտածելով շատ ետևէ ընկաւ շատ ըստակ կերցուց փարելէ եղած ան մարդերուն՝ որոնց որ ձեռքն էր ան ատենվան կառավարութիւնը, և որոնց որ խօսքը կըբաւէր . ետևէ խնայելով վերջապէս չէզոքութիւնը ձեռք ձգեց . զինքը չէզոք ընդունել տրվավ . մուտքին դնելով որ ան անգամուն ծեծը ուրիշ անգամներուն պէս եր . ասանկով ապահովեղան Հանդարտ նստան : Այսինք բարակ մրտքով մարդիկ էին՝ բայց իրենց բարակութիւնը միայն իրենց շահուն վէր կըպտրտեր . խելք չհասուցին իմանալու որ Ֆրանսզիները աս ծեծս ինչ մտքով բացին . միայն աս խելքը ըրին որ զօրք հանեցին ոտքի վրայ զիրենք պաշտպանելու համար :

Այսանկ խօսք կապելով երբոր Ֆրանսզիները Հնդովային երկրին զօրք անցընել ուզեցին՝ ասոնք Թող չիտրվին չէզոքութէ դէմ է ըսելով . բայց տեսան որ ան Ֆրանսզին նաւերը որ Հնդովային նաւահանգստին մէջ կեցած էին՝ դուրս կելլային կըյարձրկէին կըզարնէին ուրիշ տերութեց նաւերը՝ որոնց հետ Հինիվիզը Թշնամութիւն մը չունէր . աս տեսնալով քանի մը ինկիլիզի նաւեր Հնդովային նաւահանգիստը մտան , մեծ կռիւ մը բանալով Ֆրանսզին մէկ Ֆռխաթան առին . աս կռիւը իրենք երկուքը ըրին՝ ետքը երկուքնալ Հինիվիզին վրայ ձգելով Հնդոսը՝ մարդիկ խրկեցին Հնդովա հատու-

ցուտ պահանջելով. խեղճ Հինխիլիզը երկուքին մէջ իյնալով չէր գիտեր որին դին բռնէ։ Լ՚ը մտածելնին քաղքին մէջէն երևան ելավ մէկ չար միաբանութիւն մը՝ որոնք կըմտածէին քաղաքը ապստամբեցնել, տերը ու Թանգարանը (պանքան) Թալլել. շուտ մը վրայ հասան զսպեցին. Հինկիլդեռաալ մարդ խրկեցին, բայց ան ատենը էկան Հինկիլիզին նաւերը Հնդօվային նաւահանգիստը պաշարեցին. Ֆրանսզնալ որչափ որ շահու դրած ըստակ ունէին Հինխիլիզնէրը Ֆրանսայի մէջ՝ անոնց շահը որ տարին կըհաներ 12. 14 միլիոն՝ ամէննալ իրեն առավ. Հինխիլիզին էզոթութիւնը բանի մը չեկավ, Հինկիլիզնալ Ֆրանսզնալ Թշնամի եղավ։

Ֆրանսզնէրը Թուղթ մը հանելով Թէ ինչպէս ազգային միաբանութիւնը չէր ուզեր մէկի մը ինասելու մէկի մը դպչելու՝ յանկարծ մէկէն 1795 եկան մտան զօրքով Հինխիլիզին սահմանը. ան տեղվանքէն մտան ուր որ Հինխիլիզը իր էզոթութիւն վրայ ապաւինելով անչափ էր ամրցուցած։ Ֆրանսզին միտքը աւելի ան էր որ Հնդօվային վրայէն զօրք անցընէ իդալիա մտնայ. որովհետև բիէմոնդին մէջ մտնալը իրեն դժար եղավ տեղվանքը աղէկ ամրցուցած ըլլալով. ասոր վրայ Հինխիլիզին տերութիւնը աղաղակ վերցուց, իրաւունք ուզեց, բայց ամէնն բան պարապ եղավ. Ֆրանսզնէրը 16 հազար հոգիով Հնդօվային երկիրը մտան վերդիմիլիա գացին. անկից տօլէ աքվա քա-

լելով զանազան տեղվանք առին, մինչտօ-
վին ու չեվայի մառքեզուիը վտանգի մէջ
ձգեցին։

## ԱՆԳԼԻԱՅԻՆ ՀԱՐԵԼԸ, ՓՐԱՆՍԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՍԱ-
ՐԱԿԱԳՈՐԾԸ ԸՆԴՈՒՆԵԼԸ.

1791–1793։

Ա՛սոր պատմուԹիւնը չըսկըսած գիտնալու է որ՝ հին ատենը քանի հեղ Թագաւորները մէջերնին ճեճ կըբանային՝ վէնեատիկը կը-նայէր որ կատարեալ չեզոքուԹիւն պահէ ա-նոնց հետ բայց զինեալ, այսինքն զօրք հա-նելով ոտքի վրայ, որպէս զի մէկը իրեն չի-դըպչի. ասանկ ըրավ նաև աս դարուս մէջ եղած ճեճերուն ատենը որ եղան 1701. 1743, 1755. իժիը ոտքի վրայ կեցած զօրք պահելով որ 18 հազարի կըհասնէր. երբոր ճեճ բայվելու ըլլար՝ կրնար մէկէն իր զօր-քը շատցընել խաւաԹըխէն ու առնաւուտ-լուխէն. իգալիայի մէջէնալ 30 հազար կըր-ԹըլուածՀ զօրք կրնար հանել. 2500ալ ձիա-ւոր, որոնց Թոշակ չէր իտար։ Նովու-վրայալ կրնար իրը 50 զինեալ նաև պահել, ինչպէս որ պահէց եաքի Թունուսի ճեճին մէջ. իր վաՀառականի նաւերը 70ի չափ կըհասնէին։ Իր եկամուտը եաքի ատենն-ըը 9 միլիոն տուգագ կըհասնէր, ժողովըր-դեան մէջնալ շատ հարուստներ կային։

Երբոր սառատենեային Թագաւորը Փրան-սընէրուն գալէն վախնալով առաջարկեց

որ ամէնէն իդալիայի տէրութիւնները իր հետը միանան, Թող չիտան իդալիայի մէջ մնալու, վենետիկին տէրութիւը չիմայաւ, այլ 1791 նոյեմբերի 19 պատասխան գրեց, Թէ իր սահմանը շատ բաժնըված ըլլալով ֆրանսայի սահմանէն՝ իր ժողովուրդնալ հանդարտաբարոյ ըլլալով՝ վախ չունէր որ իր երջանիկ հանգստութիւը ավրըվի։ Այայց երբոր լսեց որ Թագաւորները կըմիանան բիւնից ֆրանսային դէմ ելլալու, վախնալով չըլլայ Թէ վենետիկնալ իրենց մէջը ուզենան խառնելու, ֆրանչէսքօ բէզաուօին յորդորելովը (որ բռօքուռադօռ էր այսինքն գործակալ,) յայտնի հռչակեց իր կատարեալ չէզոքութիւը. իր նաւերնալ մալդայէն քօռֆու բերել տըվավ, չըլլայ որ ան միաբանեալ տէրութենց նաւերը ադրիական այսինքն վենետիկին ծովը մտնան։ Լյանկով յայտնի բացատրական պատասխան գրեց 1792 նոյեմբ. 17 երբոր նեմցէն առաջարկերէր վենետիկին՝ միաբանիլ մէկ ըլլալ բիւնից եղած միաբանութիւը հետ. ասանկալ բացատական պատասխան տըվավ նաբօլիի Թագաւորին՝ որ իդալիայի համար միայն ուզեց միաբանութիւն մը կապել, ըսելով իրենց՝ Թէ աս բանս մէկ ընդդիմութիւն մը չիբերէ պիտոր, որովհետև ֆրանսայի դէմ դնելու համար չէ՝ այլ միայն իդալիան խաղաղ պահելու. չուզեց նաև դօսքանային խնդիրքը կատարելու, որ կըինդրեր վենետիկի տէրութէն իր նաւերով ալիկուռնան ու Հռոմայի ծովեզերքը

պաշտպանելու, որուն գրեց վենետիկը թէ
իր յայտին չեզոքութիւնը չուզեր ավերել, իր
նաւերովը մինակ իր կղզիներն ու նաւար-
կութիւնը պիտոր պաշտպաներ, միայն հոկտ.
6 վճիռ հանեց որ սահմանադրական նեմ-
գիներնալ կարենան իր վենետիկի ժողովուր-
դեան հետ առանձին դաշնադրութիւն ընել,
զինք ապրուստ ձի առնելու համար։

Իրեն չեզոքութիւնը պահելու համար էր որ՝
շուտ մը վենետիկ ընդունեց ֆրանսային
նոր հասարակապետութիւնը, թող
տալով որ 1793 մարտի 23 ֆրանսային նոր
նշանը դնէ իր դրանը վրայ, որուն վրայ
շատ մը մահաց ժողովուրդը; պէտք եղավ
զգուշութիւններ ընել որ խռովութիւն մը չի-
հանեն։ Այս նշանը դնել տալու համար վե-
նետիկին սեպուհը (ըիձալը) Ձիւլիանի աս-
պետը շատ յորդորանք ըրավ իրենց ժողո-
վին առջին մեկ Ճարտասանութիւն մը՝ որ ոս-
կեղէն Ճառ ըսվեցաւ թէ քանաւոր թէ խ-
րակատ, վասն զի ֆրանսան 80 հազար դու-
ռնէի լիրէ վճարելէր Ձիւլիանիին աս յոր-
դորանքը ընելու համար։ Այս եկող դեսպանն
յունիսի 7 թղթով հասկըցուց վենետիկի տէրու-
թիւն թէ, ֆրանսային ազգային միաբանութիւնը ապրիլի 13 վճիռ էր հանած
որ՝ "Ինքը ամենևին պիտոր չխառնըվի
" ուրիշ տէրութեց կառավարութիւն մէջ,
" այլ միայն իր ֆրանսային կառավարութիւնը
" փոխելու բարեկարգելու հետ պիտոր ըլ-
" լայ որ ավերված է. բայց թէ որ մեկ
" տէրութիւն մը խառնըվելու ըլլայ, կամ

„ մեր կարգաւորութիւնը դեմ եղլայ՝ ֆրան-
„ սըզնաւ անոր դեմ կեղլայ ինչվան արիւ-
„ նը թափելու „ :

Վենետիկի տէրութիւնը աս դէպքը ընդու-
նեց , բայց սաստիկ աչքը բացաւ զգուշա-
նալու . աս զգուշութիւն համար չընդունեց
Նօել երեսփոխանը որ ֆրանսային հասա-
րակապետութիւն դիացին վենետիկ էր եկած
յուլիսի մէջ , հասկընալով որ ասիկայ շատ
խառնօղ մարդ էր , անալ սաստիկ ոխ պա-
հելով սիրտը ելավ գնաց . ուրիշ շատ խառ-
նօղներ եկերեկին վենետիկ գաղտուկ կեր-
պով ինչվան քափուչին կրօնաւորի լաթեր
հագած , որոնց համար ինչվան աս տարի
350 հազար ֆռանքի խարձերը ֆրանսա ,
հիմաալ 700 հազար վճռերը խրկելու .
անոր համար սաստիկ զգուշացաւ վենետիկ
յին չընդունելու աստնց վարդապետութիւնը
որ ամէն տեղ Ազատութիւն , Հաւասարու-
քարոզվին . արգելեց չընդունել անանկ
դրսեցի մը որ Ձեռքօսին կերևնար , և ոչ
գրուած մը կամ ապրանք մը ինչպես են
կոձակ , ելփազ , որոնց վրայ գրված կըլ-
լար ան վերոյիշեալ երկու նորելուկ անուն-
ները :

## Ֆրանսային հայոցը ընդհատուրը գլխաւորելէն ետք.

1792-1793։

Թէպէտ առաջալ խռովութեան մէջ էր Ֆրանսա՝ բայց Թագաւորին մեռնելէն ետև ալ աւելի շատցաւ ներսէն դուրսէն. օտար Թագաւորները որ կըսպասէին Ֆրանսային շտկըվելուն՝ ասկէ կերպով Թագաւորնին մեռցընելը լսածնին պէս սրտերնին կոտրեցաւ. ինկիլիզը շուտ մը հրամմեց Ֆրանսայի դեսպանին՝ 24 ժամու մէջ լօնտռայէն՝ 8 օր վան մէջ ամբողջ ինկիլիզները դուրս ելլալ. Ֆիլէմինկնալ սպանիանալ խիստ քաջ մահրեցին Ֆրանսէզները, որոնք փետրվ. 1 ծեծ բացին ինկիլիզի ու Ֆիլէմինկի դէմ, քիչ մը ետքը նաև սպանիայի դէմ։ Ֆրանսըզները ստոյին նահանգներու մէջ շատ ձախորդութիւն քաշեցին. տիւմուռիէ զօրապետը շատ հեղ զարնըվելով յաղթըվելով նեղը ընկաւ պարպեց, Ֆրանսան նորէն վերտանգի մէջ ընկաւ անանկ որ Թշնամիները կընային մէջը յարձակիլ։ Ռուբսէն ասանկ գէշ էր, ներսէն աւելի գէշ կացութեան մէջ էր. իշխանութիւնը ժաքօպէնիներուն ձեռքը անցած ըլլալով իրենց ինչ ըլլալը ցըցուցին. բերըննին Ղաթոէ ըսելով՝ գործքով ամբողջ Ֆրանսան արեանհեղուէ անդունդ մը ըրին. Թագաւորին մեռնելէն առաջ միայն աս բանիս մէջ միաբանված էին որ

անիկայ մեռցընեն, երբոր մեռուցին ըմբռ-
ցուցին՝ ան ատենը իրենց մէջէն երկսառա-
կուելները երևան ելան որ խիստ շատ էին,
ամմէն մէկը իրարու վրայ կուգային իչխել։
Ընտնց բաժանմունքը թէպէտ շատ է որոնց
վրայ վերը խօսեր ենք՝ բայց կրնանք իրեք
դաս բաժնել. մէյմը՝ Աթէնացւոց ծառայութիւնը,
երկրորդ՝ Աղեքսանդրեան ծառայութիւնը, երրորդ՝
անոնք որ Անդր ըսվեցան. վախցընող
ժաքոպէնները դարձեալ երկուք կըբաժնը-
վէին, մէկը Մայր ընկերութիւն, որոնց շուտ մը
գլուխ եղավ ռօպէսբիէր, մէկալը Ծառայութիւն
հօրեղբօրն, որուն գլուխ կառավար էր տան-
թօն։ Աղեքսանդրեան ըսվելուն պատճառը
ան էր որ՝ մէջի եղած պատուիրակները հա-
րաւային դիին եկած էին Ժիռօնտայինը բո-
լորտիքին. ասոնք ուզեցին չափաւորութիւն
մը պահելով մէկալնոցմէ վեր ելլալ, չէ
թէ իրօք մնվընին աւելի աղէկ ու արդար
ըլլալ եր, որովհետև ամմէնէն աւելի մըտա-
վընին դրած էին ընդհանուր ամբոխութիւն
մը հանել ամմէն աշխարհ, հապա՝ աւելի
բազմութիւն վաստրկելու համար իրենց դին՝
աս Ձամիան բռնելը աւելի յարմար դա-
տեցին. օտար տերութենէ հետ խաղաղու-
ընելը աւելի կուգէր ռօպէսբիէն քան թէ
Ժիռոնտեանք, որոնք քանի որ կիշխէին՝
ձեռվընէրնէն եկածին կէօրէ խաղաղութիւնը
կարգելէին։ Անդր ըսվողները սահմանա-
դիր Ժողովին դին եղողներն էին ու թա-
գաւորին դին. ասոնք շատերը էին՝ բայց
անձարակ, էին կրնար համարձակիլ իրենց

մաքինը երևան հանել, և ոչ ժաքօպէնեն-
րուն կամ խռովարարներուն դէմ դնել։
Այս ամէն դասնալ արիւնհեղուէ կըմտա-
ծէին, երբեմն մէկը վեր կելլար երբեմն մէ-
կալը, մէկը մէկալին արիւնը խմել կընայէր
կըսպասնէր։ Վասնզ որ վախցընող ժաքօ-
պէնները մէկ տեղ ժողվըված ան դասը
ձևացուցին՝ որ ազգային միաբանութէ մէջ
ըսվեցաւ Լեռնայէն. ժիռօնտեաններըը ըս-
վեցան Դաշտայէն. ռօպէսպիէրն որ քօռտի-
լեան քլուպին մէջէն էր՝ քիչ մը ատեն կար
որ հեռըցերէր, մայր ընկերութէ քլուպին
մէջ ինքն էր խօսքի տէր եղած, բայց իրեն
կեղծաւորուէ բանեցընելը քիչ քշեց, քիչ
մը ատենէն երևան ելավ իրեն հնարքը թէ
ինչպէս կուզէր իշխողութէն բռնակալութէն
ձեռք ձգել. երկու հեղ ամբաստանվեցաւ
սաստիկ կռուեցաւ լուվէնի ու պառպա-
ռուէն հետ 1792ին եաքերը. նորէն կռուե-
ցաւ ասոր հետ 1793 մայիսի, բայց վար-
պետ խօսքերով կրզեց խալըսեցաւ. իրեն
միտքը միշտ առաջ տանելու հետ էր՝ որ
էր ժողովուրդը գրգռել կատղեցընել, ժո-
ղովուրդին կատաղութէը ձեռք առնելով
ամէնհնաւ իր տակը առնել. ասոնք բանիս հա-
մար իրեն մեծ գործիք առավ մառաթը,
որ վատահամբաւ օրագիր էր այսինքն կա-
զդա շինող, ժողովուրդը բռընկցընող.
ասոնք սկսան ցորենը քիչցընել, անանկ որ
շատ հեղ փռնէրը հաց էր գտնըվեր, կնիկ-
ները սկսան աղաղակ վերցընել, ան ատե-
նը մառաթ իր օրագրութեան մէջը գրեց.

Հաշտարարները բանալ լալել, թէ վերջապէս ա-
նոնք կանչել, մէկ հարիւր դեղ է ան հասարակաց ըն-
ատատութիւնը վերջացնելու համար։ Այս խօսքին
վրայ ժողովրդեան մէջէն ոմանք վազեցին,
պահար ծախօղ խանութներէն նաև քանի
մը համբարներ կոխեցին ուշաճնին պէս ա-
ռին։ Այսոնք դրդօղ կար մէկ ընկերուն մը
որ ռօպէսբիէռն դրերէր, բայց առանց ցը-
ցրնելու զինքը ամենևին, միայն թէ պաշտ-
պան կրկենար ան թալլօղներուն ըսելով,
քիչ մը շեքեր առնելնուն համար պէտքը
չէ բռնել մէկ ժողովուրդ մը որ գլուխ վեր-
ցրնել կընայի, ասանկալ կրպաշտպաններ
երբոր աւելի բաներ ըրին փարեզ և ուրիշ
տեղվանք պօռատօն, լիօն, մարսիլիա ևն (1)։
Այոնք օռլեանսին վրայ, ասիկայ իր հա-
մախոհներով դեռ յոյս ունենալով որ կըր-
նայ ֆրանսայի թագաւորը ըլլալ՝ որչափ ցած
ու անարգ բան կայ՝ օրէ օր իր վրան կառ-
նէր ժաքօպէններուն սիրտը վաստկելու
համար. օր մը գլուխը կարմիր գտակ դնե-
լով ելաւ ժաքօպէններուն ատեանը յայտ-
նի ընելու թէ ինքը օռլեանս դուքսին
զաւակը չէր, հապա իրենց տանը մէկ ծա-
ռայի մը զաւակ էր, անոր համար խնդրեց
որ կարօղ ըլլայ իր մականունը փոխելու,
ասոր վրայ միւնիսիբալիտը (որ է դատա-
ւորներուն ժողովը) մէկ վճիռ մը հանեց
որ կարօղ ըլլայ Եգալիտէ ըսվելու, իր

---

(1) Կիձէ քիչբէվ ասմիչելիմ օլ սիւթունի ֆելեկէ,
նիմէթի քէսրէ վէրիր, ասվէթի հէր ասմ էչնէկ։

եաւի եկօղնէրնալ կարօղ ըլլան նոյն անու-
նը բանեցընելու. երբոր մեռաւ բօնդիեվ-
ռին դուքսը որ իր անէրն էր՝ գնայ ժա-
ռանգելու անոր հարստուիը իրեն արիւն-
կըզակ համախոհներուն բաժնելու համար,
բայց իր կնիկը բոլորովին բաժնըվեցաւ իր-
մէ: Ի՞նչ ատեններս տանթօն ու ռօպէսբիէռն
մէկ դաւաձանուէ մը հանեցին, ազգային
միաբանուէ երրորդ մասը կոտրելու. բայց
տանթօն միշտ հաւասարուէն կուզէր, իսկ
ռօպէսբիէռն կըցանկար կընայէր ինքնիշխան
բռնաւոր ըլլալ ամէնէն ֆրանսայի վրայ:
Ի՞աւիէռն ժողովրդեան դիտցին առաջար-
կեց մէկ նոր ատեան մը սահմանել որուն
գործքը ըլլայ խռովուէն հանել, անոր հա-
մար մռածեցին աւելի չարագործ ժաքո-
պէնները ան ատեանին մէջ խօթել. աս ա-
ռաջարկուէթիը շատ ընդհմուէ գտաւ ազ-
գային միաբանուէթ մէջ, թէպէտ և Ի՞ե-
նայինէը շատ աղաղակ վերուցին եաւէ ըն-
կան առաջ տանելու, ան ատենը օռլէանա-
ները և ուրիշ չարագործները հաւնեցան,
մռվլընին դնելով երթալ չարդել ազգային
միաբանուէ մէջի եղօղնէրը, թէ ինչու հա-
մար թագաւորին մահուան ատենը հաւա-
նուէթ տըվին իրեն բողոքում ընելու առ
ժողովուրդն՝ որով հակառակ ցըցուցին զի-
րենք ժաքոպէններուն. Ի՞ոնց գլխաւոր-
ները գացին օռլէանսին ըսին, ահա եկավ
ատեն որ ամէնէն վտանգ յանձն առնես,
գլուխ ըլլաս զինեալ մարդոց, թագը գը-
լուխդ դնես, ազգային միաբանուէթ մէ-

ջէն ով որ դէմ կենայ ջարդես. բայց ա-
սանկ քաջասրտութէն խիստ հեռու բան էր
օռլէանսին սրտէն, որ միայն անարդ բան
կրնար ընել. երբոր աս խօսքս լսեց՝ վախէն
դիփ դեղնի կտրեցաւ, գնաց պահվեցաւ.
անանկ որ իրեն համախոհներնալ ըսին թէ
անարժան է ասոր օգնելու [1]: Ասոնց վա-
խը յայտնի ըրավ իրենց միտքը, մեկալնե-
աոեն ունեցան զինք առնել պատրաստը-
վիլ ազգային միաբանութիւնը պաշտպանե-
լու համար. ասոնք տեսնալով որ բանը փոխ-
վեցաւ, յանկարծ ջարդելուն տեղը՝ յայտ-
նի պատերազմիլ պէտք եղավ, սիրտերնին
կտրելով ցիրուցան եղան: Ազ դաւաճա-
նութիւնը որ 1793 մարտի 10 եղավ, միևնի-
սիքալիդը ամբաստանեց ազգային միաբա-
նութիւն, բայց անիկայ բանի տեղ չդրաւ,
մարտի 11 սահմանվեցաւ աս զարհուրելի
ատեանը խռովարարներուն, որուն մէջ
հինգ ժաքօպէն դատաւոր կային. հինգալ
երդվընցօղ, դուրսի երկիրներնալ աւելի
կատաղի ժաքօպէններէն խրկեցին իբրև
իրենց գործաւորներ. ժիւռնատեանք շատ
չանացին պարապ հանել ասոնց մտածածը՝
բայց ինչ կենցաղակրթութէն որ պէտք էր
չիգիտցան բանեցընել: Տիւմուռիէ զօրա-
պետը քօռտելիէներուն հետ մեկ ըլլալով՝
դրեց ազգային միաբանութէ որ զօրաց մեկ

---

(1) Բուխոտթ պուլունուր, տամինի ճանան էլէ կիրմէզ,
ճանան պուլունուր, քիւշէյի իմքեան էլէ կիրմէզ:

մասը առնելով փարիզ գայ, վրեժ առնէ անոնցմէ որ մարտի 10 մահճեցին դէմ ելլալ ազգը ներկայացնող ժողովքին, ժաքօպէններուն ընկերութիւնը կոտրէ հալածէ. աս լսելով Լեհայինէը ահու դողդողմէ ընկան, տիւմուռիէին վրայ ամբաստանութիւնէը հանեցին. բայց տանթօն անիկայ ջատագովեց, խոստացաւ յետս կոչում ընել տալ, ինքը անձամբ գնաց ստորին նահանգները ուր էր տիւմուռիէ, դուշ եաւելի իր դին քաշելու համար, բայց ան ատենը մարտի 18 տիւմուռիէն յաղթելած ըլլալով ներվիւտէնին ծեծին մէջ՝ ժաքօպէններուն ձեռքէն խալսցընելը մէկ դի Թողլով ինքիր զինքը խալսցընելը կընայէր. ինչվան որ ապրիլի 3 ինքնալ փախաւ նեմգէներուն ապաստանեցաւ։ Ան քանս խիստ կոտրեց քօռտիլիէներուն սիրտը, վախերնէն միաբանեցան ժաքօպէններուն մայր ընկերոջ հետ՝ որպես զի մահճէն ինչպէս կրնան ընդհանուր կործանումը բերել։

Ի Երոգրեաւ ատեանէն զատ որ էր խառվարարներուն ատեանը՝ մէկ ընկերութիւն մընալ ուներին քան խառնօղներու, մէկ ուրիշ ընկերութիւնմընալ որ ըսվեցաւ Հասարակաց պահպանութիւն. ասիկայ ամէն իշխանութիւն իրեն քաշելով՝ քիչ ատենի մէջ բռնաւորի պէս իշխել սկսաւ ամէնուն վրայ ինչվան ազգային միաբանութիւն վրայ. ան ատենը ամբաստանութիւնները սկսան շատնալ։ Առաջ ամբաստանեցին օռլէանսին

վրայ որ կուզեր Թախտը նստիլ, հասարա-
կապետութիւնը ավերել. քօռտիլլէներըը շատ
չատագովեցին անիկայ, բայց նշաններըը
խիստ յայտնի կեցած էին, անոր համար ի-
րենքալ անոր հետ յանցաւոր երեւցան։ Ա-
ծոպէանի երկպառակութիւն ձգեցին։ Նա-
պոլիտանէրուն մէջ որ երկու բաժնըված էին,
ամբաստանօղներուն կողմը բռնեցին. ա-
նոր համար ապրիլլի 7 օրէն սկսը բռնըվե-
ցաւ իր ամէնն ընտանեօքը իր հնիկէն զատ.
որ վէրնօն տեղը հիւանդ պառկած էր։
Նարաթնալ ամբաստանվեցաւ որ իր օրա-
գրութիւնը մէջ ջարդել կըքարոզէր ազգային
միաբանութիւնը. վախէն քանի մը օր պահ-
վեցաւ՝ բայց ժաքօպէններըը ամէնն կերպով
սօթթըվեցան անիկայ պաշտպանելու. Նա-
սարակայ պահպանութիւնն ժողովին առջին էլալ,
իրեն պաշտպանութիւնալ իրեն բոլորտիքը առ-
նելով, կըսպառնային դատաւորներըը սպան-
նելու թէ որ չարձրկեն. անանկով խալըս-
յուցին, յաղթանակօղի պէս գլուխը կա-
նանչէ պսակ դրին, ինչվան ազգային միա-
բանութիւնը վրայ սկսան յոխորտալ։

Ըս բաներէս մեռաթեանք ուրիշ ժաքօ-
պեանք նոր առիթ առին վրէժ առնելու
ջարդելու ազգային միաբանութիւնը դին եղող-
ները որ Նաշտային կըսվէին. մէկ դասաձա-
նութիւն մը ուզեցին հանել, որ Նա-
պոլիտանէրէն քշված միաբանութիւնը պատուիրակներըը
մէկ ժամու մէջ տուն մը խօթելով պիտոր
խղդէին, անանկ հռչակելով որ մատնիչ
են, թշնամիին զօրապետներուն հետ կը-

Թղթակցին : Այս դատաձանութիւնը երեան ելլալով 12 Հոգի դրին քննելու . ամէնն քննութիւնեալ Յաղթականէն էին , ասոնք ստոյգ Հանելին ամբաստանութիւնը , բայց երբոր պիտոր կարգային իրենց ըրած քննութիւնը ազգային միաբանութեան մէջ Եռանդին ծառայէնները անանկ չընկոց խժդժութիւնը Հանեցին , որ անհնարին եղաւ մէկ խօսքմընալ չկրնցաւ , ասոր վրայ անոնց երկու դիմացւորներըը բռնեցին որ էին հեռապեռդ ու օքզենդ : Եանը Հոն Հասաւ որ ժաքօպէննէրը մտնելնին դրին վերջի ձիգը բանեցընելու . և որովհետև ազգային միաբանութեան մէջ չէին կրնար միշտ իշխող ըլլալ իրենց Հնարքներով , մտածեցին 600 Հոգիի մը չափ գնեցնել մարդիկ Հոն մտցընել որպէս զի իրենց ուզածը վճռել տան . ասանկ ընելով ազատել տրվին վերոյիշեալ երկու դիմացւորները :

Յաքօպէանք նոր ապստամբութենէ Հանել կը մտածեն.

1792 :

Յաքօպէանք իրենց ուզածը առաջ տանելու Համար մտածեցին մէկ ընդՀանուր ապստամբութեան մը Հանել փարէզին մէջ, ասանկով մայիսի 31 , 100 Հազար Հոգի գնեք առած ոտքի վրայ ելլան, բայց ազգային պահապանները ասոնց Հետ չմիացան , յայտնի ըրին որ իրենք պատրաստ են օրինադիրները պաշտպանելու . ասով պարապ ելավ

իրենց խորհուրդը, միայն քանի մը անկարգ
բաները խնդրեցին ան օրը միևնոյնիսկ ատե-
ներուն գլխաւորին ձեռքովը. մեկնալ աս
էր խնդրածնին ազգային միաբանութե՛ն որ
վճիռ հանէ ամբաստանութե՛ն 34 պատուի-
րակներուն վրայ որ ան միաբանութե՛ն մե-
ջէն էին. մեյմընակ 40 ըստակ վճարվի օրը
ան անզգամներուն որ Պան Էֆէնտի իրը Պաշ-
պըռը էբպաշ կըսվէին, որովհետև կարըվե-
րը իրենց թոշակը որ օրէնքանսէն կառնէ-
ին: Այս որովհետև ազգային պահապաննե-
րուն չիմիաբանիլը տակնուվրայ ընալ ի-
րենց մտքին դրածը՝ ուրիշ Համիայ մը բըռ-
նեցին. հինգհիւ անունով մեկը բերին գլուխ
դրին ամէնուն քանի որ զինված մարդ կար
փարեզի մէջ, որուն պես ցած մարդ քիչ
գտնըված է. առաջ մեկ սուրհանդակ (շա-
թըր) մըներ, ետքը կեօմրիւքչին բան փախ-
ցընօղ եղավ, ետքը լըտես (չաշուտ). աս
էր որ լսմալալ իշխանութիւնին աղէքներըը հա-
նեց, ըզ Ֆիլիմինոս տեղը մորթըված քա-
հանայներուն արիւնը խմեց հասարակապե-
տութե՛ն կենդանութեը համար, հիմակալ ա-
սիկայ եղավ գլուխ կառավար ոչխափ որ
Ջարդ եղավ Ֆրանսա, քանի աւելի արիւն
կզակ մարդ որ ունեը, անոնցմէ կեցուց աղ
գային միաբանութե՛ն բոլորտիքը, նաև վե-
րսյիշեալ 100 հազար մարդը ասիկայ կե-
ցուց, որոնք իրենքալ չէին գիտեր թե ին-
չու համար զինեալ էին. խօսքը անանկ հա-
ներ որ՝ ազգային միաբանութիը պաշ-
պանելու համար եր, բայց ան կերպով կե-

ցուցերէր որ՝ ինչ կըլլար ետևնին չէին կըր-
նար իմանալ ։

Ասղովին մէջ խօսք բացին ան պատուի-
րակներուն վրայ որ ժաքօպէններէն քշված
էին , անոնք սպանելով կուզէին ինացած-
նէրուն վրայ վախ ձգել , անանկով իրենց
թշնամիներէն խալըսիլ ։ ազգային միաբա-
նութիւը ինչվան եաքը դէմ կեցաւ աս բա-
նին , բայց | եռանդէն ըսվածներըը յուսահատ-
ված մարդիկ անանկ խժլթուք շինկոց հա-
նեցին , անչափ թուրեր խաղցուցին վրա-
նին , որ վախերնէն իրենց ուզածը վճռե-
ցին , մէջերնէն գլխաւորներէն մէկը լան-
ժիուէն անուն անանկ յոխորտալով խօրա-
թեց որ՝ ազգային միաբանութիւը ալ յոր-
նած ըլլալով նախատինք ու սպառնալիք
լսելէն՝ որոշեց ելլալու ։ բայց երբոր դուրս
ելլալու եղան՝ լեռնայիններուն ամէնն ալ
խաւորները հէնուիօնին հետ մէկ խօսք ո-
րոշեցին վերջի ձիգը բանեցընել ։ հէնուիօն
իրեն արիւնախանձ պալըրըզ էպալեխներով ա-
սոնց դէմը ելլալով թուրերը բանալով թիւ-
ֆէնկներ պարպելով նորէն նեբս խօթել
տըվավ [1] ։ ան ատենը օրինագիրներուն

---

(1) Իլահի բապպիմ սէն թիւրքէ ֆրսանա վէրմէ ,
թէրքի թիմար օլմասըն ,
Թարխանանը չօք եէսիք , պուլղուրուն նօգսան
պուլմասըն ,
Ա-յաղընը չարըգ սըգսըն , տալա բահաթ պուլ-
մասըն ,
Հնգէսինէ պին Թօփուզ , պիրի նօգսան օլմասըն ։
Սագըն սէն թիւրքէ աղա տէմէ , զիրա սիւշմէզ
շանընայ ,

տեղվանքը աս | էոնայինները նստելով վճռե-
ցին բռնել 30 հոգի ազգային միաբանուհին
ու երկու պաշտօնեայներ : Աս անգամուն
ըրած ժաքօպէնեներուն բռնուԹիը վրէնք
վեր հանեց . ասկից ետև իրենք եղան յաղ-
Թող, ազգային միաբանուԹիը եղավ իբր
մէկ ոչինչ մը . ժաքօպէնեներուն ընկաւ հրա-
տարակել արիւնախանձ վճիռները կամ ու-
րիշ ինչ որ կուզեր Հատաբակաց պահպանուԹիե
ժողովը . ինչ կարգ ու կանոն կար , ինչ ար-
դարուԹի մարդկուԹի ընկերական կամ ապա-
հովուԹիե՝ ամէնինալ ոչնչացան գացին . մէ-
կը չկար որ իր ազատուԹիը պատիւը կեան-
քը ապրանքը ապահով սեպէ , ամէնն օր
վտանգի մէջ՝ ամէնն ժամ վախի մէջ էին ,
միայն չարագործուԹիեն էր ապահով . ան
ատենվան ատեանին դատաստանին ըն-
կերուԹենին ղէնուզրնին՝ ամէնինալ խոռ-
վարար մարդիկ էին . ասանկ էին իրենց
պատուիրակները դուրսի գաւառները խրբ-
կած՝ որոնք ջարդել ու Թալանել կըսորվեցը-
նէին . ՑանԹօն ու | էժանտուը յայտնի
կըպարծէին որ մենք բան խառնօղ մարդիկ
ենք . ա՛լ որ կուզէ ազատուԹիը պահպան-
նել ասանկ պէտք է ըլլալ . ամբոխուԹե ա-
տենը աւելի չարագործներուն կիյնայ իշ-
խօղ ըլլալ կըսէին :

Ազգային միաբանուԹե մէջինները հասկը-
ցուցին իրենց գէշ կացուԹիը , ժաքօպէն-

---

էկէր էօքիւզիւն պիրի էօլիւրսէ , գօշ օ ուսմու-
զուն ալԹ եանընայ :

հերուն բռնակալութիւը, յուզեցին մեյմը-
նալ հոն ժողվիլ ուր որ միկար ազատութիւ
կառավարութիւ, այլ անոր տեղը մահ ըս-
պառնալիք. մեջերնեն 73 հոգի աս բանիս
վրայ յայտարար գիր մը հանեցին. որով
դուրսի գաւառներուն մեջ շատ մարդ գը-
տան իրենց դին, բայց չունեին ան ուժը որ
ժաքոպէններուն դեմ կենան. Պանպէան
քիչ մը ատենէն վեր արդէն զինեալներ հա-
ւատքը պաշտպանելու՝ որոնք շատ հեղ զար-
կին խռովարարներուն զինուորները: Ժա-
քոպէնները աւելի կրվախոցներ փրանսայ-
ին հարաւային դին եղօնները. աս դիէն ի-
րենց դեմ քան մը փրթելու կասկած ու-
նէին, բայց ժաքոպէններուն ձեռքն եր Պ-
պէյոդին գործարանը, այսինքն ուր որ թըղ-
թէ ըստակ կըկոխվեր, անով շատ ըստակ
ունենալով քանի որ կուզէին Պալըրը էջա-
լանէրէն զինուոր գրելով վճարքնին տալով
ղրկը կըշատցընէին. ուրիշներուննալ հրա-
ման կուտային ազատաբար թալէլու ան
քաղքըները որոնք որ իրենց դեմ կրկե-
նային: Ինանկով բիւրաւոր մարդիկ ելան
սիւռեցան իրը մէյ մէկ յուսահատված ա-
ւազակներ, ուր որ կերթային՝ ջարդ ու
բուրդ կընէին անասատ կըդարձընէին.
սուռատ քաղաքն ու մարսիլիա գիտնալով
որ միկրնան պիտոր ատոնց դեմ դնել՝ դըռ-
ները բացին, բայց ատով չիխալըսեցան ոչ
թալըվելեն և ոչ արիւնհեղութէ, որ չար
ֆեդռնը ու դալիոնը գետի պես վազցը-
նել տըվին. միայն լիոն քաղաքը յուզելով

ասոնց Համբան բռնել, ասոնց կարծիքին հետևիլ, որ անտեր անտերուն ըլլալ բրա-նաւորուն ընել կըքարոզէին՝ փետրվ. Մէջ գլուխ քաշէց ինչվան եաքը դէմ կեցաւ. բայց անօթիութէ չիդիմանալով խօսք դրին հետերնին, հոկտ. 6 քաղքին դռնները բա-ցին. ասոնք ըլլալով անանկ մարդիկ որ ա-հաւասք ունին ա-ր օրէնք, խօսք կապելը հե-տերնին եղաւ իբրև ջուրի վրայ գիր գրել։ Ներս մտածնին պէս քաղքին մեծ մասը թալ-էցին ավրեցին, մէջինները չարդեցին մա-նաւանդ եկեղեցականքը. խմբովին հրա-պարակներու մէջ տանէրով սալերմ Թօփ վրանին պարպելով մէկէն կըմեռցընէին։ Մեծագործ շէնքերը քակեցին. ատելութենին աւելի ցցընելու համար քաղքին անուն-նալ փոխեցին։ Ա՛ս ատենվան ըրած չարու-թիւնին որ աս դիս ան դին կընէին՝ անհնա-րին է մէկ գրքի մը մէջ պատմել։ Վօլօն-ցիք տեսնալով մարսիլիացոց քաշածը, ին-կիլիզը իրենց օգնութէի կանչեցին, որ զօ-բաւոր նաւերով Ջերմակ ծովը կըպտըտեր, յուլիսի 27 իրեն յանձնեցին քաղաքնալ բերդնալ Թէրսանէնալ, բայց որովհետև ան քաղաքը պահելու աւելի ցամաքի ուժ պէտք էր՝ որ այնչափ չունէին ինկիլիզնե-րը, նոյեմբ. 19 վրայ վաղելով ժաքօպէնե-ները իրենց աւին, անոնց Թօփէի պաշն էր ան ատենը պօնաբարտէն։

1793։

Տեսնալով ժաքօպէններըը որ իրենց թշնամիները կը զօրանային պուէդպէնի ու քալվատոսի մէջ և ուրիշ տեղվանք՝ աւելի վտանգաւոր մէջ, ասոնցմէ վախնալով չըլլայ որ ամբողջ Ֆրանսան օր մը միանայ օրինադիրը ժողովին ազատութիւն տայ իրենցմէ վրէժ առնելու, նոր բան մը մտածեցին, 15 օրվան մէջ նոր սահմանադրութիւն մը շինեցին ռամկապետական, վար զարնելով պատմօղնիրըը ժիռօնտեաններըը, իբր թէ անոնք եղան պատճառ ինչվան հիմա աս բանիս արգելօղ։ Ան մտածածնին խիստ շահ եղավ իրենց, ամէնհունաւ հաճոյ ըլլալով թմրեցան լռեցին, կարծելով որ ալ չեն ուզեր անպետութիւն որ իրենց պատուիրակները կըքարոզչին. աս հնարքով իրենց թշնամիները անգործ ըրին, վախէն խալըսեցան, վրենք աւելի զօրացուցին, թէպետև սահմանադրութեան մէջի դրածնները ժաքօպէններուն մտքին եղած ըլլալով տգիտութեան ու չարութեան գրուածներ էին, բայց ժողովուրդը ընդունեցաւ մէկ մասը յոքնելէն, մէկ մասնաւ վախէն որ աւելի չար բան մը չելլայ. ընդհանրօղներուն մեծ մասը կուզէին որ օրէնսդիրները շուտ մը փոխվին, ազգային միաբանութեան վրայալ քննութեան ըլ-

լըվի • բայց աս բանս չէր որ կըմոռածէին մաուաթ, տանթէօն, ուօպէսբիէն ու իրենց համախոհները • իրենց միտքը ուրիշ բան ըլլալով՝ միայն ընդունելնին հրատարակելու, անով հերիք սեպելին։

Այս ձգող ժաքօպէնները մէջ ուրիշներէն աւելի Մաուաթն էր երևելի, կամ թէ ամէնն ֆրանսայի մէջ աւելի ժամտ՝ աւելի չար՝ գլուխ ամէնն անկարգութեանց կըսեպվէր իր օրագրութեանը համար որ չորս դին պատեհելով բան կըբռընկցընէր • բայց շուտով վերցըվեցաւ մէկ անկարծելի մահուամբ մը • քանի քաղաքը աղջիկ մը կար 25 տարվան շաուլօթ քօռտայի անունով, որուն սիրական հաղարապետը մեռուցերէին քանի մը չարագործ գնուորները մաուաթին գրած թղթէն գրգռելով • ասիկայ միտքը դրաւ վրէժ առնել սպանանելով աս ցուցանքաւոր մարդը • իր միտքը մէկի մը չիբանալով քանի քաղաքէն ելլավ փախչիլ մաուաթին տունը եկավ • անանկ ցըցընելով որ խիստ հարկաւոր խօսք ունի իրեն ըսելու • ան ատենը մաուաթ ջուրը մտած ըլլալով ցաւ ունենալուն համար, երբոր ջուրէն ելլալու վրայ էր ամենևին կասկած չերթալով մէկ աղջկան մը վրայ՝ թողուց որ գայ խօսի • բայց աս չիկարծած աղջիկը իրեն միտքը բանալէն ետև, խօսքի բռնելով գինքը իր կուրծքին վրայ սուր մը պահված ունենալով՝ մէկէն հանեց մաուաթին սիրտը խօթելու ու սպանանելը մէկ ըրավ յունիսի 14 • իսկոյն իմանալով բռնեցին զա-

տաստանը տարին . ինքը խնամուած երես ցը-
ցընելով կըպարծէր իրեն ըրածին վրայ, իբր
մէկ մեծ չարէ մը խալցընող փրանսան մա-
ռաթը սպանանելով, որ Ա.բրիտանըբուաց գը-
լուխ կըսեպվէր . չառլեթին վրան գտան
մէկ թուղթ մը որ պարպառուն կըգրէր
տիւքէռվին, ասով՝ աւելի պարտաւոր գըտ-
նըվելով գտատպարտեցին գլխատվելու, ին-
քը հանդարտ սրտով եկաւ գլխատվեցաւ,
բազմուհիը տեսնալով անանկ մանկամարդ
աղջիկ մը՝ իր միաքնալ հասկընալով շատ
լացին, խռովուելնալ անցնելէն ետև իբր
փրանսայի ամազոնեացմէ մէկը սեպեցին .
իսկ մառաթին մեռելը ժաքոպեանք առին
առաք փառաք տարին քանթէօն, ուր սկը-
սան թաղել իրենց մէջի երևելի սեպվածնե-
րը :

Պատանք որ ժաքոպեանք փարէզի մէջ քլուպ
մը ընել տըվերէին չար անզգամ հնիհնե-
րուս, որ կըկոչէին Ընկերոնէ խռովարար կոչ-
նէրս . ասոնց կատաղուհիը խիստ աղէկ ծա-
ռայեց ժաքոպէններուն աւելի չարիք ընե-
լու . ասոնք մէկ բերան կըկանչէին , ուրոնք
որ լեռնայիններուն թշնամի են՝ ամէնեան
թոռ մեռնին . թշնամի անուանով կիմանայ-
ին մէյմը հարուստները , մէյմընալ հասատք
համեստութիւն ու տերութիւն ուզողները : Ա-
տենվան ժաքոպէններուն ըրած անգթու-
թիները բարբարոսները չէկընար պատմվիլ .
գրոց մէջը շատ անգթութիներ լսերինք որ
ըսերեն պարսիկը , հունը , գուղք , մուղալ
թաթարը , բայց կըսեն որ աս ժաքոպէննէ-

րուն ըրածնէրուն մէկը չի հանիր, մէկ օ-
րինակ մը չիկայ ասոնց նման, փարիզի ու
դուբսի քալքընէրուն մէջ կիյլոչ գործի-
քը դրած ունէին, որ ինը հոգիի գլուխ մէ-
կէն կըկտրէր. բայց ասոնք հերիք չեղան,
ուրիշ կիյլոտիներաշ հանեցին շարժական.
տեղէ տեղ տանիլ կուտային զինուորներով,
որպէս զի շուտ մը սպաննեն անոնք որ մա-
հապարտ կըդատէին իրենց անիրաւ դա-
տաւորները, տղաքնալ երիտասարդներնալ
աս բանիս վրայ տաքցընեն վառեն։ Կղ-
դայիի միաբանութիները մանաւանդ թէ լեռ-
նային ժաքօպէններըը որոնք էին աս ատեն
մէկ հատիկ կառավարօղք՝ վերուլյին ֆը-
րանսային Ձեմարանը նաև բանասիրական
ու արձանագրական Ձեմարանը. ասանկալ
վերցըվեցան համալսարանք դպրատունք
դպրոցք. հասարակաց սորվելը բոլորովին
ավերըվեցաւ. իրենց փընտռածը էին տգէտ
չարաբարոյ ժանտ մարդիկ. տասն օրվան
մէջ հրամեցին քակել Թագաւորներուն դե-
րեզմանները որ Նը դիոնեսիոս եկեղեցին
էր, ասանկալ քանի շիրիմ (Թիւրպէ) որ
կային ժամերու մէջ քակեցին. սահմանագ-
րութիները խափանեցին ըսելով որ խաղաղու-
ըլլալէն ետև Թող բանեցըվի։ Հաւատքի
համար աղատութիւն ըլլայ ըսին, բայց քա-
հանայները որ ինչվան հիմա ուրիշ պատ-
ճառներով կըսպանէին՝ հիմա յայտնի բա-
յին իրաւ պատճառը՝ որ էր իրենց անհա-
ւատութիները. հալածուին որ ինչվան հիմա
ուղղափառութիւն համար կըցըցրնէին, հի-

մն յայտնի բացին բոլոր քրիստոնէութիւն նաև ամէն հաւատքի դէմ ըլլալը. սուրբ պատկերներն որ կային փարիզ և ուրիշ տեղվանք՝ քաշեցին հանեցին, Ճամիայները քաշկռտելով չամուռներու մէջ ձգեցին. որ ժէնեվիեֆա եկեղեցւոյ մէջ պատկերնե րուն տեղը՝ ինչպես որ ըսերինք մուռաթին և ուրիշ չարերուն պատկերները դրին, ժա մերուն մնացած որ սպասները առին թալ լեցին: Քրիստոնէութիւն ամէն շաբաթը ընծիւղը համար մէկ նոր օրացոյց մը շինե ցին, անով ամէն կիրակիները տօները վե րուցին. շաբաթվան օխտը օրվան տեղը՝ տասնական օր սահմանեցին. ով որ կիրա կի օր խանութը գոցեր՝ ան մարդը կըբըռ նէին. ամէն մէկ ամիսներուն նոր յունա կան անուն դրին ծիծաղական. աւելի ա նարգ անուններ դրին օրերուն վրայ, ինչ պես են դդում, շալղամ, եշ ևն. ինչ քա հանայ որ խոստովանութիւն կըլսեր՝ մատա կաբար կղզին քշել հրամեցին. պատարագ մը տեսնող՝ կամ մէկ տեղ աղօթք ընող՝ շատ տեղ գլխատեցին, մանաւորաց տը ները չէր կրնար մէկի մը ապաստան ըլլալ. քաղաքական օրէնքը ընդլուած էր, բռնա ւորութիւնը չափէ դուրս ելած. միայն վան տեանք քաշուիլը կրպաշտպանէին զիրենք, և ան ոտք ելլող պրեդօնեանք որ Ճ Էօվանո ըսվեցան. ասոնք ըստ մեծի մասին կեղծ րիւքէ բան փախցընող մարդիկ էին առաջ, մանաւանդ աղ փախցընող. [illegible]

ՀԸԼԼԱՅ , ԲԱՅՑ ՂԱՐՈՒՔԻ ՄԸ ԵՐԲՈՐ ԲԱՐԲԱՐՈՍՈՒՔ ՀԱՒ
ԴԱՅԾԻ ՀԸԼԼԱՅ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՒ ՂԱՐՈՒՔԻ ՀԸԼԼԱՅ ։

## Ֆրանսայի Նախագահին ու օրէնսդիրին գլխատեալ Լուէը ։

## 1793 ։

Պառաթին մեռնելէն ետեւ ռօպէսբիէրն ու տանթօն եղան գլխաւոր տիրապետող-նէր . ասոնց երկուքը կրկարգաւորէին ընկե-րութիւը Հասարակաց պահպանութեան , և ընկերու-թիւը Յեղափոխութեան , նաեւ ընկերութիւը Յեղա-յին . ասոնց լեռնային ընկերութենէն ամէնն ֆրան-սային կառավարուն էր եղած . պատճառն որ ասկից կրկախվէր ամէնն մանաւանդ մար-գոյ դատը ( տավան ) , և ասոր մէջէն կը-կարգաւորէին ան վերոյիշեալ երկու բըռ-նաւորները , բայց ասանկ իշխողներ որ հա-ւատք օրէնք չունէին՝ հարկաւորապէս մէ-ջերնին միաբանութիւն պիտոր չունենային , մէկը մէկալին գլուխը պիտոր ուտէր , ոչ-ոք ալ ինքը մինակ իշխող ըլլայ . միայն թէ տանթօն ու քօռաթիլհէնները որչափ որ ջանք ըրին՝ չկրցան ժողովուրդին մաքէն վերցը-նել թէ իրենք օրէնսդիրն էին տաշտղ չեն , ամէնհնալ գիտէին կրվկայէին որ ասոնք կուզեն օրէնսդիրը թագաւոր նստեցրնել ։ Այս բանս ահա ռօպէսբիէրին ձեռքը աղէկ առիթ եղավ . շատ վէճ ըլլալէն ետեւ վեր-ջապէս ինքը տանթօնին վրայ ելավ յաղ-

Թեց, երբոր ասանկ ծածուկ իրարու գլուխ կուգային ուտել, դուրսէն միաբանված էին հասարակաց կործանումը հոգալ, անկարգութեի անպետութեի խօթել. երկուքնալ խիստ ահռելի մարդ էին եղած. ով որ իրենց մտքին վրայ չէր քալեր այլ մարդկուն կուգեր ցցընել՝ ամէնքնալ սաստիկ կըպատժէին: Անանկ օրէնքներ վճռեր էին որ մեկ էար թագաւոր մը չէր հանած. մեկ վճիռ մը հանեցին որ իրենց նոր դրած դատաստաններըը կարօղ ըլլան մեռցընել ժողովրդեան ամէնն թշնամիները. մեկ վճիռնալ հանեցին որ ինչ մարդ կասկածաւոր երևնայ իրենց՝ անոնք ամէնքնալ բանտը դնեն. ասկից եղավ որ բանտերը լեցվեցան բարի մարդիկներով. քանի՛ ազնուականներուն ու փախչօղ ֆրանսըզներուն հայր մայր կային, քանի՛ զաւակ եղբայր քոյր հարս, ուրիշ անբաւ մարդիկ, ով որ քաղքցիի թուղթ չուներ՝ ամէննալ կամ բանտերու մէջ փթթեցան կամ սպանվեցան. ձայն հանելով որ ասոնք ժողովրդեան թշնամի էին, կամ կասկածաւոր մարդիկ. ան թուղթնալ իրենց ուզածնէրուն միայն կուտային. երբոր ազնուականք ու քահանայք հատան, կարգը եկավ առուտուր ընօղներուն վրայ. ով որ մէջերնէն հարուստ էր՝ պէտք էր որ ամէնուն հետ հաւասարութեի ընելու համար կամ ժաքօպէն ըլլայ, կամ սան քուլօ, պէտքը չըներ: Բանտարկեալները շատ հեղ վտանգի մէջ ընկան ամէնը մեկէն կոտրը-

վելու . ռօպէսպիէռն կուզէր անոնք բանտը պահել ինչվան որ խաղաղուի ըլլար, որպէս զի ուզածին կեօրէ չարչըրկէ , պառէռը կուզէր ամէնեսնալ քշել, քօլօդ հեռպուան կուզէր ամէնը մէկէն երկինքը հանել պա- րուԹով . աս չարաչար անգուԹ հալածու- մը տեսնալով ոմանք մէջերնէն՝ սրտերնին չկրնալով ձգեցին ասոնց անհաւատուԹ ձամիան զղջումի եկան , ասոնցմէ մէկը ե- ղավ լա հառաք :

Այ՛ր ընկերո՛ւԹ դատաստանին մէջ անանկ եր եղած որ՝ ինչ մարդ ուզէին՝ աղաղակ խաչելուԹ հանելով մեռնելու կրդատապար- տեին . երեւելի մահապարտներէն մէկը դրե- ւէին որ Թագուհին է . ասիկայ յուլիսի 2 տաձարի աշտարակէն հաներ մէկ մուԹ բանտի մը մէջ դրեր էին , ուր մուգըվածի մը պէս կեցած եր . հիմա կերեւայ որ պա- տերազմի դիացէն իրենց բանը ձախորդ եր- Թալուն համար՝ կատաղուԹենին ասոր վրայ Թափել ուզեցին ժաքօպէնները . վրան քըն- նուի սկսան ընել , ծանր չանցանքներ դնե- լով որոնք զրպարտուԹի էին . ինչվան իր գաւակը որ պզտիկ եր՝ դատաստան բերին, վախցընելով իր մօրը վրայ անվայել բաներ գուրգրընել տըվին . անանկով մահապար- տուԹենէ վէհու կարեցին . խեղճ Թագուհին մէկ գեշ սալի մը վրայ դրած , ձեռվընները էտին կապած , խռովուած հրապարակը բե- րին . ան խեղճուԹենին եր հասած որ մազե- րը ձիւի ձերմակ եր կտրած ինչպես որ տես- նօղները մեզ պատմեցին . հոն գլխատե-

ցին (1) Հոկտ. 16։ Այրգը եկավ ազգային միաբանութե մէջի մարդոց վրայ, որոնք յու-նիսի մէջ ամբաստանված էին թէ թագա-ւորին դատին (տավային) առնելը հաւա-նութեի տալվերէին ժողովրդեան բողոքում ընելու, ասով ցըցուցերէին որ իրենք թա-գաւորին դէն էին, ահարկու ժաքօպէննե-րուն դէմ. բայց աս յանցանքները ցըցը-նել դժվարին եղավ իրենց. իսկ յանցա-ւորներուն ջատագովութիը զօրաւոր՝ գոնէ քանի մը հոգիի համար. ան առնելը Չար մը մտածելով իրենց ուզածը ընելու աս Ճամփան գտան. վէհու հանեցին թէ Այբէոր աս մէր դատաստանը դէմ մը վրայ կըսէ որ հերետ ապացոյց ուրիշ պարտաւոր ըլլալուն, ան մարդը պէտ-է որ սպոյի պարտաւոր սեպվի. որ ըսելէ քննե-լին առաջ դատաստարտել. ասանկով նոյ-եմբ. 1. 20 հոգի գլխատել տըվին, որոնց գլխաւորներն էին պռիսս, վեռդիխօ, վա-լազէ, ֆօշ. ասոնք աս բանիս մէջ կերևայ որ անմեղ էին, բայց Թագաւորը դատա-պարտօղներէն ըլլալով՝ անպատիժ չինիա-ցին այ դատաստանին. Մկիալ ամբաստան-վածնէրը փախած էին։

Ապրիլ եոթը կարգը եկավ օրէնսկին վրայ, որ մարսիլիայի բանտի մէջ բռնած պահ-ված ունենալով, հիմա բերել տըվին դա-տաստան կարելու վրան ան մարդերը որ

(1) Գափանաը խանէի պահեցած, իշահի սէն ֆէնե-հի պապ էլլէ.
տուասըն սէն կետաի նահանգանն միւսեմէ-ճապ էլլէ։

դանձ սփռելով ինքը գրգռերէր խռովու-
հանելու, կերակրէր պահէր պաշտպանե-
րէր՝ անոնք եղան հիմա իր գլուխը ուռոզ [1]
այնչափ յայտնի էին իրեն չարութիները՝
այնչափ իր խիղճը կզպարնէր՝ որ երբոր
օր մը ետև վճռեցին գլխատելու, ինքը օր-
մընալ չուզեց ետ թողուլ իր մահը, այլ
թմրած մարդ մը դարձած՝ թագաւորին
պէս ինքնալ գլխատվեցաւ նոյեմբ. 6. կու-
գէր կեսարին նմանիլ տիրելով, նմանեցաւ
անոր պէս սպանվելով: Ինչ տեսարան
մարդկային չարուե, ինչ տեսարան ճճայ-
ին արդարուե. հիմա կը հասկրնաս ան խօս-
քերը որ ներածութե մէջ խօսեցանք: Ա-
անհաւատներուն վախը ամէնուն վրայ տի-
րեց, աւելի անոնց վրայ որ հաւատք ունե-
նալ կրցրցընէին. ասոնց ձեռքին խալըսե-
լու համար՝ փարիզին եպսը կօպէդ կամ
կօպէլ անուն որ իրենք դրերէին՝ գլուխ ըլ-
լալով քանի մը երդումի ընօղ անարժան է-
կեղեցականներու հետ նոյեմ. 7 ազգային
միաբանութե առջին ելան կարգերնիկալ
քրխատոնեական հաւատքնալ ուրացան. ա-
սոնց հետևեցան ուրիշ չիք եպսներալ՝ ո-
րոնք ամէնինալ պատուիրակ էին ազգային
միաբանութե. ան ատենը անհաւատ փը-
րանսէզներուն խուռները իրենց յաղթութիը
լմնցած կարծեցին. անհաւատութիը տիրա-
պետած սեպելով. փարիզի ամէնն եկեղե-

---

(1) Էհլի իւրֆան մէհլեխնաէ էյլէ քէսպլի մարիֆէթ,
ճահիլէ եար օլմա, նատան օլուրսունն ագըպէթ:

ցինները գոցել հրամմեցին. ու որ մկկին միայն բացվելու վրայ խօսք բանար՝ ան մարդը կասկածաւոր կըսեպվէր։ Այդ օրը վըշ ուեցին մկկ բանաւոր հաւատք մը սահմանելու ուղղափառ հաւատքին տեղը. ան ծայրը հասաւ ասոնց կուրուիը՝ որ ինչվան խորանները վրայ գնէ կնիկներէն կեցուցին, կուռքի տեղ պաշտեցին. ասոնք ան մարդկէն էին որ բահաղն ու անահիտ ափրոդիտէ պաշտօնէներուն վրայ կըծիծաղէին. ռօպէսբիէն վճռեց որ գերագոյն էակ մը ճանչցըվի, տօներ տօնվի իրեն պատիւ յունվիսի 14. օգոստոսի 10. յունվարի 21 ևն. բայց աս տօներուս համար քահանայ պէտք չէր կըսէր. անոր պաշտօն մատուցանելը՝ բռնաւորները դաւաճանները պատժելն է կըսէր. ասով կվիմանար հաւատք ու համեստութիւն ունեցօղները վերցընել։ Մակ Թշուառական կօպէդը կամ կօպլը որ կեանքը ապրանքը կորնչցընելու վախէն անհաւատ էր եղած՝ նոյն անհաւատ ըլլալուն պատճառովը գլխատվեցաւ իբր աս վճռիս դէմ եղօղ, գերագոյն էակի չհաւատացօղ։ Ամէն տօնը ինքը ռօպէսբիէն ըրավ անճոռնի կերպով մը. անհաւատութիւն արձան մը մուխաւայէ շինված հանդիսով եբեցին. եւս անոր մխիրէն իմաստութիւն արձան մը հանեցին մուխաւայէ. ետքը աղաղակով երդում մը ըրին հասարակապետութիւն, իրեն Թշնամիները ջնջելու։

1794։

Այ կարդուրաց անհաւատներէն մէյմը շատ պօղ անունով առաջարկեց գունդ մը սահմանել, որոց պարտքը գործքը ըլլայ եւ բոպային Թագաւորները սպաննել, որոնք քրիստոս կրկոչեին. ասոր առաջարկութիւնը նորոգեց յոհաննէս պռէն. իսկ մենդայնան գիտես թէ աւելի վատահամբաւ ընելու համար զինքը՝ ան առաջարկութիւնը վճռով հաստատեց։ Ռանէ փախած քշված պատուիրակներ որ կային՝ հալածեցին. մարդասպանութիւն ընելու առենին որ ասոնք դէմ կրնային պուռտօ, մարսիլիա, ուրիշ քաղքներուն մէջ մէկիկ մէկիկ իրենց թշնամիներուն ձեռքը ընկան. ռոլանտին կնիկը սպաննեցին, ռոլանտ ինքիր զինքը մեռցուց. ասանկալ սպաննեցին պայլի աստղաբաշխը, անուանի մեռը. քլավիէն դատաստանարանի մէջ սրով զարկին։ Այսանկով խռովութիւն կրակը դարձաւ եկաւ ասոնց վրայ որոնք որ քրիստոսեցին. ռոպէսպիէրն միտքը դրեր էր քանի մարդ որ կար ֆրանսայի մէջ՝ անոնց կէսը կոտրէ հատցընէ. ասիկայ ու Հաստաբակաց պահպանութիւնը ընկերութիւնը ազատ բացարձակ հրամանը տվեր էին իրենց գործաւորներուն ամէն տեղ ավրել ամէնը ջարդել. անոր համար ասոնքալ զանազան քաղքներու մէջ սկսե-

ուրով կը բռնէին սալերու մէջ կը դնէին երիկ մարդ կնիկ մարդ, ծեր ու տղայ, քա-
հանայ ու աղնուական, առուտուր ընող ու գետին բանող, ամէնը մէկ տեղ դիզելով
հազար ու մէկ կերպով տանջանքով կրա-
պանէին, մէկը չէր կրնար խալըցընել,
շատնալ ասոնցմէ նաւակներու մէջ լեցը-
նելով գետերու մէջ թափելով կը խղդէին
անմեղ մարդիկ անմեղ տղաք։ Ասոնց ե-
տևէն կարգը եկաւ բուն չարերուն գլխա-
ւորներուն վրայ. վասն զի օձլեանսը մեռ-
նելէն ետև քօռտիլեանք օրէօր կորնցու-
ցին իրենց համարումը. ըսաբկինեալ պակ-
սելով չէին կրնար պահել իրենց արիւնկը-
զակ մարդերը իբրև իրենց գլխաւորները,
այլ օրէօր քիչնալու վրայ էին. տանթօն
իրենց գլխաւորը որպէս զի գինքը ապահով
ցընէ՝ աւելի կըշտացընէր չարուքին ու բար-
բարոսութիւնը, որովհետև ան էր ամէնուն
հաճոյական. բայց վերջապէս ինքնալ ամ-
բաստանվեցաւ իր ընկերներով շապօդին
հետ մէկ տեղ ան չար դատաստանը բեր-
վեցաւ, որ իրենք հնարեցին. տեսնալով
որ կըդատապարտին, (որովհետև աշխարհ
գիտեր ասոնց չարութիւնը, ինչման ռօպէս-
բիէռնալ զարհուրած էր ասոնց ըրածներուն
վրայ), սկսան իրենք գիրենք ջատագովել,
բայց տեսնալով որ պարապ կելլան, որով-
հետև աւելին ժողովուրդը ասոնց վրայ դա-
տախազ (տավաճի) էր եղած, վրէժխնդիր
աւելն հայհոյելով դատաւորներուն դէմ,
նաև թքնելով ան դատաւորներուն երեսը

որ իրենց մտիկ կեցած էին. ան ատենը
ասոնք մէյ մէկ խենթ սեպելով քաշկռտե-
լով տարին գլխատեցին ապրիլի 5։
Այս տանթօնին մեռնելէն ետև ռօպէսբիէռն
իր վրայ վախնալով, ամբաստանութիը քըն-
նութիը վերջացընել տըվավ, ասոնք պա-
րապ բաներ են ըսելով. հերիք է որ ըսավ
դատաւորները իրենց խղճմտանքին վրայ
վկայեն թէ ամբաստանվածները պարտա-
ւոր են, ան ատենը պարտաւորներուն պա-
տասխանը ոչինչ սեպվի թող դատապար-
տվին ըսավ. ասկէց հետևեցաւ որ մէկին
տեղը մէկալը կրդատապարտէին. պէտք էր
որ՝ ամէն օր բանտերը լեցված ըլլային,
մէկ չափ մը դրած հաստրանքով ամէն դի-
շեր անոնցմէ կրգլխատվէին։ Այսպէսով ա-
ռաջ 15, ետքը 30, ետքը հինգվան 150 հո-
գի առապայներուն մէջ դրած կըտանէին
դահիճներուն առջին կրձգէին գլխատե-
լու. աս զարհուրելի տեսիլքը զուարճուի
էր եղած փարիզի ժողովրդեան, որոնք բազ-
մութիէ մէկ տեղ ժողվըլված տեսնալու հա-
մար՝ ընօղներուն Ֆէերէմ կըսէին, Ալեյն
հասարակապետութիը կրկանչէին. շատ երևե-
լի մարդիկ աս միջոցին մէջ կորսըվեցան.
քիւսդէն զօրապետը, լիւքներ, ուրիշներըլ
գլխատվեցան անհաւատուհ համար, որուվ
հետև ռօպէսբիէռն վճռերը ընդունիլ դէ-
րագոյն կակ մը՝ մէկ ծաղրական արարողութ-
մը անոր տօնը տօնել, իսկ ասոնք ամենևին
բան մը չէին ընդունէր։ Ասոնց ասանկ խեն-
թութինին տեսնալով սոյգ երևցընել կու-

տայ ոմանց կարծիքը որ կըսեն, Թէ իրեք նեռ պիտոր գան ետևէ ետև, երկուքը ա-ռաջ շատվոր կամ քիչվոր Ձամիայ պիտոր պատրաստեն ան վերջին նեռին՝ որ ետքը պիտոր գայ, տաձարը նստելով զինքը Ա-ՃԱ անուանել պիտոր տայ։

Խարբի մարդոց մէջէն մէկ գլխատվօղնալ եղավ մալահեռպ ծերը 80 տարվան, Թէ ինչ չու չատագովեց Թագաւորը չիմեռցընելու համար, իրեն հետ իր ամէն ընտանիքնալ մեռուցին քրվըտանքն ու աղջիկը. մէկնալ եղավ եղիսաբեԹ իչխանուհին մեռնօղ Թագաւորին քոյրը, որ մայիսի 9 աշտարակի տաձարէն հանեցին, ուրիչներուն հետ քե-ըին սոսկալի ատեանին առջին. 25 հոգի եին մէկը չեր կընար բերանը բանալ. մի-այն ասոր հարցուցին անունն ու գործքը, ամբաստանվաձ ըլլալով իբր Թէ Ձեվահիր-ներ իրկաձ ըլլայ իր աղբըրտոցը որ սուտ էր. ասալ մէկալնոց հետ խրկեցին գլխատ-վելու մայիսի 10. երԹալու ատենին եր-բոր գանկտիլ սկսան Թէ ինչու իրենց խօ-սիլ մը չիԹողուցին, տամասը ասոնց պա-տասխանեց Հոգ չէ, ՆՈՒՆԵԼՈ ՓՈՅԼ ՆՈՒՆԵԼՈ։ Այս եղիսաբեԹ իչխանուհիս շատ անուշ բըն-նուԹի ուներ ու վարմունք. խելացի Ա-ՃԱ-պաշտ առաքինի ըլլալով ամէնուն առջին մեծ համարում ուներ, ամէնուն սրտին մէջնալ մեծ կսկիծ ձգեց, բայց ամէննալ գաղտուկ կուլային [1], մէկը չեր իչխեր դուր-

(1) Ճիչտ նոյն վասըն եար իլչ չատան օլմասըմ կիԹ-սիմ։

սէն ցրցընել, և ոչ ցաւակից ըլլալ. իրեն աւելի տանջանք ըլլալու համար ամէնէն եաքը գլխատեցին՝ որ տեսնող ըլլայ առջինները։ Ով ինչ եր իր մահուան պատճառը շատ գրուածներ ելան. ընդհանրապէս աս ըսին որ՝ ռօպէսբիէրն քանի մը ամիս առաջ սկսեր եր իշխանուհիս չարտաղովել. հիմնալ տեսնալով որ ինքը մենծնալու հետ եղավ, կըմտմտար անոր հետ կարգըվելու, ամէնն ֆրանսայի վրայ ինքը իշխելու. իբրև ստոյգալ ըսին որ՝ աս բանս առաջարկերը եղիսաբեթին, բայց անիկայ մեկէն մերժեր եր. աս ձայներս որովհետև դուրս ելավ, ռօպէսբիէրն իր վրայ վախնալով չըլլայ թէ գինքը մեռցընեն, աս անմեղ իշխանուհին մեռցընել տրվավ։

Ռօպէսբիէրն անանկ արեան ծարաւի մարդ մըներ եղած՝ որ միաքը դրեր եր կոտրել հատցընել ամէն կարգացօղները, ամէն արհեստաւորները, ամէն մարդ որ մեկ կրթուքի մը ուներ, կամ մեկ բան մը գիտեր. պիտոր թողուր միայն ան մարդերը որ կոպիտ էին բան մը չիյտէին, որպէս զի ինքը անոնք կուրօրէն կարենայ կառավարել. անոր համար անչափ շատցան գլխատվօղներուն համրանքը, որ ալ գետինը չեր կրնար ծծել անոնց արիւնը, սենա գետին մէջ կրվազեր, վազելովը գետին ջուրը կըկարմրցըներ. իրեն պէսալ բազմութի ժա-

---

*միայ էօմրիւմ ղբյլէ կէչտի խենտէն օլմասըմ կիթամիմ։*

քօպէնհաղրուս և ժաքօպուհինհաղրուս ամէնէն նալ կատղած կըցաւթկռտելին տօն ցնծուելէ կըկասարելին, երբոր կըտեսնային աս խեղճ պարտաւորներուն բազմութիւնը որ իրարու հետ ոչխարի պէս կերթային ամէն օր մեռնելու. խանուքպաննները իրենց խանուքաները գոցած էին, մարերը իրենց պզտիկ եւ լեխայներով մէյ մէկ տեղ պահված. աս վախին հետ ուտելիքի պակսուհինալ աւելի կըծանրըցներ իրենց Թշուառութիւնը. դահիճները յոքնած էին մարդ գլխատելէն, Թուրերը գուլցած, անոր համար եաթի մեռնողները շատ տանջանքով կըմեռնէին. մէտածեցին մէկ նոր գործիք մը գտան բազմութիւն մէկէն մէկ զարնելով մը կարելու, ասալ չէյախողեցաւ, վերջը մտածեցին 3 հազար հոգի իրարու կապելով պոբ ըսված դաշտը կեցընել, վրանին Թօփեր պարպելով մեռցընել։ Պատէռ ժաքօպէնը ան կատաղութիւնը հասած էր որ՝ աս գլխատվողներուն մարթը (տէրին) հանել կուտար, Թապահներուն տալով մէկալ կաշիներուն պէս շտկել տալով իրեն հագուստ կարել կուտար կըհագվեր։ Պահմասին լէնկթիմուրին վրայ չէլսված քանները լսեցինք տեսանք ֆրանսզներուն վրայ, որ ամէնէնն քաղաքավար ազգն էր. նայէ ինչ ընել կուտայ, ուր կըհասցընէ մարդկային կիրքը, ո-

րուն վէր խօսերնիք ներածութէ մէջ։

Ամէնէն աւելի ինչպես որ ըսերնիք ռօպէսբիէռն էր եղած մարդասանձ արիւն սիրող բռնաւոր մը. որուն մեծ ուժն էր ըն-

կերուքները Հասարակաց պահպանութիւնէ, բայց ո-
րովհետև ասոնք ընկերութենալ իրենց վախ մը
ձգել կուտար, իրենց սրտին մէջը իվ մը-
նէր եղած, կըմտմտար անոնց մէջինէնալ
կորել Հատցընել. Թղթի մը վրէ գրեց անոնց
աւելի բռնաւորներուն անուններըը ոչ ալ
գլխատել. որոնց մէջն էր նաև վերոյիշեալ
պառէտը, դիպուածը բերաւ որ՝ անցնկը՝
կամ անուններն գրած Թուղթը մէկի մը ծո-
յէն ելավ, որ նոյն Հասարակաց պահպանութեան
ընկերութիւնը բռնել տըվերը: Ըս իմա-
ցածնին պէս ընկերութեան մէջի եղողները
Հասկըցան որ կամ իրենք պիտոր մեռնէին
կամ ռոպէսբիէրն. երբոր իրենք ասոր վրայ
կըմտմտային կըպատրաստըվէին՝ որ Հեշտ
բան մը չէր ասանկ մեծ բռնաւոր մը վեր-
ցընել, ինքը ռոպէսբիէրն յուլիսի 26 ա-
տեանը ելլելով անանկ մը խօսեցաւ՝ որ ան
ժողովին մէջինները մէկ քանիին մահա-
պատ ըլլալնին յայտնի ցըցուց, մէկալնոց
վրայալ իր միտքը կերպով մը Հասկըցուց,
ասոնք լսելով ալ տարակոյս մը չունցաւ ան
բանիս վրայ: Ըն ատենը բացվեցաւ առ-
ջի կուխը միաբանութէ ժողովին մէջ բայց
մէկ բան մը չորոշվեցաւ. գլխաւոր վիճա-
բանութիները եղավ ռոպէսբիէրին խօսվածքը,
ոմանք կուզէին որ տպվի, առաջ խրկըվի
վերոյիշեալ Հասարակաց ընկերութէ ձեռքը,
տպվելու համար վճիռ ըրլին, և Մայր ընկե-
րութէ ժողովին մէջ իբրև մտանիչ դաւաճան
ամբաստանվեցան երկու ընկերութէ մէջինե-
ները, ըսել էր մահապարտ, անոր համար

ազգային միաբանութեէ դուրս հանելու եր անանկնելը այսինքն ռօպէսբիէրն թշնամիները, ասոր վրայ հետևեալ ժողովին մէջ պատրաստվեցան վերջի կռիւը ընելու. յունիսի 27 երեկոյ ժողովի մէջ Կ՚ելլէն ժիւսդը առեանը երկարելով դողդողալով խօսեցաւ ընդհանրապէս ժողովին մէջի եղած կասկածաւորներուն վրայ, պնդեց որ պէտք եր կտրելու, ան առենը դալիէնը վեր ցաթկելով սէն ժիւսդին խօսքը կտրելով յայտնի ռօպսբիէրէն դէմ խօսեցաւ ըսելով որ միտքը չար է, բռնութէ կուզէ բանեցընել ազգային միաբանութէ դէմ. անոր եաևէն երկար ֆռեռօն ու պիլօտ վառէնեան, երկուքնալ ռօպսբիէրն ամբաստանեցին իբրև դաւաճան բան խառնող, չարիք ընել մտածող, շուտ մը ռօպէսբիէրն ուզեց ցաթկել առեանին մէջ զինքը ջատագովել։ Այց իրեն ըսին որ երբոր կարդդ կուգայ ան առենը կրնաս։ Յաևէ եաև ամբաստանութէ ըրին վրան, եաքնալ ըսին ազգային միաբանութէ ռօպէսբիէրն տանը մէջ պարտաւորնէրուն ցանկը կայ, որոնք ինքը միտքը դրեր մեռցընելու, դալիէնը ուզեց որ ժողովը վճիռ ընէ ռօպէսբիէրն ամբաստանելու և հեռիէոնը որ իրեն համախոհն եր, ռօպէսբիէրն նորեն եւլ խօսելու՝ բայց ամէնուն աղաղակը Կ՚ոչ ընչէր բռաաոր դու ըսելով, խղդեցին իր ձայնը, իրեն թշնամիները սիրտ առնելու զօրանալու հետ եղան. քօռաթէլեանք միաբանեցան անոր դէմ իրենց տանթօնին մահուան վրէժը առնելու համար.

վանդռեանք իրենց վրայ առին ժաքօպին-
ներուն դէմ դատ (տաւա) քչելու համար,
վճիռ ելավ որ քառնըվին հինուիօդն ու տա-
մասը որ գլխաւորն էր խռովարար դատաս-
տանին։ Յորորդ անգամ պնդեց ռօպես-
բիէռն, կամ խօսիլ պըէէ, կամ հեռնիլ ըսավ.
ամէնը մէկ բերան լուռ է, անանկէ, չեղէ
հեռնիլ հինայ աղաղակեցին. ան ատենը ռո-
պէսբիէռն աղաղակելով կատղելով սկսաւ
նախատել ազգային միաբանութիւնալ իրեն
գլխաւորնալ, տեսնալով որ Ժառայիննէրէն
շատը զինքը երեսէ ձգերէին, Ժառայիննէ-
րուն ապաւինիլ սկսաւ, որոնք առաջ խիստ
կը քամահրեր ծաղրը կընէր, հիմա գովելով
շիտակ մարդիկ կոչել սկսաւ. խնդրեց ի-
րենցմէ արդարութի պաշտպանութի՝ որոնք
ինքը աւենաւին ըրած չունէր. ասոնցմէալ
երես չիգտնալով՝ կատղելէն փրփրալ հայ-
հայել սկսաւ, գիտեմ ըսաւ ասոնց հալածուա-
ես ասոր համար կը քաշեմ որ՝ ինչու հրա-
ման տըվին գերագոյն էակը պաշտելու. Թէ-
պէտև ինքն էր որ գերագոյն էակին տա-
ճարները փլցընել տըվերէր, խորանները
քակել, իրեն պաշտօնեաները ջարդել։
Ասոնիկ կատաղուէն բերանը պապանձե-
ցաւ, չկրցաւ բան մը խօսելու որ կոկը-
տուր խօսքեր. երբոր ամէնէն նախատինք
կըլսեր ըսավ։ Ո՞ւ յանդգնութիւնը կընէք վրան ղէ
հիմա չարերը ախան յաղթանակել։ Վերջ-
ապէս վճիռ ամբաստանուէ հանելով ռո-
պէսբիէռն վրայ, երբոր իրեն եղբայրը ան
բանիս դէմ կեցաւ՝ անոր դէմալ վճիռ ե-

լավ. անանկով փուճոնը՝ սէն ժիւտը՝ լի-
պասը՝ ամմէնքնալ բռնեցին, պահպանուե
ընկերուե ձեռքը յանձնեցին, իրենց մահը
վճռըվածի պէս եղավ։

Հայց խիստ դժար բան էր ռօպէսբիէրին
պէս զօրաւոր մարդը սպանել որ իշխերէը
ամմէնուն վրայ. փարէզին հասարակութը՝
միւնիսիբալիդը՝ ժաքօպէններուն քլիւպը՝
ամմէննալ անոր դին էին. փարէզին մէջի
եղած զօրքը հէնրիօզին տակն էր. ուրիշ
զօրքալ ժողված ունէր Հաղորդիչները ջնջե-
լու՝ որ ազգային միաբանութէ դին էին.
ժաքօպէններուն բազմութիը միաբանված
կեանքերնին դրած էին Հռոպէսպիէրը պաշտ-
պանելու։ Հայց ամմէնը անանկ ձգեցին
բանը՝ որ ռօպէսբիէրն և ուրիշ ամբաստան-
վածները փարէզի հասարակութէ դատաս-
տանին առջին հանեցին. աս դատաստանը
անոնք ազատեց, տարաձայնեալներնալ յոր-
դորեց որ զիրենք ջատագովէն. բայց ա-
սոնց ըրածնին չափ դուրս անիրաւութէ
ըլլալով՝ մեծ մասը ասոնց դատաստանը չե-
ին ընդունէր, ազգային միաբանութէ դին
կըտաշէին, որ օրէնք հանեց դատապարտե-
լու ով որ գործքով դէմ կենայ իր ըրած
ամբաստանութէ վճռին։ Հայց անկալ ըլլալով
ժաքօպէններէը ժողով ըրին Ճար մը գտնալ
խալսըընել ռօպէսբիէրն իր ընկերներով.
բայց որոնք որ զինվերէին ժաքօպէններէը
պաշտպանելու՝ քիչ քիչ ցրուեցան, վախը
տիրեց, լեժանտը քլիւպին մէջ մնալով
հասկըցուց իրենց վտանգը, խրատ տըվավ

նաև սպառնացաւ շուտ մը ցրուիլ երթալ, անանկ որ ժողովարանը գոցեց, բալլիքնեը ազգային միաբանութե ձեռքը յանձնեց. ժաքոպէններէը տեսնալով որ կորսըվեցան իրենց գին տաշտղներուն բազմութիը, իրենցալ՝ իրենց պաշտպաններուն սիրտնալ կոտրըվեցաւ գնաց. ան ատենը բռնութիը բայլին հասարակութե գնները. հոն գանձած պարտաւորները ուրը պահվեցաւ, ուրը ուղեց զինքը պաշտպանելու. ռօպէսբիէրն հասսի մը դէմ կենալ ուզելով զարնըվեցաւ բիշթօֆով, կզակը (չենեն) բաժնըվեցաւ, արիւնը սկսաւ կաթկթիլ[1], քուրթօն ու հէնրիօն իրենք զիրենք զարկին, բռնօղներնալ նորէն զարկին անոնք, լիպասը սպաննեցին. պզտիկ ռօպէսբիէրն պատուհանէն զինքը վար ձգելով մէկ ոտքը կոտրեցաւ. մէկալնոք օձախներուն լաղըմ ներուն մէջերէն հանելով ուր պահված էին՝ բերին ան ընկերուե առջին որ կըսվեր Ֆոսարակոյ պահպանութե: Ինչ որ հարցուցին ռօպէսբիէրէն՝ պատասխան մը չիտըվավ, երկու ժամու չափ ամենևին մունջ կեցած լսեց ան զարհուրելի անէծքները որ չորս դիէն իրեն երեսին դէմ կըպօռթքային. յուլիսի 28 ամսէնը մէկէն մեռնիլ դատապարտեցին, ան օրը գլխատեցին[2]. մէջերնէն ռօպէսբիէրն սոսկալի բան մը կերևնար

---

(1) Կ՚ուզէ աննասըն ակֆին սուզլի տիլինտէն, Թապանճա էմմէյինճէ ուսթաատ էլինտէն:

(2) Ճանընը թէրը էթմէյէն ճանանկ օլմազ աշնա, Եանմայընճա չէմ իլէ փէրվանկ օլմազ աշնա:

Երեսին վրայ զայնըվաճ ըլլալով. երբոր գահիճը գլխատելու ատենը հանեց ան կըտաւը որ չէնեկէն բռնելու համար կապերէին՝ անատունի մը պէս կըպօռար։ Կըկու ռօպէսբիէրէն զատ գլխատվեցան նաև սէն Ժիւսդը, Հէնռիօնը, քուԹօնը, տամսըլ, նաև սիմոն բասլուէՀին, որուն տըվերէին տօֆէնը այսինքն Թագաւորին առջինեկ տղան որպէս զի չարչըրկէ միաքնաւ ավրէ. եառքը ուրիշներալ ընդՀանուր ժողովքէն գլխատվեցան։ Կ՚Ըսէ իրենց կ՚ըսպառնէ ծառէն պտուղն որ կըքարոզէին, Թագաւորներուն ըրածը բռնուԹիւն կըսեչէին։ ռօպէսբիէրն ու իրեն գործակիցները գըլխատվելէն ետև՝ քննուԹիւնէ կարգը եկավ իրենց ընկերներուն վրայ, որ աւազակներն աւելի բարբարոսուԹիւն ըրերէին ամէնն ֆրանսայի մէջ. քառիւն ամբաստանեցին իրեն ըրած անՀնարին չարուԹիւնը վրայ որ ըրերը նանԹէսի ու վանտէի մէջ. ուրիշ իրեն ընկերները Հազարաւոր մարդիկ լօիռա ջուրը խղդերէին, որոնց մէջն էին 600 անմեղ տղաք ու աղջիկ. Թող տուր ուրիշ ըրած բարբարոսուԹիւնին. բայց քառիւն աղեկ պատասխան տըվավ. առաջ պէտք է ըսավ անոնք պատժել որոնք որ մեզի Հրամէն մեցին, և ոչ մինակ մեզ գործաւորնիս՝ որ իրենց Հնազանդելու Համար ըրինք։ Կ՚ըսՀօսքս կընայէր Հասարակաց պահպանուԹէ ժողովքին վրայ, որուն մէջ դեռ խիստ զօրաւոր մարդիկ կային, չէին կրնար պատժըվիլ. քառիւնը մեռուցին, բայց Թէ որ

ազգային միաբանութիւնը կուզէր արդարութի
ընել՝ ուրիշներնալ պէտք էր որ մեռցընէր՝
որոնք լիոն, պուռատօ, մարսիլիա, գօլօն,
և ուրիշ տեղվանք նոյն չարագործութիւն-
նէրը ըրեր էին ինչ որ քառասէն վանտեաի
մէջ ըրեր էր. բայց ատելութիւն էր որ ժա-
քօպէններուն դէմ ամմէննալ կըշարժէր
անանկ ընելու չէ թէ արդարութիւնը, ինչ-
վան արգելել որ Ա՛այր ընկերութիւնը գաւառ-
ներու մէջի եղած քլուպներուն հետ հաղոր-
դակցութիւն չընէ. եթէ նաև Ֆրէդօնը ժա-
քօպէններուն դէմ հանելով ժողովուրդը
ոտք հանէց, որ նոյեմբ. 9 ու 12 իրենց ժո-
ղովին տեղը վազեցին պատուհանները քար-
կոծեցին. ազգային միաբանութիւնը հոն գործ
հասցընելով՝ ժողովին տեղէն անանկ դուրս
հանելով՝ գոցեց ժաքօպէններուն ժողովա-
րանը, որ ետքը թատրոնի տեղ եղավ:
Ա՛նանկով ժաքօպէններուն քիմը թէպէտ
ինչաւ՝ բայց դեռ գործաւոր էին չարիք ընե-
լու, մանաւանդ որ վանդեանք փոփոխա-
միտ մարդիկ բայց շատվոր՝ շատ հեղ ասոնց
կօգնէին. անոր համար ժաքօպէանք կա-
ղող եղան իրենց գլխաւորները պատեռը,
քօղը, և ուրիշները ազատելու թէպէտ
և անանքաչ ամբաստանված էին. ժաքօ-
պէններուն սմբելովը թէպէտ վախն ու ըս-
պանութիւնը քիչցաւ, բայց ուրիշ անկար-
գութիւնները չվերցվեցան այլ մանաւանդ
ուրիշ կերպով մը շատցան: Վախնալնէ
որ խաղաղասէր կերևնային՝ մէկ դիպէն
ժաքօպէններէն աւելի չար էին, ռամկապէ-

տուԹիւն մը հանել կուզէին չէ Ըէ միայն ֆրանսայի համար՝ այլ նաև ընդհանուր ամ-
մէն աշխըրհիս համար. ասանկալ ժաքօպէն-
ներուն ընելովը Ըէպէտ ամէն ֆրանսա
կըյուսար որ հաշտուԹիւն խաղաղուԹիւն ըլլայ՝
բայց խաբվեցաւ, վասն զի պատերազմը որ
երկան ատեն ձախօղ կերԹար՝ 1794ին վեր-
ջերը աղէկ դին դարձաւ ֆրանսզիներուն
համար, որոնք ամէն տեղ յաղԹօղ ելան։

Չպէտ համար նեղուԹիւն ու խռովուԹիւն կըլլայ ֆա-
րէզ. ուղղաֆառաց Ճիշ մը ընչառուԹիւն, ձախօղ
պէնճերուն համաձառ։

1795։

Ուրիշ ձախօրդ պատերազմը իր ներսը ու-
նեցաւ ֆրանսան որ էր սովը (խըԹլըխը). պատճառն որ բանի եկօղ գեղացիները զի-
նուոր էին գրված, վանտեայի պես երկիրը ավերըշտրկված, ուրիշ գաւառներալ ժաքօ-
պէններուն բռնուԹէն երեսի վրայ ձգած, ամէն մարդ իր կեանքը խաղցընելու կը-
նայէր՝ չէ Ըէ գեհին քանեցընելու. ԹղԹէ
ըստակներուն չարգնալ (խիտիպարը) ըն-
կած, միլիոնէն աւելի զօրք ոտքի վրայ կե-
ցած ամէն բան կըհատցընէին, գեղերուն
մէջ մտնալով գեղացոց ձեռքը կտոր մը բան
ճնացած կըյափշտակէին. մատրապաղներ-
նալ ան ատենը իրենց վաստըկի ատեն գըտ-
նալով՝ էվել էվելօք գինով ծախելով՝ աղ-
քատցած ժողովրդեան արիւնը կըծծէին.

ասոր Ձար մը ընելու համար բաներուն վր
գին (նարդ) դրին, միսը չափուլ տրվին,
մարդ գլուխ 180 տիրհեմ միս տալուլ տասն
օր անգամ մը. մարտի 15 ամէնն մարդ գլ-
ուխ մէյ մէկ լիբր հաց տալ որոշեցին օրը:
Այայց ամէնն Ձար պարապ եղավ. երկու
տարեվ չափ շատ նեղուր քաշեց Ֆրանսան
աս սովէն. ամէնէն աւելի փարեզ, որ մարդ-
աշատ քաղաք ըլլալով՝ գետինը անբեր՝
կընկտիք տղաք գիշերն ի լուս կըսպասէին
փռներուն առջին պատառ մը հայց գտնալ-
ու համար, շատ հեղ ան պատառնալ վի-
նուորները կըյափշտակէին. Ձամիայները
լեցուն էին ընկած անօթիներ, հոգեվար-
քուվ քաշօղներ անօթիութէն, մայրեր
իրենց կաթընկեր տղոցմով մեռած, յու-
սահատութենէն շատ մարդ իրենք զիրենք
տուներէն վար ձգած, սենա գետը ընկե-
լով խղդված: Փարեզ եղավ ամէնէն ա-
ւելի աս ընդհանուր խռովուրը բռընկցը-
նող, հիմնալ փարեզ եղավ ամէնէն ա-
ւելի անոր վայնասունը քաշող:

Ճատնցմընէ ժողովուրդը կաղաղակեր
կըխնդրեր ազատութէն հաւատքի համար.
աս ազատութիւնը վճռեցին փետրվ. 21.
բայց արգելեցին դրսէն մէկ նշան մը կրօն-
քի չըցրցնել ամենևին, չունենալ կրօնքի
մը պաշտօնեայ կամ քահանայ, և ոչ Թո-
շակ մը կապել: Փեսկիպ ասանկ ազատու-
թիւը խեղճ բան մըներ՝ բայց մեծ ուրախու-
թի բերաւ ուղղափառաց մէջ, սկսան տօն
օրերը խանութներնին գոցել, եկեղեցի չունե-

նալով մատուռներու մէջ պատարագ ընել, ժողովուրդը չխոչմելով՝ ձամիներու մէջ կըկենային պատարագ տեսնալու, էրդվըն֊ցօղ քահանայներնալ որ մօտիկ տեղվանք փախած էին՝ համարձակ կըցան փըրանալ մնալ։ Պատճեցին մէկ նոր սահմանադրութիւն մը շինելու, բայց զանազան կարծիք֊ներ շատ, ինչպէս պիտոր միաբանէին մէկ բանի մը վրայ. եւ կանչեցին ան վէճերը որ լիոն քաղքին դէմ ըրեր էին. մանաւանդ մեռելը որ պատուով թաղերէին բանթէօն ըսված տաճարը՝ դուրս ձգեցին. ան պատուիրակները որ ռօպէսբիէռն ազգային միաբանութիւնէ դուրս էր հանած՝ նորէն ներս առին, թէպետև ժաքօպէնները շատ դէմ կեցան. աւելի մարդավոր զօրապետներ խրկեցին վանտէա. ապրիլի 21 հաշտութիւն ըրին վանտէացոց ու շէօվանցոց հետ, թէպէտ և քիչ քշեց. մէկ աղէկ բանմընալ ան եղավ որ՝ երդում ընօղ քահանայներէն նաև եպիսկոպոսներէն շատը յետս կոչում ըրին[1]։ Այս որովհետև թագաւորութիւն Թուղթ հաստատքի համար՝ անոր վրայ փափաքելին առջի եպիսկոպոսը մտաւ ֆըրանսա, սկսաւ կարգի մէջ խօթել ուղղափառ եկեղեցականքը, հրամայեց տրվավ քարոզելու խոստովանութիւն լսելու. 600 քահանայներէն աւելի թուղթ առավ որով խրենց ըրած երդումը յետս կըկոչէին։ Այլ

(1) Ասքելէ չէշմի ինսանի կիսի միդան օլմազ, քիչի միդաբրին պիլմէ գըտար իւրիան օլմազ։

քիչ մը անցնելէն ետև աս աթոռակալը ու-
րիշ ուղղափառ քահանայներնալ բռնեցին
ըսելով որ Թոյլտուուէ ան դիւի ծայրը ան-
ցերէին։ Ուրսերը մէկ դաւառ մը մէկալ
դաւառին դէմ բաներ կըներ. վանտէալի
մէջ ուղղափառ հաւատքնալ քահանայներ-
նալ ազատ էին իրենց Թոշակը կառնէին.
ան քահանայները որ՝ոչ միքայէլեռը բըռ-
նըված կեցերէին՝ արձըկեցին. ուէն տեղը
4 ժամ տըվին անոնց. շատ հեղ վէնիս հա-
նեցին որ՝ դարձող եկող քահանայները Թէ
որ հանդարտ նստելու ըլլան՝ Թողուն խա-
ղաղութիւն. բայց ալսացիայի մէջ զօրքը ու-
ղեցին նորէն եկող քահանայները վռնտել,
անոր համար շատ քահանայ ուրը փախան,
ուրը պահվեցան. բայց գեղացիները դէմ
ելան ան զօրաց, ապստրեցին դադրիլ ան
հալածումքէն։ Ուրժին եպիսկոպոսը նո-
րէն դառնալով նստաւ իր աթոռը, աս տա-
րի աւագ էշի ժամասացութիւնը կատարեց
իր եկեղեցնայ մէջ. քանի մը մարապետանե-
րու արձակուած տըվավ յայտնի ապաշխա-
րանք դնելով, որոնք վախեցնէն ընկած էին.
ասոնք ապաշխարողի լաթ հագնելով ժա-
մուն դռնները կեցան, օրինակ տըվին որ շատ
երդվընցող քահանայներալ ասանկ ապաշ-
խարանք ու արձակուած խնդրեցին. բայց
եպսը չհամարձակեցաւ ասոնց վրայ բան մը
վճռել, եկեղեցականաց ժողովին վերաբե-
րեալ սեպելով ասոնց բանը. նորամուտ ե-
պիսկոպոսներէն քանի մը իրենք իրենցմէ
ելան աթոռէն, ասոնցմէ մէկնալ եղավ լիօ-

նին նորամուտ եղեալ՝ որ ազիկ խոնարհ խօս-
քերով յետս կոչման Թուղթ գրեց անցած
տարի 1794 իր գլխատվելին առաջ(1) : Ի-
սանկով երկու բաժնըված եր Ֆրանսա , մի-
կը չափաւորօղ միկալը վախցընօղ , որ ջար-
դել կուզեր , անտեր անտերունչ ըլլալ ·
անկեց շատ աղմուկ եղան շատ արիւն · բայց
չափաւորօղները վեր ելան · սեպտ · 29 նո-
ըին վճիռ հանել տըվին որ ԹայլտուԹէն
ըլլայ , երդման վրայ բան մը չխօսվի , հա-
պա հնազանդուԹէն պահանջըվի հասարա-
կապետուԹէ օրինաց :

Վանք որ պատէրին և ուրիշներուն վրայ
եղած ամբաստանուԹիը որ ռօպէսբիէրին
հետ խիստ կապված էին՝ սաստիկ վախցուց
ամէն ռօպէսբեաններն ու ժաքօպէնները՝
ջըլլայ Թէ քիչ քիչ մեռցընեն զիրենք , ա-
նոր համար սովը (խԹլըխը) պատճառ բըռ-
նելով սկսան ժողովուրդը բունկցընել ըսե-
լով , ինչ պակսուԹէն որ ուզին Թող ձգեն
ռօպէսբիէրին վրայ , բայց աս ատոր է որ
անոր իշխանուԹէ առենը մէկ օրմընալ հա-
ցը չեր պակսած · աս պատճառիս համար
մեռցուց անիկայ ազգային միաբանուԹիը ,
որպէս զի խալըսի անանկ սաստիկ դատա-
ւորի : Ապրիլի 1 բազմուԹի զինեալ մար-
դիկներու կնկտիքներու լեցլեցան ժողո-
վարանը , հայց ու սահմանադրուԹի կուզենք
կըկանչէին , հիւկիվ ժաքօպէնը բերընին

(1) Եադ միտրին իւէ աէֆԹէրի եսեանըմը եարէպ ,
պախշ էյլէ պանա ձիւբմի փիրավանըմը եարէպ ,

դրավ ուզելու նամ պատգամին և ուրիշնե-
րուն ազատուիը . աւելի լիրք մընալ ելալ
սպառնալով ըսալ՝ աս ժողովուրդն է որ
օգոստ . 10 . սեպտ . 2 եղած բաները ըրավ.
ետքը սկսաւ ազգային միաբանութիը ամ-
բաստանել իբր պատճառ ամմէն թոյլտու-
ութիւ որ ֆրանսան կըքաշէր : Այս ըսելու
ատենը հոն հասաւ բիշկռիւ զօրապետը փա-
րիզին զօրքով . ժողովուրդը և ժաքօպին-
ները տեսածնին պես ամմէննալ սմքեցան .
բայց ազգային միաբանութիը աւելի գըր-
գիռ չիտալու համար՝ պատգամը ուրիշ երէք
հոգիով օգտուն կղզին քշեց . վերոյիշեալ
հիւկվէննալ ուրիշ տասը հոգիով բռնել
տրվավ իբրև պատճառ ժողովուրդը խռո-
վելու , համ տեղը քշել տրվավ որ բիքաւոտ
գաւառին մէջն է . ժողովուրդը նորէն ոտք
ելալ մանաւանդ՝ որ անտօն ըսված արուար-
ձանին ( վարըշին ) ժողովուրդը ոտք ելլա-
լով աղաղակ վերցընելով խալսցուց աստիք
քշվելէն , անոր համար ազգային միաբա-
նութիը ապրիլի 2 հրատարակեց որ աս ժողո-
վուրդը օրէնքէն դուրս մարդիկ են : Այց
որովհետև մինակ փարիզին ժողովուրդը
չէր՝ հապա ամբողջ ֆրանսան կուզէր Սահ-
մանադրութիւ կրկանչէր , անոր համար ազգայ-
ին միաբանութիը թեպետ կուզէր իր իշխա-
նութիը երկրնցընել՝ բայց հարկ եղավ մէկ
ընկերութիւ մը սահմանել որ գործադիր օ-
րէնք շինէ :

Ասոնցմէ մէնեվիլն մեռնելէն ետև կառավարու-
թիւնին խիստ շփոթ եղավ . անիկայ իրաւ

բռնաւոր մըներ՝ բայց միևնակ ինքը կառա-
վարօղ ըլլալով՝ ինչ որ կըսեր ամէնևնաալ
վախնալէն կըհնազանդէին, հիմա որ կա-
ռավարութիւը լման ազգային միաբանութե-
ձեռքը ընկաւ, մէջինները տարբեր կարծիք-
ներով ըլլալով՝ երբեմն մէկ կարծիքով է-
ղողները կիշխէին, երբեմն մէկալ. հիմա
վէհիւ մը կընէին՝ քիչ մը անցած կոչնչացը-
նէին: Ազգի բերանը որովհետև խիստ կը-
բաղձային ապահովութիւ խօթելու՝ սկսան
չարագործները պատժել, նեղեալներուն ա-
ղատութիւ տալ, ապրանքնին ետ դարձընել
որ ռօպհսբեանք յափշտակերէին ան պա-
տուիրակները որ ազգային միաբանութենէ
դուրս քշերէին՝ ետ կանչեցին. վախէն փախ-
չողներուն՝ ազատութիւ տըվին դառնալու.
վէհիւ հանեցին իրենց յափշտակված ապ-
րանքնին ետ դարձընելու, Թոյլ տըվին ուղ-
ղափառաց ժամերը բանալու, երդումի չը-
նօղ քահանայները որ փախած էին՝ շատը
ետ դարձան ժողովուրդը հոգալու. բայց
աս աղէկ բանները քիչ քիչ ոչնչացան, մա-
նաւանդ Թէ պատճառ եղան աւելի անկար-
գութիւններու: Ալ անդամ ըսկօղները որնց
միտքը ծաւալել էր իրենց իշխողութիւը ու
հարստանալ, երբեմն ժաքօպէններուն դէմ
միանալով՝ երբեմն անոնց որ ռամկապետու-
թիւ կուզէին՝ առաջ մէկ վէհիւ մը կըհանե-
ին, ետքը նոյն վէհիւը ետ կըկոչէին. անով
ամէնուն առջին ատելի կընէին ազգային
միաբանութիւը. քանի ընկերութիւ որ շատ
ցուցին կառավարելու՝ այնչափ աւելի ալ

շատցուցին անկարգուձին ու ատելուձիը [1]։ Վաքօպկենդերը կըբաղձային որ ժողովական նայ վիճձը շատցընեն, անով ատելի ըլլայ հսրկպետուձիը բաղձալի ըլլայ միապետուձիը թձր նատիլը։ Պովը որ օրէօր նեղելու հետեր՝ ամմէննալ ձչգոհալու մէջ կրձգէր կառավարչաց վրայ. ապրիլի առջի օրէն փարեզ չեր հանդարտած որ միայն դրսէն. անկէց աւելի մեծ խռովուձի ելավ մայիսի 20, որ ժաքօպկենդերը հանել տվին իրենց վրէժը առնելու. թուղթ մը հանեցին օրով կուղկին Հայդ, պալատեն անունդ՝ որ կարծիքի համար բանտը դրված կին. կուղկին նաև 1793ին եղած սահմանադրուձիը. աղգային միաբանուձե քակվիլը, աւագանեաց ժողովը վիլը ոչ ալ նոր օրինադիր ժողով սահմանե։ Ուրիշ բաներս ուղելով թուղթ ծաւալեցին նաև մօտիկ գիւղերուն մէջ. աղմուկ հանօղները ներս ժողովարանը մտան որ գրեթէ ամմէննալ կընկաձիք կին. հայ ու սահմանադրուձէն կուգկնէ կըկանչէին. ժողովին գլխաւորը ուզեց ասոնք զօրքով դուրս վանտել՝ ան ատենը երիկ մարդիկ ներս վազեցին որ ժողովարանին դուրսը փաթթեր կեցերէին, դրան մկկը վար առնելով վախ-

---

(1) Տիմե ձանանէ եինէ ապեար իլէ սէօհպեթ իթմէ,
սէնի սեվմին տեր իսէն, անա նասիհաթ իթմէ։
Ղայրիյէ մեյլ էյլեմեզլիմ տէյու եէմին էյլեմե,
միւմթէնի տիր, ինանըպ անա համագաթ իթմէ։
Ընչ հալեթ քի զուհր էյլերսե օլ տիլպերտէն,
քիմսէյէ անըն իչիւն ղուլ առավկեթ իթմէ։
Ձիւնքի պունչարըլա ապաի զարագըն վար սէնէն.
էհվի ըլզ օլմասըմ տէյու նէտամեթ իթմէ։

ցընելով ներս մտան. Ֆեռանտ որ մինչեւ էր ազգային միաբանուէին՝ ատեանը ելավ խօսելու թէ ինչպէս հոգ տարերէին հացի հաստար, բայց ժղվրդին խժլթուքէն՝ իր ձայնը չկրնցաւ, ան բազմուէին երկու հոգի իր վրա վազեցին գլուխը կտրեցին, սուրին ծայրը տնկելով քերին գլխաւորին առջեւը ցցուցին։ Ազգային միաբանուէիը տեսնալով որ իրենք ամէնեննալ վտանգի մէջ էն՝ սիրտերնին կոտրելով ա՛վ որ կրցաւ՝ փախաւ, մնացին ժաքօպէններըը որ վախ մը չունէին՝ ասոնք վէռեցին ինչ որ ուզեցին. առաջ ազատուի ան պատուիրակներուն որ ռօսկեսբիէին համախոհներն էին, եւքը 1793ին սահմանադրուիը առանց չափ մը դնելու, ուրիշ վճիռ ներաւ ըրին ամէնեննալ ժաքօպէնուէնայօղ, վախ ձգօղ։ Յանկով ազգային միաբանուէ բանը խիստ գէշ գնաց. լէժանտը որ ժաքօպէններուն գլուխն էր՝ չկրցաւ ինչ մըտքով ազգային միաբանուէ տեր կեցաւ, ժողովրդեան հանդարտիլ խնդրեց, բայց ծաղր ըլլալով վտանգի մէջ ինկալով անպատուղ ետ դարձաւ. եւքը ազգային պահապանը յանկարծ ժողովարանը մտնալով ան բազմուիը վախցուցին ամէնն մարդ փախուցին։ Ազգային միաբանուիը իբր նոր ողջընցած 16 հոգի իրենց մէջէն բռնել տրվավ, որ ժաքոպեան էին իրենք ոտք հանէրէին ան օրվան ապստամբուիը. վէռեցին որ ասոնց վրայ քննուէի ըլլըվի, նոր զօրքալ բերել տրվին փարիզ։ Այիսի 22 երբոր ժողվըված էր ազգային միաբանուիը, անոր պաշտպանել-

*ըը վախի մէջ կ՚ապրէր ան ըլլայ ան մեռնի՛ կեցան, հին պատուիրակներ երևցան զօրաց դիացին Ժղվրդեան խնդիրքը ընեելու, որ ամէնեան ըրին վճռեցին. քայց 23ին աղգային միաբանութիւը զօրացաւ իրեն զօրքը կողմնակիցքը շատցնելով. փարեզին երկու արուարձանները ՚ըր անտօն ու ՚ըր մարկեղոս բավածնները ապստամբ հրատարակեց. 40 հազար զօրք վրանին խրկեց, ո՛ր ոնք սմքելով վէնքերնին Թօփէրնին տըվին, Թէպետ և գլխաւոր չարագործը քվին.*

*չէը չիգտան որ պահված եր։*

*Ասկից ետև սաստիկ ու ընդհանուր եղավ ժաքօպէնները դէմ վրէժխնդրութիը շատը փարեզի մէջ գլխաւորեցան, ոմանք իրենք ղիրենք մեռուցին. ամբաստանութիը վրանին շատցաւ. ամէնն կառավարուե ժողովներէն դուրս հանեցին; քայց դուրսի գաւառներն շատ աւելի կուզէին, վրէժխնդրուի կաղաղակէին ժաքօպէնները վրայ. սրտերնին երած ըլլալով ռօպէսբիէրէն խըրճած գործաւորներուն վրայ, որոնք ամէնն աեղ ապրանքնին յափշտակերէին, մանիկներն սպաններէին, ՚ըր հայրը կուլար, ՚ըր մայրը, ՚ըր զաւակը, եղբայրը, քոյրը, տուն չիկար որ աս վայրագ ւենը քաշած չըլլար ան ժամանակներուն ձեռքէն՝ որ ռօպէսբիէրէն հաւատարիմ դահիճը եղած էին, անկէց քաղքենը գեղէր անապատ դարձերէին. ան աստիճան եր հասած ատոնց բարբարոսութիը՝ որ երբոր անմեղ մարդիկ մեռնելու կերթըկէին, տեսնալով իրենց քաջասրտութիը դէմ*

քեզնին չայլայլած՝ առաջ կեա մեռցընելու պես կընկեին, ոմն զի դեղնած երեսով դողդողալով երթան գլխատվելու տեղը։ Այս բան ներուս համար ամէնն տեղէն ամբաստանուելէ խրկեցին աղգային միաբանուէ պահպահին խնդրելով, բայց ժաքօպեանք միշտ ձամիայ մը կրգտնային իրենց պատիժը արգելելու. ամբաստանօղները տեսնալով որ իրենց խնդիրքը չլսվիր, իրենք սկսան ժաքօպէնները բռնել բանտերը լեցընել, տեղ տեղ առանց քննելու մեռցընել. ուստան գետը լօհուա կարմրցան ժաքօպէնները սրիւնովը։ Ժաքօպէնները վրէժխնդրութիւն կընկեին ուր որ կընային՝ շատ մարդ ոչնչանալով իրենց դէն. անանկով գրեթէ ամէնն քէֆ երկու բաժնըված էին, երկու դիւնալ իրարու վրայ Թուր քաշելու կըվազէին, ժաքօպեանք մարսիլեան երգը երգելով, իսկ իրենց Թշնամիները ան երգը որ կըսվէր Ժողովրդը արթնցնել։

Ինանկ եղավ որ ժաքօպեանք դօլօն քէֆը ոտք հանեցին, մտածեցին ինկիլիզին ձեռքը տալու. բայց մէկալնոնք շուտով ձեռվընկերնէն առին. աս բանով ալ աւելի ատելի եղան ժաքօպեանք, որոնց դէմ ամէնն աւելի ծեծ բացին վանտեանք. պատճառը աս եղավ որ՝ առաջ մէկ տեղ հաշտվելու համար ժաքօպեանք ծածուկ խօսք տըվին վանտեանց որ ուղղափառուիը միապետութիւնը նորէն դարձընեն Ֆրանսա ինչպես որ ասոնք կուզէին, Թէրնն տղան ու աղջիկը իրենց

ձեռքը տան, փախած Թիւրին եղբայրները նորէն Ֆրանսա մտցընեն. սոսոր համար վանտեանք յունի. մէջ մարդ խրկեցին փարիզ շադլիէ անունով Թիւրին տղան անոր ձեռքը յանձնեն. բայց ան ատենը Հաստաբակաց պահպանութէ ժողովին Թուղթը բռնեցին օխտը հոգիին զմռըւած յունիսի 6. ուր իրենց մարդուն կըգրին Թէ վանտեան ու շեօվալեհան գլխաւորները բռնես փարիզ խրկես։ Ա՛ս բանիս իրաւ ըլլալուն՝ վանտեանք երկինք և երկիր վայ կըկոչեն մանր պարագայներով պատմելով, մէկալնանք սուտ կըհանեն. բայց աս ստոյգ է Թէ Թագաւորին տղան որ ըսածնուն կեօրէ յունիսի 13 վանտեանց ձեռքը պիտոր յանձնէին՝ յունիսի 8 մեռաւ. յայտնի է որ կըսեն չիտալու համար ժաքօպեանք դեղելով մեռուցին։ Ա՛ս բանիս վրայ առջինեն աւելի ծէծ բացվեցաւ մէջերնին. վանտեանց օգնելու համար լինկիլդհառա փախած երիտասարդ Ֆրանսըզները Ֆրանսայի վրայ էկան. աս անխելքութիւնալ ըրին որ իրենց քիչլորութիւնը տեսնալով բանտարկեալ Ֆրանսզներնալ իրենց հետ մէկ տեղ առին. անոնքալ բանտէն խաչըսեելու համար իրենց դէմ Թիւրական ըլլալ ցըցուցին. յունիսի 18 քուիպուօն ցամաք կղզին ելան, հոն քանի մը շեօվանեանք իրենց հետ միանալով բռնթիէռ բերդը առին. քիւսդէն տեղը բանակ մը շտկեցին։ Ա՛սոնց դէմ եկալ հօշ զօրապետը ՀերկպետուԹէ զօրքով, պզտիկ կռիւներ եղան, բայց ազատված բանտարկեալները որոնց

մեկ քանին պահապան դրեր էին առնուած
բերդին, դիւերանց գաղտուկ կանչելով
հօր զօրապետը իրեն ձեռքը տուին. ա-
մանուէլը տեսնալով փախած ֆրանսըզ-
ները նորէն ակսան նաւերուն մէջ փախչիլ.
ասմպովիլ երկտասարդը քանի մը հոգիով
քաջութէ մնացողներուն դէմ կեցաւ, ինչվան
որ իր ընկերները փախչելու հետ եղան.
1500 հոգին միայն 1200 հոգի կրցան նա-
ւերը փախչիլ. մնացածները չհասկնալով
հետ ակսան դաշնադրութէ ընել, բայց հօր
չընդունելով թիւֆէնկով սպաննել տը-
ւաւ ասմպովիլը ուրիշներուն հետ մեկ տեղ,
որոնց մէջն էին տօլին եղբայրը քանի մը քա-
հանայներով, որ մեռնողներուն հոգիները
հոգալու համար չուզեցին նաւերով փախ-
չիլ. հօր զօրապետը կուզէր մնացածները
ողջ պահել, բայց գալլիկները հրամմեց սպան-
նել: Մնացին սպանվածները եղան 575 հո-
գի, մինակ 20 հոգի մէջերնին կրցան լճնա-
ւա փախչիլ, անկէց դրեցին իրենց դիպուա-
ծը. բայց գալլիկը անանկ չինծու պատ-
մութէ մը հանեց ասոր վրայ, որ փարէզին
օրագիրներնալ ծաղր ըրին:

Ա-ս դիպուածս մեծ վախ մը ձգեց վանա-
տեանց վրայ, գեղացիները ցրուեցան իրենց
տները գացին. իրենց գլխաւորները շա-
ւէդ, սգօդֆլէդ, բուիզ, քիւլոր մնալով
թէպէտ շատ քաջութէ ըրին, բայց մեկիկ
մեկիկ թշնամեաց ձեռքը ընկան որ հայրե-
նասէր կըսվէին, անոնցմէ սպաննըվեցան
հաւատք ու թագը ուզելնուն համար:

# ՅՈՒՅԱՑԱԿ ԳԼԽՈՑ

## ՀԱՏՈՐՈՑՍ


| | էջ |
|---|---|
| Հ[illegible]վէտին մեծ ծովը. | 1 |
| Կ[illegible]րքին ծնունդը. | 6 |
| Սո[illegible]ւթան Մահմուտին մահը. | 11 |
| Սո[illegible]ւթան Սելիմ երրորդ. | 43 |
| Ա[illegible]ոհովին ու [illegible]ինդիկին ջրայոյ վերայ. | 48 |
| Պօռնայի մէջ եղած ծնունդը. | 51 |
| Ո[illegible]ւսոյ պո[illegible]ղոսանին ծնունդը. | 56 |
| Պէլիդրատին առնուելը. | 60 |
| Ո[illegible]ւթիւն ծնունդը. | 66 |
| Պարքին նահանգներու մէջ եղած ապստամբո[illegible]ւթիւնը. | 71 |
| Բ. Յովնէի կայսեր մահը. | 82 |
| Բ. Յովնէի կայսեր բարքը, որպէս ո[illegible]ւթիւնը: | 87 |
| Լեհաստան կայսրը. | 104 |
| Հաշտո[illegible]ւթեան կոչնագրերը. | 109 |
| Ո[illegible]ւթիւն ծնունդը վենետկեան, լեհաստան կայսր պատերազմին, պարքին նահանգները յաղթելուն. | 114 |
| Ա[illegible]ոհովին հետ ծնունդը վենետկեան. | 119 |
| Հ[illegible]վէտին հետ ծնունդը վենետկեան. | 122 |
| Օ[illegible]ռլը- վրայէ կու[illegible]ը. | 128 |
| Հ[illegible]վէտին հաշտո[illegible]ւթիւնը մոսկովին հետ. | 133 |
| Լեհին դաշնադրո[illegible]ւթիւնը պրո[illegible]ւսիոյ ու պռանտէնին հետ, երբեմն ըրած նոր սահմանադրո[illegible]ւթիւնը. | 140 |
| Ներմանիոյ ծովին ափ ծովին մէջ ծնունդը վենետկեան, եամայկեան առնուելը. | 144 |

Ինչէ՞ւ էր ան ապաներկային վէմը. ընկերին ան-
մոռնալին դաշնադրու-թի՞ւնը. 150
Տաճկին հաշտու-թիւնը նէմչէին հետ. 153
Ճ վէմին դիմի եղած ֆոխոու-թիւնները. 160
Տաճկին ու մոսկովին ծնծղիւնը. Բօղեմ-
չինին ջոնելը. 164
Մոսկովին հաշտու-թիւն ընդունելները. 173
Տիրանապին խոռոշ-ը պռոշ վրայօ. 175
Բռնալին ու օրէնսնին չվիլը. 180
Ամագա-որին նոր դաշնադրներ դնելը, նէ-
տէրը նորէն հանելը, խոռոշ-ի ապա-
հանալը. 186
Ղևոնդ քհան-ը ծողովին սկսելը. 196
Ս երկելով ծողովը յանկարծ Ղէյսին ծո-
ղով հանուանիլ պէտը. 203
Օրէնսնա դուռսին երթալները, ծողովըդեան
խոռոշ-ու-թիւնը. 210
Պասիլեան հանդէն կըսկսէն. 215
Ամագա-որը վախէն ազգային ծողովին հապա-
րինի, նէտէրը եա կըհանկըվի. 220
Հին սահմանադրու-թիւնը հոգիացընէն, նո-
գա-որին իշխանու-թիւնը կըսրկընէն. 228
Գրին պալատը կըհոսին վեր-ասլան ձէլ. 236
Ամագա-որը թարեկ կըֆոխադրին. 243
Ազգային ծողովը թարեկ կըֆոխադրվի. դե-
ւե-պնէրը կըսկըսին. 248
Ս անտէրը բռնալինդնէրը ազնու-ականու-թիւնը
հըվերցընէն. նոր սահմանադրու-ը հնազան-
դելը երդում հանուին. օրէնսնը կըդռնա-
նայ, նէտէրը կըփախչի. 255
Անկէցյանայ նոր սահմանադրու-թիւնը. երդ-
ում ընելուան համար դաշտ հալածու-մը. 262

Աստուածն մահը, երբեմն վարժը։ 276
Անգամ-որը կարծելն անգամ մը գեղ երևա-
լեն, անգամ՝ընալ դասալեն. նոր սահմա-
նադրութիւնը երկնցնեն. ազգային ծողով-
ը երկարջացնեն. 287
Անհովին հնձնաւելը, լեհին վրայէ ըրած
խորհուրդը. 293
Անհովին հանած լուրը լեհերուն վրայ. 298
Լեհին հանած լուրը հոսհովին դէմ. 302
Լեհին պատրաստութիւնը, պրուսլէն օգնու-
նիդ խնդրելը, անոր պատասխանը. 308
Պաբլօվիցեան դաբանութիւնը, Ռօսլաւսի
ղօրապետը. 312
Անհովը լեհերուն վրայ կելլէ, պրուսլը
պանչման հասնի. 318
Լեհին երկրորդ անգամ բաժնըվելը. 323
Նոր երկիրներուն չափը, լեհին նոր կար-
գադրութիւնը. 329
Ռուսիոյ եղած դաշնադրութիւնը, լեհաստա-
սեր մահը. 333
Ահ ձ. հռոմպէզոսի շնչաւ լսափութիւն. 339
Երկրորդ տեղեկութիւն հասաւարութիւն ք-
որ է
ազգային ծողով ( )րինադիր. 351
Երկրորդ տեղեկութիւն հասաւարութիւն ք-
որ է
ազգային դաբանութիւն, և լսափութիւն
գլխաւորվելը. 377
Ինկիլիզին դրչի եղածները. 369
Փօրթուգալին դիպուածները. 394
Պանիայի դիպուածները. 396
Շվետցիոյ դիպուածները. 400

Ե. Ֆրանկլինոս հայրը. 404
Ե. Ա՛ռաքան սէլէմին ըրած նոր հարցաք-
րո՛ւթիւննէրը. 414
Ն՛ե-սէյին խափո՛ւան փաշային ըրածնէրը. 428
Ֆրանսուզին մտնելը եւ բնէմծոդին վրայ-
էն. 438
Չո՛ռոմայո՛ խո՛ռվո՛ւիլ սկսնէլու՛ռ-
րո՛ւթիւնը, 445
ֆալէօտրո՛ս մարդո՛ւն վարկն ու մահը.
Չո՛ռոմայո՛ երկիրնէրո՛ւն դէմ եղած խո՛ռվո՛-
րո՛ւթիւնը. 450
Կ,աբօլէի դէպո՛ւածնէրը. 453
Ձ՛ինի՛վէրզին վրայ. 457
Ա՛ղնեսուիլին չէզո՛ք մնալը, ֆրանսայէն նոր հա-
սարաֆալեսո՛ւթիը ընդո՛ւնիլը. 460
Ֆրանսայի հայո՛ւթիը լսափա՛ռրը գլխապա՛ռ-
լէն եան. 464
Յ՛ափօղէանք նոր ապստամբո՛ւ հանել կը մտա-
ծէն. 472
Յ՛ափօղէնները նոր սահմանադրո՛ւիւ մը կը-
ղէնեն, բարբարոս-հիներն հեղեղնէն. 478
Ֆրանսայ լսափո՛ւհիին ո՛ւ օ՛ղէանային գըլ-
խապո՛ւիլը. 483
Ռաբեսբոսո՛ւ գլխաո՛ւրնէրը պանըծա ո՛ւ օ՛ղ
պէսբիէն կըապանէն. 489
Չայի համար նեղո՛ւիլ ու խո՛ռվո՛ւիլ կըլլայ
ֆրէնչ. ո՛ւղղափա՛ռայ չէ մը ըսյլսո՛ւ՛ւ,
ֆափօղէնները՛ւն հալածո՛ւմ: 502